22
Ե-23
91
ստացված է 1881 թ.

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ

Ի ՊԷՏՍ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՑ ՇԱՀՈՒՆԵԱՆՑ

ՇԻԴՇԻ

Տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան

1889

Ընթերցեալ զայս բացատրութիւն Ս. Աւետարանին Մաթէոսի, չգտի ինչ ի սմին ընդդէմ ուղիղ վարդապետութեան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ: Ի 1888 ամի, 'ի 14 Յուլիսի:

Նախագահ տպար. ժողովոյ սրբոյ Էջմիածնի: Արիստակէս Եպիսկոպոս:

Թ. 315:

А $\frac{\text{Ш}}{5445}$

Дозволено цензурою 30 Апрѣля 1889 г. Тифлисъ.

Типог. Шушин. Армян. Духовн. Вѣдомства.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱԽՈՆԱՐՀ ՆՈՒԷՐ

ՋԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԷ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ։

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՀԱՅՐԱՊԵՏ.

Իշձ և փափագ բարեպաշտ ժողովրդականաց Ազգիս, նա մանաւանդ անհրաժեշտ պահանջ զարգացելոց Համբակաց՝ ուսնիլ ի ձեռին պարզ գրականական լեզուաւ զբացատրութիւն Սրբոյ Աւետարանին, ոչ երկարաբան պաճուճանաք սեթևեթեալ և ոչ Համառօտագրութեամբ զԱստուածային խնամատութիւն ընդ գրուանաւ ծածկեալ, այլ Համառօտ և միանգամայն ընդարձակ բացատրութեամբ 'ի լոյս ածեալ զուղղափառ վարդապետութիւն և զարդասիրութիւն նորա, առաջի աչացս ունելով՝ ցանկալի ի հերուն հետէ լնուլ զայս պահանջ մերազնեղից։

Ուստի ոչ հայեցեալ 'ի ծանրութիւն գործոյն՝ ի վերքան զիմս կար, ի ձեռն բերեալ զգանազան մատեանս հին և նոր կրօնական աշխատութեանց՝ որպէս և զԱստուածաբան մատեանս հոգեբուղխ հայրապետաց և առաքելաշնորհ վարդապետաց, անհանգիստ աշխատութեամբ վատահացայ մատչել ի բացատրութիւն Աստուածայնոցն բանից, ապաւինեալ յօժանդակութիւն Հոգւոյն Անեղի։

Ուստի Աստուածընտիր Հայրապետ, բարեհաճեցէք Հայրապետական խնամաք, իբրև զլուսայն այրի կնոջ ընդունելութեան արժանի կացուցանել զայս իմ երկասիրութիւն և հրամայել ի տիպ անցուցանել զայն, զոր ընդ ամին ամենախոնարհ գիմաք մատուցանեմ ի առաջ Աստուածընտիր Մեծի Քահանայապետիդ։

ՍՂ.

ՁԵՐԴ ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ Ս. ԾԱՌՈՒԹԵԱՆ

ամենախոնարհ ծառայ

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՇԱՀՈՒՆԵԱՆՑ։

ՅՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Թէպէտ այժմեան դարը արդէն սկսել է շատ լաւ զգալ Սուրբ Գիրք կարդալու անհրաժեշտութիւնը, այնպէս որ ձեռքից ձեռք առնում և կարդում է ոչ միայն բարձր գիտնականը, այլ նա և ամենավերջին թերուս աշխատասէր մշակը, բայց մենք զուրկ լինելով հասկանալի աշխարհաբար լեզուաւ նորա էական նշանակութիւնը, ըստ արժանւոյն հասկանալուց, սարսռուած ենք լինում մեր քսաց և ցանկութեան յարմար թարգմանելով՝ խանգարել նորա սուրբ, բարձր և վսեմ նշանակութիւնը։ Ուստի փոխանակ ստանալու սպասելի օգուտներ, ստանում ենք սարսափելի թշուառութիւններ, լինելով սուտ լուսաւորիչներ, խորամանգ առաքիչներ, ճարտարահիւս զրպարտիչներ, անզգամ ատուածաբաններ, թուլասիրտ դինուորներ և ազգակործան ապգասէրներ, և այլն։

Եւ որով հետև այս թշուառութեան առաջը պէտք է առնել Եկեղեցին և Ուսումնարանը. Եկեղեցւոյ մէջ, իբրև բարոյագիտութեան համաշխարհանում, պէտք է գտնել իւրաքանչիւր կիւրակէ անպատճառ հասկանալի լեզուաւ խօսել քարոզի բարոյականացնող, մտաւորապէս զարգացնող և քաղաքակրթիչ խօսքերը, վասն զի մարդս օրքան էլ կոպիտ, օրքան էլ չար լինի, դարձեալ կարող է համոզուիլ, նորոգուիլ և լինիլ ընդունակ բազմաեսակ առաքինութիւններ գործելու, եթէ միայն գանգում են շարժող, համոզող և զարթնացնող այժիր։ Մի և նոյն նպատակս պէտք է ուսումնարանների մէջ մացնել դասախօսութիւններ, վասն զի երեխաները միշտ սիրում են քաղցր և ազնիւ խօսքը քարոզի, նորա միշտ համոզուած են դէպ 'ի բարին և լոյսը, վասնորոյ և նոցա պէտք է ուղղեցոյց և առաջնորդ դէպ 'ի այդ լուսոյ և արդարութեան քաղաքը։ Այո, եթէ այս ընթացքով մեր ժողովուրդը և մեր երեխաները դաստիարակուին, մեծայոյս եմ՝ որ մեր ազգը շատ կարճ միջոցում կարող է հասնել աւետեաց երկիրը։ Նա կարող է աշխարհիս ամենազարգացած և ամենաքաղաքակիրթ ազգերից մէին համարուիլ, իբրև ընդունակ և աշխատասէր ազգ։

Բայց ցաւալին այս է՝ որ մեր ուսումնարանների մէջ կրօնի դասերը ուսուցանվում է միայն լոկ աքօլաստիկական չոր ու ցամաք կանոններով։ Աշակերտը ստիպուած է թուխթագի պէս անգիր բերան առնել Սուրբ Գրքի պատմութիւնները և վկայութիւնները, իբրև մի կանոն, առանց հասկանալու նոցա իմաստը և բարոյական ոգին։ Իսկ նոր մանկավարժութիւնը գրեթէ ամենայն առաջիկայ աշխատում է սովորեցնել վերլուծողական ճանապարհով։ Մանկերով ժողովրդական կեանքի մէջ՝ իմ բաղմամեայ ուսուցչութիւնս և մի քանի տարուայ քահանայութեանս փորձերը ապացուցին, որ մեր ժողովրդոց և մեր ուսումնարաններին անշուշտ հարկաւոր է ունենալ մի պարզ հասկանալի լեզուաւ կրօնի դասագիրք։ [illegible]։ Ու որով հետև մեր այս պահանջիս համապատասխան աղբիւրը գտնվում է միմիայն Աւետարանական փրկարար վարդապետութեան մէջ, և չորս Աւետարանչաց ուղղութիւնը ծառայում է մի և նոյն նպատակի, ուստի չնայելով գործի ծանրութեան և իմ տկարութեանս՝ հազիւ թէ տասն և երկու տարուայ մէջ կարողացայ, ժողովելով հարիւրի չափ հին ու նոր Հայ և օտար լեզուներով յայտնի հեղինակների կրօնական գրքեր։ (Այս գործիս մէջ ինձ քիչ չօգնեց իւր գրքերով Ցով Հանենէս տաղ քահանայ Աւշարեանցն։) Այս գրքերի օգնականութեամբ՝ բացատրեցի Մատթէոսի Աւետարանը պարզ աշխարհաբար լեզուաւ, բնագիրը թողնելով գլաբար, որպէս զի այդ Գիրքը կարողանայ պիտոյանալ նախ գպրոցներին, այնպէս որ լեզուի ուսուցիչը աշակերտներին թարգմանելով բնագիրը, բացատրէ գրա հետ նաև նորա էական նշանակութիւնը, որ գրուած է իւր մօտ, իսկ Կրօնի և բարոյագիտութեան ուսուցիչը՝ նոյնպէս բնագրի հետ սովորեցնէ Կրօնի և բարոյագիտութեան ամէն մի կէտը, առնելով կրօնի գիտութիւնը նոյն իսկ աղբիւրից, և վերլուծողական կանոնիւ բացատրելով նորա էական իմաստը, պատրաստէ ազգի համար կրօնասէր և բարոյական ազնիւ անդամներ։ Այս բացատրութեան մէջ պարզուած են նաև կրօնական այն հարցերը, որ

այժմ Նիւթ են դարձած վիճաբանութեան, հաստատուած Սուրբ Գրքի և Սուրբ Նախահարց վկայութիւններով։ Եւ այն կտորները, որոնք վերաբերվում են կրօնի վարդապետութեան, բայց չկան Մատթէոսի մէջ, դոցա հանելով ուրիշ Աւետարանիչների գրուածքներից, տեղաւորեցի իւր յարմարաւոր տեղը։ Միով բանիւ՝ այս իմ ձեռնարկս կարող է համարուիլ պարզ բացատրութիւն Աւետարանի մեր հասարակութեան համար, կարող է ընդունուիլ կրօնական դասագիրք զարգացեալ աշակերտաց համար, և կարող է լինիլ Նիւթ քարոզութեան մեր բարեկրօն քարոզիչ քահանայից համար։ Մեծայոյս եմ՝ որ իմ այս դոյզն աշխատութիւնս կընդունուի իմ սիրելի ազգի սիրոյ գանձանակի մէջ, իբրև ազքատ կնոջ լումայ։

Վ-ՀՈՒ ՎԱ-ՀՈՒՆՈՒ Շ-ՀՈՒՆԻՆ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՍ ՆԻՒԹՔ ԵՂԱԾ ԵՆ ԳԼԽԱՒՈՐԱՊԷՍ։

Ա. Մեկնութիւն Ներսէսի Շնորհալւոյ։

Բ. — Ոսկեբերանի։

Գ. — Աբբայի։

Դ. — Ձօն Բարսեղի։

Ե. — Իգնատիոսի։

Զ. Տեսութիւն Սուրբ Գրոց։

Է. Կենցաղ Խորայելացւոց և Քրիստոնէից։

Ը. Ամառուան, Ձմեռուան, Հարցմանց հատորները Տաթեւացու։

Թ. Աշխատասիրութիւնք Մատթէոս Կաթուղիկոսի։

Ժ. Զանազան կրօնական գրքեր։—Սահակ քահանայի, Սալանթեան, Մսերեան, Գնունի, Սիմէօնեան, Սկզբունք Տէր-Ստեփանեան. և այլն և այլն։

Ամենայն որ կարդայցէ զանուն Տեառն կեցցէ, իսկ զիա՞րդ կարդայցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչն լուան. կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ. կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին . . . Ապա ուրեմն՝ հաւատք 'ի լսելոյ են և լուր՝ 'ի բանէն Աստուծոյ։ Հռ. ժ. 14—17։

Գլ. Ա.

1. Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի Որդւոյ Դաւթի Որդւոյ Աբրահամու։
2. Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ զՅուդայ և զեղբայրս նորա։
3. Յուդա ծնաւ զՓարէս և զԶարայ ՚ի Թամարայ. Փարէս ծնաւ զԵզրոմն. Եզրոմն ծնաւ զԱրամ։
4. Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոն. Նաասոն ծնաւ զՍաղմոն։
5. Սաղմոն ծնաւ զԲոոս ՚ի Հռաքիբայ. Բոոս ծնաւ զՈվբէթ ՚ի Հռութայ. Ովբէթ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ։
6. Դաւիթ արքայ ծնաւ զՍողովմոն ՚ի կնոջէն Ուրիայ։
7. Սողովմոն ծնաւ զՐոբովամ. Ռոբովամ ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ զԱսափ։
8. Ասափ ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ. Յովրամ ծնաւ զՈզիա։
9. Ոզիա ծնաւ զՅովաթամ. Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ զԵզեկիա։

Որով հետև Սուրբ Գրքի էական մասը Աստուած է, վասնորոյ ամենից առաջ հարկաւոր է իմանալ թէ արդեօք դոյ Աստուած, և թէ ո՞վ է, ինչ է նա, և ապա սկսել բացատրել նորա քարոզած վարդապետութեան վսեմ մաքերը։

Աստուծոյ գոյութիւնը ամենից առաջ ապացուցանում են Սուրբ Գրքի անսուտ վկայութիւնները։ Երկրորդ՝ չկայ մի բարբարոս ազգ, որ չունենայ Աստուծոյ գոյութեան գաղափարը՝ և բան այնմ կրօնական պաշտամունքներ։ Երրորդ՝ ոչ թէ միայն զարգացած, այլ նաև ամենավերջի ռամիկը, երբ քննում է իւր և անթիւ արարածների գոյացութիւնը, հասնում է այն եզրակացութեան, որ ոչ մի նիւթ ինքն իրանից կամ դիպուածով չէ գոյացած և այդպէս իմաստութեամբ կարգաւորուած,

այլ սկիզբն է առնում մի որ և իցէ պատճառից, մտածում է, եթէ արարածները ունենային իրանք իրանցից ծնելութեան զօրութիւն և կամ զիպուածով և առանց պատճառի կարելի լինէր գոյանալ մի որ և իցէ իր, այն ժամանակ մենք մեր աչքով տեսած կլինէինք, և կամ պատմութեան մէջ կարդացած՝ թէ այս ինչ ազգը, այս ինչ ժամանակ, այս ինչ տեղ, այս ինչ ծառից, կամ լեռնից, կամ դաշտից, կամ ծովից է ծնուած, և կամ թէ այս ինչ մարդը՝ ծնեց հուկը, կամ թրուչուն, կամ ոչխար, կամ ծառ, և այլն։ Բայց ընդհակառակը տեսնում ենք, որ ամենայն իր իմաստուն կարգով և օրէնքով է ծնվում և գոյանում և այն՝ ոչ թէ առանց պատճառի, այլ ունենում է մի որ և իցէ պատճառ։ Այս տեղից մարդիկ համոզուեցան, որ կայ մի գերագոյն պատճառ, մի ամենակատարեալ էակ, որից և ստեղծուած են երկինքը և երկիրը իրանց զարդերով, բայց թէ ո՞վ է նա, ինչ է նա, այս չէին կարողանում իմանալ, վասնորոյ և սկսեցին պաշտել երկնային լուսաւորներին, բոյսերին, կենդանիներին, տարերքին, մինչև անգամ իրանց սիրած և ատած իրերին, կարծելով թէ՝ դոցա մէջ է այդ արարչագործ գերագոյն էակը։ Այսպէս, շարունակ փոփոխելով՝ մտեցան ճշմարիտ Աստուածաբանութեան, մինչև անգամ և գտին, որ այդ ամենակատարեալ Արարիչը մի անհիւթական, անսկիզբն, անեղ, անվախճան, ինքնագոյ, անհասանելի և անիմանալի էակ է։ Նա անանուն է, որով հետև իւր գոյութիւնը յայտնող մի անուն չունի, բայց իւր արարչական զօրութեան համար, ասուեցաւ Աստուած՝ այն է. ասա—ած, յաստեղ—ած, հաստատաց։ Աստուեցաւ Որէն՝ այն է. ինքնագոյ, անսկիզբն, անվախճան։ Լոյս՝ ճշմարտութեան համար։ Հոգի՝ նուրբ, մաքուր սրբութեան համար։ Սէր՝ մեզ սիրելուն համար։ Հուր՝ անաչառ արդարութեան համար, և այլն։ Այսպէս, այս անհուն Աստուածը՝ խոստացաւ Աբրահամին և Դաւթին իւր օրդու Յիսուսի գալուստը։ Մարգարէներն էլ մի և նոյնը գուշակեցին։ Ես գ. 14. բ. օր. գ. 24. սաղ. ժբ. 12. ճշբ. 11. հս. ժա. 1. խբ. 8. կզ. 2. հբ. իգ. 5—25. ծա. 57. մատ. իդ. 29. 36. զուկ. ա. 32 գ. 23. յով. Հ. ա. 5. գ. 16. ա. տիմ. գ. 16. հռ. ա. 20. 21. հբր. ժա. 6։

2. Խաշակը Տէրի նման ողջակէզ մատուցաւ, Յակովբ ստացաւ անդրանկութիւն։ Յուդայ օրհնուեցաւ Յակովբից Թամարի վերայ արած ուզեղ դատաստանի և Յովսէփի ազատելուն համար։ Մն. ժ. 3. իր. 18 իր. 14. լէ. 26.

3. 4. Յուդայ իւր հարս Թամարիցը Ծնաւ երկոքեակ Փարէս և Զարա։ Ամինադաբի համար պէտք է իմանալ, որ երբ իսրայէլացիք հասան կարմիր Ծովի ափը, և Ծովը երկու բաժանուեցաւ, այդ ժամանակ ոչ ոք սիրա չէր անում մտնել Ծովը։ Ամինադաբը՝ որ Յուդայի ցեղի իշխանն էր, մարակելով իւր կառքը, առաջ ինքը մտաւ Ծովը, որին և հետևեց իսրայէլեան բանակը։ Ամինադաբի աղջիկ Նասասոնի քոյր Եղիսաբէթին, Ահարոնը իւր կին առնելով, խառնեց թագաւորութիւնը և քահանայութիւնը միասին։ Եզդ. երդ. գ. 11. 12. էր. գ. 23. ժգ. 21. 22. Ծն. իե. 26 ը. 27. ա. Մն. ը. 5—9. Հռ. գ. 18։

5. Սաղմոնի ժամանակ իսրայէլացիք ահին Երիքովը։ Բասաբ (Հռէքեր) պոռնիկը, որ հաւատարմաբար պահեց լրտեսներին՝ յետոյ հաւատաց Աստուծոյ, և Սաղմոնայ կին եղև, որից Ծնաւ Բոոսը։ Ցեռ. ը. 1. Հռ. գ. 19—22. ա. Մն. ը. 10. 11. ա. թագ. ժգ. 1. ժէ. 12։

6. 7. Ուրիայի կինը Բերսաբէն էր։ Աստուած չնչերից Դաւիթի մեղքերը և պատժեց նորա շնութիւնը, որով մեռաւ նորա առաջին Ծնունդը։ Բ. թագ. ժբ. 24. գ. թագ. ա. 45. 46. ա. Մն. գ. 10։

8. 9. Յովրամը՝ ոչ թէ անմիջապէս Ծնեց Ոզիային, այլ Ծնեց թոռանց միջնորդութեամբ՝ այն է. Յովրամը Ծնաւ Ազոզիային, Ազոզիայ Ծնաւ Յովասին, որին թագաւորացրեց Յովիդայ քահանան։ Յովիդայ քահանայի կինը Յովրամ թագաւորի աղջիկն էր, որով դարձեալ խառնուեցաւ թագաւորութիւնը և քահանայութիւնը միմեանց հետ։ Յովաս Ծնաւ Ամասիային, իսկ Ամասիան Ծնաւ Ոզիային։ Աւետարանիչը այս երեքը բաց է թողում այս տեղից նորա համար, որ դրա Ծնուած են ամբարիշտ Աքաաբու և Եզաբելի աղջիկ Գոզոզիայից։ Աքաաբից և Եզաբելից մինչև Ամասիան չորրորդ Ծնունդ է, իսկ Ոզիայ հինգերորդը, և որով հետև հին օրինաց

մեջ ասուած է.—„Զայր որդիքը պէտք է պատժուին ծնողաց մեղքի համար արտաքին և մարմնական պատիժներով մինչև երրորդ կամ չորրորդ ծնունդը“, վասնորոյ վերջինս, ազատ լինելով ծնողաց պատժից, դրուեցաւ այս ազգաբանութեան կարգումն Երկ. օր. ե. 9. 10. գ. Թագ. իա. 21. գ. Թագ. ժա. գլ. մե. իբ. 11։

10. Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն, Ամոն ծնաւ զՅովսիա։
11. Յովսիա ծնաւ զՅեքոնիա և զեղբայրս նորա առ գերութեամն Բաբելացւոց։
12. Յետ գերութեան Բաբելացւոց ծնաւ Յեքոնիայ զՍաղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ։
13 Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովրն։
14 Ազովր ծնաւ զՍադոկ։ Սադոկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵղիուդ։
15. Եղիուդ ծնաւ զԵղիազար, Եղիազար ծնաւ զՄատթան, Մատթան ծնաւ զՅակով։
16. Յակով ծնաւ զՅովսէփ զայրն Մարիամայ՝ որում խօսեցեալ զմարիամ կոյս, յորմէ ծնաւ Յիսուս, որ անուանեցաւ Քրիստոս։

10—15. Յեքոնիայն երկուսն է՝ այն է. Յօսիան ծնաւ առաջին Յեքոնիային, որ ասվում էր նաև Յովակիմ կամ Եղիակիմ Սա տասն և մի տարի թագաւորեց Երուսաղէմում և նորա մահից յետոյ թագաւորեց նորա որդի Յեքոնիայ երկրորդը՝ միայն երեք ամիս, և ապա գերուեցաւ Բաբելոնում Նաբուկոդոնոսորից, որանից էլ ծնաւ Սաղաթիէլը։ Ա. եզր. գ. 46. երբ. իբ. 30. լէ. 1. գ. Թագ. իգ. 31—34. իդ. 8—12. բ. մե. լ գ. 9։

Այսպէս եթէ աւետարանիչը չապացուցանէր որ Յիսուս առաջ եկաւ սոցա սերնդից ոչ ոք չէր հաւատալ իրան։ Այս իսկ պատճառաւ Մատթէոսը գրեց այս ազգահամարը և առաքիալներն էլ շատ անգամ խօսեցին Քրիստոսի ազգաբանութեան համար։ Մատթէոսը՝ Աւետարանը գրելով Հրէից վերայ,

նոցա օրինաց համաձայն, սկսեց Յովսէփի ազգահամարից, իսկ Լուկաս, հեթանոսաց փերայ գրելով, նոցա օրինաց համաձայն, սկսեց Մարիամի ազգահամարից։ Այստեղ մի քանի կանանց յիշելու պատճառը՝ իրանց երևելի լինելն է։

Արդարև այդ կանանց անունը վատ էր դուրս եկած, բայց ընթերցողը արժանացրու դոցա, որ Քրիստոս յառաջ գայ իրանց ցեղից։ Այսպէս որդիքը չպէտք է ամաչեն և արհամարհեն իրանց ծնողաց և նախնեաց մեղքերի համար, երբ իրանք չհետևին նոցա չար օրինակին, որովհետև Քրիստոս խափանեց հին ծիսական և դատաստանական օրէնքը, բայց հաստատեց բարոյականը։ Մա. լբ. 6. յես. բ. 1. գ. 25. բ. թագ. ժբ. 24. յով. գ. է. 41. 42. գործ. բ. 30. գ. 25. 26. ժգ. 23. հռ. ա. 3. ժ. 4. գաղ. գ. 16. եփ. բ. 14. 15. երբ. է. 12։

16. Դաւիթը Բերսաբէից ծնեց երկու որդիք՝ այն է. Սողոմոն և Նաթան։ Նաթանից հասաւ Մատաթն, որ Մարիամ կուսի Հայր Յովակիմայ (հեղին) հայրն է, իսկ Սողոմոնից հասաւ Մատթան, որ Յովսէփայ Հայր Յակոբի և կուսի մօր Աննայի և Սօրէի հայրն է։ Այսպէս՝ ինչպէս Յովսէփը որդի Դաւիթի է ասվում Սողոմոնի միջնորդութեամբ, այնպէս էլ Մարիամը՝ մօր կողմանէ է նոյնպէս դուստր Դաւիթի Սողոմոնի միջնորդութեամբ։ Իսկ Յակոբայ բաց ի Յովսէփից ունէր նաև մի ուրիշ որդի, որ ասվում էր Կղէօպաս կամ Ալփէոս, սորա կնոջ անունն էլ Մարիամ էր, որ կոչվում էր քոյր Տիրամօր։ Այս Մարիամից ծնուեցին չորս որդիք.—Ա. Յակոբոս Ալփեայ, որ հեթանոսներից մէկն էր և Երուսաղէմի առաջին Եպիսկոպոսը, սա ընդհանրապէս ասվում էր եղբայր Տեառն։ Սորա անունով երբեմն իւր մայր Մարիամը՝ կոչվում էր Մարիամ Յակոբայ։ Բ. Յուստոս կամ Յովսէփ և կամ Բարսաբայ, սա էլ հեթանոսներից մէկն էր և երկրորդ Եպիսկոպոսը Երուսաղէմի մէջ։ Գ. Սիմէոն Կանանացի կամ Շմաւոն Նախանձայոյզ, սա երկուսներից մէկն էր, որ եղև Երուսաղէմի երրորդ Եպիսկոպոսը՝ և խաչուեցաւ 120 տարեկան հասակում Երուսաղէմի մէջ։ Դ. Յուդա կամ Թադէոս և կամ Յուդա Յակոբեան, սա ասվում էր եղբայր Յակոբայ արդարոյն։ Զեբեդէոսի կին Սաղոմէն սոցա քոյրն էր և

Յով Հաննէս Աւետարանի և Մեծ Առաքելոյն Յակովբայ մայրը։ Մատ. ԺԳ. 55. Ի. 20. ԻԷ. 56. յով Հ. ԺԹ. 25. գործ. ա. 23։

Աւետարանիչը կամենալով ցոյց տալ, որ Յիսուս ո՛չ թէ այր մարդու ներգործութեամբ, այլ Սուրբ Հոգւոյն զօրութեամբ ծնաւ Սուրբ Կուսից՝ և թէ Յովսէփը Տիրամօր վերայ միայն պահապան և խնամակալ էր և ոչ այլ ինչ, վասնորոյ փոխելով խօսակցութեան ոճը, այլ ևս չէ ասում՝— „Յովսէփ ծնաւ զՅիսուս“, այլ թէ.— „Յակովբ ծնաւ զՅովսէփ, զայրն Մարիամայ, որում խօսեցեալ զՄարիամ կոյս, յորմէ ծնաւ զՅիսուս, որ անուանեցաւ Քրիստոս“։ Որով հետև պապի ձեռաք հարսն և փեսան համարվում են մի մարմին, և փեսան ասվում էր օրինական որդի իւր աներ, էգերն էլ օրէն չէր հեթանոսաց մէջ ճիւղաբանութեան կարգում դնել, վասնորոյ և Ղուկասու ազգաբանութեան մէջ գրուած են, ինչպէս բնական, այնպէս էլ օրինական որդւոց անունները՝ այն է. „Որպէս կարծիւր որդի Յովսէփայ. որ Հեղեայն.“։ Ուստի Ղուկասը իւր ազգաբանութեան մէջ Մատթէոսի պէս գործ չ՚դրաւ «ծնաւ» բառը, այլ դրաւ «որ» բառը՝ այն է. «որ եղև»։ Օրինակ. Յովսէփի համար, որ ասում է.— „Որ Հեղեայն“ նշանակում է, որ Յովսէփը եղև փեսայ և օրինական որդի և ո՛չ բնական որդի Հեղեայի։ «Որ Ասուծոյն», նշանակում է, որ եղև ստեղծուած Ասուծածնից, և ո՛չ թէ օրինական կամ բնական որդի Ասուծոյ։


Գաւիթ
Սոդոմեան
Նոյեան
և այլն մինչև՝ ի
և այլն մինչև՝ ի
Մատեան
Մատեան
Սօրէ
Յակոբ
Անանա
Յովակիմ որ և Հեղի
Յովսէփ
Մարիամ Աստուածամայր
Յիսուս
Գլխաւոր որ ասվում է նաև Գլխիէոս, որոյ կնոջ անունն է Մարիամ քոյր Տիրամօր։ Յով. ժբ. 25։
Սադոմէ կին Հերեթիայի
Յակովբոս Գլխիայ եղբայր Տեառն
Յօտէս Մատ. իէ. 56.
Յուդաս որ և Թադէոս
Սիմէօն կամ Եմաուսն. Մարկ. գ. 1.
Մեծ Յակովբոս
Յով. Հանէս Աւետարանիչ։

17. Արդ ամենայն ազգ յԱբրահամէ մինչև ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. և ի Դաւիթէ մինչև ի գերութիւնն Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք. և ի գերութիւնէ Բաբելացւոց մինչև ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք։

18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս։ Խօսեցեալ զմայր նորա Մարիամ Յովսէփու, մինչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ։

19 Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար էր և ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա։

20 Եւ մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, ահա Հրեշտակ Տեառն ի տեսլեանն երևեցաւ նմա և ասէ. Յովսէփ Որդի Դաւթի, մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կինքդ. քանզի որ ՝ի նմայն ծնեալ է ՝ի Հոգւոյն Սրբոյ է։

21 Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց։

17 Ազգ՝ այսուհետ պէտք է հասկանալ այն ծնողական անձանց, որոնցից յառաջացած են ուրիշները։ Աբրահամից մինչև Դաւիթ լինում են տասն և չորս անձինք։ Սողոմոնից մինչև առաջին Յեքոնիայն լինում են նոյնպէս տասն և չորս անձինք։ Երկրորդ Յեքոնիայից մինչև ի Քրիստոս լինում են նոյնպէս տասն և չորս անձինք։ Այսպէս, ինչպէս խորայէլացիք մինչև Աւետեաց երկիր հասնելը, ունեցան քառասուն և երկու թագաւորներ, այնպէս էլ Աբրահամի սոհմից մինչև ՝ի Քրիստոս, ունեցաւ քառասուն և երկու անձինք, բայց ծնողք և ծնունդք քառասուն և մի, որովհետև Քրիստոս մարմնոյ կողմից ոչ ոք չ՝ծնեց։ Աւետարանիչը ցուցանելով այս հաշիւը, հաստատում է Քրիստոսի գալստեան ճշմարտութիւնը։ Մնդ. խթ. 10. Թուղ. 5։

18 Մարիամ կուսի ծնողքը Յովակիմ (Հեղիսին) և Անն՝ան բնակվում էին Գալիլեայի Նազարէթ քաղաքում։ Նոքա անզաւակ լինելով՝ անդադար խնդրում էին Աստուածներից որդի, մինչև անգամ խոստացան նուիրել Աստուծոյ այն երեխային։ Աստուած լսելով նրանց աղօթքը, պարգևեց մի աղջիկ, որին անուանեցին Մարիամ։ Երբոր երեխան հասաւ երեք

տարեկան հասակը, ծնողքը նուիրեցին Նորա Աստուծոյ տաճարին։ Այստեղ Մարիամը միշտ լսելով բարեպաշտ մարդիկ և զգացմունքներ, արժանացաւ լինել Աստուծոյ ծնող։ Յովակիմը և Անան այդ միջոցում վախճանուեցան։ Երբոր Մարիամը հասաւ 14 տարեկան հասակին, քահանայքը, Աստուծոյ հրամանաւ, հրամայեցին Մարիամին, ուրիշ աղջկերանց նման մարդու գնալ։ Բայց նա հեռացաւ այս առաջարկութիւնից, յայտնելով՝ որ ինքն ուխտած է միշտ կոյս մնալ։ Քահանայք խորհուրդ կայմեցին հարցնել Աստուծոյ։ Աստուած յայտնեց նոցա, որ Մարիամին պահեն մի արդար մարդու վերայ, որի անունը Յովսէփ էր և ինքն ծուդայի ցեղից։ Սա նոյնպէս բնակվում էր նոյն Նազարէթ քաղաքում։ Նա, ինչպէս աւանդութիւնը ասում է, քառասնից աւելի տարեկան մարդ էր։ Այս սուրբ մարդու հետ նշանուեցաւ Կոյսը։ Այս Մարիամի մօտ ուղարկեց Աստուած Գաբրիել հրեշտակապետին, որ ասաց Նորա.— «Ուրախացիր բերկրեարդ, Տէրը քեզ հետ է, օրհնեալ ես Դու կանանց մէջ։ Մի վախենար, Մարիամ, Դու գտիր շնորհք Աստուծոյ առաջի, Դու կ'ծնես որդի և կանուանես Նորա Յիսուս։ Նա կլինի Մեծ և Բարձրելոյն Որդի կ'կոչուի։ Տէր Աստուածը կտայ Նորա իւր Հօր Դաւթի աթոռը և նա կթագաւորէ Յակովբի տան վերայ, և Նորա թագաւորութիւնը վախճան չի ունենար։ Հեզ Կոյսը թէպէտ խօսեցած էր Յովսէփի հետ, բայց որով հետև երբէք Նորա կին եղած չէր, վատորոյ և ասաց.— Ի՞նչպէս կլինի ինձ այդ, երբ ես մարդ չեմ ճանաչում։ (մարդ չունիմ) հրեշտակը պատասխանեց.— «Սուրբ Հոգին կիջնի Քո վերայ և Բարձրելոյն զօրութիւնը հովանի կլինի Քեզ, որով հետև Քեզանից ծնուելու Մանուկը՝ Սուրբ է, և Աստուծոյ Որդի կ'կոչուի։ Աստուծոյ համար անկարելի բան չկայ»։ Սուրբ Մարիամը հեզութեամբ ասաց.— «Ես Աստուծոյ աղախին եմ, թող լինի ինձ ինչ որ ասացիր»։ Սրանից յետոյ՝ Սուրբ կոյսը ճանապարհ ընկաւ երեքօրեայ լեռների միջով՝ և գնաց շնորհաւորել իւր ազգական Եղիսաբէթի յղութիւնը։ Բարեպաշտ մարդիկը իրանց ուրախութիւնը կրկնապատկում են, երբ Նորա բաժանում են միմեանց մէջ։

Մարիամի մեջ Եղիսաբեթի մոտ երեք ամիս և ապա դարձաւ իւր տունը։ Մրանից յետոյ Յովսէփը գալու նորա յղի, որի վերայ շատ ցաւեցաւ։ Առաուած կամեցաւ Աստուածամօր պատիւը այս պատճառներով.—Նախ, որով հեան պատի է ժառանգութեան իրաւունք ապրիս որդուն և ոչ սերմն։ Յովսէփը, լինելով մերձաւոր ժառանգ Դաւթի, Յիսուս շատ յարմարութեամբ ասուեցաւ, գերբնական, օրինաւոր ժառանգ հայրենական աթոռոյն Դաւթի։ Երկրորդ, եթէ կոյս պահուած չլինէր՝ պէտք էր քարկոծուէր Հրէաներից, և Յիսուս համարուէր ապօրինաւոր ծնունդ։ Բ. օր. իր. 23. 24. մատ. ա. 19. գուկ. ա. 26. 57։

Հնումը սովոր Աստուածաշնչաց խօսքերի վերայ կարծիք ունեցան, որպէս թէ Սուրբ Յովսէփը, բաց ի Մարիամ կուսից, ունեցած է նաև ուրիշ կին, որից ծնուած են որդիք և աղջիկք։ Բայց յետոյ շատ բացայայտ հաստատուած է, որ նոքին իսկ յիշուած Յիսուսի քոյրերը և եղբայրներ՝ էին Յովսէփի եղբօր Կղէոպայի որդիքը և աղջիկները, որով հեան հնումը սովորութիւն էր հօրեղբօր որդիքը եղբայրներ անուանել, աղջիկները քոյրեր, ինչպէս Կղէոպայի կին Մարիամը, լինելով՝ Տիրամօր մօրաքոյր աղջիկը, Աստուածահօր քոյր էր կոչուում Մա. ժդ. 14—16 իր. 15. եր. բ. 13. յովհ. ժԹ. 25. գործ. է. 26—38. Հա. թ. 3։

19. Յովսէփը զգած և արդար մարդ էր, չուզից յայտնապէս արձակել Մարիամին, այլ խորհեց գոյժ գնել մի այնպիսի միջոց՝ որ ոչ օրէնքը կոտրած լինի, և ոչ Մարիամը քարկոծուի, իբրև շնացող ամն։ Ուստի կամեցաւ հանձայն բ. օր. իգ. 1. թողով՝ արձակել Մարիամին, իբրև իրան անհաճոյ անձնի։ Իսկ Մարիամը չկամեցաւ, պարծենալով՝ պատմել Յովսէփին իւր հրաշալի յղութեան, հրեշտակի տեսութեան մասնամասնութիւնը, կարծելով՝ որ այս մի այնպիսի բան չէր, որ Յովսէփը կարողանար հաւատալ, ուստի յանձնեց իրան Աստուծոյ, որ նա հոգայ իւր համար։ Բարի մարգիկը այնպէս կվարուին իրանց կանանց հետ։ Նոքա ամէն մի թեթեւ յանցանքի համար չեն թողնիլ իրանց նշանածը և գնալ ուրիշ

վերայ նշանուիր։ Յայտնի բան է, որ այդպիսի մի երևելի դաշնադրութեան և մի երևելի հիսուսոյութիւնների ունեցող տարնութեան մէջ մտնելը, անանց սիրոյ և լաւ Յանձնութեան մեծ յիշատակութիւն է մտնելից յետոյ էլ ապանց օրինաւոր պատճառով հեռանալը՝ խարերացութիւն և մեծ մեղք է։ Ի. որ. իր. 23. 24։

20. 21. Մինչև որ Յովսէփը այդպէս բաներ էր մտածում, այլ Տիրոջ հրեշտակը երևեցաւ նրան երազի մէջ և ասաց.— Դաւթի որդի Յովսէփ՝ մի՛ երկնչիր առնելու քո մարիամ կանանց, և բացարձակ իմացիր, որ Սուրբ Կուսի յղութիւնը Սուրբ Հոգւոյ ներգործութեամբն է եղած։ Նա կ՚ծնի որդի և դու նրա անունն Յիսուս կ՚դնես, (Երբայեցերէն փրկիչ՝ նշանակէ) որովհետև Նա պէտք է փրկէ իւր ժողովուրդի իւրեանց մեղքերից։ Բացի այս անունից Քրիստոս իւր պաշտօնի հատուկ երեք խորհրդական անուններ ևս ունեցաւ։

Քրիստոս Յուսարէն անուն է, որ Երբայեցերէն նշանակում է Օծեալ, որովհետև Նա երկու անգամ օծուեցաւ Սուրբ Հոգուց։ Մէկը՝ նոյն իսկ յղացման բոլորէին երբ մարդկութիւնը հաւատրեցով Աստուածութեան հետ, օծուեցաւ Սուրբ Հոգուց ամենայն շնորհների և պարգևների հեղմամբ, միասնութեան ժամանակ, Սուրբ Հոգին ապաւնակերպ իջանելով նրան վերայ, օծուեցաւ բան մարդկութեան Քահանայապետ, որ ինքն իրան պատարագ մատուցանելով, հաշտեցրաւ Հայր Աստուածը աշխարհի հետ։ Մարգարէն, որ Աստուծոյ գաղտնի խորհուրդները, ապագայ իրերը, վերջին դատաստանը և այլն, յայտնեց մարդկանց։ Թագաւոր յաւիտենական, որ տիրում է երկնքի և երկրի։ Մատ. գ. 16. իա. 11. զուկ. ա. 32.—35. յովհ. ժբ. 37. երբ. դ. 14. 15. յայտ. ա. 5։

22. Այլ այս ամենայն եղև, զի լցցի որ ասացաւն, ի Տէառնէ ի ձեռն Եսայեայ մարգարէի։

23. Ահա կոյս յղասցի և ծնցի Որդի և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ Աստուած։

24. Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, արար որ-

պէս հրամայեաց նմա հրեշտակ Տեառն, և առ յինչ
գկին իւր։

25. Եւ ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զան-
գրանիկ և կոչեաց զանուն նորա Յիսուս։

22—24. Եսային այս մարգարէութիւնը արաւ 740 տարի Քրիստոսից առաջ։ Յիսուսի ծնունդը ոչ թէ նորա համար եղաւ, որ մարգարէութիւնը կատարուի, այլ որովհետև պէտք էր լինէր, վասնորոյ և մարգարէութիւնը եղաւ։ Ուրեմն ոչ թէ մարգարէութիւնն է պատճառ ապագայ եղելութեան, այլ եղանելիքն են պատճառ մարգարէութեան։ Աստուծոյ գիտութիւնը առաջ չէ գալիս լինելի իրերից, այլ պատճառ է իրերին։ Մինչ գիտենք, նա որ ծնում է չէ կոյս, նա որ կոյս է, չի ծնանիլ, բայց Տիրամայրը՝ կոյս լինելով, ծնում է և ծնելովն էլ մնում է կոյս։ Ահա արդարև հրաշալի ծնունդ և զարմ մեծ հիացման արժանի։ Վասնորոյ և Յիսուս իրապէս ստացաւ Էմմանուէլ հրաշալի անունը, որ ստուգաբանվում է. «Աստուած ընդ մեզ»։ Վասն զի մեզ հետ եղաւ մարմին առնելով, մեզ փրկելով և շնորհք տալով։ Յովսէփը իսկոյն հնազանդուեցաւ այս հրամանին։ Աստուածապաշտները շատ սիրով են կատարում Աստուծոյ կամքը։ Այսպէս՝ Աստուած շատ անգամներով իւր կամքը յայտնել է ժողովրդին երազներով, սրանից չ'պէտք է հեռացնել՝ որ ամէն երազներ Աստուածանից են և ունին նշանակութիւն։ Մն. իր. 15. թոռ. ժբ. 6. գ. թագ. 4. 5. հս. է. 14. գան. թ. 21. մատ. բ. 12. յովհ. ա. 1—16 հռ. թ. 5. կոր. ա. 16. բ 9. երբ. ա. 6—9. ա. յովհ. է. 20։

25. «Մինչև» բառը Սուրբ Գրքում շատ կերպով է գործածվում։ Նախ, ցոյց է տալիս իրերի անկարելութիւնը, ինչպէս.— «Եւ Մեկոքոդայ գտեր Սաուղայ ոչ եղև Որդի մինչև ցօր մահուան իւրոյ»։ Այսինքն, անկարելի էր մեռնելից յետոյ որդի ծնանիլը։ Երկրորդ, ցոյց է տալիս ապագայի յարատևութիւնը և մշանջենաւորութիւնը, ինչպէս.— «Եւ անդէն ոչ դարձաւ ագռաւն մինչև ց'ցամաքիլ ջրոյն յերկրէ»։ Այսինքն, յարատեան չ'վերադարձաւ։ «Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի»։ Այսինքն, յարատեան ձեզ հետ

եմ։ «Այսպէս են աչք մեր առ քեզ Տէր Աստուած մեր մինչև ողորմեսցես ի վերայ մեր»։ Այսինքն, յաւիտեան մեր աչքը քեզ վերայ է։ Երրորդ, ցոյց է տալիս ներկայ իրի հարկաւորութիւնը՝ առանց ապագայի յիշողութեան։ «Նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ մինչև զգենուցուք զզօրութիւն ի բարձանց»։ Այսինքն, Սուրբ Հոգին ընդունելուց յետոյ, ազատէք այդ պատուիրանից։ Մտ. ը. 7. բ. Թագ. գ. 23. սաղ. Ճեր. 2. մատ. իբ. 20. գուկ. իգ. 48։

Այսպէս, «մինչև» բառը պէտք է հասկանալ այս տեղ առաջին և երկրորդ բացատրութեան յարմար նշանակութեամբ և ոչ այս վերջին։ Ուստի մենք հաւատով երկիրպագանում ենք և ջերմեռանդութեամբ յարգում Ցիրամոր Հրաշալի և մեծանշանաւոր կուսութիւնը՝ Ծնողից առաջ և յետոյ։ Ուստի և ուղղափառ մտքով նորա գաւանում ենք Աստուածածին և միշտ Կոյս։

Իսկ «անդրանիկ» բառի համար չպէտք է իմանալ որպէս թէ Մարիամը Յիսուս Ծնելուց յետոյ Ծնաւ նաև ուրիշ որդիք և Յիսուս նոցա մէջ առաջնեցաւ «անդրանիկ» առաջնածին)։ Այլ պէտք է իմանալ, որ «անդրանիկ» բառը այս տեղ նշանակում է Միածին, վասն զի, Յիսուս ինչպէս համաձայն Աստուածութեամբը Միածին և անդրանիկ որդի էր Հօր Աստուծոյ, այնպէս էլ մարդկութեամբը եղև միածին և անդրանիկ որդի ամենաբարեկամ Կուսին Մարիամու։ Ուստի չունեցաւ նաև ուրիշ եղբայրներ և քոյրեր։ Եր. գ. 22. յով. ե. 14—18. ա. կոր. գ. 9 Նարեկ. լդ. 5։

Եթէ «անդրանիկը» համարուէր միայն նա, որից յետոյ Ծնուած լինէին ուրիշ եղբայրներ և քոյրեր, այդ ժամանակ ոչ թէ ամէնքը պէտք է վճարէին, բայ օրէնաց, անդրանկանց գինը, այլ միայն նոքա, որ առաջին որդին Ծնանելուց յետոյ Ծնած լինէին երկրորդը։ Բայց նոքա չէին սպասում երկրորդի Ծնունդեան, վճարում էին անդրանկաց գինը ուղեղ առաջին որդի Ծնանելուց յետոյ։ Ուրեմն իսկապէս անդրանիկ ասվում է նա, որ առաջին Ծնունդն է։ Բաց ի սրանից անդրանիկ բառը ունի նաև ուրիշ խորհրդաւոր նշանակութիւն՝ այսինքն.— «Նմանը

ոչ յառաջ տեսուած և ոչ լեռայ»։ «Եւ անդրանիկ արարիչ զնա և քաջեալ քան զամենայն թագաւորս երկրի»։ Նբ. Ժդ. 2. ղդ. 20. ապդ. Ա.Է. 24. 25. մատ. Ժա. 25 – 27. իդ. 42. յովհ. բ. 4. Ժ. 30. Ա.Հ. 8. երբ. ա. 5—6. Հռ. բ. 29. կոր. ա. 15—19. կոր. Ժ.Հ. 20։

Այս զլեսից տեսանենք, որ Յիսուս Տէրը Կուսի արիւնից առնելով մարդկային բնութիւն՝ այն է. մարմին, հոգի, միտք, կամք, ներգործութիւնք և այն, կազմեցաւ մարդկային անձն, որի մէջ Աստուածայինը, անխառն և անշփոթ միաւորելով, եղև կատարեալ մարդ և կատարեալ Աստուած, կամ մի խօսքով Աստուածամարդ, և այս ոչ թէ կարծեօք կամ երևմամբ, այլ ճշմարտապէս։ Այնպէս որ ոչ Աստուածութեամբը կորցրաւ մարդկութիւնը և ոչ մարդկութեամբը Աստուածութիւնը, փոխն զի միշտ Աստուածային կամաց հպատակէր մարդկայինը։ Այսպէս Յիսուսի մէջ գտանում ենք մի Աստուածային անձն, իսկ բնութիւնը, կամքը, և ներգործութիւնը երկուսը՝ այն է. մարդկային և Աստուածային։

Սուրբ և ուղղափառ վարդապետները ասացին նաև՝ որ Քրիստոսի մէջ կարելի է ուղղափառ մտքով ընդունել մի կամ երկու բնութիւն, և այս իսկ պատճառաւ մի և նոյն անձին տարբ ենք Աստուածային ստորոգելիքներ և մարդկային յատկութիւններ։ Բայց թէ Աստուածային բնութիւնը ինչպէս անբաժանաբար և անշփոթապէս միաւորեցաւ մարդկայնոյն հետ, այս մեզ անհասկանալի է։ Մատ. ա. 21. իդ. 41. 63. ղուկ. բ. 11. իբ. 42. յովհ. բ. 24. 25. Ժդ. 28. ա. կոր. բ. 8. ընդհ, 78—81 երես։

Եւ որով հետև արարածական ոգիների մէջ չէր կարելի գտնել մի այնպիսի անձն, որ կարողանար մարդկային բնութեան մէջ եղծուած և ապականուած Աստուածային պատկերը վերանորոգել՝ և մեղքերը ջնջելով, լոյս և արդարութիւն տարածել, փոխանակ՝ Աստուծոյ անհաս մարդասիրութեան մէջ, յաւիտենից որոշուեցաւ, որ այս փրկութեան մեծ գործը՝ պիտի կատարէ Յիսուսը, իբր մարդկութեամբը երաշխաւոր լինելով։ Մտ. բ. 16, 17. ե. 3. դ. 3—5. գործ. դ. 28. Ժ.Հ. 31. եփ. ա. 3—14։

ԳԼ. Բ.

1. Եւ ի ծնանիլն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի, յաւուրս Հերովդէի արքայի, ահա մոգք յարևելից եկին յԵրուսաղէմ։
2. Եւ ասեն. Ո՞ւր է, որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղ նորա յարևելս. և եկաք երկիրպագանել նմա։
3. Եւ իբրև լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա։
4. Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս և զգրագիրս ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ՝ թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն։
5. Եւ նոքա ասեն ցնա. ի Բեթղեհէմ Հրէաստանի, զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին։
6. Եւ դո՛ւ Բեթղեհէմ երկիր Յուդայ, ոչինչ կրսես ես յիշխանս Յուդայ, ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զիսրայէլ։

1. Յիսուսի ծնանելու ժամանակ Հռովմայեցւոց Օգոստոս կայսերից հրաման գալս եկաւ, որ իւր հպատակներին աշխարհագիր անեն՝ ամէն մէկին իւր հայրենիքումն։ Յովսէփը և Մարիամը Դաւիթի թագաւորի ցեղից լինելով՝ պէտք էր գրել տային իրանց անունը Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքումն, որի մէջ ծնուած էր Դաւիթը, ուստի և ասվում էր յատկական քաղաք Դաւիթի։ Ա. թագ. ժգ. 1—18։

Այս Բեթղեհէմը մի փոքր գիւղ էր Երուսաղէմից երկու ժամու ճանապարհ դէպ ի հարաւ։ Սա ասվում էր Հրէաստանի Բեթղեհէմ որոշելու համար միւս Բեթղեհէմից, որ գտնվում է Գալիլիայումն։ Յես. ժԹ. 15։

Յովսէփը և Մարիամը երկոքեան հասան Բեթղեհէմ։ Այստեղ գրուելու համար ժողովուած էին շատ մեծ բազմութիւն։ Յովսէփը շատ աշխատեց գիշերը անցկացնելու համար մի օթևան գտնել, բայց նրանց ոչ ոք տուն չտուաւ, որովհետև ամէն տեղ բռնուած էին։ Նոքա ճանապարհորդութիւնից նեղացած, և վրդովուած հոգով ճարահատուած, գնացին քաղաքի ծայրումն գտին մի այլ (ծակ քարափ), ուր հովիւները վատ եղանակներին և գիշերները հաւաքում էին իրանց խաշները։ Այս իսկ այրումը

Ծնաւ Ցիսուս Քրիստոս, Աստուծոյ Որդին։ Խոր գիշեր էր՝ երբոր Ծնաւ Փրկիչը, այնպէս որ գրեթէ բոլոր Բեթղէհէմ ընկղմած էր խոր քնի մէջ, միայն չէին քնած մի քանի հովիւներ, որոնք պահպանում էին դաշտում իրանց խաշները։ Այս հովիւները գիշերի մէջ յանկարծ տեսին իրանց առաջև հրեշտակին երկնային լուսով պատած։ Նոքա վախեցան, բայց հրեշտակը՝ ասաց.— «Մի՛ վախենաք, ես աւետում եմ ձեզ մեծ ուրախութիւն, որ կ'լինի ամէն մարդոց համար։ Այժմ Դաւթի քաղաքում Ծնաւ Քրիստոս Փրկիչը։ Դուք կ'ճանաչէք Նորան՝ գտնելով փաթաթուած խանձարուրով, և պառկած մսուրի մէջ։ Սրանից յետոյ հովիւները տեսան աւետարեր հրեշտակի հետ միասին անթիւ հրեշտակներ, որոնք փառաբանում էին Աստուծոյն՝ ասելով.— «Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն։ Հովիւները ուրախութեամբ գնացին տեսնել ինչ որ Տէրը յայտնեց։ Նոքա մտին իրանց ծանօթ այրը՝ և գտին այնտեղ Յովսէփին և Մարիամին և տեսին մանկան պառկած մսուրի մէջ։ Նոքա մօտեցան լուռ նայում էին Նորան յարգութեամբ։ Հովիւները պատմեցին Մարիամին և Յովսէփին իրանց երևացած երևոյթը և դուրս եկին այրից՝ փառաւորելով Աստուծոյն, իսկ Մարիամը այս ամէնը պահում էր իւր սրտում Ղուկ. բ. 1—20։

Այսպէս՝ Աստուծոյ Որդին ծնուելով ամենադառն աղքատութեան մէջ՝ սովորեցրաւ մեզ ուրախութեամբ համբերել աղքատութեան և դառնութեան միայն Սուրբ և ազնիւ նպատակների համար, և իմանալ՝ որ դոցա մէջ կան այնպիսի բարութիւններ, որոնք աւելի շատ լաւ են՝ քան թէ հարստութիւնը։ Ուրեմն որքան երկինքը երկրից հեռու է, այնքան և աւելի բարձր են Աստուծոյ խորհուրդները մարդկանց խորհուրդներից։ Սաղ. լբ. 3—16. ճը. 1—6։

Այս Հերովդէսը Ասկաղոնացի էր, որ Հռովմայեցի Օգոստոս կայսրից նշանակուեցաւ թագաւոր ամենայն Հրէաստանի։ Սա ասվում էր Մեծ, և ինքն էր շատ նենգաւոր, չար և անգութ մարդ, որ և աշխատում էր թագաւորել ամենի վերայ։ Սա 37 տարի թագաւորեց Հրէաստանի վերայ և իւր կրքոտ նախանձաւորութիւնից տիրապետած, սպանեց շատերին, որոնց մէջ էին նաև իւր կինը և երկու որդիքը։

Հնումը Պարսիկները, Քաղդէացիք և Եգիպտացիք մոգ, ասում էին իմաստուն և հմուտ աստղաբաշխներին, ժամանակ անցնելից յետոյ, երբ աստղաբաշխները ունայնութեամբ և առասպելների մէջ կործանուցան՝ «մոգ» անունը ապականուեցաւ, և փոխանակուեցաւ գիւթ, կախարդ և քուրմ բառերով։ Իսկ այն մոգերը, որ եկին Յիսուսին երկրպագելու իմաստուն իշխաններ էին, որ ասվում էին նաև թագաւորք։ Սոքա երեք անձինք էին, որոնց անունները յայտնի են միայն աւանդութիւններից։ Թագաւոր կոչեաց (Կարմիր ծովի մերձակայ կողքը), որի անունը Մելքոն էր, սա էր Եթիոպիոյ իշխանը։ (Ոմանք ասում են թէ սա Հայաստանի Մոգք գաւառիցն էր։) Թագաւոր Պարսից, որի անունը Բաղդասար էր, սա էր սեաւ և ինքն Երջանիկ Պարսիոյ իշխանը։ Թագաւոր Սաբայ, որի անունը Գասպար էր, սա էր Սաբայ գաւառի իշխանը։ Ես. կ. 6. սաղ. Հա. 10. 17.

«Երուսաղէմ բառը կազմակերպուեցաւ երկու բառերից այն է՝ Սաղէմ և Յերուս, որով հետև այս քաղաքը առաջ ասվում էր Յաղէմ, յետոյ կոչուեցաւ Յերուս։ Մն. ժդ. 18. յես. ժբ. 28։ Մոգերը գիտելով՝ որ Երուսաղէմն Հրէաստանի մայրաքաղաքն է, կարծեցին թէ՝ Մեսիան պէտք է այդ տեղ ծնուի և թագաւորէ, վասնորոյ և եկին Երուսաղէմ վերաստուգել իրանց կարծիքը գիտուններից և օրինաց վարդապետներից։

2. Այն, այս մի շատ մեծ ջերմեռանդ սիրոյ համարձակութիւն էր իմաստուն իշխանների կողմից, թագաւորանիստ քաղաքում, ուր ներկայապէս թագաւորում էր Հերոդէս, որոնել նորածին արքային։ Բայց դարձ կարծեցին թէ՝ բոլոր Երուսաղէմացիք ևս, իրանց պէս պէտք է փափագեն Մեսիայի երկրպագութեան, վասնորոյ և համարձակ, անվախ հարց առաջարկեցին.— «Ո՞ւր ծնաւ արքայն Հրէից»։

Աստղի համար պէտք է իմանալ, որ Մոգերը, երբև աստղաբաշխներ, երբ տեսին աստղը արևելքում, իսկոյն գիտացին, որ դա հասարակ կամ գիսաւոր աստղերից մէկն չէր, այլ էր՝ Նրանցից շատ տարբեր, մի արտաքոյ կարգի բան, ինչպէս շարժմունքով, այնպէս էլ պայծառութեամբ և ձևով։ Սա երբեմն ծածկվում էր, երբեմն գնում էր մոգերի առաջև, ոչ թէ ուրիշ աստղերի պէս թեքուելով, այլ ուղղակի, և երբեմն էլ դադարում

էր։ Սա ոչ միայն գիշերն էր երևումի այլ նաև ցերեկները՝ լուսատոր տեսի պէս առաջնորդում էր նոցա։ Եբ. ժդ. 24։

Որով հետև Հրեայք սովոր էին Հրեշտակների տեսութեան միջնորդութեամբ Ճանաչել Աստուծոյ, վասնորոյ և Աստուած հրեշտակներով հրաբերեց հովիւներին իւր Աստուածորդուն երկրպագութեան, իսկ հեթանոսներին հրաբերեց աստղաբնութեամբ, որով հետև զգաս սովոր էին աստղերը քննելով, նոցա զարմանալի կարգերից Ճանաչել Աստուծոյն։ Մոգերը Հասան Բեթղէհէմ և նոցա յայտնուեցաւ Աստուածորդին։ Այժմ էլ միայն մեր հաւատն է կարող մեզ առաջնորդելով՝ տանել և արժանացնել Աստուածորդոյ երանական տեսութեան։ Հռ. ժ. 8—11.

3. Հերոդ դէս, նախապէս տեղեակ լինելով, Ցակով նահապետի մարգարէութիւնից.— «Մոգ պակասին իշխանութեան յաղագէն Յուդայ զարոց է Մեսիայն։ Մն. խթ. 10. ամենակերպ աշխատում էր հաւատացնել Հրեից, որ ինքն է Մեսիայն, և ներկայապէս թագաւորում է, վասնորոյ և նորոգից Սողով մենի տաճարը՝ և խոստացաւ շատ բարութիւններով փարթամացնել նրանց, որոնք կընդունեն իրան, իբրև Մեսիայ։ Շատերին էլ ազատեց հարկերից, շատերին մեծամեծ պարգևներով յդփացուցաւ, ուստի և շատերը, որոնք հաւատալով ընդունեցին նորան, որպէս Մեսիայ՝ ասուեցան, Հերոդիանոսք։ Ահա այս իսկ պատճառաւ Հերոդէսը խռովեց և շատ վախեց, կարծելով, չլինի թէ ճշմարիտ Մեսիայի յայտնուելով, հրատարակուի իւր սուտ Մեսիայ լինելը և զրկուի իւր թագաւորութիւնից։ Խռովեցաւ նաև Երուսաղէմ, այսինքն ժերերը, իշխանները, քահանայքը, որոնց մեծ մասը Հերոդիանոսք էին և ունէին փառք և փարթամութիւն։ Սոքա էլ կարծում էին, չլինի թէ Յիսուսի գալստեամբ ծագուի մեծ խռովութիւն և պատերազմ Յիսուսի և կայսեր մէջ, որով և իրանց հարստութիւնը, փառքը և հանգրստութիւնը վտղուի և նուազուի։

4—6. Ժողով կազմեցին ստոյգ իմանալ Մեսիայի ծննդեան տեղը, որպէս զի իսկոյն սպանեն։ Ժողովը Միքիայի այս մարգարէութիւնից և ուրիշ շատ վարդապետներից հասաւ այն եզրակացութեան, որ Բրիստոս պէտք է ծնուի Հրէաստանի Բեթղէհէմի մէջ։ Միք. ե. 2։ Բեթղէհէմ՝ տառէ տաղում էր

Եփրատայ, որ թարգմանեալ ուղղէ՝ տուն Հացի», տեղի պարարտութեան համար։ Նաև այդ գիւղի շինողի անունն Եփրատ էր և իւր որդոյն անունը Բեթղէհեմ։ «Եփրատայ հՀայն Բեթղեհեմայ»։ Ա. Մն. գ. 4. Ծն. գլ. 19։

Այս Բեթղէհէմը մի փոքր գիւղաքաղաք էր և ուներ իւր մէջ շատ քիչ ժողովուրդ։ Իշխանը, որ կառավարում էր դոցա շատ փոքր էր, հաճեմատելով Յուդայի միւս իշխանների հետ, որ ունէին մեծամեծ մայրաքաղաքներ, զօրքեր և հպատուութիւններ։ Չնայելով այս դրութեան, որով հետև այս փոքրիկ քաղաքում Ծնաւ Փրկիչն, որ Տէր և Արարիչ է բոլոր տիեզերաց, վանողոյ այդ գիւղաքաղաքը համարուեցաւ բոլոր քաղաքների մէջ մեծ և ազնիւ։ Դատ. գլ. 15. զուգ. բ. 4. յով. Հ. է. 42։

7. Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, և ստուգեաց ՚ի նոցանէ զժամանակ աստղն երևելոյ։
8. Եւ արձակեալ զնոսա ՚ի Բեթղէհէմ, ասէ. գնացէք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիրպագիցս նմա։
9. Եւ նոքա իբրև լուան ՚ի թագաւորէն՝ գնացին, և ահա աստղն, զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց ՚ի վերայ՝ ուր էր մանուկն։
10. Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։
11. Եւ իբրև մտին ՚ի տուն՝ տեսին զմանուկն հանդերձ Մարիամայ մօրն իւրով, և անկեալ երկիրպագանէին նմա, և բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա պատարագս ոսկի, և կնդրուկի, և զմիւռոն։

7. 8. Հերովդէսը կարծելով թէ՝ աստղը յայտնուել է Քրիստոսի Ծննդեան ժամանակ, գաղտ կոչում է մոգերին և ստոյգը իմանում՝ աստղը երևալու ժամանակը, որպէս զի այդպիսեաւ խմանայ Քրիստոսի հասակը՝ այն է՝ քանի օրական և ամսական է, և սպանէ Նոքան, մինչև որ չի հրատարակուել Յիսուսի Ծննդեան և աստղը երևելու լուրը։ Մատ. Բ. 3։

9. 10. Մոգերը երբոր գուրս եկին Երուսաղէմից և սկսեցին գնալ դէպ ՚ի Բեթղէհէմ այդ միջոցում աստղը ծածկուեցաւ,

Նոքա Ճացին մեծ տարակուսութեան մէջ, դեռ այս վարանման մէջոցում՝ իսկոյն տեսին աստղը, որ առաջնորդեց նոցա մեծագոյն ամպով, ճառագայթը արձակելով դէպ 'ի Բեթղեհէմի, մուրը, ուր էր մանուկը։ Նոքա սորա վերայ մեծ ուրախութեամբ ուրախացին։ Զարմանալի բան է, այս օտար մարդիկը հեռու երկրից, հեթանոսների միջից գալով. գտին Յիսուսին և շատ ուրախացան, բայց Երուսաղէմի մարդիկը, անհոգ Ճարով, նրանցից մէկը անգամ չ'հետեւեց մոգերին՝ և չ'գնաց Յիսուսի տեսութեան։ Այսպէս էլ շատ անգամ հոգևոր օրհնութիւններ ունեցողները՝ համարում են թէ ունեցածները ոչինչ բաներ են, բայց ուրիշները նրանց սաստիկ փափագում են, և եթէ գտնում են նոցա՝ սաստիկ ուրախանում են։ Մատ. բ. 11 մինչև 17։

11. Այրը՝ ասուեցաւ առն, որով հիտեւ, ինչպէս վարդապետաց կարծիք է, ամենասուրբ կոյսը իւր քառասունքը այս տեղ անցկացնելով՝ անձրևից, սոթից և զանազան փորձանքներից, երկար միջոց պահուեցաւ, իբրև ասեն։ Մոգերը Յիսուսին երկիրպագեցին Աստուածային երկրպագութեամբ, երկրպագանէին նմա։ Յետոյ բացին իրանց գանձի անօթները՝ և մատուցին խորհրդական ընծաները, ինչպէս սովորութիւն էր իրանց հայրենիքում, մանաւանդ թագաւորական ցեղի նորածինների համար։ Ոսկին։ մատուցին, իբրև թագաւորի հարկ, վնդրուկը։, իբրև Աստուծոյ, որ բուրվում է Աստուածապաշտութեան ժամանակ։ Զմուռսը։, իբրև մեռանելի մարդոյ, որով օծանում էին մեռեալների մարմինները։ Այսպէս էլ մենք պէտք է մեզ ընծայենք Աստուծոյ սիրոյ՝ ոսկիով, աղօթքի՝ կնդրկաւ և ողջախոհութեան՝ զմուռսաւ։ Մն. իդ. 11. ծ. 2. ա. թագ. ժ. 27. գ. թագ. ժ. 2. սաղ. հր. 10. էջ. բ. 23. 24. յով. հ. ժբ. 39։

12. Եւ հրաման առեալ 'ի տեսչեան չ'դառնալ անդրէն առ Հերովդէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

13. Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երևեալ 'ի տեսչեանն Յովսէփու, և ասէր։ Արի՛ առ զմանուկդ և զմայրն իւր, և փախի՛ր յԵգիպտոս և անդ լինիջի՛ր ցոյժամ ասացից քեզ, քանզի 'ի խնդիր է Հերովդէս զքոյ մանուկդ։

14. Եւ նա յարուցեալ էառ զմանուկն և զմայրն իւր 'ի գիշերի, և գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչև ցվախճանն Հերովդի։

15. Զի լցցի ասացեալն 'ի Տեառնէ 'ի ձեռն մարգարէին որ ասէ. յԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ։

16. Յայնժամ իբրև տեսս Հերովդէս թէ խաբեցաւ 'ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ, և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն, որ էին 'ի Բեթղէհէմ և յամենայն սահմանս նորա յերկիր մինչև 'ի խոնարհչրատ ժամանակին զոր ստուգեաց 'ի մոգուցն։

17. Յայնժամ կատարեցաւ ասացեալն 'ի ձեռն Երեմիայի մարգարէի՝ որ ասէ. Ձայն գուժեաց 'ի Հռամայ, ողբումն և լալումն և աշխարհումն յոյժ։

18. Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարիլ՝ զի ոչ էին։

12. 13. Մոգերը՝ հրեշտակի պատուէրով, ուրիշ ճանապարհաւ գնացին իրանց աշխարհը։ Ութերրորդ օրը Մարիամը թրփատուութեան ժամանակ անուանեց իւր մանկան Յիսուս։ Մարիամ մնաց Յովսէփի խնամակալութեան տակ 12 տարի։ Քառասուն օրը լրանալով, Ծնողքը տարան Յիսուս մանկանը, օրինաց համաձայն Երուսաղէմի տաճարը՝ ներկայացնել Տէրին, և նուիրեցին տաճարին մի զոյգ աղաւնի, որով հիւսա աղքատ էին։ Այդ ժամանակ բնակվում էր Երուսաղէմի մէջ մի բարեպաշտ ծերունի, որ ինչպէս ասում են 364 տարեկան էր։ Սա ինչպէս աւանդութիւնը ասում է՝ հօթանասնից մէկն էր, որ Եսայի մարգարէութեան ասած կոյս յղացաւ և ծնցի որդի։ կտորը թարգմանելու ժամանակ, չ՚հաւատաց կուսի ծնունդը, վասնորոյ և զրաժը ջրնջեց, և երբ նորէն տեսաւ ջնջածը ոսկեղէն տաւերով զրուած, հաւատաց և խնդրեց Աստուածանից մահ չ՚ճաշակել, մինչև չի տեսանել կուսի ծնունդը։ Երբ Յիսուսին բերին տաճարը, Սիմէոնը, Սուրբ Հոգուն ոգեմամբ, գնաց տաճարը և տեսանելով Յիսուս մանկանը, իսկոյն ճանաչեց, որ փրկիչն է, ուստի և իւր ձեռքի փերայ առնելով, խնդրեց Նորան արձակել իւր մարմնաւոր կեանքից։ Այսպէս ապրում էր նա մի այլի կին Անանա անուանով։ Սա արդէն ութսուն և չորս տարեկան էր, միայն հօթն տարի

իւր մարդու հետ ապրելից յետոյ՝ դեռ երիտասարդ այրիացած էր։ Սա իւր բոլոր կեանքը անց էր կացրել ուսումնասիրելով, ծառայելով նորան պահելով, աղօթքով և բարեգործութիւններով։ Սա նոյնպէս տեսնելով Յիսուս մանկանը, իսկոյն ճանաչեց, որ փրկիչն է, ուստի և ամէն տեղ տարածեց փրկչի գալուստը։

«Հայ» բառը Սուրբ Գրքում չէ նշանակում իսկոյն, այլ գէնի ժամանակի։ Այսպիսի ոճեր շատ կան Սուրբ Գրքի մէջ։ Մատ. թ. 2. մարկ. բ. 1։ Մենք գիտենք որ քառասունէից, իրրև երկու ամսից յետոյ, Յովսէփը փախաւ Եգիպտոս։ Ուրեմն հրեշտակը երևեցաւ Յովսէփին մոգերը գնալից մի քանի ամիս յետոյ։ Եւ որպէս զի չի ուշանայ, այլ շուտով պատրաստուի ճանապարհորդութեան համար՝ ասաց.— «Թ՝ խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Նոյնպէս և պատուիրեց սպասելու Եգիպտոսում մինչև որ ինքն նորէն այդ մասին կ՝յայտնէ, որով հետև գեռ այժմ հրեշտակին Հերովդիսի մահուան համար ոչինչ չէր յայտնի։ Արդարև Յովսէփը և Կոյսը գիտէին, որ Յիսուսին չէին կարող սպանել, ընդդէմ իւր կամաց, բայց ոչոչ տարով իրանց մեծ հնազանդութիւնը, փախան Եգիպտոս։ Հերովդէսը մեծ փարանման մէջ ընկաւ՝ երբ տեսաւ, որ մոգերը չ՝վերադարձան, մանաւանդ, երբ լսեց որ մի մանուկ քառասունք են տարիք Տաճարը՝ և մի Սիմէոն անուանով ծերունի իւր գիրկը առած խնդրել է Նրանից արձակել իրան մարմնաւոր կեանքից։ Գիտաց՝ որ այս այն մանուկն է, որին երկրպագութեան գնացին մոգերը, ուստի մեծ նենգութեամբ սկսեց առանձին որոնել մանուկին։ Այդ ժամանակ Յիսուս էր իրրև երեք ամսական, երբ փախաւ Եգիպտոս։ Նա. ժթ. 1. գլուխ. բ. 21—41։

14—16. Եգիպտոսը Բեթղէհէմից 20 ժամու չափ հեռու է, և գնվում է նորա հարաւային արևմտեան կողմում։ Յովսէփը իսկոյն զարթնանալով առաւ մանուկը և Մարիամը և գնաց դէպ՝ ի Եգիպտոս, որով հետև Հերովդէսը իշխանութիւն չունէր նորա վերայ։ Յիսուս և իւր ծնողքը ապահով մացին այդտեղ մինչև 2 կամ 3 տարի, մինչև որ մեռաւ Հերովդէսը։ Ովսէի այս խօսքը երկու անգամ կատարուեցաւ։ Մէկը՝ երբ իսրայէլացիք, որպէս սերելի օրդիք, ազատուեցան Եգիպտոսից և եկին աւեաց երկիրը, միւսը՝ երբ Յիսուս այդ տեղից կրկին կանչուեցաւ իսրայէլի երկիրը։ Ովս. ժ. 2. մատ. ա. 22—25։

Հերովդէսը՝ երբ չկարողացաւ մի որ և իցէ հնարքով ապառնանել Յիսուսին, մտածեց կոտորել Բեթղեհէմի մանկանց, որպէս զի նոցա մէջ ապանուի և Յիսուս, բայց վախենում էր, ինչպէս ժողովրդի ապստամբութիւնից՝ այնպէս էլ կայսրից, որ առանց նոքա հրամանի, անհնար էր կատարել մի այդպիսի մեծ եղեռնագործութիւն։ Այդ միջոցում երբ Հերովդէսից ամբաստանութիւն եղել կայսեր առաջև, և Հերովդէս կանչուեցաւ Հռոմ, նա մեծ խորամանկութեամբ ոչ միայն հերքեց այդ ամբաստանութիւնը, այլ նաև համոզեցաւ կայսեր, որից և ստացաւ իրաւունք կոտորել Բեթղեհէմի մանկանց։ Հերովդէսը՝ երբ դարձաւ Հռոմից, զրեթէ այդ միջոցը մի ամբողջ տարուց աւելացաւ, այնպէս որ Յիսուսն դարձաւ տասն և հինգ ամեայն։ Հերովդէսը նախ լուր տարածեց, որպէս թէ Պարսից Բեթղեհէմի մանկանց բարեբարութիւն է անելու, և ապա մարդիկ ուղարկեց Բեթղեհէմ և նոքա շրջակայքը՝ որ իւրաքանչիւր գիւղից հաւաքեն երկու տարեկանից փոքր անմեղ մանկանց մի նշանակուած տեղ, որպէս զի անուններնը գրուին և ապա վարձատրուին։ Մեղքը միամտութեամբ հաւատալով այս լրին, հաւաքեցին իրանց մանկոնքը՝ նշանակած տեղը։ Անիրաւ Հերովդէսը հրամայեց կոտորել անմեղ զառներին, որանց թիւը հասաւ տասն և չորս հազարի։ Այս կոտորածը ոչ թէ Քրիստոսն էր, այլ Հերովդէսի դիւական ցասումն և ամբարտաւան ոգին։ Մատ. բ. 7։

17, 18. Հռամայ Բենիամինի ցեղի մի գիւղ էր, որ գտնվում էր Երուսաղէմից երկու ժամու ճանապարհաւ դէպի հիւսիս։ Սամուէլ մարգարէն այստեղ ծնաւ, ապրեց, և թաղուեցաւ։ Բաքէլը Յակոբի գեղեցիկի մայրն էր, որ թաղուեցաւ Բեթղեհէմի մօտ։ Բաքէլը արդարև շատ սաստիկ լաց եղել, որում հետև Յակոբի որդուց Եփրեմին և Մանասէին, վասնզի էր որ գերի էին տարեր, իսկ Բաքէլինի գերութեան ժամանակն էլ Բենիամինը և Յուդան գերուեցան, այնպէս որ ոչ ոք չմնաց իւր որդիներից։ Բայց կիսան քիչ լաց եղել, վասնզի շատ որդիք ունէր, և թէպէտ գերուեցան Եսաւիներից և Բաքէլացիներից, սակայն դարձեալ ազատեք, իրանց շատութեան պատճառաւ, ապրեցան։ Այսպէս՝ երբ Բաքէլացիք Բաքէլն գերի տարած ժամանակը ժո-

զովուեցան Հռամայ գիւղը, այդ տեղից դուրս գալու ժամանակ շատ մեծ կոծ, լաց և ողբ արին, որով հետև պիտի հեռանային աշխարհիս մէջ իրանց սիրելի եղած բաներից։ Այս անգրքի նման մի ազատալի դէպք կրկին անգամ այստեղ պատահելուն համար, շատ յարմարութեամբ է ասվում թէ «Ռաքելը լաց էր լինում։ Խարայէլացւոց բոլոր ասն գերութիւնը՝ նշանակում է մարդկանց ազգի գերութիւնը գիւաց և խաւարի ձեռքը։ Ցասն ցեղերի Ասորիներից անդարձ գերութիւնը՝ նշանակում է անապաշխար մեղաւորաց կորուստը, իսկ Յուդայի և Բենիամինի ցեղի գերութիւնից դէպ ի Երուսաղէմ վերադարձը՝ նշանակում է Քրիստոսի արդեամբ, ապաշխարութիւնով, զժոխքից ազատուելը և կրկին վերին Երուսաղէմ վերադառնալը։ Մն. լ. 19. խր. 7. ա. թագ. ա. 1-21. բ. 4. ֆ. 2. ժթ. 18. իե. 1. եր. բ. 15. խ. 1։

19. Եւ ՝ի վախճանին Հերովդի, տա՛ հրեշտակ Ցհան՝ ՝ի տեսիլեանն երևէր Յովսէփայ յԵգիպտոս, և ասէր։

20. Արի՛, առ զմանուկդ և զմայր իւր, և գնա՛ յերկիրն Խարայէլի. զի մեռան՝ որք խնդրէին զանձն մանկանդ։

21. Եւ նա յարուցեալ՝ առ զմանուկն և զմայր նորա, և եկն յերկիրն Խարայէլի։

22. Եւ երբև լուաւ եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր, և հրաման առեալ ՝ի տեսիլեան, գնաց ՝ի կողմանս Գալիլեացւոց։

23. Եւ եկեալ բնակեցաւ ՝ի քաղաքին, որ կոչէր Նազարէթ. զի լցցի բան Մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի։

19—22. Որով հետև ոչ միայն Հերովդէսն էր ուզում կորուստանել Յիսուսին, այլ նաև շատերը։ Ուստի այդ կարճ միջոցում ոչ միայն Հերովդէսը սատակեցաւ, այլ նաև նորա կամակիցները՝ այն է. նորա սպանած որդիքը, եղբայրը, կինը և այլն։ Յովսէփն էլ առաւ մանկանը և մօրը և կրկին վերադարձաւ Խարայէլի երկիրը։ Հրեշտակը բացորոշաբար չէր ասել՝ թէ Խարայէլի երկիրի որ տեղը պէտք է գնայ, վասնորոյ Յովսէփը կարծեց՝ թէ Երուսաղէմի համար է ասած, իբրև Հրէաստանի պատուական մասի համար, բայց երբ լսեց, որ այդ տեղ թագաւորում է Արքեղայոսը, որ Քրիստոսի թշնամիներից մէկն էր, վա-

տեցաւ գնալ այդ տեղ։ Այդ վարանման միջոցում Հրեշտակը յայտնեց Յովսէփին՝ գնալ բնակուիլ Գալիլեայի Նազարէթ քաղաքում, որտեղ սկսած էր յղութիւնը։

Պէտք է իմանալ որ այս Ասկալոնցի Հերոդէսին ունէր վեց որդիք.—Ադէքսանդրոս, Արիստոբուլոս, Անթիպատրոս, Արքելեդայոս, Փիլիպոս և Անթիպաս-Հերոդէս։ Սրանցից առաջի երեքին կայսեր հրամանաւ սպանեց, որ աշխատում էին, իրանց հօր կենդանութեան ժամանակ թագաւորել, ինքն էլ Բեթղեհեմի մանկանց կոտորածից մի քիչ ժամանակ յետոյ, որդնալից եղած ասատակեցաւ։ Արքելեդայոսն էլ իւր հօր Հերոդէսի մահից յետոյ՝ շուտով գնաց Հռոմ Կայսեր մօտ, որպէս զի զրկելով իւր միւս եղբօրից, առնէ իւր հօր բոլոր թագաւորութիւնը։ Կարեր էլ տուաւ նորան որ թագաւորէ միայն Հրէաստանին, խոստանալով ապ ուրիշ մասերն էլ, եթէ լաւ կկատարէ։ Եւ որով հետև միշտ վէճեր էր պատահում երեք եղբայրների մէջ թագաւորութիւնը ժառանգելու համար, վասնորոյ և Կայսրը թագաւորութիւնը՝ չորս բաժին արաւ, այնպէս որ Արքելեդայոսը թագաւորէ Հրէաստանում, Անթիպաս—Հերոդէսը՝ Գալիլեայում, Փիլիպոսը՝ Տրաքոնացւոց աշխարհի վերայ, իսկ Լուսանեան ոմն՝ Աբելինացւոց աշխարհում։ Դոքա ստացան չորրորդապէտ և իրանց տերութիւնը չորրորդապետութիւն։

Այս Արքելեդայոսը իւր չարութեան պատճառաւ աքսորուեցաւ Կայսրի հրամանաւ իւր չորրորդապետութեան ինն երորդ տարում։ Կայսրը նորա տեղ նշանակեց Հռոմայեցի անձինք, որոնք անծանօթ էին Հրէից օրէնքներին և կարգերին։ Այս Հռոմայեցի իշխանների ժամանակ Յովսէփը և Մարիամը ամէն տարի Զատկին համարձակ գնում էին Երուսաղէմ։ Երբ Յիսուս տասներկու տարեկան դարձաւ Մարիամը և Յովսէփը Յիսուսի հետ միասին գնացին Երուսաղէմ։ Տօն օրերը անցնելից յետոյ՝ նոքա դարձան տուն, բայց չ՝գտնելով Յիսուսին ուղեկիցների մօտ, կրկին դարձան Երուսաղէմ և գտին Նորան տաճարի մէջ նստած՝ հարցնում և լսում ուսուցիչներին մեծ ուշադրութեամբ։ Դարձաւ Նրանց հետ տուն Նազարէթ և ամէն բանում հնազանդ էր նրանց։ Լուկ. գ. 1—21։

23. Գրեթէ ամենայն մարգարէք ասացին Յիսուսի համար որ նա պէտք է մարդիկներից ատելի և անարգ համարուի։ Հրէա-

ներբ. Նաղով բացուց շատ ցած և անարգ մարդիկ էին հատ-
բուն. Յով. գ. ա. 46. հա. ծգ. գրբ.

Նաղոր. Երրայեցւոց լեզուաւ նշանակում է ուխտաւոր, և
որով հիւսն նուռ խառնալ է մարդկային ազգի մեծ փրկութեան
գործն կատարել՝ ասուելոյ Նաղորդեցի, նա մատնաւոր, երբ նա
յղացած և մեռած էր Նաղարէթի մէջ։ Մատ. ա. 22. հա. ժա.
1. թռ. գ. 18։

Այս գլխոյ մէջ մեր առաջն պատկերացաւ շատ տեսակ տե-
սակ օգտակար օրինակներ, որոնք ցոյց են տալիս թէ Աստուած իւր
ամենազարմի յաւտակ Նախախնամութեամբն հոգում է իւր սի-
րելիների համար։ Ինչպէս տեսանք, թէ որպէսի աբանելի կերպով
առաջնորդեց մոգերին գնալ երկրպագանել մանուկ Փրկչին։ Ինչ-
պէս հոգաց թեամբ ուրիշ հանապարհով ուղարկեց նրանց իրանց
տեղերը։ Ինչն ազատեց մանուկ Յիսուսին Հերոդէսի նախանձոտ
և կատաղի բարկութիւնից։ Ուստի Աստուծոյ ապաւինողները
թող չվախենան և չյուսահատին։ Անիսարշիս բոլոր թագա-
ւորութիւնները և իշխանութիւնները մեն կարող մի վատ անդամ հասցնել Աստուծոյ ապաւինող ամենաբարիի մի անձի։ Ի. թագ. գ. 15. 16. սաղ. իգ. 3. լդ. 7. լէ. 9. ճԺ. 6։ Առ. ա. 33. հա. բ. 31։

Աստուած կատարեալ է ամենայն արարածներ. Հատա-
ւորակ և յաւտակ Նախախնամութեամբ։ Հատարակ Նախախնա-
մութեամբ պահպանում է կատարեալ է արդարի և մեղաւորը,
հոգում է նրանց պէտքերը, միայն բնական օրէնքով։ Իսկ յա-
ւտակ Նախախնամութեամբ ապահովում և խնամում է իւր երե-
կիւղածներին, ինչպէս Հնումը Աբրահամին, Յակովբին, Յովսէ-
փին, Մովսէսին, և այլոց։ Այսպէս էլ Նորումն մանուկ Յիսուսին,
մոգերին, առաքելոց, Պողոսին. և այլն։

Աստուծոյ յաւտակ Նախախնամութեան շնորհին արժա-
նանալու համար՝ պէտք է ջանանել մեզ միայն Նորա խնամքին,
խոնարհացնել մեր անձնները Նորա առաջն, և անդադար աղօթ-
քով և պաղատանքով խնդրել նրանից իւր յաւտակ խնամքը,
մանկնուաւորութիւնը և ապահովութիւնը։ Այս խնամքից
չզրկուելու համար՝ պէտք է ունենալ դէպ ի Աստուած սուրբ
սիրտ, մաքուր և ամրիծ հաւատք, անկեղծ և անմեղ սէր դէպ
'ի ընկերները։ Մատ. ի. 1—16. գ. 7—34. ժ. 23—31. զուկ. ժբ.
22—30. ժբ. 1—8. ծն. իդ. 12—14. իբ. 20. 21. գործ. ա. 21։

ԳԼ. Գ.

1. Յաւուրսն յայնոսիկ գայ Յով Հանէս Մկրտիչ բարոզել յանապատին Հրէաստանի. և ասէր
2. Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից։
3. Զի սա է վասնորոյ ասացաւ ի Ճեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստս արարէք զճանապարհ Տեառն. և ուղիղ արարէք զշաւիղս նորա։
4. Եւ ինքն Յով Հանէս ունէր Հանդերձ ի տաւրոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի։

1. Հերովդէսի թագաւորութեան ժամանակ Յուդայի մի փոքրիկ քաղաքում, որ շինուած էր լեռների մէջ, բնակվում էր մի բարեպաշտ քահանայ Զաքարիա անունով, իւր կնոջ Հեռ միասին։ Նրա ծերացած էին, բայց զաւակ չունէին և իրանց երեսին որդի ունենալու յոյսը բոլորովին կարած էին, վասնորոյ և անդադար խնդրում էին Աստուածանից որդի։

Քահանաները ամենաբարի կարգով կատարում էին իրանց պաշտօնը Երուսաղէմի Տաճարումն։ Որ կարգը հասաւ Զաքարիայի ալեաց։ Սա քահանայական դրկումով մտաւ Տաճարը, ուր բաց ի քահանայից ոչ ոք չէր մանում։ Ժողովուրդը աղօթում էր Տաճարի դրսում, աղօթքի ժամանակ Զաքարիան յանկարծ տեսաւ սեղանի աջ կողմում կանգնած Տէրի Հրեշտակին։ Զաքարիան խռովեցաւ և սաստիկ վախեց։ Հրեշտակը ասաց.— Զաքարիա աղօթքդ լսելի եղև, քո կին Եղիսաբէթը պէտք է որդի ծնի և նորա կանուանես Յով Հանէս։ Եւ դու մեր յարգանդում կլցնուի Սուրբ Հոգով, ուստի և Եղիայի Հոգով Տիրոջ Համար կպատրաստէ պատրաստս ժողովրդոյ։ Զաքարիան այս մեծ ուրախութիւն չհաւատաց ուստի և ասաց.— Ինչպէս կարող եմ հաւատալ դորա, մինչև որ ես և իմ կինս ծեր ենք։ Հրեշտակը պատասխանեց.— Ապրիլ Հեռ. չհաւատացիր ինձ, դու համր կլինես մինչև այն օրը, որ իմ ասածս կկատարուի։ Այդ օրից Զաքարիան մնաց համր և Տաճարից դուրս գալից յետոյ չկարողացաւ խօսել այլ նշանագրերով յայտնում էր որ հարկաւորն էր։ Սրանից յետոյ Եղիսաբէթը շուտ յղացաւ և երկար ժամանակ իւր ուրախութիւնը թաքցնում էր իւր ազգականներից, վերջապէս Եղիսաբէթը ծնաւ որդի, և ազատուեցաւ,

այն ժամանակուան սովորութիւամբ, ամբութեան նախատանքից և անպատուութիւնից։ Թլփատութեան օրը՝ Զաքարիան տաւ մի տախտակի կտոր և գրեց թէ.— «Ցով Հաննէս է դորա անունը»։ Այդ բոլոր ում բացուեցաւ Զաքարիայի լեզուն, որ սկսեց բարձր և հասկանալի լեզուաւ, մարգարէանալով, փառաբանել Աստուծոյ։ Ամենքը, տեսնելով և լսելով այս՝ մեծ ահով զարմացած ասում էին.—Ի՞նչ պէտք է լինի այս երեխան։ Եւ այն միջոցում, երբ հրեշտակը հրամայեց Ցով սէրին՝ Ցիսուս մանկանը փախցնել Եգիպտոս, Բեթղէհէմի կոտորումից ազատելու համար, Եղիսաբէթին էլ հրամայեց՝ Ցով Հաննէս մանկանը փախցնել այն անապատը, որ ասվում էր Թաբով թ, ուր փախաւ Դաւիթ Արիսողոմի ձեռքից և մօտ էր Յորդանանից և Երիքովից։ Այստեղ սա աճում էր և զօրանում հոգով և ապրեց մինչև մարդոց յայտնելու օրը։ Երբ այս խստակրօն ճգնաւոր Ցով Հաննէսը հասաւ երեսնամեայ հասակին՝ այդ օրերում գուրս եկաւ անապատի թագուն ծերպերից և սկսեց, իբրև Կարապետ և Արուսեակ Ցիսուսի, քարոզել Մեսիայի գալուստը, որնոր սկսաւ մարդկային բնութեամբ յայտնուիլ Նազարէթի մէջ, պարապուելով հիւսնութեամբ և շրջելով նոցա մէջ, իբրև հասարակ անձն։

2. Հրէաները ապաշխարութեան մեծ կարօտութիւն ունէին, որով հետև իւրաքանչիւր ոք նրանցից ինքն իրան սուրբ և արդար էր համարում։ Ցով Հաննէսը նախ իւր կեանքը անցրաւ խիստ ապաշխարութեամբ, ազօթքով և սուրբ վարքով, և ապա սկսեց իւր քարոզութիւնը ապաշխարութիւնից։ Այսպէս էլ պէտք է ամենայն քարոզիչ հայր՝ նախ ինքն իրան պատրաստել ազօթքով և սուրբ վարքով՝ և ապա սկսել այդ վսեմ և սուրբ գործը։

Ապաշխարել նշանակում է «ապա—աշխարել»՝ այն է. մեղքը գործելուց յետոյ բոլոր սրտով զղջալ, լալ և կոծել։ Ուրեմն ապաշխարութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ ՀԼԱՍՈՒ փոխարէն հատուցանելը։ Եւ որով հետև մեր ամենամեծ բարեգործութիւնը ժամանակի պարագն է, իսկ ամենաթեթև պատուիրանագանցութիւնը այնքան սաստիկ մեծ մեղք է, որքան մեծ և ահաւոր է նորա պատուիրողը, վասնզի և Աստուծոյ դէմ գործած մեղքերի փոխարէնը անհնար է վճարել։ Մնում է միայն, որ շնորհքը սրբէ մեզ այդ մեղքերից, իսկ շնորհքին արժանանալու համար պէտք է կատարեալ զղջմամբ, հաստատուն առաջադրութեամբ

խոստովանուիլ Աստուծոյ և քահանայի առաջև մեր բոլոր մեղքերը և անեկեղեցայ յուսով հաւատալ, որ Քրիստոսի չարչարանաց և մահուան արդիւնքով կ'ստանանք մեր մեղաց թողութիւնը Աստուածանից քահանայի խօսքով։ Եւ ա. 18. իգ. 25. 26. եր. յա. 34. հգ. իգ. 11. երր. ժդ. 12. եփ. ա. 7. բ. պետ. գ. 9. ա. յով հ. ա. 9։

Ճշմարիտ ապաշխարութեան նշանները սոքա են.— ա. Ճանաչելով մեղաց զարշութիւնը՝ բոլորով են զղջալ և դառնալ նրանից։ բ. Ցիշելով Աստուծոյ անէնուն սէրը և բարութիւնը՝ սրտանց սգալ, որ իւր անարժան զորձքերով նոցա վշտացրած և անարգած է։ գ. Վարելով իւր կեանքը անձնուրացութեան նեղ և անձուկ ճանապարհով՝ չարչարել իրան մարմնաւոր կրից պէսպէս նահատակութիւններով՝ այն է. ժուժկալութեամբ, պահօք, ողորմածութեամբ. և այլն և այլն։ Կր. յա. 19. մատ. է. 13. 14. հռ. բ. 5. 8. կոր. ա. 24. գաղ. ե. 24. եփ. գ. 20—24։

Հրեից մէջ ապաշխարութեան խոստովանութիւնը թերի էր, սա չէր համարվում սրբացուցիչ խորհուրդ, այլ լոկ հարկաւոր պայման։ Մեղաւորները, իբրև պատմութիւն ինչ, կամ իբրև մի արտաքին նշան՝ ներքին ապաշխարութեան և զղջման, իրանց մեղքերը պատմում էին քահանայից առաջև։ Եւ այս խոստովանութեան յարմար՝ միայն պատարագներ էին մատուցանում, որ սուտերն էր Քրիստոսի պատարագին։ Քահանայից չէր տուած մեղաց թողութեան արձակման իշխանութիւնը, ուստի այսպիսի ապաշխարողները, եթէ ունենում էին դէպ ի Աստուած կատարեալ սէր՝ քաւվում էին միայն ներգործական մեղքերից, ճանալով միանգամայն սկզբնական մեղաց մէջ։ Քրիստոս այս թերութիւնը լրացնելով, խոստովանութեան ապաշխարութիւնը իւր եկեղեցու մէջ սրբացուցիչ խորհրդոց կարգը բարձրացրաւ և զոհերն վերացնելով, դոցա տեղ քահանայից տուաւ արձակման իշխանութիւնը, որ և հաստատեց ոչ միայն հրաշքով, այլ նաև իւր փչմամբ՝ Սիոնի վերնատան մէջ աշակերտաց ասելով.— Առէք Հոգին Սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի։ Յով հ. ի. 22. 23. գործ. ե. 4—10. իր. 18—21. յովր. լա. 33. 34. թոռ. ե. 7. մատ. թ. 6. 9. մր. 18. մարկ. թ. 8—10. երր. գ. 1։

Այսպէս՝ Քրիստոս ինչպէս երկնքումը հաստատեց երկնային թագաւորութիւնը՝ այն է. սրբութեան, արդարութեան, ճշմար-

տութեան, սիրոյ, խաղաղութեան, միով բանիւ հոգևոր երջանկութեան, այնպէս էլ մարմնանալով, եկաւ երկիր, մի և նոյն երկրի նպատակն և հոգևոր թագաւորութիւնը՝ հաստատել նաև երկրի մէջ, այնպէս որ երկինք և երկիր ճանաչեն մի յաւիտենական, անփոփոխելի թագաւորութիւն, որի ժառանգութեան կարժանանան միայն հաւատով, յուսով և սիրով ապաշխարողները։ Դան. բ. 44. է. 13—28. մատ. գ. 17. ժ. 7։

3. Ցոյց հանելով, որպէս կարապետ (նախընթաց) հրապարակաւ յայտնում է Քրիստոս թագաւորի բարբառը, բանը կամ հրամանը, որ միայն ճշմարիտ և անկեղծ ապաշխարութեամբ, կարելի է պատրաստել մարդոց մտքերը Քրիստոս ընդունելու համար։ Ես. խ. 3. 4. մագ. գ. 1. մարկ. ա. 3. զուկ. ա. 76. գ. 4. 5. յովհ. ա. 23։

4. Մարգարէները սովորութիւն ունէին ուղղի մարդ շրջեր հագնելով՝ ճանչել իրանց մարմինները և ապա ուրիշներին մի և նոյնը քարոզել։ Կարուի գոտի նշան ևս կապեց։ Ա. կոր. թ. 27. գ թագ. ա. 8. գաբ. ժդ. 4։

Մարախը մի տեսակ բոյս է, որ ասում է կոճդէս, փարից յեռոյ երկիրքը հաւաքում են և ուտում։ Իսկ վայրենի մեղրը շատ է գտնվում այդ երկրի մէջ։ Ցոյ հանելիսին հետևեցին անապատի հայրերը։ Բայց այն՝ որ ասում է.— ոչ ուտէր և ոչ բմպէր, արանից չուկար է հասկանալ, իբրև մի հարատակ բան Սուրբ Գրքի։ Վասն զի ուտէր ասելով՝ պէտք է հասկանալ եփած կերակրեղէնը, բմպէր ասելով՝ հասկանալ անուշահամ գինիները։ Բայց նա ուտում էր հում մարախ և վայրենի մեղր, խմում էր սուկ ջուր։ Պրպտել է, որ այսպիսի կեցութեան մէջ պարունակուած է ոչ ուտէր և ոչ բմպէր խօսքը։ Ղևտ. ժա. 22. եզ. գ. 8—18. ժդ. 5. բ. օր. բ. 13. Դան. ժդ. 8. ա. թագ. ժդ. 25—27. սար. ա. 16. մատ. ժա. 18։

5. Ցոյնժամ երանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք, և ամենայն Հրէաստան, և ամենայն կողմն Յորդանանու։

6. Եւ մկրտէին ի նմանէ ի Յորդանան, և խոստովան լինէին զմեղս իւրեանց։

7. Եւ տեսեալ զբազումս ի Սադուկեցւոցն և ի Փարիսեցւոցն եկեալս ի մկրտութիւն նոցա, ասէ ցնոսա։

ծնունդք իժից՝ ո՞ ելցոյց ձեզ փախչել ի բարկութիւնէն՝ որ գալոցն է։

8. Արարէ՛ք այսու հիասն պտուղ արժանի ապաշխարութեան։

9. Եւ մի համարիցէք ասել յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱբրահամ, ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու։

10. Զի առասկի ապարդ առ արմատն ծառոց զին, ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։

11. Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա, նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ և ի հուր։

12. Որոյ հիծանոցն ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր և զ յարդն այրեսցէ անշէջ հրով։

5. 6. Լսելով Յով հանդիսի խառակիսն վարքը և քարոզութիւնը Յոհրդանանու կողմի բնակիչները դուրս եկին լսել, սեռներ և մկրտուիլ նրանից։ Յով հանդիսի մկրտութիւնը միանգամայն տարբեր էր Յիսուսի մկրտութիւնից, վասն զի Յով հանդիսի մկրտութիւնը ապաշխարողին մաքրում էր միայն ներգործական մեղքից, իսկ Յիսուսինը սրբում էր միանգամայն սկզբնական և ներգործական մեղքից Սուրբ Գրոց Նրոյ Կտակարանի անուանով։ Գործ. ԺԹ. 3—5։

7. Սադուկեցիքը և Փարիսեցիքը ազանգաւորներ էին, որ առաջացան Մակաբայեցիներից մի քիչ յետոյ։ Սադուկեցի անունը՝ առաջացած է իրանց հիզինակ Սադոկից, որ թարգմանվում է արդար, վարողաց և զգաստ իրանք իրանց արդար էին համարում։ Փոքր չէին հաւատում Աստուծոյ նախախնամութեան, հոգւոյ գոյութեան, մեռելոցն յարութեան։ Այս թիւր վարդապետութիւնը հանած էին հիմանոնց առասպելաբանութիւններից։ Փարիսեցի բառը՝ ծագած է Փարէս բառից, որ նշանակում է բաժանող, որով հիասն զրքա էլ Սուրբ Գրքի խօսքերը, Սադուկեցւոց դէմ, թիւր մեկնիչով, հեռանում էին Սուրբ Գրքի էական նշանակութիւնից, բաց ի Մովսէսից չէին

ընդ հնումս մարգարէներին, սիրում էին աշխարհի փառքը, հարստութիւնը, խարերայութեամբ իրանք իրանց սուրբ և առաքինի ձևացնելով, կռոզպաշտում էին անմեղներին, վասնորոյ և՝ սոքա ևս յանդիմանուիցան ՅՈՎ Հաւնիսից, որ ասաց.— «Աւ իմ զգուակներս, արդեօք սրտագէտ Աստուածը ցոյց տուաւ ձեզ փախչել այն վերեներից, որին զուսք ձեր զորձիերով պատրաստակցիք, թէ եկել էք միայն հետաքրքրութեան համար լսել իմ քարոզութիւնը և տեսնել ինձ, իբրև մի նոր մարգի»: Մատ. ժ. 1—6. Ժզ. 1—12. ղուկ. է. 30. զորձ. իգ. 6—9:

8. 9. Ազաչնարարութեան արժանի պատուղը չարութիւնից դառնալն է: Սուտ է մեր ապաշնարարութիւնը՝ եթէ չենք դառնալ մեր չարութիւնից: Հրէաները ցոյց ունէին, որ իրանցից ոչ ոք չպէտք է կորնչի, որով հետև Աբրահամու որդի է: Այսպէս են համոզում չատ անգամ բարեպաշտ մարդկանց որդիքը: Աւելորդ է մեզ պարծենալ մեր նախնեաց քրիստոնէավայել գործերով: Մենք պէտք է ձանաչելով մեր պարտքը, հետևել մեր նախնեաց առաքինագործութիւններին: Նոցա բարեգործութիւնները մեզ ամենևին օգուտ չեն, եթէ մենք նրանց նման չենք: Հրէաները Աբրահամու որդիներն են, բայց իրանց անհաւատութեան պատճառաւ մեացին Աստուծոյ անէծքի տակ: Եթէ հարկաւորուի, նոյն Աստուածը, որ ստեղծեց Ադամին հողից, կարող է՝ մինչև անգամ Յորդանանու ափերում եղած քարերից, մեզ տեղ որդիք ստեղծել, մեր բարեպաշտ ծնողաց յիշատակը պահելու համար: Եզ. ժզ. 20. ժբ. 4—20. յով հ. բ. 33—39:

«Հոգևորապէս» Քարերը հեթանոսներն են, որ հաւատալով Յիսուսին և գործելով Աբրահամու գործերը դարձան Աբրահամու ճշմարիտ որդիներ:

10. Ահա եկաւ դատաստանի ժամանակը, որ տեղ մարդոց մէջ տարբերութիւնները պիտի յայտնուին, չարերը պիտի անարգուին և պատժուին: Հեթանոսները թէև Աբրահամու սերմից չեն, բայց բարի գործերով, Յիսուսի հաւատալով, յաւիտեան պիտի ապրեն, իսկ Հրէաները նոցա սերմից լինելով, իրանց չարագործութեամբ և անհաւատութեամբ պիտի յաւիտեան տանջուին և չարչարուին: Մաղ. գ. 18:

11. ՅՈՎ Հաւնիէաը այս խօսքով ցոյց է տալիս Յիսուսի մեծութիւնը և փառքը: Այսպէս էլ պէտք է Յիսուսի փառքը և մեծութիւնը պատրել նոցա, որոնք կոչուած են նոցա սպասա-

ութութեան պաշտօնին։ Թէպէտ Յիսուսի մկրտութեան նիւթը ջուր էր, ինչպէս Յով հաննէսինը, բայց Յիսուսի մկրտութեամբ մկրտողի վերայ գալիս էր Սուրբ Հոգին գդալի նշաններով։ Եւ ինչպէս հրեայք մաքրվում են ամէն տեսակ իրեր, այնպէս էլ Յիսուսի մկրտութեամբ մաքրվում էին ամէն տեսակ մեղքերից և կրկին ծնանում նոր հոգևոր կեանքով։ Նաև մկրտողի վերայ գալիս էր հեղական սէր, որ ասվում է նաև «հուր»։ «Հուր (սէր) եկի արկանել զերկիր»։ Մաղ. գ. 2. 3 յով. բ. 28. 29. մատ. գ. 6. ղուկ. ժբ. 49. յով հ. է. 38. 39. գործ. բ. 17. 18. ժա. 16.

12. Ինչպէս կացնով որոշվում է անպտուղ ծառերը պտղատուներից, և հեծանոցով որոշվում է ցորեանը յարդից, այնպէս էլ Քրիստոս՝ իւր արդարութեան դատաստանաւ, կ՚որոշի արդարը մեղաւորից, և ամէն մէկին իւր գործի համեմատ, կ՚փարձարէ։ Մաղ. գ. 1. մատ. գ. 10. ժգ. 30. յայտ. ի 10. 15։

13. Յայնժամ գայ Յիսուս՝ ի Գալիլեէ՝ ի Յորդանան առ Յով հաննէս՝ մկրտել՝ ի նմանէ։

14. Եւ Յով հաննէս արգելու զնա՝ և ասէ. ինձ պիտոյ է՝ ի քէն մկրտել, և դու ասես զամ։

15. Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնա. թող առ այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն։ և ապա թող եւ նմա։

16. Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, էլ վերադարձաւ՝ ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և եւեթ զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի, և գայր՝ ի վերայ նորա։

17. Եւ ահա ձայն յերկնից, որ ասէր. Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։

13. 14. Խարդելի երկիրը բաժանուած էին երեք մասերի.— Հիւսիսային կողմում Գալիլեան էր մի ջանգուամբ՝ Սամարիան, իսկ Հարաւում՝ Հրէաստանը, որ կոչվում էր նաև Յուդա։ Յով հաննէսը մկրտում էր Հրէաստանում, Նազարէթին էլ գտնվում էր Գալիլեայի մէջ։ Յիսուս Գալիլեայից (Նազարէթից) եկաւ Հրէաստան, որ հասարակ ժողովրդոց շարքում, մկրտուի Յով հաննէսից։ Յով հաննէսը թէպէտ գիտէր, որ Յիսուս եկած է աշխարհ, բայց անձամբ անձին չէր տեսած նորա և չէր ճանաչում։ Երբ յանկարծ Յորդանանում ափերում տեսաւ Աստուծոյ գառն Յիսու-

սին եկած մկրտութեան հետամտի՝ խոկալն ճանաչեց և ազազակեց. — «Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի։ Վասն որոյ և ասաց.— «Ես որպէս կարօտ մաքրութեան պէտք է քեզանէց մկրտուիմ և դու ես գայս մեզ։»

Յորդանանու գետոյ սկիզբն է առնում Լիբանանու լեռներից և Քաղիլեայի ծովի միջով անցնելով՝ թափվում է մեռեալ ծովը։ Յովհ. ա. 29—38. Հա. գ. 4։

Սուրբ հայրերից ոմանք ասում են թէ՝ Յովհաննէսը և կոյս Մարիամն էլ մկրտուեցան Յիսուսից, ինչպէս մկրտուեցան Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսը և ուրիշ աշակերտները։ Յովհ. ա. 28. գ. 26. դ. 1. 2. Ժ. 40։

15. Արդարութիւն ասելով՝ պէտք է հասկանալ խոնարհութեան ծայրագոյն աստիճանը։ Մի զարմանար, ասաց Յիսուս, այլ պատեալ խնդիր, որ ինչպէս այժմ խոնարհութեամբ յանձն եմ առնում մկրտուել իմ ծառայ Յովհաննէսից, այնպէս էլ իմ ամենայն սուրբերական գործքերս պէտք է վերջացնեմ խոնարհութիւնով, որին կարդալու նախահայրը իւր հպարտութեան ձեռքով։

16. Նուա գուցս եկաւ Ջրից, որպէս զի ապրէ։ Երբ սկսեց ապրիլը՝ յանկարծ բացուեցաւ օդի երեսին մասը և Սուրբ Հոգին աղաւնակերպ իջաւ նորա վերայ։ Այս տեսաւ ոչ միայն Յովհաննէսը, այլ նաև ժողովրդեան բազմութիւնը։ Ազաւնին, ուսնոտով Յիսուսի բազմութիւններին համապատասխան շատ յատկութիւններ՝ այն է. հեզութիւն, անմեղութիւն, պարզութիւն, սիրող իւր ծնողներին, բարեկամ մարդկանց, և այլն, վասնզի և Սուրբ Հոգին, գոյա նմանութեամբ իջնելով, աւետեց աշխարհին Փրկչի գալուստը։ Մարկ. ա. 10. 11. գուկ. գ. 21. 22. յով հ. ա. 29—34. Ժ. 17։

17. Ինչպէս Սուրբ Հոգին մարմնաւոր ազաւնու նմանութեամբ երևեցաւ, այնպէս էլ Հօր Աստուծոյ ձայնը՝ մարմնաւոր հնչմունքով, լսուեցաւ թէ.— «Դա է որդի իմ սիրելի։ Դա, ասելով՝ զարմացաւ, որ Յիսուսն է բնութիւնակից, համագոյակից և հաւասար Որդի Աստուծոյ և ոչ թէ որդեգրական որդի, ուստի և ասաց.— «Դմա հաճեցայ։» Այն է.— «Ես ի նմա և նա ի յիս։» Յիսուսի համար երեք անգամ այսպիսի վկայական ձայն է եկած երկնքից։ Մէկը այժմ, միւսը այրակերպս թեան միջոցում, մէկն էլ իւր մահից մի քիչ առաջ։ Մատ. ժէ. 5. գուկ. թ. 35. յով հ. ժբ. 28. բ. պետ. ա. 17։

Այս կողմի մէջ սովորեցինք երեք աքանչելի խորհուրդներ.— Երրորդութեան, Մկրտութեան և Զոյգի։

ա. Երրորդութիւն։ —Այսպէս՝ Ցիսուսի մկրտութեան ժամանակը Ամենասուրբ Երրորդութեան յայտնեցին։ Ցորդանանում Հայրը վերեւից վկայեցավ Որդին մկրտութեամբ և Սուրբ Հոգին աղաւնակերպ իջանելով՝ Այսուհետև և Սուրբ Գրքի ուրիշ շատ վկայութիւններից տեսնում ենք՝ որ Աստուածութիւնը պարունակուած է երեք անձնաւորութեանց մէջ, բայց դա ոչ թէ երեք Աստուած է և երեք Աստուածութիւն, այլ մի Աստուած է և մի Աստուածութիւն, քանզի երբ և զատանում ենք, որ Աստուածութիւնը ունի երեք անձինք, բայց մի Աստուածութիւն, մի Աստուածութիւն, ուստի և այս երեք անձնաւորութիւնք՝ սուրբ է։ Մխիթարեան, Անբաժանելի Սուրբ Երրորդութիւն

Աստուծին, երկրորդ և երրորդ թուերով չպէտք է հասկանալ որպէս թէ՝ մէկը միւսից մեծ է և փոքր, այլ պէտք է խմանալ, որ այդ երեք անձանց մէջ չկայ մեծութիւն և փոքրութիւն և թէ երեքքսանն էլ մի են էութիւնով, զօրութիւնով, իշխանութիւնով, պատուով, փառքով և ամենայն յատկութիւններով, միայն մէկը միւսից գանազանվում են անձնաւորութիւնով, որով հետև ուրիշ է Հօր անձը, ուրիշ է Որդւոյն անձը, և ուրիշ է Սուրբ Հոգւոյն անձը, այնպէս որ չէ կարելի Հայրը՝ Որդի կամ Հոգի կոչելը Որդին՝ Հայր կամ Հոգի կոչուի, և ոչ Սուրբ Հոգին՝ Հայր կամ Որդի կոչելը Մէկ ուրիշ գանազանութիւն էլ այս է.՝ որ Հայրը ծնող է Որդւոյն և բղխող է Սուրբ Հոգւոյն, Որդին ծնուած է Հօրից և ինքն ծնունդ չունի, իսկ Սուրբ Հոգին բղխուած է միայն Հօրից, ոչ ծնող է, ոչ ծնուած և ոչ բղխող։ Բայց թէ ինչ է նշանակում ծնունդ և բղխումն և թէ ինչ գանազանութիւն կայ Որդւոյն ծնունդն և Սուրբ Հոգւոյն բղխման մէջ՝ այս մեզ անհասկանալի է, միայն այսքանս է մեզ հասկանալի, որ Որդին ծնուած է Հօրից և Սուրբ Հոգին բղխուած է գաթեալ Հօրից, այնպէս՝ ինչպէս արեգակից ծնվում է լոյս և բղխվում ջերմութիւն, կամ ինչպէս Հոգուցը ծնվում է մաք և բղխվում բանը։ «Այլ թէ զինչ խաբէ կայցէ ընդ ծնունդ և ընդ բղխումն, ո՞ գիտէ, կամ ո՞ կարէ մեկնել... թէպէտ ամենայն որ ծնանի՝ ելանէ, զայսոսիկ գիտեմք, այլ սահմանել ընդ ծնունդ և ընդ բղխումն ոչ կարեմք։» Օգոս. ընդդէմ մաք. գ. 14։ «Զի քննես զայն, զոր Հա-

գին Սուրբ ոչ յայտնեացս։ Կիւրղ՝ի կոչումն ընծայութեան. զլ. ժա. յովք. գգ. 4. եր. ժգ. 21. առ. բ. 22—35. եւ. կա. 1—3. զաբ. գ. 2. 3. միք. ե. 2. մագ. գ. 2. 3. մատ. գ. 11. ժ. 20. յով. գ. 5—36. բ. 20—27. ժգ. 7—13. գործ. ա. 16. ա. տիմ. գ. 13. 16. հռ. ժե. 13—19. ա. կոր. բ. 4. բ. կոր. ա. 22. եբր. ժ. 15. եփ. դ. 20. գ. 23. յայտ. է. 2. և այլն։

Հրեից մէջ այս խորհուրդը ծածկուած էր, որով հետև Սուրբ Հոգին գիտէր, որ երբ Հրէաները լսէին Միածնական Աստուածութեան անձնաւորութեանց բազմաւորութիւնը, իսկոյն պէտք է, իրանց հարեւան ազգերի նմանն, դիմեին բազմաստուածութեան, փաստորոյ, լաւ համարեց, միայն մեծին կերպով բացատրել — «բացացուք» «եկայք իջցուք» «խառնակեսցուք» և ուրիշ յոգնակի բառերով և մարգարէութիւնների վկայութիւններով՝ մինչև Որդին Աստուծոյ մարդանալով, ինքը բացատրէ այս ծածկութեան խորհուրդը։ Ողորմութեամբ Տեառն (Հօր) լի եղև երկիր, և բանիւ Տեառն (Որդւով) երկինք հաստատեցան և Հոգւով Սուրբ Հոգւով) բերանոյ նորա (Հօր) ամենայն զօրութիւնք նոցա։ Եւ ընդ ձեզ եմ, ասէ Տէր ամենակալ (Հայր) և բանն (Որդին) զոր ուխտեցի ընդ ձեզ և Հոգին իմ (Սուրբ Հոգին) որ կայր՝ի մէջի ձերում։ Մնդ. ա. 26. բ. 18. գ. 22. ժա. 7. սաղ. լբ. 4. անգ. բ. 5—6։ *)

Յիսուս մարդանալով՝ ոչ միայն պարզ խօսքերով բացատրեց Սուրբ Երրորդութեան խորհուրդը, ոչ միայն պատուիրեց առաքեալներին իրանց քարոզութեան հիմքը դնել Սուրբ Երրորդութեան դաւանութեան վերայ—մկրտել Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյն անունով՝—այլ և զգալի և յայտնապէս տեսիլքով Յորդանանում և Թափորական լերան վերայ՝ Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյն ներկայութեամբ, պարզ բացատրեց հին կտակարանի մէջ քիչ տակ ծածկուած այս մասին վարդապետութեան էութիւնը։ Մատ. 4. 16. իր. 19. ժա. 27. յով. հ. ա. 1. է. 7։

բ. Մկրտութիւն։—Քրիստոս ամենեին կարօտ չէր մկրտութեան, որով հետև ինքն էր ամենին սրբողը, այլ իւր մկրտութեամբը կամեցաւ հաստատել մկրտութեան փրկարար խորհուրդը, և իւր մարմնոյ շօշափմամբ կամեցաւ Ջրերին տալ զօրութիւն լինել նոցա մկրտութեան։ Ուստի իւր յարութիւնից յետոյ աշակերտաց հրամայեց գնալ մկրտել և ուսուցանել նաև ամենայն հե-

*) Աստուծոյ Որդին մինչև մարդանալը աստուածաբան, Միածին, Արգի, Իմաստութիւն Հօր, և այլն, իսկ մարդեղութենից յետոյ կոչուեցաւ Էմմանուել, Յիսուս, Քրիստոս, Արդի Մարդոյ և այլն։

թանում էրին։ Առաքեալները մինչև այդ ժամանակ թէ և հաւատացեալներին մկրտում էին Քրիստոսի և ոչ թէ Յով հաննու մկրտութեամբ, բայց այս անում էին ոչ պարզապէս հրաման և պարտաւորութիւն, այլ իբրև կամաւոր, վասն զի դիտ թիփտաւորութիւնը տեւում էր։ Հոգւոյն Սրբոյ գալստից յետոյ մկրտութեան խորհուրդը դարձաւ հրաման, այնպէս որ առանց մկրտութեան ոչ ոք չէր կարող լինել եկեղեցու անդամ։ Մատ. իբ. 19. յով հ. գ. 5. գործ. բ. 38. իբ. 16. հռ. զ. 3. ա. կոր. ԺԲ. 147։

Պէտք է հասկանալ, որ թիփտաւորութիւնը խորհուրդ չէ, այլ լոկ մի արտաքին նշան է Հրէից մէջ, իրանց հեթանոսներից և անհաւատներից զատորոշուելու համար։ Իսկ մկրտութիւնը մեծ և առաջին խորհուրդ է, վասն զի մկրտութիւնը Ամենասուրբ Երրորդութեան հաւատքին գործնական դաւանութիւն է։ Մկրտութիւնը սկզբնական մեղայ և դատապարտութեանց ազատութիւնն է։ Մկրտութիւնը հոգևոր կեանքի վերսին ծնունդն է։ Ուրեմն Մկրտութիւնը դրուած չէ թիփտաւորութեան տեղ, վասն զի, եթէ Քրիստոս մկրտութիւնը թիփտաւորութեան տեղ սահմանած լինէր, պէտք էր սկզբից միայն մկրտութիւնը պարտաւէր եկեղեցու մէջ, այլ ընդհակառակ, մենք տեսնում ենք, երկար ժամանակ եկեղեցու սկզբից՝ մկրտութեան հետ թիփտաւորութիւնն էլ պարտաւոր էին, այնպէս որ՝ Հրէից հաւատացեալց մանկուանքը և հեթանոսաց նորահաւատները, նախ թիփտաւում էին և ապա մկրտվում։ Այսպէս շարունակուեց մինչև որ առաքեալները յայտնի ժողովքով որոշեցին, որ այնուհետև մարմնոյ թիփտաւորութիւնը տեւիրդ է։ Ղուկ. բ. 21. յով հ. գ. 5. գ. 1—4. գործ. ԺԵ. 1—30. ժգ. 3. իբ. 16. հռ. գ. 3—11. գաղ. բ. 3։

Հայաստանեայց եկեղեցին կատարում է այս խորհուրդը ըստ հին սովորութեան ընդհանուր եկեղեցու՝ այն է. երեք անգամ ընկղմում է երեխան աւազանի ջրի մէջ Սուրբ Երրորդութեան անունով՝ ի նշան Քրիստոսի երեքօրեայ մահուան և թաղման, որ մկրտուելով աւազանի գերեզմանի մէջ, մկրտվում է Քրիստոսի մահուան մէջ, մեղայ համար մեռնելով, յարութիւն է առնում աւազանից, Քրիստոս հագած և հոգևոր կեանքով նորոգուած։ Պէտք է իմանալ, որ ոչ թէ ջուրն է լուանում սկզբնական մեղքը, այլ ջուրը միայն նիւթ է մկրտութեան, բայց սրբողը և կենագործողը Քրիստոսի սահմանեալ այս խօսքն է.— «Մկրտի ծառայս Քրիստոսի յԱնուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» Մարկ. ժգ. 16. գործ. բ. 38. կող. բ. 12. հռ. զ. 3—5. գաղ.

գ. 27. տիտ. գ. 5. երբ. ժ. 22. ա. պետ. գ. 21. ա. կոր. ժ. 1—12։

Զատիկաս նորահաւատներին պէտք է հաւատքի և բարոյականութեան մէջ բաւական հրահանգելից լեցուց մկրտել, իսկ նոր մեռածին մանկանց պէտք է մկրտել կամ իրանց ծնողաց և կամ հաւատացեալ կիսաՀայց հրաշքաւորութեամբ, որոնց պարարտ է անուանել նոցա հաւատքի մէջ։ Նորածին մանկանց մկրտութիւնը սկսուած է առաքեալներից, որոնք ամբողջ տունը մկրտում էին, որանց հետևելով՝ եկեղեցու սուրբ հայրերը սահմանեցին, որ մի հաւատացեալի երաշխաւորութեամբ մկրտել նորածինները։ Գործ. ժ. 15—33. ժ. 24—48. ժբ. 8. ա. կոր. ա. 16։

Մկրտութեան մասնակիցները են ամենայն եպիսկոպոսունք և քահանայք։ Բաց ի ջրից մկրտութեան կայ նաև արիւնի մկրտութիւն, երբ մարդը՝ Քրիստոսի սիրոյն համար մեռանում է մարտիրոսական մահուամբ։ Այս նաև սիրոյ մկրտութիւն, երբ մարդը՝ բոլոր սրտով և հոգով փառուած, կամենում է մկրտուիլ բայց չէ կարողանում իւր նպատակին հասնել՝ օրինակ. կամ մկրտող չէ գտնում և կամ յանկարծ մահուան վտանգն է հասնում։ Մատ. ժբ. 19. մարկ. ժ. 39։

գ. Քրիստոս — ինչպէս տեսանք, Քրիստոս մկրտութիւնից յետոյանմիջապէս օծուելով Սուրբ Հոգով՝ հասատանց Քրիստի խարհուրդը Առաքեալներն էլ մկրտեալներին դրոշմելով ձեռնադրութեամբ և ապօթքով՝ Սուրբ ոգին զրպրի նշանաւ դոյնս էր նոցա վերայ և տային զանազան պարգևներ՝ այն է. լեզուախօսութիւն, մարգարէութիւն, բժշկականութիւն, հրաշագործութիւն և այլն, վտանգով և Հայասատանեայց եկեղեցին առաքեալական սահմանադրութեամբ, փոխանակ ձեռնադրութեան, մկրտութիւնից յետոյ անմիջապէս դրոշմում է մկրտվողին սրբարար իւղով (մեռոնի), խաչաձև օծելով մեռոնասուրբ երբորդութեան անունով նախ՝ նորա ճակատը և ապա զգայարանքը և մարմնոյ այլ մասունքները։ Դրոշմուածը անհնարին է միանգամ դրոշմել, որով հիան ինչպէս ասացի, դրոշմի խորհուրդը է իբրև շարունակութիւն և կատարումն մկրտութեան, նաև Սուրբ ոգւոյն շնորհքը անգեղջ է, այսինքն, անդառնալի և անեսոփոխելի է, որ ապաստրվում է ընդունողի հոգու վերայ։ Խորհրդին ապաստարաններն են քահանայք։ Գործ. բ. 38. բ. 14—17. ժ. 15—33. ժբ. 5—7 ա. կոր. ա. 16. բ. կոր. ա. 21. 22. յայտ. ժ. 1։

Օրհնուած խորհրդաւոր սուրբ իւղով օծանելը սահմանուած է Աստուծոյ հրամանաւ։ Հին Օրինաց մէջ վառուած

էր օծանել օրինական իւղով ասուած պաշտութեան խորանները, սեղանները, անօթները, աւազանները և այլն։ Վանորդ և Հայասանեայց եկեղեցու մէջ Սուրբ Լուսաւորչից սահմանուեցաւ սրբալոյս իւղով օծանել մկրտուած հոգիները։ Սաղ. ժբ. 6. ճգ. 15. եփ. ա. 13. առ պետ. բ. 9։

Դրոշմը տալիս է ընդունողի հոգու մէջ Սուրբ Հոգոյ ներքին օծութիւնը, զօրացնում նոցան հաւատի մէջ, և իբրև քաջ զինուոր զրանով սպառազինուած փորձութեան դէմ, համարձակապէս և առանց երկիւղի խոստով անում քրիստոնէական սուրբ հաւատը։ Գործ. բ. 38. իբ. 16. հռ. գ. 4. գալ. դ. 6. ա. յով. հ. բ. 20—27. բ. կոր. ա. 21. 22։

Հայոց Եկեղեցին, անխախտ պահելով հին առաքելական աւանդութիւնները, Ցիսուսի Ծնունդեան տօնախմբութիւնը կատարում մկրտութեան հետ միասին Յունվարի վեցին, յետոյ հիմնուելս փոստերի վերայ հաստատուած։

Սուրբ Գրքից գիտենք, որ Զաքարիայի քահանայութեան պաշտաման օրերը ասուած երիսուն էր, որոնցից հինգը ասվում էր քաւութեան տօն, իսկ եօթը տարբեր արտահարաց տօնը։ Հրեշտակի տեսութիւնը և Զաքարիայի արտասանումն եղև քաւութեան տօնի առաջի օրը։ Զաքարիան այդ օրը չգնաց տուն, այլ գնաց տուն, 12 օրից յետոյ, իբրև պաշտաման օրերը լրանալից յետոյ։ Եղիսաբէթը յղացաւ այդ 12 օրից յետոյ, որ էր Թշրեվնի քսան և երկուսը՝ այն է. Հոկտեմբերի 9-ին։ Սրա վերայ հաշուելով Մարիամ Կուսի աւետիքը լինում է Ապրիլի 7-ին և Ծնունդը Յունվարի 6-ին։ Բայց ամենն եկեղեցիք առաքեալներից սկսած մինչեւ մեզ մեր ժամանակ՝ այն է. 337—352 Քրիստոսից յետոյ զոյանից զմանք օրաշուշեին մեզանից և սահմանեցին Մեռնունդը կատարել Դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտութիւնը Յունվարի 6-ին, պատճառ բերելով Բեթղեհէմի և Յորդանանու միմեանցից հեռաւորութիւնը։ Որով հետև մէկ օրուայ մէջ չէին կարողանում մեծ Տօնի խորհուրդը արժանավայել հանդիսաւոր կատարել Բեթղեհէմի այրի մէջ, և ուստի նոցա օրուան մէջ գնալ հաստատեցին Յորդանան և այն տեղ կատարել մկրտութեան հրաշալի խորհուրդը։ Ղուկ. ա. 23—39. ընդ. երես. 60. 88. 892. 129։

ԳԼ. Գ.

1. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ 'ի Հոգւոյն փորձիլ 'ի սատանայէ։
2. Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ։
3. Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա, զի քարինքս այսոքիկ հաց լինիցին։
4. Նա պատասխանի ետ՝ և ասէ. Գրեալ է՝ թէ ոչ յհացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Աստուծոյ։

1. Յիսուս՝ մկրտուելից յետոյ Սուրբ Հոգւոյն հաճութեամբ գնաց մերձակայ անապատը կամաւ փորձուիլ սատանայից, պատերազմելով նորա հետ ոչ թէ Աստուածութեան զօրութեամբ, այլ մարդկային բնութեամբ։ Զաք. գ. 1. յովհ. գ. 38. ժդ. 30. երբ. գ. 15։

Յիսուսի բոլոր կեանքը հոգևոր պատերազմ է խաւարի թագաւորութեան դէմ։ Սա հեզութեան և առաքինութեան զէնքերով, յաղթութեան դրօշակը բարձրացրած, հաստատուեց լուսոյ և հոգևոր կեանքի թագաւորութիւնը։ Սատանան խաւարի թագաւորն է, որ Սուրբ Գրքի մէջ ոչ միայն շար հրեշտակ է ասուում, այլ նաև ունի զանազան անուններ։ Նորա փափագը և ցանքը՝ այն է. որ մարդոց խաւարի մէջ ձգէ և նոցա հոգիները կորցնէ։ Սորա հետևողները ասվում են սատանայի ժողովուրդ։ Յովհ. ա. 6. 12. մատ. ժբ. 24. եփ. բ. 2. յայտ. ժբ. 9։

Լուսոյ, արդարութեան և Աւետարանի հետևողները ասվում են Յիսուսի ժողովուրդ։ Յիսուսի ժողովուրդները, պէտք է միշտ իրանց աչքի նման, պաշտպանելով իրանց հոգու և կեանքի պայմանները, քաջութեամբ պատերազմել սատանայի և նորա հետևողների դէմ, ոչ միայն աղօթքով, ծոմապահութեամբ և տեսակ տեսակ առաքինութեամբ, այլ նաև հոգևոր զէնքով, մեր արեան վերջի կաթիլները անգամ՝ չխնայելով։ Բ. օր. գ. 9. ես. ե. 12—17. մատ. գ. 7. ժա. 19. յովհ. բ. 17. գ. 3—8. ա. կոր. ժբ. 31. հռ. ժդ. 14. 24. տիտ. գ. 5։

2. Յիսուս քառասուն օր անսուաղ մնալով՝ հաստատեց պահեցողութեան սաստուածային օրէնքը։ Մովսէս և Եղիան ևս այդքան երկար միջոց պահեցին, բայց սոցա պահեցողութիւնը Աս-

առաջոյ նոբաթկ հնուշաց ձեռաքն էր։ Յիսուսի քաղցնելը կամաւորապէս էր և ոչ թէ մեզ պէս ակամայ և մատնուած բնութեան հարկի տակ։ Այս է, որ ասվում՝ «ապա քաղցեաւ», այն է. երբ կամեցաւ։ Յիսուսի «քաղցնելը» մարդկութեան նշանակն է, իսկ «կամաւ» լինելը Աստուածութեան, բայց միացած մարդկութեան հետ։ Մատթ. գ. 16. եր. դր. 28. գ. թագ. ժԲ. 8։

Ծոմը՝ անասուազութիւն է, որ միանգամայն զգուշանալով սնունդարար և համեղ կերակուրներից և ըմպելիքներից ճաշակում էին օրական միանգամ միայն և այն արևը մտնելու ժամանակ, որից աւելացած ծախքը տալիս էին ողորմութիւն աղքատաց։ Նախնիքը գրեթէ լոկ հացիւ և ազիւ էին բաւականանում, վանորոյ և քառասնորդական պահքը անուանուեցաւ «ազուհացք»։ Այսպիսի պահեցողութիւնը սկզբանէ շարունակուեցաւ մինչև ի Քրիստոս։ Եկեղեցիքը, առաքեալներից սովորելով, միշտ ծոմ և պահք էին պահում։ Քրիստոնեաները, առաքեալներից սովորելով, Հրէից նման շաբաթը երկու օր ծոմ էին պահում։ Դշի Յիսուսի մատնութեան յիշատակ և Ուրբաթ նոյա մահուան։ Իսկ Զատկից առաջ քառասնորդական պահքը պահում էին, իբրև Յիսուսից յատկապէս հրամանն։ Այսպէս էլ հրամայուած էր ժամանակ ժամանակ ծոմ կամ պահք պահել մի արտաքոյ կարգի նեղութեան ժամանակ՝ այն է. մահու, սովի, և այլն։ Կիրակի օրերը բոլորովին արգելուած է ծոմ պահել ի պատիւ Փրկչի յարութեան, որ այդ օրը պահք է ուրախանալ ամենայն քրիստոնեայ և ոչ թէ սուգ նստել։ Միայն մեծ պահոց Կիրակիից և Յայտնութեան պահոց մէջ պատուաւոր Կիրակիին՝ թոյլ արուեցաւ պահել, Փրկչի մեռելութեան խորհրդի համար, բայց հիւանդներին համար, որ չէին կարող ծոմ պահել, առաքեալներից հրամայուեցաւ սրբապահութիւն անեք մեռ որ հիւանդն է բանդար կերեցէ։» Եկեղեցիքը՝ տեսնելով մարդկային տարութիւնը, առաքելոյն այս խօսքից առած՝ սրբապահութեան օրինաց հիմն դրին, բայց սրբապահութիւնը օրինադրելով՝ ոչ թէ ծոմը վերացրին, այլ երկուսն էլ յանձնեցին քրիստոնէին ջերմեռանդութեան և դրանց հետ կցրին, իբրև անանձրիւելի պայման, աղքատաց ողորմութիւնը, իսկ Աւագ Շաբաթը գոնէ չարչարանաց ուծնի համար պէտք է ծոմ պահել, որոնք միայն կարդին։ Յովհ. գ. 5. դան. ա. 11-20. մատ. թ. 15. մարկ. բ. 18. ղուկ. ժբ. 12. գործ. իէ. 9. Հա. ժդ. 2։

Հայոց եկեղեցին պահում է միայն տէրունական հինգ տօներ-ում և ամեն մի ամսի համար միմի շաբաթ պահք, ընդ ամենը 17 շաբաթք։ Քառասնորդական պահքը՝ ամսոց պահքերի կար-գումն է, իսկ Աւագ Նաբաթինը՝ Տէրունական հինգ տօներից մէկն է։ Զատիկշաբաթի և Ուրբաթի պահքերը, ինչպէս փիրը ասուած-ցաւ, պահվում է Յիսուսի մատնութեան և չարչարանաց յիշա-տակի համար։ Հայոց եկեղեցին սրբոց համար ամենևին պահք չէ պահում և Պիւրակէ չէ տօնում։ Աստուածածնայ տօները Պիւ-ռակէ է տօնում, որով հետև Տէրունական են հնամարվում, իսկ Լուսաւորչինը տօնում է՝ թ պատիւ լուսաւորութեան ազգիս։ Բայց պահքերը, որ անուանվում են Սուրբ Սարգսի, Եղիսական, Լուսաւորչի, Սուրբ Յակոբայ, և այլն, սահմանուած են ոչ թէ այս յիշուած սրբոց համար, այլ ամսական պահքեր են, որոնց նա-բաթի օրերը այս սրբոց տօները պատահելուն համար, յիշվում են նոցա անուններով։ Ապացոյցը այս է, որ երբ Տեառնդառաջի տօնը պատահի Սուրբ Սարգսի նաբաթի օրը, Սուրբ Սարգսի տօնը պէտք է տեղափոխել յաջորդ Երկուշաբաթի օրը։ Այսպէս՝ եթէ պահքը Ս. Սարգսին համար լինէր, պէտք է պահքն էլ մէկ տեղ փոխուէր յաջորդ շաբաթը, որ այս անկարելի է։

Իսկ պահեցողութիւնը մեծ ոգներին, բազմախորհրդի պարար-տացու ցիչ կերակուրներով յղփացողներին և որոշայնամոլներին Սուրբ Գիրքը արգելում է, դոցա որոշայնապաշտ անուանելով։ Թէպէտ և շատերը ասում են թէ՝ մեղքից հրաժարուելը մեծ պա-հեցողութիւն է քան թէ կերակուրներից, բայց այս մասին Պօղոս Առաքեալը նաստին օրինակ է տալիս, երբ նա չկարողացաւ իւր որոշայնին յաղթել, չկարողացաւ նաև յաղթել ուրիշ մեղքերին, ուստի և տակի անուանուեցաւ։ Հռ. թ. 13. ժդ. 18. երբ. ժբ. 16. փիր. գ. 18 — 20։

Ուրեմն հարկ է քրիստոնէից, որ օրինաւորուած և սահմանու-ած պահոց օրերը սիրով և ջերմեռանդութեամբ պահել և հրա-ժարուիլ պարարտացուցիչ կերակուրներից, ոչ թէ այն նպատա-կաւ, որ չափազանց զսպելով իրանց մարմինները՝ բթացնեն նոցա զգօութիւնները, անպիտանացնեն նոցա ընդունակութիւն-ները օգտակար նպատակների ծառայութեան մէջ, այլ որ սրա-նով զգուշանան իրանց հոգու փարոզութիւնները, վառեն նոցա Քրիստոսի և ոչ ուշարձի ի մարմնոյ սիրով, որ այնպիսի ապաշ-

խարութիւամբ թերևս կարողանան, նորոգուելով Քրիստոսի հնարքը և նորա հաւատոյ զօրութիւամբը լինիլ Աստուծոյ հաճելի ժառանգներ։ Մատ. գ. 4.զ. 17.ժա.18.ժԷ.20.զուկ.բ. 37.Եբր.ժգ.9։

3. Սատանան ինչպէս նախահայրս խոստմունքից՝ այնպէս էլ այն սքանչելիքներից, որ եղին Քրիստոսի ծննդեան, մոգերի գալստեան, ցով հանելիսի յայտնաբարձառ վկայութեան և մկրտութեան ժամանակ, գիտէր, որ Յիսուս ինքն է Մեսիային, բայց տեսնելով որ նա էֆ նաև ճշմարիտ մարդ բարկացած հոգով և մարմնով, ունի բնական քաղց, կարօտում է ուտելիքներին, վասնորոյ և՝ մեծ տարակուսութեան մէջ, և չկարողացաւ իմանալ թէ արդեօք Յիսուս Աստուծոյ ճշմարիտ բնական և անսկզբնական Որդին է, թէ նորա արդեղբական Որդին։ Այս տարակուսութեան լուծումն ստանալու համար մտեցաւ Յիսուսին մարդկային տեսիլքով, ինչպէս երբեմն մտեցաւ նախահայրս՝ օձի կերպարանքով, և սկսեց իւր պատերազմը փորձառական հարցերով։ Նա այդ հարցերով կամեցաւ Աստուծոյ գաղտնի խորհուրդը և իւր տարակուսութեան լուծումն ստանալից յետոյ՝ սկսել իւր գործը։ Եթէ գտնէր, որ Յիսուս Աստուծոյ որդեղբական որդին է, մի թագարեր հնարելով, ձգէր նորա մեղքի մէջ, իսկ եթէ գտնէր, որ նա Աստուծոյ անսկզբնակից, առնչակից և բնական որդին է, զանազան հնարքներով աշխատէր նորան ստորադրեալ մարդկութիւնը զրել գեպ ի կորստեան անդունդը։ Վասնորոյ և՝ մեծ հարցմունքով ցոյց տուաւ իւր տարակուսութիւնը Յիսուսի Աստուածութեան վերաբերմամբ։ Յիսուս գիտէր, որ սատանան խանդաղով իւր ով լինիլը՝ չէր ուզղուելու, այլ առաւել ևս պէտք է յարատևի, վասնորոյ և նորա խօսքից խաբուած, քարերը հաց չշինեց։ Անպէտք տեղից հրաշք գործողը՝ սխալական է, բայց Աստուած միայնէ, անսխալ, ուրեմն Յիսուսն է անսխալութեան Աստուածը։

4. Յիսուս սատանայի խոստմանկութիւնը եղծեց Սուրբ Գրքի վկայութեամբ, և հաստատեց, որ մարդիս մարմնաւոր և հոգևոր կիանքի ամենահարկաւոր ապրուստը Աստուծոյ բանն, հրամանն է, իսկ հացը մի երկրորդական բան է։ Հացը չէ կարող ընդդիմանալ Աստուծոյ հրամանին, որով հետև որ տեղ չ՚կայ Աստուծոյ բանը՝ այնտեղ թագաւորում է մահ և ապականութիւն, իսկ որտեղ կայ Աստուծոյ խօսքը, բայց չ՚կայ հաց, այդտեղ թագաւորում է կիանք և երանութիւն, ինչպէս երբեմն էին Խսրայէ-

լայիք։ Աստուծոյ ապաւինողը քաղցած չի մնար, Նա անշուշտ պիտի հոգայ մեզ համար։ Բ. օր. ը. 3. սաղ. լէ. 16—26. իմաս. ժզ. 26. ես. ծբ. 13։

5. Յայնժամ առեալ ածէ զնա ստանայ 'ի քաղաքն Սուրբ. և կացուցանէ զնա 'ի վերայ աշտարակի տաճարին։
6. Եւ ասէ ցնա. եթէ Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ ասի 'ի վայր, զի գրեալ է. թէ հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, և 'ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի երբէք հարցես զքարի զոտն քո։
7. Ասէ ցնա դարձեալ Յիսուս. գրեալ է՝ թէ ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո։
8. Դարձեալ առեալ ածէ զնա ստանայ 'ի լեառն մի բարձր յոյժ, և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի. և զփառս նոցա, և ասէ ցնա։
9 Զայս ամենայն քեզ տայ՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ։
10. Յայնժամ ասէ ցնա Յիսուս, երթ յետս իմ սատանայ, զի գրեալ է. Տէառն Աստուծոյ քում երկիրպագցես՝ և զնա միայն պաշտեսցես։
11. Ապա եթող զնա սատանայ, և ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

5. Տաճարը շինուած էր մի բարձր լերան վերայ, և դրա մէկ կողմում շինած էր մի շատ բարձր պատ, որին բարձրութիւնը տաճարի այդ կողմի բարձրութեան հետ մէկ տեղ վերցուած 700 ոտնաչափից աւելի էր։ Սորա հրաձգ և թեւատարած գագաթը ուներ այնքան մտկերևոյթ՝ որ մարդ կարողանար նորա վերայ կանգնել։ Այս աշտարակի ներքև էր քահանայից և Ղեւտացւոց սրահը և ողջակիզաց սեղանը, փառնորդ և միշտ այդ տեղ գտնվում էին քահանայից, իշխանաց և ժողովրդոց բազմութիւնը։ Սատանան, Յիսուսին օդի մէջ բարձրացնելով՝ անապատից տարաւ և կանգնացրաւ Տաճարի այդ աշտարակի վերայ։ Իւր այս գործողութեան մէջ երկու կէտ խաբուեցաւ, նախ՝ որ Յիսուսի հեղութիւնը տկարութիւն համարեց և երկրորդ, որ կամեցաւ այդ հրաշքը՝ այն է. օդի միջով գնալը, աշտարակի վերայ կանգնելը, մարդկանց ցոյց տալ, որպէս զի Յիսուս փառաւորուի մարդկանցից և մեծ պատուով ընդունուի նրանցից։ Մեսիայ։ Նա

չկարողացաւ իմանալ, որ Յիսուս տեսնողների հայեցողութիւնը արգելեց, որպէսզի նոքա չկարողանան տեսնել զևի կամքով յառաջացած իւր փառքը։ Նա չկարողացաւ իմանալ, որ Յիսուսի Մեսիայ լինելը պիտի տարածուի խաւեր, հարուստներ, համբերութեան և առաքինութեանց ձեռքը և ոչ ունայն փառքի և իշխանութեան։ Ամբարիշտներն էլ առաքինիների բարեպաշտութիւնը և հեզութիւնը տկարութիւն են համարում։ Սա. խ. 28—31. խր. 2. ծր. 1. ատ. ՃԺԷ. 1-5. մատ. ԺԷ. 53. յայտ. ժա. 2։

6. Սատանան տեսաւ, որ Տէրը իրան հեռացեց Ս. Գրքի վկայութեամբ, ինքն էլ սկսեց նոյնպէս Սուրբ Գրքի վկայութեամբ ասել.— «արի գրեզ։ Այս մարգարէութիւնը գրուած է սրբոց համար, որով հետև նոքա մարդիկ են և կարօտ օգնութեան, հրեշտակներն էլ միշտ օգնած են դոցա միայն հարկաւոր միջոցում, ինչպէս էին հրեք մանկունք և այլն։ Բայց Յիսուս, որ ամենի տէր և պահապանն է, իսկ հրեշտակները նոցա ծառաներն, պաշտօնեաներն են և ոչ թէ նոցա պահապանը, վանողոյ այս մարգարէութիւնը բոլորով են չէ վերաբերվում Յիսուսին։ Մանաւանդ, որ գրուած է.— «առանց արժանաւոր նպատակի դէպ ի վանեալ վազողները, ինքնասպանները, պիտի կորչին։ Սաղ. դա. 11. 12. գաղ. է. 19—22. ա. տիմ. ա. 9. յայտ. իա. 8։

7. Թնդրիկ Աստուածանից հրաշք առանց մի արժանաւոր նպատակի նշանակումէ փորձել Աստուծոյ, բայց երբ սատիզուածը համարձակուեցաւ փորձել սատիզողին, նշանակումէ երկիւղածութիւն ունենալ Աստուծոյ ամենակարողութեան վերայ՝ որ էգործ ամբարտաւանութեան։ Յիսուս էլ կ՚մեղանչէր եթէ ամբարտաւանների նպատակը դատելու համար հրաշագործ էր։ Բ. օր. գ. 11։

8. Այժմ էլ տարաւ անապատի մտա (որտեղ առաջի փորձութիւնը կատարեց) մի բարձր լերան վերայ կանգնեցրաւ և շատ կարճ միջոցումպէս տեղից ցոյց տուաւ աշխարհիս ամենայն թագաւորութիւնը և նոցա փառքը։ Ամենք ասումեն՝ թէ այդ լեռը գտնվումէ Նրուսաղէմի մտա, որից երևումէ Արաբիայի լեռները, Ամորհայուց, Մովաբացուց երկիրները և Պաղեստինի մեծ մասը։ Աշխարհ բառը շատ անգամ գործ է ածվում, իբրև մի մեծ մասն աշխարհի։ Այսպեղ պէտք էր այդ մասով հասկանալ։ Մատթէոսը այս փորձութիւնները գրումէ կարգաւ և ցոյց է տալիս, որ լերան վերայ կանգնեցնելը վերջին փորձութիւնն էր, իսկ Ղուկասը գրումէ տեղի համեմատ՝ այնէ. որ անապատի մէջ փոր-

ձուԹիւնից յետոյ տարաւ մերձակայ լեռանն։ Պէտք է խմանալ նա և, որ այդ քառասնօրեայ միջոցում Յիսուս բաց ի այդ երեք տեսակ փորձուԹիւններից փորձուեցաւ նաև ուրիշ տեսակ շատ փորձուԹիւններով։ Մատ. գ. 5. զուկ. բ. գ. 2—13. Հռ. գ. 13։

9-11. Քրիստոս չի փախաւ այդ կռուից և բռնուԹեամբ էլ չհալածեց գնեին, այլ ինքը գնաց յայտնուեցաւ և Թողեց Յիսուսին։ Այդ լեռնից մինչև անապատը երկար միջոց էր Յիսուս, կամ Հոգւոյն Սրբոյ փառքը, Թափփով իւր մարմնոյ մէջ, իսկոյն դրաւ իրան այդ լեռնից անապատում, և կամ հրեշտակները օդնէին մարմին առած, իրանց Տէրին վերառած, դրին մի փարկեանի մէջ նոյն անապատում։ Հրեշտակները, որ միշտ շրջապատուած էին նրանով, նորա փառաբանելու և պաշտելու համար, այդ փորձուԹիւնն միջոցում հեռացած էին, որպէս զի գնեն չկարողանայ ասել Թէ.— Յիսուս հրեշտակից օգնուԹեամբ յայտնեց սատանային։ Երբոր հեռացաւ գնեն, հրեշտակները մօտացին և պաշտեցին նորա։ Սատանան Թէպէտ բազմազան փորձուԹիւնների ձեռքը չկարողացաւ խմանալ Յիսուսին՝ Հօր Աստուծոյ Ճշմարիտ կամ որդեգրական Որդի լինելը, բայց յետոյ, երբ տեսաւ լոկ խօսքով հեռանդներին, դիւաշարներին բժշկելը, մանաւանդ, օրնա Աստուծոյ բնական և անսկզբնական Որդին է, վասնորոյ և աւելի կատաղած գրգռեց հրեից, որ նորա անարդական մտՀոգ խոչեն, որպէս զի նա խաչը իրան անվարձելու համարելով, մերժի խոնարհուԹեան առաքինուԹիւնը։ Մատ. բ. 29. զուկ. գ. 13։

Այս տեղ տեսնենք, որ Յիսուս իւր քարոզուԹեան և փրկուԹեան պաշտօնը սկսելից առաջ՝ նախ միրտուեց և ապա գնեուած Սուրբ Հոգւոյ, սկսեց իւր պատերազմը ապրի դէմ։ Այսպէս էլ պէտք է մեր ամէն մի ձեռնարկուԹեան սկզբում՝ պատրաստել մեզ հաստատուն զօրուԹիւնով և ապա սկսել գործը։

12. Եւ իբրև լուաւ Յիսուս՝ եՀել Յով Հանէսն մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ՝ի Գալիլեա։

13. Եւ Թողեալ զնազարէթ, եկն բնակեցաւ ՝ի Կապառնայում ՝ի ծով եզերին, ՝ի սահմանս Զաբուլոնի և Նեփթաղիմայ։

14. Զի լցցի բանն՝ որ ասացաւ ՝ի ձեռն Եսայեայ մարգարէին

15. Երկիր Զաբուլոնի և երկիր Նեփթաղիմայ, ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեայ հեթանոսաց։

16. Ժողովուրդ որ նստիր ՝ի խաւարի՝ եռաս զոյս մեծ. և ո-

բոց նստէին յաջխարհին և ի ստուերս մահու բոյս ծագեաց նոցա։

17. Յայտնմահեան սկսաւ քարոզել Յիսուս և ասել. ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից։

12. Հերովդէսը իշխում էր միայն Գալիլիայումն, իսկ Երուսաղէմին իշխում էին Հռովմայեցի իշխանները, որոնք չէին կառավարում Հրէից օրէնքաց մէջ, այլ միայն լսում էին քարաքանչ Հայրցէրին Գալիլիէցիք և փարիսեցիքը նախանձուած Յովհաննէսի վերայ բռնեցին Հրէաստանի երկրում Գալիլիացի սահմանների մօտ, բայց որպէս զի անպատիժ մնան Հռովմայեցի իշխաններից, սուտ լուր տարածեցին, որպէս թէ բռնեցինք նորա Գալիլիայի երկրում, ուստի և տարին Յովհաննէսին քննութեան համար Հերովդէսի մօտ։ Որով հետև Յովհաննէսը Հերովդէսին ասաւ՝ կանչելմանեկ իւր եղբօր կնոջ հետ շնութիւն անելու պատճառաւ, վանեցոյ և բանտարկուեցաւ Հերովդէսից։ Յիսուս, երբ լսեց, իսկոյն փախաւ Երուսաղէմի սահմաններից և գնաց Գալիլիայ, որով հետև այդ տեղ չկային մատնիչ գրիչները և փարիսեցիները։ Յովհաննէսի այս մատնութիւնը Յիսուսի վերջի փորձութիւնից մի տարի էլ աւելի միջոց քաշեց։ Յիսուս այս միջոցում շատ գործեր և վարդապետութիւններ արաւ, որոնց Մատթէոսը, Մարկոսը և Լուկասը զանց են առնում, բայց միայն գրում է Յովհաննէսը՝ այն է. Անդրէասին և իւր եղբայր Պետրոսին, Փիլիպոսին և Նաթանայէլին իւր մօտ գնալը։ Զուրը գինի փոխելը։ Գալիլիայից Երուսաղէմ գնալը և առաջին անգամ վաճառականներին տաճարից դուրս անելը։ Նիկոդիմոսի հետ խոսակցութիւնը։ Հրէաստանի մէջ իւր աշակերտաց ձեռքով մկրտութիւն անելը։ Կրկին Գալիլիայ գնալը, որ ինչպէս այստեղ Մատթէոսը պատմում է, և Ճանապարհին Սամարացի կնոջ հետ խօսելը։ Կրկին Կանա գնալը և այնտեղից Կափառնայումի մէջ ընկած ազնուականի որդու բժշկութիւնը։ Այս ամենից յետոյ եկաւ Նազարէթ, ինչպէս գրում է Մատթէոսը։ Մատ. գ. 6. Ժգ. 35. մարկ. ա. 14. գ. 17—20. զուկ. գ. 19. 20. գ. 14. Յով. գ. 40—51. բ. 1—17. գ. 1—22. գ. 1—54։

13. Նազարէթը գանվում է Ներքին Գալիլիայի մէջ, իսկ Կափառնայումը վերին Գալիլիայի։ Յիսուս Նազարէթացւոց անհաւատութեան համար բնակուեց Կափառնայումի մէջ։ Այս քա-

զաքա Գալիլեացւոց ծովի արևմտեան եզերքումն էր։ Որով հետև Յիսուս շատ էր կենում այս քաղաքում, և այստեղ շատ հրաշագործութիւններ և մարդասիրութիւններ արաւ, վասնորոյ և ասուեցաւ փոքր քաղաք։ Հոգիասուս խօսքերից երևում է, որ Յիսուս փորձութիւնից յետոյ, Սուրբ Հոգւոյն զօրութեամբ, նախ գնաց վերին Գալիլիայի զանազան քաղաքներումն և Կափառնաումն նոցա մէջ ուսուցանում էր փնտռուտքոյծ ամենից։ Ապա գալով նազարէթ և նաբաթ օրը մտաւ ժողովարան և կարդաց իւր համար գրած նոցի մարգարէութիւնը։ Մատ. ը. 5—14. թ. 1—25. մտ. 20—24. մրկ. 34. գուկ. գ. 14—30։

14. 17. Այս երկիրները Տիբերիայի ծովի մանապարհումն էին, Տիբերիական ծովը սատում է նաև Դիննեսարեթայ ծով։ Հերոդէսը տրա մօտ ի պատիւ Տիբերիայ կայսրի շինեց մի քաղաք և անուանեց Տիբերիայ, ուստի և ծովը ասուեցաւ Տիբերիական։ Այդ ծովը քաղցր ջրերից մայրոված մի լճակ էր, որի մէջ գտնվում էին շատ ձկներ։ Ցիշեալ գաւառները գտնվում էին Յորդանանու միւս կողմում և շրջապատած էին հեթանոս երկիրներով, որոնք ապրում էին Հրէից հետ խառն և միասին, ուստի և անուանուեցան Հեթանոսաց Գալիլիայ։ Այս երկրի բնակիչները շատ ագէտ և ցած մարդիկ էին, և ինչպէս մարգարէն ասում է խաւարի մէջ նստած էին։ Արդարև մեծ լոյս ծագուեցաւ այդ խաւարի մէջ կոլած ժողովրդի վերայ, փոսն զի Յիսուս, որի մէջ պահուած էին իմաստութիւնն և գիտութիւնն բոլոր գանձերը, սկսեց աւետարան քարոզել և նոցա մէջ կատարեալ լոյս տարածել։ Յիսուս շատ աւելի էր քարոզում այն երկիրներում, որ տեղ շատ էր հարկաւորում աւետարանի լոյսը։ Որով հետև Յիսուս իւր երկնային թագաւորութիւնը պէտք էր, որ Հասատուէր իւր մեռնելից և յարութիւնից յետոյ, վասնորոյ և ասուեցաւ մերձեալ է։ Մատ. 4. 2. հռ. թ. 12. գուկ. հ. 1։

18. Մինչդեռ զգնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, հետեւ երկուս եղբարս, զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, և զԱնդրէաս եղբայրն նորա արկեալ զուռկան ի ծով, քանզի ձկնորք էին։

19. Եւ ասէ ցնոսա. եկայք զկիսի իմ և արարից զձեզ զլուսոյգ մարդկան։

20. Եւ նոցա Թոզեալ վազվազակի զգործիսն զնացին զՀետ նորա։
21. Եւ մատուցեալ անտի յառաջ՝ եհան այլ երկուս եղբարս զՅակով բոց Զեբեդեայ և զՅովհաննէս զեղբայրն նոցա ի նաւի Զեբեդեայ հանգերձ հայրն իւրեանց, մինչ կազմիին զուռկանս իւրեանց. և կոչեաց զնոսա։
22. Նոցա Թոզեալ վազվազակի զնաւն և զհայրն իւրեանց՝ զնացին զՀետ նորա։
23. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս, և զամենայն սնոտս ի ժողովրդեանն։
24. Եւ գնաց լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որք նեղեալ էին ի պէսպէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս՝ և զլուսնոտս. և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա։
25. Եւ երթային զՀետ նորա ժողովուրդք բազումք. ի Գալիլեէ և ի Դեկապօլեայ և ի Յերուսաղէմ և ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու և բժշկեաց զնոսա։

18—22. Յիսուս սրանից զրեթէ մի տարի առաջ տեսած էր Սիմոնին և Անդրէասին և Սիմոնին էլ անուանադրած էր Պետրոս։ Այդ ժամանակից թէ և Պետրոսը և Անդրէասը ճանաչելն Տէրին, հաւատացին որ նա է Դաւն Աստուծոյ, և շրջում էին նորա հետ, բայց յատկապէս գեռ չէին աշակերտած և չէին իրանց ամենայն ինչերը թողած և նորա ետեւից գնացած, այլ շատ անգամ գնում էին իրանց տունը և իրանց տան և ընտանեաց հոգսերը հոգալուց յետոյ՝ դարձեալ վերադառնում էին Յիսուսի մօտ։ Իսկ այժմ մի տարուց յետոյ, երբ միանգամայն Յիսուս Գինեսարեթայ ծովի մօտ կանգնած և ժողովրդեան բազմութեամբ շրջապատուած, կամենում էր ուսուցանել Աստուածային վարդապետութիւնները, այդ միջոցում Պետրոսը և Անդրէասը նաւից դուրս եկած լուանում էին ազատուած գործիքները, որովհետև բոլոր գիշերը աշխատած էին, բայց ոչինչ չէին կարողացել բռնել։ Յիսուս մտաւ Պետրոսի նաւը և այդ տեղից սկսեց ուսուցանել, խօսքը վերջացնելից յետոյ, ասաց Պետրոսին.— Թափացրու գործիքներդ ծով ի խորս։ Այս խօսքի վերայ նորից գործիքները որսի ձգեցին և իսկոյն զգացին, որ հրաշագործութիւն եղաւ,

որով հիւանդ ձիների շաւութիւնից չ՝կարողացին այլ եւս ձգել հրաշագործողից պատահելով՝ և ահի մէջ ընկած, չ՝համարձակուեցին ձայն հանել, ուստի ակնարկելով դէպ՝ ի Հերեթեայի նաւը, խնդրեցին նոքա Յակոբոս և Յով հաննէս որդիներից օգնութիւն, մինչև որ նոքա այդ միջոցում կամենում էին իրանց ուղեկանները։ Մի և նոյն միջոցում Յիսուս նաւի մէջ քայլելով՝ մօտեցաւ դէպ՝ ի նոցա և կոչեց՝ ասելով.— Ծնկայք զինի իմ։

Յիսուսի եռելից գնացողները պէտք է նոր հոգեւոր կենաքով նորոգուին, բայց ոչ որ չէ կարող նորոգուիլ, եթէ Յիսուս նոքա չ՝կանչէ՝ ասելով.— Ծնկ զինի իմ։

Աւետարանը քաշելից յետոյ երկու նաւակը լցուեցին ձկներով, այնպէս որ քիչ էին մնացել ընկղմուիլ։ Մի մեծ աքանչելիք էլ այն էր, որ ուղիղը չ՝պատռուեցաւ բազմութիւնից։ Այս հրաշքները մի այնպիսի մեծ ներգործութիւն ունեցան նոցա վերայ, մինչև որ նոքա իրանք իրանց անարժան համարեցին Յիսուսի ապաստարան թիւան մեծ պաշտօնին, ինչպէս և Պետրոսը ասաց.— «Ի բաց գնա յինէն Տէր, զի այր մեղաւոր եմ ես»։ Բայց ողորմած Յիսուսը, նոցան քաջալերելով, ասաց.— «Մի երկնչիր, յայսմ հետէ զմարդիկ որսայցես՝ ի կենաս»։ Նոքա վերայ Պետրոսը, Անդրէասը, Յակոբոսը և Յով հաննէսը մեծ սիրով վառուած, ոչ միայն թողցին իրանց գործիքները՝ այլ նաև իրանց հայրը և գնացին նոքա հետ մշանջենաւորապէս։

Առաւուած՝ մարգարէներից շատերը ընտրեց Հով հաննէսից, որով հետև նոքա Հով հաննէսի նման միշտ պէտք է հաղորդէին իրանց ընտանի հօտը, Խրիստոսի հաց, իսկ Առաքեալների մեծ մասը ընտրեց որսորդներից, որով հետև նոքա որսորդների նման պէտք էր Յիսուսի վարդապետութեան փրկարար ուղեկաներ որսային օտարներին և վայրենիներին։ Մարկ. ա. 16—21. գործ. ե. 1—11. յով հ. գ. 44—45. 66. ը. 19. ժ. 30. մտ. 9. 22. մատ. բ. 23. մկ. 13.

23. Այդ միջոցում Յիսուս Կափառնայումի մէջ բժշկեց մի պիղծ ոգի ունեցող մարդու, որին Մատթէոսը չէ յիշում։ Բժշկեց նաև Պետրոսի զգանին, որ Մատթէոսը պատմում է Ը. գլխի մէջ։ Պէտք է խմանալ, որ աւետարանիչները իրաց հերթութիւնները ըստ ժամանակին կարգով չեն պատմում։ Մատ. բ. 14. 15. մարկ. ա. 21—26. գործ. գ. 31—35։

Ուսուցանում էր նոցա ժողովարաններում, որ ունէին զութիւն ամենայն քաղաքների և գիւղերի մէջ, ինչպէս էին Խրիստոսը, Պիւրենացւոցը, և այլն։ Ժողովարաններում ամենայն Շաբաթ օր ժողովում էին միայն կարդալ, գատել և զանազան նիւթերի վերայ խօսել, իսկ Տաճարում աղօթում, զոհք և նուէրք էին մատուցանում։ Մարկ. գ. 1. զուկ. գ. 16-22. գործ. գ. 9. ժգ. 14. ժէ 2։

24. Բժշկում էր ամէն տեսակ հիւանդութիւն։ Դիւահարը ուրիշ է, լունատը ուրիշ, գիւահարը որոշ ժամանակի մէջ հիւանդին չէ չարչարում, իսկ լունատը չարչարում է նորա լունատական օրերի համաձայն։ Երևում է, որ այդ ժամանակ շատ գիւահարներ կային։ Աստուած թոյլ էր տալիս սատանային, որ իւր ձեռքով եկած չարութիւնները անենայ գործ է, որպէս զի Քրիստոս միայն խօսքով ոչնչացնէ նորա կարողութիւնները և քակտէ նորա գործիքը։ Մատ. ժգ. 28. յով հ. բ. 44. ա. յով հ. գ. 8։

25. Ոմանք գնում էին տեսնել նորա գործքերը հաւատալու համար, ոմանք գնում էին բժշկուի, ոմանք էլ գնում էին հետաքրքրութեան համար, իսկ զպիտները և փարիսեցիքը գնում էին նորա մտա չար մտքով, որպէս զի նորա մէջ մի թերութիւն գտնելով. ամբաստանութիւն յարուցանեն նորա վերայ։ Դեկապօլեայ ոչ թէ մի քաղաքի անուն է, այլ Գալիլեայի մի գաւառի անուն է։ Դեկապօլիս թարգմանւում է տասն քաղաք։ Դեքան նշանակում է տասն, իսկ Պօլիս—քաղաք։ Այս գաւառը բաղկացած է տասն քաղաքից։ Քորազին, Բեթսայիդայ և Կափառնայում այդ քաղաքների թուին էին։

Այս զլխում տեսնենք Քրիստոսի արած մեծ ժրաջանութիւնը իւր պաշտօնը սկսելու ժամանակ, որից և սովորեցինք բոլոր զօրութեամբ մղել մեր հոգւոյ վերանորոգութեան և փրկութեան արգելարիթների դէմ, գիտելով՝ որ ոչ մի զսպութեան արժանի գործ, չէ կարող մնալ առանց պատուհասի փարձառութեան։ Մարկ. գ. 21. յով հ. բ. 4. ժգ. բ. 10։

ԳԼ. Ե.

1. Եւ տեսեալ զժողովուրդսն ելի լեառն, և իջեալ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտք նորա։
2. Եւ բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա և ասէր։
ա. 3. Երանի աղքատաց Հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից։
բ. 4. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։
գ. 5. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։
դ. 6. Երանի որք քաղցեալք և ծարաւիք իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։
ե. 7. Երանի ողորմածաց, զի նոքա զողորմութիւն գտցին։
զ. 8. Երանի այնոցիկ որք սուրբք են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։
է. 9. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։
ը. 10. Երանի՝ որք հալածեալք իցեն փան արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։
թ. 11. Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ փան իմ։
12. Ցնծացէք և ուրախ լերուք. զի վարձք ձեր բազումք են յերկինս, զի այսպէս հալածեցին զմարգարէսն, որք յառաջ քան զձեզ էին։

1. Մատթէոսը այս Ե. Զ. և Է. գլուխների մէջ պատմում է Յիսուսի մէկ քարոզութեան երեւելի խորհուրդները և ոչ բառ առ բառ քարոզութիւնը։ Սորա համար է, որ պատմած Նիւթերի շղթան կարած է երեւում, իսկ Ղուկասը պատմում է այս քարոզի մի քանի մասերը։ Այս լեռը գտնւում է Գալիլեայի մէջ Կապառնայումի մօտ, և որով հետև Քրիստոս սովորութիւն ունէր միշտ այս լերան վերայ աղօթելու, վասնորոյ և կոչուեցաւ լեառն Քրիստոսի։ Ինչպէս տեսնենք՝ ժողովրդոց բազմութիւնը հաւաքուած էին իւր մօտ և երբ երեկոյացաւ բարձրացաւ այդ լերան գագաթը և այդ տեղ գիշերը աղօթքով անցկացրաւ, իսկ ժողովուրդը գնացին և հանդիպեցին մօտակայ գիւղօրէից մէջ։ Առաւօտը՝ երբ լուսացաւ Յիսուս կանչեց իւր աշակերտաց այդ լերան գլուխը և ընտրեց նրանց միջից տասներկու հոգի, որոնց և առաքեալք անուանեց։ Յետոյ վերեկաւ լեռնից և նստեց մի տափարակ տեղ։ Այս միջոցում բազմութիւնը կրկին հաւաքուեցին նո-

լաս շուրջը և նստեցին ըստ նոցա քարոզութեան։ Աշակերտները համարձակ էին, որ Քրիստոս պէտք է մի մեծ թագաւոր դառնայ, իրանք էլ նոցա մօտ մեծ պաշտօնի անձինք։ Յիսուս ցիտէր, որ նոքա դեռ շատ սակաւ էին հաւատքի մէջ և կարող էին շուտով գայթակղուել։ Հասաց նոցա թէ ինքը ոչ թէ մարմնաւոր թագաւոր չպէտք է դառնայ, այլ անարգական մահուամբ պիտի խաչուի։ Այսպէս էլ իրանք աշակերտները պէտք է շատ նեղութիւններ կրեն։ Վանողոյ աչքերը բարձրացնելով դէպ ի աշակերտները, սկսեց տեսակ տեսակ մարգարէից երանութիւն տալով, իմաստութեամբ հասկացնել նոցա, որ իմանան թէ ինչ ակնկալութիւններ պէտք է ունենան իրանից, և ինչ մաքով պէտք է հետևեն իրան, իսկ մի քանի ժամանակից յետոյ մի քանի կանանների հետ աւուր նոցա իշխանութիւն նաև պիղծ դևերի վերայ։ Մատ. ի. 21. մարկ. գ. 13-20. թ. 34-37. ղուկ. գ. 12-49. թ. 13. ի. 24. իդ. 21. գործ. ա. 6.

2. Մարգարէներից ծածկուած վարդապետութիւնը՝ այժմ Յիսուս իւր ամենասուրբ բերանով յայտնում է։ Առաջի տարից մինչև տասն և հօթն տան վարդապետութիւնը յատկապէս վերաբերում է առաքելոց, իսկ մնացեալները վերաբերում են ընդհանուր ժողովրդոց։

Որով հետև մարդիս վերջին նպատակը երանութիւնն է, և մարդկանց բոլոր գործողութիւնները և շարժմունքը սիրոյն են առնում նպատակից, ուստի և Յիսուս, Առաջնորդ Հաւատի պէս, իւր վարդապետութիւնը սկսեց երանութիւնից։ Հոգով աղքատները երկու տեսակ են՝ առաջինը, ասում են այն մարդիկները, որոնք թէև ունենում են հարստութիւն և աշխատում են օրեցօր աւելացնել նոքա՝ միայն այս անում են ազնիւ և առաքինի նպատակի համար, իսկ իրանք իրանց հոգոյ, ըղձի և կամքի մէջ կրում են աղքատութեան դառնութիւնները, ինչպէս էին Աբրահամը և Յովբը։ Երկրորդ, ասում են նոքա, որոնք կամաւ հետևում են ամենակիրակ աղքատութեան, զոքա պարզ տեսնում են՝ եթէ հետևեն հարստութեան և աշխարհական փառքին շուտով կարող են հասնել նոքա, բայց իրանց հարստութիւնը, քաջութիւնը և իմաստութիւնը զոհում են միայն երկ-

նային վայելչութիւնները ժառանգելու համար և ոչ աշխարհի, Սոքա թէև մարդկանց առաջև յիմար են ասում, բայց Քրիստոս զոքա իմաստուն խորհրդական և հրաշալի է կոչում, երկուսման աթոռ էլ զոքա է խոստանում, ինչպէս Հին Քրիստոսի աշակերտներն։ Սրանից չ՚պէտք է հասանել այն եզրակացութեան թէ՝ հարստութիւնը մեղք է, այլ թէ հարստութիւնը գովելի է, եթէ միայն գործադրուի Քրիստոսի փառքի և ոչ աշխարհի, որովայնի և շռայլութեան նպատակաւ։ Սաղ. ծ. 17. առ. ժզ. 19. իթ. 23. եւ. ԺԷ. 15. կզ. 2. մատ. ժ. 5. ժբ. 4. ժբ. 23. 24. իգ. 12. յակ. բ. 5. գ. 10. ա. պետ. ե. 5։

4. Երանութեան արժանի սգաւորները նոքա են, որոնք սուգ են առնում իրանց մեղքերի վերայ։ Լացը միշտ գովացնում է մարդոյն սիրտը։ Արդարև շատ երանելի կլինինք, երբ աշխարհի մէջ մեր մեղքերի վերայ սուգ առնենով, Քրիստոսից սատանանք մեր մխիթարութիւնը և իւր թագաւորութեան մէջ էլ մշանջենաւորապէս ուրախանանք։ Յայտ. է. 14-17. իա. 4։

5. Հեզ՝ ասում է այն մարդը, որ խոնարհ է, նա մանաւանդ համբերում է վնասներին։ Յիսուս ինքն է հեզութեան մեծ օրինակը։ Մենք էլ պէտք է նորա նման լինինք։ Հեզերը երկիրը չ՚օրհնելով՝ հանգստութեամբ վայելում են նորա թէ թշուառութիւնները, թէ ուրախութիւնները և թէ վայելչութիւնները։ Այս է երկիր ժառանգելը։ Ուստի զոքա պէտք է վայելեն երկնքի օրհնութիւնները։ Սաղ. իե. 13. լէ. 9. 22. 29. եւ. Դ. 3-7. կ. 21. զաք. թ. 9. մատ. ժա. 29. բ. կոր. ժ. 1. եփ. գ. 1-3. կող. գ. 12. ա. տիմ. զ. 11. տիտ. գ. 2. ա. պետ. բ. 21—23։

6. Քաղցած և ծարաւ մարդը ամենակերպ աշխատում է կերակուր գտնել և չէ կարողանում զովացնել իւր քաղցը և ծարաւը մինչև որ չէ գտնում նորան։ Այսպէս էլ արդարութեան փափագողները մինչև չ՚գտնեն նորա չեն կարող հանգիստ մնալ Քրիստոս արդարութեան համար դէպ՚ի իրան դիմող ծարաւներին և քաղցածներին առանց հրաշալեղութիւնս չէ գարձնում։ Սաղ. ժզ. 15. եւ. ԺԸ. 1. ամոս. բ. 11. յով. գ. 37. է. 37. յայտ. իբ. 17։

7. Ողորմութեան տեսակները երկու են—Հոգեւոր և Մարմնաւոր։ Հոգեւոր ողորմութիւնը՝ այս է. ուսուցանել տգէտներին, խրա-

տել յանցաւորներին սիրով և խոհեմութեամբ, շահաւէտ խորհուրդ տալ կարօտ անձանց, մխիթարել վշտացեալներին, ներել, համբերել ուրիշների պակասութեանց և նախատանքներին, աղօթել կենդանեաց, մեռելոց և մեզ հալածողների համար։ Իսկ մարմնաւոր ողորմութիւնը սոքա են՝ կերակուր տալ քաղցածներին, ջուր տալ ծարաւներին, հիւրընկալել պանդուխտներին և օտարներին, այցելութիւն առնել հիւանդներին, բանտարկեալներին, զգեցուցանել մերկերին, ազատել գերիներին, թաղել մեռեալներին, և այլն։ Արդարև սոքա են երանութեան արժանի ողորմածները։ Բ. Թագ. իբ. 26. սաղ. ժը. 25. մատ. զ. 14. 15. ի. 40. զուկ. զ. 36. յակ. բ. 13։

8. Սրտի մաքրութիւնը բնականաբար առաջ է գալիս վերոյիշեալ զգացումներից։ Սրտով սրբերը՝ լինում են բարի, անմեղանձ և ազատ կրքերից։ Դոքա՝ իրանց ամէն մի շարժմունքը, մտածմունքը, խօսքերը և գործքերը սկսում և վերջացնում են Աստուծով, վանողով և գրեթէ միշտ կանգնած են Աստուծոյ առաջին և ուրախութեամբ տեսնում են նորա երեսը, իսկ դէմյանդիման կ՚տեսնեն նորա իւր լուսեղէն առագաստի մէջ։ Ա. կոր. ժգ. 12։

9. Նոքա, որոնք վէճերը, կռիւները, դաղարացնում, թշնամիները հաշտեցնում են, ասում են Որդի Աստուծոյ, որով հետև Ցիսուս իւր արիւնը թափեց մեղաւորների Աստուծոյ հետ հաշտեցնելու համար։ Հռ. բ. 9. բ. կոր. ե. 18—21. կոլ. ա. 20։

Այս հօթն երանութիւնները, ըստ Օգոստինոսի, պատասխանում են Սուրբ Հոգւոյն հօթն պարգևներին։ Հոգւով աղքատը— երկիւղի պարգևին։ Հեզութիւնը—զիտութեան։ Սուգը—գիտութեան։ Քաղցը և ծարաւը—զօրութեան։ Ողորմածութիւնը— խորհրդոյ։ Սրտի սրբութիւնը—հանճարոյ։ Խաղաղութիւնը— իմաստութեան։

10—12. Նախընթաց հօթն երանութիւնները պարունակուած են այս վերջի երանութեան մէջ, որով հետև աղքատութիւնը՝ մարդին գրամպրում է դէպ՚ի հեզութիւն, հեզութիւնը՝ դէպ՚ի սուգ, սուգը՝ դէպ՚ի արդարութեան քաղցը, արդարութիւնը՝ դէպ՚ի ողորմածութիւն, ողորմածութիւնը՝ դէպ՚ի սրբութիւն սրտի, սրբութիւնը՝ դէպ՚ի խաղաղութիւն, խաղաղու-

թիւնը՝ դէպ 'ի հաղածանք Աստուծոյ և արդարութեան համար։ Երանի կ'ընէիք և մեք՝ երբ արդարերի նման հաղածուիք ի Քրիստոսի աշակերտներէ նման չարչարուիք միայն արդարութիւն և լոյս տարածելու համար, այն ժամանակ մեք էլ նոցա հետ միասին Քրիստոսի արքայութեան մէջ ուրախութեան փառքերը կ'վայելէիք։ Ղուկ. գ. 22-26. գործ. ե. 41. հռ. ե. 3. բ. կոր. ա. 4-7. դ. 17. բ. տիմ. բ. 12. գ. 12. յակ. ա. 2. 3. ա. պետ. գ. 12-14։

13. Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի՝ թէ յաղեցի՞ ոչ իսկիք ազդիցէ այնու հետև, բայց եթէ ընկենուլ արտաքս, և կոխան լինիլ 'ի մարդկանէ։

14. Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաղուիլ՝ որ 'ի վերայ լերին կայցէ։

15. Եւ ոչ լուցանեն զճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ 'ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն՝ որք 'ի տանն իցեն։

16. Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զհայր ձեր՝ որ յերկինս է։

17. Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։

18. Ամէն ասեմ ձեզ. մինչև անցցեն երկինք և երկիր, յոտն մի. որ նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրէնսէն և 'ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի։

19. Որ որ լուծցէ մի ինչ 'ի պատուիրանաց յայսցանէ՝ 'ի փոքունս, և ուսուցցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուցցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից։

20. Բայց ասեմ ձեզ. զի եթէ ոչ առաւելցի արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։

13. Աղը ամենայն կերակուրների համեմացնողն է, նա է ապականելի իրերը պահում նեխութիւնից, նա շատ և շատ դէպքերում հարկաւոր է մարդկանց։ Առաքեալները և ամենայն եկեղեցականը, որոնք ծառայում են Քրիստոսի աշակերտութեան պաշտօնին, եթէ բարի վարքով և ողջամիտ վարդապետութեամբ մարդկանց սրտերից չ'ցամաքեցնեն երկրաւոր սիրոյ զգեստները, եթէ չ'պահեն նոցա մեջից նեխութիւնից, եթէ չ'ծարաւեցնեն նոցա սրտերը Աստուածային սիրոյ ծարաւով, պէտք է ար-

տաքսուրին Աստուածային շնորհքից և կոխան լինին դևերից և մեղաւորներից։ Դոքա պէտք է ժողովքի մէջ սատանայի և մեղաւորաց ոտքի տակը տանջուին։ Մա. ժբ. 23-33. եր. ե. 1. եզ. իբ. 30. 31. եփ. դ. 29. կող. դ. 6։

14-17. Գրուանը ցոյնին մի չափ է։ Յիսուս այս օրինակներով աշակերտաց զգուշացնում է նեղութեան և հալածանքի ժամանակ մարդկային ահից իրանց լոյսը չ'թագցնել, այլ բարի գործերով օրինակ լինել իրանց հօտին։ Միայն 'ի փառս Աստուծոյ եղեալ բարեգործութիւնն թէև լիցէ յայտնի, է որպէս ծածուկ գործեցեալ բարի, որոյ վարձքն 'ի Հօրէ յայտնապէս հատուցանին։ Ըստ Գրիգորի Լուսաւորչին Յով. Հ. ժե. 8. փիր. բ. 15. ա. պետ. բ. 12։

Այսուհետև Յիսուս սկսեց խօսակցութիւնը գարձնել դէպ 'ի հատարակութեան։

Օրէնքը երկու տեսակ է.—Բնական, որ մարդոյս խիղճն է։ Գրական, (Գրական) որ տուաւ Աստուած բնականը դէպ 'ի բարին առաջնորդելու համար։ Սա բաժանվում է երկու մասս.—Հին և Նոր։ Հին օրէնքը գրուած է Մովսէսի և ուրիշ մարգարէից ձեռաք և երեք տեսակ է.—Միսական, որ ցոյց է տալիս կրօնի արտաքին ծէսերը։ Դատաստանական, որ վերաբերում է դատաստանական իրաւանց։ Բարոյական, որ վերաբերում է բարքի ուղղութեան։ Իսկ Նորը, աւետարանական կամ շնորհական օրէնքն է, որ գրուած է Առաքելոց ձեռաք։ Յիսուս նոր օրէնքովը խափանեց Միսականը և դատաստանականը։ Միսականը, որ սուտ էին էր նոր օրինաց, փոխեց 'ի լոյս՝ այն է. փոխանակ թլփատութեան՝ տուաւ մկրտութիւնը, փոխանակ զատերի զենման՝ տուաւ իւր արիւնը և մարմինը, և այլն։ Դատաստանականն էլ վերանորոգեց՝ այն է. փոխանակ մարմնական պատժոց և վարձուց, սահմանեց յաւիտենական պատիժ և վարձք։ Իսկ բարոյականը, ճշմարիտ մեկնութիւն տալով՝ առաւել ևս հաստատեց և լրացրաւ, որին փարիսեցիք թիւր բացատրութեամբ խանգարած էին։ Նբ. լդ. 28. բ. օր. գ. 14. եր. լա. 31. 32. դան. Թ. 26. մատ. ե. 17-45. յով. Հ. ա. 17. հռ. գ. 14. ժգ. 8. 9. եբր. Թ. 9. ժ. 45. կող. ա. 23. բ. 16. 17. եփ. բ. 14. 15։

18. Յովսէ՝ Նբրայեցւոց գրերի մէջ ամենից փոքրն է, որ շատ չէ հարկաւորում գրութեանց մէջ։ Իսկ նշանախեցը՝ մի շատ փոք-

բիկ նշան կամ մանրիկ է, որ գործ է ածւում գրերը մէկը միւսից որոշելու համար։ Յովհ բառից յետոյ գրուած է միջակէտ, որով իմացւում է՝ որ յովհը ուրիշ բան է և նշանախեցը ուրիշ։ Նշանակում է Աստուծոյ խօսքի ամենափոքր կարծուածը անգամ՝ անկարելի է անկատար մնալ, ինչպէս մի յովհը, այնպէս էլ այն՝ որ մի նշանախեց է։ Ղուկ. ժդ. 17։

19. Ով որ տասն պատգամաց մէկը՝ ամենափոքրը համարելով, արհամարհէ և ուրիշներին էլ սովորեցնէ բանիւ կամ գործով, այդպիսին փոքր՝ այն է. արհամարհելի մեղաւոր կ'համարուի երկնքի թագաւորութեան մէջ։ Իսկ երկիւղիւ լսողը, կատարողը և այլոց ուսուցանողը մեծ՝ այն է. արդար և Որդի Աստուծոյ կ'կոչուի նոքա փառաց մէջ։ Բ. օր. իէ. 26. գաղ. գ. 10. յակ. բ. 10։

20. Դպիրները և Փարիսեցիքը Աստուծոյ պատուիրանները քանդում էին երեք կերպով։ Նախ, երբ պատուիրանները պահում էին միայն մարդկանց ցոյց տալու և նրանցից փառաւորուելու համար։ Երկրորդ, որ Աստուծոյ պատգամները ընդունում էին միայն բառերի արտաքին նշանակութեան համեմատ, և ոչ նրանքի վերեմ և սուրբ նշանակութեան, որի մէջ է Աստուծոյ կամքը և գիտումն։ Օրինակ, Աստուած ասաց, մի սպանաներ, նոքա ընդունում էին միայն սպանութիւնից հեռանալը, իսկ ուրիշի մեռասի յօժարուիլը, բամբասանքը, որ պղծում է մարդու հոգին և միտքը՝ չէին սպանութիւն համարում։ Երրորդ, նոքա ծերերի աւանդութիւնը և օրինաց արտաքին արարողութիւնները աւելի էին համարում՝ քան Աստուծոյ պատգամները։ Աստուծոյ հրամանը քանդում էին ծերերի աւանդութիւնը պահելու համար։ Յիսուս արգելում է այս ամենը, և պատուիրում է կատարել Աստուծոյ հրամանները միայն ներքին հոգևոր զգացումներով՝ և ոչ ի փառս մարդկանց արտաքին արարողութիւններով։ Հռ. ա. 17. թ. 30. 31. ժ. 3։

21. Լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն, թէ մի՝ սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։

22. Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատեանի՝ և որ ասիցէ ցեղբայր իւր մոռոս, պարտաւոր լիցի

գեհենն հրոյն։

23. Եթէ մատուցանիցես զպատարագ քո՝ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունի ինչ զիսէթ զքէն։

24. Թող զպատարագն քո առաջի սեղանոյն. և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո։

25. Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա՝ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն զահձի, և արկանիցիս՝ի բանտ։

26. Ամէն ասեմ քեզ, ոչ ելանիցիս անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիսն։

21. Հրէից մէջ մի փոքր ժողով կար Դատաստան անունով, որ տեղ դատում էին թեթև բաները։ Սպանութիւնը քննում էր Դատաստանի մէջ, և մեղաւորը իւր վճիռը ստանալով՝ քաւում էր մեղքից, անպարտ մնալով ուրիշ ատեանների մէջ։ Ել. ի. 13։

22. Ատեանը Հրէից մէջ ասում էր այն մեծ ժողովը կամ ծերակոյտը, որ տեղ քննում և վճռում էին երև ելի գործերը։ Սորա իրաւունքը Դատաստանի ժողովից մեծ էր։ Գործ. Ե. 21։

Նրուսաղէմի մօտ Գեհենն անունով մի ձոր կար, որ Օփիթեվ էր ասւում։ Ժամանակով Հրէաները այդտեղ կուռքեր են պաշտած և իրանց զաւակներն էլ նոցա համար այրելով զոհած։ Կռապաշտութիւնը դադարելից յետոյ, Հրէաները այս տեղի վերայ մի այնպիսի անարգանքով և զզուանքով էին նայում, որ եղեռնագործների դիերը, կենդանեաց սատակածները և քաղաքին տգտեղութիւնները՝ այդ տեղ էին թափում և դոցա այրելու համար գիշեր ու ցերեկ այդ տեղ կրակ էին վառում, որ ասւում էր Գեհենի կրակ։ Այս տեղի սարսափելի լինելու համար՝ գործ էին ածում Ժոխք բառի տեղ։ Դ. թագ. իգ. 10. եր. է. 31. մատ. ժ. 28։

Հրէից ռաբինները սովորեցնում էին թէ միայն մարդու արիւն թափողն է վեցերրորդ պատուիրանի դէմ յանցաւորը, այլ զուր բարկութիւնը, ատելութիւնը, կշտամբանքը, թեթև յանցանք են, այնպէս որ Հրէից մէջ սովորութիւն էր դարձած, որ մէկին ամենից չար ցոյց տալու համար, մարդս էին ասում՝ այն է. շատ անմիտ։ Բայց Յիսուս իւր Ատուածային բերանով սովորեցրաւ, որ վեցերրորդ պատուիրանը իրանց կարծածից շատ աւե-

լի ընդարձակ նշանակութիւն ունի։ Նա երեք կերպով է քանդուում—ա.) առանց պատճառի բարկանալով։ բ.) Պշտամբական խօսքերք գործածելով և գ.) զոսպասելով, թէ և այս ամենս մի և նոյն սպանութիւն է։ Ուրեմն այսպիսի յանցաւորներն էլ պէտք է Աստուծոյ ձեռաք մարդասպանների նման պատժուին յաւիտենական Գեհենի մէջ տանջուելով։ Ամէն իւր եղբօր ատողն մարդասպան է։ Ա. յով հ. գ. 15։

23. 24. Ընծայ կամ պատարագ աւում էր այն ամենայն բաները, որ Հրէաները բերում էին Տաճարին մատուցանելու համար։ Եւ որով հետև գրիչները և փարիսեցիք կարծում էին թէ իրանց բոլոր պարտականութիւնները, կատարում էին զոհերի ձեռաք՝ այն է, զոհողութեան, չարութեան, մոլորութեան և այլն, վասնորոյ և Յիսուս, այս խօսքով, բացորոշաբար վճռեց, որ ընկերի սէրը աւելի նախագասելի է քան զոհը։ Ուստի պէտք է նախ և առաջ հաշտութիւն և ներողութիւն որոնել, և ապա դիմել դէպ 'ի պատարագի առաքինութիւնը։ Սորա վերայ հիմնուած սահմանուած է սրբազնագործ պատարագի ժամանակ, սարկաւագի քարոզութեամբ՝ միմանց հետ ողջոյն տալ 'ի նշան սիրոյ և հաշտութեան, որպէս զի հաղորդողը կարողանայ արժանաւորապէս ներկայանալ Քրիստոսի առաջև։ Հռ. ժբ. 1. երբ. ժգ. 15. 16. մատ. իգ. 23—28. ա. յով հ. գ. 20. 21։

25. 26. Հրէից մէջ պարտ ունեցողների գլխակը շատ դառն էր։ Պարտատէրները իշխանութիւն ունէին իրանց պարտականներին բանտ ձգել և այնտեղ պահել մինչև չ'վճարեն իրանց բոլոր պարտը։ Յիսուս այս օրինակաւ ցոյց է տալիս՝ որ մեզք մեր ամենայն սկզբմունքները պէտք է ապահովենք խոհմութեան և հեռատեսութեան ձեռաք։ Անմիտը և հեշտասէրը իւր ապագայի համար չէ խորհում, նորա աչքը տեսնում է միայն այն՝ ինչ որ իւր առաջևն է, վասնորոյ նա միշտ շրջապատուած է լինում իւր ոսոխների բազմատեսակ թագաբեմներով։

Մեր ամէն մի քայլի մէջ զինուած մեզ հետ պատերազմում են դանդաղ ոսոխներ։ Մեզ դէմ ոսոխ մեր հոգին, վասն զի պահանջում է մեզանից սուրբ պահել իրան նախանձից, կրքերից և բազմատեսակ ադատութիւններից։ Մեզ դէմ ոսոխ մեր միտքը,

վասն զի պահանջումէ մեզանից լուսաւորել, զարգացնել և պայծառացնել իւր ընդունակութիւնները զանազան օգտակար գիտութիւններով։ Մեզ ասոնք Աստուծոյ օրէնքը, վասն զի պահանջումէ մեզանից սէր և հաշտութիւն մեր ընկերների հետ, և այլն։ Ի հարկէ, երբ մենք մեր այս ասոնների սուրբ պահանջները կատարելով, չենք հաշտուիլ նոցա հետ, սոքա պիտի մեզանից դատապարտ լինին Աստուծոյ արդար դատաւորի առաջև, որ նա մշանջենաւորապէս կ'մատնէ դժոխքի բանտին։ Մատ. է. 24. 25. ժբ. 23—31. զուկ. ժբ. 4. 5. ժդ. 28—33։

27. Լուսաւորք՝ զի ասացաւ, մի՛ շնար։

28. Բայց ես ասեմ ձեզ. թէ ամենայն որ հայի՛ ի կին մարդ առ՝ ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա՝ ի սրտի իւրում։

29. Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա՝ ի քէն. զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և մի՝ ամենայն մարմինդ քո անկանիցի՝ ի գեհենն։

30. Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ և ընկեա՝ ի քէն. զի լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ. և մի՝ ամենայն մարմինդ քո արկանիցի՝ ի գեհենն։

31. Ասացաւ՝ եթէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակումն։

32. Բայց ես ասեմ ձեզ. եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնար. և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

27. 28. Փարիսեցւոց մենիշները շնութիւնը համարում էին ուրիշի կանանց հետ զուգաւորութիւնը, իսկ սրտով ցանկանալը մեղք չէին համարում։ Յիսուս այստեղ պարզէց, որ ոչ միայն գործքով, այլ նաև սրտով, փափագով և խորհրդով՝ Աստուծոյ պատուիրանը կոտրողը, շնացող է։ Այսպէս շատ շնացողներ կան թէ մարդկանց և թէ կանանց մէջ, թէ և գործքով դեռա չեն շնացած։

29. 30. Գայթակղացնել նշանակում է մեղքի պատճառ դառնալ։ Ամենայն բան, որ մեզ մեղքի և փորձութեան մէջ է ձգում պէտք է հրաժարուիլ նրանից՝ թէ և նա աջ աչքի և աջ ձեռքի չափ սիրելի լինի։ Չ'պէտք է հասկանալ թէ հաներ, կտրեր բառերը ասուած են մեր մարմնոյ անդամների համար, որ այս ոչ միայն

անօգուտ, այլ նաև մեծ մեղք է։ Կան շատ մարդիկ, որոնք ցանկանում են երկնքի թագաւորութիւնը ժառանգել, բայց միանգամայն այդ նպատակին հակառակ, աշխատում են իրանց մի շատ սիրելի բան ձեռքից չ'թողնել, բայց Քրիստոս ասաց, լաւ է՝ աջ աչքիդ և ձեռքիդ չափ սիրածդ կորցնելով՝ երկնքի արքայութիւնը ժառանգել, քան թէ նոցա վայելելով՝ դժոխքը մտնել։ Սաղ. ՃԺԹ. 175. մատ. Թ. 1—12. ժզ. 26. ղուկ. ժզ. 19—25. յով հ. ե. 5—16։

31. 32. Մովսիսական օրէնքից առաջ սովորութիւն կար, որ ամէն մարդ կարող էր միայն մի խօսքով արձակել իւր կինը։ Մովսէս գիտելով նրանց սրտի կարծրութիւնը, որ այս փատ սովորութիւնը բոլորով են չ'էին թողելու, որոշեց՝ որ արձակման համար մի կանոնաւոր թուղթ տան կնոջը, որպէս զի մինչև թուղթ գրուելը՝ որ կարելի է բաւական միջոց կ'ձգուի, մարդը խորհի և զղջայ և ոչ թէ առանց խորհելու, ճիշտ բարկացած բոպէում արձակէ նորա, իսկ շնացող կանանց պէտք էր քարկոծէին։ Քրիստոս այստեղ յիշեց միմիայն իսկական պատճառը, որով կարող էր մարդը կնկանը կամ կնիկը իւր մարդուն արձակել, այն էլ՝ թէ որ կամենան, այդ ժամանակ պէտք է երկոքեանն էլ մեռան մինչև'ի մահ առանց պսակի։ Բ. օր. 22. իբ. 1։

Սրանով Քրիստոս կամենում է մեզաւորին ապաշխարութեան մէջ ձգել, որպէս զի միայնութեամբ տանջուելով՝ ապաշխարութիւն և մեղաց թողութիւն գտնէ։ Եթէ մարդը ազնիւ անձնաւորութիւն է և շնացող կինը ապաշխարելով՝ զղջացած ներողութիւն է խնդրում իւր մարդուց, այդ ժամանակ մարդը մեծ կատարելութիւն կ'գործէ, երբ կ'ընդունի նորան ամենևին, չ'յիշելով կնոջ սխալմունքը, գիտելով որ ինքն էլ տկար արարած է և առանց իւր կնոջ մեծ դժուարութիւն է իւր կեանքը անցուցանել անարատ և առանց շնութեան, իսկ եթէ զղջացած կնոջ չ'ընդունի և ինքը շնութեան հետևի, այդ ժամանակ մարդը ինքն իրան կ'զգէ կոստման խորխորատը, գործելով երկու մահացու մեղք. սպանութիւն, որ իւր զղջացած կնոջ կենդանուն սպանել է, և շնութիւն, որ իւր կեանքը աղտոտել է անառակութիւնով։ Մատ. ժբ. 6—10. ա. կոր. զ. 9—10. գաղ. ե. 19—22. կող. գ. 6. յայտ. Թ. 20. 21. իա. 8. իբ. 15։

33. Դարձեալ լուարարք զի ասացաւ առաջնոցն՝ մի երդնուցուս սուտ. բայց հաստատեցէք Տեառն զերդմունս քո։
34. Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի երդնուլ. մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ։
35. Եւ մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա. և մի՛ յԵրուսաղէմ. զի քաղաք է մեծի արքայի։
36. Եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս՝ զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։
37. Այլ եղիցի ձեր բան այսն, այո՛, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է։

33-37. Փարիսեցիքը այս պատուիրանքը թիւր մեկնելով՝ ասում էին.— Երդումը միայն այն ժամանակն է մեղք, երբ Աստուծոյ անունովն է, իսկ ուրիշ առարկայից անունով երդուիլը մեղք չէ։ Ցիսուս այս խաղտախ մեկնութիւնը քանդեց և իւր Աստուածային բերանով հաստատեց, որ ոչ մի բանի համար ամենևին չէ կարելի սուտ երդուիլը և կամ սուտ խոստումն անելը, ոչ Աստուծոյ և ոչ ուրիշ սեղծուածների անունով, վասն զի սուտ երդուին նշանակում է անարգել Աստուծոյ և նորա սեղծուածներին՝ որ է. Հայհոյութիւն. Ճշմարիտ երդումն միայն այն ժամանակն է հարկաւոր, երբ անհրաժեշտ ծանր հարկ լինի, կամ՝ ի փառս Աստուծոյ, կամ՝ ի նպաստ անձին և կամ՝ օգուտ ընկերին, և այն պէտք է լինի մեծ երկիւղիւ և յարմար տեղ։ Վեհ. ժթ. 12. բ. օր. թղ. 23. ե. 11. եր. ի. 7. սաղ. ճշ. 11. մատ. իգ. 16—22. բ. կորն. ա 23. ժա. 31. յակ. ե. 12. յայտ. ժ. 6։

Մեր բոլոր խօսակցութիւնն մէջ պէտք է մեծ զգուշութիւն և երկիւղ ունենանք, որպէս զի Աստուծոյ անունը չյիշենք։ Այն մարդը՝ որ սովորութիւն ունի իւր խօսքը երդմամբ հաստատել, նշանակում է, որ նա Աստուածանից չէ վախենում և չէ ձանձրանում նորա անհուն մեծութիւնը և զօրութիւնը։ Այս պատուիրանը կատարելուց ծնունդ է Աստուծոյ երկիւղը և լիցուի սանձաւորութիւնը։ Սաղ. բ. 11. առ. ա. 7. յակ. գ. 2։

38. Լուարարք զի ասացաւ. ակն ընդ ակնան և ատամն ընդ ատամանս։
39. Այլ ես ասեմ ձեզ՝ մի կայ հակառակ չարի. այլ եթէ ոք ածիցէ զպատակ յաջ ծնօտ քո դարձո նմա և զմիւսն

40. Եւ որ կամիցի որ դատել և առնուլ զշապիկս քո, թող ի նմա և զբաճկոն քո։

41. Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկու։

42. Որ որ խնդրէ ի քէն տուր. և որ կամի փոխ առնուլ ի քէն մի դարձուցանելոյ զերեսս։

43. Լուարուք ասացաւն զի ասացաւ. սիրեսցես զընկեր քո՝ և ատեսցես զթշնամին քո։

44. Այլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց. և աղօթս արարէք ի վերայ այնոցիկ՝ որք լլկին զձեզ և հալածեն։

45. Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ՝ որ յերկինս է, զի զարեգանն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց. և անձրև՝ ի վերայ արդարոց և մեղաւորաց։

46. Զի եթէ սիրիցէք զայնոսիկ, որք սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն. ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն։

47. Եւ եթէ ասացէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք. ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։

48. Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

38. Այս օրէնքը արուած էր զատաւորներին համար՝ որ պատժեն չարագործներին, բայց Հրէաները այնպէս էին հասկացած՝ որպէս թէ ամենայն մարդ ինքն իւր համար իրաւունք ունի իւր վնաս հասցնողին մի և նոյն վնասը հասցնել, ինչպէս որ անում էին։ Յիսուս յանդիմանում է այս վրէժխնդրութեան հոգին։ Ել. իս. 24. դէս. իդ։ 20. բ. օր. ժԹ. 21։

39. Այս կանոնը չպէտք է ճիշտ բառ առ բառ գործադրել չարին հակառակ չկենալով։ Քրիստոս ինքը այդպէս չարաւ, երբ իրան ապտակեցին, այլ փոխանակ իւր միւս ծնոտը դարձուցանելու, ընդդիմանալով՝ հարցրաւ թէ.— «Ի՞նչի համար ինձ կ՚հարկանես»։ Յիսուս մեղանից պահանջում է համբերող և ներողամիտ հոգի և ոչ թէ ծոյլ և վախկոտ։ Պէտք է Քրիստոսի պահանջած հոգին ունենալ և գործ դնել ժամանակին դպիրով։ Յով հ. ժբ. 23. յայտ. իս. 8։

40—42. Քրիստոս մենք չպէտք է կռուասէր հոգի ունենանք, բայց անիրաւների դէմ մեր իրաւունք պահանջելը ապօրինի չէ։

Եթէ տեսանում ենք անիրաւները կամենում են յափշտակել մեր արդարութիւնը, եթէ նոքա աշխատում են հարստահարել և բռնաբարել մեր իրաւունքները, եթէ նոքա ձգտում են իրել մեր կեանքի, գոյքի և խղճի ապահովութիւնը, այդ ժամանակ պէտք է անձնազոհութեամբ պատերազմելով պաշտպանել մեր իրաւանց արդարութիւնը և մեր արժանաւորութեան նշանակութիւնը։ Իսկ եթէ մեր ամէն մի ուզողն տանք, մեր ամէն մի ապտակողին դարձնենք միւս ծնօտը, այդ ժամանակ մենք ինքներս կը քաջալերենք ծոյլերին, աւազակներին, անառակներին, գողերին և շատ այսպիսիներին իրանց չարագործութեանց մէջ, որով և կ'լինի՝ պատճառ և մատակից նոցա չարութեանց։ Եր. ի. 9. յեր. գ. 20. 21. ա. Թագ. ժէ. 45—52. մատ. գիրքը. Թեա. գ. 10.

43-48. Փարիսեցիք զնկեր բառով հասկանում էին մերձաւորներին, իսկ օտարներին թշնամի էին համարում։ Իսկ Քրիստոս պարզ ասաց, որ մարդին միմեանց ընկեր են, և թէ պէտք է որ դոքա միմեանց սիրեն, միմեանց կարօտութեան օգնեն, նաև ազգին միմեանց հոգու և կեանքի երջանկութեան համար։ Փորձով տեսնում ենք, որ այսպիսի ընթացքով, թշնամիներդ ամաչելով քո բարեգործութիւններից, դառնում են իրանց չարութիւնից և լինում քո ամենաշատ ստարիմ բարեկամը։ Սէրը յաղթող է։ Յիսուս մեր ձեռքը տուաւ երեք զէնք.—Ոյժ, Սէր և Համբերութիւն։ Իսկ մենք պէտք է վարժուենք դոցա գործածութեան մէջ և խմանենք ժամանակը, տեղը և գործածութեան եղանակը։ Բ. օր. ի. 19. առ. ի. 2. իր. 2. եւ. ձգ. 7. գուկ. իդ. 34. հա. ժ. 17—20 ա. Թես. ե. 15. ա. պետ. բ. 23. գ. 9. մատ. ե. 38—43։

Ասուած ամենակատար բնութիւն լինելով, ունի այնպիսի կատարելութիւններ, որ միայն նորա են պատկանում, ինչպէս նա է,—Մի, անփոփոխ, անսահման, ամենակարող, ամենագէտ, միանգամայն, անմահ, ամենաբարի, ամենավայր և այլն։ Մատ. գ. 6. եր. իգ. 24. գլ. ժա. 43. սաղ. ճա. 28. ծ. իգ. 3. ծ. իգ. 5. գուկ. ա. 37. ա. մատ. գ. 16. ա. պետ. ա. 15։

Ունի և այնպիսի կատարելութիւններ, որ պատկանում են նա և մարդկութեան, ինչպէս.—Ողորմած, զթած, քաղցր, խոհուն, մտածող, անձնիշխան, հեզ, խաղաղասէր, ներողամիտ, և այլն։

Ցիսուս պատուիրում է, Աստուծոյ կամքը կատարելով, Աստուծոյ Նմանութիւն։ Մատ. ե. 6. 48. զուկ. զ. 36. ա.յով. գ. 18. Հռ. ԺԲ. 2. կոր. է. 1. եփ. գ. 13. ե. 1. փիլ. ա. 10. կող. գ. 14. ռա. դ. 1. յակ. ա. 4. բ. պետ. ա. 5—11. յայտ. իբ. 11։

Գլ. Զ.

1. Զգոյշ լերուք ողորմութեան ձերում մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա. զուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինս է։
2. Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո՝ որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովարս և ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։
3. Այլ դու յորժամ զողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո։
4. Որպէս զի եղիցի ողորմութիւն քո՝ ի ծածուկ. և Հայրն քո, որ տեսանէ՝ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։
5. Եւ յորժամ յաղօթս կայցէք, մի՛ լինիցիք որպէս կեղծաւորքն՝ զի սիրեն՝ ի ժողովարս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։
6. Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մտա՛ ի սենեակ քո, և փակեա զդուրս քո. և կայ յաղօթս առ Հայր քո՝ ի ծածուկ, և Հայրն քո՝ որ տեսանէ՝ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։
7. Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօս լինիք իբրև զհեթանոսսն. զի համարին եթէ՝ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին։
8. Այդ՝ մի՛ նմանիցիք նոցա. զի գիտէ Հայրն ձեր. զինչ պիտոյ է ձեզ, մինչև ձեր խնդրեսէք ինչ իցէ՝ ի նմանէ։

1. Փարիսեցւոց մէջ սովորութիւն կար, երբ կամենում էին ընդհանրական ողորմութիւն առնել ժողով ըստեղի դրանը և կամ հրապարակներում եղջիւրներով փող էին փչում, որպէս զի աղքատները լսելով փողի ձայնը, հաւաքուին ողորմութիւն առնելու համար։ Այս անում էին ոչ թէ աղքատները շահելու, այլ փառք որտեղ նպատակաւ։ Ցիսուս, ասաց, այս նպատակաւ ողորմութիւնը անօգուտ է։ Ողորմութիւնը կարելի է ոչ թէ միայն

ուրիշների առաջև առնել այլ նաև ուրիշների ձեռաց։ Ողորմութիւնը պէտք է ունենայ իւր ազնիւ նպատակը։ Նա՝ յայտնապէս կամ ծածուկ տալի վերայ չէ՝ այլ նպատակի։ Մատ. ե. 16. գործ. ժա. 29. 30, ա. կորն. ժդ. 1—3։

5. 6. Փարիսեցիքը սովորութիւն ունէին՝ նաև իրանց առանձնական աղօթքները առնել մարդոց առաջև, նոցա բարեպաշտ երևալու նպատակաւ։ Յիսուս անարգեց նաև այս նպատակի աղօթքները։ Աղօթքը լինում է հրապարակական և առանձնական։ Հրապարակական աղօթքը կատարւում է հրապարակաւ աւելի եկեղեցու մէջ։ Ե. թագ. ը. 22. կորն. ա. 24. զ. 6։ Իսկ առանձնական աղօթքը կատարւում է զրեթէ ամենայն յարմարաւոր տեղ։ Ի հարկէ ամենայն ճշմարիտ քրիստոնեայ սիրում է առանձին աղօթք առնելը՝ որ ուրիշները չլսեն և չխանգարեն։ Յիսուս էլ այսպէս արաւ։ Ե. թագ. դ. 33. սաղ. ժե. 17. դան. զ. 10. գործ. Բ. 11. ժ. 9. մատ. ժդ. 23. իզ. 36. մարկ. ա. 35։

7. 8. Քրիստոս երկայն աղօթքը չէ արգելում, մանաւանդ որ ինքն ևս բոլոր գիշերը աղօթքով անցկացրաւ, այլ շատախօս ասելով, հասկացնում է մեզ զանազան մարմնաւոր բաների համար չաղօթել՝ այն է. փառքի, հարստութեան, առողջութեան և այլն։ Կան մարդիկ՝ որ ինդրում են Աստուածանից այնպիսի բաներ, որ իրանք են իրանց համար հարկաւոր համարում և ոչ Աստուած։ Այսպիսեաց աղօթքը մեռում է անկատար։ Մեր Աստուածը ամենագէտ է։ Նորա չի կարելի մեր գիտեցածները սովորեցնել։ Մատ. ը. 24—28. մատ. ե. 48. զուտ. զ. 12. յակ. դ. 3. 4։

9. Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր՝ որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն քո։

10. Եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի։

11. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։

12. Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մեր պարտապանաց։

13. Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեան։

14. Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և մեզ Հայրն մեր երկնաւոր զյանցանս մեր։

15. Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

9. Այս տեսլով՝ ոչ թէ արգելումէ մեզ ուրիշ տեսակ հորատրութիւններով աղօթել, այլ սովորեցնումէ, որ մեր բոլոր աղօթքները վերածել դէպ ի այս եօթն բանը։

Աստուած մեզ Հայր է, որով հետև նա մեզ ստեղծեց, նա տուաւ մեզ իւր շնորհքը, նա որդեգրեց մեզ իւր որդու Յիսուսի արիւնովը։ Ահ որչափ մեծ զգեցողութիւն է, որ թագաւորաց թագաւորը մեր և ամէն էակների ստեղծողը, մեզ Հայրանալով՝ հրաւիրում է մեզ իւր որդեգրութեան պաշտօնին։ Մենք պէտք է ապաւինենք Նորա Հայրական խնամքին։ Մեզք սիրողները ոչ թէ Աստուծոյ, այլ սատանայի որդիներն են։ Նա՝ որ այս աղօթքը անհոգութեամբ կամ կեղծաւորութեամբ է կատարում, ոչ թէ օրհնութիւն, այլ անէծք պէտք է ժառանգէ։ Զինչ ոչ տայցէ Որդւոյն, որում եհա զզոլն Որդի։» Ոսկեբ. յով. գ. 44։

Աստուած անբովանդակելի բնութիւն լինելով՝ չունի տեղի կարօտութիւն, բայց զօրութեամբ ամենայն տեղ է և ամենին մօտ, իսկ շնորհքը բնակումէ արդարների սրտերի մէջ։ Բայց որովհետև Նորա փառաց մեծ փայլեցութիւնը և ահաւորութեան նշանները առաւել երևումէ երկնքի մէջ՝ մեծամեծ, աքանչելի և լուսաւոր արարածներով, նոսա այնտեղ է սրբոց և հրեշտակաց բնակարանը, փառաբոյց ասումէ՝ թէ Նորա բնակութիւնը երկնքումն է։ Դ. Թագ. գ. 27. հա. կգ. 1. ապ. ժ. 5. մը. 2. ճգ. 13—22. եր. խգ. 23. 24. յով. հ. ժդ. 23. ա. յով. հ. գ. 15. 16։

Սուրբ՝ նշանակումէ փառաւորած, իսկ սանուն — հմարաւ։ Մենք՝ ինչպէս Աստուծոյ որդիներ, պէտք է աշխատենք Աստուծոյ անունը փառաւորել, բայց շատ անգամ մեր չար գործքերով Աստուծոյ անունը անպատուումենք մանաւանդ մարդկանց առաջև, այս պատճառաւ օգնութիւն ենք խնդրում Աստուածանից սրբութեամբ ապրելու համար, այնպէս որ ուրիշ մարդիկ ևս, տեսնելով մեր բարի գործքերը, փառաւորեն մեր երկնաւոր Հօրը։ Աստուած իւր սեփհական լրութեան մէջ փառաւորուած լինելով, ամենևին կարօտութիւն չունի մեր փառաբանութեան, բայց կա-

մենալով մարդկութեան ծանօթացնել իւր քաղցր գթութեան հետ, այսպէս է սովորեցնում։ Աստուած ճանաչողը ունայն տեղը նորա անունը չէ պատասխանիր։ Եր. ի. 7. ժ. 11. սաղ. լ. 4. դէ. 12. ղեր. 9. մատ. ե. 16. յայտ. դ. 8. նարեկ. դ. 181 երեսն։

10. բ. 8 խուսա երկրի վ երայ կազմեց մի այնպիսի թագաւորութիւն կամ ընտանիք, որի մէջ Աստուած հայր եղաւ, իսկ մարդիկը նորա զաւակք և միմեանց եղբարք։ Նա բոլոր իւր հաւատացեալներին ընդունեց իւր այս թագաւորութեան մէջ, բայց մենք շատ անգամ մեր չար գործերի պատճառաւ՝ դուրս ենք գալիս նորա թագաւորութիւնից և լինում սատանայի ծառայ։ Աստուծոյ թագաւորութիւնը կ'գայ այն ժամանակ, երբ մարդիկը կ'դառնան այս թագաւորութեան ճշմարիտ հպատակներ՝ այն է. կ'լինին քրիստոնեաներ ոչ միայն խօսքով, այլ և գործով։ Այս պատճառաւ ճշմարիտ քրիստոնեաները ամէն բանից առաջ՝ պէտք է մեծ փափագով խնդրեն Աստուածանից, որ այդ օրդ շուտ գայ, և որ օգնէ մեզ մեռ նորա թագաւորութեան մէջ։ Խնդրել այս՝ բայց չ'կասարել նորա կամքը կեղծաւորութիւն է։ Սաղ. բ. 8. 9. ես. բ. 2—4. ժա. 1—10. կ. 1—15։

գ. Աւրիշ լեզուների մէջ թարգմանուած է եղիցի կամքդ, իսկ մեր մէջ գրուած է կամք քո, որով հետև այս բառս անեղական է։ Բայց՝ ի որանից Աստուածային կամքը Աստուածաբանների մէջ երկու տեսակ է բաժանուած՝ այն է. Կամք բարեհաճութեան և Կամք նշանի։ Բարեհաճութեան կամքը միմիայն է, ինչպէս Աստուած, և է միշտ կատարեալ Աստուծոյ կամեցողութեան յարմար։ Սորա համար չի կարելի ասել թէ, որ լինի, որով հետև սա միշտ բան հարկաւորութեան կատարում է։ Սաղ. ԺԺ. 11։ Իսկ նշանի կամքը միշտ չէ կատարում, որով հետև մենք չ'պահելով նորա պատուիրանները, Աստուծոյ կամքը մեռում է անկատար։ (Թէ և յիսոյ չ'պահողը պատժուելով կատարում է) Ահա այս կամքի համար է, որ պէտք է ասել թէ որ Աստուած օգնէ մեզ կատարել նորա կամքը երկրի մէջ, ինչպէս երկնքում կատարում են նորա սուրբ հրեշտակները։ և յայտնում ենք, որ պատրաստ ենք ընդունել նրանից միանգամայն այն ամենը՝ ինչ որ նա կ'բարեհաճէ տալ մեզ։

11. զ. Հաց բառը՝ այստեղ դրուած է մեր կեանքը պահպանելու ամեն պիտոյքների տեղ։ Ամեն օր պէտք է աղօթել՝ որ նա մեր կենսական պիտոյքը հոգայ և կերակրէ մեզ։ Նա՝ ով որ մէկ օր անգամ, առանց աղօթքի անց կ'կացնէ, իրաւունք չունի Աստուածանից, բան յուսալ։ Սաղ. զ. 8։

12. է. Այս խօսքերով խնդրում ենք Աստուածանից ներել մեր մեղքերը, ինչպէս մենք ներում ենք մեր դէմ մեղանչողներին։ Նոքա՝ որոնք իրանց դէմ մեղանչողներին չեն ներում, չպիտի յուսան Աստուածանից իրանց մեղքերի համար թողութիւն։ Սաղ. ժբ. 25. 26. մատ. ժբ. 21—35. մարկ. ժա. 25. 26։

13. զ. Փորձութիւն նշանակում է կեանքի այն դէպքերը, որոնք կարող են մարդին ձգել դէպ'ի մեղքը՝ այն է. կարօտութիւնը, վտանգը, և այլն։ Երկու տեսակ փորձութիւն կայ.—մէկը՝ որ մարդը իւր չար ցանկութիւններից հրապուրուած և խաբուած լինելով, ինքն է իրան ձգում մեղաց փորձութիւնների մէջ։ Յակ. ա. 13։ Իսկ միւսը՝ որ Աստուած ինքն է թոյլ տալիս (ոչ թէ սահմամբ է ձգում, իբրև գրական պատճառ փորձութեան) մարդին ընկնել փորձութեանց մէջ, որպէս զի մեզ անդրդուելի պահելով բարութեան մէջ, ցոյց տայ իւր ողորմածութիւնը և արդարութիւնը։ Ցիսուս ուսուցանում է մեզ աղօթել, որ Աստուած մեզ օգնէ յաղթել փորձութեանց, ինչպէս արաւ Յով բին։ Անձնապատուան լինողը, չաղօթողը՝ չէ կարող փորձութիւնների դէմ դնել, նա պիտի յաղթուի, ինչպէս Պետրոսը։ Մատ. իզ. 4. 74. 75. ղուկ. իբ. 40. 46. բ. պետ. բ. 9

է. Ամենայն բան՝ որ բարւոյն հակառակ է, պատում է չար։ Այս խօսքերով խնդրում ենք Աստուածանից, որ պաշտպանէ մեզ խաբեանց սատանայի դէմ, որը մեզ միշտ գայթակղեցնում է գէպ'ի չարը։ Յով. գ. ժէ. 15։

Այս ամեն բարիքը նորա համար ենք խնդրում Աստուածանից, որով հետև Նորա արքայական իշխանութեան տակ են գտնուում այդ ամենը, Նորա է պատկանում յաւիտենական փառքը և Նա միայն ունի այժ մեր խնդրուածքը կատարելու։ Վասնզի մեր աղօթքը վերջացնում ենք շնորհակալութեամբ և փառաբանութեամբ, յուսալով որ մեր խնդրուածքը նա կ'պահէ իւր անհուն մարդասիրութեամբ։ Ն. Մ. ԷԲ. 11։

14. 15. տես համար 12. Սիրաք. իբ. 3։

16. Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկիզեալս որսն տրամաչաք. զոր ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

17. Այլ դու յորժամ պահիցես՝ օծ զգլուխ քո՝ և լուա զերեսս քո։

18. Զի մի երևեսցիս մարդկան իբրև զպահող, այլ Հօրն քում՝ ի ծածուկ. և Հայրն քո՝ որ տեսանէ ի ծածուկի՝ հատուսցէ քեզ յայտնապէս։

19. Մի գանձէք ձեզ գանձս յերկրի. ուր ցեց և ուտիճ ապականեն. և ուր գողք ական հատանեն և գողանան։

20. Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս. ուր ոչ ցեց՝ և ոչ ուտիճ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան։

21. Զի ուր գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։

22. Ճրագ մարմնոյ ական է. եթէ ական քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի։

23. Եւ եթէ ական քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է. խաւարն որչափ է։

16. Աղօթքի ձեր ուսուցանելից յետոյ՝ ուսուցանում է պահեցողութեան ձեր։ Ցկար է աղօթելն առանց պահոց։ Ոմանք Փարիսեցիքը շատ անգամ պահք էին պահում միայն մարդոց առաջի պահիցող երևալու նպատակաւ և դրանով էլ պարծենում էին։ Մատ. գ. 2. իդ. 5. դուկ. իբ. 12։

17. 18. Պաղեստինացւոց երկիրը շատ չերմ լինելով՝ մարդիկ ստուերի քրտինք է թափվում, որից և խոշոր ճանճերում է մարդուն երեսը և ձեռները։ Հրէաները սովորութիւն ունէին ամենայն օր իրանց գլուխները օծանել իւղով, որ փարուկ և գուարթ դէմքով երևան մարդոց մէջ։ Ցիսուս, նոմոյնեցնում է, որ մեր պահեցողութիւնը Աստուծոյ համար է և ոչ մարդոց, որ և պէտք չէ, փարիսեցւոց պէս, երեսները ապականել, հանդերձները փոխել, փողոցներում գոչարարներում տարա նոյնս առանց բամբասելոյ հայրենի պահեցողութեան Աստուածաղիր օրէնքը, երբեմն Հայրապետաղիր հրամարելով, երբեմն մարդահաճոյ, երբեմն անօգուտ և վնասակար, և այլն։ Այսպիսի պահեցողութիւնը ա-

ելել մեծ մեղք է քան թէ ուանելը։ Գործ. ժդ. 23. ժդ. 22. Հռ. ժդ. 1—23։

19—21. Ազօթք և պաՀք պահելից յետոյ պատուիրում է ուղղութիւն առնել։ Ազօթքով մեր Հոգին, պահքով մեր մարմինը և ոգեղեն թեամբ մեր ուեցածներդ պէտք է նուիրել։ Աստուծոյ։ Մեր գանձերը մեզ Համար չատ սիրելի բաներ են։ Ամեն մարդոց սիրտը, միտքը իւր գանձերի վերայ է։ Նա՝ ով որ երկրային բաներ է սիրում, նոցա վերայ է խորհում և իւր բոլոր ցիր դէպ ի նոցա է դարձուցանում։ Այս աշխարհիս գանձերը շատ են անցնում և աշխատանք եղածներն էլ չեն փարատանում մեզ երջանկացնել, իսկ երկնայիններդ չատ ապահով են և դրանով մարդ՝ միշտ Հայրենի և երջանիկ մնում։ Յով. ՀՀ. ժբ. 26. Հռ. բ. 6—17. ա. տիմ. ա. 12. ա. պետ. ա. 4. կոր. դ. 1. ա. յով. Հ. բ. 16։

Հարստութիւնը մեղք չէ, եթէ Աստուծոյ փառաց Համար գործածուի։ Երբեմն Աստուած հարստութիւնը տալիս է մարդուն, իբրև օրհնութիւն, բայց վոյ սիրելը նոցա ջախջախուց անձնատուր լինելը, մեծ մեղք է։ Նոքա՝ որ աշխատում են հարստանալ և ոչ Աստուծոյ փառաց Համար, նոքա վաղում են դէպ ի կործանան վտանգը։ Բ. օր. բ. 18. դ. թագ. բ. 11—13. առ. ժ. 22. ժոր. ժա. 8. կոր. 4. 5. ա. տիմ. դ. 9. 10. յակ. ե. 1—3։

22. 23. Մարդու մեծ երջանկութեան պատճառը մարմնոյ աչքն է։ եթէ մարդը զրկում է նրանից, մի և նոյնն է թէ նա զրկում է բոլոր երկրային երջանկութիւններից։ Այնպէս էլ մարդուն Հոգու աչքը միտքն է, եթէ նա զարգացած է վերնային գիտութիւններով, եթէ նա լուսաւորուած է սուրբ ձգտումներով, եթէ նա ընդլայնած է ճշմարտութեան Հետ, Հոգին իւր բոլոր մասունքներով առատ (երջանիկ) կլինի։ Իսկ եթէ նա զուրկ է այսպիսի գիտութիւններից և ձգտումներից՝ Հոգին իւր բոլոր մասունքներով խաւար (թշուառ, մեղանչական) կլինի։ Որքան ապստամբ վարուած է մարդը դէպ ի վատ ձգտումները, այնքան առաւել խաւար է նոցա միտքը։ Դաւիթ. ժա. 34—36. յով. Հ. ժա. 9. ա. պետ. բ. 14. 15։

24. Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել կամ զմին ատիցէ. և զմիսն սիրիցէ. կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ, ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայիս։

25. Վասն այդորիկ ասեմ ձեզ՝ մի հոգայք վասն ոչոչ ձերոց. զինչ ուտիցէք և մի վասն մարմնոյ ձերոյ թէ զինչ ազանիցէք, ոչ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր և մարմին քան զհագուստն։

26. Հայեցարուք ի թռչունս երկնից զի ոչ փարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ի շտեմարանս և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա։ ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա։

27. Իսկ արդ՝ ո՞ ի ձէնջ առ հոգայ իւրում՝ յաւելոյ կարիցէ ի հասակ իւր զկանգուն մի։

28. Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք։ հայեցարուք ի շուշանն փայլեալ որպէս աճէ. ոչ ջանայ՝ և ոչ նիւթէ։

29. Ասեմ ձեզ՝ զի և ոչ Սոգոմոնն յամենայն փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ։

30. Իսկ եթէ զխոտն ի վայրի որ այսօր է. և վաղիւն ի հնոց արկանի. Աստուած այնպէս զգեցուցանէ. ոչափ ևս առաւել զձեզ թերահաւատք։

31. Մի այսուհետև հոգայցէք և ասիցէք. զի՞նչ կերիցուք՝ կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ զգեցցուք։

32. Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է ձեզ այդ ամենայնի։

33. Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ՝ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ։

34. Մի այսուհետև հոգայցէք վասն վաղուն՝ զի վաղիւն վասն իւր հոգասցէ. շատ է առուրն չար իւր։

24. Մամոնայ Ասորոց բառ է, նշանակում է Հարստութիւն Արծաթասէր, ագահ, հարստութեան անձնատուր մարդը չէ կարող Աստուծոյ ծառայել Հռ. 20. 21։

25—27. Ոգի բառը նշանակում է կեանք։ Մինքը այս է. եթէ Աստուած մարդին պարգևել է մարմին և կեանք, որ ամենասուտական բաներն են, մինչ նա չպիտի ապ երկարպահանք որ է. կերակուր, հանդերձ, և այլն։ Աստուած՝ եթէ անբան և անաշխատ թռչուններին կերակրում է, մինչ նա իւր նմանութեամբ ստեղծուած՝ այն է. բանական, անմահ և ազատ հոգւով, անապատ մարդի և այդպէս կամքով զարդարուած մարդուն պիտի քաղ ցաձուութիւնով ապանուն։ Եթէ շատ հոգալով չէք կարողանում ձեր հասակի վերայ մի կանգուն (մեծ մատից սկսած մինչև

արմունկը) աւելացնել, միթէ կարծում էք կարողանալ ձեր հոգացողութիւնով կեանք պահել՝ որ շատ աւելի մեծ քան է քան հասակ երկայնացնելը։

28—30. Երբոր Աստուած ամենաուսում շուշան ծաղկին առանց մարդկային հոգացողութեան, զարդարեց մի այնպիսի գեղեցիկ պատուական և ազնիւ հանդերձով, (հագով ու զգեստով) որի շքեղութեան նախանձուց մինչև անգամ Սողոմոն, այնպէս որ իւր հրաշալի խմաստութիւնով ոնդարար աչքատեց ուենալ մի որ և իցէ շուշան ծաղկի, իսկական նմանութեամբ և յատկութեամբ, մի հանդերձ, որպէս զի զրաւով իւր փառքի պակասութիւնը լցուցանել, բայց նա չհասաւ իւր նպատակին։ Միթէ Աստուած ձեզ մերկութեան մէջ կ՚ապանէ, երբ դուք շատ առաւել էք քան շուշանը, որով հեռև ձեր վախճանը երանութիւն է, իսկ նրանը ոնչնաչար, նա ձեր պէտքի համար է, իսկ դուք Աստուծոյ։ Սաղ. դիր։ 3. գրդ. ժէ. 28։

31—32. Հոգսերի մէջ խեղդուողը՝ ոչ միայն ծանր մեղքերով կորուստանում է իւր մարդկութեան արժանաւորութիւնը և հոգու երանութիւնը, այլ նաև հիմանոսների պէս, ուրանում է Աստուծոյ Նախախնամութիւնը։ Խաբերայութիւն է հաւատալ Նախախնամութեան, բայց յուսալ հոգսերի։ Բ. օր. ը. 4. իմաստ. ժզ. 20. մատ. ը. 23։

33. 34. Աստուծոյ թագաւորութիւնը՝ նորա արդարութիւնն է։ Մենք պէտք է մեր ամէն խնդրուածքից առաջ, խնդրենք նորա արդարութիւնը։ Երբոր երկրի մէջ կ՚թագաւորէ Աստուծոյ արդարութիւնը, այն ժամանակ կ՚իմանանք՝ որ հասած է նորա թագաւորութիւնը։ Եթէ մենք հետևենք նորա արդարութեան, երկրի մէջ կ՚ապրենք ամենաերջանիկ կեանքով և գրեթէ ոչինչ բանի մէջ կարօտութիւն չենք ունենար։ Աբրեմն լաւ է՝ օրեկան հոգսերի նեղութիւններով բաւականանալ։ Փիլ. դ. 6. ապետ. ե. 7։

Այս սաստիկներից չպէտք է հասկանալ թէ վաղուան համար հոգալը ամենևին հարկաւոր չէ, այլ թէ անշուշտ հարկաւոր է մեր և մերոյնոց համար հոգալը։ Երկրագործը սերմը ցանում է՝ որ յետոյ քաղէ։ Այսպէս էլ շատ բաների համար պէտք է նախապատրաստաբար հոգալ՝ և ոչ թէ հեթանոսաբար հոգսերի մէջ տաքնապելով խեղդուիլ։ ա. տիմ. ե. 8. մատ. ը. 23. գ. 10. 31. 32։

Գլ. Է.

1. Մի դատէք՝ զի մի դատիցիք։
2. Զի որով դատապարտանիս դատէք դատեցոց էք. և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։
3. Զի տեսանես զշիւղ յականն եղբօր քո. և ի քում ականդ զգերանդ ոչ տեսանես։
4. Կամ զիա՞նդ ասես գեղբայր քո՝ թող հանից զշիւղդ յականէ քում. և ահաւասիկ ի քում ականդ գերան կայ։
5. Կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ եղբօր քո։
6. Մի տայք զսրբութիւն շանց, և մի արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի առ տան կոխեսցեն զնոսա, և դարձեալ երդիծուցանիցեն զձեզ։
7. Խնդրեցէք, և տացի ձեզ, Հայցեցէք և գտջիք, բաղխեցէք և բացցի ձեզ։
8. Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բաղխէ՝ բացցի նմա։
9. Ո՞վ իցէ ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ որդի իւր հաց. միթէ՞ քար տայցէ նմա։
10. Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ՞ օձ տայցէ նմա։
11. Արդ՝ եթէ դուք, որք չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել Հայրն ձեր, որ յերկինս է՝ տայցէ բարիս այնոցիկ՝ որք խնդրեն զնա։

1. 2. Երկու կերպ դատողութիւն կայ՝ մէկը դատաւորի, իսկ միւսը՝ Հասարակ անձնի։ Դատաւորի դատողութիւնը Ցիսուս չէ արգելում, վասնզի նա պէտք իւր պարտօնը կատարէ արդարութեամբ դատելով, մենք էլ պէտք հնազանդութիւնք նորա վճիռներին։ Բ օր. Է. 12. Հա. Ժ. 1—4։

Հասարակ անձնի դատաստանը կ՚ընդունուի միայն այն ժամանակ, երբ դատախազը և յանցաւորը կ՚գիմեն նորա և կ՚խնդրեն արդարութեամբ դատելով՝ խաղաղութեամբ վերջացնել գործը։ Ցով Հ. Է. 24. ա. յով Հ. դ. 1։

Իսկ եղբա, որոնք ամբաստանութեամբ փքուած, դատելով բամբասում են և վատահամբաւելով մեզադրում իրանց ընկերներին, որոնց արժանիքը, նպատակի ձգտումները, գործքերի հանգամանքները և կրքերի ամենայն պարագաները յայտնի են միայն Աստուծոյ և ոչ իրանց, պշպեսնաց Ցիսուս ոչ միայն ար-

գելից գատելուց, այլ նաև սաստիկ գատապարտութեան մեղա. գրեցէ՛ Դան. գ. 37. 38. յակ. գ. 12. 13. գ. 11. 12.

3—5. Երբ՝ նշանակումէ մի որ և իցէ վերին յանցանք, իսկ գերան նշանակումէ մեծ յանցանք. Այն անձը՝ որ ցանկանումէ ուրիշի վերայ գատելով, բամբասելով՝ նոցա յանցանքը մեղադրել, նախ ինքը է՝ ինքը լաւ իմանայ, որ իւր գատողական և բամբասողական յանցանքը՝ շատ աւելի մեծ մեղք է քան այն յանցանքը, որի մասին ինքն գատում և բամբասում է։ Եթէ դու, ով ամբարտաւան խրատիչ գատաւոր, կամենում ես քո գատողութիւններովդ քո եղբօրդ ուղղացնել, աւելի լաւ է, որ առաջ մտածէիր քո ամբարտաւանութեանդ վերայ. և իմանայիր որ ոչ ոք քեզ գատաւոր և քննիչ չէ նշանակել այդ գործի մէջ, այլ դու, կամենալով քեզ մի մեծ մարդ ցոյց տալ ուրիշներին, արդարացում ես քո կրքերով, նախանձով ապականուած սրտի շարժութիւններդ։ Աչխ այս է այն զզուելի և ատելի թշուառութիւնը, որ ասում ենք մարքի կուրութիւն։

6. Սրբութիւն ասումէ Աստուածայ և Աստուածայնոց վերաբերեալ ամենակերպ խօսքերի և գործերի։ Ցիտուս, այս ասելով, սովորեցնումէ իմանալ իւր վարդապետութիւնների գործադրութեան եղանակը, տեսը և ժամանակը։ Նոքա մարդիկ՝ որոնք սաստիկ ասումեն ամենակերպ խրատ և յանդիմանութիւն, ինչպէս հեղը և խողերը արշամարհելով անարգումեն պատուական և մեծագին մարգարիտները։ Աստուածայ խօսքը, Աստուածայնոց վերաբերեալ սրբութիւնները՝ այն է. կենարար մարմնոյ և արեան խորհուրդը, ձեռնադրութեան կարգը, պէտք է փայլն տալ արժանաւորներին, իսկ անարժաններին անպէտ մեղաւորները, զուրկ են Աստուածայ շնորհքից և նորա սրբութիւններից։ Առ. Թ. 7. 8. մեկ. 12. իս. 9. գործ. ժ. 45. 46. բ. պետ. բ. 22. յայտ. իբ. 15։

7—11. Որպէս զի ոչ որ չհամարձակուի ասել, անկարելի է մեզ կատարել այդ վարդապետութեան խրատները։ Ցիտուս, խնդրեցէք, հայցեցէք և դարձեցէք այլաբանական բառերով, վանահայցնումէ մեզ խնդրել Աստուածայ՝ իրն բարերարութիւններից օգնականութեան շնորհք։ Աստուածաբանները շնորհքը երկու են բաժանում— Հաճոյական և Զբիական թէև երկուսն էլ

— 87 —

ձրիաբար է տուած։ Հաճոյական աւուրմ են՝ այն արդարացուցիչ և սրբարար շնորհքները, որ տուած են արդարք շնորհաց միջնորդութեամբ տարածեալս իւրաքանչիւր անձի՝ օգտի և փրկութեան համար։ Իսկ ձրիական աւուրմ են՝ այն շնորհքները, զոր տուած են հաւատակից շնութեան համար՝ զարդիսք են. շնորհք իմաստութեան, զիտութեան, բժշկութեան, մարգարէութեան, աբանութեան և այլն, և այլն։ Սուրբ Հոգւոյն այս տեսակ պարգևները ամենը բարի պարգևների գլուխ և բովանդակութիւնն է։ Առուած պատրաստ է տալ մեզ իւր շնորհքները և կատարել մեր ամեն տեսակ խնդրուածները, եթէ միայն կ'խնդրեմք հաւատով, կ'պատասխանեմք ջերմեռանդութիւնով և կ'բազմեմք յարատևաբար համբերելով։ Սրբերը՝ եթէ 40 տարի ազօթելով մեն սատակել իրանց խնդիրներց դարձեալ առանց յուսահատութեան շարունակել են իրանց ազատանքը յուսալով՝ որ պիտի առանան նոցա, մինչև անգամ իրանց վերջի բոլորի մէջ։ Իսկ քաջ նպատակի և Առուծոյ կամաց դէմ խնդիրները կ'մեան անկատար։

Եթէ մեզանչական և սխալական մարդը իւր քաղցած որդուն տալիս է ամենայնիւ կերակուրներ, միթէ՞ Առուած, որ ամենաբարի, ամենիմաստ և երկնաւոր Հայրն է, վնասակար բան պիտի տայ իւր զաւակը։ Ո՞վ խաւար մտածմունք։ Այլ պէտք է խմանալ՝ որ եթէ մենք սխալմամբ անգամ խնդրենք նորանից անպէտք և վնասակար բաներ, նա կ'տայ մեզ այն՝ ոչ թէ՝ ինչ որ կամենում ենք, այլ այն, ինչ որ մեզ օգտակար է և պէտք։ Ուրեմն ինչ որ տայ, ողբալն տայ և երբ տայ՝ այն է մեր բարին և օգտակարը։ Այսպէս, մեր ազօթքը Առուծոյ մօտ չէ մեռում անխոտոր։ Ազօթքն է բանալի երկնից, երանէ խնդրուածքն և իջանէ ողորմութիւն Առուծոյ։ Ազատանոս. Հնչէ Հոգին Սուրբ ուր կամի, զբան սեռուժէ, յաջժամ և ոչ ազան։ զարդ և կամի գաժանէ զնորհս։ Եաբրայեան։ Մի ակնկալցի մարդն այն առնուլ ինչ Առուծոյ, զի այլ հրկիցս առանց հաստատութեան էրանեալն ծանապարհս իւր։ Իսկ անջիրմեռանգն զոլով ծառայեալ և առանց զաղեալ ոչ է պաժանի պատգևոց։ Ոակերեալաբ Առ. իս. 22. մարի. ժա. 24. զաբ. ժա. 9. 10. ժբ. 7. յով. ժգ. 13. ժե. 7. ժզ. 23. 24. հա.

ե. 16. գ. 23. ա. կոր. Ժբ. 4—11. եփ. դ. 4—12. պետ. գ. 1. յակ. ա. 5—8. գ. 9. ե. 16—18. ա. յով. հ. գ. 22. ե. 14. 15.

12 Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և արարէք և դուք նոցա, զի այն իսկ են օրէնքն և մարգարէք։

13. Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ. և բազումք են՝ որք մտանեն ընդ նա։

14. Քանզի անձուկ է դուռն. և նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանսն. և սակաւք են՝ որք գտանեն զնա։

15. Զգոյշ լերուք ի սուտ մարգարէիցն՝ որք գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք։

16. Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցե՞ն ի փշոյ խաղող՝ կամ ի տատասկէ թուզ։

17. Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ։

18. Ո՛չ կարէ ծառ բարի զպտուղ չար առնել՝ և ոչ ծառ չար զպտուղ բարի առնել։

19. Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։

20. Ապա ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։

12. Ցիսուս իւր բոլոր վարդապետութիւնը, սկսած երանութիւնից մինչև այստեղ, բովանդակեց այս խօսքի մէջ, վասն զի Աստուծոյ օրէնքի բովանդակութիւնը՝ այս է։ Ուստի այս սիրոյ օրէնքը, ամենայն յարմարութեամբ, կոչուած է Ոսկեղէն կանոն։ Հրէից մէջ այս օրէնքը ընդունուած էր շատ աղօտ կերպիւ, բայց Ցիսուս անձնազոհութեամբ հաստատեց սոյա Ողորմութեան վերայ, որով և քրիստոնէից մէջ տարածուեցաւ պարտաւորիչ եղանակաւ։ Ուրեմն մենք պարտաւոր ենք սիրել միմեանց, ինչպէս որ Աստուած սիրեց մեզ։ Ո՞վ օրքան երջանիկ կլինի այս աշխարհի վրայ, երբ բոլոր ազգերն և անհատներ հետևեն այս Աստուածային շաւղին։ Այն ժամանակ երկիրս երկինք կդառնայ և մարդիկն էլ հրեշտակներ։ Գալ. գ. 18. մատ. գլ. 39. 40. ղուկ. գ. 31. հռ. ժգ. 8—10. գալ. ե. 14. փիլ. բ. 4. ա. յով. գ. 11. 13. 14. Ցիսուս այս օրէնքովս բովանդակեցնում էր իւր վարդապետութիւնը, արքայութեան ճանապարհն է, և նա թէ և քաղ-

ցը և թեթև է, բայց մեր մաքի տեսաւորութիւնը, բնութեանը ապականութիւնից վնասուած լինելով, մենք դժոխքի, մեղայ, նեղ և անձուկ ճանապարհը տեսնում ենք՝ որպէս լայն, ընդարձակ և հանգստութեան ճանապարհ, իսկ արքայութեան, բարեգործութեան, լայն և ընդարձակ ճանապարհը տեսնում ենք, որպէս նեղ, անձուկ և իբրև անհանգստութեան ճանապարհ։ Ցիսուս մեր մաքի այս թիւրտեսութեան համար, որ լայնը՝ նեղ է տեսնում, և նեղը՝ լայն, արքայութեան ճանապարհը նեղ և անձուկ տնտեսեց, իսկ դժոխքի ճանապարհը լայն և համարձակ։ Եթէ մենք մեր բնութեան հաճելի ճանապարհում գնենք՝ շուտ կ՝հասնինք կորստեան, որով հետև մեղայ դուռը մեր աչքին լայն և ճանապարհը ընդարձակ է երևում, իսկ արքայութեան դուռն նեղ և ճանապարհը անձուկ։ Եթէ մենք բոլոր հոգով փառուած լինինք Քրիստոսի և նորա երկնային փառաց սիրով, այն ժամանակ աշխարհի նեղութիւնները մեզ վերայ չեն կարող խիստ ներգործութիւններ ունենալ, այլ նեղութիւնը, վիշտը և ամենայն տեսակ հարածանքը՝ մենք հանգստութիւն և փառք կ՝ճանաչենք։ Մատ. ե. 12. 12. է. 5—11. ժա. 29. 30. ժբ. բ. կոր. ժբ. 10. հռ. ը. 31—39. յայտ. գ. 18։

15—20 «Մարգարէ» բառը նշանակում է ծածուկ իրերև տարազան գուշակող։ Պատեղ և աւետարանի զանազան տեղերում գործ է ածվում «քարոզիչ» բառի նշանակութեամբ, որով հետև քարոզիչները պէտք է սուրբ գրոց ծածուկ մաքերը բացատրեն։ Ա. կոր. ժդ. 4։

Ցիսուս արքայութեան նեղ ճանապարհը սովորցնելուց յետոյ՝ զգուշացնում է մեզ սուտ քարոզիչներից, որոնք մոլորեցնում են ժողովրդեան հիշատակութիւն ուսուցանելով։ Նոքա թէև երևումն են մեր առաջև ոչխարի հանդերձներով՝ այն է. բարեպաշտութեան երևոյթներով, բայց բարեպաշտութեան պատուղներ չունին։ Նոքա խաբերաներ են։ Նոքա ստութիւնը յայտնի է իրանց խօսակցութեան պատղներից, որով հետև դոքա հակառակ Աստուածային օրինաց՝ պահքը, մարմնոյ ճնշումը, կուսութեան ոգեպահպանութիւնը և շատ տեսակ առաքինութիւնները ոչ չեն համարեում, քարոզում են մարմնոյ և սրտի ցանկութեան յարմար։ Մինէ այս փուշ և տատակ վարդապետութիւններից

կարելի է քաղել Աստուծոյ արդար օրինաց քաղցր խաղողը կամ թթուզը։ Ուրեմն ոչ միայն նոքա, որ տալիս են չար գործոց պատուղներ, այլ և նոքա, որ ձեռն տալիս բարի պտուղներ, պէտք է կորուին և կրակի մէջ ձգուին։ Այսպէս պէտք իրանց պտուղներից ճանաչել նոցա։ Եթէ մարմնաւոր բաների մէջ աշխատում ենք զզոյշ լինել չխաբուիլ, ո՞չ, արդեօք որքան առաւել մեծ զգշութիւն է հարկաւոր չխաբուիլ հոգեւոր բաների մէջ։ Բ. օր. ժգ. 3. Եր. իգ. 16. մատ. ժբ. 33. գալ. է. գ. 13-15. հա. ժգ. 17. 18. Եբ. ե. 6. 7. յակ. գ. 12. բ. պետ. բ. 1—4. ա. յոհ. գ. 1։

21. Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր՝ Տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է։

22. Բազումք ասիցեն ցիս յաւուրսն յայնմիկ, Տէր՝ Տէր, ոչ յանուանէ քում մարգարէացաք, և յանուանէ քում դեւս հանաք, և յանուանէ քում զօրութիւնս բազումս արարաք։

23. Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ։ Ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ զոր գործէք զանօրէնութիւն։

24. Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի։

25. Իջին անձրեւք՝ և խաղացին գետք, շնչեցին հովք՝ և բաղխեցին զտունն՝ և ոչ կործանեցաւ. քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր։

26. Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ։

27. Իջին անձրեւք՝ յարեան գետք, շնչեցին հովք՝ հարին զտունն, և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ։

28. Եւ եղեւ իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա։

29. Զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր՝ և ոչ որպէս դպիրքն և փարիսեցիքն։

21-23. Հարատաւոր ծութիւնը չէ կարող հաստատի նշան համարուիլ մարդու արդարութեան։ Նոցա անգամ Աստուած թոյլ է տալիս անպիծներին, մեղաւորներին ևս հրաշքներ գործել, միայն՝ ոչ թէ իրանց չար նպատակը պատկերու, այլ կամ հաստատակաց օգուտ

և շինութեան, և կամ Յիսուսի անուան խրատութեան համար։ Անիրաւ Բաղդամէ և մարգարէութիւն ասաւ։ Երեւումէ՝ որ Յուդա մատնիչը ևս Քրիստոսի անունով Հրաշքներ է գործած։ Յուցակ և կամ փոքր սրբութեան ոչ է առնելի զնշանս, այլ գենկերն սերելին, որպէս զանձն, բան սրբոյն Գրիգորի։ Թուղթ. մարկ. գ. 7—13։

Ոչ թէ նոքա կ'ժառանգեն երկնքի թագաւորութիւնը, որոնք իրանց սրտերը լեցք անաստուածութեան, անօրէնութեան գիտաւորութիւններով՝ Յիսուսի անունով հրաշքներ են անում, աւետարան են կարդում և քարոզում, մարդոց առաջև իրանց բարեգործա ձևացնում, այլ նոքա, որոնք ջերմեռանդ սրտիւ կ'կատարեն նոքա պատուիրանները։ Քառասանի օրը նոցա Տէր, Տէր, ազաւանքի ազաղակը, Յիսուս կ'մերժէ և կ'անարգէ ասելով.— «Ոչ գիտեմ զձեզ։ Մատ. ժթ. 17. ի. 1—46. գուկ. ժգ. 25—30. բ. կոր. և. 10. յայտ. ի. 11—15։

24—27. Նրանի նոքա, ով որ Յիսուսի վարդապետութիւնները կ'լսէ հաւատով՝ և կ'կատարէ ջերմեռանդութեամբ։ Նոքա դէմ չեն կարող պատերազմիլ ոչ անհաւատութեան անձրևները, ոչ ամբարտաւանութեան գետերը և ոչ կարծիքների հողմերը։ Բայց վայ, հազար անգամ վայ այն մարդուն, որ թողած Սուրբ Գրքի Աստուածաշնչաստան՝ անուտ վարդապետութիւնները, զանազան նիւթապաշտների զազափարներից ծագուած կարծիքների վերայ կ'հիմնէ իւր հոգու համոզմունքը։ Այդպիսեաց համար շատ լաւ է անուտն, անպաշտպան ապրիլ անձրևի տակ, քան բնակուիլ անհաստատ զազափարների և կարծիքների վերայ հիմնուած տան։ Այսպէս էլ հազար անգամ լաւ էր մեզ համար, որ չլնած լինէինք աւետարանի ձայնը՝ քան ընդդէմ թերահաւատութեամբ անհնազանդ գտնուիլ նոքա։ Աւելի լաւ է կռապաշտութեան մէջ ծնուիլ և մեռանիլ, քան լոկ անունով քրիստոնեայ լինիլ։ Անաւուծոյ առաջև գոյութիւնն են ընդունուած և ոչ խոսքերը։ Մատ. ժա. 20—24. գուկ. գ. 46—49. մրկ. 47—48. հաւ. բ. 13. յայտ. ա. 22—25. բ պետ. բ. 21։

28. 29. Դպիրները խօսում էին ինչպէս և թեթև բաների վերայ, և իրանց ասածները՝ որ իրանք չէին կատարում հասա-

տում էին աւանդութիւններով, բայց Յիսուս փրկութեան գլխաւոր խորհուրդներ, ինքն իրանից հեղինակաբար, իբրև օրէնսդիր, իշխանութեամբ նախ առնելով և ապա ուսուցանելով, զարմացրեց մինչև անգամ իւր թշնամիներին, որոնք վ կայեցին թէ. — Ա՛յ երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այսն Յով հ. է. 46։ Այսուհետև վ երկացաւ այս քարոզը՝ որ օրուանց է հինգերորդ գլխից։

Գլ. Ը.

1. Այլ երբև էջ 'ի լեռնէ անտի, զնացին զկնի նորա ժողովուրդք բազումք։
2. Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա, և ասէր. Տէր՝ եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։
3. Զգեալ զձեռն իւր և հասցոյ 'ի նա Յիսուս՝ և ասէ. կամիմ սրբեաց, և վաղվաղակի սրբեցաւ 'ի նմանէ բորոտութիւնն։
4. Եւ ասէ ցնա Յիսուս, զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես, այլ ե՛րթ ցոյց զանձն քո քահանային, և մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս 'ի վ կայութիւն նոցա։
5. Եւ մտեալ 'ի Կափառնայում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, ապաչէր զնա։
6. Եւ ասէր. Տէր՝ մանուկ իմ անկեալ կայ 'ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ։
7. Ասէ ցնա Յիսուս, ես եկից՝ և բժշկեցից զնա։
8. Պատասխանի ետ հարիւրապետն՝ և ասէ. Տէր՝ չեմ բաւական՝ եթէ ընդ հարկաւ իմով մացես. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ։
9. Քանզի և ես այս մի եմ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինձ զինուորս՝ ասեմ սմա երթ, և երթայ. և այլում թէ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա զայս. և առնէ։
10. Իբրև լուաւ Յիսուս՝ զարմացաւ՝ և ասէ ցայնոսիկ՝ որք զկիսան երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք։
11. Բայց ասեմ ձեզ զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և բազմասցին ընդ Աբրահամու՝ և ընդ Իսահակայ՝ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից։
12. Եւ որդիքն արքայութեան ելցեն 'ի խաւարն արտաքին. անդ եղեցի լայ և կրճել ատամանց։

13. Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն՝ երթ. և որպէս հաւատացիր, եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նոցա յաւուր յայնմիկ։

1—4։ Բորոտութիւնը զանազան տեսակ է, մէկ տեսակը՝ որ աւելում է զգոյշութիւն շատ ցաւալի է, այնպէս որ թշուառ հիւանդին ամենքի և ձեռնեքի բուն մասից սկսում է մէկ մէկ թափուիլը։ Այս ախտ ունեցողին ամենից առաջ երեւում է աչքերի և քթի շուրջը կարմիր, սպիտակ և կամ սեւ բծեր, որ հետզհետէ տարածւում են բոլոր մարմնոյ վերայ։ Այս ախտը ժառանգական, տարափոխիկ և անբուժելի է։ Այս պատճառաւ Հրէից մէջ օրինադրուած էր, որ բորոտները պէտք է բնակուին ժողովրդից դուրս տեղերում։ Ղեւ. ժդ. 46. թուոց. ե. 2. գ. թագ. ե. 7. ժե. 5։

Յիսուս քարոզութիւնը վերջացնելից յետոյ, երբոր տափարակ տեղից իջաւ դաշտը, իսկոյն մի բորոտ հաւատով զօրացած, դուրս եկաւ Յիսուսի առաջ և երկրպագութիւն տալով, ասաց. — Տէր, եթէ կամիս կարող ես զիս սրբել։ Այն է՝ քո կամեցածդ արդէն իրողութիւն է, քո կամքդ կատարեալ է, մեզ պէս տկար չես, որ շատ բան կամենում ենք, բայց չենք կարողանում առնել, ուստի եթէ կամենաս կ'բժշկուիմ, իսկ եթէ ոչ՝ յօժար եմ մնալ բորոտութեան մէջ, քո կամքդ շատ բարի է՝ քան իմ առողջութիւնը։ Աղօթքի իսկական կերպը այս է։ Մովսիսական օրէնքի համաձայն արգելուած էր բորոտի շօշափելը, որպէս զի հիւանդութիւնը չ'փոխադրուի, բայց Յիսուս շօշափելով՝ բորոտին ոչ թէ օրէնքը քանդեց, այլ կամեցաւ ցոյց տալ, որ այդ հիւանդութիւնը՝ ոչ թէ միայն չունի այժ իւր վերայ ներգործելու, այլ նաև պէտք է սրբուի հիւանդից բորոտութիւնը։ Սաղ. ճժդ. 3. մարկ. ա. 40—45. գուկ. ե. 12—16։

Օրինաց համաձայն, այդպիսի հիւանդները երբոր բժշկուում էին, պէտք էր նախ գնային քահանայից մօտ, ցոյց տային իրանց անձը, որ արդէն բժշկուած են, և նրանցից այդ մասին վկայութիւն առնելից յետոյ, պէտք էր նոցա առաջի Աստուծոյ շնորհակալութեան զոհ մատուցանէին, որ յետոյ կարողանային ապրել հասարակութեան մէջ։ Ղեւ. ժդ. 1—32։ Յիսուս արգելում է մինչև քահանայից վկայութիւն առնելը և պատարագ մատու-

ցանելը ոչ պրի չասել թէ բժշկողն Յիսուսն էր, ապա թէ ո՞չ քահանաները այս լսելով, կարողէին ասել, որ բժշկուած չէ։ Ուստի և բժշկուածը կ՚զրկուէր հասարակութեան մէջ ապրելու։ Մարկ. գ. 43. 44. գրէ. հ. 12-14։

Հոգեւորականս Քրիստոս մեզաւոր մարդն է, որ կարող է ստանալ բժշկութիւն միայն իւր անձնի զոհողութեան իսաստաբեալ ապաշխարութեամբ։ Մատ. գ. 2։

5. Պատուհասումն ՏԵՐ ՊՂ. գ. 13 բաց։

Հրէաները Հռովմայեցոց հպատակ էին։ Այս զօրաւոր Հռովմայեցի էր, ազգաւ Խպանիցի, սորա որդին Քրիստոսի խաչելութեան ժամանակ հաւատաց Յիսուսին։ Դուկաս ասում է թէ Հարիւրապետը «առաքեաց զՇէրից՝ ի Հրէից։ Իսկ Մատթէոս թէ Մատեաւ առ նա հարիւրապետ մի։ Սոցա մէջ հակասութիւն չկայ, վասն զի այս ընդհանուր ոճ է, որ ասում է.— Այս ինչ մարդը՝ այս ինչ բանը արաւ։ Բայց նա ուրիշի ձեռքը է անել տալիս։ Նմանապէս կարդում ենք թէ — Պիղատոս Ձեռից Յիսուսին։ Բայց նա ուրիշի ձեռքը Ձեռել տուաւ։ Ճակով բոլոր և Ցով հանձնէսք ինդրեցին Յիսուսին։ բայց նրանց կոչմանէ խնդրողը իրանց մարն էր, և այլն։ Մատ. ի. 20. մարկ. ժ. 35. յով. Հ. ԺԹ. 1։

6. Սոմբրութիւն էր որ ծառաներին մանուկ էին ասում թէ և նոքա հասակաւ մեծ էլ լինէին։ Անպատրաստութիւնը՝ ասում է մարդոյ անգամների միմեանցից լուծուելը, որոնք թէ և ցանկանում զրում, բայց ինում են անդրդուելուց։ Յիսուսի ժամանակը մի քանի տասակ սխալներ կային, որ հիանդին սատակի ցաւեցնում էին, զորա և անդամալոյծ էին ասում։ Այս անդամալուծի ջղերը լուծուած էին ուղղիդ յատաջացած ցաւի սատակութիւնից, ուստի և մինչև ի մահ սատակի տանջում էր։

7—9. Աւետարանի խօսքերից երևում է որ մեծաշուք հարիւրապետը, ինքն իրան անարժան, մեղաւոր համարելով նախ չգնաց Յիսուսի մօտ, այլ զրկեց Հրէից մի քանի ծերեր, որ ազաչեն Յիսուսին բժշկել իւր ծառային։ Ծերերը՝ հասկանալով հարիւրապետի միտքը, գնացին և խնդրեցին Յիսուսին գնալ հարիւրապետի տունը և բժշկել նորա ծառային։ Յիսուս գնաւ հասկանալով հարիւրապետի հաւատը և խոնարհութիւնը, զրկաց ծերերի հետից դէպ ի տունը։ Մինչև որ ճանապարհին էր,

ամանք յառաջացին և Հարիւրապետին յայտնեցին թէ՝— Յիսուս գալիս է։ Հարիւրապետը այս լսելով, ստիպի չմոռանար, ուստի շուտով ուղարկեց իւր բարեկամներից մի քանի մարդ, որ ասեցին Յիսուսին, չմտնել իւր տան գնալով, բայց կամենալով, որ դրա համար կարելի է չկորզուեան յայտնել իւր միտքը, լաւ համարեց, ինքն անձամբ անձին գնալ Յիսուսի մօտ և իւր սրտի զգացմունքը յայտնել՝ ասելով.— Ով Տէր, ես մի անարդ մեղաւոր մարդ եմ, չուներմ այն արժանաւորութիւնը, որ կարողանամ Քոնդ ընդունել իմ տան մէջ, ուրեմն ես որ Պայսակը խշնանութեան տակ եմ, իմ սուրբերներիս մի քան կ՝հասցնեմ, նոքա հնազանդութեամբ կ՝կատարեն, ապա ուրիշին քեզ՝ ասելով հնազանդութեամբ կ՝ասեն ամէն տեսակ ցաւեր և հիւանդութիւններ, որ Տէր ես երկնքի և երկրի և բոլոր տարերքը և ամենայն նիւթերն խառնուածքներ քեզ են ծառայում։ Եւ բանիւդ և կ՝բժշկուի իմ ծառայս։ Որանի թէ ամենայն արքունացող մեղաւոր այսպիսի քաղցր զգացմունքներով դիմեր դէպ ի Յիսուսի ողորմածութիւնը։ Ղուկ. է. 4—9։

10. Յիսուս զարմանում է, իբրև մարդ, և ոչ իբրև Աստուած Աստուծոյ առաջև զարմանալի բան չկայ։ Այսինքն, այս հեթանոս զօրապետը շատ աւելի հաւատք ունեցաւ՝ քան Իսրայելերը, որոնք իրանց Հօր Յակոբը Նահապետի հաւատքի համար, Իսրայէլացի են կոչուում։ Այսպէս՝ Յիսուս յանդիմանեց Հրէից թերահաւատութիւնը, և սրանց լուսաւորել նաև հեթանոսներին։ Ղուկ. ա. 37. բ. 32։

11. 12. Ամէն կողմերից մինչև անգամ հեռաւոր հեթանոսների միջից կ՝հաւաքուին և երկնքի արքայութեան մէջ կուրախանան, իսկ Աբրահամու որդիքը, որոնց խոստացուած է երկնքի արքայութիւնը, կ՝զրկուին այդ խոստմունքներից, վասն զի նոքա չգործեցին Աբրահամու գործերը։ Նուսմ սովորութիւն էր ուրախութեան հանդէսները կատարել ճաշուան երկար գիշերները։ Ի հարկէ, եթէ մէկը արտաքսուէր դահլիճի ուրախութիւնից, նա պէտք է դուռում խուսարի մէջ լայ և ցրտից էլ սառամները կընտանցնէ։ Նաև հաւանական է, որ դրսի խուսարը հռովմայեցոց բանտերի նմանութեամբ է սաւած, որ շինուած էին բոլո-

րով են լցուց զուրկ, թաց, վատառողջ և աղտոտ անկերութիւն Տէրերը սովորութիւն ունէին իրանց գերիներին ձգել այդ տեղ, որպէս զի սարսափելի կերպով տանջուին, և իրանց անմիխիթար վիճակի մէջ լան և տասնեակը կրճտացնեն։ Այս օրինակաւ, Յիսուս ցոյց է տալիս անապաշխար մեղաւորների գառն վիճակը։ Այսպէս էլ մենք կ'զրկուինք Քրիստոսի երեսից, երբ նորա հնազանդները ձրիաբար վայելելով, մեր լաբագործութեամբ ոտնակոխ անենք նորա արիւնքը։ Սաղ. բ. 8. մաղ. ա. 11. գուկ. ԺԳ. 28—30. իր. 30։

13. Յիսուս տանց տուն մտնելու, տանց հիւանդին մօտենալու և տանց մի որ և իցէ միջոցի, հարիւրապետի խնդիրքի համաձայն, եղեցի, բառով անմիջապէս բժշկեց։ Լուկ. է 10։ Հոգևորապէս հարիւրապետը մեր անձնիշխանութիւնն է, իսկ Տառան հոգու զգայական բաղձանքը, եթէ մեր անձնիշխան կամքը խոնարհութիւնով, հաւատով և պատկառանքով դիմէ դէպ ի Քրիստոս, իսկոյն կ'ստանայ նրանից բժշկութիւն։

14. Եւ եկեալ Յիսուս 'ի տուն Պետրոսի, եաւն՝ զի զբանչ նորա անկեալ դնիւր տապացեալ։

15. Կարաւ զձեռանսն նորա՝ և եթող զնա ջերմն, յոտն եկաց՝ և պաշտէր զնա։

16. Երբև երեկոյ եղև՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և հՀան զոյսն բանիւ և զամենայն հիւանդսն բժշկեաց։

17. Զի լցցի բանն՝ որ ասացաւ 'ի ձեռն Եսայեայ մարգարէին՝ նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր երարձ,

18. Տեսեալ Յիսուսի զժողովուրդս բազումս զչուրջ, հրամայեաց երթալ յայնկոյս։

19. Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝ եկիցս և ես զկնքի քո՝ յոր վայր և երթիցես։

20. Ասէ ցնա Յիսուս. աղուէսուց որջք զոն՝ և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ զոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։

21. Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ. Տէր՝ տուր ինձ հրաման, զի երթայց նախ թաղեցից զհայր իմ։

22. Ասէ ցնա Յիսուս. եկ զկնքի իմ և թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց։

14. 15. Միմեանք կոչում է նաև Պետրոս կամ Սիմոն Սիմեանի զոքանչի բժշկութիւնը եղած է լերան վերայ քարոզութիւնից առաջ։ Մոլորութեան մէջ անկողնիները, եթէ հաւատով և խոնարհութիւնով դիմեն Յիսուսին, իսկոյն կ'բժշկուին։ Մատ. գ. 23. մար. ա. 29-34. ղուկ. դ. 38-42. յով. Հ. ա. 40-43։

16. Հրէից սուրբ Շաբաթն օրն էր, որ սկսում է Ուրբաթ երեկոյից և տևում մինչև Շաբաթի երեկոյեան։ Արևը մայր չմտած հիւանդներ բժշկելը մեղք էին համարում։ Ժողովրդեան բաղմութիւնից, որոնք եկած էին լսել Յիսուսին, ախտաժէտներից շատերը ցերեկը չէին կարողանում մօտենալ։ Երեկոյեան, երբ սկսում էր նուազուլ՝ մօտենում էին հիւանդները և բժշկուում։ Այնպէս՝ Յիսուս ցերեկները սովորեցնում էր, երեկոյեան բժշկելով դիւահարները ազատում։ Ուրեմն իւր բոլոր ժամանակը նուիրած էր մարդկանց օգնի և փրկութեան։ Մատ. դ. 24. մարկ. ա. 21—29. յով. թ. 3—4։

17. Յիսուս բժշկեց ոչ միայն մեր հոգու մեղքերը, այլ նաև մեր մարմնու ցաւերը և հիւանդութիւնները։ Ես. ՀԷ. 4. ա. պետ. բ. 24. յայտ. ա. 5. իա. 4։

18. Մարդկային փառքից փախչելու համար, հրամայեց աշակերտներին նաւակը պատրաստել, որ նոցա հետ միասին, անցնէ Գալիլեացւոց Ծովակի միւս կողմը։ Մատ. դ. 13—14. մարկ. դ. 35. ղուկ. ը. 22։

19. 20. Այս գլխիը օրինաց վարդապետ էր։ Սա տեսնելով՝ որ Յիսուս իւր ազգու քարոզութեան և աքանչելի հրաշքների ձեռքով ժողովրդեան մէջ ստանում է մեծ փառք և համակրութիւն, կարծեց՝ որ եթէ ժամանակաւորապէս ինքն Յիսուսի մոտ աշակերտութիւն անէ, կարող է կարճ միջոցում, սովորելով նորա վեմ գիտութիւնը և աքանչելիքների գաղտնիքը, հասնել ոչ միայն մի մեծ փառքի, այլ նաև հարստութեան և իշխանութեան, վաստրոյ և ասաց.— «Ելկից և ես գնիմ քո՝ յոր վայր և երթիցես»։ Յիսուս իմանալով նորա միտքը՝ ասաց.— «Ով փառասէր գլխիր, դու խորուած ես քո մտածման մէջ. դու ինձ հետևելով, ոչ միայն չպէտք է հասնես հարստութեան և իշխանութեան, այլ նաև պէտք է զրկուես ունեցածներից, վասն

զի ես՝ որ երկնքի և երկրի Տէրն եմ, այժմ մարդացած, այն ասա-ծան աղբատութեան մէջ եմ, որ կերակրուում եմ ուրիշների ողորմութեամբ։ Անքան անասունները անգամ ունին իրանց որ-ջեր և բոյներ, իսկ ես չունիմ գլուխս դնելու հանգստութեան տեղ։ Դու ինձանից մի՛ սպասիր քո փառասէր նպատակիդ թա-ռամելի պսակը, այլ սպասի՛ր յաւիտենական, երկնային և ան-թառամ պսակին, որ պատրաստուած է հոգով աղքատների համար։ Այսպէս աղքատութիւնից չ՚պէտք է վախենալ, եթէ նա յառաջացած չէ ծուլութեան և կամ մի որ և իցէ յանցանքի վատ հետևանքից։ Մատ. ե. 3. զուգ. թ. 57. 58. յով. Հ. ժ. 6. բ. կոր. ը. 9։

21. 22. Այս աշակերտը եօթանասնից մէկն էր։ Սա՝ լսելով իւր հօր մահուան լուրը, խնդրից Յիսուսից թոյլատուութիւն գնալ թաղել իւր հօրը։ Յիսուս խմացաւ, որ եթէ գնայ տուն, ազգա-կաններից կ՚համոզուի մնալ այնտեղ և չ՚հետևիլ իրան, վասն-որոյ և ասաց.— «Թող քո հօրդ թաղեն քո հոգևորապէս մեռած բարեկամներդ, դու եկ գնի՛ իմ և երթ պատմեա՛ զաւրաւոր-թիւն Աստուծոյ։» Դիպուած բաներ ասանալու համար պէտք է թողել երկրորդականը։ Մեռելը թաղելը բարեգործութիւն է, բայց աւրաւորութիւն քարոզելը շատ առաւել է։ «Մեռաւել լաւ-գոյն է զաւրաւորութիւն Աստուծոյ քարոզելով հոչակելն, և զայլս ի մահուանէ զերծուցանելն, քան զմեռեալս, որք առ ոչինչ իմն են պիտանացուք թաղելն, մանաւանդ մինչ զոն այլք, որք զոյգմանէ հոգան։» Ոսկեբերան։ Ղուկ. թ. 59. 60։

23. Եւ իբրև եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշա-կերտքն նորա։
24. Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովուն՝ մինչև նաւին ծածկիլ յալեաց անտի. և ինքն ննջէր։
25. Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա՝ և ասեն. Տէր՝ փրկեա՛ զմեզ՝ զի կորնչիմք։
26. Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր վատասիրտ էք՝ և սակաւա-հաւատք. յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն. և եղև խաղաղութիւն մեծ։
27. Եւ մարդիկն զարմացան և ասէին՝ ոչ՚պիսի՞ զի՞ էր սա՝ զի և հողմք և ծով հնազանդին սմա։

28. Եւ իբրև էանց յոյնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցան նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ուստիք ընդ այն ճանապարհ։
29. Եւ ահա ազաղակեցին՝ և ասեն. զի կայ մեր և քո Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տաբաժամ առնուլ զմեզ։
30. Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։
31. Եւ դիւքն ազաչէին զնա՝ և ասէին. եթէ հանես զմեզ ասա, հրամայեա մեզ երթալ յերամակ խոզին։
32. Եւ ասէ ցնոսա, երթայք, և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից, և դիմեաց ամենայն երամակն ի գագաթ անտի ի ծով, և մեռան ի ջուրսն։
33. Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, և զկիսս դիւահարացն։
34. Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի, իբրև տեսին զնա, ազաչէին, զի գնասցէ ի սահմանաց նոցա։

23—27. Յիսուս իւր աշակերտներէն հետ մտաւ նաւակը և սկսեց բարձի վերայ ննջել նաւի մի անկիւնումն։ Այդ միջոցում մի ամենասաստիկ փոթորիկ վերացաւ, այնպէս՝ որ նաւակը մեծ վտանգի մէջ էր։ Աշակերտները երկիւղից սարսափած զարթնացրին Յիսուսին, ասելով.— Տէր, փրկեա զմեզ, զի կորնչիմք։ Յիսուս՝ յանդիմանելով աշակերտաց թերահաւատութիւնը, վերկացաւ սաստեց հողմին և ծովին և տիրեց մեծ խաղաղութիւն։ Նաւի մէջ եղած բոլոր մարդիկը զարմացան և ասում էին.— Ովէ սա, որ իբրև Աստուած, իշխում է հողմերի և ծովերի վրա։ Մարկ. գ. 36—40. ղուկ. ը. 22—24. յայտ. ժ. 2։

Արդարև Յիսուսի մարգարէութեան խորհուրդը չ՝իմացողներին համար մեծ զարմանք է, իսկ իմացողների համար ոչ, վասնզի նա ննջում էր՝ իբրև, մարդ և հրամայում, իբրև Աստուած, մարմնանում էր՝ իբրև, մարդ և հրամայում էր, իբրև Աստուծոյ։

Հոգեւորապէս.— Քրիստոս միշտ մեր սրտի նաւակի մէջ է, մենք մեր փոյթութեան փոխարէն ոչ է՝ միայն ոգեղէն դիմենք դէպ մեր փոյթութեան փոխարէն ոչ է՝ միայն մեծ ոգորմութիւնը։ Մատ. ա. 25. գ. 13։ Ի նաև խնդրենք նորա մեծ ողորմութիւնը։ Մատ. ա. 25. գ. 13։

28. Մարիամայ և Վանկաբ աստուածն Դալարացւոց երկիր։ Գեր-

գէսը Դալիլեացւոց Ծովի վերայ շինած մի քաղաք էր, որին անունով իբր շրջիջը եղած քիչ երկիրը Դերգէս էր անուանուած Գադարայն աւելի մեծ քաղաք էր, Ծովից մի քիչ հեռու, որի անունով իբր շրջիջը եղած մի քանի երկիրներ Գադարայ էին անուանուած Յիսուս, երբ անցաւ Ծովի միւս կողմի ցամաքը՝ նոքա պատահեցին երկու դիւահարներ, որոնց մէկը պէտք է լինէր Գերգեսացի և ինքն երևելի անձն։ Այս երևում է նրանից՝ որ միւս աւետարանիչները միայն գրում են յիշում Աւետարանիչների մէջ հակասութիւն չկայ, օրինակ, եթէ մի բժիշկ երկու հիւանդ է բժշկում և նրանցից մէկը յայտնի անձն է, ի հարկէ խօսակցութեան մէջ շատերը կ՚պատմեն յայտնի անձնաւորութեան վերայ։ Պատկէս էլ միւս աւետարանիչները խօսում են այն անձնաւորութեան վերայ, որ յայտնի անձն է, և ինքն շատ շարաչար հիւանդ՝ քան միւսը, այնպէս՝ որ ոչ ոք չէր կարողանում յաղթել նոքա, նա կտրատում էր շղթաները՝ և գազանական ձայներով զարհուրեցնում լսողներին։ Սոքա բնակում էին քաղաքից դուրս գերեզմանատների մէջ։ Եւ որով հեռև այդ երկիրները լեռնոտ էր, ուստի գերեզմանները փորուած էր լինում լեռների վերայ, որպէս քարայր։ Դոցա մէջ այժմ էլ մարդիկ են բնակւում, բայց այդ դիւահարների երկիրը ոչ ոք չէր համարձակւում ոչ թէ միայն այդ տեղերում բնակուիր, այլ նաև այն կողմի ճանապարհներով անցնեիր։ Մարկ. ե. 20. զու. ը. 26—29։

29. Դատաստանի օրը ոչ թէ միայն մեզաւոր մարդիկը, այլ նաև մեզաւոր հրեշտակները պէտք է դատապարտուին յաւիտենական տանջանքի։ Դեւերը, կարծելով թէ այժմից իսկ պէտք է ուղարկէ իրանց յաւիտենական տանջանքը՝ սարսափած, ակամայ բռնադատուած, դիւահարների մէկի բերանով, երդմնեցնելով Աստուծոյ անունով, աղաչեցին Յիսուսին, ասելով.— «Դու ես Աստուածորդի Յիսուս, վանողդ և ապաշում ենք ժամանակից առաջ մի ուղարկի՛ր մեզ անդունդը, այլ ուղարկի՛ր մարձակայ խոզերի հրամանը, որ այնտեղ բնակուինք»։ Յիսուս՝ կամենալով ցոյց տալ ժողովրդին դեւերի բազմութեան մեծ քանակութիւնը, հարցրաւ,— «Անունդ ինչ է։ Լեգէօն, Հռովմայեցւոց զօրքի այն փոքր անունն է, որ բաղկացած է 6000 մարդիկներից։ Այս-

տեղ զորձ է ածուած մեծ և անարգոշ թուի տեղ։ Դեւերը, երեւում է խիստ շատ էին, որով հետեւ տեղալ-օրուեցան երկու հազարի չափ խոզերի մէջ։ Մատ. ին. 41. մարկ. և. 13. գ. գլուխ. բ. 4. յուգ. 6։

30—32. Ասորի հեթանոսները և Հռովմայեցւոց զորքը բնակվում էին այս գաւառումն։ Հրեաները խոզ էին պահում սրանց վերայ ծախելու համար։ Խոզեր պահելը օրէնքով արգիլուած էր, ուրեմն այդ խոզատէր հրեայն իւր անօրէնութեան արժանաւոր պատիժը ստացաւ։ զրկուելով խոզերից։ Սարսափեցեք չէին հաւատում թէ աշխարհում դեւեր կան։ Ամենք էլ համարում էին թէ լոկ խօսակցութեան ձև է։ Այստեղից սրան տեսնում ենք, որ դեւերը իրապէս դոյութիւն ունին. վասն զի սրան ոչ թէ միայն խօսեցին Յիսուսի հետ, այլ մտին նաև խոզերի մէջ։ Այսպիսի զործողութիւնը չի կարելի խօսակցութեան ձև համարել։ Եւ. ժա. 1—8. եւ. կե. 4. մարկ. և. 13. գուկ. ը. 1—4։

Հոգեւորապէս.—Քրիստոնեները նմանւում են խոզերին, որոնց մէջ մտնելով չարախոհութեան դեւերը, հեղձուցանում են գժոխքի ծովի մէջ։

33. 34. Բոլոր քաղաքը, այս լսելով, դուրս եկաւ նորա առաջը, ոչ թէ շնորհակալութեամբ և պատուով ընդունելու համար, այլ՝ որ խնդրեն նորա հեռանալ իրանց սահմաններից, որով հետեւ վախենում էին պատժուել իրանց մեղքերի շատութեան համար։ Այս մարդիկը իրանց ստացուածքը աւելի նախապատիւ համարեցին, քան մեղքից և գժոխքից ազատող փրկիչն։ Սոցա աշխարհասիրութիւնը այն աստիճան շատ էր, որ բոլորովին կուրացրաւ իրանց աչքերը, չկարողացան տեսնել Յիսուսին զորձած սքանչելի հրաշքները, չկարողացան ընդունել իրանց մէջ իրանց իրական և յաւիտենական երջանկութիւնը, կրօնքը և բարերար փրկիչը։ Ուստի Յիսուս թողեց և վերադարձաւ Կապառնայումն։ Քրիստոս ընդդէմ մեր կամաց չի գալ մեզ մօտ և չի բնակուիլ մեր մէջ։ Ղուկ. ը. 37։

Գլ. Թ.

1. Եւ մտեալ 'ի նաւ անց յայնկոյս՝ եւ եկն 'ի քաղաքն իւր։
2. Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնիւր 'ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։
3. Եւ ահա ասացին 'ի գրագէտսն ասեն ընդ միմս. Հայհոյէ զա։
4. Եւ ծանուցեալ Յիսուսի զմտրհուրդս նոցա՝ ասէ. ընդէ՞ր խորհիք դուք չարիս 'ի սիրտս ձեր։
5. Զի՞նչ դիւրին է ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ արի՛ և շրջեա։
6. Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի Մարդոյ երկրի թողուլ զմեղս, յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՛, առ զմահիճս քո՝ և երթ 'ի տուն քո։
7. Եւ յարուցեալ գնաց 'ի տուն իւր։
8. Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան, և փառաւորեցին զԱստուած՝ զոտիլն այնպիսի իշխանութեան մարդկան։
9. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ հատես զայր մի, զի Նատէր 'ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն, և ասէ ցնա. Եկ զկնի իմ. և յարուցեալ գնաց զկնի նորա։
10. Եւ եղև իբրև բազմեալ էր նա 'ի տան, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի՝ և ընդ աշակերտս նորա։
11. Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր։
12. Իսկ Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա. ոչ է պիտոյ բժիշկ կարօղաց՝ այլ հիւանդաց։
13. Երթայք՝ ուսարուք զի՞նչ է. Զողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս։

1. Կրկին վերադարձաւ Կափառնայումն, որտեղ ընդունեցին նորա շատ սիրով։ Ահա բառը չէ նշանակում իսկոյն։ Մատ. բ. 13. դ. 13. մարկ. բ. 1։

2. Որոյ մտաւ Կափառնայումն՝ մի քանի օրից յետոյ բերին նորա մօտ մի անդամալոյծ դրած մահճի վերայ։ Որովհետև Հրէաստանի կլիման տաք և չոր է, այնպէս՝ որ հարկաւոր չէ ունելի պաշտպանութիւն վատ եղանակների դէմ, վասնզի անձրի կաթիլները բոլորովին տարարակ էին, և այնպէս թէեւ՝ որ նորան

շատ հիշատութեամբ կարելի էր վերառնել այդ կոչումները պատած էին վանդակներով և զրպիցը շինած էին անդամներ կոչումները բարձրանալու և լաւ եղանակներին նոցա վերայ ձեռքերը համար հիւանդին տանող մարդիկը տեսնելով՝ որ անկարելի է ժողովրդեան բազմութիւնից մտանալ, բարձրացրին տան կատուրը և այն տեղից առաստաղը բանալով, հիւանդին իջեցրին Յիսուսի ոտներին մտա Յիսուս՝ որ սրտերի քննողն է, տեսնելով նոցա հաւատքի կատարեալ հաստատութիւնը և հիւանդին կատարեալ զղջումն, ասաց.— «Թողեալ լիցի քեզ մեղք քո»։ Հիւանդը թողութիւն ստանալով, իսկոյն բժշկեցաւ։ Նրանում է՝ որ գրուա հիւանդութեան պատճառը մեղքն է եղած։ Մեղքը չէ մնում առանց պատժի թէ ներկայում և թէ ապագայում։ Մատ. բ. 6. Հա. ե. 12։

3—5. Հրեից մէջ օրէնք ուսուցանող և փարք ինչ ուսումնական մարդկանց՝ ասում էին գրիչ կամ օրինական։ Սրբա շատ հակառակ էին Քրիստոսին և ամենակերպ աշխատում էին նորա վնասմ և սուրբ նշանակութիւնը նուազացնել։ Ժողովրդեան աչքին։ Մատ. իբ. 3. մարկ. ժա. 18. զուկ. ժա. 45. 46։

Հայհոյել նշանակում է Աստուծոյ դէմ մարառաբ Դպիրները համարում էին թէ՝ ինքն իրան Աստուածացնելով հայհոյում է։ Յիսուս ինքնին իմացաւ իւր հոգւոյ մէջ նոցա խորհուրդները։ Խորհուրդների իմացողը Աստուած է, որ կարող է թողել նաև մեղքերը։ Այս՝ թէպէտ մարգարէները ևս Աստուածային յայտնութեամբ իմացած են խորհուրդներ, բայց նոքա ոչ երբէք, Աստուած անունը իրանց վերայ յատկացնելով, չէն յափտակել Աստուծոյ պատիւը։ Իսկ Յիսուս ոչ միայն մարգարէական գաղտնագիտութեան, այլ նաև բժշկականութեան սքանչելիքներով հաստատեց իւր Աստուածութիւնը։ Մուրբ Հայրերը այս խօսքով հերքեցին Արիոս հերձուածողին, որ չէր ընդունում Քրիստոսին ճշմարիտ Աստուած հաւատալ։ Հոր Աստուծոյ։ Եռ. իոր. 25. իոբ. 22. երեմ. 10. Հաւ. ը. 27. յայտ. բ. 23։

6, 7. Մարգոյ Դրդի. տես. Ա. 25. ը. 23—27։

Հիւանդը կատարեալ առողջութիւն ստանալով, առաջ անկողնը և գնաց տուն։ Բացութիւնը տեսաւ, որ նա բոլորը-

վին բժշկուած է։ Այսպէս էլ մենք, եթէ մեր հիւանդութեան ժամանակ կատարեալ զղջմամբ և խոստովանութեամբ դիմենք Քրիստոսին, իսկոյն կբժշկուինք ոչ միայն հիւանդութիւնից, այլ նաև մեղքերից։ Մար. բ. 1-13. ղուկ. ե. 17-26. յով. Հ. Է. 23։

8. Ժողովուրդները Յիսուսին չէին ճանաչում, նորա լոկ մարդ էին համարում նորա, բայց տեսնելով այսպիսի հրաշալի սքանչելիքները զարմանում էին, ուստի և սաստիկ վախենում։ Մարդկանց բառը աւետարանիչը այստեղ գործ է դնում, ցոյց տալու համար, որ Յիսուսից յետոյ մեզաց թողութեան իշխանութիւնը տուած է լինելու նաև եկեղեցականաց, տպա թէ ոչ կարող էր դնել մարդոյ կամ Յիսուսի։ Մատ. գ. 2. ղուկ. ե. 26։

9. Ծուռը, որ տեղ Յիսուս ուսուցանում էր շատ փոքր էր և չէր կարող իւր մէջ տեղաւորել ժողովրդոց այդ մեծ բազմութիւնը, վանորոյ և գնաց ծովի ընդարձակ եղերքը ուսուցանել ժողովրդեան։ Այս միջոցում, երբ անցնում էր, տեսաւ մաքսաւոր Մատթէոսին, որ նստում է նաև Ղևի Ալփեան, նստած իւր հարկահանութեան տեղը՝ հաւաքում էր տէրունական հարկեր անցուդարձանող վաճառականներից և նաւորդներից։ Յիսուս նորա ասաց.— «Եկ դիմի իմ։ Այս խօսքը մի այնպիսի ազդու ներգործութիւն ունեցաւ նորա վերայ, որ նա թողելով իւր ձեռքից գրիչը, դրամը և ամենայն բան՝ գնաց Յիսուսի ետևից։ Մատթէոսը այս տեղ մի քանի բան բաց է թողում, որպէս զի ինքն իրան զոված չլինի։ Այսպէս մաքսաւորը դարձաւ Առաքեալ, Աւետարանիչ և Մարտիրոս։ Երանի նորա, որին Յիսուս կ'կոչէ՝ ասելով.— «Եկ դիմի իմ։ Մարկ. բ. 13-22. ղուկ. ե. 27—29։

10. 11. Մատթէոսը շատ հարուստ էր, որ ուրախացած հրաւիրեց Յիսուսին իւր տունը և նորա համար արաւ մեծ ընդունելութիւն։ Այդ տեղ տեղանի վերայ կային Տիրոջ և նորա աշակերտների հետ միասին Մատթէոսի առաջվան ընկերները՝ մաքսաւորները, և ուրիշ ծանոթներ։ Հրէաները Աբրահամու զաւակ լինելով, իրանք իրանց ազատ էին համարում ամեն տեսակ հարկատուութիւնից։ Եթէ հրէից մէջը հեթանոս Հռովմայեցոց համար մաքսաւորութիւն անէր, համարում էր

նզովեաբ Մատթէոսը Հռովմայեցւոց կողմից նշանակուած էր մաքսաւորս, ուստի և համարելի էր մեղաւոր Փարիսեցիքը ամբաստանական և արհամարհական հայացմունքով գիմեցին աշակերտներին ասելով.— «Ինչպէս կարող է ձեր վարդապետը ընդդէմ Ասուծոյ և ձեզնից աւանդութեան ուսեալ մաքսաւորների հետ։ Մատ. գ. 7—10. զուկ. ժ. 1. ժդ. 7.

12. 13. Յիսուս՝ երբ աշակերտների միջնորդութեամբ, լսեց այս արտուանքը, փոքր միջոցից յետոյ, մի յարմար դէպքում, ասաց.— «Եթէ ես վատ մարդկանց հետ ընկերակցութիւն եմ անում, սրանով կատարում եմ իմ պաշտօնս, վասնզի ես եկած եմ մեղաւորներին, այլ արդարներին չգալով, փրկել։ Յետոյ մերժողական ձայնիւ՝ շարունակեց.— «Գնացէք սովորեցէք Ովսէ մարգարէի այս խօսքը։ Ողորմութիւն կամիմ և ոչ զոհս։ Ղ. 6։ Փարիսեցիքը երկրորդական առարկաների՝ այն է. զոհերի և արտաքին արարողութիւնների վերայ խիստ սաստիկ ուշ դարձնելով, թողում էին գլխաւորները՝ որէ. սէրը և ողորմութիւնը։ Յիսուսի մեղաւորների հետ կենցաղաւորութիւնը սիրոյ և մեծ ողորմութեան գործ է։ Յիսուս սովորեցնում, որ առաքինի նպատակաւ մեղաւորների սիրելը, նոցա հետ կենցաղաւորելը, մեծ ողորմութիւն է քան զոհերը և կոպէկների ընծաները։ Փարիսեցիքը իրանք իրանց արդար էին համարում, իսկ մաքսաւորները իրանց մեղաւոր լինելը յանձն էին առնում։ Վայ նոցա, որ իրանք իրանց արդար համարելով, աշխատում են իրանց յանցանքը թեթևացնելու պատճառներ որոնելը։ Այսպիսիք շատ հեռու են Քրիստոսից։ Եա. ա. 10—20. մատ. իդ. 14. 23. զուկ. ժբ. 9. 14. է. 32. է. 29. 30. ժզ. 15. ա. տիմ. ա. 15։

14. Յայնժամ մատեան առ նա աշակերտաքն Յովհաննու՝ և ասեն. ընդէ՞ր մեք և Փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ոչ պահեն։

15. Ասէ ցնոսա Յիսուս, միթէ մարթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնու՝ մինչ դեռ ցայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի՝ ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն։

16. Ո՛չ ոք արկանէ կապերտ անթափ՝ ի վերայ հնացեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրութիւն նորա՝ ի հանդերձէն,

և ևս չար պատառումն լինի։

17. Եւ ոչ արկանէր դիրեի նոր ի տիկս հին. ապա թէ ոչ տիկքն պատառին՝ և գինին հեղուսի, և տիկքն կորնչիցեն՝ այլ արկանէր գինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին։

18. Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր. դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա՝ և կեցցէ։

19. Յարեաւ Յիսուս՝ և գնաց զկնի նորա աշակերտաւքն հանդերձ։

20. Եւ ահա կին մի տասներեկուստասնամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա։

21. Քանզի ասէր ի մտի իւրում՝ թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ։

22. Իսկ Յիսուս իրրև դարձաւ և եհաս զնա՝ ասէ. քաջալերեաց դուստր՝ հաւատաք քո կեցուցին զքեզ։ և փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ։

14. Փարիսեցիքը, Յիսուսի այս պատասխանի վերայ, սասակ վրդովուեցին, ուստի և Յովհաննու աշակերտներին զրդուեցին, իրանց հետ միաբանելով, հարց առաջարկել Յիսուսին, նորա խօսքով բռնելու համար։ Հաւանական է, որ այդ միջոցում Յովհաննէսը բանտումն էր և աշակերտները ցրուած էին։ Քրիստոս և իւր աշակերտները բոլոր օրինաւորուած պահքերը պահում էին։ Այս պահքս, որ պահում էին, օրէնքով սահմանուած չէր, այլ կամաւոր մի բան էր, որ կամ փարիսեցիքը էին սահմանել և կամ Յովհաննէսն էր սահմանել իւր աշակերտների աւելի ջերմեռանդութեան համար։ Յովհաննու աշակերտները, ինչպէս հասարակ մարդկանց սովորութիւն է, կամենում էին նրանց վարդապետը նախատեսել Յիսուսից, ինչպէս առատ ուրբաթից և խստապրծն ճգնաւորս, փանտրոյց և փարիսեցւոց հետ միաբանուած՝ հարցրին— Ի՞նչ է պատճառը, որ դու քո աշակերտների համար պահք չես սահմանիր, որ նոքա մեզ և փարիսեցւոց նման, մնանեալ պահքի պահելով ազատին։ Սաստիկ զոր հոգեվարքների հետ միաբանողը դատապարտութեան արժանի է։ Մատ. գ. 1. գ. 2. Ժամ. ի. մարկ. գ. 18. գլխ. գ. 20. և. 33. Մր. 12. Յովհ. գ. 23։

16. Քարիսեցւոց պահանջած այս պահքը սգոյ և տրտմութեան նշան էր։ Յիսուսի աշակերտների համար այսպիսի պահքեր պահելը ամենևին անյարմար էր, վասն զի Քրիստոս, փեսայն, լինելով եկեղեցու հաւատացելոց հիւ, պէտք է նոքա ուրախութեան և հաստատեալ հանդէսներ կատարէին, և ոչ սգոյ։ Եկեղեցի Ցուն բառ է նշանակում է ժողով հաւատացելոց։ Երկու տեսակ եկեղեցի կայ—Զինուորական և Ցաղթական։

Զինուորական աւում է կենդանի հաւատացելոց ժողովը, որ զինուորած արդարութեան զրահով՝ պատերազմում է սատանայի, աշխարհի և մարմնոյ դէմ։ Բ. կոր. ժ. 3. 4. եփ. գ. 10—17. ա. տիմ. ա. 18. ա. պետ. բ. 11։

Զինուորական եկեղեցու համար շինուած փայտից, քարից և այլ նիւթերից աղօթատանները, որոնք սրբուած են լինում աղօթքներով, Սուրբ Գրքի ընթերցմունքներով, օրհնութիւններով և Սուրբ մեռոնի օծութիւնով՝ աւում է.—Նիւթական եկեղեցի, Տաճար Աստուծոյ, Տուն Աստուծոյ, Սրբութեան յարկ, Փառաբանութեան տեղ, Հրեշտակաց բնակարան, Մեղաւորաց քաւարան, և այլն։ Մնա. իր. 18. 19. ա. կոր. ժ. 18. ժզ. 19. գործ. ա. 13 14. գ. 1. ե. 25. ի. 8. Հա. ժզ. 4. կոլ. գ. 15։

Ցաղթական աւում է Սուրբ ննջեցեալների ժողովը, որ վերջացնելով աշխարհի պատերազմը, երկնքի կայանում սպասում է փառաց պսակին։ Մատ. ե. 25. 26. բ. տիմ. գ. 7. 8. եբր. ժ. 39. ժբ. 22—25. յայտ. գ. 5—22։

Քրիստոս մինչև որ երկրի մէջ էր՝ շնորհքով և փառքով միացած էր իւր հաւատացեալների հետ, վասնորոյ այդ օրերդ աւում էին ուրախութեան և հաստատեալ օրեր, առաքեալներն էլ աւում էին մանկունք առագաստի, վասն զի նոքա համարձակ մնում է և դուրս էին գալիս Յիսուս փեսայի սենեակը, առագաստը, նորա հետ կենցաղավարում էին, իբրև ընտանի և բարեկամ։ Համբարձումից յետոյ Յիսուս մնաց Զինուորական եկեղեցու հետ միացած շնորհքով, իսկ Ցաղթական եկեղեցու հետ միացած փառքով։ Այս պատճառաւ առաքեալները Զինուորական եկեղեցու համար պահքեր սահմանեցին, որպէսզի նա կարողանայ մարմնոյ ձգտմամբ, աւետարանի հնազանդութեամբ, միանալով

Յիսուսի հետ, յաղթական եկեղեցու մէջ, արժանանալ փառաց պսակին։ Մատթ. 1-3. թիւ. 2. թիւ. 20. յով. ԺԷ. գ. 29. եփես. 32. յայտ. ԺԹ. 7։

16. 17. Յիսուս այս երկու առակներով ցոյց է տալիս, որ ամէն բանի և ժամանակի ունի իւր յարմարութիւնները։ Պէտք չէ հարմարեցնել ժամանակը առանց առնելու, պէտք չէ կասէ նոր կտորը կարկատան չնչել հին հանդերձի վերայ, պէտք չէ ուժեղ գինին ածել հին տիկի մէջ։ Այսպէս էլ ասաց Յիսուս, պէտք չէ իմ աշակերտների վրայ դնել պահոց նոր օրէնքներ՝ մինչև որ նոքա դեռ իրանց հին տկարութեան մէջ են գտնուում, իմ համբառնալուցս յետոյ, երբ նոքա Սուրբ Հոգով կնորոգուին, այն ժամանակ Սուրբ Հոգու ձեռքը, կ՝հաստատեմ նոր օրէնքը, ի միջի այլոց կը սահմանեմ նաև պահոց օրէնքը և աշակերտաց պահեցողութիւնը։ Առաքեալները Սուրբ Հոգով նորոգուելուց յետոյ պահեցին մի քանի պահքեր։ Մատթ. 1-3. գլուխ. Ժգ. 2. 3. թիւ. 9. գ. կորնթ. 5։

18. 19. Մինչդեռ Յիսուս ճառել յետոյ Մատթէոսի տանը նստած խնամում էր պահոց վերայ, այդ միջոցում մի ժողովրդական իշխան, որի անունը Յայրոս էր, Հայերէն թարգմանուում է ճառագայթ եկաւ և բնկաւ Յիսուսի առաջը, երկրպագանելով, աղաչում էր օգնութիւն Աստուածային բժշկից իւր երկոտասանամեայ աղջկան բժշկութեան համար, ասելով։— Հնա վերջի բոպէի մէջ է և կարիք է մինչև անդամ փափաքուած էլ լինի, խնդրում եմ Քեզ, ով Աստուածային հրաշագործ, ձեռքդ դնել նոքա վերայ և բժշկեր Յիսուս, առանց ուշանալու, վերացաւ անդիցը աշակերտաց և բազմութեան հետ միասին, գնաց նոքա հետ։ Մատ. Թ. 22—43. գլուխ. ը 41—52։

20—22. Յիսուսութիւնը մի սեռակ հիւանդութիւն է, որ կնոջ ամսական հոսումն ու թէ բնական կարգաւ, այլ հարուածակ հոսում է։ Այս կինը իւր բոլոր ունեցածը ծախելով՝ ոչինչ օգնութիւն չէր ստացած։ Հետևով՝ որ փրկիչը այս երկրումս է, իւր միակ յոյսը դրած նոքա վերայ կամենում էր դիմել նոքա ողորմածութեան, բայց իւր կանացի երկչոտութեան և անմաքրութեան պատճառաւ, չէր համարձակուում այնքան բազմութեան մէջ յայտնել իւր հիւանդութիւնը։ Սարսռալուց հիւանդութիւնից, յաւ հանարեց, ծածուկ ամբոխի միջով անցնել և մտե-

նայ նորա շրջերին, և երբ կամաց ձեռքը դրեց նորա շրջի ծայրին, իսկոյն բժշկուեցաւ, ծածկաբար Յիսուսը կամեցաւ այս կնոջ, այս օրինակելի հաւատը և համաստութիւնը ուրիշներին ևս յայտնի, ասաց.— «Ո՞վ մերձեցաւ յիս։ Կիներ տեսնելով, որ այլ ևս չէ կարող թաքչել, ահ ու դողով ընկաւ նորա առաջը, և պատմեց եղելութիւնը կարգաւ։ Յիսուս սիրով և համակրութեամբ լի դարձաւ դէպ ի նա, ասելով.— Դուստր հաւատք քո կեցուցին զքեզ։ Որա վերայ ախանատես բազմութիւնից շատերը հաւատացին Յիսուսին։ Հաւատով և ջերմեռանդութեամբ Քրիստոսի զգեստը անառես չի մեռաք Մեզանէս Քրիստոսի շորը բռժշկից հիւանդ կնոջ, այնպէս էլ կարող է սրբոց մասունքը Քրիստոսի անունով, Սուրբ Հոգու շնորհքով՝ բժշկել հիւանդութիւնները։ Այս զարմանալու՝ մասունքներբ մեր եկեղեցու մէջ ընդունուած են, իբրև ապրեմ յարգութեան։ Թուս. ժ. 38. 39. բ. օր. իբ. 12. դա. ժ. 19—25. մատ. է. 7. մարկ. ե. 30. 33. գործ. բ. 45—47. գործ. ե. 15. ժբ. 11. 12. դ. թագ. ժգ. 21։

23. Իբրև եկն Յիսուս ի տուն իշխանին, և եառն զմոգհարսն և զամբոխս յայժ։

24. Ասէ ցնոսա. ի բաց գնացէք, զի ոչ եմէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ։

25. Եւ ծաղր առնէին զնա և իբրև էր ամբոխն ի բաց եմուտա, կայաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն։

26. Եւ էր Համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այնս։

27. Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս գՀան եղեանդաբ կոյրք երկոք աղաղակէին և ասէին. ողորմեաց մեզ որդի Դաւթի։

28. Եւ իբրև եկն ի տուն մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. հաւատայք եմէ կարող եմ առնել ձեզ զայդ։ ասեն ցնա՝ այո Տէր։

29. Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. բան հաւատոց ձերոց եղիցի ձեզ։

30. Եւ բացան աչք նոցա և սաստկաց նոցա Յիսուս և ասէ. զգոյշ նայեցէք՝ մի ոք գիտասցէ։

31. Եւ նոքա երեալ Համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։

23. 24. Յայտնին ուներ շատ բարեկամներ, վաստակով և ամբոխը շատ էր հրէից մէջ սովորութիւն էր օրիորդ մեռեալների

համար փոգհարներ բերել տալ, լալկաններ բռնել՝ լսողներին լացացնելու համար։ Առաքեալները մեռեալներին ննջեցեալք էին ասում, որով հետև նոքա վերջի օրումն պէտք է յարութիւն առնեն։ Մինչ էլ առաքեալներից սովորած մինչև այսօր ննջեցեալ ենք ասում։ Ուրեմն մենք քրիստոնեաներս չ՝պէտք է անհաւատների պէս, անցոյս լաց լինելով, քանդել մեր մազերը, որպէս թէ՝ ննջեցեալը առանց յարութեան յուսոյ մեռաւ և կորաւ։ Բ. Թես. գլ. 25. հր. թ. 17. ամ. հ. 16. մատ. թ. 18. գործ. գ. 2. ա. կոր. ժ. 6-18. ա. թես. գ. 13. 15. բ. պետ. գ. 4։

25. 26. Մինչև որ դեռ կենդ հետ խօսում էր, այդ միջոցում Յայրոսի ծառաներից եկին և ասացին.— «Մեռաւ դուստրն քոմի՛ ինչ աշխատ առնէր դրա։» Բշուտ հայրը մեռց կայծակնահար կանգնած, բայց կենդանի պարգեւատու Յիսուսը, ասաց.— «Մի երկնչի՛ միայն հաւատայ և կեցցէ։» Երբ եկան տունն, հեռացրաւ սենեակից ամբոխը՝ միայն թողեց ննջեցեալի մօտ ծնողները և իւր երեք աշակերտներին՝ Պետրոսին, Յակովբին և Յովհաննէսին, իբրև վկայներ, ապա բռնեց հանգուցեալի ձեռքից և ասաց.— «Տալիթայ կում՝,-աղջիկ դու՛ քեզ ասեմ, արի։» Մեռածը այն րոպէին վերկացաւ և սկսեց մանդալ Որով հետև այդ աղջիկը երկար միջոց, իւր հիւանդութեան պատճառաւ, ոչինչ չէր կերած, վասնորոյ և Յիսուս հրամայեց տալ ուտեր։ Ամենքը սարսափեցան, տեսնելով մի այսպիսի մեծ հրաշք։ Այս համբաւը տարածուեցաւ Գալիլեայի բոլոր շրջակայքում, ուստի և սկսեցին Յիսուսին Մեսիայ անուանել, որով հետև մինչև այդ ժամանակ մարգարէ էին ճանաչում Յիսուս երեք մեռեալներ յարութիւն տուաւ, մէկը սա էր, միւսը՝ Նային քաղաքի պատանին, իսկ երրորդը՝ Դաղարոսն էր։ Մարկ. հ. 35—43. դուկ. է. 11. 15. բ. 42. 57. յով. Հ. ժա. 1—45։

27—31. Երբոր Յիսուս դուրս եկաւ ժողովրդապետի տանից և կամենում էր գնալ իւր տունը, որ վարձքով բռնած էր Կափառնայումի մէջ։ Ճանապարհին նոքա հետևից ընկած, աղաղակում էին բաց աչքով, երկու կոյրեր.— «Ողորմեա՛ մեզ որդի Դաւիթի։» Յիսուս երկար միջոց ոչինչ չի պատասխանեց, որպէս զի, նոքա իրանց աղաչանքը երկարացնելով, զօրանան հաւատքի

մէջ։ Երբոր հասաւ առն, կոյրերը նորա հեռուէրով, մօտն Յիսուսի սենեակը, Յիսուս հարցրեց։— «Հաւատայք եթէ կարող եմ առնել ձեզ զայդ»։ Նոքա ջերմ հաւատով՝ ասացին։— «Այո՛ Տէր»։ Յիսուս՝ իւր ամենասուրբ ձեռքով շօշափելով, ասաց։— «Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ»։ և իսկոյն սկսան տեսաներ Յիսուս նոցա ասասեց, որ ոչ աչի չէյայտնեն այս, որպէս զի չ՝հաչակուի իւր փառքը, բայց նոքա ընդհակառակը հաչակեցին այն՝ բոլոր երկիրներում։ Այսպէս էլ պէտք չէ փառամոլութեան նպատակաւ հաչակել մեր բարի գործքերը։ Փառասիրութիւնը շատ անգամ մարդին կորստեան է մատնում։ Բարի գործքը ինքն ըստ ինքեան փառաւորուած է։ Եթէ ուզում ես փառաւոր լինել բարի գործքերիդ թիւը աւելացրու։ Մաքով կուրացածը՝ եթէ ջերմ սիրով դիմէ դէպ՝ի Յիսուսի լոյսը, իսկոյն կ՝բժշկուի։ Մատ. 16. յով. Հ. ը. 12։

32. Եւ յիսանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա զայր մի՝ համր դիւահար։

33. Եւ յիսանել դիւին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ երբէք երևեցաւ այսպիսի ինչ յիսրայէլի։

34. Իսկ Փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։

35. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս, ուսուցանէր՝ ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս՝ ի ժողովրդեանն։

36. Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ՝ ի նոսա, զի էին աշխատեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։

37. Ցայնժամ ասէ ցաշակերտսն իւր. Հունձք բազումք են՝ և մշակք սակաւք։

38. Արդ, աղաչեցէք զՏէր հնձոց՝ զի հանցէ մշակս՝ ի հունձն իւր։

32—33. Երբոր կոյրերը լուսաւորուած դուրս եկին Յիսուսի սենեակից, իսկոյն բերին նորա մօտ մի՝ ծնունդեան իրաւ, որ նաև համր էր։ Թուրքի առ հասարակ լինում են նաև համր, որով հեռաւոր չկարողանալով լսել՝ չեն կարողանում կրթուել խօսակցութեան մէջ։ Այս մարդիս լռութիւնը խափանուած էր գերեներ-

գործութիւնից, գեր դուրս գալով, իսկոյն սկսեց խօսել Համբոյ ժողովրդներին զարմացած վկայեցին, որ այսպիսի հրաշքներ մարգարէներից ոչ ոք չէ գործել, իսկ Նախանձոտ փարիսեցիքը չկամեցան Յիսուսի մարգարէ անգամ ընդունել։ Նախանձով, կրքերով, ապականուած կեցուցա հոգիները, միշտ մաքառում են արդարութեան դէմ։ Նախանձոտը չի կշռիր, չի չափիր, չի տեսնիր, չի լսիր, չի ամաչիր, չի խնայիր, նա միշտ կաշխատէ չարեր, զրպարտութիւններ կուսակիր անմեղների և արդարների վերայ։ Նա որի մէջ բուն հաստատուած է նախանձութեան դեր, նորա ականջները՝ խլացած են լինում Աստուածային օրէնքս լսողութեան մէջ, նորա լեզուն պապանձուած է լինում Աստուծոյ գովաբանութեան մէջ։ Այսպիսիք եթէ հաւատով, հեղ և խոնարհ սրտիներկայանան Յիսուսին՝ իսկոյն կրժշկուին։ Աստուածային արդարը կարող է հրապէս գործել նաև մեր մէջ, եթէ միայն մեր կամքով նորա ընդդէմ չմաքառինք։

34. Ինչպէս հրեշտակները բաժանուած են զանազան դասակարգեր՝ այն է. Հրեշտակք, Հրեշտակապետք, Սերովբէք, Քերովբէք և այլն, այնպէս էլ դեւերը ունին մեծ և փոքր կարգեր։ Դեւերի իշխանը սատան է Սատանայ։ Փարիսեցիքը կամենալով Յիսուսի այս հրաշքը սատի, վերաբերեցին դեւերի իշխանութեան, որպէս թէ փոքր դասակարգի դեւերը հնազանդուելով մեծ դասակարգին, նոցա հրամանաւն են դուրս գալիս մարդիկներից։ Դեւերը միշտ աշխատում են մարդկանց ազգի կրաստեան, եթէ մեծ դեւն հանէ փոքր դեւին մարդիկներից, այդ նշանակում է մարդկանց բարիք առնել, որ այս ընդդէմ է դեւերի իշխանութեան։ Ապա ուրեմն Յիսուսի հրաշքը վերաբերում է Նորա Աստուածայնութեան և ոչ դեւերի իշխանութեան։ Մատ. ա. 20. ժ. 25. ժբ. 24—27։

35. Երջում էր Գալիլեայի մէջ։ Մատ. գ. 13. դ. 22։

36. Դպիրները և փարիսեցիքը ոչ թէ հով եւներ էին ժողովրդեան համար, այլ խակապէս գայլեր, նորա փոխանակ իրանց ուշադրութիւնը արածացնելու արդարութեան պարարտ դաշտերի մէջ, կեղծաւորութեամբ, շահասիրութեան նպատակաւ նրանց յափշտակում էին։ Յիսուս տեսնելով՝ որ ժողովուրդը զուրկ հո-

գնոր և մարմնաւոր հով իւներից, թափառում է խաւարի և մեղաց մէջ, տանջւում է ագքատութեան և քաղցածութեան կարօտութիւնից, ցաւելով նոցա համար՝ կամենում է որ ունենային բարի հով իւներ։

37. 38. Այս առակով Յիսուս ցոյց է տալիս, որ քարոզութեան կարօտ ժողովուրդը շատ է, բայց անձնազոհ հով իւները շատ քիչ են։ Արդարև, շատ զարմանալի է, Յիսուսից մինչև այսօր, որ գրեթէ երկու հազար տարի է, մի և նոյն Յիսուսի գանգատը լսւում է մեր մէջ, մեծ և փոքր, հարուստ և ագքատ, իմաստուն և յիմար միայն պատմում են տգէտ և անարդ հով իւների գործքերը և նոցա ծաղրածելով, արհամարհում են, կարծես մեր ժողովրդեան աւուած է միմիայն գանգատել, բամբասել, հայհոյել, իսկ գործել բնաւ ոչ։ Նա սառն և անտարբեր է վերաբերւում դէպ՝ի Յիսուսեան այս մեծ պահանջը, նա չէ կամենում այս պահանջին վերջ տալ, նա չէ կամենում համոզուել՝ որ ժողովրդի լուսաւորութեան և յետադիմութեան պատճառները կետրոնացած են իրանց հով իւների առաջնորդութեան մէջ։ Եթէ հով իւրխելք և զարգացած մարդ է, նա իւր ոչխարները արածացնում է ապահով և ծաղկաւէտ դաշտերի մէջ, իսկ եթէ նա տխմար է, արածացնում է վտանգաւոր տոր և անջուր անապատներում, ուր մի կողմից գազաններն են յափշտակում, իսկ միւս կողմից քաղց և ծարաւն է սպանում նոցա։

Լուսաւորեալ պետութիւնները թէև մեզանից շատ ուշ ընդունեցին քրիստոնէութիւնը, բայց շատ շուտ համբուրելով ընդունեցին Յիսուսեան այս պահանջը։ Նոքա հիմնեցին ընկերութիւններ, որոնց պաշտօնն է պատրաստել մտաւորապէս, բարոյականապէս և բարոյապէս զարգացած ընտրեալներից գերընտիր հով իւներ, հոգաբ, ապահովել նոցա վիճակը ամենապահով և ամենատաւտ ռոմբիներով, այնպէս որ նոքա բոլորով ին ապահով և ազատ ամէն տեսակ հոգատարութիւններից, կարողանան միամիտ սրտիւ միայն գործել ազգային յառաջադիմութեան սուրբ գործի մէջ։ Նոքա գտին այս գործի մէջ մեծ օգուտներ՝ յառաջադիմութիւն, լուսաւորութիւն, ազատ կեանք և երջանկութիւն տեսին ծաղկուած Յիսուսեան այս հրաշալի պահանջի

մէջ։ Բայց մենք դեռ գանգատուում ենք, դեռ չենք զարթնացել, դեռ խոր քնի մէջ խորդում ենք, դեռ մեր կոպէկները պինդ բռնած՝ ծաղր ենք անում, արհամարհում, այս պահանջի անհրաժեշտութիւնը, դեռ չենք համոզուում որ կեանքը, երջանկութիւնը, լոյսը և խաղաղութիւնը, յառաջադիմութիւնը և յետադիմութիւնը կախուած են այս հովիւների յառաջադիմութիւններից, բայց երբ ընկնում ենք խաւարի և կորստեան մէջ, միայն այդ ժամանակն ենք ցաւերով ըսլես, որ մեր երջանիկ օրերում, մեր ուժեղ ժամանակներում չիրագործեցինք այս սուրբ միտքը։ Լացը, սուգը, գանգատը, այլ ևս չեն կարողանում մեզ օգնել, մենք կորչում ենք անոյշ և մեր կեանքը վերջանում է խաւար անդնդի մէջ։

Գոնէ այժմ զարթնանանք այս անտարբերութեան մահացուցիչ քնից, գոնէ այժմ սարսափելի դժբաղդութիւններից, մեծամեծ կորստներից յետոյ՝ ուշ դարձնենք այս Աստուածային պահանջի վերայ։ Լուսաւորեալ ազգերի նման, հիմնենք ընկերութիւններ Ազգիս Վեհափառ Հայրապետի Նախագահութեամբ, թող այդ ընկերութիւնները ծիլ թափեն պատրաստել ժամանակի համապատասխան մշակներ, թող ազգը զոհէ իւր կեանքը, իւր ոյժը և պտակէ այս սուրբ նպատակը, թող Աստուած լուսաւորի մեր միտքը, զարգացնէ մեր կարողութիւնները, որ կարողանանք հասկանալ այս փրկարար նպատակի խորհուրդը և պատրաստել գործող մշակներ երկնաւոր հօր հնձի համար։ Սա. Ե. Գ. զուի. ժ. 2. յովհ. գ. 25։

ԳԼ. Ժ.

1. Եւ կոչեալ առ ինքն զերկոտասան աշակերտսն իւր, եւ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ախտս՝ եւ զամենայն հիւանդութիւնս։
2. Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ, առաջին Սիմովն՝ անուանեալն Պետրոս եւ Անդրէաս եղբայր նորա։
3. Յակովբոս Զեբեդեայ, եւ Յով հաննէս եղբայր նորա. Փիլիպպոս, եւ Բարթուղիմէոս. Թովմաս. եւ Մատթէոս մաքսաւոր. Յակովբոս Արփեայ եւ Ղեբէոս՝ որ անուանեցաւ Թադէոս։
4. Սիմովն Կանանացի. եւ Յուդա Իսկարիովտացի՝ որ և մատնեաց զնա։
5. Զսոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս, պատուիրեաց նոցա՝ եւ ասէ. 'ի ճանապարհս հեթանոսաց մի երթայցէք, և 'ի քաղաքս Սամարացւոց մի մտանիցէք։
6. Այլ երթայք առաւել առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի։
7. Եւ երբեւ երթայցէք, քարոզեցէք և ասացէք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։
8. Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք, ձրի առեալ՝ և ձրի տուք։

1. Յիսուս միանգամ բոլոր գիշերը աղօթքով անցկացնելից յետոյ՝ առաւօտեան դարձաւ աշակերտներին մօտ և տեսաւ, որ այստեղ ամէն կողմից հաւաքուած են մեծ բազմութիւն ժողովրդոց, ասաց — «Հունձք բազում են՝ և մշակք սակաւ։ Սրանից յետոյ կանչեց իւր մօտ լիրան զլուխը իւր ութսուն և չորս աշակերտներին և նրանցից տասն և երկուսին, Իսրայէլի տոհմերի թուով, ընտրեց և անուանեց առաքեալք, իսկ մեծագոյն 72-ին թողեց աշակերտու թեան մէջ։

Առաքեալներն օր թէ միայն գնացին և քարոզեցին, այլ նաև Քրիստոսի եկեղեցւոյ մէջ նախորդներ եղին։ Նրանք գրեցին կանոնական գրքեր, հիմնեցին եկեղեցիք, ձեռնադրեցին եպիսկոպոսներ, քահանայք, սահմանեցին եկեղեցու մէջ կարգ ու կանոններ և սուրբ խորհրդոց արարողութիւններ, միով բանիւ ցոյց տուին նաև հրաշագործութիւններով՝ որ իրանք ուղարկուած են։

Աստուածանից։ Մատ. գ. 23. 24. մարկ. գ. 13-20. դուկ. գ. 13-18. ա. կոր. ժբ. 28. եփ. բ. 20. յայտ. իա. 19. 20։

2—4. ա. Պետրոսի նախնական անունը Սիմոն էր, որ Եբրայեցերէն ստուգաբանվում է Հնազանդ։ Յիսուս փոխեց դրա անունը և անուանեց Կեփաս, որ Եբրայեցերէն ասւում է Պետրոս, և մեր մէջ ստուգաբանւում է վէմ, նորա բնութեան քաջութիւնը և հաստատութիւնը ցուցանելու համար։ Ճշմարիտ է որ Պետրոսը Քրիստոսի մահից առաջ երբեմն անհաստատ և դիւրազրգիռ բնութեան տէր մարդ էր, բայց յետոյ դարձաւ շատ հաստատ և ժրաջան բնութիւն ունեցող մարդ։ Սա քարոզեց Հրէաստանում, Դամիրքում, Պոնտոսում, Փռիգիայում, Գալատիայում, Ասորոց Անտիոքում և բոլոր Բաբիլոնում։ Սա գրեց ա. և բ Պետրոսի թղթերը և Քրիստոսի անուանը համար շատ չարչարանքներ կրեց մինչև անգամ գլխիվայր խաչուեցաւ Ներոն Կայսրից Հռոմում։ Մատ. իր. 70. յով հ. ա. 42. բա. 18։

բ. Անդրէասը մականուամբ ասւում էր նաև Սիմոն Պետրոսի եղբայր, սա առաջ Յով հաննէս Մկրտչի աշակերտ էր, և ինքն Բեթսայիդայ քաղաքից։ Անդրէաս Յունարէն է, ստուգաբանւում է զօրեղութիւն։ Խրայէլացիք, Մեծ Ալէքսանդրի ժամանակ Յունաց իշխանութեան տակ լինելով, սովորած էին զործածել Յունական անուններ։ Սա քարոզեց Յունաստանում, Բիւզանդիայում, (Կոնստանտինոպօլսում) և Պարսաս քաղաքում, ապանուեցաւ կախուած խաչից։ Յետոյ մարմինը բերին և Կոնստանտինոպօլսի առաքելոց տաճարում թաղեցին։ Յով հ. ա. 37-40։

գ. Յակովբ Եբրայեցերէն է, ստուգաբանւում է խաբող։ Սա ասւում էր մեծ, որ Բասանիայի մէջ առաքելութիւն արաւ, առաքելոց մէջ սա եղև առաջին մարտիրոսը, որ սրով սպանուեցաւ Երուսաղէմի մէջ Հերովդէս-Ագրիպա թագաւորից։ Գործ. ժբ. 2։

դ. Յով հաննէս թարգմանւում է շնորհաւոր և ողորմած։ Սա Զեբեդեայի որդի մեծ Յակովբոսի եղբայրն էր, որ ասուեցաւ սիրելի աշակերտ Յիսուսի։ Գրեց Յով հաննու Աւետարանը, Կաթուղիկեայց երեք թղթերը և Յայտնութիւնը։ Քարոզեց Սիրիասում, Պատմոսում և իւր սեփական մահով փոխանակուեցաւ։ Յակովբոսին և Յով հաննէսին Յիսուս անուանեց Բոանէրգէս, այսինքն որոտման որդիք, որով հետև դրա ջերմեռանդ և որոշ կերպով էին մեզ բացատրվում։ Ա. յով հ. ա. 8.10. բ. 4.9. գ. 8.15. դ. 20. և այլն։

ե. Փիլիպպոս Յունական անուն է ստուգաբանուում է՝ սիրող երիվարաց։ Սա Բեթսայիդայից էր՝ որ գրեթէ պատերազմական երիվար դարձաւ Քրիստոսի համար, խստապարանոց Հրէից դէմ։ Սա քարոզեց Ասիայում, Վրդիայում, Փռիգիայում և Երապոլի մէջ գլխիվայր խաչուած սպանուեցաւ։ Սորա մարմինը բերին և Պոլսատնտինոպոլսում թաղանեցին զանազան կողմեր։

զ. Բարթուղիմէոս բառը կազմուած է երկու բառից, Բար՝ Սրբայեցերէն ասւում է, որդի՝ այն է. Թուղմոսի որդի։ Սա յայտնի է Նաթանայէլ անունով, որ խաչուեցաւ Հայաստանում Սանատրուկ թագաւորից։ Մարկ. ժ. 46։

է. Թովմասը Յունարէն է, թարգմանուում է՝ երկրորդակ։ Սա երկրորդակ ծնուեցաւ։ Քարոզեց Հնդկաստանում, Հայաստանում, Պարթեւաց, Մարաց, Պարսից, Եթովպացւոց (Հաբեշստան) և Հնդկաստանում, սպանուեցաւ խաչուած Նեռերով։ Դերեզմանը մինչև այսօր մեծ ուխտատեղի է Բաղամիտիս քաղաքում։ Սորա եղբայրն է Հայաստանի Լուսաւորիչ Թադէոս առաքեալը։

ը. Մատթէոս Եբրայեցերէն ստուգաբանուում է Տէրի պարգև, սա ասւում էր նաև Ղեւի Ալփեայ։ Մարկոսը և Ղուկասը սորա մաքսաւոր լինելը չեն յիշում, միայն ինքն է իւր մաքսաւոր լինելը յանձն առնում։ Սա քարոզեց Հրէաստանում, Պոնտոսի Ծովի եզերքում և Միւռմինայ քաղաքում, այրուելով սպանուեցաւ։

թ. Յակովբոս—Ալփեայն Մատթէոսի եղբայրը է, այլ ասւում է Տեառնեղբայր, վասն զի սորա Հայրը Ալփէոսը, որ ասւում էր նաև Կղէոպաս Աստուածահայր Յովսէփի եղբայրն էր։ Սա Մեծ Յակովբոսից որոշուելու համար, ասուեցաւ նաև փոքր։ Սա էր առաջին Եպիսկոպոսը Երուսաղէմի մէջ և գրեց Յակովբու թուղթը և սպանուեցաւ Հրէաներից, Տաճարի գագաթից վայր ձգուելով և քարկոծուելով։ Մատ. ա. 16. Մարկ. ժ. 40. յով. Հ. ժթ. 25. Գաղ. ա. 19։

ժ. Ղեբէոսը, որ ասւում էր նաև Թադէոս, թարգմանուում է զոյժոդ։ Սա փոքր Յակովբայ եղբայրն է, որ իւր եղբօր անունով զոյժոդ։ Սա գրեց Յուդայ թուղթը ասուեցաւ նաև Յուդայ Յակոբեան։ Սա գրեց Յուդայի թուղթը և քարոզեց Մարատան, Պարսկաստան, Հայաստան, և նահատակուեցաւ Ուրմի քաղաքում։

Ժա. Սիմոնն Կանանացին Գալիլիացւոյ Կանա քաղաքին էր։ Ոմանք եկեղեցւոյ վարդապետներից հաստատում են, որ սա այն հարսանիքի տեսան էր, որտեղ Յիսուս ջուրը գինի փոխարկեց։ Սա տեսնելով այս հրաշքը՝ Թողեց իւր հարսը և գնաց Յիսուսի ետևից։ Սա ասուեցաւ նաև նախանձայոյզ իւր նախանձաւորութեան համար, և կամ թէ Կանա գղեակը, որով հետև թարգմանւում է նախանձայոյզ, դորա համար նորա մէջ ծնուածներն էլ, կարելի է այդ անունով ասւում էին նախանձայոյզ։ Սա ևս խաչուեցաւ։ Ղուկ. գ. 15. յով հ. բ. 1. գործ. ա. 13։

Ժբ. Յուդա Իսկարիովացի։ Ինն՝ թարգմանւում է մարդ, և Կարիովթ—վարձկան, այն է. վարձկան մարդ։ Սա իւր տէրը ծախեց երեսուն արծաթով՝ այն է. (25 ռուբլի. 50 կոպ։) Յես. ժէ. 15. մատ. իզ. 15. 47—49. ղուկ. իբ. 47—48։

5. Քրիստոսից 721 տարի առաջ Ասորեստանի Սարմանասար թագաւորը Իսրայէլացիների տասը ցեղը գերի տարաւ, իսկ ժողովրդի ցած մարդիկը թողեց իրանց երկրումը, և դոցա հետ խառնեց մի քանի հեթանոս ազգեր, որպէս զի երկիրը դադարկ չմնայ։ Ուստի Սամարիայի դադարկ տներումն սկսեցին կռապաշտներ բնակուիլ, մնացած Իսրայէլացիներն էլ դոցա հետ միանալով կոչուեցան Սամարացիներ։ Ի. թագ. ժէ. 1—33։

Առաքեալների ընտրութիւնից բաւական միջոց անցնելից յետոյ, Յիսուս նոցա երկուերկու ուղարկեց քարոզութեան համար և պատուիրեց Աստուծոյ արքայութիւնը առաջ քարոզել հրէաների մէջ և ապա (յարութիւնից յետոյ) քարոզել նաև հեթանոսների մէջ։ Մատ. իե. 24. իբ. 19. մարկ. գ. 13—19. գ. 7—11. ղուկ. գ. 12—19. թ. 1—6։

6—8. Յիսուս հրէաներին անուանեց կորած ոչխարներ, որովհետև մոլորուած և հեռացած էին Աստուածանից։ Եր. ժ. 6. 17. եզ. լգ. 5. 6. մատ. բ. 1. 2. ա. պետ. բ. 25։

Առաքեալները Յիսուսից ստացան հրաշագործութեան շնորհքը, որով հետև Աստուծոյ պարգևը չէ կարող համակշռուիլ ոչ մի սրբութեան, առաքինութեան, և աշխարհական ընծաների հետ։ Յիսուս Առաքեալներին բժշկութեան իրաւունք տալով հաստատեց հիւանդաց օծումն ասուած եկեղեցու խորհուրդը։

Մարկ. գ. 13. ժգ. 18. զուկ. դ. 41. գործ. իբ. 8. յակ. ե. 13—16։

Որով հետև Հրեից մէջ մարգարէների ժամանակից առանձնութիւն կար ՀԻԹԵՆԵաց իւղով օծել Աստուծոյ պատարագին սեղանները, քահանաները, թագաւորները, և մեռեալների մարմինները նոցա պատուելու համար, որ և այս ասում էր մաքրութեան և սրբութեան օծումն, վասնորոյ Սրբազան Առաքեալներն էլ սկսեցին հիւանդներ բժշկելու ժամանակ իւղ զործածել Բայց յետոյ՝ երբ հաւատացեալներից շատերը հիւանդաց բժշկութիւնը, վերաբերելով միմիայն իւղի ներգործութեան, թողեցին ադօթքը և իրանք սկսեցին իրանց հիւանդները օծանել՝ առանց քահանայ կանչելու, վասնորոյ և Յակոբոս առաքեալը, որ Երուսաղէմի մէջ առաջին Եպիսկոպոսն էր, սահմանեց բժշկութեան զորութիւնը վերաբերել Քրիստոսի անուանը և ադօթքի ներգործութեան և ոչ իւղի։ Ես. ը 24—32, մատ. իզ. 7. մարկ. ժգ. 3. ժգ. 1. զուկ. է. 37. յակ. ե. 14։

Եւ որով հետև Յիսուս հիւանդները առանց իւղի բժշկեց, առաքեալներն էլ շատ անգամ առանց օծումի միայն ձեռն դնելով՝ կամ ադօթքով էին բժշկութիւններ անում, վասնորոյ Հայոց եկեղեցին առանց օծումի միայն քահանայի ադօթքով է կատարում այս խորհուրդը, որ ասում է Դիշերային ժամ, վասն զի ոչ թէ իւղն է բժշկութիւն և մեզաց թողութիւն տուողը, այլ ադօթքը։ Երբեմն էլ սրբերի մասունքներով և սուրբ խաչով խաչակնքելով, շատ անգամ հիւանդները ստացած են բժշկութիւն։ Այս խորհուրդս կարելի է շատ անգամ կրկնել, որքան որ հիւանդներ կ'կամենան։ Այս օծման իւղը ոչ թէ Սուրբ Մեռոնի իւղն է այլ առանձին իւղ է, որ քահանաները օրհնում են և գործածում, երբ հարկաւորում է։ Դ. թագ. ժգ. 21—23. մատ. թ. 20—23. գործ. ժԹ. 12։

9. Մի՛ ստանայք ոսկի՝ և մի՛ արծաթ՝ և մի պղինձ՝ ի գոտս ձեր։
10. Մի՛ պարկ՝ ի ճանապարհին և մի՛ երկուս հանգերձս մի՛ կօշիկս մի՛ ցուպս, զի արժանի է մշակին կերակրոյ իւրոյ։
11. Ցոր քաղաք մտանիցէք կամ՝ ի գեղս, հարցանիցէք թէ ո՞ է՝ ի նմա արժանի, և անդ լինիջիք՝ մինչև երանիցէք անտի

12. Եւ իբրև մանիցէք 'ի տունն, ողջոյն տայջիք նմա և ասասջիք, ողջոյն տանս այսմիկ։
13. Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վերայ նորա, ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։
14. Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ և ոչ լուիցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք 'ի տանէն կամ 'ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց։
15. Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։
16. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց։ եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս, և միամիտք իբրև զաղաւնիս։
17. Զգոյշ լինիջիք 'ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ յատեանս, և 'ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ։
18. Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցեն զձեզ վասն իմ՝ 'ի վկայութիւն նոցա և հեթանոսաց։
19. Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի՛ հոգայցէք՝ թէ որպէս կամ զի՞նչ խօսիցիք։ զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։
20. Չի՛ ոչ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ։
21. Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ, և Հայր զորդի և յարոնիցեն որդիք 'ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա։
22. Եւ եղիջիք ատելեալք յամենեցուն վասն անուան իմոյ, իսկ որ համբերեսցէ խսպառ նա կեցցէ։

9. Այս խօսքով Յիսուս արգելում է արծաթասիրութեան և փառասիրութեան նպատակաւ հաստատութիւն ժողովելը, իսկ հարկաւորութեան համար, իբրև պաշար, ունենալը չէ արգելուած, ինչպէս և Յիսուս ունեցած է արկղ, որից կառաւարուել է ինքն և իւր աշակերտները։ Ղուկ. թ. 3. յով. Հ. ժգ. 29։

10. Պարկ նշանակում է՝ ուսպակ կերակրի համար։ Յիսուս ունեցած է երկու հանդերձ՝ նեղքեւից անկար պատմուճանը, իսկ դրսեւից նորա ծածկող հանդերձը, բայց այս խօսքով նա արգելում է փափկութեան նպատակաւ երկու ձեռք հանդերձ ունենալը։ Յով. Հ. ժթ. 23։

Կոշիկը նշանակում է հոգաթափ։ Ցայտնի է, որ առաքեալները

Յիսուսի Համբարձումից յետոյ անգամ հողեթափներ էին հագնում։ Ղուկասը Տիրամօր պատկերը նկարագրելու ժամանակ ձեւակերպեց Տիրամօր գրկում հողեթափներ Յիսուսի ոտների վերայ՝ Դոբ. ժբ. 8։

Ցու�ը՝ գաւազանն է։ Յիսուս պատուիրում է Ճանապարհին գործածելու համար ունենալ միմիայն մի գաւազան և ոչ երկուսը, իբր թէ՝ առաջինը կոտրելու ժամանակ գործադրել երկրորդը։ Քրիստոսի դիտաւորութիւնը՝ այն է. որ նոցա Ճանապարհի ծախքը պէտք է քաշէ ժողովուրդը։ Մարկ. զ. 8։

Արդարև ամենայն ժողովրդի սեպուհ պարտքն է հոգալ իրանց քահանայից և եկեղեցականաց ապրուստը։ Այն ժողովուրդը՝ որ ուշ չէ դարձնում իրանց հոգեւորականաց վիճակի ապահովութեան համար, մեղը նոցա անիծում է։ Բայց աւելի անէծքի և դատապարտութեան տակ են այն եկեղեցականները, որ իրանց պաշտօնին նպատակը շինում են ժողովրդից փող հաւաքելը։ Սա. ժզ. 10. 11. եզ. լդ. 2—10. ա. կոր. թ. 7—14. գաղ. զ. 6. ա. տիմ. զ. 3. է. 18. ա. պետ. է. 2։

11. Պարկեշտ և երկիւղած մարդու տունը պատուեցէք և նոցա մօտ մնացէք, որպէս զի տնէ տուն փոխելով ձեր ժամանակը զուր չանցնէք և պատճառ չդառնաք զրախօսութեան։ Այս մի և նոյն պատուէրը տուաւ նաև եօթանասուն աշակերտաց։ Ղուկ. ժ. 7։

12. 13. Ողջոյն՝ նշանակում է խաղաղութիւն։ Առաքելոց սովորական ողջոյնի կերպը այս էր.— «խաղաղութիւն տանս»։ Առաքեալների տուած խաղաղութիւնը ոչ թէ լոկ խօսք էր, այլ իրականութիւն էր, այնպէս որ արժանաւորները ստանում էին երկնային շնորհքներ, իսկ անարժանների տուած խաղաղութեան շնորհքները վերադառնում էին կրկին դէպ 'ի առաքեալները, այնպէս որ դրա նոր զօրութիւն ստացած սկսում էին գործել առաւել եռանդով։ Սաղ. լդ. 13։

14. Երկու անգամ պէտք է թօթափել ձեր ոտների փոշիները՝ մէկը քաղաքի փողոցի մէջ, ասելով.— Բայց զայս գիտացէք զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ։ Միւս անգամն էլ քաղաքից դուրս։ Մի և նոյն պատուէրը տուաւ նաև եօթանասուն

աշակերտաց։ Այս առնելով՝ ցոյց էին տալիս նոցա՝ իրանց մեղքի մեծութիւնը։ Եզեկ. 13. գլուխ. թ. 4. ժ. 10. 11. գործ. գլ. 51. ժ. 6։

15. Թէպէտ այդ հեթանոս քաղաքների բնակիչները այնչափ չար և անառակ էին, որ Աստուած նրանց բոլորովին կործանեց, բայց հայհոյողները, աւետարանի լսող և չկատարողները նրանց ցիր աւելի պատիժ պէտք է ընդունեն դատաստանի օրում։ Մատթ. գլ. 24. 25. մատ. գլ. 23. 24։

16. 17. Աշխարհը թշնամի է Քրիստոսին և նորա հետևողներին։ Քրիստոսի հոգւով կենցաղաւորողը պէտք է հալածանքների համբերել։ Թէպէտ Քրիստոսի աշակերտներին, իբրև անզէն և անզօր ոչխարների, միշտ վտանգ սպասում իրանց թշնամի հզօր գայլերից, բայց նորա չ՝պէտք է անհոգութեամբ վազեն դէպ ի վտանգը։ Նոքա պէտք է ոչ միայն իրանց գործնէութեան մէջ լինին հեռատես և խոհեմ, այլ նաև պէտք է լինին միամիտ, անմեղ՝ այնպէս որ թշնամիները չ՝կարողանան հալածանաց նիւթ գտնել նոցա մէջ։ Սնի խորագիտութիւնը նրանում է, որ վտանգը հասած միջոցում, աշխատում է իւր գլուխը ծածկել մի որ և իցէ տեղ, այնպէս էլ թողչուն թողելու ժամանակ՝ ահանջին մէկը գնում է երկրի վերայ, իսկ միւսը խցում է իւր սրտովը, որպէս զի թողչուն ձայնը չլսի և չմատնուի։

Աղաւնու միամտութիւնը նրանումն է, որ նա իւր դէմ գործած ամենայն չարութիւն տանում է համբերութեամբ, առանց կռիւի և շփոթութեան։ Օրինակ, եթէ մէկը յափշտակում է նորա ձագերը և կամ նորա մի որ և իցէ մասս է հասցնում, նա չէ յիշում այդ անիրաւութիւնները, և վրէժխնդիր լինելով՝ դադարում ծնողից, այլ կրկին անգամ ձագեր է հանում։ Այս օրինակներով Յիսուս սովորեցնում է առանց շփոթութեան խոհեմութեամբ և անմեղութեամբ շարունակել իրանց գործողութեան արդիւնաբերութիւնը։ Սովորեցնում է զգուշանալ գաւաճանող խօսքերից, շողոքորթող բարեկամներից և յայտնապէս հալածողներից։ Մատթ. գլ. 25-33. գործ. գ. 40. գր. 19. գ. կոր. ժ. 24։

18. Առաքեալները միշտ դատաւորների առաջ վկայում էին թէ Քրիստոսն է Մեսիան, և թէ մարդկանց փրկութիւնը միայն նորա հաւատի մէջն է։ Այս վկայութիւնը անպտուղ չէր մնում,

բաւական մեծ մարդիկներ, կուսակալներ, թագաւորներ, համբաւեցան և ընդունեցին քրիստոնէութիւնը, ինչպէս, Արգար, Տրդատ Հայոց թագաւորները, Կոստանդիանոսը Հռովմայեցոց և այլն։ Քրիստոսի անուան համար մեռնողները ասում էին վկաներ, մարտիրոսներ։ Գործ. գ. 9—12. ե. 26—31. մթ. 1—14. ԺԳ. 6—12. իգ. 33. ԺԵ. 23. իգ. 24—29։

19. 20. Քրիստոս քաջալերում է առաքելոց գաւառներն և թագաւորների առաջև չկասկածեն և վախենան, ասելով.— «Ի՞նչ պէտք է անենք, որ չլինի թէ մեր սխալ պատասխաններով՝ Տէրի գործին վնաս հասնի»։ Արդարև առաքեալները ոչ միայն գրելու ժամանակն էին ներշնչուած, այլ նաև իրանց ընդհանուր խօսակցութեան և քարոզութեան ժամանակ Սուրբ Հոգուց շարժուած խօսեցան։ Մար. ԺԳ. 11. ղուկ. մթ. 11. 12 իա. 14. 15. բ. տիմ. գ. 16. բ. պետ. ա. 2։

21. 22. Յիսուսի այս խօսքերը շատ հրաշալի կերպով կատարուեցան։ Արդարութեան և Քրիստոսի սիրոյ համար՝ շատ անգամ որդին սպանում է հօրից, եղբայրը եղբօրից, շատ հազարներով քրիստոնեաներ կոտորուեցան։ Առաքեալներից միայն Յով հանէս Աւետարանիչը՝ բնական մահով մեռաւ, միւսները սպանուեցին։ Երանի նորա, ով որ Քրիստոսի սիրոյն համար քաղցր կամքով համբերում է ամէն տեսակ չարչարանքների, հալածանքների, նաև մահուան։ Արդարև նորա համար է պատրաստուած յաւիտենական կեանքի երանական փառքը։ Մթ. է. 6. 7. Մարկ. ԺԳ. 12. 13. ղուկ. իա. 16. 17. երբ. գ. 6. յայտ. բ. 10։

23. Եւ յորժամ հալածեսցին զձեզ 'ի քաղաքիս յայսմիկ՝ փախիջի՛ք յայլ. և եթէ յայնմանէ հալածիցին զձեզ՝ փախիջի՛ք 'ի միւս. ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եկեսցէ որդի մարդոյ։

24. Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ քան զտէր իւր։

25. Նոյնիսկ աշակերտին՝ եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զՏէր իւր։ եթէ զտանուտէրն բէելզեբուղ կոչէցին, որքա՛փ ևս առաւել զընտանիս նորա։

26. Մի՛ այսուհետև երկնչեցի՛ք 'ի նոցանէ. զի ոչ ինչ է 'ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։

27. Զոր ասեմ ձեզ 'ի խաւարի՝ ասացէք 'ի լոյս. և զոր լսէք

յունկանէ, քարոզեցէք 'ի վերայ տանեաց։
28. Եւ մի՝ երկնչիք յայնցանէ՝ որք սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք զոյք առաւել յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել 'ի գեհենի։
29. Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք, դանկի միոջ վաճառին, և մի 'ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց հօր ձերոյ։
30. Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է։
31. Եւ արդ՝ մի՝ երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։

23. 24. Քրիստոսի աշակերտները պէտք է ոչ թէ հալածանքից վախելով, ուրիշ քաղաքների մէջ հանգստութիւն որոնեն, այլ պէտք է իրանց կեանքը պահպանեն Աւետարան քարոզելու համար։ Իսրայէլ բառը շատ անգամ Սուրբ Գրքում գործ է ածուած հաւատացեալների տեղ։ Քրիստոսի գալը երեք նշանակութիւն ունի Սուրբ Գրքում։ ա. Մարդուս մահուան ժամանակը։ բ. Երուսաղէմի կործանման ժամանակ։ գ. Վերջին դատաստանի օրը։ Այս տեղ պէտք է հասկանալ երկրորդ գալստեան համար։ Մատ. գ. 12. ժ. 16. 18. ժբ. 15. իդ. 3. 44. իե. 31. գործ. թ. 25. ժդ. 5. 6։

25. Բէեղ՝ նշանակում է տէր, իսկ զեբուղ—ճանճ։ Հնումը Ակկարոնացիք պաշտում էին մի այնպիսի կուռք, որին զլուխը ճանճի նման էր և կոչւում էր Բէեղզեբուղ՝ այն է. բահաղ ճանճիկ, Տէր ճանճիկ, որպէս թէ նա է պահում մարդիկներին ճանճերի մահաբեր խայթմունքներից։ Այս անունը անարգական անուն լինելով, տալիս էին դևերի իշխանին, որ Սադայէլն է։ Դ. թագ. ա. 1—3. մատ. թ. 34. ժբ. 24. մարկ. գ. 22. զուկ. ժա. 15։

26—28. Եթէ մենք իսկապէս քրիստոնեաներ ենք, աշխարհը բոլորովին չէ կարող մեզ վնասել Հաւատացէք Աստուծոյ, որ աշխարհը կարող է միայն մեր մարմինը սպանանել, բայց մեր բարի նպատակները կենդանի պիտի մնան, նոքա պիտի ծլին, ծաղկին, և պտղաբերեն։ Այո՛ մեր մարմինը կ'մեռնէ, բայց մեր հոգին կենդանի է, նա երկնքի արքայութեան մէջ՝ Քրիստոսի փառաց հետ հաղորդ լինելով, պիտի հանդէպ և ուրախանայ։ Թէ և այժմ աշխարհս Քրիստոսի աշակերտներին խաբեբայ և մոլորեցուցիչ է համարում, և նոցա սպանանելովն էլ համարում է թէ Աստու-

Ծոյ պաշտօն է մատուցանում, բայց կ'գայ մի օր, և համարեայ թէ եկած էլ է, որ նոցա բարի նպատակները կ'յայտնուին, նոցա սերմածները կ'պտղաբերին, և ամենքը տեսնելով կ'համոզուին, որ նորա արդար, առաքինի և Աստուծոյ այգիի մէջ անձնազոհ մշակներ են եղած, վանողոյ և նորա մեծ փառքով և համակրութեամբ պիտի ընդունուին ամէն քրիստոնեայ հոգիների մէջ։

Քրիստոսի աշակերտները պէտք է ամենայն օգտակար և փրկութեան վերաբերեալ ճշմարտութիւնները յայտնապէս և առանց երկիւղի քարոզելով՝ լուսաւորել մարդոց միտքը Դատաստանի օրը ամբարիշտների հոգիները մարմինների հետ միացած պէտք է տանջուին դժոխքի մէջ։ Վայ է մեզ եթէ մենք այժմեանից չենք աշխատիլ նորոգուիլ Քրիստոսի լուսով։ Մատ. ի. 22. մարկ. ժ. 38. ղուկ. ժբ. 50 յով հ. ժզ. 2. գործ. դ. 27. 28. հռ. բ. 17. ա. պետ. գ. 13։

29—31. Ունցիայի չորրորդ մասը ասւում է դանկ, իսկ ութերրորդ մասը տրամ։ Այն ժամանակեայ պղնձեայ փողերը ունենում էին երկու տրամի՝ այն է. մէկ դանկի ծանրութիւն (զրեթէ 2 կոպ)։ Եթէ որսորդները առանց Աստուծոյ կամքի չեն կարողանում այն էժանագին ծնծղուկը սպանանել կամ որսալ՝ միթէ կարելի է Աստուծոյ պատկերի մարդը, որ Աստուծոյ որդեզրական որդի է ասւում, առանց նորա կամքի սպանուիլ և կամ հալածուիլը Իսկ նորա կամքով հալածուող և սպանուողը օրհնուած է, ինչպէս և օրհնուած է նորա կամքը։ Այս խօսքով Աստուած տալիս է մեզ կատարեալ քաջալերութիւն մեր տկարութեան մէջ։ Ցոյց է տալիս իւր անհուն սէրը դէպ 'ի մարդկութիւնը, ցոյց է տալիս իւր մեծ զգՏոզութիւնը դէպ 'ի նորա գործած յանցանքները, ցոյց է տալիս՝ որ նա միշտ մարդկանց փրկութեան համար է հոգում և ոչ նոցա կորստեան։ Ես. բ. 12. 13. դան. ժբ. 2. մատ. ե. 22. ժե. 46. ղուկ. ժբ. 4. 5. երբ. ժ. 31. բ. թես. ա. 3.

32. Ամենայն որ խոստովանեսցիս առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։
33. Եւ որ ուրացցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է։
34. Մի՛ համարիք եթէ եկի արկանել զհաղորդութիւն յերկիր. ոչ եկի արկանել զհաղորդութիւն, այլ զսուր։

35. Քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ, զդուստր ի մօրէ իւրմէ, և զհարսն ի սկեսրէ իւրմէ։
36. Եւ թշնամիք առն՝ ընտանիք իւր։
37. Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի, որ սիրէ զուստր և զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի։
38. Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։
39. Որ զտանէ զանձն իւր, կորուսցէ զնա՝ և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա։
40. Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։
41. Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ, և որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։
42. Եւ որ արբուսցէ միում 'ի փոքրիկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր։

32. 33. Քրիստոսը ճշմարտութեան աղբիւր է, եթէ մենք ճշմարտութիւնը կ'ընդունենք և մարգոց էլ կ'սովորեցնենք Յիսուս էլ մեզ կ'ընդունի Աստծոյ և Հրեշտակների առաջև, բայց եթէ մենք ճշմարտութիւնը ուրանանք և կամ ծածկենք, Քրիստոսն էլ մեզ պիտի ուրանայ։ Քրիստոսին պէտք է դաւանել ոչ թէ լոկ խօսքերով, այլ գործքերով, Քրիստոսի ճշմարիտ հաւատացողը նա չէ, որ հանգստութեան և յաջողութեան մէջ խոստովանում է Յիսուսին, այլ նա է, որ հալածանքի և վշտի մէջ է Քրիստոսի անուանը համար։ Մարտիրոսները՝ ասում էին խոստովանողք, որով հետև դէպ չարչարում և կամ մեռանում էին Քրիստոսի անուան համար։ Որպէս աստեղծն որք 'ի տունջեան ոչ երևին 'ի զիշերի փայլեն, այսպէս և ճշմարիտ առաքինութիւնն որ 'ի յաջողութեան ոչ երևի, 'ի չարչարանս և 'ի վիշտս միայն լուսափայլեցեալ տեսանի։ Ասում է եկեղեցւոյ վարդապետներից մէկը։ Մարի. ը. 38. զուկ. թ. 26. ժբ. 8. յով Հ. ժդ. 6. Հռ. ժ. 9. 10. բ. տիմ. բ. 12. յայտ. գ. 5։

34—37. Կան արդարև այնպիսի քրիստոնեաներ, որոնք միայն անունով են, իսկ գործքով բոլորով են հակառակներ են Քրիստոսին։ Այսպիսեաց ընտանիքը, կինը կամ որդիքը, եթէ կամենան

գործով Քրիստոսի հետևիլ, անշուշտ դոցա մէջ կ'ծնանի վէճ, հակառակութիւն և բաժանումն։ Ուրեմն շատ լաւ է բաժանուիլ ընտանեաց անդամներից, քան բաժանուիլ Քրիստոսից։ Այս դիպուածում էլ՝ պէտք է շատ զգոյշ լինի, որ Քրիստոսի աշակերտները իրանք չլինին պատճառ երկպառակութեան, պէտք է քաղցրութեամբ խրատել հակառակորդներին, յուսալով, որ Աստուած նրանց կ'ձգէ դէպ'ի ապաշխարութեան փրկութիւնը, մանաւանդ աշխատել հեզութիւնը և խոհեմութիւնը ձեռքից չ'տալը։ Միք. է. 6. դուկ. ժբ. 52. բ. տիմ. բ. 25. հռ. ժբ. 18. ա. կոր. դ. 12. 13. կող. դ. 5. ա. պետ. գ. 9—16։

38. Այն ժամանակ սովորութիւն էր, որ խաչի դատապարտուած մարդիկը իրանք էին տանում խաչը, ինչպէս արաւ ինքը Քրիստոս։ Արդարութեան համար մեզ պատահած ամէն տեսակ վիշտ և նեղութիւն պէտք է Աստուծոյ կամքին և կարգադրութեան վերաբերեալ ճշմարիտ քրիստոնեան առանց հաւատանաց չէ կարող անցուցանել իւր կեանքը։ Նա արդարութեան համար կ'ձգնի, կ'կամենայ տեսնել աշխարհի մէջ արդարութեան թագաւորութիւնը, բայց աշխարհը նորա կ'հալածէ, ահա այս հալածանքն է իւր յատուկ խաչը, որոնք առած կ'գնայ Քրիստոսի յետևիցը։ Մեծ երանութեան արժանի է այն Քրիստոնեան, որ պատերազմելով զանազան արգելարիթների դէմ, առած իւր ձեռքը խաչի գրօշը, մտնում է հանգստութեան աշխարհը։ Նորա համար տեսակ տեսակ վշտերը, հալածանքները, չարչարանքները չէն կարող ունենալ դատաստանի ներգործութիւն իւր կեանքի համար, այլ այդ ամէնը կ'ընդունէ նա սիրով և քաղցրութեամբ, իբրև Աստուծոյ ձեռքից ուղարկուած մի բաժակ փորձութեան ջուր։ «Նրանի մարդոց զոր խրատես դու ՏԷր և օրինաց քոց ուսուցանես նմա։» Մատ. է. 14. ժզ. 24. մարկ. ը. 3. 4. դուկ. թ. 23. յով հ. ժբ. ա. ժԹ. 17։

39. Ով որ իւր մարմնաւոր կեանքը, չափազանց սիրում է չէ կարող Քրիստոսին և սիրել, իսկ նա որ իւր մարմնաւոր կեանքը զոհում է Քրիստոսի հնազանդութեան համար՝ յաւիտենական նանութեան մէջ իւր համար երանութիւն է պատրաստում։ Մարտիրոսները՝ Յիսուսի անուան համար մեռնելով, ոչ թէ իրանց

կեանքը կորցրին, այլ անսահմանորին յայտնութիւն ժառանգելու համար։ Մատ. ժգ. 25. զուկ. ժէ. 33. յով հ. ժգ. 25։

40—42. Ով որ Թագաւորի դեսպանը ընդունի՝ մի և նոյնն է թէ Թագաւորին է ընդունում։ Այսպէս էլ Քրիստոսի աշակերտներին, քահանայից, Քրիստոսինը լինելու համար ընդունողը, մի և նոյնն է թէ՝ Քրիստոսին է ընդունում։ Մարգարէ այստեղ պէտք է հասկանալ քարոզիչ քահանայները, որոնք Քրիստոսի խօսքը տարածելով ժողովրդեան մէջ, մեծ վարձք ունին Աստուածանից։ Այդ վարձքից մասնակից են նաև նոքա, որոնք ընդունում են այդպիսի քահանայից։ Եթէ մի բաժակ ջուրը՝ որ մի շատ էժանագին բան է, դարձեալ առանց վարձատրութեան չէ մնում, երբ խմացնում է Քրիստոսի աշակերտներից ամենափոքրիկներին, միթէ՞ դոցա սիրով և համակրութեամբ ընդունողը՝ կ'մնա՞ առանց վարձատրութեան։ Այո՛ այս մեզ համար մեծ արտօնութիւն է, երբ Քրիստոսը մեզ մօտ ներկայ չ'ունենալով, չենք կարողանում մեր սէրը ցոյց տալ նորա, գոնէ նորա աշակերտներին սիրելով, վարձատրուինք Յիսուսից։ Մատ. ե. 15-21. իե. 40-45. զուկ. ժ. 16. յով հ. ժգ. 20։

Գլ. ԺԱ.

1. Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել 'ի քաղաքս նոցա։
2. Իսկ Յովհաննէս իբրև լուաւ 'ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց 'ի ձեռն աշակերտացն իւրոց։
3. Եւ ասէ ցնա. Դո՞ւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք։
4. Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. գնացէ՛ք և պատմեցէ՛ք Յովհաննու, զոր լուայք և տեսէք։
5. Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետարանին։
6. Եւ երանելի է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։
7. Եւ իբրև նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդն զՅովհաննէ, զո՞նդ ելեք տեսանել յանապատին, եղէգա՞ն շարժումն 'ի հողմոյ։

8. Այլ զի՞նչ ելեք տեսանել, մարդ 'ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւասիկ օրք զգեստափուն զգեցեալք են՝ 'ի տունս թագաւորաց են։
9. Այլ զինչ ելեք տեսանել մարգարէ, այո՛ ասեմ ձեզ, և առաւել ևս քան զմարգարէ։
10. Զի՝ նա է՝ վասն որոյ գրեալն է. ահա՛ ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո։
11. Ամէն ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ 'ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ, բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա։
12. Բայց յաւուրցն Յովհաննու Մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի, և բռնաւք յափշտակեն զնա։
13. Քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս մարգարէացան։
14. Եւ թէ կամիք ընդունել՝ նա է Եղիա՝ որ գալոցն է։
15. Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ։

1—3. Ցիսուս այդ պատուէրները վերջացնելից յետոյ՝ աշակերտներին ուղարկեց Հրէաստանի և Գալիլիայի գաւառները քարոզելու համար, ինքն էլ առանձնապէս գնաց Նոյնպէս մի և Նոյն գաւառների զանազան քաղաքներում ուսուցանել, և երբ մտաւեցաւ Նային քաղաքի դրան տեսաւ՝ որ մի այրի կնոջ միամոր որդու, մեռած, մեծ բազմութիւնով տանում են թաղելը մայրն էլ լալով, կոծելով գնում է դագաղի ետևից, և չէ կարողանում որոշուիլ իւր որդուց։ Ցիսուս խղճալով ողորմելի մորը՝ մտաւեցաւ դագաղին, և ասաց.— «պատանի՛ քեզ ասեմ արի՛»։ Այս խօսքի վերայ իսկոյն մեռելը կենդանացաւ և սկսեց խօսել։ Այս Աստուածաշունչ սքանչելագործութեան համբաւը տարածուեցաւ բոլոր Հրէաստանի մէջ։ Եւ երբոր Յովհաննու Մկրտչի աշակերտները լսեցին այս մասին, եկին և պատմեցին իրանց վարդապետին բանտում։ Յովհաննէսը դիտէր՝ որ իւր աշակերտները Հրէից ժողովրդի կարծիքը ունէին Քրիստոսի համար։ Նոքները Հրէից ժողովրդի կարծիքը ունէին Քրիստոսի համար։ Նոքները քա Քրիստոսին ընդունում էին, իբրև մի մարգարէ, սուրբ մարդ կամ մարգարէ ոմն, և Յովհաննէսին էլ աւելի բարձր էին համարում Քրիստոսից, չնայելով՝ որ նա վկայում էր թէ Քրիստոսն է Մեսիան, նա է փրկիչն, և այլն։

Նոքա Յով հանդիսին Քրիստոսի համար այս գաւառութիւնը վերաբերում էին իւր խոնարհութեան։ Յով հանդէսը կամենալով իւր աշակերտներին համոզել, որ Քրիստոս Մեսիային է, որ եկած է, իւր աշակերտներից երկուսը ուղարկում է Նային քաղաքը Յիսուսի մօտ, որ հարցնեն թէ նա է Նա, որպէս զի իրանց ականջներով լսեն Յիսուսի բերանից, որ ինքն է Մեսիային և հաւատան Նորա, որով հիւանդ արդար և սուրբ մարդը, ինչպէս նոքա կարծում էին, չէր կարող խաբել և Մեսիայի պատիւը ինքը ժառանգել։ Այսպէս արաւ նաև երբեմն Երեմիայ մարգարէն։ Առաքելոց քարոզութեան դնալը և վերադառնալը Մատթէոսը չէ պատմում։ Եր. իէ. 21. մարկ. զ. 12. 13. զուկ. թ. 6-10. է. 18-30։

4. 5. Յիսուս նոցա ներկայութեամբ շատ հրաշքներ արաւ, որ պարզ ապացոյց էին իւր Մեսիայ լինելուն, վասն զի մարգարէից ասածների պէս, այդպիսի հրաշքները միայն Մեսիային է պատուած։ Ես. լբ. 4. 6. խր. 6. 7. կա. 1. զուկ. դ. 18. Յով հ. գ. 2. ե. 16. ժ. 25. 26. յակ. բ. 5։

Այդարև մարգարէներից ոմանք ևս շատ հրաշքներ գործեցին, բայց նոցա գործողութիւնը բոլորովին տարբեր էր Քրիստոսի գործողութիւնից։ Նախ, որ մարգարէները իրանց դիմողներին ամենին չէին բժշկում և շատ քիչ էին աքանչելիքներ անում, իսկ Քրիստոսի դիմողները առանց բժշկութեան և մխիթարութեան չէին մնում։ Ղուկ. գ. 27. յով հ. գ. 3. 4. թ. 6—8։ Երկրորդ, մարգարէները շատ անգամ պատժական աքանչելիքներ էին անում, իսկ Քրիստոս ամենայն ախտաժէտներ բժշկեց և մի չարագործի անգամ չ'պատժեց։ Երգ. երգ. ե. 14. զուկ. թ. 15. գործ. ժ. 38։ Երրորդ, Քրիստոս իշխանաբար էր հրամայում, իբրև Աստուած, բայց մարգարէներից ոչ ոք այդպիսի եղանակաւ աքանչելիքներ չէ գործած։ Մարգ. բ. 11։

6. Այսինքն երանի նորա, որ իմ աղքատ և ցած գրութեանս վերայ նայելով, ինձ չի մերժիլ։ Կան շատերը, որ մարդին ոչ թէ գործքերի համեմատ են ճանաչում, այլ նորա հարստութեան, փարթամութեան և իշխանութեան։ Այսպիսիք Քրիստոսի այս երանութիւնից զրկուած են։ Ես. ը. 14. 15. մատ. ժգ. 57. 58. մարկ. զ. 2. 3. յով հ. է. 47—49. ա. կորն. ա. 23. ա. պետ. բ. 7. 8։

7. 8. Երբոր Յով Հաննու աշակերտները գնացին, Յիսուս սկսեց Ժողովրդի առաջև զով էլ Յով Հաննու Մկրտչի հաստատամտութիւնը և հրեշտակային վարքը, ասելով.— «Յով Հաննէսը՝ որ բնակվում է անապատում, ոչ անապատի մէջ բուսած եղէգնի նման տկար և անհաստատ անձն է դէպ 'ի Մեսիային ուղեցած հաւատը, որ ամենայն մի թեթև հողմ կարողանայ նորա շարժել, և ոչ փափկասէր փարիսեցւոց և քահանայից նման՝ ուսուցիչ է խաբեբայութեան, առաջնորդ է ագահութեան, յափշտակող է իրաւանց և արդարութեան և գայթակղ է զանազան մոլորութեանց, որոնք կամենում են ամենատեսակ ցածութիւնով և խաբեբայութիւնով ապրել պալատականների պէս»

9. Հրէաները իրանց գլխերից գիտէին, որ Մեսիայի հետ պէտք է լինի նաև մի ուրիշ մարգարէ։ Նոքա կարծում էին թէ՝ այդ մարգարէն պէտք է կատարէ Մեսիայի համար օգնականի կամ թարգմանի պաշաօն, ինչպէս Ահարոնը՝ Մովսէսի համար, Նաթանը՝ Դաւթի համար, և այլն։ Նոքա չէին հասկանում, որ Մեսիայի առաջև եկող մարգարէն ոչ թէ, իբրև նորա օգնական և թարգման պէտք է գործէ, այլ իբրև Կարապետ և ժողովրդեան սրտերը Տէրի համար պատրաստող։ Մարգարէները Մեսիայի համար ասում էին գալոց է, իսկ սա իւր մատով ցոյց տուաւ, ասելով.— «Ահա գառն Աստուծոյ։» Ուստի Յիսուս՝ Յով Հաննէսին մարգարէներից վեր դասեց։ Յով Հ. ա. 21—38։

10. Յով Հաննէսը իւր հրեշտակային վարքի և Քրիստոսի գալստեան աւետիքը տալուն համար՝ ասուեցաւ հրեշտակ։ Մաղ. գ. 1. մատ. գ. 3։

11. Այս խօսքը վերաբերում է մինչև Յով Հաննէս եղած մարգարէներին և արդարներին։ Արդարև գոցա մէջ այնպէս արդար և սուրբ անձնաւորութիւն չէ եղած, որպէս Յով Հաննէսը, բայց երկնքի արքայութեան մէջ եղած ամենափոքր սրբերը շատ մեծ են՝ քան նոքա, որ մարմնոյ մէջ են, վասն զի նոքա Աստուծոյ էութիւնը տեսնում են դէմ առ դէմ, իսկ աշխարհի մէջ եղածները, որքան էլ մեծ և առաքինի լինին, դարձեալ չեն կարող տեսնել։

ծանից յուոյ ամենայն բանից բարձր էին համարում Յիսուս, կամենալով ցոյց տալ արդարների գերազանցութիւնը, նախ Յով Հաննէսին ամենայն մարդարէներից վեր բարձրացրաւ, և ապա դորա համեմատութեամբ, որ դեռ մարմնի մէջ էր, ցոյց տուաւ երկնքում եղած արդարների մեծ փառքը։ Ղուկ. է. 28։

12. Արքայութիւն ժառանգելու համար ասուած բարութիւնը սոքա են.—մեծ հեզութիւն, անդադար աղօթք, առատ ողորմութիւն և զանազան անիմանալի առաքինութիւններ։ Մատ. է. 7. ղուկ. ժա. 8։

13. Ամենայն մարգարէք օրէնքներն, ձեւերն, նմանութիւններն, առակներն միջոցաւ մարգարէացան մինչև Յով Հաննէսը, իսկ Յով Հաննէսը անձամբ անձին ցոյց տուաւ Մեսիային և նորա երկնային թագաւորութիւնը։ Ծողովուրդը այս տեսնելով՝ աշխատեց մինչև անգամ բռնութեամբ մտնել այդ թագաւորութիւնը։ Մատ. է. 17. ղուկ. ժզ. 16։

14. Եթէ կամենաք ասելով՝ ցոյց է տալիս մարդիս ազատ անձնիշխանութիւն։ Աստուծոյ կանխագիտութիւնը մարդիս անձնիշխանութեան չէ բռնաբարում։ Յիսուս կամենում է հրէից համոզել Յով Հաննէսին Եղիայի հոգւով և զօրութեամբ եկած ընդունել, կամենում է ասել, ինչպէս Եղիան իմ երկրորդ գալ ստեան ժամանակ պէտք է հրէից աղգին Քրիստոս քարոզէ, այնպէս էլ իսկ այժմ՝ Յով Հաննէսը նորա նման վկայում է ինձ համար, որ ես եմ Մեսիան, և ձեզ ապաշխարութիւն է քարոզում Մեսիայի ընդունելու համար։ Մաղ. դ. 5. մատ. ժէ. 10—12. մարկ. թ. 11—13. ղուկ. ա. 17։

15. Յիսուս շատ անգամ այսպէս ասեց, ցոյց տալու համար, որ իւր ասածները շատ հարկաւոր բաներ են։ Արդարև Յով Հաննէսի վերայ ասածները շատ հարկաւոր բաներ էին, վասն զի եթէ Յով Հաննէսին չընդունէին, իբրև Մեսիայի Կարապետ, Յիսուսին էլ չպէտք է ընդունէին Մեսիայ, ընդհակառակը, եթէ Յով Հաննէսին ընդունէին, իբրև Աստուածանից ուղարկած մարգարէ, ուրեմն Յիսուսին էլ պէտք է ընդունէին Մեսիայ, որովհետև Յով Հաննէսը նորա համար էր վկայում։

16. Ո՞ւմ նմանեցուցից զայդս զայս, նման է մանկաւոյ՝ որք նստիցին ՝ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց։
17. Եւ ասիցեն. փող հարաք ձեզ, և ոչ կարաւեցիք, ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցիք։
18. Եկն Յովհաննէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր. և ասեն՝ դև զայ ՝ի նմա։
19. Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ. և ասեն, ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց, և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց։
20. Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին։
21. Վա՜յ քեզ Քորազին, վա՜յ քեզ Բէթսայիդայ. զի եթէ ՝ի Տիւրոս և ՝ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որք ՝ի ձեզ եղեն, վաղուց ևս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր։
22. Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։
23. Եւ դու Կափառնայում, մի մինչև յերկինս բարձրացիս, այլ՝ մինչև ՝ի դժոխս իջցես. զի եթէ ՝ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որք ՝ի քեզ եղեն, ապաքէն կային ևս մինչև ցայսօր։
24. Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ։
25. Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. գոհանամ զքէն Հայր՝ Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ՝ի գիտնոց, և յայտնեցեր տղայոց։
26. Այո՝ Հայր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։
27. Ամենայն ինչ տուաւ ինձ ՝ի Հօրէ իմմէ. և ոչ ոք ճանաչէ զՈրդի՝ եթէ ոչ Հայր, և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի. և ում Որդին կամիցի յայտնել։
28. Եկայք առ ամենայն վաստակեալք և բեռնաւորք՝ և ես Հանգուցից զձեզ։
29. Առէք զլուծ իմ՝ ՝ի ձեզ. և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք Հանգիստ անձանց ձերոց։
30. Զի լուծ իմ՝ քաղցր է, և բեռն իմ՝ փոքրոգի։

16. 17. Այդ տեղ բազմութեան մէջ կային և մաքսաւորներ և մեղաւորներ, որոնք մկրտուած էին Յովհաննէսից, դրա շնորհով Յիսուսի բերանից այդպիսի գովութիւն իրանց վարդապետի վերայ՝ մեծ ուրախութիւնով փառաւորեցին Աստուծոյ, իսկ փա-

բիսեցիքը և ամբարտաւան օրինակաւորները չ'կամեցան Յով հանն-նիսից մկրտուիլ, որով և անարգեցին Աստուծոյ նախախնամութեան խորհուրդը։ Յիսուս խմանալով նոցա նենգի արհամարհութիւնը, ասաց.— «Դուք նման էք այն երեխաներին, որ ոչ հարսանիք խաղացող խմբի հետ են միանում, և ոչ սուգ խաղացող խմբի։» Այն է. ոչ Յով հաննիսի խիստ ապաշխարութեան քարոզութեան կ'հետևէք և ոչ իմ հեշտ և բաղցր քարոզութեան։ Ղուկ. է. 31—35։

18. 19. Յով հաննէսը խիստ ճգնաւորական կեանք, անցուցանելով, ուսուցանում է հեշտախտութիւնից և փափկասիրութիւնից հեռանալ, իսկ Յիսուս միջակ կեանք ունենալով՝ սովորեցնում է բարեխառնութեամբ Աստուծոյ թագաւորութեան համար պատրաստուիլ։ Այսպէս Աստուծոյ իմաստութիւնը ամենայն բան կարգադրում է մարդկանց փրկութեան համար։ Եթէ Յիսուս միջասահման և ընտրողական ճանապարհաւ չ'քարոզէր մարդկանց փրկութիւն, այդ ժամանակ շատ հեշտ էր ասել՝ Յով հաննիսի վարքով և խիստ ճգնութիւնով, անհնար է մեզ ապրել, իսկ այժմ ոչինչ ասելիք չունինք, փրկութեան գործը՝ յանձնուած է մեր անձնիշխանութեան, վանողոյ և արգարացաւ ճշմարիտ քրիստոնեաների այն խօսքը թէ՝ «Զամենայն զոր ինչ պարտ էր առնել նոցա առ 'ի հաւատալ արարեալ է Աստուած»։ Ղուկ. ԺԵ. 1. 2. ԺԹ. 10։

20. 21. Տիրոս, շատ հին հեթանոս քաղաք էր շինուած միջերկրական ծովի արևելեան եզերքում Քրիստոսից 1300 տարուց շատ առաջ։ Սորա մի մասը շինուած էր մի փոքրիկ կղզու վերայ, որ ունէր եօթանասուն քայլ հեռաւորութիւն ցամաքից, իսկ միւս մասը ցամաքի վերայ էր։ Սա մի շատ ընդարձակ, շքեղ և վաճառաշահ քաղաք էր, բայց բոլորովին թագուած զեխութեան և անառակութեան մէջ։ Սա շատ անգամներով պաշարուեցաւ։ Սաղմանասարի դէմ դիմացաւ հինգ տարի, Նաբուգոդոնոսորից յաղթուեցաւ տասն և հինգ տարի պատերազմելուց յետոյ, կրկին Նորոգուեցաւ և Մեծ Աղէքսանդրից կրկին յաղթուեցաւ հինգ ամիս սաստիկ պատերազմից յետոյ։ Այժմ դորա մէջ ապրում են մի քանի աղքատ ձկնորսներ։ Դորա հին շքեղ շինութիւն-

ների տեղ՝ այժմ դանւում են մի քանի ազգատ խրճիթներ։ Զուտի անգամ իւր փառաւոր երևոյթի նշմարանքը։ Այսպէս լիապէս կատարուեցաւ Եղեկիայի մարգարէութիւնը։ «Ի կոյուստ մատեցից զքեզ՝ և ոչ ևս իցես, խնդրեսցիս և ոչ գտցես յաւիտեան»։ Եզ. իզ. 21։

Սիդոն, սա էլ նոյնպէս մի հեթանոս քաղաք էր շինուած Ծովեզերքի մի կղզու վերայ, Տիրոսից հօթն ժամու յապ հեռաւորութեամբ։ Տիրոս և Սիդոն քաղաքներին մարգարէներից ոմանք Ծուր և Ծայդան են կոչում։ Բեթսայիդայ թարգմանւում է ձկնորսների տուն։ Բեթ նշանակում է տուն, իսկ Սայիդայ ձկնորսներ։ Ազգատ քաղաք էր։ Ծնող. լէ. 34. բ. Թագ. ժգ. 12. յով. բ. 8. 12. խբ. 6. երբ. գ. 26. խէ. 4. ողբ. գ. 16. յովել. գ. 5—8. մատ. գ. 13. 25. յով. հ. գ. 4. Սաղմ. տե՛ս. ծնող. ժթ. 24. 25։

22— 24. Տե՛ս. մատ. է. 24—27. զուի. ժբ. 47. 48. երբ. բ. 13։

25. Պատասխանի բառը Եբրայական ոճ է, նշանակում է ոչ թէ մի որ և իցէ հարցի պատասխան տալ, այլ սկսել մի նոր բան։ Այսպիսի ոճեր շատ կան Քրիստոսի խօսակցութեան մէջ։ Ցիսուս ցնծացած հոգւով շնորհակալութիւն է անում Հօր Աստուածներից, որ իւր Արդէոյ մարդեղութեան և փրկութեան խորհուրդը՝ ծածկելով յիշեալ քաղաքների իմանց իմաստուն և գիտուն համարող ամբարտաւաններից, յայտնում է ազգայներին—հաւատացեալ խոնարհներին։ Եւ արդարև այն՝ ինչ որ կարող ենք տեսնել հաւատոյ աչքով, չենք կարող արհեստական գիտութեան և իմաստութեան աչքով տեսնել։ Աշխարհիս գիտութիւնը ունի սահման և շատ անգամ սխալւում է, իսկ երկնային գիտութիւնը պարտում է ամենահեռի խորքերը և նա սուրբ է։ Այս ասելով չպէտք է Աստուածային գիտութիւնը և Աստուծոյ հաւատքը փոխել առասպելաբանութիւնների հետ։ Եր. ա. 5. 7. մատ. ժգ. 11. 16. ժգ. 17. ժբ. 3. 4. իա. 15. 16. մարկ. ժ. 13—15. ա. կոր. ա. 18—29. գ. 18—20. բ. կոր. գ. 3. 4։

26. Մարդս սխալական է, բայց Աստուած բոլորով ին անսխալ։ Եթէ Աստուած մի բան է անում մեզ, կամ ունի մի որ և իցէ պահանջ մեզանից, մենք պէտք է ուրախութեամբ ընդունենք նորա կամքը։ Վայ նորա՝ ով որ Աստուծոյ կամքի դէմ է մաքառում և նորա կամքի պատճառները որոնում։ Յովբ. լդ. 13. եւ. խե. 9. խզ. 9. 10. հռ. թ. 18. ժա. 33—36։

27. Այն Աստուածային իշխանութիւնը՝ որ ունի Հայրը, ունի նաև Որդին։ Որդին Հօրը և Սուրբ Հոգուն հետ հաւասար է զօրութիւնով և ամենայն յատկութիւններով, ուստի ստեղծուածներից ոչ-ոք չէ կարող ճանաչել Որդուն ոչ ըստ Աստուածութեան և ոչ ըստ մարդկութեան, եթէ Հայրը չբացատրէ ում կամենայ։ Այնպէս էլ Որդին ում կ'կամենայ կ'յայտնէ Հօր և Սուրբ Հոգու Աստուածութիւնը։ Այսպէս մարդկանց հաւատոյ փրկութեան խորհուրդը կախուած է Սուրբ Երրորդութիւնից։ Մատ. ա. 25. գ. 17. ժզ. 17. իբ. 18. զուկ. ժ. 22. յով. հ. ե. 19. ժէ. 3. զ. 37. յայտ. իբ. 16. 17. եփ. ա. 20—23. փիլ. բ. 6—11. ա. կոր. ժե. 25—29։

28. Այս ասում է նրանց համար՝ որոնք ճնշում են մեզքի ծանր լծի տակ։ Ո՜հ որքան քաղցր և բերկրալի է այս հրաւէրը։ Արդարև մեծ երանութեան արժանի է նա, ով որ դիտում է դէպ'ի Ցիսուսին, նա ինքն է մեզ հրաւիրում, նա չէ խորշում մեզանից, նա է մեզ պատրաստում Իսկ մեծ թշուառութեան և վայերի արժանի է նա, որ լսում է այս քաղցր հրաւէրը, բայց անուշադիր լինելով՝ թողում է նորա առանց հետևման։ Սա. կա. 1—3. զուկ. ժթ. 10. յով. զ. 37. է. 37. հռ. է. 24. յայտ. իբ. 16. 17։

29. Քրիստոս կամենում է որ ամենքը հնազանդուին առաքելոցին և հետևեն իրան։ Եթէ մենք սովորենք Քրիստոսից նորա վարդապետութեան դասերը, կատարենք նորա կամքը՝ այն ժամանակ կ'ճանաչենք Հայր Աստուածը, որ այս է յաւիտենական կեանքը։ Քրիստոսի կամքը չ'կատարողները չեն կարող հասկանալ նորա վարդապետութեան խմասները։ Ինքն Քրիստոս անձամբ անձին հեզութեան լուծը իւր վերայ կրելով՝ մեզ օրինակ դարձաւ և կամենում է, որ մենք էլ իրան պէս լինինք հեզ և խոնարհ։ Այսպիսի կեանքով կ'ժառանգենք երկրի հանգստութիւնը և յաւիտենականութեան մէջ փառաց պսակը։ Հեզութեան քաղցրութիւնը միայն կարող են նորա լաւ զգալ, որոնք ապրում են զղջոց հոգեանաւորութեան տակ։ Մատ. իա. 5. յով հ. է. 17. բ. 43. ժէ. 3. բ. կոր. ժ. 1. փիլ. բ. 5—8. բ. թես. ա. 7. երբ. ե. 8. ա. պետ. բ. 21—23. ա. յով հ. բ. 6։

30. Ճշմարիտ է, որ Քրիստոսի աշակերտները շատ անգամ սաստիկ նեղութիւնների մէջ են ընկնում, բայց նոքա այդ նեղու-

թիւններըշտանում են՝ Քրիստոսի անուան համար մեծ ուրախութիւնով, և այսպիսեաւ Յիսուսի բեռն թեթև է լինում նոցա համար։ Մատ. և. 11. 12. բ. կոր. գ. 17. 18. է. 4. ժբ. 9. 10. երբ. ժա. 24—26. ա. յովհ. և. 3։

ԳԼ. ԺԲ.

1. Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտօրայսն նոցա 'ի Շաբաթու. և աշակերտքն նորա քաղցեան, և սկսան հասկ կորզել և ուտել։
2. Փարիսեցիքն իբրև տեսին՝ ասեն ցնա. ահաւասիկ աշակերտք քո գործեն, զոր ոչ է արժան գործել 'ի Շաբաթու։
3. Եւ նա ասէ ցնոսա. ոչ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ, յորժամ քաղցեաւն, և որք ընդ նմայն էին։
4. Զիարդ եմուտ 'ի տունն Աստուծոյ՝ և եկեր զհացն առաջաւորութեան, զոր ոչ էր օրէն նմա ուտել, և ոչ՝ որոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից։
5. Կամ թէ չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի 'ի շաբաթս քահանայքն 'ի տաճարին պղծեն զշաբաթն՝ և անմեղք են։
6. Բայց ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է սատ։
7. Եւ եթէ գիտէիք զինչ է՝ Ողորմութիւն կամիմ, և ոչ զզոհ, ապա ոչ դատապարտէիք զուք զանպարտսն։
8. Զի Տէր է Շաբաթու որդի մարդոյ։
9. Եւ գնացեալ անտի Յիսուս եկն 'ի ժողովուրդն նոցա։
10. Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն գօսացեալ էր, հարցին ցնա՝ և ասեն, եթէ պարտ իցէ 'ի Շաբաթու բժշկիր զի չարախօսեսցին զնմանէ։
11. Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է 'ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի և անկանիցի այն 'ի խորխորատ 'ի Շաբաթու. միթէ՞ ոչ ունիցի՝ և յարուցանիցէ զնա։
12. Իսկ արդ ո՞րչափ ևս առաւել է մարդ քան զոչխար, ապա ուրեմն պարտ է 'ի Շաբաթու բարիս գործել։
13. Յայնժամ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև ողջ իբրև զմիւսն։

1. Շաբաթ Հրէից բառ է՝ նշանակում է Հանգստեան օր։ Այն Շաբաթը՝ որ պատահում էր պասքի օրը կամ պասքից յետոյ, Հրէից մէջ ասւում էր Մեծ և Առաջին շաբաթ։ Իսկ այն Շաբա-

թը, որ պատահում էր Պենդեկոստէից յետոյ ասւում էր Երկրորդ առաջնոյ։ Ղուկ. զ. 1. յով Հ. ժԲ. 31։

Այն Շաբաթը՝ որ աշակերտները սկսեցին հասկ կորզել Պենդեկոստէից յետոյ հանդիպող երկրորդական Մեծ շաբաթն էր։ Այս անցքս պատահած էր լերան վ երայ Քրիստոսի քարոզութիւնից առաջ։ Ղւկ. իգ. 15. 16. բ. օր. Ժ. 9. 10. մարկ. բ. 23—28։

2. Փարիսեցիքը առաջ աշակերտներին սաստկով անարգեցին, որ նրանք մի այդպիսի յայտնի օր ծառայական գործ են անում Սրանով չբաւականացած, ասացին նաև Յիսուսին, որ արգիլէ իւր աշակերտներին չլուծանել օրէնքը և Շաբաթ օրը հասկեր չկորզել։ Մատ. ժա. 2. ղուկ. զ. 2։

3. Այս խօսքով Յիսուս յանդիմանում է փարիսեցւոց կոյր նախանձը և չարութիւնը։

4. Առաջաւորութեան հացը Եբրայեցւոց մէջ ասւում էր հաց երեսաց, իսկ մի քանի թարգմանութեանց մէջ գրուած է հաց առաջաւորութեան։ Խորանը որտեղ գրուած էր տապանակ ուխտին բաժանուած էր վարագուրով երկու մասի Վերջի մասը, որ վարագուրի ներքի կողմն էր, ուր պահւում էր տապանակը, ասւում էր Սրբութիւն սրբոց։ Այստեղ միայն քահանայապետն էր կարող մտանել և այն տարին միանգամ։ Միւս մասը՝ որ վարագուրի առաջն էր, ասւում էր սրբութիւն։ Այստեղ դրած էր սեղանը խնկով, ոսկի աշտանակը եօթն ճրագակալներով և էլ մի սեղան առաջաւորութեան 12 հացերի համար։ (12 ցեղերի թուով) Քահանայքը շաբաթ միանգամ մտնում էին այստեղ, խունկ էին դնում, և առաջաւորութեան հացերը փոխում և դնում նորը Տէրի երեսի առաջ, տապանակի հանդէպ, իսկ հին հացերը ուտում էին իրանք քահանայքը, որով հետև աշխարհականաց օրէնք չէր ուտել Դաւիթը և նորա հետ եղած մարդիկը քաղցածութիւնից ստիպուած կերան այս սուրբ հացերը, որ օրէնք չէր նոցա ուտել Այսպէս էլ առաքեալները արին, քաղցած միջոցում հասկ կորզեցին և կերան։ Ուրեմն բնական օրէնքի պահանջը աւելի զօրեղ է՝ քան դրական և արարողական օրէնքի։ Եթէ լենք դրական օրէնքին և քաղցածութիւնից մեռնենք, շատ մեծ մեղք ենք գործում, քան ուտելով և պահպանելով մեր կեանքը՝ ծառայացնել նորա զանազան սուրբ նպատակների։ Ղւկ. իգ. 5-9։

5. Քահանայքը Նաբաթ օրը տաճարումը մտթնում էին գառներ, կոտոր կոտոր էին անում, հանում էին փորոտիքը, լուանում էին նոցա, փայտ էին վառում, մխ էին ելնում, և ուրիշ շատ ծառայական գործերով պղծում էին Նաբաթը, բայց անմեղ էին համարում իրանց, որով հետև այդ ամենը առնում էին տաճարում։

Յիսուս կամենում է այս երկրորդ խօսքով ցոյց տալ՝ որ օրէնքները և ամենայն զրուածք պէտք է մաքուր սրտով և սուրբ մտքով հասկանալ և ոչ թէ նոցա ծառայացնել կրքերի և նախանձութեան։ Թու. իբ. 9։

6. 7. Տաճարի տէրը Քրիստոսն է։ Յիսուս մարգեղութեամբ է աստուածաստ, իսկ Աստուածութեամբ ամենայն տեղ է։ Աշակերտներիս կանքը քաղցածութիւնից պահպանելով՝ ողորմութիւն եմ անում աշխարհի։ Եթէ զհամար Նաբաթը լուծանում է, որքան աւելի կարելի է լուծանել ողորմութեան համար, որ շատ աւելի բարձր է քան զոհը։ Ուրեմն պէտք չէ անպարտ աշակերտներիս մեղադրել այս դիպուածում։ Ովս. գ. 6. մատ. թ. 13։

8. Կիրակէ պահելը Աստուած օրինադրել է բոլորովին մարդի օգտի համար։ Այն մարդը կամ անասունը, որ գործում է Նաբաթը վեց օր, նա աւելի առողջ և օգտակար է լինում քան նա, որ գործում է ամենայն օր և շուտով ընկնում ու հիւանդանում։ Բաց 'ի սորանից, որով հետև Նաբաթի տէրը Աստուած է, ուրեմն ինչ որ կամենայ կարող է անել տալ։ «Նաբաթը վասն մարդոյն եղև» Մարկ. բ. 27. մատ. ժբ. 6. ա. մակ. բ. 41. յով հ. է. 22։

9. 10. Յիսուս միւս Նաբաթ օրն գնաց նոցա ժողովարանը։ Այստեղ կար նաև մի մարդ, որոյ աջ ձեռը բոլորովին չորացած էր։ Փարիսեցիքը, կամենալով Յիսուսի վերայ մի չարախօսութիւն սարքել՝ հարցրին.— «արժան է 'ի Նաբաթու բժշկել։» Յիսուս իմանալով նոցա այս նենգաւոր խորհուրդը, ասաց հիւանդին.— «Եկ մէջ տեղը կանգնի։» Ապա ինքը հարցրաւ.— «Զի՞նչ արժան է 'ի Նաբաթու՝ բարի ինչ գործել թէ չար առնել։» Նոքա չկարողացին սորա պատասխանել, վասն զի, եթէ ասէին պէտք է բարեգործել, չէին կարող նորա դէմ մի չարախօսութիւն սարքել, իսկ եթէ ասէին՝ պէտք է չարագործել կ'քարկոծուէին ժողովրդից։ Մատ. գ. 23. մարկ. գ. 1—6. ղուկ. ՁԸ. 6—11։

11—13. Երբոր Յիսուս ոչխարի առակաւ ցոյց տուաւ, որ Շաբաթի օրը պէտք է բարեգործութեամբ պարապուիր, նրանք փոխանակ ուրախութեամբ ընդունելու այս Աստուածային վճիռը, սկսեցին խոժոռուիլ։ Յիսուս, տեսնելով նոցա սրտի կուրութիւնը, սաստիկ տրտմութեամբ լցուած, առանց ձեռքի շոշափման, միայն խօսքով՝ հրամայեց հիւանդին բժշկուիր, որպէս զի չարախօսութեան պատճառ չ՚գտնեն։ Այսպիսեաւ սահմանեց, որ կիւրակէ օրը կարելի է բարեգործութեամբ պարապուիր։ Կիւրակէ Յունաց բառ է՝ նշանակում է Տէրունական օր, որովհետև Տէրը այդ օրը Յարութիւն առաւ և Հոգին Սուրբ իջաւ Առաքելոց վերայ։ Այս պատճառաւ Առաքեալները սահմանեցին Շաբաթու տեղ սուրբ պահել Միաշաբաթի օրը՝ որ է. Կիւրակէն։ Մն. բ.

3. 4. գործ. ի. 7. ա. կոր. ժգ. 2. յայտ. ա. 20։

14. Իսկ Փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա։

15. Եւ Յիսուս իբրև գիտաց, մեկնեցաւ անտի. և զնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զամենեսեան։

16. Եւ սաստկաց նոցա՝ զի մի՝ յայտնեսցեն զնմանէ ումեք։

17. Զի լցցի, որ ասացաւն՝ ի ձեռն Եսայեայ մարգարէի։

18. Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելին իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ, եդից զոգի իմ՝ ի վերայ նորա, և իրաւունս հեթանոսաց պատմեսցէ։

19. Ոչ հակառակեսցի՝ և ոչ աղաղակեսցէ. և ոչ ոք լուիցէ՝ ի հրապարակս զբաբառս նորա։

20. Զեղէգն ջախջախեալ ոչ փշրեսցէ՝ և զպատրոյկն առ կայծեալ ոչ շիջուսցէ. մինչև հանցէ՝ ի յաղթութիւն զդատաստան։

21. Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։

22. Ցայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր՝ և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ։

23. Զարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասեն. մթէ սա՞ իցէ Քրիստոսն Որդի Դաւթի։

24. Բայց Փարիսեցիքն իբրև լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդևս՝ եթէ ոչ Բէեղզեբուզաւ իշխանաւն դիւաց։

25. Իբրև գիտաց Յիսուս զմտորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամենայն քաղաք, կամ տուն բաժանեալ յանձն

իւր՝ ոչ կացցէ։

26. Եւ եթէ սատանայ զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա։

27. Եւ եթէ ես Բէէղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր ի՞ւ հանիցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։

28. Ապա թէ Հոգւով Աստուծոյ հանեմ զդեւս, ուրեմն հասեալ է ի՛ վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։

14. Մարկոսը ասում է, նոքա հերովդիանոսների հետ խորհուրդ արին Քրիստոսին կորցնելու համար։ Հերովդիանոսները Հրէից հետ թշնամի էին, բայց այժմ միաբանուեցան։ Մատ. բ. 3. մարկ. գ. 5-7։

15-17. Դաղանագէտ Յիսուսը, որպէսզի իւր թշնամաց ձեռքը չընկնէ, գնաց իւր աշակերտների հետ Դալիլեացւոց Ծովի եզերքը, նորա եւուից գնացին շատ բազմութիւն Տիրոսից, Սիդոնից, Դալիլեայից, Հրէաստանից և այլն։ Յիսուս այստեղ շատ կացաւ և շատ հրաշքներ արաւ։ Մատ. ժ. 23. ժե. 21. մատ. գ. 7. 8։ Միշտ սովորութիւն ունէր ասատել, որ ոչ ոքի չյայտնեն իւր մասին, որպէս զի չարերին չ՚զրդռի իւր դէմ։ Մատ. ա. 22։

18. Հնումը Ծառաներին մանուկ էին կոչում, վասնորոյ և Երբայեցերէն թարգմանուած է Ծառայ։ Թէև Քրիստոս Ծառայական պաշտօն էս կատարեց, բայց լցուած Սուրբ Հոգւոյ բոլոր շնորհքներով՝ արդարութեան օրէնքներն էր սովորեցնում։ Մարկոսը ասում է, որ այդ բազմութեան մէջ կային նաև հեթանոսներ։ Քրիստոս ուրիշ անգամ էլ է հեթանոսներին քարոզել Ղ. թագ. ի. 14. ես. խբ. 1—4. մատ. գ. 16. 17. ժե. 21. ը. 6. մարկ. գ. 8. յովհ. գ. 34. փիլ. բ. 7։

19. Այս խօսքերը նկարագրում են Յիսուսի Հոգու հեզութիւնը և խոնարհութիւնը։ Հրէաները յոյս ունէին թէ Քրիստոս պէտք է պատերազմով յաղթէ հեթանոսներին և իրանց ազատէ նոցա իշխանութիւնից։ Քրիստոսի այս նպատակի հակառակ ընթացքը ստիպեց շատերին նորա Մեսիայ չընդուներ Զաք. թ. 9. ղուկ. իդ. 21. յովհ. գ. 15. գործ. ա. 16։

20. Այս խօսքով մարգարէն նկարագրում է Հրէից թուլացած թագաւորութեան և քահանայապետութեան տեղութիւնը մինչև Քրիստոսի Աստուածապէս յարութիւնը։

21. Կ'գայ այնպիսի ժամանակ, որ բոլոր ազգերը կ'հաւատան Յիսուսին և Նորան կ'հնազանդուին. Սաղ. բ. 8. 9. բ. կոր. ժ. 4. 5. յայտ. ը. 2. ԺԹ. 11—16։

22. 23. Թէև սորա լսողութեան և տեսողութեան գործիքները ողջ էին, բայց չէին տեսնում, որով հետև չար ոգին, որով որ այդ մարդը բռնուած էր, ունէր այն ներգործութիւնը, որ ում մէջ մտնում էր՝ համրացնում էր ու կուրացնում։ Այս պատճառաւ Յիսուս ոչ թէ ձեռքի շօշափմամբ բժշկեց, այլ հրամայեց համր (համրացնող) դևին դուրս գալ նրանից։ Չար ոգին դուրս գալով, խկդին հիւանդը սկսեց խօսել և տեսաներ Սորա վերայ շատերը զարմացած ասում էին.— Սա պէտք է լինի Դաւիթի Որդի Մեսիայն։» Մար. ա. 1. Թ. 32. մար. գ. 12-30. դուկ. ժ. 14-23։

Բարոյապէս։ Այսպէս էլ շատ անգամ այս չար ոգին կապում է մեր տեսողութիւնը, որ չ'տեսնենք սուրբ պատարագը, եկեղեցին և սրբութիւնները, փակում է մեր լսողութիւնը՝ չ'լսել աւետարանի, առաքելոց և մարգարէից գրուածները, արգելում է մեր լեզուն՝ չ'խօսել արդարութիւն, ճշմարտութիւն, խոստովանութիւն, այլ թաւալել բամբասանքների, զրպարտութիւնների, խաբեբայութիւնների և զանազան անիրաւութիւնների մէջ։

24—26. Երևում է՝ որ փարիսեցիքը այդտեղ էին և սպասում էին նորա վերայ՝մի չարախօսութեան պատճառ որոնել։ Չար ոգիները միշտ աշխատում են արդարութիւնը և խաղաղութիւնը հալածել, եթէ դոքա միմանց հալածեն այն ժամանակ աշխարհի մէջ կ'թագաւորէ արդարութեան և խաղաղութեան Աստուածը, որ այս ընդդէմ է նոցա ձգտումներին և գաղափարներին։ Մատ. դ. 7. ժ. 25։

27. Հրէից մէջ սովորութիւն կար, որ քահանայից ոմանք երդմնեցուցիչներ էին, որոնք Աստուծոյ անունով դևերին երդմնեցնելով, երբեմնապէս հալածում էին դիւահարներից։ Եւ որովհետև դևերը Քրիստոսի և Առաքելոց ժամանակ ունեցան հզօր հալածիչներ, ուստի Հրէից երդմնեցուցիչների ձեռքով, այլ ևս չէին հալածուում։ Ինչպէս միանգամ մի քահանայապետի հօրեն երդմնեցուցիչ որդիները, տեսնելով՝ որ իրանք այլ ևս չէին կարողանում դևերը հալածել, իսկ Պողոսը Յիսուսի անունով դևերը

է հալածում, սկսեցին Պողոսի նման Յիսուսի անունով երդմնեցնել դևերին՝ ասելով— «երդմնեցուցանեմ զձեզ 'ի Յիսուս զոր Պողոսն քարոզէ»։ Սորա վերայ չար դևը բարկացած ասաց.— «զՅիսուս գիտեմ և զՊողոս ճանաչեմ, բայց դուք ով էք»։ և փախաւ։ Այս հիման վերայ Քրիստոսի եկեղեցւոյ մէջ նշանակուած են երդմնեցուցիչներ, որոնք աղօթքի և երդմնեցուցման ձեռօք շատ անգամ հալածում են դևերը դիւահարներից։ Այսպէս Յիսուս նոցա մեղադրում է՝ «ասելով— «Եթէ ձեր մեղանչական որդիները Աստուծոյ անունով դևեր են հանում, միթէ Աստուծոյ անմեղ և արդար Որդին չէ կարող նոցա հալածել։ Ուրեմն ձեր որդիները պիտի ձեզ դատապարտեն թէ ասա և թէ հանդերձելումն, որ դուք նոցա դէմ մի հակառակ բան չէք խօսում, իսկ Աստուծոյ Որդւոյն ասում էք»— «դևերի իշխանների ձեռօքն է դևեր հանում»։ Գործ. ժթ. 13. 14։

28. Սուրբ Գրքում շատ անգամ Սուրբ Հոգին՝ մատն Աստուծոյ է կոչւում, որով հետև Հայր Աստուածը զրեթէ մատով ցոյց տուաւ Միածին Յիսուսին, ազաւնակերպ ուղարկելով նորա վերայ Սուրբ Հոգին։ Իսկ եթէ իմ Աստուածային զօրութեամբս եմ դևեր հանում, ուրեմն հասեալ է 'ի վերայ ձեր աքքայութիւն Աստուծոյ։ Երրորդութեան հաւատալը ասւում է յաւիտենական կեանք։ Սկ. ը. 19. աղ. ը. 3. մատ. գ. 16. 17. զուկ. ժա. 20. յով հ. ժէ. 3։

29. Կամ զինչդ կարէ ոք մտանել 'ի տուն հզօրի՝ և զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզօրն, և ապա զտուն նորա յափշտակիցէ։

30. Ո՛չ որ ընդիս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողով է ընդիս ցրուէ։

31. Վասն այդորիկ ասեմ ձեզ, ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկանն, բայց զՀոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի։

32. Եւ որ օք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա, բայց որ զՀոգւոյն Սրբոյ ասիցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի և մի 'ի հանդերձելումն։

33. Կամ արարէ՛ք զծառն բարի՝ և զպտուղ նորա բարի, կամ արարէ՛ք զծառն չար՝ և զպտուղ նորա չար. քանզի 'ի պտղոյ անտի ծառն ճանաչի։

34. Մնունդք իժից, զնմրդ կարիցէք բարիս խօսիլ՝ որ չարք էք, քանզի 'ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։
35. Մարդ բարի՝ 'ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ 'ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զչարիս։
36. Բայց ասեմ՝ ձեզ, թէ ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ, տացեն համարյաւուրն դատաստանի։
37. Զի 'ի բանից քոց արդարացիս, և 'ի բանից քոց պարտաւորեսցիս։
38. Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք 'ի դպրացն և 'ի փարիսեցւոց՝ և ասեն. վարդապետ՝ կամիմք նշան ինչ տեսանել 'ի քէն։
39. Նա պատասխանի ետ և ասէ ցնոսա. ազգ չար և շնացող նշան խնդրէ. և նշան մի՝ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի։
40. Զի որպէս էր Յովնան 'ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս, այնպէս եղիցի և որդի մարդոյ 'ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս։
41. Արք Նինուէացիք յարիցեն 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա. զի զղջացան 'ի քարոզութեանն Յովնանու. և արդ՝ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ։
42. Դշխոյն հարաւոյ յարիցէ 'ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ զսա. զի եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի՝ և ահա՝ մեծ քան զՍողոմոն է աստ։

29. Եթէ ես սատանային յաղթած չ'լինէի, գերիները նորա ձեռքից ազատած և նորա խաբէբայութեան զէնքերը կործանած, չէի կարող դևերը հանել Յով. բ. խ. 20. զուկ. ժա. 22։

30. Իմ նպատակս այն է, որ ամենայն վշտացածներին, մեղքերի և թշուառութիւնների մէջ կործանուածներին օգնեմ, առողջացնեմ և դէպ 'ի ինձ ժողովեմ, իսկ չար ոգիները գործում են իմ նպատակի հակառակ, նոքա՝ ամենին մեղաց թագարդի մէջ ձգելով, կամենում են կորուսանել։ Նոքա ցրողներ են և ոչ ժողովողներ, նոքա կործանողներ են և ոչ շինող և հաստատող։

31. Մեղքը երկու տեսակ է.— ա. Սկզբնական, որ Ադամայ անհնազանդութեան մեղքն է, որ իրրև ժառանգութիւն տարածուելց նորա ամենայն զաւակների վերայ, այս մեղքից ազատուում ենք մկրտութիւնով։

բ. Ներդործական, որ գործում ենք մեր ազատ կամքով, խորհրդով, բանիւ, գործով և զանցառութիւնով։ Ներդործական մեղքը երկու տեսակ են.— ա. Մահացու՝ որ հոգին մահացնում են և են եօթն.— Հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ծոյլութիւն, ագահութիւն, օրկրամտութիւն և ըղձախնդրութիւն։ Սոցա բժշկութեան դարմանը եօթն առաքինութիւններն են.— խոնարհութիւն, եղբայրսիրութիւն, ներողամտութիւն, արիութիւն կամ աշխատասիրութիւն, ողորմածութիւն, բարեխառնութիւն, ողջախոհութիւն կամ ժուժկալութիւն։ բ. Ներելի, որ գործում ենք տկարութիւնով, անգիտութիւնով և ակամայ։

Թէպէտ ամենայն մեղք Աստուծոյ ընդդէմ են, բայց Աստուածաբանների առանձին նկատման համեմատ՝ տկարութիւնով գործած մեղքերը համարւում են Հօր Աստուծոյ ընդդէմ, անգիտութիւնով գործածները Որդւոյն Աստուծոյ ընդդէմ, նենգութիւնով, սրտի չարութիւնով, Աստուծոյ պատուիրանի արհամարհելով՝ գործածները, Սուրբ Հոգւոյն ընդդէմ, որ այս վերջիններս յատկապէս անթողի են կոչւում և են սոքա։

ա. Յուսահատութիւն՝ այնէ, բոլորով ին անյոյս մնայ, որ Աստուածանից չունի իւր մեղաց թողութիւն և Հոգւոյ փրկութիւն։

բ. Ցանգնաբար յուսալ Աստուծոյ ողորմութեան վերայ՝ առանց մտածելու և նորա արդարութիւնը։

գ. Ցայտնի ճշմարտութեան դէմ հակառակելը։

դ. Զարաչար նախանձ հոգւոյ դէմ։

ե. Անկարեկիր խստասրտութիւն։

զ. Անզեղջ յամառութիւն մեղքի մէջ։ Մեկ. Յով հանենք երկնկացւոյ։

Ցիսուս վերոյիշեալ պատմանքներով ցոյց տուաւ, որ փարիսեցիք ամենայն կերպ ընդդէմ են ճշմարտութեան, որովհետև Սուրբ Հոգւոյն յայտնի գործը, որ Աստուծոյ գործ է, տալիս են բէելզեբուղին, և Աստուած երկրպագելի և համբուրելի անունը, Նախատատի անունով բէելզեբուղ են կոչում, վասնորոյ և այս հայհոյութեան մեղքը անթողի վճռեց։ Մատ. ժբ. 32. թուա. ժբ. 22. ժոյ. է. 21. առ. ի. 9. երբ. գ. 16. այսոր. ա. 8—10. ե. 16։

32. Աստուծոյ Որդւոյն դէմ հայհոյութիւնը միենոյն Սուրբ

Հոգւոյն դէմ հայհոյութիւն է, բայց Յիսուս այս խօսքով ցոյց է տալիս, որ իւր մարդկութեան դէմ գործած մեղքերը և հայհոյութիւնները, զղջմամբ խնդրելուց յետոյ, կարող էին թողութիւն ստանալ, բայց եթէ հայհոյութիւնը վերաբերուում իւր Աստուածութեան՝ դրան թողութիւնը անկարելի է, ոչ թէ նրա համար, որ Աստուած չէ կարողանում թողել, այլ նրա համար որ այդպիսիքը չեն կամենում զղջալ և ապաշխարել։ Կամաւորի բաւ ասած՝ եթէ մէկը Աստուածորդւոյն մարդկային անմեղանելի կրքերով և կարիքներով պաշարուած տեսնէ և տարակուսի նրա Աստուածամարդ բնեռնն վերայ, այնքան մեծ մեղք չի համարուիլ, որքան Սուրբ Հոգւոյն սքանչելագործ զօրութիւնները տեսնելով՝ տարակուսի կամ հակառակի նրա Աստուածութեան դէմ։ Սուրբ Հոգին վկայեց Յիսուսի Աստուածութեան համար, ուրեմն և նրա Աստուածութեան վերայ հակառակողը և կասկածողը նոյնպէս Սուրբ Հոգւոյն հայհոյիչ է և ամենեւին չունի թողութիւն։ Մատ. և. 25 26. մարկ. գ. 29։

33-36. Փարիսեցիքը շատ չար և բարութեան շատ հակառակ էին, նրա միշտ չարութիւններ էին մտածում, այնպէս որ նոցա բերանից մի բարի բան չէր կարելի դուրս գալ։ Ժողովր. 14. մատ. գ. 7-9. և. 16-21. ժհ. 19. հռ. գ. 16. և. ի. 4-6. յակոբ. 26. յոհ. գ. 15. յայտն. գ. 12։

37. Աստուած տեսնում մարդիս հոգւոյ խորքերը, եթէ մարդը բարի նպատակով կ'խօսի՝ կ'վարձատրուի, եթէ նա հոգով ապականուած է և ինքն իրան կեղծաւորութեան՝ խաբերայութեան նպատակաւ բարեպաշտ է ձևացնում, կ'դատապարտուի։ Առ. ժա. 9. ժբ. 13. ժդ. 3. ժբ. 21. իր. 9. զուկ. ժԹ. 22. յակ. գ. 2—12։

38. «Կամիք» բառը նշանակ ծայրագոյն չարութեան և ամբարտաւանութեան։ Երևում՝ որ դրա Յիսուսի արած բազմատեսակ հրաշքները ոչինչ էին համարում և ուզում էին, որ նա Սամուէլի պէս օրհնում և անձրև բերելով, ցոյց տայ նաև իւր հրաշքները երկնքի վերայ։ Ա. թագ. ժբ. 16-18. զուկ. ժա. 16։

39. 40. Աստուծոյ ժողովուրդը շնացող է ասւում, երբ հեռացած Աստուածանից ուրիշ բաներ է սիրում։ Երևում է՝ որ այն տարին Հրէաները շատ շնացող էին։ Այժմ, ասում է Յիսուս, մի այսպիսի ապերախտ ազգի չի կարելի երկնային նշաններով ուղ-

գեր, այլ կ'ըլլայ ժամանակ, երբ ես մեծ աքանչելիքներով, կ'բարձրանամ իսկի զազաթը, և երեք օրս երեք գիշեր գերեզմանումն մնալեցյեսայ՝ (ինչպես Յովնանը ձկան փորում) մեծ փառքով յարութիւն կ'առնեմ, և նոր հիս էլ շատերին յարութիւն կ'տամ։ Ահա այսպիսեաւ ցոյց կ'տամ իմ աքանչելիքներս նաև երկնքի վերայ։

Պէտք է իմանալ, որ գիշեր ասուում է ինչպէս մի գիշերի ամբողջ երկոտասան ժամը, այնպէս էլ գիշեր է ասուում գեղեցուայ մի ժամի չորրորդ մասը, այսպէս էլ պէտք է իմանալ ցերեկուայ համար։ Յիսուս գերեզմանի մէջ մնաց երեք ցերեկ օր և երեք գիշեր, այն է՝ Ուրբաթ իններորդ ժամում (այժմ երրորդ ժամին գինի ճաշու) հոգին աւանդեց, և իրիկունը զրուեցաւ գերեզմանի մէջ, այսպէս մինչև իրիկունը ասուում է մի ցերեկ օր Ուրբաթու, իսկ մինչև կէս գիշերը՝ ասուեցաւ գիշեր Ուրբաթու, այս կէս գիշերից մինչև հեռանալ կէս գիշերը՝ եղև մի ամբողջ օր և գիշեր Շաբաթու, իսկ Կիրակի կէս գիշերից մինչև արշալոյսն՝ եղև մի գիշեր և մի տիւ Կիրակի։ Ուրեմն յինում են երեք օր և երեք գիշեր, իրաքանչիւր երեք օրը ունեցաւ իւր ցերեկը և իւր գիշերը՝ թէպէտ մէկը ամբողջապէս, միւսը մասնաւորապէս, և այս Սուրբ Գրքի ընդդէմ չէ, վասն զի Սուրբ Գիրքը չէ ասում երեք ամբողջ օր և երեք ամբողջ գիշեր, այլ թէ՝ երեք տիւ և երեք գիշեր։ Նս. էէ. 3. եր. թ. 2. իդ. 10. մատ. իէ. 46—50. մար. ը. 38. յով. ե. ը. 7—9. մթ. 30. 31։

41. Նինուէն Ասորեստանի մայրաքաղաքն էր, շինուած 2200 տարի Քրիստոսից առաջ Նեբրովթի կամ Ասուրի ձեռքով Տիգրիս գետի վերայ։ Յովնան մարգարէն այստեղ Քրիստոսից 800 տարի առաջ քարոզութիւն արաւ, որով Նինուէացիք զղջացան, բայց յետոյ կրկին չարացին և կրկին նոցա դէմ Քրիստոսից 700 տարի առաջ մարգարէացաւ Նաւումը, յետոյ Քրիստոսից 600 տարի չափ առաջ կործանուեցաւ։ Ինչպէս ասացի, Նինուէացիք Յովնանու քարոզութեան վերայ զղջացան, բայց Հրէաները Աստուծոյ Որդու Հրաշքները, փարպապեսութիւնները տեսնելով՝ ոչ թէ, ապաշխարեցին, այլ մինչև անգամ սպանեցին։ Այս պատճառաւ դատաստանի օրը Նինուէացիք Հրէից դէմ պիտի ամբաստանեն։ Մա. ժ. 8-12. յովհ. գ. 3-10. Նաւ. ա. 1, բ. 13. գ. 1-8։

42. Եթոպիայի՝ որէ. Հաբէշատանի թագուհին, լսելով Սողոմոնի իմաստութեան համբաւը, եկաւ լսեց նորա խօսակցութիւնը և մեծ ուրախութիւնով գնաց և պատմեց նորա համար իւր իշխաններին, որոնցից շատերը նոյնպէս եկին, տեսին Սողոմոնի իմաստութիւնը և նորա տաճարի մէջ երկրպագեցին Աստուծոյ։
Գ. թագ. գ. 29—34. ժ. 1—29. գործ. ը. 27։

43. Այլ յորժամ այսն պիղծ ելանէ ՝ի մարդոյ՝ շրջի ընդ անջրգին տեղիս, խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ։
44. Ցայնժամ ասէ. դարձայց ՝ի տուն իմ՝ ուստի եկի. և եկեալ գտանէ զնա պարապրդ, մաքրեալ և յարդարեալ։
45. Ցայնժամ երթայ՝ և առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակի անդ, և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն, այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի։
46. Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր, ահա մայրն նորա և եղբարքն նորա կային արտաքոյ՝ և խնդրէին խօսել ընդ նմա։
47. Եւ ասէ ոմն ցնա. ահա մայրն քո և եղբարք քո կան արտաքոյ և խնդրեն խօսել ընդ քեզ։
48. Նա պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ. ով է իմ մայրս, կամ ով են իմ եղբարքս։
49. Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ ասէ. ահա մայրս իմ և եղբարք իմ։
50. Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինսն է, նա է իմ եղբայր և քոյր և մայր։

43—45. Ցիսուս այս նմանութիւնով նկարագրում է այն մարդի կամ ազգի վիճակը, որ միանգամ իւր անօրէնութիւնները թողելուց յետոյ, կրկին դառնում է դէպ ՝ի նոցնը։ Պիղծ ոգին, Հրէից օրինաց ձեռօք, դուրս եկած այդ ազգից գնաց ընակուելց կուապաշտութեան անջրգի լեռներում (Հրէաները այնպէս էին հաւատում թէ պիղծ ոգիները բնակւում են լեռներում)։ Երբ նկատեց, որ այդ տեղ բաց ՝ի թափառական շրջելուց, ձանձրութիւնից չէ կարող իւր սրտի հարութեան Ծարաւը զովացնել որով հետև դոքա շատ պէտք է դառնային դէպ ՝ի քրիստոնէութիւն, ուստի լաւ համարեց, կրկին անգամ դառնալ դէպ ՝ի իւր հին բնակութիւնը, մտածելով, կարելի է այնտեղ մի հաստատուն տեղ գտնել՝ իւր բնակութեան համար։ Երբ եկաւ, տեսաւ

որ Հրէաները պարապ և պատրաստ հենց ուզեր իրան են սպասում, գնաց իւր հետ առաւ իրանից լարագոյն շատ գեղեր (եօթն թիւը լման թիւ է համարւում Հրէից մէջ) և եկաւ նորից բնակեցաւ Հրէից մէջ։ Արդարև այն մարդն է հաստատ դարձած իւր շարութիւնից, երբ այդ հալածուած շարութեան տեղ իւր սիրաը լցնում է բարի բաներով, իսկ եթէ հպարտութեամբ և ծուլութեամբ ինքն իրան արդար է համարում և չէ աշխատում իւր սիրաը լցնել առաքինութեան զանձերով՝ նորա դադարկ սրտի մէջ շատ հեշտութեամբ դարձեալ կարող են տեղիք գտնել աւելի ուժեղ զօրութիւնով, իւր հին անօրէնութիւնները։ Այսպէս նորա վիճակը առաջուանից աւելի վատ և վտանգաւոր կ'լինի և Աստուած էլ անգամ թոյլ է տալիս, որ այդպիսիները կործանուին, ինչպէս Հրէաները, շարութիւնից դէպ 'ի շարութիւն առաջ գնալով, վերջը իրանց Մեսիային սպանեցին և անհաւատութեան ու անօրէնութեան մէջ կործանուեցին։ Բ. թես. բ. 9-11. բ. տիմ. դ. 13. երբ. գ. 4-8. ժ. 26-31. բ. պետ. բ. 20-22։

46. 47. Քրիստոսի այս նախատական խօսքերը խիստ սաստիկ ներգործութիւն ունեցան գրիչների և փարիսեցիների վերայ, նոքա մտածեցին և վճռեցին, որ յանկարծ յարձակուին Յիսուսի վերայ և սպանեն։ Այս բանս լսած էին Յիսուսի մայրը և ազգականները, սոքա էլ աշխատում էին Յիսուսին մի որ և իցէ կերպիւ փախցնել և թաղուցանել, այն պատրուակաւ, որպէս թէ նորա ուշը գլխից գնացած էր, ապա թէ ոչ այդպիսի յանդիմանութիւններով նոցա չէր վերաւորիր։ Երբ սոքա ժողովրդեան բազմութիւնից չկարողացան Յիսուսին մատնեալ, մարդ ուղարկեցին ասել թէ՝ — «Ահա քո մայրդ և ազգականներդ քեզ կանչում են։» Բայց Յիսուս, դիտելով այդ ամէնը սենեակից անգամ դուրս չէկաւ։ Մարկ. գ. 21. 31—35. ղուկ. ը. 11—21։

48.—50. Սուրբ Կոյսը ամէնից առաւել էր կատարում Հօր Աստուծոյ կամքը, այս ասելով՝ ոչ թէ իւր մօր պատիւը նուազացրաւ, այլ ցոյց տուաւ, որ Քրիստոսի հաւատացեալները իրան շատ սիրելի են, մինչև անգամ արժանի են եղբայր, քոյր և մայր բառերով պատկուիր։ Մատ. ա. 18. ի. 40—45. իր. 10. յովհ. ի. 17. երբ. բ. 11. 12։

ԳԼ. ԺԳ.

1. Ցաւուբ յայնմիկ ելեալ Յիսուս 'ի տանէն՝ նստաւ առ ծովեզերբն։
2. Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա 'ի նաւն և նստիլ, և ամենայն ժողովուրդն կայր առ ծով եզերբն։
3. Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակաք՝ և ասէր.
4. Ահա՛ էլ սերմանահան սերմանել. և 'ի սերմանելն իւրում էր, որ անկաւ առ ճանապարհաւն և եկն թռչունն երկնից և էկեր զնա։
5. Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի բուսաւ՝ առ 'ի չգոյէ հիւթոյ երկրին.
6. 'Ի ծագել արևու տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։
7. Եւ այլն անկաւ 'ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա։
8. Եւ այլն անկաւ յերկիր բարի, և տայր պտուղ, էր որ հարիւրաւոր, և էր որ վաթսնաւոր, և էր որ երեսնաւոր։
9. Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։
10. Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. ընդէ՞ր առակաք խօսիս ընդ նոսա։
11. Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. քանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան երկնից, և նոցա չէ տուեալ։
12. Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի, և որ ոչն գուցէ, և զոր ունիցին՝ բարձցի 'ի նմանէ։
13. Վասն այդորիկ առակաք խօսիմ ընդ նոսա, զի տեսանեն՝ և ոչ տեսանեն. և լսեն, և ոչ լսեն, և ոչ առնուն 'ի միտ։
14. Եւ կատարի առ նոսա մարգարէութիւն Եսայեայ՝ որ ասէ. լսելով լուիջիք՝ եւ մի՝ իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՝ տեսջիք։
15. Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջք իւրեանց ծանրունա լուան, և զաչս իւրեանց կոփուցին, զի մի՝ երբէք տեսցեն աչք՝ և ականջք լուիցեն՝ և սրտիւք իմասցին, և դարձցին, և բժշկեցից զնոսա։
16. Բայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի լսեն։
17. Ամէն ասեմ ձեզ. զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել, զոր տեսանէք՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէք՝ և ոչ լուան։

1. 2. Պէտք է իմանալ, որ Յիսուս Նազարէթումն էր իւր սեփական տունը, յիսոյ երբ թողեց Նազարէթը և բնակուեց Կապառնայումի մէջ, սկսեց այդտեղ քարոզել տուն բռնել, և իբրև համալսարանում, ուսուցանել փարիսեցիներին։ Դիտելով՝ որ այդ օրդ մեծ բազմութիւն է պատրաստուած լսել կենաց խօսքերը, պէտք էս որ իւր բնակութեան տունը չէր կարող բաւականութիւն տալ, դնաց քաղաքի մօտ Գալիլեացւոց (որ Գենեսարեթայ ծովակ է կոչւում) ծովի եղերքում նստեց և երբ ընդերը շատ շատացան մտաւ նաւը և այդտեղից սկսեց իւր քարոզութիւնը։ Մատ. գ. 13. է. 1-4. մարկ. գ. 20. գ. 1-25. ղուկ. բ. 4-18։

3. Շատ նմանութիւններով և առակներով հոգևոր և երկնային ճշմարտութիւններ էր սովորեցնում։

4—10. Տես. 19—24 համարները մատ. ժա. 15։

10. Այս հարցմունքը արին՝ քարոզը վերջացնելուց յետոյ, երբ իրանք առանձին էին։ Սրանից առաջ Յիսուս շատ չէր առակներով խօսած, քարոզութեան այսնորոշի վրայ զարմացան։ Մարկ. գ. 10։

11. «Խորհուրդներ» նշանակում՝ «փարգապետութիւններ»։

12. Աստուծոյ պարգևները՝ որէ. ընդունակութիւնը և շնորհքը տուած է մարդկութեան, բանացնողը օրէցօր զարգանում է և զարգանալով էլ բաղդաւորւում, իսկ նոքա, որ չեն բանացնում կամ դէպի վատն են զործածւում զոցա, այսպիսք օրէցօր կորցնելով իրանց ընդունակութեան շնորհքները, ընկնում են սատանի թշուառութեան մէջ։ Սա. է. 4—7. մատ. իա. 26—30. ղուկ. ժզ. 25. յայտ. բ. 5։

13. Կապառնայումի մարդիկը Նորա քարոզութեան վերայ շատ չէին ուշ դարձնում և երևում է, որ այդ ժամանակը բազմութիւնը Նորա դէմ շատ հակառակ էր։ Յիսուս, առակներով խօսեց՝ որ իրանց նմանութիւններով աւելի պարզում են ճշմարտութիւնը։ Սբ. գ. 21. է. 3. թ. 12. ժզ. 4. 8. 17. Հռ. ա. 28. թ. 14. մատ. ժա. 20—23. ժբ. 24—38։

14. 15. Աստուած, մարդոց սրտերը խստացնելով, ոչ թէ նոցա վերայ բռնութիւն է անում, այլ իրանց սրտի ուզածը և պտրատածն է տալիս։ Իրանք իրանց աչքերը ծածկում են որ ճշմարտութեան լոյսը չ՝տեսնեն, Աստուած էլ լոյսը նոցա առա-

ջևից վ երցնում է, իրանց ականջները ծածկում են, որ ճշմարտութեան ձայնը չ՚լսեն, Աստուած էլ որոշում է, որ ծածկուած մնան։ Ես. գ. 9. 10. խբ. 18-20. իգ. 18. կբ. և. 21-23. կգ. Ժբ. 2. մարկ. գ. 11. 12. յովհ. գ. 19. 20. թ. 39-41. բ. կոր. գ. 3-4. բ. թես. բ. 10-12։

16. 17. Մարգարէները և սրբերը շատ էին ցանկանում տեսնել Յիսուսի օրերը, փառքը և գործքերը, լսել նորա խօսքերը և վարդապետութիւնները։ Աբրահամը՝ հաւատքով տեսաւ Նորա օրը և ուրախացաւ։ Սիմէօնը և Անանա շշոշափեցին Յիսուսին և շատ առատ ուրախացան։ Ղուկ. բ. 25—38. յովհ. բ. 58. կրբ. ժա. 13. 19—40. ա. պետ. ա. 10—12։

18. Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացանին։
19. Ամենայն որ լսէ զբան արքայութեան՝ և ոչ առնու ի միտ՝ գայ չարն և յափշտակէ զսերմանեալն ի սիրտ նորա. այնէ՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ։
20. Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այնէ. որ իբրև լսէ զբանն, եւ վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա։
21. Բայց քանզի ոչ ունի արմատս ի ինքեան, այլ առ ժամանակ մի է՝ ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղին։
22. Իսկ որ ի մէջ փշոցն սերմանեցաւ՝ այնէ. որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն և լինի անպտուղ։
23. Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այնէ. որ իբրև լսէ զբանն և ի միտ առնու, և տայ զպտուղ, է՝ որ հարիւր, եւ է՝ որ վեթասուն, եւ է՝ որ երեսուն։
24. Այլառակ արկանեսս՝ եւ ասէ. նմանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագրարագրի իւրում։
25 Եւ ի քուն լինել մարդկան, եկն թշնամին նորա եւ ցանեաց ի վերայ զորոմն ի մէջ ցորենոյն՝ եւ գնաց։
26 Եւ երբեւ բուսաւ խոտն՝ եւ արար զպտուղ, ապա երեւեցաւ եւ զորոմն։
27 Մատուցեալ ծառայքն տանուտեարանն ասեն ցնա. Տէր, ոչ սերմն բարի սերմանեցեր յագրարակին քում. արդ՝ ուստա՞ւ ունիցի զորոմն։
28 Եւ նա ասէ ցնոսա՝ այր թշնամի արար զայն։ ասեն ցնա ծառայքն կամիս՝ զի երթիցուք՝ քաղեսցուք զայն ի բաց։
29 Եւ նա ասէ ցնոսա՝ մի, գուցէ մինչ քաղիցէք զորոմն,

եւ զցորեանն ընդ նմին 'ի բաց խլեցէք։
30 Թոյլ տուէք երկոցունցն աճել 'ի միասին մինչև 'ի հունձս, և 'ի ժամանակի հնձոցն ասացից ցհնձողսն. քակեցէք նախ զոլոմն, և կապեցէք զայդ խրձունս առ 'ի յայրել. և զցորեանն ժողով եցէք 'ի շտեմարան իմ։

18—20. Քրիստոսի խօսքը կեանք է և երջանկութիւն։ Զարը լաւ իմանում է այս, նա չէ կամենում՝ որ մարդիկը Քրիստոսի հաւատան և նորա ճշմարտութեան հետեւելով, փրկուին։ Նա միշտ աշխատում է ճշմարտութեան և արդարութեան սերմերը մեր սրտից հանել, բայց պէտք է իմանալ, որ նա առանց մեր հաճութեան չէ կարող մի խօսք անգամ գողանալ մեզանից։ Մեր անհոգութիւնն է պատճառ՝ որ ցանածը յափշտակում է։ Մարկ. գ. 15. ղուկ. ը. 12. ա. պետ. ե. 8։

20. 21. Ապառաժ ասում է այն տեղը՝ ուր հողը քիչ է և ինքը քարոտ։ Սոքա այն մարդիկն են, որ խօսքը լսելով առանց խորհելու և ծախքը հաշուելու ուրախութեամբ ընդունում են, բայց փորձութեան ժամանակը թողում են և փախչում։ Եզ. լդ. 31. 32. ղուկ. ժգ. 26-34. գործ. ը. 20. 21. գաղ. ե. 7. այսպէս. գ. 19։

22. Սոքա թէև առաջիններից շատ աւելի են աշխատում, որ խօսքը իրանց մէջ պտղաբեր է, բայց որով հետև մինչև վերջը չեն համբերում, այլ իրանց սրտերը լցնում են հարստութեան, խաբեբայութեան և մեսի բանելով, ուստի և խօսքը աճելու համար տեղ չէ գտնում, այլ խեղդում է և անպտուղ մնում։ Առ. ժբ. 28. իգ. 4. 5. ժող. գ. 8. ե. 10—14. ա. տիմ. գ. 9—17։

23. Ամեն ճշմարիտ քրիստոնեայ պէտք է խոնարհութեամբ և բաւականութեամբ նեղութեան և հալածանաց համբերել, որպէս զի կարողանայ իւր աշխատասիրութեան յարմար պտուղ բերել երեսնաւոր, վաթսնաւոր և հարիւրաւոր։ Յոյ հ. ժե. 2. հռ. գ. 22. է. 4. գաղ. ե. 22. 23. եփ. ե. 9։

24—28. Ալքայութիւն երկնից։ Տես. գ. 2։

Որոմի առակով Քրիստոս նկարագրում է իւր եկեղեցու վիճակը։ Սերմանողը Քրիստոսն է, սերմն Աստուծոյ խօսքն է, քնած մարդիկը եկեղեցու հովիւներն են, ագարակը Զինուորիսկ եկեղեցին է։ Սատանան, եկեղեցու հովիւների անտարբերութիւնից օգուտ քաղելով, մոլորութեան որոմներով ապականում է նից ագարակը։ Այս առակս վերաբերում է նաև իւրաքանչիւր անձ-

հատի զրուցեան Քրիստոսի պաշտօնեաները երբեմն զարմանում են, երբ տեսնում են եկեղեցու մէջ բուսած անօրէնութիւններ։ Տես. համար. 36—42. մատ. թ. 15։

29. 30. Եթէ չարերը և մեղաւորները աշխարհից պակաս են՝ արդարների և սրբերի առաքինութեան և համբերութեան նիւթը կ'պակասի։ Այսպէս թէև եկեղեցու մէջ անմաքրութիւններ կ'գտնուին, բայց մենք մեր կարողութեան չափ պէտք է աշխատենք եկեղեցին մաքուր պահել։ Այս առակ վերաբերւում է ինչպէս ընդհանրական դատաստանին, այնպէս էլ մասնաւոր դատաստանին՝ որ է, իւրաքանչիւր մարդու մահուան օրը։ Մատ. ին. 41-46. ա. կոր. ե. 1-11. ա. տիմ. ա. 20. բ. Թես. ա. 8. 9. յայտ. ի. 16։

31. Այլ առակ է արկ՝ առ նոսա և ասէ. նմանեալ արքայութիւն երկնից հատոյ մանանեխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում։

32. Որ փոքր է քան զամենայն սերմանիս, և յորժամ աճիցէ, մեծ է քան զամենայն բանջարս. և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից՝ և հանգչել յոստս նորա։

33. Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա և ասէ. նմանեալ արքայութիւն երկնից խմորոյ. զոր առեալ կնոջ թաքոյց ՝ի գրիւս երիս ալիւր՝ մինչև ամենայն խմորեցաւ։

34. Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակաւք ընդ ժողովուրդսն. և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա։

35. Զի լցցի ասացեալն ՝ի մարգարէէն. բացից առակաւք զբերան իմ. բղխեցից զծածկեալսն ՝ի սկզբանէ աշխարհի։

36. Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդսն՝ եկն ՝ի տունն. մատեան առ նա աշակերտքն նորա՝ և ասեն. մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի։

37. Նա պատասխանի եւ՝ և ասէ ցնոսա. որ սերմանէ զսերմն բարի՝ է Որդի մարդոյ։

38. Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են՝ որք որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են։

39. Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայն է. և հունձն կատարած աշխարհիս է. և հնձողքն հրեշտակք են։

40. Որպէս ժողովի որոմն և ՝ի հուր այրի. այնպէս եղիցի ՝ի կատարածի աշխարհիս։

41. Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն զայթագղութիւնս, և զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն։

42. Եւ արկցկն զնոսա 'ի հնոց հրոյ. անդ եղջիր լայ և կրճել առամանց։

43. Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն արքայութեան երկնից։ Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ։

31. 32. Այս առակով Յիսուս ցոյց է տալիս թէ՝ ինչպէս մանանեխի խիստ փոքրիկ սերմը մեծ ծառ է դառնում, այնպէս էլ իւր եկեղեցին թէև սկզբից քիչ հաւատացեալներ ունի, բայց պէտք է մեծանար և աշխարհս լցնէր, մինչև որ ոչ թէ հասարակ մարդիկը, այլ նաև բարձրաթռիչ իմաստունները հնազանդուէին նորա։ Ուրեմն բոլոր ազգերը պէտք է նորա հնազանդուէին։ Սաղ. իա. 27—31. հա. 8. 11. ես. ժա. 10. ծգ. 11. դան. է. 13. 14. մատ. իբ. 44. 45. ա. կոր. ժե. 25։

33—36. Ինչպէս խմորը գնելով ալիւրի մէջ փոխւում է նորա բնութիւնը, այնպէս էլ Աստուծոյ շնորհքը, երբ միանգամ տեղ է գտնում մեր սրտի մէջ, խմորի պէս, փոքր առ փոքր և ծածկաբար սկսում է բոլորովին փոխել մեր բնութիւնը և մեզ արդարացնելը։ Եւ ինչպէս խմորին նեղգործութիւնը մարդը չէ կարողանում տեսնել, այնպէս էլ Սուրբ Հոգու գործը աննկատելի է մարդից, միայն նոցա պտուղներն են երևում։ Այսպիսեաւ բոլոր ազգերը կ'խմորուին և կ'դառնան Քրիստոսին։ Համար. 31. 32. մատ. ժգ. 12. 13. զուկ. ժգ. 20. 21. յով. գ. 3։

37—40. Տե՛ս.— 24—31. Համարները։ Յովհ. ա. 16. ը. 44. գործ. գ. 10. ա. յով հ. գ. 8։

41-43. Թէև Սուրբ Գիրքը պարզ չէ նկարագրել արդարների վարձքը և մեղաւորների պատիժը, բայց մի քանի մթին խօսքերով բացատրել է՝ այսպէս.—

ա. Մեղաւորները պէտք է մշանջենաւոր զրկուին Աստուծոյ երեսից՝ որ է. ամենադառն պատիժը բոլոր ազգաների մէջ, սա ասւում է մահ առաջին կամ պատիժ զրկման։ Մատ. ե. 29. իե. 46։

բ. Պէտք է Ճան Աստուծոյ աշխարհին բարկութեան տակ և մեռանին երկրորդ յաւիտենական մահով։ Հռ. բ. 8. 9. գ. 16. 21. 23։

գ. Պէտք է բնակուին արտաքին խաւարի մէջ և յաւիտեան տանջուին անմահ որդներով։ Մատ. իե. 30. մար. թ. 44։

դ. Պէտք է տանջուին նաև գեհենի բորբոքուած յաւիտենական անանցների կրակի մէջ։ Մատ. գ. 12. յայտ. ժգ. 10։

ե. Պէտք է բնակուին չար դևերի և դժոխքի զաւանի հետ առանց երբէք հանգստութիւն գտնելու։ Մատ. իբ. 41. յայտ. ի. 10. ժթ. 20։

Իսկ արդարները պէտք է նախ, դէմ յանդիման տեսնեն Աստուծոյ երեսը և Քրիստոսի հետ թագաւորեն յաւիտեանս յաւիտենից։ Յով հ. ժդ. 3. ժէ. 24. յայտ. իբ. 4. ե. 10։

բ. Պէտք է դատողական աթոռի վերայ նստած ներկայ և վկայ լինին դատաստանին։ Ղուկ. իբ. 20. տ. կոր. զ. 2։

գ. Պէտք է ապրին անշիջանելի լուսի մէջ, Քրիստոսի հետ ժառանգակից լինին և Նորա անապական փառքերով պսակուին։ Հռ. ը. 17. յակ. ա. 12. ա. պետ. ա. 4.

դ. Պէտք է երկնային Երուսաղէմի մէջ անարատութիւնով ուրախութիւնով անմահական կեանք վայելեն և աստղերի պէս արքայութեան խորանների մէջ փայլին։ Դան. ժբ. 3. երբ. ժա. 10։

ե. Պէտք է Քրիստոսի մարմնու նման անապական, փառաւորեալ և հոգևոր մարմին հագնելով, հրեշտակների պէս լինին։ Մատ. իբ. 30. ա. կոր. ժե. 42—44. փիլ. գ. 21. ա. յով հ. գ. 2։

զ. Պէտք է մտնել Քրիստոսի ուրախութիւնը և այնտեղ յաւիտեան հանդչելի լուութեամբ ժառանգելով անճառելի փառաց մեծութիւնը։ Մատ. իե. 21. բ. կոր. դ. 16—18։

44. Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկեալ յագարակի, զոր գտեալ մարդոյ՝ թաղեալ։ և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զամենայն ինչ՝ զոր ունի, և գնէ զագարակն զայն։
45. Դարձեալ նման է արքայութիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։
46. Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ։
47. Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ։
48. Զոր իբրև լցաւ, հանեալ ի ցամաք և նստեալ ժողով եցին զբարի բարին յամանս, և զխոտանն ի բաց ընկեցին։
49. Այնպէս եղեցի ի կատարածի աշխարհիս։ ելցեն հրեշտակք՝ և մեկուսացեն զչարս ի միջոյ արդարոց։
50. Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ։ անդ եղեցի լալ և կրճել ատամանց։

51. Ասէ ցնոսա Յիսուս, իմացայք զայս ամենայն. ասեն ցնա, այո Տէր։
52. Եւ նա ասէ ցնոսա, վասն այսորիկ ամենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝ նման է առն տանուտեարն, որ հանէ ի գանձէ իւրմէ զնոր և զհին։
53. Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զառակս զայսոսիկ՝ փոխեցաւ անտի։
54. Եւ եկեալ ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչև զարմանալ նոցա և ասել սմա ուստի՞ իցէ այս իմաստութիւն և զօրութիւնք։
55. Ո՞չ սա է հիւսնին որդի, ոչ մայր սորա կոչի Մարիամ. և եղբարք սորա Յակոբոս և Յովսէս և Սիմոն և Յուդա։
56. Եւ քոյրք սորա ամենեքեան առ մեզ են. արդ ուստի է սմա այս ամենայն։
57. Եւ գայթագղէին ի նա, և Յիսուս ասէ ցնոսա. չէք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի և յիւրում տանն։
58. Եւ ոչ արար անդ զօրութիւնս բազումս վասն անհաւատութեան նոցա։

44—46. Այս առակները երկու բան են սովորեցնում. ա. Թէ բարեպաշտութիւնը, հոգևոր իմաստութիւնը մեծ գանձ է։ բ. Թէ այդ գանձը շահելու համար պէտք է մեր բոլոր ունեցածը զոհել Յովք իբ. 12—19. առ. գ. 13—18. մատ. ժԹ. 21—29. գաղ. գ. 14. փիլ. գ. 7. 8. Եբր. ժ. 34. ժա. 24—26։

47-52. Այս առակս որոմի առակի նման է, և միևնոյն ճշմարտութիւններն է սովորեցնում Քրիստոս կամենում՝ որ աշակերտները իրան ասածները հասկանան։ Քրիստոս և իւր առաքեալները ժողովրդեան հասկանալի լեզուաւ խօսէին։ Սկզբից պաշտօնեաներն էլ պէտք այդպէս անեն։ Հրէաները իրանց եկեղեցու վարդապետներին «դպիր» էին ասում։ Քրիստոսն էլ իւր աշակերտաց «դպիր», այսինքն «վարդապետ» է կոչում։ Որովհետև առաքեալները պէտք է սովորեցնէին աւետարանական վարդապետութիւններ, վասնորոյ և Քրիստոս զոցա պատուիրում միշտ լաւագոյն և օգտակար խրատներ տալ ժողովրդին թէ հին լինին դոքա և թէ նոր. այսինքն պէտք եղած ճշմարտութիւնները սովորեցնել ժամանակին նայելով։ տես. 24—30. և 36—40 համարներըը։ Ա. կոր. ժգ. 19։

53. 54. Գնաց Նազարէթ և շարաթի օրը մտաւ ժողովարան, և

առաւ կարդաց Նոայի մարգարէի գիրքը և մեկնեց, որ դրա վերայ քաղաքացիք սաստիկ բարկացան և ուզում էին գահավէժ առնել, զարմանում էին նաև որովհետև գիտէին, որ նա դպրոց չէ տեսել, այլ աղքատութեամբ Յովսէփի հետ հիւսնութիւնով է պարապած, մինչև երեսնամեայ հասակը։ մատ. բ. 26. մար. ա. 22. ղ. 1-6. ղուկ. դ. 16. յով. է. 46. գործ. ժգ. 40. 41։

55. 56 Հրէից մէջ սովորութիւն էր որ որդիքը իրանց հօր արհեստը կ'բանեցնէին։ Եղբայրների և քոյրերի համար։ Տե՛ս գլ. ա. 16. ժա. 6։

57. Դայթագղութիւն այստեղ նշանակում է կատաղութիւն։ Քաղաքացիք Յիսուսի իմաստութեան և սքանչելիքների վերայ սաստիկ կատաղեցան, մանաւանդ նորա յանդիմանողական քարոզների վերայ։ Քրիստոսի ազգականները ևս՝ թէպէտ չէին հաւատում, բայց և այնպէս ինչպէս հարկաւորն է չէին պատուում և պատկառում Նրանից։ Այս ճշմարտութիւն է, որ ամենայն ընդունակ, արժանաւոր և գործունեայ մարդ ուրիշ գաւառներում յարգ և պատիւ է ստանում, իսկ իւր տանը և քաղաքում անարգանք և հալածանք։ Ղուկ. դ. 24. յով. դ. 44։

58. Մարկոսը ասում է՝ ոչ կարէր։ Սուրբ Գրքի մէջ շատ անգամ փոխանակ կամելոյն գնում է կարելը «Ոչ կարէին ընդ նմա խօսել» այն է. ոչ կամէին։ Ծնն. լէ. 4։ «Ո՛չ կարեմ յառնել և տալ» այն է. «ոչ կամիմ»։ Ղուկ. ժա. 7։

Քրիստոս գիտէր՝ որ իւր սքանչելիքները առաւել ևս պէտք է նախանձութեամբ կուրացած ազգի սիրտը խստացնէր իւր դէմ, վասնզի ոչ մի ուրեք այդտեղ շատ հրաշքներ գործել, այլ միայն մի քանի հիւանդներ բժշկեց։ Մարկ. գ. 5. ղուկ. դ. 23-29։ Աւետարանը հաւատացեալների համար փրկութիւն է։ Քրիստոսի շնորհքով մարդիկ կ'փրկուին հաւատքի միջոցով։ Մատ. ժգ. 14. 15. հռ. ա. 16. եփ. բ. 8։

Այս ղեկից սովորեցինք՝ որ Քրիստոսի եկեղեցին ունի իւր ուղղափառութիւնը հաստատող չորս յատկութիւններ։ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն։

Եկեղեցին մի է աւում Նորա համար, որ ամենայն հաւատացեալք թէև ազգաւ, լեզուաւ, ծէսերով, արարողութիւններով և

վարչական ձևերով բաժանուած են միմեանցից, բայց իբրև մի մարմին, միացած են իրանց միակ Գլխի Քրիստոսի հետ հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ հոգեւոր եւ նեղբին միութիւնով։ Նոյնն են պարտաւորմ մի Աստուած եւ մի Տէր։ Միայն հերձուածողը, ուրացողը, կամ՝ մերժուածը, որ իրանք իրանց հեռացրած են եկեղեցու միութիւնից, ստանում են եկեղեցու մեռեալ անդամ։ Մատ. ժգ. 24. 25. յով. ժ. 9. 16. ա. կոր. ժբ. 12-17. եփ. դ. 6. ե. 5. ա. 22. 23։

Եկեղեցին «սուրբ» է ասւում նախ, որովհետեւ ինչպէս իւր Գլուխը սուրբ, արդար և անարատ է, այնպէս էլ սուրբ են նորա անդամները, որ են Քրիստոսի բարոյական մարմինը։

Երկրորդ, որովհետեւ սրբուած են ամեն տեսակ մեղքերից մկրտութեան շնորհքով, եթէ միայն ուրացութիւնով կամ հերետիկոսութիւնով իրանք իրանց չեն բաժանած եկեղեցու միութիւնից։ Երրորդ, որովհետեւ սրբութիւն է քարոզում եւ ազատ է անմաքուր, մոլար եւ սուտ վարդապետութիւններից։ Չորրորդ, որովհետեւ իւր մէջ կատարվում Քրիստոսադիր, սրբարար եւ շնորհաշէն խորհուրդներ։ Մատ. ժգ. 12. 18.19.20.21 յով. ժգ. 10. ժե. 3. ժէ. 17—20. ա. կոր. գ. 17. բ. տիմ. ա. 9։

Եկեղեցին «ընդհանրական» կամ Ցուն՝ աբէն կաթուղիկէ է ասվում նախ, որովհետեւ քրիստոնէութիւնը բոլոր աշխարհիս մէջ տարածուած է եւ պիտի տարածուի մինչեւ աշխարհիս վերջը։ Երկրորդ, նա դէպի իրան գրավող ազգերին միրտում, սրբում, միացնում իւր հետ եւ անխարդ սիրով ընդունում իւր ծոցի մէջ։ Կող. 10. 11 գործ. ա. 8. մատ. ժգ. 47-50. իդ. 14. իր. 20. մարկ. ժգ. 15. զուկ. ժգ. 29. գաղ. գ. 27. 28։

Եկեղեցին «առաքելական» է ասւում, որովհետեւ Քրիստոսի քարոզած հաւատը հաստատուած է առաքելոց գրուածքների եւ աւանդութիւնների վերայ։ Ա. կոր. գ. 11. եփ. բ. 10. 19. 20. մատ. 31. 32։

ԺԼ. ԺԳ.

1. Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չորրորդապետ զլուր Յիսուսի։
2. Եւ ասէ ցծառայս իւր. Նա է Յով Հաննէս մկրտիչ, նա յարեաւ ի մեռելոց, և վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ։
3. Քանզի Հերովդէս կալաւ զՅով Հաննէս, կապեաց զնա և ետի բանտ ի՝ վասն Հերովդիադայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա։
4. Զի ասէր ցնա Յով Հաննէս. չէ արժան քեզ ունել զդա։
5. Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր ի ժողովրդենէ անտի. քանզի իբրև զմարգարէ ունէին զնա։
6. Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի՝ կաքաւեաց դուստրն Հերովդիայ ի մէջ բազմականին և հաճոյ թուեցաւ Հերովդի։
7. Ուստի և երդմամբ խոստացաւ տալոյ զնմա զինչ և խնդրեսցէ։
8. Եւ նա յառաջագոյն խրատեալ՝ ի մօրէ իւրմէ, տուր ինձ, ասէ, այսր ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի։
9. Եւ տրտմեցաւ թագաւորն. բայց վասն երդմանցն և բարձակցացն՝ հրամայեաց տալ նմա։
10. Եւ առաքեաց զգլխատեաց զՅով Հաննէս ՝ի բանտի։
11. Եւ բերաւ զգլուխ նորա սկտեղի՝ և տուաւ աղջկանն, և տարաւ առ մայր իւր։
12. Եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն և թաղեցին՝ և եկեալ պատմեցին Յիսուսի։
13. Եւ իբրև լուաւ Յիսուս, գնաց անտի նաւու յանապատ տեղի առանձինն, իբրև լուան ժողովուրդքն, գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց անտի։
14. Եւ իբրեւ ել՝ ետես ժողովուրդ բազում, և գթացաւ ի նոսա, և բժշկեաց զհիւանդս նոցա։
15. Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ նա աշակերտքն և ասեն. տեղիս անապատ, և օրս տարաժամեալ, արձակեա զժողովուրդսդ, զի երթիցեն շուրջ ի շէնսն՝ գնեսցեն իւրեանց կերակուր։
16. Եւ ասէ Յիսուս. ոչինչ պիտոյ է դոցա երթալ դուք տուք դոցա ուտել։
17. Եւ նոքա ասեն ցնա. ոչինչ ունիմք ասա՝ բայց հինգ նկանակ և երկուս ձկունս։
18. Եւ ասէ ցնոսա. բերէք այսր զայն։
19. Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողովուրդն ի վերայ խոտոյ. և առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց, եւ եբեկ՝ եւ ետ ցաշակերտս-

սրն զնկանակսն, եւ աշակերտքն ժողովրդոցն։
20. Կերան ամենեքեան՝ եւ յագեցան, եւ բարձին զնշխարքն կոտորոցն երկոտասան սակառ լի։
21. Եւ՝ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազարք, թող զկանայս եւ զմանկտիս։

1. 2. Այս Հերոդէսը մեծ Հերոդիսի որդի Անթիփասն էր։ Սա թէեւ սպանած էր Յովհաննէսին, բայց որովհետեւ նորա վերայ մեծ համարումն ունէր, վասնորոյ, երբ լսեց Յիսուսի աքանչելեաց համբաւը, կարծեց թէ նա իսկապէս Յովհաննէսն է, որ յարութիւն է առել եւ այժմ աքանչելիքներ է գործում։ Տես։ մատ. բ.19. 22. մարկ. զ. 14—29. ղուկ. թ. 7—9։

3. 4. Յովհաննէսը սպանուեցաւ հետեւեալ պատճառաւ։ Հերոդիադան Արիստոփուլոսի աղջիկն էր, բայց իւր հօրեղբօր Փիլիպպոսի կինը, որից Ծնաւ մի աղջիկ, որ պարեց Հերոդիսի Ծննդեան օրը։ Հերոդէսը Հերոդիադային խլեց իւր եղբօրից եւ իրան կին արաւ։ Փիլիպպոսը թէպէտ և այս մասին շատ չարացաւ, բայց նորա դէմ մի բան չկարողացաւ առնել, որովհետեւ Հերոդէսը իրանից շատ հզօր էր։ Յովհաննէսը այս չարութեան համար յանդիմանեց թագաւորին եւ բանտարկուեցաւ։ Ղեւ. ժը. 16. ի. 21. մարկ. զ. 17։

5. Թէպէտ Հերոդէսը ընդունում էր Յովհաննէսին, իբրեւ մարգարէ եւ սուրբ, եւ լսում էր նորա զանազան խրատները, բայց երբ Յովհաննէսը պահանջեց որ Հերոդիադան պէտք արձակուի, այս բանը սաստիկ վիրաւորեց Հերոդիսին, այնպէս որ մտածեց մինչեւ անգամ սպանել Յովհաննէսին, բայց վախենում էր մի գուցէ պատուհասակոծ լինի նրանից, եւ կամ ժողովրդեան մէջ այդ մասին իւր դէմ արտասանի բարձրանայ։ Հերոդիադան էլ վախենում էր, որ չլինի թէ Հերոդէսը լսէ Յովհաննէսին եւ զղջալով իւր չարութեան վերայ, արձակէ իրան կրկին իւր առաջի մարդ Փիլիպպոսի մօտ, որի առաջեւ արդէն իւր հաւատարմութիւնը կորցրած էր, եւ երես չուներ կրկին նորա մօտ վերադառնալ, վասնորոյ եւ միշտ ազաչում էր և յորդորում Հերոդիսին, որ սպանել Յովհաննէսին։ Մարկ. գ. 19—33. ղուկ. ի. 6։

6—8։ Մօր և աղջկան անհամեստութիւնը այնտեղիցն է երեւում, որ սովորութեան դէմ խաղաց Հերոդիսին և նորա անառակ ընկերների առաջեւ։ Թէպէտ Հերոդէսը ամենեին իրաւունք չունէր

այդպիսի խոստմունք անելու, բայց յիսմայելիները առհասարակ անիրաւութիւններ են գործում։ Այս խոստմունքը լսելից յետոյ, իսկոյն դուրս գնաց տեր մեռ և ասաց.— Չգիտեմ խնդրեցից։ Եւ նա տեսաւ աղջկան մի սիրուն գլուխ, աղջիկը տարաւ Թագաւորի առաջ և ասաց.— Ամիսդ լի այժմ տացես ինձ փաղփաղաիդ ի վերայ սակաւ գլուխս Յովհաննու մկրտչի։ Մարկ. գ. 25. Հռ. գ. 15։

9—11. Թէ եւ Հերովդէսը հրամայեց Յովհաննէսին բանտի մէջ գլխատեցին եւ գլուխը տուին աղջկանն եւ նա տարաւ իւր մօրը, բայց իւր խիղճը շատ սաստիկ յանդիմանեց իրան և ժողովրդին էլ վախեցաւ։ Պատմում են թէ, երբ Հերովդիադան սատացաւ այդ գլուխը տարաւ եւ արքունական պարտէզի մի շատ ամուրակեղ թագիր-փաթենոյով՝ մի գուբ միւսուրելով իւր մարմնու հետ, յարութիւն առնէ եւ կրկին յանդիմանէ Հերովդիսին։ Ժամանակից յետոյ այդ գլուխը երկու կրօնաւորների ձեռքով՝ տեսիլքով դանուեցաւ Հերովդիսի տան մի տուփի մէջ, որունցից մի բրուտ փախցրաւ բերաւ Եմեսայ քաղաքը, որ այժմ Հեմս է ասւում։ Երբար ժամանակ այնտեղ մնալից յետոյ՝ յայտնուեցաւ Եղնատիոս պատրիարքի ժամանակ եւ Հանդիսով բերուեցաւ Կոստանդինոպոլիս։ Հաւանական է, եթէ Յովհաննէսին չսպանանէր, ներկայ գտնուող հիւրերը պէտք ծաղր առնէին ասելով.— Թագաւորը չէ կարողանում իւր խոստմունքը կատարել։ Այսպէս էլ շատ անգամ մարդիկը զրգռում են իրանց ընկերներին դէպ ի չարութիւնը եւ անիրաւութիւնը Պէտք իմանալ որ այս սարսափելի եղեռնագործութիւնը չմնաց առանց նշանաւոր հետեւանքի։ Ժանգ Հերովդէսը ապստամբուեց կայսրից, կայսրը նոցա իւր չար կնոջ հետ աքսորեց Եւրոպայի կողմերը, ուր եւ չարաչար մահով սատակեցան։ Բայց պարոյ պիղծ աղջիկը իւր ծնողների սատակելուց առաջ, մի անգամ մի սառած գետով անցնելու ժամանակ, իսկոյն սառն կտրեց եւ ընկաւ մէջը մինչեւ ի պարանոցը, որտեղ նա մնաց շարժուելով աշխատում էր ազատուիլ սառն սատակի սառելով, որպէս երկայրի սուր, կտրեց նոցա գլուխը եւ մնաց սառցի երեսին, ինչպէս սեղանի մէջ։ Այս տեսնելով շատերը զարմացան եւ փառաւորեցին Աստուծու։ Հռ. ժե. 3. յայտնուրդ գիրք. ա. երես. 34։

12. 13. Յով Հանդէսը նախապէս խրատածէր իւր աշակերտներին, որ իւր մահէն յետոյ զանոնք Յիսուսի աշակերտներն Յով Հանդէսի աշակերտներէն թաղեցին իրանց փորձարարի մարմինը եւ եկին եղելու թիւնը պատմեցին Յիսուսին եւ նորա մօտ աշակերտեցին։ Հերոդէսը, ինչպէս վերը ասուեցաւ կարծուելի թէ Յով Հանդէսն էր յարութիւն առած, եւ եկած Մեսիայի սուտ նեղով կամենար մի յափշտակել իւր թագաւորութիւնը՝ վասնզոյց ասելի կասկածած աշխատաւ մեր ազատանել և Յիսուս մինչեւ Յիսուս այս իմանալով, նաւով գնաց Դալիլեացւոց Ծովի Ամենայիդայի անապատը։ Ժողովուրդը հետեւեցան պատերով ոտքով, գնացին նորա մօտ ցամաքաւ, ոմանք կենաց խօսքը լսելու համար, ոմանք էլ իրանց հիւանդներին բժշկութիւն համար։ Այդ միջոցում առաքեալները գարձած էին քարոզելու թիւնից։ Մատ. գ. 23. գր. 14. 15. մարկ. գ. 30—44. գուկ. բ. 10—17. յով. գ. 1—14. է. 8։

14-18 Այսուհետեւ պարզ տեսնում ենք Ջրհեղեղի մեծ սէրը եւ անհաւատացողութիւնը դէպի իւր ժողովուրդը։ Նա ամբողջ օրը աշխատեց՝ մինչեւ անգամ հաց ուտելու ժամանակ չունեցաւ։ Նա ոչ միայն կենաց խօսքերով ժողովրդեան քարոզեց հոգիները կերակրեց, ոչ միայն նոցա հիւանդները բժշկեց, այլ եւ նոցա քաղցած մարմինը անուշ հացերով կշտացրեց։ Թէ մենք բոլորովին կնուիրենք մեզ Աստուծոյ, կրենք նորա կենաց խօսքերը եւ կը ծառայենք նորա հաւատարմաբար, այն ժամանակ մեր քաղցած հոգին կերակրեալ եւ մեր մարմինը իւր հարկաւորութիւնքը բոլորովին կարգաւորեալ չեն մնանիք։ Հինգ գարեղէն նկանակը եւ երկու ձուկը իրանցը չէին այլ մի երիտասարդի էր։ Մատ. գ. 11. մարկ. գ. 3. 4. գուկ. թ. 11—13. յով. գ. 5—9։

19-21 Ժողովուրդը դատ-դատ կազմեալ նստացրին, որպէսզի հիշատակեն երկրորդը Յիսուսատաւ հացը իւր Աստուածային ձեռքը նախ, գոհացաւ։ Հօրից եւ ապա օրհնեց եւ փրքը կապտների բաժանեց, օրը իսկոյն ամենայն մարդիկ ասելի զարմացան։ Դեռ ասելի ոչ ամեն մի աստուածանեցողը իսկոյն մի մի հաւատարիմ որի մէջ կարելի էր գտնել 10-ից աւելի հացեր։ Կերակրը այսպիսեաւ այնքան շատացաւ, որ խրատ մնացի։ Ասելիս ասեցին բաժնեալ ժողովրդեանը որքան նոքա ասելիսին այնքան հացերը աւելանում էին և զնաց

պակասած տեղը. Այսպէս հինգ հացով եւ երկու ձկներով կերակրուեցան մինչեւ տասն հազար հոգի կանանց եւ երեխաների հետ միասին։ Յիսուս հրամայեց կուտակները հաւաքել Մար. գ. 40. յով. գ. 9—13.

22. Եւ ստիպեաց վաղվաղակի զաշակերտսն մտանել ի նաւ եւ յառաջել յայնկոյս, մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ.
23. Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն ելիլեառն առանձինն կայ յաղօթս. եւ իբրեւ ընդ երեկս եղեւ, անդ էր միայն.
24. Եւ նաւն մեկնեալ էր ի ցամաքէն բազում ասպարիսաք ծփեալ յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն.
25. Եւ ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ի վերայ ծովուն.
26. Իբրեւ տեսին զնա աշակերտքն, զի գնայր ի վերայ ծովուն, խռովեցան, եւ ասեն, թէ առ աչք ինչ իցէ. եւ առ ահին աղաղակեցին.
27. Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս եւ ասէ. քաջալերեցարուք՝ ես եմ մի՝ երկնչիք.
28. Պատասխանի եւ նմա Պետրոս եւ ասէ. Տէր՝ եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի վերայ ջրոցն.
29. Եւ նա ասէ. ե՛կ. եւ իջեալ 'ի նաւէն Պետրոս՝ գնաց ի վերայ ջրոցն, եւ եկն առ Յիսուս.
30. Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ, եւ իբրեւ սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց՝ եւ ասէ. Տէր՝ փրկեա՝ զիս։
31. Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա եւ ասէ. Թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր։
32. Եւ իբրեւ ելին 'ի նաւն՝ հանդարտեաց հողմն։
33. Եւ որք 'ի նաւին էին՝ մատեան և երկիրպագին նմա՝ եւ ասեն. արդարեւ Որդի Աստուծոյ ես դու։
34. Եւ անցեալ եկին 'ի ցամաք 'ի Գեննեսարէթ։
35. Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ եւ ածին առ նա զամենայն հիւանդս։
36. Եւ աղաչէին զնա, զի զոնէ միայն 'ի քղանցս հանգերձի նորա մերձեսցին, և որք միանգամ մերձեցան՝ փրկեցան։

22-27. Յիսուս գիտէր՝ որ ժողովուրդը մտադրուած է իրան թագաւորացնել և իւր աշակերտներն էլ պէտք ստիպեն իրան որ համաձայնուի ժողովրդեան պահանջին, դորա համար նոցա շուտ արձակեց՝ եւ ինքն էլ իւր սովորութեան համեմատ գնաց

առանձին աղօթիւ

Ծովը ութ մղոնի չափ լայնութիւն ունէր, աշակերտները արդէն 3—4 մղոն անցել էին եւ գրեթէ մեծ չարչարանքով ծովի մէջտեղն էին հասել։ Դիշերը շարս կարգի էր բաժանուած, շորրորդ կարգը վերջի պահն էր, ուրեմն Յիսուս գրեթէ բոլոր գիշերը միայն լերան վերայ։ Թէեւ մութ գիշեր էր եւ աշակերտներն մինչեւ չորս մղոն հեռացած էին, այնպէս որ մարդկային աչքով չէր կարելի նոցա դրութիւնը տեսնել, բայց Յիսուս իւր ամենատես աչքով տեսաւ նոցա շփոթուած դրութիւնը։ Այս միջոցում տեսնելով՝ որ մէկ մարդ գալիսէ դէպի իրանց ծովի վերայ մանգալով, շատ վախեցան եւ համարեցին թէ իրանց երեւակայութեան մէջէ այնպէս երեւում, եւ կամ մի որ եւ է ոգի է, ուստի սարսափած աղաղակեցին։ Յիսուս կամեցաւ մի փոքր եւս նրանցից անցնել՝ որպէսզի առաւել եւս աղաղակեն եւ ապա հասնէ օգնութեան։ Այսպէս էլ շատ անգամ թոյլ է տալիս իւր Ծառաներին նեղութիւններ ու փորձութիւններ կրել, որպէս զի ստիպուած աղօթքով դառնան դէպի իրան եւ ապա ինքն իսկոյն հասնէ իւր ողորմութիւնը։ Յով բ.թ.8. մար. գ. 48. յով. գ.15-19.

27. 28. Քաջալերեցաւուք ես եմ. Աշակերտները լսելով իրանց վարդապետին ձայնը, ուրախութիւնից մոռացան ծովի վտանգը։ Պետրոսը յափշտակուած մեծ սէրից՝ ասաց.— «Տէր, եթէ Դու ես հրամայիր ինձ գալ քեզ մօտ ջրերի վերայ, որովհետեւ երկնքի եւ երկրի արարիչը Դու ես»։ Այսպէս թէեւ առաքինութեան սկիզբը արտամսկան է եւ գժուար, բայց կատարածը քաջագրէ եւ ուրախ։ Խմաստունները իրանց արտամութեան ժամերում դիմում են Աստուծոյ աղօթքով, գիտելով՝ որ Նա է միայն որ թշուառութեան եւ հալածանաց փոթորիկների մէջ եղածներին, օգնութիւն է հասնում, ասելով. քաջալերեցարուք ես եմ մի երկնչիք։

29-33. Երբոր Աստուածային ձայնը կանչեց վեր, իսկոյն Պետրոսը մտաւ ծովը եւ գնումէր ջրերի վերայ։ Աստուածաբաններնրանց մտաւ ծովը եւ գնումէր ջրերի վերայ։ Աստուածաբաններ՝ որ մեկնում են թէ՝ շրջակայ օդը բռնած Պետրոսին տարից ոմանք առում են թէ՝ ջրերի յեղյեղուկ բնութիւնը, որպէս մի կայուն մարմին, առել էր իւր վերայ Պետրոսի

մարմնու Ծանրութիւնը, բայց քամու սասակ միջոցում Պետրոսը փախեցաւ Թերահաւատութիւնից, ուստի և կիսով չափ ընկղմուեցաւ և ազազակեց՝ ասելով.— Տէր փրկիր զիս։ Նուազով դիմաց ձեռքը կարկառեց և ասաց. Թերահաւատ ինչո՞ւ երկմտեցիր։ Աշխարհիս փոթորկոց կանքի մէջ պէտք դիմենք Յիսուսին։ Նա ուրախութեամբ մեզ կանչում է իւր մօտ։ Եթէ մենք էլ պէտք ուրախութեամբ և թէ թերահաւատութեամբ դիմենք դէպի Նա, թերահաւատութիւնը մեզ կկործանէ եթէ չազազակենք՝ Տէր փրկիր մեզ դի կորնչիմ։ Յիսուսի ջրերի վերայ շրջելը Պետրոսի նման չէր, այլ նա բան Աստուածաբանից ունէր իւր մարմնու համար չորս օձիս — Նրբութիւն, պայծառութիւն, անկրելիութիւն և թեթեւութիւն,— որոնց չէր գործադրում միշտ։ որ չէր կատարել իւր սեռքենութեան խորհուրդը՝ այնպէս։ չարչարելը, խաչուելը, և իւր փառքի մէջ մտնելը, փասնորոց Քրիստոսի մարմինը նախքան մահը, յարութիւնը թանձր էր, ծանր և չարչարելի։ բայց յարութիւնից յետոյ, մտնելով իւր փառքի մէջ՝ նա դարձաւ նուրբ պայծառ, լուսաւոր, թեթև և անչարչարելի։ Թէև այսպէս, բայց երբեմն բան հարկաւորութեան, նա հէ իւր չարչարանքից առաջ, մտածէ իւր Աստուածային Փառքի մէջ, ինչպէս Սուրբ Պետրոս Ծիսնեղու ժամանակ առաւ իւր մարմնու մէջ նրբութիւն, այնպէս որ թափանցաւաց դուրս եկաւ մարդարդոնից անխոնջ պահելով նրա կատարութիւնը։ Փոթոր լեռան վերայ առաւ իւր մարմնու մէջ պայծառութիւն՝ այնպէս որ ոչ միայն լուսաւորեց մարմինը, այլ եւ պայծառացրաւ հանդերձը։ Անկրելիութիւնը կամ անապականութիւնը առաւ իւր մարմնու մէջ՝ երբ քարանուն որ ծոմ պահեց եւ աղաղակելով իրանից հանկրելութիւնը՝ սկսեց քարշելու։ Իսկ այսուհետ էլ առաւ իւր մարմնու մէջ թեթեւութիւն՝ այնպէս որ առանց սայլերու օգի եւ ջրի բնութիւնը շրջեց ջրերի վերայ։

Մարն նուրբ, հանդարտեց քամին, նաւակը շուտ հասու նաւահանգիստը։ Այսպէս Յիսուս Ծովի վերայ չորս հրաշք գործեց։ Ա. Պետրոսի ջրի վերայ գնալը Բ. Կրան գնալը Գ. Քամուն դադարելը։ Դ. Նաւին նաւահանգիստ հասնելը։ Այսպէս եթէ մենք

տաղնապումնք փորձութեան սաղարտի ալիքների հարածանքից, պէտք է դիմենք դէպ ի խաղաղարար Յիսուսը, մեր հոգին պիտի արարարտնենք Նորա ընդունելութեան համար՝ տրժանաւորելու նաւակ. երբ նա կ'մտնի մեր նաւակը՝ մեր հոգու մէջ կ'տիրէ մեծ խաղաղութիւն, և նա շուտով կ'հասնի իւր նաւահանգիստը Դուկ. իդ. 26. յով հ. գ. 21—37. գործ. գ. 21. հռ. ժ. 12. 13:

34—36. Բեթսայիդան Գենեսարէթայ նաւահանգիստն էր, որ տեղից գնացին Գենեսարէթ և ապա Կափառնայում. ուրեմն դաբա մի մեանց մօտ քաղաքներ են։ Ժողովուրդը, որոնք կերած էին հրաշալի հացը՝ դիշերը մօտակայ գիւղերից մէջ անցուցանելով, սուաւօտեան գնացին մի և նոյն անապատը և կամենում էին Յիսուսին թագաւորացնել, բայց այնտեղ չգտին Յիսուսին։ Այդ միջոցում տեսին, որ ուշա Տիբերիայից գալիս են մի քանի նաւակներ, նրանցից քրեհով բռնեցին, և անցան Գենեսարէթայ երկիրը, այստեղ գտին Յիսուսին բարոզութեան մէջ, և ասացին.— «Ռաբբի երբ եկիր այստ»։

Որով հետև Քրիստոս ուրիշ անգամ ևս գնացած էր այդտեղ, վասնորոյ տեղական բնակիչները շուտ ճանաչեցին Նորա, ուստի ամենայն կողմից հիւանդներ էին բերում և մինչև անգամ հանդերձի ծայրին մատնելով, բժշկուում Յիսուս այստեղ սկսեց քարոզել երկնային հացի համար, որ է իւր մարմինը և արիւնը։ Այսպէս, եթէ Յիսուսի հանդերձի ծայրերը բժշկութիւն են տալիս հիւանդներին, ուրեմն աւելի զօրաւոր ներգործութիւն կ'ունենան Նորա արիւնը և մարմինը ջերմեռանդ հաւատացեալների վերայ։ Որովհետև Նորա՝ ով որ արժանաւորութեամբ է ճաշակում Յիսուսի մարմինը և արիւնը, ճշմարիտ և ճշմարիտ եմ ասում, Նորա է երկրի խաղաղութիւնը և երկնքի երջանկութիւնը։

Մատ. թ. 20—23. ժդ. 13. յով հ. գ. 29—72:

ԺԼ. ԺԵ.

1. Յայնժամ մատեան առ Յիսուս՝ որք Յերուսաղէմէ փարիսեցիքն և դպիրք՝ և ասեն։
2. Ընդէ՞ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն. զի ոչ լուանան զձեռս՝ յորժամ հաց ուտեն։
3. Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. իսկ դուք ընդէ՞ր անցանէք զպատուիրանսն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն։
4. Զի Աստուած ասաց. պատուեա զհայր քո և զմայր։
5. Եւ որ բամբասէ զհայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի։
6. Եւ դուք ասէք, որ ասիցէ զհայր իւր կամ զմայր իւր, թէ պատարագ է՝ զոր յիմէն օգտիցիս, և ոչ պատուիցէ զհայր իւր և զմայր իւր, և խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն։
7. Կեղծաւորք, բարւոք մարգարէացաւ ՝ի վերայ ձեր Եսայի՝ և ասէ։
8. Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս, և սիրտ իւրեանց հեռացեալ մեկուսի է յիմէն։
9. Զուր պաշտեն զիս, ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս։
10. Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդսն՝ ասէ ցնոսա. լուարուք և ՝ի միտ առէք։
11. Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՝ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։
12. Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա. գիտե՞ս՝ զի փարիսեցիքն իբրև լուան զբանն՝ դայթագղեցան։
13. Նա պատասխանի ետ նոցա և ասէ. ամենայն տունկ՝ զոր ոչ անկեաց Հայրն իմ երկնաւոր խլեսցի։
14. Թոյլ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջնորդք, կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին ՝ի խորխորատ անկանին։
15. Պատասխանի ետ Նմա Պետրոս և ասէ. մեկնեա՝ մեզ զառակս զայս։
16. Ասէ Յիսուս. տակաւին և դուք անմիտ էք։
17. Եւ ոչ իմանայք, եթէ ամենայն որ մտանէ ՝ի բերան, յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ։
18. Իսկ որ ելանէ ՝ի բերանոյ՝ ՝ի սրտէ անտի գայ. և այն պղծէ զմարդն։
19. Զի ՝ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք,

շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք։

20. Այս ամենայն է՝ որ պղծէ զմարդն, այլ անլուայ ձեռաւք ուտել՝ ոչ պղծէ զմարդ։

1. Դպիրները և փարիսեցւոց զլխաւորները բնակւում էին Երուսաղէմում, դրան՝ երբ լսեցին Քրիստոսի գործեցութեան համբաւը, ընտրեցին իրանց միջից մի քանի մարդիկ և ուղարկեցին Յիսուսի մօտ, որպէս զի կամ հնազանդեցնեն նորա քարոզել իրանց օրինաց համաձայն, և կամ նենգութեամբ նորա բերանից մի որ և իցէ բան որսալով, մատնեն ատրութեան։ Մատ. է. 1—23. յով. ժ. 13։

2. Հրէից մէջ դպիրներին և փարիսեցւոց «ձեր» էին ասում։ Սոքա օրէնքների վերայ կամ շատ անօգուտ և ունայն բաներ էին աւելացնում իրանց կամեցողութեան յարմար, և կամ օրէնքների պարզ նշանակութիւնը թիւր մեկնութեամբ ապատարում էին։ Օրինաց մէջ չկար, որ ուտելից առաջ անպատճառ լուանալ, ձեռների աւանդութիւնից աւելացաւ այս, որ ամենայն որ որքան որ մաքուր լինի՝ առանց ձեռքերը լուանալու չպէտք է ուտեր։ Այսպէս էլ սովորութիւն էր բաժակները, գինու ամանները, մահիճները, կոշերը, կարասները, պղնձեղէն և կաւեղէն անօթները, և այլն և այլն, որքան էլ մաքուր լինէին, դարձեալ ամէն մի գործածութեան միջոցում նորից լուանալ և ապա գործածելը նատերը ամէն օր իրանց մարմինը լուանում էին, համարելով թէ պղծուած են, երբ մի անուրբ թռչուն թռած է օդում իրանց մօտով՝ և կամ մի հեթանոս մարդ դիպած է իրանց։ Այսպիսեաւ իրանք իրանց սուրբ և առաքինի էին ձևացնում օտարների առաջև։ Քրիստոս այս ծիծաղելի աւանդութիւնները մերժեց և խնդիր մատնեց։ Մատ. է. 27. մարկ. է. 2-4. գլուխ. ա. 14։

Եկեղեցու աւանդութիւնը չպէտք է խառնել ձերոց կամ ապարդիւն աւանդութեանց հետ։ Ձերոց աւանդութիւնը, ինչպէս տեսնենք, Քրիստոս ինքը մերժեց և անարգեց, իսկ եկեղեցու աւանդութիւնը ասուեցաւ Առաքեալներին, որով հետև նա բոլորովին համաձայն է Սուրբ Գրոց վարդապետութեան հետ, նա օգնական և կատարող է Սուրբ Գրքի խմաստներին և ձեռներին և

ոչ թէ Նորա եղծիչ է և հակառակ։ Քրիստոնէական եկեղեցու աւանդութիւնը սկսուած է հին եկեղեցու մէջ։ Աստուծոյ խօսքը ոչ միայն բանիւ, այլ և գրով որդւոց որդի աւանդեցին միմանց նահապետները և մարգարէները, իսկ նոր եկեղեցու մէջ քրիստոնէութիւնը երկար ժամանակ միայն կենդանի ձայնիւ քարոզուեց և երբ ամենի մօտ ըմբռնելի դարձաւ, այդ ժամանակ առաքեալները գրեցին մի քանի կանոններ նա էլ շատ համառօտ։ Այսպէս աւանդութիւնները ոչ միայն Հայոց եկեղեցու մէջ ընդունուեցան, այլ նաև ամենայն ուղղափառ աղդաց եկեղեցիների մէջ։ Առաքեալներն էլ այս մասին աշխատում էին, որ եկեղեցին հաւատարմութեամբ պահպանէ առաքելական աւանդութիւնները, վարդապետ և Աստուածաբանութիւնից այսպէս սահմանուեցաւ.— «Բան կամ հրաման Աստուծոյ անդիր աւանդեալ եկեղեցւոյն կենդանի ձայնիւ կամ բանիւ յԱստուծոյ կարգեալ պաշտօնէիցն եկեղեցւոյ հին և նոր օրինաց։ Բ.օր.գլ. 7.երբ.ա.1. գործ. ժգ.4.տիկոր. ժա.2. յուդա. 3. բ.պետ.բ.21. թեսաղ. 14։

3—7. Ծնողաց պատուելը Աստուած է օրինադրել։ Դպիրները և փարիսեցիքը այս պատգամն թիւր մեկնելով՝ ասում էին.— «Որդիքը չեն պարտական տալ իրանց ծնողաց պէտքերը, վասն դի օրէնքը չէ պարտաւորում, այլ եթէ տան, է որպէս մի կամաւորական նուէր, պատարագ կամ կորբան, և ոչ որպէս վճար պարտաւորութեան»։ Եւ եթէ ծնողքը պնդումին պահանջէր, որդիքը պատասխանում էին.— «Այն պատարագը որը ես ընծայեցի Աստուծոյ՝ քեզ համար, թո՛ղ նա օգնէ քեզ՝ այնէ, Աստուած տայ քեզ»։ Ահա այսպիսի թիւր մեկնութիւնով Աստուծոյ խօսքը անարգում էին։ Հարկէ մեծ ծաղրածութիւն է ասել, պատչում ենք ծնողաց, բայց նոցա քաղցածութեան միջոցում ոչինչ չտար։ Այսպէս էլ այժմ մեր մէջ գտնում են շատերը՝ որ թոռած իրանց ծնողները և մերձաւորները ամենավերջի դառն դրութեան մէջ, իրանք առատօրէն վայելում են Աստուծոյ բարիքը, կարծելով որ ազատ են Աստուծոյ առաջև պատասխանատուութիւնից։ Կան և այնպիսի ծնողներ, որք երկար տարիներով վայելում են իրանց որդւոց աշխատութեան պտուղները, բայց զանազանտեղեր՝ փողոցներում, հրապարակներում, բամբասանքով, զբ-

պարտեալով՝ կորցնումն իրանց որդեգրութիւնը, յարդը և նշանակութիւնը ժողովրդեան առաջի, շատ անգամ էր նոցա թշուառութեան պատճառ ինքնանում։ Բայց Ցիսուս կամենում հայրը իւր որդեգրելու հետ անձնազոհութեան սիրով կապերով, կապել և միացնել միմեանց հետ ազգի անդամները նոյն սիրոյ անքակտելի կապերով, և զոցա նշանակութիւնը բարձրացնել։ Առաուծոյ և մարդկութեան առաջև։ Բ. օր. գ. զ. ե. 16. եբ. իա. 17. ի. 12. գև. ժթ. 3. առ. իգ. 22. եփ. գ. 2.։

7-9. Կեղծաւորութիւնով, ծեսերի առանդութիւններով Առաուած պաշտելը՝ գուր է։ Մենք պէտք հոգով և ճշմարտութեամբ պաշտենք Առաուծոյ։ Առաուած մեզանից ջերմ սէրէ պահանջում և ոչ կեղծաւորութիւններ։ Կան շատերը, որք ուրիշների առաջև առաքինի ձևանալու համար են եկեղեցի գնում, ազօթում և զանազան առաքինութիւններ գործում։ Պսպիսնիերի առաքինութիւնները Առաուծոյ առաջև անբնդունակ են համարուում։ Ա. թագ. ժգ. 7. հա. իթ. 13. եր. ժէ. 10։

10. 11. Սրանից չ՝պէտք հասկանալ այն եղբայացութեան՝ որպէս թէ պահոց օրերը միս կամ ուրիշ գուարթացուցիչ կերակուրներ ուտելը արգելուած չէ, այլ պէտք իմանալ՝ որ ոչ թէ կերակուրն է պղծում մարդու հոգին, այլ անհնազանդութիւնը։ Եկեղեցու մէջ սահմանուած է պահք պահել նշանակուած օրերում, և երբ որկրամոլութեան սէրը սիրում, մարդին և հասցնում նորա մինչև անդամ Առաուծոյ պատուիրանի անհնազանդութեան, ահա այսէ՝որ մարդին մոլորեցնում։ Ահա այսպէս մարդին պղծումն, այն ամենայն բաները, որ գուրս են գալիս նորա կամքից և մտքից և ոչ թէ լուացուած կամ անլուացուած ուտելը։ Մատ. գ. 2. գործ. ժ. 11. 28. ա. տիմ. դ. 4։

12. Ցաղնժամ ասելով՝ չ՝պէտք հասկանալ թէ հենց ուղիղ այն ժամումը, այլ այս խօսակցութեան ոճէ, նշանակում խօսքը սկսել նոր բաներից։ Երբ Ցիսուս այսպէս վճիռ տալուց յետոյ արձակեց ժողովուրդը և եկաւ տուն, աշակերտները տանը տասցին։ «զիտես զի փարիսեցիքն իրրև լուան զայն զգայեցան»։ Երևի աշակերտները ևս այս խօսակցութեան վերայ զայրացող եղան, որով հետև Ցիսուս նոցա անմտութիւնը ևս յանդիմանեց։ Մատ. է. 7—18. յովհ. ժգ. 12. 13։

13. 14. Ամենայն մարդ՝ որ երկնաւոր Հօրը կամքով, Յիսուսի վարդապետութեան վերայ պատուաստուած չէ, պէտք է կործանուի։ Ամբարտաւան փարիսեցիքը Յիսուսի վարդապետութեան չ՚լսելով կործանեցան։ Ուրիշ այսպէս է. անդէտ, մոլորեալ քարոզիչները ոչ միայն իրանց են կորցնում, այլ նաև իրանց հետևողներին։ Վայ նոցա, որ շահարբութեան նպատակաւ, Աստուծոյ խօսքը թիւր մեկնելով, մոլորեցնում ամբիոններին։ Եսայի.16.խր.19.գլ.10.եր է.31.գ.13-15.բ.12.մատթ.15-20.գլ.25.խգ. 16.28.գուկ.գ.39.յովհ. գլ. 1.բ. պետ. բ.1.17. 18.յայտ. գլ.20։

15-20. Մարդ դրքում խրթին և մեկնութեան կարօտ վճիռներբ՝ աստուծմն առտ՝ Յիսուս ասելիս բառովյանդիմանում աշակերտաց, որ դեռ շատ անգամ լսած լինելով հոգի ապականող վարդապետութիւնների մասին քարոզներ, կրկին այս խօսքի համար բացատրութիւններ էին պահանջում։ Ամենայն օգտակար ուտելիք մնում մարմնում, իսկ անօգուտները դուրս են գալիս։ Սրանից դուրս եկածը յատաջ է գալիս կամքից, իսկ կամքը հոգու զօրութիւն է, եթէ դեռ պիղծ են՝ ուրեմն և բոլոր մարմինը պիղծ է։ Ամեն մեղք սկսուում սրտի միջից։ Մեղաւորը առաջ սկսում չարութիւնը իւր սրտում խորհել և ապա գործադրեր Մտ. գ. 5. առ. խգ. 7. եր. գ. 14. մատ. ե. 28. թ. 3. ժ. 11. մարկ. է. 22. գործ. բ. 22. յակ. ա. 13. 15. ա. յովհ. գ. 15։

21. Եւ երեսաւանի Յիսուսի գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի։
22. Եւ ահա կին մի քանանացի՝ ի սահմանաց անտի նոցա՝ երեսաւ ազաղակէր և ասէր. ողորմեաց ինձ Տէր՝ Որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։
23. Եւ նա ոչ եւս նմա պատասխանէր, և մատուցեալ աշակերտքն նորա՝ ազաչէին զնա և ասէին. արձակեա զնա զի ազաղակէ զկնա մեր։
24. Նա պատասխանէր եւս և ասէ. ոչ ուղարկեալ առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի։
25. Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր. Տէր՝ օգնեա ինձ։
26. Պատասխանեալ նա՝ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։
27. Եւ նա ասէ. այո՝ Տէր՝ քանզի և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց։

28. Ցայնժամ պատասխանի հատնեմ Յիսուս և ասէ. ո՞վ կին զու՝ մեծ են հաւատք քո, եկեցի քեզ որպէս և կամիս. և բժշկեցաւ զուսաբ նորա ի նմին ժամու։
29. Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ի ծովեզերն Գալիլեացւոց, և երեալ ի լեառն նստէր անդ։
30. Մատեան առ նա ժողովուրդք բազումք, որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս, կոյրս, համրեաս, միակողմանիս և այլս բազումս. և ընկեցին զնոսա առաջս նորա՝ և բժշկեաց զնոսա։
31. Մինչև զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համրքն խօսէին՝ կաղք գնային՝ միակողմանիք բժշկէին՝ կոյրք տեսանէին և փառաւորանէին զԱստուած Իսրայէլի։
32. Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զաշակերտսն՝ ասէ. գթեմ զ ժողովուրդդ, զի արդ երեք աւուրք են զի կան առ իս, և ոչ ունին զինչ ուտիցեն. և արձակել զդոսա ոչ՝ կամիմ, զուցէ նեղիցին զճանապարհսն։
33. Ասեն ցնա աշակերտքն. իսկ արդ՝ մեզ յանապատի ասա աւսաի իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ։
34. Եւ ասէ ցնոսա Յիսուս. քանի՞ նկատակ ունիք. և նոքա ասեն. եօթն և սակաւ ձկունս։
35. Եւ հրամայեաց ժողովրդեանն բազմել ի գետնոյ։
36. Եւ առեալ զեօթն նկատակսն և զձկունսն՝ զոհացաւ. և երեկ և եւ ցաշակերտսն. և նոքա ժողովրդեանն։
37. Կերան ամենեքեան և յագեցան, և բարձին զնշխարս կուսորոցն՝ եօթն զամբիւղ լի։
38. Եւ որք կերանն՝ էին արք իրրև չորք հազարք, թող զկանայս և զմանկտիս։
39. Իրրև արձակեաց զժողովուրդսն, ել ի նաւ՝ և եկն ի սահմանս Մագդալայ։

21-28. Յիսուս զպիրներէ և փարիսեցւոց չար նախանձից տարուած խոյս տուաւ գնաց Հեթանոսաց երկիրը։ Սիդոն քաղաքը շինեց մի կղզի ի երայ Քանանու անդրանիկ որդի Սիդոնը և իւր անունովն անուանեց Սիդոն։ Սա քանանացւոց մայրաքաղաքն էր։ Քանանացիք տաւուն էին նաև Փիւնիկեցիք, և որովհետև Աստոց սահմանակից էին, երբեմն նաև տաւուն Աստոր։ Մատ. ժ. 21. մարկ. է. 26։

Պէտքէ իմանալ, որերբ Յիսուս մատեալ զիւղին, որսկ ոչ պէտքէ իջևանէր, պատուիրեց աշակերտներին հեթանոսներից ոչ զիւղ

յայտնել թէ նա է Մեսիան, որպէսզի Հրէից առիթ չտայ ասելու թէ Մեսիան Հրէից համար է եկած և ոչ հեթանոսաց, ուրեմն Յիսուս Մեսիայ չէ, որով հետև շրջում է և ողորմում է նաև հեթանոսաց մէջ։ Ճանապարհին Հանդիպեց Յիսուսին մի քանանացի կին, որ ինչպէս երևում է ճանաչում էր նորա։ Սա ունէր մի շատ սիրական աղջիկ, որ դիւահարած էր, երբ տեսաւ Յիսուսին արտասուք ազատեցին։— «Ողորմեա ինձ Որդի Դաւթի» Յիսուս ոչինչ պատասխան չտուաւ, այլ լուռ շարունակեց իւր ճանապարհը, բայց կինը, նորա հետամուտ լինելով, աղաղակում էր և խնդրում ողորմութիւն։ Աշակերտները ձանձրանալով նորա աղաղակից և կարծելով թէ Յիսուս ևս կ'ձանձրանայ, ասեցին տալ նորա խնդիրը և արձակել։ Բայց Յիսուս տարբերեց և չլսեց, այլ ասաց.— «Ոչ ուրեք առաքեցայ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն իսրայէլի» Բայց կինը չդադարեց, այլ հետամուտ լինելով, տեսաւ, որ նա գնաց և գիւղի մէջ մի տան իջևանեց, և Յիսուս կրի նստեց, ահա կինը մտաւ տուն, ծունր դնելով մօտեցաւ Տէրին, և ասաց.— «Ողորմեա ինձ, Տէր, զի դուստր իմ չարաչար այսահարի» Տէրը ասաց.— «Ոչ է պարտ առնուլ զհաց (շնորհս) մանկանց (իսրայէլացւոց) և արկանել շանց (հեթանոսաց)։ Յիսուսի այս խիստ պատասխանը չվրդովեց կնոջը, այլ նա մեծ խոնարհութեամբ պատասխանեց.— «Այո, Տէր, քանզի և շուն կիսակրին ի փշրանաց անկելոց 'ի սեղանոյ Տեառն իւրեանց» Յիսուս, տեսնելով կնոջ այս մեծ հաւատը և խոնարհութիւնը, ասաց.— «Ելրթ վասն այդր բանի եղ զեան 'ի դստերէ քումմէ» Իսկայն բժշկուեցաւ։ Եթէ մենք էլ այդ կնոջ հաւատով մտնենանք Յիսուսին, ոչ թէ շան բաժին կ'տանանք Յիսուսից, այլ մանկանց հացովը կ'սպրենք, վանողոյ և պէտք է անդադար ազօթեր «Եթէ առնուցումք զոր խնդրեմք և թէ ոչ առնուցումք, յաստաւեսցուք միշտ յաղօթս, և ոչ միայն մինչ առնումք զշնորհակալութիւնս մատուցուցուք, այլ նաև եթէ 'ի բաց մերժիցիմք, քանզի Աստուած մինչ բաց ասէ զլեզն, ոչ է նուազ շնորհ քան թէ շնորհեալ իցէր մեզ զայն, զի մենք ոչ այնպէս գիտեմք թէ ոյք իցեն, ոյք օգտիցեն մեզ, որպէս նա դիտէ» Ոսկեբերան Յովբ. Ժդ. 15. մատ. ժ. 6. մարկ. է. 26. 27.

29—39. Ցիւրասի և Պիդոնի կողմերից գնաց Դեկապոլիս։ Որովհետև այս կողմերում Յիսուսի համբաւը շատ էր դուրս եկած, երբ լսեցին Փրկչի գալուստը՝ ամէն կողմերից դիմեցին դէպ ի նա։ Յիսուս էլ բարձրացաւ սարը տեսնել իւր մօտ եկող ժողովրդին։ Ոչ մի ցաւագար առանց կատարեալ առողջութեան չէր դառնում։ Հիւանդների բժշկելուց յետոյ ուշք դարձրաւ նաև առողջների վերայ, որով հետև ժողովուրդը ապշած երեք օր էր, որ անքուն և անկերակուր երկնային վարդապետի քարոզութեան վերայ զմայլուած, մոռացած էին իրանց մարմնու պէտքերը։ Ինչպէս մարմնասէրները բոլորով մոռանում են հոգևոր բաները, այնպէս էլ հոգեզէն կանանց քաղցրութեամբ զմայլուածները մոռանում են մարմնու պէտքերը։ Զամբիւղը սակառուց պատիկ է։ Ուտողների թիւը հասած էր 8000-ի։ Յիսուս հրամայեց կուտոները հաւաքել։ Ուրեմն Աստուծոյ տուած պարգևների մնացորդը անգամ չպէտք է ոտնակոխ առնել։ Մագդալայ տաւում էր նաև Մագդալէն, ծովի արևմտեան կողմումն էր։ Մարկոսը ասում է Դալմանուֆայ։ Երևի այս երկու տեղերը միմեանցից մօտ էին։ Մատ. գ. 25. բ. 10. 28. ժբ. 40. ժդ. 18—22. մարկ. է. 31. բ. 3։

Գլ. ԺԶ.

1. Եւ մատուցեալ Փարիսեցիքն և Սադուկեցիքն փորձելով խնդրէին ՝ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել նոցա։
2. Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա. յորժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինիցի՝ զի կարմրացեալ է երկին։
3. Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ. զի շառագունի տրտմութեամբ երկին։ Արդ՝ զերեսս երկնի կարէք քննել, իսկ զնշան ժամանակիս ոչ կարէք գիտել։
4. Ազգ չար և շնացող՝ նշան խնդրէ, և նշան մի տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի, և եհեղ զնոսա և գնաց։
5. Գնացին և աշակերտքն յայնկոյս, և մոռացան առնուլ հաց։
6. Ասէ ցնոսա Յիսուս, տեսէք և զգոյշ լերուք ՝ի խմորոյ Սադուկեցւոցն և փարիսեցւոցն։
7. Նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին թէ հաց ոչ բարձաք։
8. Գիտաց Յիսուս և ասէ. զի՞ խորհիք ՝ի միտս ձեր թերահաւատք՝ եթէ հաց ոչ ունիք։

9. Տաճարին չիմանայք՝ և ոչ յիշէք զՀինգ նկանակսն 'ի հինգ հազարսն, և քանի սակառի բարձէք։
10. Եւ ոչ զեօթն նկանակսն 'ի չորս հազարսն, և քանի զամ-զամբիւղս բարձէք։
11. Արդ զիարդ ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զզոյշ լինիլ 'ի խմորոյ Փարիսեցւոցն և Սադուկեցւոց։
12. Յայնժամ իմաց առին, թէ ոչ ասաց զզուշանալ 'ի խմորոյ, այլ յայտնագոյն Փարիսեցւոցն և Սադուկեցւոց։
13. Եւ եկեալ Յիսուս 'ի կողմանս Փիլիպեայ Կեսարիայն, հարցանէր ցաշակերտսն՝ և ասէր։ զո՞ զոք ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ Որդի մարդոյ։
14. Եւ նոքա ասեն. սմն զՅովհաննէս մկրտիչ, և այլք զՆղիա, և կէսք զՆրեմիա, կամ զմի զոք 'ի մարգարէիցն։
15. Ասէ ցնոսա Յիսուս. իսկ զուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ։
16. Պատասխանի եւ Սիմոն Պետրոս և ասէ. Դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանւոյ։
17. Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնա. երանի քեզ Սիմոն Որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայր իմ որ յերկինս է։
18. Եւ ես քեզ ասեմ. զի Դու ես վէմ, և 'ի վերայ այդր վէմի շինեցից զեկեղեցի իմ և դրունք դժոխոց զնա մի՝ յաղթեսցեն։
19. Եւ տայց քեզ զբանսն արքայութեան երկնից, և զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձակեալ յերկինս։
20. Յայնժամ սաստեաց աշակերտացն, զի մի՝ ումեք ասիցեն՝ թէ նա է Քրիստոսն։

1. Փարիսեոքք և Սադուկեցիք միմեանց թշնամի էին, բայց Յիսուսի դէմ հակառակելու համար միաբանեցան։ Պղատոս և Հերոդէս էլ միմեանց թշնամի էին, բայց Յիսուսի սպանելու համար բարեկամացան։ Այսպէս էլ շատ անգամ միմեանց հակառակ թշնամիները բարեկամանում են արդարին հալածելու համար։ Այս ասացին ոչ թէ հաւատալու համար, այլ Յիսուսի գանձագիրքերը ժողովրդեան առաջև ամբաստանելու համար Մատ. գր. 38. Մարկ. գ. 11։

2—4. Գրքերի և գրքի երեսը քննում էք, բայց Մեսիայի համար սահմանած ժամանակը չէք սրտնում և չէք կամենում ճանաչել նորա։ Ինչպէս երեկոյեան ամպի կարմրութիւնը նշանակ

պարզութեան, այնպէս էլ մարգարէից զրուածքը պարզ նշան են Մեսիայի գալստեան։ Մարգարէները գրած են Մեսիայի համար՝ թէ նա պէտք կոյրերին աչք տայ, կաղերին ոտք, աղքատներին աւետարանէ, և այլն, և այլն։ Նոքա չեն ասել թէ Եղիայի պէս պէտք երկնքից հոր իջուցանէ՝ և կամ Մովսէսի պէս մանանայ։ Իսկ եթէ Մեսիայի գալստեան ժամանակը քննէք կ'տեսնէք՝ որ լրացած է, ինչպէս վկայում է Դանիէլ մարգարէն։ Ուրեմն Մեսիայն ես եմ՝ որ եկած եմ, բայց շնացող և չար ազգը չէ ընդունում Մա. թ. 10. բ. օր. ժթ. 15. դան. թ. 24. ես. է. 5. մատ. ժբ. 39։

5—6. Տեսա՝ որ նոցա հետ խօսիլը օգուտ չունի, որոմած նոցա անհաւատութեան վերայ՝ կրկին անգամ դնաց ծովի արևելեան կողմը, որտեղ հօթն նկանակը բազմացրաւ։ Այդ տեղ իրան շատ հաւատացեալներ ունէր։ Աշակերտները վատուեցան և մոռացան հաց վերցրանել։ Ազատող աստուծէ ծերոց վերնասակաւ աւանդութիւնները, հերետիկոսաց մտաւ վարդապետութիւնները, իրանց արդար ձևացնող կեղծաւորութիւնները, որ խմորի պէս ծածկաբար կամաց կամաց մտնում են և մարդոց միտքը մտրեցնում։ Ուրիշ անգամ էլ Աստուծոյ արքայութիւնը նմանեցրաւ խմորի։ Երևում է՝ որ այդ Սադուկեցիները հերով դիանոներ էին։ Ես. թ. 1—2. մատ. գ. 14. ժգ. 33. իր. 16 մար. գ. 6. ժբ. 13. զուկ. ժբ. 1։

7—12. Միմեանց մեղադրում էին, որ մոռացել էին հաց վերառնելը։ Երևի առաքելոց հաւատը սակաւ էր, երբ նոքա չ'խորհեցին որ հազարաւոր մարդկանց մի քանի նկանակներով կերակրողը, կարող է նա և իրանց կերակրել՝ ինչով։ Յիսուս յանդիմանեց նոցա թերահաւատութիւնը։ Նաև անգամ յանդիմանութիւնը և խրատը մարդին միտք և հանձար են տալիս։ Մարկոսի. բ. 16—19։

13. Փիլիպեայ-Կեսարիան Փիւնիկիացոց կողմերում Լիբանանու լերան ստորոտումն էր, Դայրիեայի հիւսիսային սահմաններում, Յորդանանու աղբիւրների մոտ։ Սա հնումը աստուծոյ «Այրիսայ» յետոյ երբ Դանայ ցեղի ձեռքն ընկաւ աստուծոյ «Դան,» բայց երբ Խարայելի երկիրը ընկաւ Հռովմայեցւոց իշխանութեան տակ և Յրաքանչիւրոց աշխարհին տիրեց Փիլիպպոս չորրորդապետ

տը, այդ ժամանակ սա վիրանորոգեց այս քաղաքը և իւր անուն-նով կոչեց Փիլիպպայ-Կեսարիա։ Կեսար նշանակում կայսր, Կեսարիա-կայսերական՝ այնէ, Փիլիպեան-կայսերական։ Մի ուրիշ Կեսարիա էլ կայ Միջերկրական ծովի եգիպտում։ Գործ. ժբ. 29. գործ. ը. 40։ Յիսուս գնաց Փիլիպպայ-Կեսարիայի կողմերը, և որովհետև իւր մեռնելի և աշակերտներից որոշուելի ժամանակը մօտեցած էր, մէկ տարի էլ չէր մնացել վանորոյ լաւ համարեց, այս մասին խօսել նոցա հետ, բայց առաջ ուզեց նոցա հաւատը հաստատել, վանորոյ ճանապարհին աղօթք արաւ նոցա համար, որ Հայր Աստուածը տայ նոցա ուղիղ հաւատոյ դաւանութիւնը։ Ուրիշ ժամանակ էլ աղօթք արաւ նոցա համար։ Ուրեմն ամէն գործի սկզբում պէտք է աղօթել Աստուծոյ։ Մատթ. ը. 27. զուկ. թ. 18. իր. 32 յովհ. ժէ. 9—17։

14-15. Թէպէտ առաքեալները գիտէին, որ Յիսուս Աստուածանից ուղարկուած Մեսիայն է, բայց նոքա չէին իմանում, որ նա է Հօր Աստուծոյ Ճշմարիտ և բնական Որդին, յաւիտենից առաջ ծնուած Նրանից, իսկ այժմ մարմնացած եղած է Որդի մարդոյ, ուստի և հարց առաջարկեց՝ ասելով։ «Ասկ գուբգն ասէք զինէն թէ իցեմ։» Մատ. ի. 1. ժա. 14. ժգ. 55. ժդ. 2։ 33. զուկ. թ. 7. 8. յովա. 49. գ. 70. ժբ. 37։

16. Թէպէտ հաւատացեալները, մարգարէները, հրեշտակները, իշխանները, թագաւորները և այլն, իրանց արքունեան, գիտունեան և իշխանութեան նկատմամբ, Սուրբ Գրքի մէջ երբեմն «Որդի Աստուծոյ» կամ Աստուած» են ասուած, բայց այստեղ Պետրոսը Հօր Աստուծոյ ազգմամբ՝ բոլոր աշակերտաց կողմից, կենդանի Աստուծոյ Որդի դաւանելով, ցոյց է տալիս, որ Յիսուս ոչ թէ սրբերական կամ շնորհական Որդի է Աստուծոյ, այլ բնութիւնակից, բնական Որդի է Հօր Աստուծոյ, կատարեալ մարդ, կատարեալ Աստուածութիւնամբ։ Եր. է. 1. իր. 28. մատ. 4. 25. գ. 17. յովհ. գ. 13. գործ. ը. 37. ա. յովհ. գ. 15. է. 5։

17. Պետրոսը երանութիւն պաժանացաւ հաւատքի դաւանութեան համար։ Պետրոս թարգմանութիւն ժամանակ կոչուեցաւ Սիմէոն, որ թարգմանվում է «Հնազանդ» «Յոնան» թարգմանուում է ազաւնի։ Եվ Սիմէոն—հնազանդ, հեռող ազաւնու միամտութիւն, մարդկային միտքը չէր կարող հասնել այս բարձր խոր-

հրդեհ, այնպէս որ ոչ Դու կարող էիր հասկանալ իմ Աստուած լինելս, և ոչ ուրիշները կարող էին քեզ սովորեցնել այս, այլ միայն իմ բնութիւնակից և համազգակից Հայրս յայտնեց քեզ իմ մասին։ Յով. հ. ա. 13. գ. 44. 45. ա. կոր. բ. 10. գաղ. ա. 11-17. եփ. ա. 17-19. կող. ա. 26. 27. ա. յով. և. 20։

18. Յիսուս, սրանից առաջ Սիմէոնի անունը փոխած էր Պետրոս կամ Կեփաս դրած, որ թարգմանւում է վէմ։ Այժմ կրկնում է ասելով.— «արդարև վայել է քեզ վէմ անունը, որով հետև քո տուած վկայութիւնից երևում է, որ Դու հաւատքի մէջ հաստատ անձն ես։ Ուրեմն իմ եկեղեցու հիմքը պիտի դնեմ քո քարոզութիւնն վերայ։» Պետրոսը իւր քարոզութիւնը սկսեց Հրէից և հեթանոսաց մէջ, բայց փրկութիւնն կողմանէ եկեղեցու հիմքը Քրիստոսն է, իսկ քրիստոնէաքը Աստուծոյ հոգևոր տաճարի կենդանի քարերն են շնորհքով, մանաւանդ նոքա, որոնք գործում են Քրիստոսի եկեղեցու մէջ, ինչպէս ասում է.— «Աստուծոյ հոգևոր շէնքը շինուած է առաքելոց և մարգարէից հիմքի վերայ։» Ահա այս մտքով է ասուած՝ թէ.— «Երկնաւոր քաղաքի հիմքերի վերայ տասներիքս առաքելոց անուններն են գրուած։» Պատ. իս. 42. գործ. բ. 14. ժ. 34. եւ. իբ. 6. ա. կոր. գ. 11. ա. պետ. բ. 5. եփ. բ. 20. յայտ. իս. 14։

Հին ժամանակներում սովորութիւն կար՝ որ դատաստան անելու և զանազան հարկաւոր գործեր վճռելու համար, հաւաքւում էին քաղաքի դռների մօտ, և այսպէսից սովորութիւն եղև, որ այդպիսի ժողովքերը Դուռն ասէր, ինչպէս Տաճարատանի համար ասում էր Բաթիրազդին Դուռն։ Դուռն լինելով քաղաքի մասին, գրուած է փոխանակ բոլորին։ Դուռնք դժոխոց ասելով՝ իմացուում, որ դժոխքը իւր բոլոր զօրութիւնով, բնակիչներով, Քրիստոսի թշնամիներով, չեն կարող յաղթել քրիստոնէական վարդապետութեան, այլ ընդհակառակը Քրիստոս պէտք է յաղթել թշնամիները ոտքի տակ կոխելով։ Հռովմ. գ. 1. բ. Թագ. ժդ. 2. բ. Մն. ժբ. 9. եր. լթ. 3. ա. կոր. ժե. 25։

19. 20. «Պապէ», նշանակում է անգեղջ մեղաւորներին արգելել Աստուածային սրբարար շնորհքներից՝ այնէ.— «Պապեցէք զզրաս զոսա և զձեռս։» «Արձակել», նշանակում է սրբի զղջմամբ և կա-

տարեալ խոստովանութեամբ ապաշխարող մեղաւորներին արձակել մեղաց կապանքներից։ Մատ. ժբ. 18. իբ. 13. մար. բ. 10. յովհ. ժ. 23. գործ. ծգ. 10։

Այս գերազոյն իշխանութիւնը Քրիստոս ոչ միայն Պետրոսին խոստացաւ տալ՝ ասելով.— «Տաց քեզ», այլ նաև միւս առաքեալներին խոստացաւ.— «Զոր կապիցէք եղիցի կապեալ։ Եւ այսպէս ցոյց տուաւ, որ այս իշխանութիւնը միայն Պետրոսին չէ խոստացել այլև բոլոր առաքելոց, վասնորոյ և իւր յարութիւնից յետոյ ամենին հաւասարապէս պարգև եց.— «Փչեաց ՝ի նոսա՝ և ասէ, առէք Հոգին Սուրբ, եթէ ումիք թողուցուք զմեղս թողեալ լիցին նոցա և եթէ զուրբուք ունիցիք կալեալ լիցին» յովհ. ի. 22։

Ուրեմն, ինչպէս սրբազան առաքեալները ամենքը միմեանց համապատիւ, իշխանակից և պաշտօնակից էին, այնպէս էլ են նոցա օրինաւոր յաջորդները՝ այն է. առաքելապատիւ Հայրապետները, Եպիսկոպոսապետները՝ Եպիսկոպոսները, և եկեղեցու ամենայն օրինաւոր պաշտօնեայ երեցները, որ օրինաւոր ձեռնադրութեամբ ստացած են այդ իշխանութիւնը եպիսկոպոսից։ Քրիստոս չէ կամենում թշնամիներին իւր դէմ զրգռել Մատ. թ. 30. մար. բ. 30. զուկ. թ. 21. յովհ. ժթ. 7. գործ. ի. 28. իդ. 22. ա. պետ. ե. 1. ա. տիմ. դ. 14։

21. Ցայնմհետէ սկսաւ Յիսուս ցուցանել աշակերտացն իւրոց՝ թէ պարտ է նմա երթալ յԵրուսաղէմ, և բազում չարչարանս չարչարիլ ՝ի քահանայապետէն և ՝ի դպրաց և ՝ի ծերոց ժողովրդեանն՝ և սպանանիլ և յերիս աւուր յառնել

22. Եւ առեալ զնա մեկուսի Պետրոսի, սկսաւ կազել ընդ նմա և ասել քաջ լեցի քեզ Տէր, մի՛ եղիցի քեզ այդ։

23. Եւ նա դարձեալ ՝ի Պետրոս՝ ասէ. ե՛տի յետս իմ սատանայ, զայթագղութիւն իմ ես. զի ոչ խորհիս զուզԱստուծոյն, այլ զմարդկանն։

24. Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր. եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրացցի զանձն, և առցէ զխաչ իւր՝ և եկեսցէ զկնի իմ։

25. Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա. և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։

26. Զինչ օգտիցի մարդ՝ թէ զաշխարհս ամենայն շահեսցի,

և զանձն իւր տուժեսցէ. կամ զի՞նչ տայցէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ։

27. Զի գալոց է Որդի մարդոյ փառաւք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակաւք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր։

28. Ամէն ասեմ ձեզ. զի իցեն ոմանք ՝ի դոցանէ՝ որք ասստ կան, որք ո՛չ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ արքայութեամբ իւրով։

21. Ցիսուս տեսաւ, որ առաքեալներք այժմ լաւ հասկացած են իւր Աստուած և Աստուծոյ Որդի լինելը՝ սկսեց պատմել նոցա իւր կրելի չարչարանքների մասին, որպէս զի այդ չարչարանքները տեսած ժամանակ չզայթաղդուին, այլ իմանան, որ խաչը և չարչարանքը այն ճանապարհն է, որով մարդը կարող է հասնել յաւիտենական կեանքին։ Սրանից առաջ էս խօսած էր իւր մահուան մասին, բայց այնպէս մութ, որ աշակերտները ոչինչ չէին հասկացած։ Հիմայ էլ լաւ չէին հասկանում։ Միշտ այսպէս է, մարդիկը չեն կամենում անհաճոյ ճշմարտութիւնները հասկանալ և ընդունել։ Մատ. ժբ. 40. մարկ. թ. 10. 31. 32. զուկ. ժբ. 32—34. հռ. գ. 8։

22. 23. Պետրոսը Տէրի պատիւը պահելու համար՝ փոքր ինչ հեռացնում աշակերտներից և սկսում յանդիմանել նորա։ Այս յանդիմանութիւնը շարժուեց Պետրոսի մեծ սէրից, նա չէր կամենում ընդունել՝ որ իւր Տէրը չարչարուած տեսնէ։ Երևում՝ որ Պետրոսը Տէրի գովելուց այնպէս համարձակուեցաւ մինչև անգամ յանդիմանել նորա։ Միշտ սատանան ընտիրներին է որսում։ Որքան մենք Աստուծոյ սիրելի լինենք, այնքան աւելի զգուշութիւն պէտք ունենանք սատանայի դէմ։ Սատանայ նշանակում՝ ճշմարտութեան թշնամի։ Այժմ Պետրոսը սատանայ ասուեցաւ, որովհետև հակառակելով Քրիստոսի խօսքին, կամենում՝ ընդդէմ Հօր Աստուծոյ կամքին, Ցիսուսին տեսնել մարմնաւոր մեծութեան մէջ, որ իրանք էլ նորա մօտ պատիւներ վայելէին։ Մատ. ե. 1. ի. 21. մարկ. թ. 33. զուկ. իբ. 24։

24-27. Այս խօսքերով սովորեցնում՝ իւր հետևողներին առաքինութեան համար անձնուրացութեան հոգի ունենալ։ Կան մարդիկ, որք աշխատում՝ աշխարհի բարիքը շահել, բայց իրանց հո-

զինեալ երջանկութեան համար չեն էլ մատնումն Մատ. ժ. 23.38. իե. 31. 46. մարկ. բ. 34. զուկ. թ. 23. իգ. 43. յով. ժբ .26. փիլ. ա. 23. հռ.բ. 6. ժ. բ. կոր. ե. 10 ա տիմ. գ. 9։

28. Այս խօսքը կատարուեց քանի օրից յետոյ՝ Պետրոսը, Յակովբոսը և Յովհաննէսը տեսին Քրիստոսին երկնային փառքով և արքայութիւնով թափորական լիրան վերայ, այնպէս՝ ինչպէս պէտք է դատաստան օրը տեսնեն Նորա ամենայն մեհեանները և կենդանիքը։ Մատ. ժէ. 1. 7։

Գլ. ԺԷ.

1. Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ի լեառն մի բարձր առանձինն։
2. Եւ այլակերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորեցան երեսք նորա իբրև զարեգակն. և հանդերձք նորա եղեն սպիտակք իբրև զլոյս։
3. Եւ ահա երևեցան նոցա Մովսէս և Եղիա՝ որ խօսէին ընդ նմա։
4. Պատասխանի եւ Պետրոս և ասէ ցՅիսուս, Տէր բարւոք է մեզ աստ լինել, եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիայի։
5. Եւ մինչդեռ նա խօսէր, ահա ամպ լուսաւոր հովանի եղև ի վերայ նոցա. ձայն եղև յամպէն՝ և ասէ. զա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ համեցայ, զմա լուարուք։
6. Իբրև լուան աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց և երկեան յոյժ։
7. Եւ մատուցեալ Յիսուս բռնեաց հէր զնոցանէ՝ և ասէ. յոտն կացէք՝ և մի երկիւղք։
8. Ամբարձին զաչս իւրեանց՝ և ոչ զոք տեսին՝ բայց միայն զՅիսուս։
9. Եւ մինչդեռ իջանէին ի լեռնէ անտի. պատուիրեաց նոցա Յիսուս և ասէ. մի ումեք ասիցէք զտեսիլդ՝ մինչև Որդի մարդոյ ի մեռելոց յարիցէ։
10. Հարցին զնա աշակերտքն և ասեն. զիարդ գպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտէ գալ։
11. Պատասխանի եւ Յիսուս և ասէ զնոսա. Եղիա գայ՝ և հաստատեսցէ զամենայն։
12. Այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա եկեալ իսկէ. և ոչ ճանեան զնա.

այլ արարին ընդ նա՝ զոր ինչ կամեցան. նոյնպէս և Որդի մարդոյ չարչարելոց է ի նոցանէ։

13. Յայնժամ ի միտ առին աշակերտքն՝ թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա։

1. Անցեալ գլխի 28 տան մէջ տեսինք, որ Քրիստոս խոստացաւ ցոյց տալ աշակերտներից ոմանց իրան երկնային փառքով պատած։ Այդ օրից մինչև ութերորդ օրը՝ այսէ. վեց ամբողջ օրից յետոյ՝ Յիսուս առաւ իւր աշակերտներից երեքը. Պետրոսին, Յակովբոսին և Նորա եղբայր Յովհաննէսին և տարաւ նոցա Թափորական լեռան։ Ուրիշ ժամանակներ ևս առածէր դրանց իւր հետ։ Օրէնքը մէկ բան հաստատելու համար երկու կամ երեք վկայ էր պահանջուում։ Յիսուս էլ այդ երեքը առաւ, որ նոցա վկայութիւնը ամենքի մտա ընդունելի լինի։ Բ. օր. ԺԷ. 6. իզ. 37. մատ. ժբ. 16. մարկ. Ե. 37. զուտ. Թ. 28։

2. Մինչև որ Յիսուս այդտեղ կանգնած աղօթում մէջ, աշակերտները, նեղացած լինելով բարձր լեռան վերայ ճանապարհորդութիւնից՝ քնեցան, և երբ հրաշալի լոյսը ճառագայթեց նոցա աչքերի վերայ, նոքա զարթնացին։ Այս լոյսը ոչ թէ նորա մարմնու մակերևոյթի և երեսի վերայ, այլ բնական հոգուցը սկսեց փառքով ճառագայթել մարմնու վերայ և մարմնից էլ թափանցեց հանդերձին։ Այդ սպիտակ փայլուն լոյսը՝ հասարակ լոյս չէր, այլ ոսկեգոյն և այնքան հաճելի աչքի տեսութեան, մինչևոր առաքեալները զմայլուելով, չափազանց ուրախացած էին։ Որովհետև Քրիստոսի մէջ Աստուածային և մարդկային բնութիւնը միաւորուածէր մի Աստուածային անձնի հետ, վասնորոյ և Քրիստոսի բանական հոգին տեսնում էր Աստուածային էութեան բանական տեսութիւնը, որովհետև փառաւորուածէր արդէն կուսի յարգանդի մէջ յղացման սկզբից, բայց որովհետև Քրիստոս պէտք է կատարել ամենայն տնօրէնութիւնները՝ այսէ. քարոզել, ուսուցանել, չարչարուիլ, խաչուիլ, մեռանիլ և այլն, վասնորոյև այդ փառքը գերբնականաբար միայն հոգու մէջ պահպանելով, թոյլ չտուաւ զեղանիներնաև մարմնու մէջ, վասնզի փառաւորուած մարմինը չէր կարող ածիր չարչարուիլ, խաչուիլ և այլն։ Այժմ զեղանիներնաև մարմնու մէջ կամեցաւ այս պայծառութեան մեծ փառքով հաստատել իւր Աստուածութիւնը աշակերտաց մտաց, որպէսզի, երբ

նոքա տեսանն իրան թաքի վերայ բեւեռուած, չի երկմտանան եւ յուսահատուին, այլ ուրախութեամբ դիմեն դէպի ջրաբաղանքը՝ որև փառացը հաղորդ լինին։ Մատ. ժդ. 29—32. եբր. ժբ. 2։

3. Այդ միջոցում Մովսէս և Եղիան երևեցան այդտեղ իրանց ասպիճանաց յարմար փառքով։ Նոքա խօսում էին Քրիստոսի հետ պատարագի վերայ՝ որ պիտի կատարուէր և ժամանակն էլ մօտ էր։ Մովսէսը բերուեցաւ այդտեղ, իբրև օրէնք տուող, և Եղիան՝ իբրև օրէնքի խիստ պաշտպան, երկուքն էլ Աստուծոյ առաջև հաւատարիմ և բարեպաշտ ծառաներ էին, երկուքն էլ Քրիստոսի պէս քառասուն օր հրաշալի կերպով պահոց, երկուքն էլ Աստուծոյ փառքը տեսած և նորա հետ խօսած էին, և երկուքն էլ աքանչելի կերպով աշխարհից փոխուած էին, ուստի շատ յարմարութեամբ այս երկուքը երևեցան Յիսուսին և նորա հետ խօսակցեցին։ Առաքեալները ճանաչեցին զոցա՝ իրանց խօսակցութիւններից, որով հետև Յիսուս կանչումէր անուններով։ Մովսիսի համար ոմանք ասումեն՝ թէ իւր մարմնոյ նմանութեամբ օդեղէն մարմին առած բերուեցաւ այդտեղ հրեշտակաց միջնորդութեամբ, իսկ միւսները հաստատումեն՝ թէ Քրիստոս նորա յարութիւն տուաւ և իսկական մարմնով բերաւ այդտեղ։ Եղիայի համար յայտնի է, որ նա կենդանի ընկելով, բերուեցաւ այդ տեղ։ Այսպէս Մովսէսը մեռեալների միջից, իսկ Եղիան կենդանիներից վերկացին Յիսուսի Աստուածութիւնը։ Ելք. իդ. 15-18. լդ. 9—23. բ. օր. լդ. 5. 6. դ. թագ. ժբ. 21. ժթ. 8—13. դ. թագ. բ. 11. դուկ. թ. 31. յովհ. ա. 17։

4. Պետրոսը շատ սիրեց նոցա ընկերութիւնը և խօսակցութիւնը, այնպէս որ կամեցաւ միշտ վայելել այդ քաղցրութիւնը։ Նա զմայլուած և շփոթուած չէր իմանում թէ ինչ էր խօսում, նա չմտածեց թէ այդպիսի փառաւոր էակները կարող չեն իւր շինած տաղաւարին։ Ահ եթէ Պետրոսը, տեսնելով Քրիստոսի մարմնոյ փառքը այսքան զմայլուեց, ապա որքան առաւել կզմայլուին և կուրախանան նոքա, որոնք երանուած են երկնքում և տեսնում են նորա Աստուածային էութիւնը։ Դրանի նորա ով որ արժանանում է այս զմայլելի տեսութեան։ Մատ. թ. 2—5. դուկ. թ. 29—34։

5—8. Այդ միջոցում Սուրբ Հոգին՝ մի մեծ լուսաւոր ամպի նմանութեամբ շրջապատեց ամենին։ Մոխսոր և Սպիան սկսեցին հեռանալ և ծածկուիլ աշակերտների աչքից։ Աշակերտները շատ վախեցան՝ չ՚լինի թէ իրանց վարդապետը էլ անտեսանելի իրանցից, այդ դրութեան մէջ յանկարծ լսեցին Հօր Աստուծոյ ձայնը, որ ասում էր— «Դա է Որդի իմ սիրելի ինչ որ հաճեցայ։ Այս ձայնը լսելով աշակերտները շատ վախեցին, վանորդ և երեսունների վերայ ընկած երկրպագեցին Յիսուսին և Հօր Աստուծոյ։ Յիսուս նոցա կանգնեցրաւ։ Այսպէս էլ Յով հանէս Աւետարանչի վերայ գրաւ իւր աչքը և կանգնեցրաւ։ Աստուած շատ անգամ ամպերով է յայտնուած։ Նը ժդ. 19. 20. ժդ. 10. ժբ. 9. իդ. 16. իա. 34. դև. ժդ. 2. թաւ. ժ. 34. գ. Թագ. բ. 10. 11. հս. իբ. 1. մատ. գ. 17. զորձ. գ. 22. 23. յայտ. ա. 17։

9—13. Երևումն որ պղակերպու թիւնը զիշերն էր և մինչև լուսանալը ամենայն բան կատարուեցաւ, և ապա իջան լեռներից։ Քրիստոս միշտ սովորութիւն ունէր աշակերտներին նորանոր ճշմարտութիւններով զարգացնել, պայծառակերպու թիւնով ցոյց տուաւ իւր փառքին մէջ ապացոյցը, այժմ էլ յարու թիւն է առաջ բերում, որ նշանակէս մեծ ապացոյց է իւր փառքի և Աստուածութեան։ Աշակերտները Թափորական լեռան վերայ տեսնելով Քրիստոսի երկրորդ զարգացման տիպը կամ պատկերը, և ճանաչելով այդ տեսութեան քաղցրութիւնը, ցանկանում էին, որ շուտ լինի նորա երկրորդ փառաւոր գալուստը, որպէս զի մշանջենաւորապէս զմայրուէին նրանով, վանորդ և կարծում էին թէ արդէն շատ մօտ է, մանաւանդ երբ Եղիային տեսին իջած լեռան վերայ, վանորդ և Հարց առաջարկեցին այս մասին։ Մաղ. գ. 5. մատ. ժա. 14. ժզ. 2. ժբ. 1. զուկ. ա. 17. գ. 3—18. եփ. գ. 15. 16. ա. պետ. բ. 2. բ. պետ. գ. 18։

14. Եւ իբրև եկն՚ի ժողովուրդն, մատեաւ այր մի՚ի ծունր իջանէր և ասէր. Տէր ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՚ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի՚ ի հուր՝ և երբէք՚ ի ջուր։
15. Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել։
16. Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. ով ազգ անհաւատ և

թիւ, մինչև ցե՞րբ իցեմ ընդ ձեզ՝ մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ։ ած զնա առ իս։

17. Եւ սաստեաց ՝ի նա Յիսուս՝ և ել ՝ի նմանէ դեւն. և բժշկեցաւ մանուկն ՝ի ժամէն յայնմանէ։

18. Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա։

19. Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ. ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանեխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց ասի անդր, և փոխեսցի, և ոչինչ անհնարին լինիցի ձեզ։

20. Բայց այս ազգ ոչ երանի՝ եթէ ոչ աղօթիւք և պահաւք։

21. Եւ մինչդեռ շրջէին նոքա ՝ի Գալիլեայ՝ ասէ ցնոսա Յիսուս. մանեալոց է Որդի մարդոյ ՝ի ձեռս մարդկան։

22. Եւ սպանցեն զնա, և յերիր աւուր յարիցէ. և արամեցան յոյժ։

23. Իբրև եկին նոքա ՝ի Կապառնայում, մատեան, որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ոչ ասէ զերկդրամեանն, և ասէ՝ այո։

24. Եւ իբրև եմուտ ի տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս և ասէ՝ զի՞արդեաւ թէ զՍիմոն, թագաւորք զազգս յոյժմ առնուն զհարկս կամ զհանս, յորդւոց իւրեանց թէ յօտարաց։

25. Եւ իբրև ասաց՝ թէ յօտարաց, ասէ ցնա Յիսուս, ապա ուրեմն ազատք են որդիքն։

26. Բայց զի մի զայթաղդեցուսցուք զնոսա, ե՛րթ ի Ծով և ընկեա կարթ, և զառաջինն ձուկն որ ելանիցէ՝ առ և բաց զբերան նորա, գտանիցես սատեր. և զայն առեալ տացես ընդ իմ և ընդ քո։

14.15. Հետեւալ օրը, երբ բազմութիւնը դուրս եկաւ Յիսուսին դիմաւորելու, այս մարդն էլ նրանց մէջն էր։ Մարգկանց սովորութեան պէս՝ իւր թերահաւատութեան պակասութիւնը գնում է աշակերտաց վերայ, և էր իբրև մէկ Քրիստոսից՝ որ բժշկութեան զօրութիւնը հաւատքի մէջն, օգնութիւնէ աղաղակում։ Մատ. գ. 24. մարկ. թ. 14. 23. զուկ. թ. 37. 38։

16-18. Այս խօսքը վերաբերում զպիրներին և Փարիսեցւոց՝ որք վիճաբանութիւնէին անում աշակերտների հետ և ծաղրում նոցա, որ չկարողացան հիւանդին բժշկիլ։ Մարկոսը այս բժշկութեան համար աւելի մանրամասնէ պատմում։ Աշակերտներին գեւեր հանելու իշխանութիւնը արդէն տուած էր, այժմ երբ չկա-

բողացան Հանել չառ զարմացան, վասնորոյ և առանձին տանը Հարցրին թէ ինչու՞ չիարդոյացինք բժշկիր Մատ. ժդ. 21. մարկ. թ. 19—27. գուկ. թ. 42։

19-20. Վեր դաժանութիւնը չպէտք էր ձեզ երկմտութեան մէջ ձգէր, ասաց Յիսուս, զուք պէտք է աւելի հաւատով և աղօթքով նորա զէմ պատերազմիք։ Հրաշագործութեան համար հարկաւոր է առանց երկրպագութեան ընտանեկան սուրբ համարձակութիւնով և հաւատով դիմել Աստուծոյ։ Նրանում՝ որ մի քանի տեսակ դեւեր կան, որոնց ոմանք աւելի չար և զօրաւոր են։ Այս չար ոգին երեխային բռնած էր մանկութիւնից, և դորա համար շատ զգուշութեամբ դուրս եկաւ։ Եթէ մենք մանկութիւնից չար սովորութեան մէջ ենք մնացած, շատ դժուար է կրկին անդամ հրաժարուիլ նրանից։ Մատ. գ. 16. մարկ. 45. ժդ. 31. մարկ. թ. 20։

21. 22. Այժմըւ հասկացան և հաւատացին, որ իրանց սիրելի Տէրը՝ իւր թշնամաց ձեռքը պիտի մատնի, վասնորոյ և խիստ տրտմեցան։ Մատ. գ. 13. ժդ. 21. մարկ. թ. 29-31. գուկ. թ. 44-46։

23—25. Հրէից մէջ օրէնք կար, որ քսան տարեկանից վեր ամէն արու պէտք էր տաճարի ծախքերին համար ամէն տարի տայ երկդրամեան հարկը, որ հրէից կէս սիկղ է (43 կոպէկ), իսկ սաաերը այժմեան (86 կոպ.)։ Նոր հռոմէական մայեցիք տիրեցին հրէաստանին, երկդրամեան հարկը իրանց սեփականացրին, որպէս զի տաճարը հարստանարով, չլինի թէ հրէայք ազատութիւն իրանց ծառայութիւնից։ Յիսուս շրջելով Գալիլեայում, երբ հասաւ Կապառնայում, երկդրամեան հարկահաւաքները Պետրոսին պատահելով՝ հարցրին։— Ուրեմն ձեր վարդապետը տալիս է երկդրամեանը, և կամ մինչև այժմ տուած է թէ ոչ։ Պետրոսը պատասխանեց՝ այո՛ տուած է և կ'տայ։ Երբի այս հարկահաւաքները նոր էին պաշտօն ստացած և չէին իմանում թէ Յիսուս հարկ տուած է թէ ոչ։ Երբ Պետրոսը մտաւ տուն Տէրը յառաջացաւ և հարցրեց։— «Զիարդ թուի քեզ Սիմոն. թագաւորք երկրի յո՞ւմմէ առնուն զհարկս կամ զհասոն։» Կամենում է ասել։— «Թէ և ես Աստուծոյ Որդի լինելով՝ չպէտք է հարկ տամ բայց Աստուծոյ տաճարի բարեփառութեան համար, հրաշքով կ'տամ։» Նը. լը. 13. լը. 26. դ. թագ. ժբ. 4. 5. բ. մն. իդ. 6—9։

26. Որպէսզի նոքա չխորհին ասելով՝ թէ տաճարի պաշտօնը արհամարհու

ընկեա՛ ի քէն, լաւ իցէ քեզ փոխանի մասանել ի կեանս, քան երկուս աչս ունել և անկանել ի գեհեն հրոյն։

10. Զգոյշ լերուք մի արհամարհիցէք զմի ի փոքրկանացս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս յանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է։

1. Այն օրը, որ Յիսուս Պետրոսին հրամայեց հարկը վճարել, աշակերտները հարցրին.— Ո՞վ պէտք է իրանցից մեծ լինի երկնքի արքայութեան մէջ։ Այս հարցը ծագուեց նրանից՝ երբ լսեցին Յիսուսից, որ ինքը պէտք է մեռանի, ուրեմն և մեկը պէտք է իրանց միջին մեծ համարուի, և որով հետև Պետրոսի հարկը իւր հետ միասին հրաշքով առաւ, իսկ միւսներին՝ զանձանակից, վասնորոյ և այս մեծութեան պատիւը Պետրոսին համար էին կարծուում Մար. թ. 32—49. զուկ. թ. 46—50

2—5. Այս երեխայի համար ասում՝ թէ սա Սուրբ Իշնաբոս Աստուածազգեցիկ հայրապետներ, որ այնպէս փոքր էր, որ Յիսուս նորա իւր գիրկը առաւ։ Եթէ չունենանք պարզամիտ երեխայի խոնարհ և հեզ հոգին, անփառասէր և չափաւոր ձգտումները, չէք կարող իմաստասիրութեան անդամ լինիլ, ասաց Յիսուս Մատ. ե. 3. ժ. 42. ժա. 25. մար. թ. 40։

6-9. Երկնաբարը մի մեծ քարէ, որ մարդը չէ կարող շարժել, այլ էշերը կշարժեն։ Հոգով մեկեցիք երբեմն այս օրինակաւ, յանցաւորներին ծովը գցեցին։ Յիսուս սրանով սովորեցնում՝ թէ աւելի լաւ է ամենավատ մեղաւորների պէս պատժուիլ, քան իւր սիրելի աշակերտներից մէկին գայթագղացնել։ Աշխարհի մէջ գայթագղութիւններ կլինեն, բայց վա՜յ նորա, որ գայթագղութիւնների պատճառ է դառնում Մատ. ե. 29. 30։

10. Խոնարհ հոգի ունեցող հաւատացեալները ունին պահապան հրեշտակներ, որոնց պաշտօնն է պահպանել մարդուն չարերից և փորձանքներից։ Այդ հրեշտակները Աստուծոյ մօտ պատիւ ունին և եթէ մէկ մարդ միւսին արհամարհում է և դէպի չարն է ձգտում՝ մարդեցնում, նորա պահապան հրեշտակը Աստուծոյ առաջև չարախօսում՝ մարդեցնող մարդու վերայ, վասնզի Քրիստոսի ամենանուաստ և անարգ աշակերտը Աստուծոյ մօտ շատ մեծէ՝ քան աշխարհի թագաւորները Մա. լը. 1. երբ. ա. 14։

Այսպէս ուրեմն հրեշտակները Աստուծոյ առաջև կարողանում

են բարեխօսել և չարախօսեր ծչմարիտ, որ բացի Քրիստոսից չը-կայ և չի եղած մի այնպիսի բարեխօս, որ կարողանայ իւր արդիւնքով մարդկային բնութիւնը սատանայի գերութիւնից ազատել, բայց մենք Սուրբ Գրքի մէջ տեսնում ենք, որ Սուրբ Հոգին էլ անմունչ բարեխօսէ մեզ համար Հօր Աստուծոյ մօտ, ուրեմն Քրիստոսի բարեխօսութիւնը Հոգւոյն Սրբոյ բարեխօսութեան խափանարար և արգելք չէ։ Յով. հ. գ. 26. հռ. ը. 26-30. ա. կոր. դ. 1. եբր. է. 22-27. ա. պետ. բ. 5. յայտ. ա. 6. հ. ը. 3. է. 9. 10։

Եւ ինչպէս մենք կենդանիներս աղօթում ենք և ողորմութիւն ենք տալիս, ինչպէս ներելի և ակամայ մեղքով մեռած ննջեցեալների համար, այնպէս էլ այն սուրբ ննջեցեալների համար, որոնց փրկութիւնը անտարակուսելի է, (իսկ մահացու կամկոր մեղայ համար ոչ աղօթում ենք և ոչ ողորմութիւն տալիս, որովհետև գինի մահուան ոչ ապաշխարութիւն կայ և ոչ մահացու մեղայ թողութիւն)։ Այնպէս էլ սրբերը, որոնք Սուրբ Հոգւոյն շնորհայ և զօրութեան ընդունարանն են, Հօր Աստուծոյ շնորհական որդիներ են, Որդւոյն կերպարանակից և փառայ հաղորդ են, Աստուածային խորհուրդներին պաշտօնեայ և հաղարդակիներն, վամոլոյ և դրան Աստուծոյ մօտ ունին հրեշտակայ համահաւասար համարձակութիւն, փառք և պատիւ, ուստի և միշտ նոցա պէս բարեխօս և աղօթողին մեզ համար Աստուծոյ առաջև։ Բ. կոր. ժ. 9. եփ. գ. 17. 18. բ. թես. ա. 11. յակ. ե. 14. 15. ա. Տիմբ. 1. հռ. ժ. 30. 32։

Եւ որովհետև Հոգին մարմնու մէջ այնպէսէ, ինչպէս մի բոլորովին լոյս ճրագ, ծածկուած մի ապակու մէջ, որի լոյսը ազատ փայլում կամ ապակու պատուհաններից և կամ նոցա թափանցող ներգործութիւնից, բայց երբ ապակին փշրում այն ժամանակ լոյսն ազատօրէն փայլում։ Այնպէս էլ՝ երբ նա (Հոգին) դուրս է գալիս մարմնից, ազատօրէն տեսնում այն ամենը, ինչ որ չէր կարող տեսնել մարմնու մէջ եղած ժամանակը, լսում այն ամենը, ինչ որ չէր կարող լսել մարմնու մէջ եղած ժամանակը, որովհետև Հոգին այլևս չունի զգայութեան արգելքները, ինչպէս ունէր մարմնու մէջ փակուած ժամանակը, թանձրացած մարմնեղէն իրերի արգելարիթները՝ այն է. հեռաւորութիւնը, օդը, լեռները, և այլն։ Ուրեմն սուրբ, արդար և երանեալ հոգիները երկնքի թագաւորու-

թեան մէջ կատարեալ և իսկական տեսութիւնով ոչ միայն տեսնումն Աստուծոյ աքանչելի մեծութիւնը և ամենացանկալի փառքը, այլ և Յիսուսի հաղորդական գիտութիւնով և հոգու ազատ ներգործութիւնով՝ տեսնում և իմանումն Զինուորեալ Եկեղեցու ջերմեռանդ աղաղակները, փանորոյ և Աստուծոյ առաջև կատարումն իրանց համար նախասահմանուած բարեխօսութեան պաշտօնը։ Մատ. ե. 12. գուլ. ժե. 7-10. յով Հ. ժէ. 24. ա. կոր. ժգ. 12. կող. ա. 5. եբր. ժբ. 23. եփ. ա. 22. 23. բ. տիմ. բ. 11. 12. բ. պետ. ա. 4. ա. յով Հ. գ. 2։

Սրբոց բարեխօսութեան մի քանի վկայութիւններ հին կտակարանի մէջ։

ա. Աստուած պատուիրում Յոբայ բարեկամներին գնալ Յոբի մօտ խնդրել, որ իրանց մեղայ համար թողութիւն խնդրէ։ Յոբ. խբ. 8. 9։

բ. Եբբոր Երեմիան աղօթում էր ժողովրդեան համար, որ գթայ և փրկէ, Աստուած պատասխանում, եթէ Մովսէս և Սամուէլ մարգարէները ևս բարեխօսեն՝ չեմ լսիր։ Եր. ժե. 1. 19։

գ. Զաքարեայ մարգարէն տեսաւ տեսիլքում, որ հրեշտակը Աստուծոյ մօտ բարեխօսում էր Երէից գերութիւնից ազատելու համար և Աստուած ընդունեց նորա բարեխօսութիւնը։ Զաք. ա. 12. 13։

դ. Սողոմոն, իւր Հօր Դաւթի անունը միջնորդ ունենալով, աղօթում Աստուծոյ և Աստուած լսում և կատարում նորա խնդիրքը։ Բ. մն. գ. 16—42. է. 1—15։

ե. Մովսէսը՝ Աբրահամու, Իսահակայ և Յակովբայ անուններով և նոցա սիրոյն համար, ժողովրդեան համար շնորհք է խնդրում։ Բ. օր. թ. 27։

զ. Յոբայ փորձութեան ժամանակ նորա բարեկամները ասում էին.— «Եթէ ամբարիշտ չես և ամբարշտութեանդ համար չես պատժուած՝ սրբերին և հրեշտակներին կանչիր և խնդրիր նոցա բարեխօսութիւնը, տեսնենք թէ, ով պէտք է լսէ և քեզ օգնէ, թէ հարիւր եթէ արդար լինէիր քեզ կ'լսէին և կ'օգնէին»։ Յոբ. ե. 1։

է. Դանիէլը գերութեան ժամանակ լսեց հրեշտակից, որ շատ հրեշտակներ միջնորդում են և օգնում մարդկանց փրկութեան համար։ Դան. ժ. 12—13։

ը. Որեք մանկունքը հնոցի մէջ ազատակամ էին.— «Մի՛ մատներ զմեզ վասն Աբրահամու սիրելւոյ քո, վասն Իսահակայ ծառայի քո և վասն Իսրայէլ սրբոյ քոյ։ Դան. գ. 35. 36։

Թ. Մակաբայեցւոց, Ծովրիթայ և Սիրաքայ Դրքերը թէև նախանոն չեն, բայց յայտնի ապացոյց են ենջեցիների համար ազօթելու։ Ցուցա—Մակաբէն փոգ էր հաւաքում ուղարկում Երուսաղէմ, որ ենջեցիների համար պատարագ մատուցանեն։ Քրիստոսի եկեղեցին առաքեալներից շարունակած է այս վարդապետութիւնը մինչև հիմայ։ Բ. մակ. ժբ. 43—46. տես. գ. 17. 18. սիրաք. ա. կոր. ԺԸ. 29։

Նոր Կտակարանի մի քանի վկայութիւնները.—

ա. Սրբոց բարեխօսութեան վարդապետութիւնը հանրածանօթ լինելով հրէից ազգին, Յիսուս նոցա ասաց.— «Մի համարիք թէ, ես չարախօս ինչ իցեմ զձէնջ առ Հօր, գոյ որ չարախօս կայ զձէնջ Մովսէս, յոր դուք յուսացեալ էք։ Եթէ երկնքումը կարելի է չարախօսել, ուրեմն կարելի է նաև բարեխօսել Յով. Հ. ե. 45։

Բ. Մեծատան և Ղազարոսի առակում Յիսուս յայտնեց, որ անարժանների ազօթքն և բարեխօսութիւնը Աստուծոյ մօտ ընդունելի չէ ինչպէս Աբրահամը չ՚լսեց անարժան մեծատան աղաչանքը և բարեխօսութիւնը իւր եղբարց համար։ Ղուկ. ժզ. 29։

Դ. Անպտուղ թզենու համար այգեգործի բարեխօսութիւնը՝ այգեպէսը ընդունում և մի տարի ևս խնայում Ղուկ. ժզ. 9. 9. բ. կոր. ե. 20։

Դ. Յովհաննէս աւետարանիչը իւր տեսիլքի մէջ տեսաւ որ մարտիրոսների բողոքումն և իրանց արեան վրէժը պահանջում։ Յայտ. գ. 9. 10. ե. 8. բ. 3. 4։

Ե. Պօղոս առաքեալը Աբելի համար ասում է.— «Չի թէպէտև մեռաւ, սակայն տակաւին խօսի։» Ի՚ Հաբէլ բողոքողը, խօսողը ոչ թէ թափած արիւնն է, այլ նորա կենդանի հոգին։ Մեն. գ. 10. երբ. ժա. 4. ժբ. 24։

Այսպէս յաղթական եկեղեցին բարեխօսելով՝ իւր սրբոցն է կատարում դէպի զինուորեալ եկեղեցին։

11. Չի եկն Որդի մարդոյ կեցուցանել զկորուսեալսն։
12. Չիարդ թուի ձեզ. եթէ լինիցի մարդոյ հարիւր ոչխար՝

եւ մոլորիցի մի՛ ի նոցանէ, ոչ թողուցու զենոսուն եւ զնոսա
ոչխարսն ի լերինս, եւ երթիցէ խնդրիցէ զմոլորեալսն։
13. Եւ եթէ լինիցի գտանել զնա. ամէն ասեմ ձեզ, զի ու-
րախ լինիցէ ի վերայ նորա առաւել՝ քան ի վերայ ին-
նոսուն եւ ինոցունց, որ չեցին մոլորեալք։
14. Այսպէս ոչ են կամք առաջի Հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ
կորիցէ մի ի փոքրկանցս յայսցանէ։
15. Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա
յոլովամ դու եւ նա միայն ի քեզ, եթէ լուիցէ քեզ շահե-
ցար զեղբայր քո։
16. Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս եւս կամ
երկուս. զի ի բերանոյ երկուց և երից վկայից հաստա-
տեսցի ամենայն բան։
17. Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասջի՛ր յեկեղեցւոջ, ապա
թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթա-
նոսն և զմաքսաւոր։
18. Ամէն ասեմ ձեզ. զոր կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յեր-
կինս, և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս։
19. Դարձեալ ասեմ ձեզ. եթէ երկու՝ ի ձէնջ միաբանիցին յեր-
րի վասն ամենայն իրացն զոր նիշ և խնդրեսցին՝ եղիցի նոցա
ի Հօրէ իմմէ՝ որ յերկինս է։
20. Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ,
անդ եմ ես ի մէջ նոցա։
21. Ցայնժամ մատեաւ առ նա Պետրոս՝ և ասէ. Տէ՛ր՝ քանիցս
անգամ եթէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա.
մինչև ցեօթն անգամ։
22. Ասէ ցնա Յիսուս. ոչ ասեմ քեզ՝ թէ մինչև ցեօթն անգամ,
այլ մինչև ցեօթանասնեկին եօթն։
23. Վասն այսորիկն նմանեցաւ արքայութիւն երկնից՝ առն թա-
գաւորի, որ կամեցաւ հաշիւ առնուլ իմմէջ ծառայից իւրոց։
24. Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտա-
պան մի բիւր քանքարոյ։
25. Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց վաճառել
զնա տէրն նորա. և զկին նորա՝ և զորդիս՝ և զամենայն
որ զինչ և ունիցի և հատուցանել։
26. Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա՝ և ասէր. երկ-
այնամիտ լեր առիս՝ և զամենայն հատուցից քեզ։
27. Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա,
և զփոխն եթող նմա։
28. Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց,

որ պարտէր նմա հարիւր դահեկան, և կալեալ զնա խեղդէր՝ և ասէր. Հատո՛ ինձ զոր պարտիսդ։

29. Արդ՝ անկեալ ծառայակիցն առ ոտս նորա, աղաչէր զնա և ասէր. Երկայնամիտ լեր առ ի՝ և Հատուցից քեզ։

30. Եւ նա ոչ կամէր, այլ չոգաւ արկ զնա ի բանտ՝ մինչև Հատուցցէ զպարտսն։

31. Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ, և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ եղեւն։

32. Յայնժամ կոչեաց զնա Տէրն իւր և ասէ. Ծառայ չար՝ զամենայն զպարտսն թողի քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս։

33. Իսկ արդ՝ ոչ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ։

34. Եւ բարկացեալ Տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչև Հատուցցէ զամենայն զպարտսն։

35. Նոյնպէս եւ Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում՝ ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

11—14. Եթէ Աստուծոյ սիրելի Արդի Յիսուս մարդոյ որդի եղեւ՝ այն է. մարդացաւ, չարչարուեց և մեռաւ, որ մեզ փրկէ, մի թէ կարելի է որ մենք նորա Հաւատացեալներից մեկին անարգենք։ Եթէ Հովիւը իւր մի կորած ոչխարի Համար այդքան աշխատուեմ, և գտնելուն էլ անչափ ուրախանում, ապա ուրեմն որքա՞ն աւելի մեծ ուրախութիւն է Աստուծոյ Համար՝ երբ մոլորուած մեղաւորը դառնում դէպ՝ ի Քրիստոս և փրկուում Աստուած ամենեին չէ կամենում, որ մարդկին նրանցից մեկին զայթագղեցնելով՝ կորցնեն։ Ղուկ. ժե. 3—6. Յոհ. 10. յովհ. գ. 17. Ժբ. 17. ա. պետ. ա. 18. 19։

15—18. Մինչև հիմա Քրիստոս խրատում միմեանց չ՚զայթագղեցնել, իսկ այժմ սովորեցնում թէ ինչ կերպով պէտք է վարուել մեր եղբօր դէմ, երբ նա մեզ զայթագղեցնում։ Յիսուս այս դիպուածում էլ մեղքաղդրութիւն է սովորեցնում, նա պատուիրում մեզ՝ նախ խոհեմութեամբ և սիրով յանդիմանել նորա առանձնապէս, խօսել նորա հետ զգշութեամբ, յիշել՝ որ կարելի է թէ մենք ենք սխալ, չյամառուիլ և չհակառակել, այլ ամենակիրպ աշխատել դէպ՝ ի բարին համոզել։ Եթէ այսպիսեաւ մեր եղբայրը չէ ուղղուել պէտք է մէկ կամ երկու բարի մարդ-

կանց միջնորդութեամբ խրատել և հաշտուիր, և եթէ դարձեալ յամառ։ Ի՛մա, այդ դիպուածում նոքա մեր ասածներին փաներ կ'համարուին։ Եթէ դարձեալ չի ուղղուիլ պէտք է դիմել եկեղեցու հովիւներին՝ այն է. առաջնորդին կամ քահանայից։ Եկեղեցի բառը այստեղ սրուած է փոխանակ քահանայից կամ առաջնորդաց, և ոչ թէ բոլոր բազմութեան, վասն զի բազմութեան առաջի խայտառակելը աւելի դէպ'ի չարը կ'դրդռէ, և նա աւելի ծանր մեղքի մէջ կ'դատապարտուի, իսկ հոգեւոր հօր յայտնելն է մի հոգեւոր գործ։ Եթէ նոցա ևս չլսեց, իբրև նեխեալ անդամ, պէտք է այդպիսին դնել հեթանոսաց շարքում։ Ի հարկէ եթէ կատարեալ ապաշխարութեամբ կ'դառնայ իւր չարութիւնից, այն ժամանակ կրկին կարելի է այդպիսուց ընդունել և արձակել կապանքներից։ Ղև. ժթ. 17. գ. թագ. բ. 14. մատ. գ. 2. ժզ. 19. ա. կոր. ե. 4. 5. 11. բ. կոր. բ. 6. 8. թես. գ. 14. 15։

19—22. Եթէ ամէն հնարք գործադրես և քո եղբօրդ հետ կարողանաս սիրով ապրիլ քո ամէն խնդիրքդ Աստուծոյ առաջև ընդունելի կ'համարուի, վասն զի միաբանական ապօթքը Աստուծոյ առաջև աւելի զօրաւոր է։ Պետրոսը Յիսուսի ասածների էական նշանակութիւնը վերաբերելով ներողամտութեան, կամեցաւ իմանալ՝ թէ քանի անգամ պէտք է ներել Եօթանասնեկի եօթն հաւասար է 490 թուին։ Յիսուս սրանով ուզեցնում է որքան կարելին է պէտք է ներողամիտ լինիլը Առ. խդ. 16. մատ. գ. 6. 7. է. 7—12. զուկ. ժէ. 4. կոլ. գ. 13։

23. 24. Յիսուս, ցոյց տալով ներողամտութեան անհրաժեշտութիւնը ասաց այս առակս։ Քանքար ասուում է նաև տաղանդ։ Երրայեցւոց բիւր քանքարը ունի Հարիւրքսան միլիոն ոսկու արժողութիւն, վասն զի մէկ քանքարը 125 լիտր է, մի լիտրն 96 դրամ և մի դրամն ունէր մի ոսկու քառ ծանրութիւն, ուրեմն մի քանքարը 12000 ոսկի է 2600 բուբլի, բիւրն որ է, տասնհազար լինում է 120,000,000 ոսկի կամ 390,000,000 դահեկան (26,000,000 բուբ.)։ Յիսուս այս մեծ զումարով ցոյց է տալիս մեր մեղքի ծանրութիւնը, որ մարդը ամենևին չէ կարող վճարել, եթէ Աստուած ներողամտութեամբ չ'մաքրէ։

25—30. Հնումը պլազդինների երբեմն նաև հրէից մէջ սովո-

բութիւն կար ծախել կին, որդի և ամենայն ունեցածներ և պարարքը վճարեր Աստուած քաղցրութեամբ դիմում է դէպ՝ի մեզ և իւր Հայրական ներողամտութեան գրկի մէջն է ընդունում մեզ, եթէ մենք ճշմարիտ զղջմամբ՝ խոնարհ խնդրուածքով՝ դիմենք դէպ՝ի նա։ Մեր ներողամտութիւնը դէպ՝ի մեր ընկերները այնպէս պէտք է լինի ինչպէս Աստուածայինը է դէպ՝ի մեզ։ Դ. Թագ. գ. 1. 2. յտկ. բ. 13։

31—35. Հռովմայեցւոց մէկ գահեկանը հաւասարում է 20 կոպ. հարիւր գահեկանը լինում է 20 ռուբլի։ Ստացայինները բարեպաշտ անձինքներն են, որոնք տեսնելով այս անիրաւութիւնը, զանգատւում են Աստուծոյ առաջև և պատապարելի կացուցանում նորա։ Մինչև հատուցէ՝ նշանակում է անկարելի է հատուցանել, այլ յաւիտեան պիտի տանջուի։ Եթէ մեր ներողամտութիւնը սրտով և հոգւով չէ, այլ միայն արտաքին քաղաքականութեամբ է, այդպիսին Աստուծոյ առաջև զզուելի և անարգ է համարուած։ Ներողամտութիւնը ևս ունի իւր սահմանը, եթէ քո ներողամտութիւնդ հասցնում է քո ընկերիդ մինչև լրբութեան և զգալի վնասակար հետևանքի, պէտք է ամէն միջոց գործադրել այդ մեղքի և վնասի առաջը առնելու համար։ Յիսուս ասէր, քաղցրութիւն, միութիւն և միմեանցից հաւատարմութիւն է պահանջում և ոչ թէ բռնութիւն, խարեբայութիւն, զրկանք և միմեանց դէմ թշնամութիւն։ Նա լաւութիւնը հաղթում է և ամէն պատուիրանաց չարագործի խիստ պատժում թէ ասա և թէ յաւիտենականութեան մէջ։ Մատ. ա. 25. և. 43—48. զ. 12։

Գլ. ԺԹ.

1. Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զբանս զայսոսիկ, փոխեցաւ՝ ի Գալիլեէ՝ և եկն՝ ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու։
2. Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք, և բժշկեաց զնոսա անդ։
3. Եւ մատուցեալ առ նա Փարիսեցիքն փորձէին զնա և ասէին. եթէ արժան իցէ ոմեք արձակել զկին իւր ըստ ամենայն պատճառս։

4. Պատասխանի հա՛ Նոցա և ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն 'ի սկզբանէ՝ արու և էգ արար զնոսա և ասէ։
5. Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր՝ և երթիցէ զկին ինքՋ իւրոյ և եղիցին երկոքեան 'ի մի մարմին։
6. Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին. արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի՝ մեկնեսցէ։
7. Ասեն ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ տալ թուղթ մեկնելոյ և արձակել։
8. Ասէ ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր, այլ 'ի սկզբանէ ոչ եղև այնպէս։
9. Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ արձակեացէ զկին իւր՝ և ոչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեալն առնիցէ՝ շնայ։
10. Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդպէս ինչ վնաս իցէ ընդ այր և ընդ կին, լաւ է չամուսնանալ։
11. Եւ նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բաւականք են այդմ բանի, այլ որոց տուեալ է։
12. Զի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս. և են ներքինիք՝ որ 'ի մարդկանէ եղեն ներքինիք. և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից, որ կարողն է տանել՝ տարցէ։
13. Ցայնժամ մատուցին առ նա մանկտի, զի ձեռն դիցէ 'ի վերայ նոցա՝ և աղօթս արասցէ և աշակերտքն նոքա սաստէին նոցա։
14. Ասէ Յիսուս, թոյլ տուք մանկտոյդ՝ և մի արգելջք զդոսա գալ առիս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից։
15. Եւ եդեալ ձեռն 'ի վերայ նոցա՝ գնաց անտի։

1. Տաղաւարաց ծոնը, որ Հանդիպումէր Սեպտեմբերի մէջ մօտեցած էր։ Յիսուս զիտելով որ առաջիկայ Մարտ ամսուն մէկէն իրան խաչի վերայ բարձրանալու է՝ կամեցաւ այժմ Հանդիպումով Նիւսա զէմ մտնել, այլ Գալիլեայի մէջ շատ գաւառներ և տեղեր շրջելից յետոյ՝ եկաւ Հրէաստան։ Այս երկիրը ասուումէր նաև «յայնկոյս Յորդանանու», որովհետև ժողովուրդը անապատումէ եղած ժամանակը այս երկիրը անուանուումէր «յայնկոյս Յորդանանու։ Երբ որ անցին Յորդանանը թէպէտ այդ երկիրը իրանց համար չէր ասուումէ «յայնկոյս», այլ «յայսկոյս»։ Բայց իրանց անապատի մէջ լի-

նելու յիշատակը պահելու համար՝ ասումէին «յայնկոյս Յորդանանու», անապատի կամ Զիպոսոսի Նկատմամբ։ Եւ որով հետև Զաբուլոնը և Նեփթաղիմը Յորդանանը անցնելից յետոյ ստացան այստեղ երկիր կամ վիճակ, վասնորոյ և այս երկիրը ասուեցաւ նաև երկիր Զաբուլոնի և Նեփթաղիմայ։ Մատ. գ. 13—16, մարք. ժ. 1. գուկ. թ. 51. յովհ. է. 10—14։

3.4. Հրէից մէջ այս խնդիրը մեծ հակաճառութեան նիւթ էր, ոմանք ասումէին թէ ամենաշնչին պատճառաւ այր մարդը կարող է արձակել իւր կնոջը, իսկ ոմանք դորա հակառակ ասումէին, այդ անկարելի, վասնզի այդպիսեաւ քանդուումէ ամուսնութեան կապը։ Յիսուս յանդիմանելով՝ պատասխանեց նոցա Սուրբ Գրքի վկայութեամբ, ասելով.— «Չիցէ ընթերցեալ ձեր թէ, որ հաստատեացն ի սկզբանէ արու և էգ արար զնոսա։» Ուրիշ թագմանութիւններիմէջ գուցածէ „մարդ Պառաբ Մեռա. 27. հ. 2. բ. օր. իդ. 1 մատ. թ. 34։

5.6. Աստուած բոլոր արարածները «եղէցի» բառով ստեղծեց, այժմ էլ «եղէցի» մի մարմին ասելով, հաստատումէ մշանջենաւոր և անբաժանելի միութիւնը ամուսնական սիրոյն։ Այսպէս երբ ամուսնութիւնը Աստուծոյ հրամանաւ կարգադրուած և սահմանուածէ, ուրեմն մարդիկը ամենևին իւնչ իրաւունք մաքառել նորա կարգադրութեան դէմ Մեռ. բ. 24. եփ. հ. 31. 32։

7-9. Ճշմարիտ է, որ Մովսէսը հրամայեց տալ ապահարզանի գիր, որպէսզի կանայքը առանց մարդի մնալով, մեղքի մէջ չընկնին, բայց այս արաւ նոցա խստասրտութեան համար և չհաստատեց այս իրրև հաստատուն օրէնք։ Բայց եռ, ասումէ Յիսուս, իրրև Տէր, հաստատապէս վճռումէմ՝ որ ամենևին ոչ անկարելի քակտել ամուսնութեան միութիւնը, իսկ եթէ նրանցից մէկն պոռնկացած է, կարող է միւսն միանից որոշուիլ ըստ անկողնոյն, ըստ բնակութեան և ոչ թէ ամուսնութեան անրուծանելի կապը քակտելու։ Եթէ զղջայ կինը և իւր սխալմունքը խոստովանի, մեծ խոհեմութեան և գովութեան արժանի՝ այն մարդը, որ կ'ներէ իւր կնոջ և նրանից չի հրաժարուիլ։ Այս խօսքը ասաց Յիսուս աշակերտաց այն ժամանակ՝ երբ նոքա տուն էին հասած։ Բ. օր. իդ. 1. մատ. հ. 31. 32. մարք. ժ. 10. հռ. է. 3։

Այսպէս Աստուած դրախտի մէջ սահմանեց ամուսնութեան

խորհուրդը, իսկ Քրիստոս Հաստատապէս վճռեց՝ որ այս ոչ թէ քաղաքական լոկ գաղնագրութիւն է, այլ սուրբ խորհուրդ։ Նման Քրիստոսի և եկեղեցու միաբանութեան։ Ինչպէս տեսնենք, ամուսնացողը պէտք է ունենայ մի կին, իսկ լծակցի մէկի մահից յետոյ մինչև երեք անգամ կարող միւս լծակիցը ամուսնանալ, օրանից աւելի ամուսնութիւնը հակառակ առաքելոց սահմանադրութեան։ Ամուսնութիւնը արգելուած է հասակը չառածներին, ծերերին, նեղքինիներին, մերձաւոր ազգականներին, խեղդամահներին և այլն։ Այս խորհուրդը մեզ մօտ կատարվում է այսպէս։ Երբոլ լծակիցները միմեանց ազատ հաւանութեամբ եկեղեցու մէջ, բազմութեան առաջև, ուխտում են օգնական լինել միմեանց ամենայն թշուառութեան, փորձանաց և նեղութեան միջոցներում։ Այս խորհուրդը կատարվում է եկեղեցու սահմանած օրերում, սուրբ հարց կանոնաց համաձայն։ Մտ. ա. 28. զուկ. ժզ. 18. Հա. է. 2. 3. եփ. ե. 25—32. բ. կոր. զ. 14։

10.11. Արդարև ցանկութեան կիրք սանձահարելը շատ թեթև բանէ քան ամուսնութեան ծանր լծի տակ մտնելը։ Նատերը մեզանից չեն կամենում ամուսնութեան ծանրութիւնը ծանրաբեր, այլ միայն նոքա են հականում այդ, որոնց աւուրց ողջախոհութեան պարգևը։ Աստուած իւրընդոլը տալիս արժանաւորներին, իսկ մենք պէտք ընտրենք, կամենանք և խնդրենք, ոչ թէ յուսանք մեր զօրութեան և ուշիմութեան, իսկ կարողութիւն տուողը Աստուած է։ Առ. խ. 19. իմաս. ը. 21. մատ. է. 7—11. ա. կոր. է. 7. 28. յակ. ա. 14. փիլ. զ. 13։

12. «Նեղքինի» բառը չպէտք հասկանալ անդամների հատանելը, որ մարդասպանութեան հաւասար գործ է, նամանաւանդ՝ դրանով չէ արգելում սրտի ցանկութիւնը, այլ նշանակում է ամուսնութիւնից հեռանալը։ Կան մարդիկ, որ իրանց նուիրում են մանուսնութիւնից հեռանալը։ Կան մարդիկ, որ իրանց նուիրում են ողջախոհութեան և կուսութեան՝ ազգի և եկեղեցու պաշտաօութեան նպատակաւ, ահա այդպիսեացն է երկնքի արքայութիւնը։ Կան մարդիկ, որ իրանց նուիրում են կուսութեան՝ իշխանութիւն, փառք և հարստութիւն ժառանգելու նպատակաւ, ահա այդպիսիք են, որ չեն կարող ստանալ Աստուածներից սպասելի վարձքը։ Սիրաք. ի. 2. ես. ծզ. 4. 5։

13-15. Հնումը Հրէից մէջ սովորութիւն էր երեխայից տանել սուրբ մարդիկներուն մօտ, որ օրհնեն նոցա, ինչպէս այժմ տանում են քահանայից մօտ։ Երբ երեխային վարդապետը քարոզութեան մէջէր, աշակերտները չկամենալով ընդհատել ընդհատեալ Աստուածային խօսքերը, երեխաներին արգելեցին չմօտենալ Յիսուսին, բայց բաղդը Յիսուսը իւր մեծ գթութիւնով կանչեց նոցա իւր մօտ եւ յուսացածից աւելի տուաւ՝ այնէ. ոչ միայն ձեռն դրաւ նրանց վերայ, այլեւ գիրկը առաւ եւ օրհնեց։ Այս երեխաքը 4—7 տարեկան էին՝ օրէնքով երեւելի քարոզիչներ դարձան։ Մատ. ժբ. 3. 4. մարկ. ժ. 13—16. ղուկ. ժբ. 15—17։

16. Եւ ահա մատուցեալ ոմն առ նա՝ ասէ. վարդապետ բարի՝ զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս։

17. Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս զբարւոյ, մի է բարի, եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտանել՝ պահեա զպատուիրանսն։

18. Ասէ ցնա՝ զորս. ասէ ցնա Յիսուս. զմի՝ սպանանելն եւ մի՝ շնար՝ եւ մի՝ գողանար եւ մի՝ սուտ վկայեր։

19. Պատուեա զհայր քո եւ զմայր, եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։

20. Ասէ ցնա պատանին. զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ. արդ՝ ի՞նչ իւիք պակաս ի ցեմ։

21. Ասէ ցնա Յիսուս. եթէ կամիս կատարեալ լինել, է՛ր՝ վաճառեա զինչս քո՝ եւ տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս, եւ է՛կ զկնի իմ։

22. Իբրեւ լուաւ պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս։

23. Ասէ Յիսուս ցաշակերտսն. ամէն ասեմ ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատուն յարքայութիւն երկնից։

24. Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալեաց մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան յարքայութիւն երկնից։

25. Իբրեւ լուան աշակերտքն զարմացան յոյժ՝ եւ ասէին. իսկ ո՞ կարիցէ ապրել։

26. Նայեցաւ ինքնայ Յիսուս եւ ասէ. առ ի մարդկանէ այդ անկարէ, այլ առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր։

37. Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա՝ահաւասիկ մեք թողաք զամենայն. եւ եկաք զկնի քո. արդ զի՞նչ լինիցի մեզ։

28. Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ. զի դուք որ եկիք

զինի իմ, ի միւսանգամ գալասեան՝ յորժամ նստցի Որդի մարդոյ յաթոռ փառացս իւրոց, նստջիք եւ դուք յերկոտասան աթոռս՝ դատել զերկոտասան ազգն Իսրայէլի։

29. Եւ ամենայն որ ած եղբայր կամ զեղբարս կամ զքոյրս կամ զհայր կամ զմայր կամ զկին կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ, հարիւրապատիկ առցէ եւ զկեանսն յաւիտենականսն ժառանգեսցէ։

30. Բազումք եղիցին առաջինք յետինք եւ յետինք առաջինք։

16.17. Սա մի բարեսէր, պարզամիտ եւ հարուստ պատանի էր, որ ընդունելով նորա, իբրեւ ճշմարտութեան քարոզ, կամեցաւ իւր պահասութիւնները իմանալով Յիսուսից՝ ուղղել իրան, որպէսզի իւր բարի գործքերով կարողանայ յաւիտենականութիւն ժառանգել։ Երեւում է՝ որ սա Քրիստոսի վերայ սխալ գաղափար ունէր եւ չէր ճանաչում նորա Աստուածութիւնը, վասնորոյ, երբ Յիսուսին ասաց. «բարի վարդապետ» Քրիստոս պատասխանեց. «Ինչի ես ինձ բարի ասում, երբ բարին ինքնըստինքեան միմիայն Աստուածն է։ Սրանից չպէտք հասկանալ, որպէսզի Յիսուս ասում է. «ես բարի չեմ», այլ թէ որովհետեւ բարութեան աղբիւրը ինքն ըստինքեան Աստուածն է, որից բաժանուել նաեւ մարդկութեան, ինչպէս արեգակը իւր լոյսը հաղորդում երկրին, վասնորոյ ես Աստուած եմ եւ Որդի Աստուծոյ եւ այն բարութիւնը որ իմ մէջն է Աստուածայինն է։ Փիլիսոփայութեան վիպայութիւն. Բարութիւն էակին իւր զոյնն է, որպ մարդկի ունին զոյ եւ էութիւն, ուրեմն մարդկի ըստ էականութեան իւրանց բարի են։ Իմաս. բ. 25. ա. տիմ. գ. 4։

18-21. Յիսուս կամենալով փորձել երիտասարդին, որ իւր պահասութիւնները մերկանայ, ասաց.— Պատուիրանները պահի։ Բայց նա կարծելով թէ բացի տասնաբանեան պատուիրաններից, Յիսուս պէտք նաեւ ուրիշ պատուիրաններ տարածաց.— Որ պատուիրան պէտք պահի։ Յիսուսի պատասխանից պարզ հասկացաւ, որ խօսքը տասնաբանեան պատուիրանի վերայ է։ Երեւում,

որ այս պատանիս մանկութիւնից սովորածէր օրէնքները եւ իւր կարողութեան չափ պահած, վասնորոյ և Յիսուս սիրեց նորա եւ բացատրեց նաեւ կատարելութեան պատուիրանը։ Սրանից չ՚պէտք հասանել այն եզրակացութեան՝ թէ մարդ իւր ստացուածքը աղքատներին բաժանելով՝ կարողէ Աստուծոյ հաճելի լինել եւ երկնքում գտնէ ունենալ։ Առաքեալը սորա դէմ ասում է՝ «Եթէ իմ բոլոր ունեցածներս աղքատներին տամ եւ իմ մարմինս մատնեմ որ այրուի եւ սէր չունենամ, օգուտ չունիմ։» Ընդհակառակը եթէ Յիսուսի սիրոյն համար մէկին մի բաժակ ջուր խմացնենք, մեր վարձքը չի կորչիր։ Քրիստոս իւր սրտագէտ աչքով տեսաւ, որ այս իշխանը իւր հարստութիւնը Աստուածանից աւելի սիրում, վասնորոյն պատուիրեց որ այդ հարստութիւնը աղքատներին զոհելով եւ իւր Յիսուսի հետեւելով (Աստուծոյ սիրելով) մեծ գանձ կ՚ունենայ երկնքում։ Պատանին այս խօսքի վերայ արբսմած գնաց։ Քրիստոսի այս ասածից չ՚պէտք հասկանայ թէ Յիսուսի աշակերտները պէտք է իրանց ստացուածքը աղքատներին տարով՝ իրանք իրանց աղքատացնել եւ դիմել գանգատ մորոքութեան, այլ թէ պէտք՝ «Աստուծոյ սիրել ամենից առաւել եւ հարստութիւնը՝ ի փառս նորա զործադրել։» Եր. ի. 12—16. մատ. ե. 4-43. ժ. 37. մար. ժ. 21. ղուկ. ժդ. 33. ա. կոր. ժդ. 3։

22-26. «Մարդ իւր՝ նշանակում է՝ ոչ թէ հասատ պարան, ինչպէս ոմանք կարծում են, այլ «ուղղ» ինչպէս նախնիքը զորձն ածել եւ գանգատ թարգմանութեանց մէջ գրուածէ։ Սրանով Յիսուս ցոյց է տալիս մեծ դժուարութիւն, եւ ոչ թէ անկարելութիւն՝ այնէ. հարստին համար շատ եւ շատ դժուարէ երկնքի երանութիւն ժառանգել, եթէ նախ՝ Քրիստոսի խաչը չ՚առնէ եւ գնայ նորա հետեւից, ինչպէս էին Աբրահամ եւ Յովբը, եւ այլն։ Վանզի հարստութիւնից ծնանում է հպարտութիւն, ամբարտաւանութիւն, որով այնամոլութիւն եւ հաղարում տեսակ զզուելի մեղքեր, որոնք սպանում են մարդու հոգին եւ կորստեան մատնում։ Ո՞հ թշուառութեան։ Այժմ իսկ քանի՞ եւ քանի՞ հաղարաւոր մարդիկներ կան մեր մէջ, որ թողած Աստուած՝ հետեւում են հարստութեան եւ գիշեր ու ցերեկ նորա վերայ են մտածում եւ մաշում։ Բայց երանի՞ այն հարստին, որ իւր ունեցածը իրրեւ չ՚ունեցած,

հեղ եւ արդար հոգւով զիշեր ու ցերեկ աշխատուելով փրկութիւն գտնեք։ Մարգկայինոյժը, իմաստութիւնը, զգուշութիւնները չեն կարող մարդին երկինք ժառանգիլու արգելքները խափանելոյ միայն Աստուծոյ մեծ զօրութիւնն է, որ կարող է մարդին մէջ ստեղծել իւր շնորհքները, որով նա արթնացած կարողանայ դէմ դնել բոլոր արգելքներին եւ արժանանալ իւր նպատակին։ Իսկ այդ շնորհքին արժանանալու համար պէտք է անդադար աղօթեր։ Մա. ժէ. 1. յովր. խր. 2. եր. լբ. 17. մատ. է. 7—11. ժ. 37. զուկ. ժբ. 15. 21. ժգ. 13—24. յակ. բ. 6. ե. 1։

27-30. Մեր բոլոր ուսեցածները պէտք է դէպի Աստուած վերածել եւ զրանով ուրախանալ զմայլուիլ եւ ապրիլ Առաքեալները լոյս ունէին որ իրանք Քրիստոսի մօտ մեծ հարուստ իշխաններ պիտի դառնան։ Յիսուս այս հարցս այսպէս պարզեց, որ նոքա իրանց վարձքը պէտք է ստանան յաւիտենականութեան մէջ, երբ ինքն առաքեալների և առաքեալման կանանք վարող սրբերի հետ միասին նստելով լուսեղէն աթոռի վերայ նոցա հետ միասին պիտի դատէ ոչ միայն Հրէից երկոտասան ցեղը, այլեւ բոլոր Քրիստոսի հաւատացեալներին, որոնք ստուգմանն նոր Խորայելացիք, սերուած նոր Յակոբայ, Յիսուսի, տասներկու որդիներից, առաքեալներից։ Իսկ անհաւատներքառանց այսպիսի քննութեան պիտի դատապարտուին։ Մատ. իէ. 31. 32. զուկ. իբ. 29. 30. յովհ. գ. 18. ա. կոր. գ. 2. 3. յայտ. իա. 12։

29. Այս խօսքը չ՚պէտք է բառ առ բառ հասկանար։ Ճշմարիտ է, որ Քրիստոսի հաւատարիմ աշակերտները ստանում են այս աշխարհիս մէջ ոչ միայն երկրաւոր բարիքներ՝ այնէ. պատուաւոր պաշտօն, ժողով ընդ մէջ յարգ, նշանակութիւն, այլեւ ստանում են հոգեւոր բարիքներ՝ այնէ. հոգւոյ խաղաղութիւն, բաւականութիւն, հանդիստ կանք, եւ այլն։ յովհ. ժգ. 27. ժգ. 23։

30. Այս վճիռս միշտ կատարուում։ Նատ անգամ առաջին համբուած մարդք՝ տեսնում ենք ամենավերջի դրութեան մէջ, կարօտ մի կտրիճ չլոյս, իսկ անարգուած Ղազարոսները ամենակերպ լիութեան մէջ երջանկացած եւ երկնքի մէջ էլ Աբրահամի գոգը նոցա համար պատրաստուած։ Զուկ. ժգ. 19—26. գործ. ա. 25. ա. կոր. ա. 26. գալ. ե. 7. յակ. բ. 5։

ԳԼ. Ի.

1. Քանզի՝ նմանէ արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ էլ ընդ առաւօտս ՝ի վարձու ունէր մշակս յայգի իւր։
2. Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան, եւ առաքեաց զնոսա յայգի իւր։
3. Եւ ելեալ զերրորդ ժամուն՝ եահս այլս զի կային դատարկ ի հրապարակս։
4. Ասէ եւ զնոսա. երթայք եւ դուք յայգի իմ, եւ որ ինչ արժան իցէ՝ տայց ձեզ։
5. Գնացին եւ նոքա. եւ դարձեալ ելեալ զվեց ժամուն եւ զինն ժամուն՝ արար նոյնպէս։
6. Եւ զմեհասանելերորդ ժամուն ելեալ եգիտ այլս՝ զի կային դատարկք, ասէ եւ զնոսա. ընդէ՞ր կայք առաւօտս զօրս ցերեկ դատարկ։
7. Ասեն զնա. զի ոչք կարաւ զմեզ խմարձուն ասէ զնոսա. երթայք եւ դուք յայգին, եւ որ ինչ արժանէ՝ առնուցուք։
8. Եւ իրրեւ երեկոյ եղեւ՝ ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր կոչեա՝ զմշակսն և տուր նոցա վարձս՝ սկսեալ ՝ի յետնոցն մինչեւ ցառաջինսն։
9. Իրրեւ եկին որք զմեհասանելերորդ ժամուն, առին մէն մի դահեկան։
10. Եկեալ եւ առաջինքն՝ համարէին թէ աւելի առնուցուն՝ եւ առին մէն մի դահեկան։
11. Իրրեւ առին, արտնջէին զտանուտեառնէն՝ եւ ասէին։
12. Թէ զոքա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հաւասարեցուս մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք եւ զտօթ։
13. Նա պատասխանեի եւ միում ՝ի նոցանէ՝ եւ ասէ. ընկեր չզրկեմ զքեզ, ոչ դահեկանի մեղ սակարկեր ընդիս։
14. Առ զքոյդ՝ եւ ե՛րթ, եթէ կամիմ յետնոցն տալ որպէս եւ քեզ։
15. Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ եւ կամիմ. կամ թէ ակն քո չարէ, զի ես առատս եմ։
16. Այսպէս եղիցին յետինքք առաջինք եւ առաջինքք յետինք, զի բազումք են կոչեցեալք եւ սակաւք են ընտրեալք։

1-7. Այս առակն նախնեաց զլեր շարունակութիւնն։ Այդ դահեկանք այժմեան չորս դահեկանն։ Մշակներն օրեկան վարձքը սովորաբար մէկ դահեկան էր։ Ծբ. 31—34։

Ասասած, տանուտէր մարդու նման, կամեցաւ մարդկութիւնը առեղծելով, իրրեւ մշակներ գործադրել իւր այգեւաշխարհիմէջ։ առաւօտեան վարձուած մշակները նոքա են, որ ծնուածին Ադա-

մից մինչեւ Նոյ, կամ որ արժանացան Աստուծոյ Ծառայութեան պաշտօնին մանկութեան Հասակում Երրորդ ժամում վարձուածներբ նոքա են, որ ծնուածն Նոյից մինչեւ Աբրահամ, կամ որ արժանացան Աստուծոյ Ծառայութեան պաշտօնին պատանեկութեան Հասակում Վեցերրորդ ժամում վարձուածներբ նոքա են, որ ծնուածն Աբրահամից մինչեւ Մովսէս, կամ որ արժանացան Աստուծոյ Ծառայութեան պաշտօնին երիտասարդութեան Հասակում Տասներրորդ ժամում վարձուածներբ նոքա են, որ ծնուածն Մովսէսից մինչեւ Քրիստոս, կամ որ արժանացան Աստուծոյ Ծառայութեան պաշտօնին ծերութեան Հասակում Իսկ մատաստներրորդ ժամում վարձուածներբ այն քրիստոնեաներն են, որ արժանացան Աստուծոյ Ծառայութեան պաշտօնին, կամ արժանացան մշակել իրանց Հոգու այգին քրիստոնեական վարդապետութեան միջնորդութեամբ եւ կամապաշտութեան եւ Հաւատոյ միջնորդութեամբ վերջին ոռգէի մէջ։ Այսպէսք առաւօտեան գործողների հետ Համահաւասար պէտք վարձատրութիւն երանեան գանեկանով։

8-16. Աստուած հեթանոսներին կոչեց իւր այգու մէջ մշակութեան պաշտօնին վերջի գարում, բայց նոքա այդ միջոցում եռանդուն սիրով գործելով՝ ստացին անապականութեան ոսկի գահեկաներ, իսկ Հրէաներբ առաջին գարուց սկսած, հին օրէնաց ծառայութեան լծի տակ ծանրանալով՝ չկամեցան լսել Յիսուսի վարդապետութիւնը, փանդրոյ եւ մնացին յետնեբ։ Տրամընջոյ մշակների կարծիքով՝ յետեւի եկողներբ պէտք առնէին գահեկանի երիտասարդներբոյ մասը, բայց նոքա նախ՝ իրանցից առաջ վարձատրուեցան և երկրորդ՝ հաւասար բաժին առին։ Տրամընջել ուրիշների բացդաւորութեան վերայ մեծ մեղքէ և զգուշելի նախանձ։

Մարդիկներից ոչ ոք չէ կարող իւր հաւատարիմ և արդիւնաւոր գործունէութեան վերայ վստահացած ասելոր պիտի ժառանգութիւնական կեանքը, այլ այդ կեանքը միայն կարող են ժառանգել նոքա, որոնք ապրուեցած են Աստուծոյ ողորմութեանը և Յիսուսի արդեանց վերայ, իսկ փառաց մեծութիւնը կլինի ամէն մի սրբի աշխատութեանց չափաւոր Այսպէս Աստուած իւր

շնորհքը տարեսէ նոցա, որոնց որքան և երբ կամենամ, մնաք միայն պէտքէ անդադար ապաշնք արժանանալ այդ շնորհքներին և ոչ թէ ուրիշների ունեցածների վերայ նախանձուելով, տարանջատ Աստուած ամենայն բանական արարածներ կոչելէ իւր այգու մէջ մշակութեան համար, նախ՝ բնական օրինաց լուսով, և երբ պատեղ չկարողացան լուսաւորուիլ, աւելացրաւ դորա վերայ նաև գրաւոր հին պատուիրանի լոյսը, երբ այս ևս չկարողացաւ ներգործել, աւելացրաւ նաև շնորհաց լոյսը, որ բերաւ իւր հետ մեր տէր Յիսուսը։ Այսպէս թէպէտ ամենքը կոչուեցան այգու մշակութեան համար, բայց նոցա մէջից շատ քիչերը ընտրուեցան։ Այս առակս ասաց իւր քարոզութեան երեք տարին լրանալուց յետոյ։ Սրանից քիչ մէջոց անցնելից յետոյ յարութիւն տուաւ Ղազարոսին Մարտ ամսի մէջ, իսկ մնացեալները որպէս հետև պիտի գրանուին եղև միևնոյն ամսի մէջ։ Մատթ. 2.է.7-11. մրկ. 27. յոհ. մրկ. 46։

17. Իրրև եկանէր Յիսուս Երուսաղէմ առ զերկոտասանսն առանձինն, և 'ի ճանապարհին ասէ նոցա՝

18. Ահա ասի՛կ երանեմք Երուսաղէմ և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետացն՝ և դպրաց. և դատապարտեսցեն զնա 'ի մահ։

19. Եւ մատնեսցեն զնա հեթանոսաց՝ այպանել և հարկանել և 'ի խաչ հանել, և յերիր աւուր յարիցէ։

20. Յայնժամ մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ, երկրպագանէր՝ և խնդրէր ինչ 'ի նմանէ։

21. Եւ նա ասէ. զի՞նչ կամիս. ասէ նոցա. ասա՝ զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութիւնն քում։

22. Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ՝ մկրտիլ ասեն նոցա. կարող եմք։

23. Ասէ նոցա Յիսուս, զբաժակն իմ ըմպիցէք, և զմկրտութիւն զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցէք, բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ այլ որոց տուեալ է 'ի Հօրէ իմմէ։

24. Եւ լուեալ տասանցն, բարկացան իվերայ երկուցն եղբարց։

25. Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն՝ և ասէ. գիտէք զի իշխանք ազգաց տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա։

26. Ոչ այնպէս իցէ և 'ի ձերում մէջն. այլ որ կամիցի 'ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ։

27. Եւ որ կամիցի ՝ի՛ձեզ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։
28. Որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել և տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց։
29. Եւ յելանելն Նոցա յԵրիքովէ, գնացին զհետ Նորա ժողովուրդք բազումք։
30. Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն, իբրև լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողորմեաց մեզ Յիսուս Որդի Դաւթի։
31. Եւ ամբոխն սաստեաց Նոցա՝ զի լռեսցին, և նոքա ևս առաւելագագակէին և ասէին. Տէր՝ ողորմեաց մեզ Որդի Դաւթի։
32. Զանգիր առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ. զի՞նչ կամիք, զի արարից ձեզ։
33. Ասեն ցնա. Տէր՝ զի բացցին աչք մեր։
34. Եւ զգթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վազվազակի տեսին և գնացին զհետ Նորա։

17-19. Զազարոսի յարութիւնից յետոյ Յիսուս փախաւ Երիքայիմ քաղաքը։ Այդ տեղից ուզեցավ գնալու Համար անցաւ Երիքովի վրայով, ճանապարհին նրա հետևից մեծ բազմութիւն։ Յիսուս այս միջոցում կանգնեցաւ իւր շարժանոց բարձը և գաղտնի խորհուրդը բացատրել աշակերտաց, որպէսզի ժողովուրդը չզարգուրեն, առաւ նոցա առանձին իւր մոտ և ասաց. «Ահա ես իմ ազատ կամքովս գնումեմ Երուսաղէմ, և այնտեղ պէտք խաչուիմ ծաղր դառնամ, բայց դուք չ՝պէտք յուսահատուիք, որովհետև մինչև երեք օրը պէտք է յարութիւն առնեմ։» Մարկոսը ասում է.— „Եւ էին ի ճանապարհին մինչդեռ երանէին յԵրուսաղէմ և երթայր Յիսուս յառաջ քան զնոսա և զարմացեալ էին, որ զհետն երթային և երկնչէին։“ Այս խօսքերից երևումէ, որ Յիսուսի զէմքի վերայ մի բան կար, որ նոցա զարմացնումէր և փախեցնումէ։ Երկու անգամ ևս իւր մահուան վերայ խօսածէր։ Մատ. ժբ. 40. ժզ. 21. ժէ. 21. 22. մարկ. ժ. 32. յովհ. ժա. 54։

20-24. Զաքէոսի որդիքը կարծեցին թէ Յիսուս իւր յարութիւնից յետոյ շուտով պէտք դայ թագաւորական փառքով, և տասներկու առաքելոց էլ պէտք է խոստացած տասներկու աթոռի վերայ նստացնէ, վասնորոյ և փաղձեցին խնդրել Յիսուսից, որ այդ միջոցում իրանց տուած լինի Յիսուսի աջակողմեան և ձախակողմեան աթոռները։ Եւ որովհետև իրանք չէին վստահանում այս խնդիրը ուղղակի առաջարկել Յի-

սուբին, վասնորոյ և շարժեցին իրանց մոր Սոյսովմէին՝ որ նա առաջարկէ, կարծելով, որ նորա խնդիրը, իբրև հնոյ խնդիր, աւելի ընդունելի կլինի Յիսուսի մօտ։ Մատ. գ. 21. ժթ. 28. մարկ. ժ. 35-45։

22. Չէին իմանում, որ նորա թագաւորութիւնը մարմնաւոր է, այլ հոգեւոր, չէին իմանում թէ այն սաթանները, ոչ թէ միայն տաճարներում, այլ բիւրաւոր արդարների, չէին իմանում, որ առանց պատերազմի է կարելի ստանալ յաղթանակը, չէին իմանում, թէ քանի մի օրիցս աւելի նորա աջ և ձախ կողմը աւազակները պէտք բռնեն և ոչ իրանք։ Այսպիսի տգիտութիւնով է լինում շատ անգամ նաև մեր խնդիրները։ Վասնորոյ և շարունակից ասելով... Կարոդէք արդեօք այնպիսի դառնակսիծ մահով մեռանել, ինչպէս ես պիտի մեռանեմ և կամ այնպիսի արեամբ թաթաւուել՝ ինչպէս ես պէտք է թաթաւուեմ։ Փառասիրութեան և պատուասիրութեան խոչը թոյլ չտուաւ նոցա ճանաչել իրանց տգիտութիւնը, վասնորոյ և պատասխանեցին.— կարոդեմք։ Յիսուս էլ հրամայեց կատարել։ Արդարև Յակոբոսը դիտաւորեցաւ Հերոդէսից, իսկ Յով հաննէսը թէև մինչև խոր ծերութիւնը տարեց (Քրիստոսի Համարձակումից յետ 67 տարի ևս ապրեցաւ), բայց շատ չարչարանքներ քաշեց՝ բանտի մէջ ձգուեցաւ, ծեծուեցաւ, աքսորուեցաւ և այլն։ և այլն։ Գործ. ժ. 2. գ 3. յայտ. ա. 9։

23. Մէջ է իմ տարածմամբ՝ ոչ թէ իւր տիտարութիւնն է խոստովանում, այլ կամենում հասկացնել, որ պատիր առաքինեաց վարձքն է։ Արդարները պէտք է վարձատրուին, բայց իրանք չեն կարող իրանց վարձքը որոշել։ Եթէ այդպէս կարելի լինի այն ժամանակ Աստուծոյ արդար իրաւունքների փոխարէն պէտք է բռնանայ մարդկանց իրաւունքները, բայց այս չափազանցութիւն է։

24—28. Երկու եղբայրները միւս առաքեալներից առանձին ցած ձայնիւ խնդրեցին, բայց Յիսուս բարձր ձայնիւ պատասխանեց, որպէս զի միւս առաքեալները ևս իմանալով այս, ժողովուին իւր շուրջը և լսեն այն յանդիմանութիւնները, որ պիտի խօսէր փառասէր հոգի ունեցողների դէմ, փոխն զի Յիսուս լուզիւեր որ իւր աշակերտների մէջ ևս թագաւորում փառասիրութեան հոգին։ Բռնակալութեան և փառասիրութեան հոգին, ասում Յիսուս, թագաւորում է մեր մտքերի մէջ, որոնց հոգեն-

ը, իշխանազուններին, բռնանալով ժողովրդոց իրաւունքներին վերայ՝ ստանում մեր տէրութեան մէջ մեծամեծ պաշտօններ, բայց իմաստութեանս մէջ, այդպէս չէ, այլ նոքա են մեծ և առաջինը, որ ունին Քրիստոսի խոնարհ հոգին։ Քրիստոնեայ անձնը չ'պէտք է անձնատուր լինի աշխարհիս ունայն մեծութեան, այլ պէտք է իւր տէրի նման հեզութիւնով և խոնարհութիւնով զոհէ իրան հաստատակամ օգտի բարօրութեան և շինութեան համար։ Մատ. ե. 1. ա. յովհ. բ. 2. 4. 10։

29—34. Եփրայիմը հեռու էր Երիքովից վաթսուն ասպարիզաւ, իսկ Երիքովը հեռու էր Երուսաղէմից հարիւր և յիսուն ասպարիզաւ՝ որէ. վեց ժամու ճանապարհ։ Այս քաղաքս Քրիստոսից 1450 տարի առաջ Խարայելացիք, երբ մտան Քանանու երկիրը կործանեցին, սրանից 500 տարուց յետոյ կրկին անգամ շինուեցաւ։ Երկու քաղաքներիցն էլ գնումէին նոքա հաւէից շատ ժողովուրդներ։ Նոցա մէջ էին երկու կոյրեր, թէև Մարկոսը և Ղուկասը միայն մէկի Բարտիմէոսին են յիշում, գօրա յայտնի և երևելի անձն լինելուն համար։ Երևումէ՝ որ այս Բարտիմէոսը շատ նախանձաւոր մարդ էր, որով հետև երբ լսեց՝ որ Յիսուս կանցնում է իրանց, իւր վրայի հանդերձը զէն ձգեց, որպէս զի առանց արգելքի շուտ կարողանայ վազելով հասանել Յիսուսին։ Յիսուս կամենալով նոցա փափագը և մեծ հաւատը ցոյց տալ ժողովրդին, ասաց.— «Ի՞նչ կուզէք», երբ նոքա խոստովանուեցան Նորա Տէր և Աստուած լինելը, Յիսուս, իսկոյն գթացաւ և բժշկեց։ Բացուելով նոցա մարմնու աչքերը, բացուեցան նաև հոգու աչքերը, որ սիրեցին Յիսուսին և գնացին Նորա հետէից։ Այսպէս էլ Յիսուս բաց է անում դէպ 'ի իւր գնացող խեղճ մեղաւորների հոգևոր աչքերը, երբ նոքա զգալով խաւարի դառն հետևանքը՝ ապաշաւում են.— «Ողորմեաց մեզ»։ Յիս. զ. 24-27. գ. թագ. ժ. 34. մատ. ը. 28. մարկ. ժ. 46—52. ղուկ. ժ. 35—43։

ԳԼ. ԻԱ.

1. Իբրև մտա եղեն Յերուսաղէմ, և եկին ի Բեթփագէ մերձ ի լեռն Զիթենեաց, յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտացն իւրոց։
2. Եւ ասէ ցնոսա. երթայք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է, և անդէն գտանիք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին. լուծէք և ածէք ինձ։
3. Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ասասջիք, եթէ տեառն իւրեանց պիտոյ են, և վաղվաղակի առաքեսցէ զնոսա։
4. Բայց այս ամենայն եղեւ՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ։
5. Ասացէք դստեր Սիովնի, տէս թագաւորքդ քո գայ քեզ հեզ, և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ։
6. Գնացին աշակերտքն, և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս։
7. Եւ ածին զէշն և զյաւանակն, և արկին զնոքօք ձորձս իւրեանց. և նստաւ ի վերայ նոցա։
8. Եւ բազում ժողովուրդք տարածէցին զհանդերձս իւրեանց ՝ի ճանապարհին, և այլք հատանէին ոստս ՝ի ծառոց՝ և տարածանէին ՝ի ճանապարհին։
9. Եւ ժողովուրդքն որ առաջին և զկնի երթային՝ ազաղակէին և ասէին. օրհնութիւն Որդւոյ Դաւթի, օրհնեալ որ գայ յանուն Տեառն, օրհնութիւն ՝ի բարձունս։
10. Եւ ՝ի մտանելն նորա յԵրուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն, և ասէ՝ ով իցէ սա։
11. Եւ ժողովուրդքն ասեն. սա՝ մարգարէն Յիսուս՝ որ ՝ի Նազարեթէ Գալիլեացւոյ։
12. Եւ եմուտ Յիսուս ՝ի տաճարն՝ և հէր արարաւ զամենեսին, որ վաճառէին և գնէին ՝ի տաճարի անդ. և զսեղանս հատուածուցն կործանեաց՝ և զաթոռս ագաւնէվաճառացն։
13. Եւ ասէ ցնոսա. գրեալ է տուն իմ տուն աղօթից կոչեսցի. և դուք արարիք զդա այրս աւազակաց։
14. Եւ մատեան առ նա կոյրք և կաղք ՝ի տաճարին, և բժշկեաց զնոսա։
15. Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զքանչելիսն զոր արար, և զմանկտին որ աղաղակէին ՝ի տաճարին և ասէին, ովսաննայ, օրհնութիւն Որդւոյ Դաւթի բարկացան
16. Եւ ասեն ցնա. լսե՞ս զինչ ասեն դոքա, ասէ ցնոսա Յիսուս, այո, չիցէ ընթերցեալ ձեր՝ թէ ՝ի բերանոյ տղայոց

և սպանդկաց կատարեցեր զօրհնութիւն։
17. Եւ թողեալ զնսա եր արտաքսէր քաղաքին ՝ի Բեթանիա, և անդ ագաւ։

1—3. Ցիսուս Երիքովէ եկաւ Բեթանիայ և այդտեղ Նաբաթ օրը Սիմոն բորոտի տանը ընթրքի հրաւիրուեցաւ, իսկ Միւրակէ օրը Ճանապարհուեց այդտեղից դէպ ՝ի Երուսաղէմ և եկաւ նախ Բեթփագէն՝ որ Զիթենեաց սարին մօտ է. և արևելեան կողմով մի մղոնի չափ հեռու է Երուսաղէմից։ Սորա և Երուսաղէմի միջ վազում է Կեդրոնի հեղեղաձոր, որին արևելեան կողմում և լիսան տակին գտնուում Գեթսեմանի պարտէզը։ Ցիսուսի մատնութեան տեղը, իսկ արևմտեան կողմում գտնուում Ցոլոամփեթու ձորը, որ կպուած է Երուսաղէմի հետ։ Բեթփագէի միջ պահում էին տաճարի համար զոհերը և այդտեղից մեծ հանդիսով, ուրախութեան երգերով, տանում էին Երուսաղէմ զոհելու համար։ Ցիսուս լինելով նոր օրէնքի պատգամաւոր զատ՝ զնաց Բեթփագէ և այդտեղից մեծ հանդիսով մտաւ Երուսաղէմ զոհելու համար։ Հեղութեան թագաւորը նախ նստեց իշի վերայ և դրանով բարձրացաւ լեռան գլուխը, այստեղից իջնելու ժամանակ նստեց աւանակի վերայ։ Այս նշանակում է բարձի թագի հին Հրէից ազգը և ահա նստեցի և հանդիսեցի հեթանոսներից կազմուած նոր եկեղեցու միջ, վանորայ և աւանակի վերայ նստած ժամանակը ժողովուրդը միաձայն աղաղակեց.—Ովսաննայ՝ այն է. կ՝ազատեմ հիմա փրկի՛ր, կամ՝ օրհնութիւն։ Հրէից միջ գոյժ էր ածուում, իբրև ուրախութեան աղաղակ, կեցցէ արքայ։ Յով հանենէաք միայն էշն է յիշում, բայց Մատթէոսը երկուսը։ Սոցա միջ հակառակութիւն չկայ։ Մատ. բ. 28. իզ. 36. մար. ժդ. 32 ժա. 9. յով. ժբ. 1։

4-8. Ցիսուսի այս փառաւոր գալստեան վերայ ոչ միայն Նայեան խօսեց, այլ նաև Զաքարիան։ Երուսաղէմի միջ գտնուում Սիոնի սարը, որի վերայ շինուած էր մի բարձր և անառիկ դղեակ, սա իւր ամուր հաստատութեամբը պաշտպանում էր Երուսաղէմը թշնամիներից, ինչպէս մայրը իւր աղջիկն, վանորայ և Երուսաղէմը ասուում „Դուստր Սիօնի“ Հոգև որպէս „Երուսաղէմը նշանակում Քրիստոսի եկեղեցին, որ ասուում „դուստր վերին Սիօնի՛“ այնէ. „Երկնքի արքայութեան“։

Թագաւորները սովորութիւն ունէին ի պատիւ իրանց իշխանութեան իրանց եւեւից պատացնել երկրորդական երիմարներ։ Յիսուս թագաւորական փառքով մտաւ Երուսաղէմ և սկսեց իւր թագաւորութիւնը հիմնել խաչի վերայ։ Հանդիսաւորները սփռելով ցոյցերին տալիս դէպի Յիսուս ունեցած յարգանքը և համակրութիւնը։ Դ. թագ. թ. 13. եւ. կր. 11. զաք. թ. 9։

8-11. Որովհետև միքանի օրով առաջ Ղազարոսի յարութեան համբաւը տարածուած էր. վասնորոյ երբ ժողովուրդը լսեց Յիսուսի գալուստը զանազան տեղերից մանաւանդ Յիսուսաղէմից դիմաւորեցին Նորա առաջը և թագաւորական պատուով ընդունեցին Նորա։ Դրանցից ոմանք „օրհնութիւն“ բառով էին աղաղակում, ոմանք „օրհնեալ եկեալ անուամբ տեառն“ և ոմանք „ովսաննայ ի բարձունս“ Փարիսեցիներից ոմանք խնդրեցին Յիսուսից սաստել աշակերտաց որ ովսաննայ չաղաղակեն, Քրիստոս պատասխանեց.—„Եթէ դոքա լռեսցին քարինքն աղաղակեսցին։“ Յիսուս քաղաքից մտնելուց ժամանակը նորա վերայ լաց եղաւ, որովհետև իւր ամենիմաստ աչքով տեսնում էր, որ շատ ժամանակ չանցած այդ „ովսաննայ“ աղաղակող ժողովուրդը՝ մի ուրիշ ձայնով պիտի աղաղակէ.—„ի խաչ հան զդա“, և թէ շատ ժամանակ չանցած իրանց զեղեցիկ քաղաքը, իրանց սուրբ և փառաւոր տաճարը, իրանց բոլոր ցանկալի բաները պէտք է հեթանոսների ձեռքը ընկնել և հարիւր հազարներով պիտի սպանուին և գերութեան մատնուին, որովհետև իրանց Մեսիային մերժելով և սպանելով պէտք արժանի պատիժը կրեն։ Ահա այս պատճառաւ ամենագթած փրկիչը չկարողացաւ ինքն իրան զսպել Երբ մտաւ քաղաքը այսուհետ ևս զորձեց մի հրաշք, որովհետև այնպէս ապշեցրաւ Հռովմայեցւոց իշխանութիւնը, որ նա չկարողացաւ մտածել թէ այսպիսի մեծ փառքով և համակրութեամբ մի նոր թագաւորի ընդունելութիւնը ընդդէմ կայսերական իրաւանց։ Մատ. ա. 1. թ. 28. զուկ. գլ. 40-44. յովհ. գլ. 53. գլ. 18։

12-17. Յիսուս երբ մտաւ Երուսաղէմ ուղղակի գնաց տաճարը։ Տաճարիսարահը շրջապատուած էին անթիւ բազմութիւնով, որոնց մէջ կային նաև շատ կանայք իրանց ծծկեր երեխաներով, որոնք աղաղակում էին.—„Ովսաննայ օրհնութիւն Որդւոյ Դաւթի“ Լաե-

լով Յիսուսի գալուստը կոյրերը և կաղերը դիմեցին դէպի տաճարը և բժշկուեցան։ Այսպէս եվ մենք պէտք մեր երեխայից մանկութեան ժամանակ սովորեցնելը՝, Յիսուս, Քրիստոս, Աստուած, Տիրամայր, բարեխօսեա, ողորմա՝ և ուրիշ շատ այսպիսի անուններ, և ոչ թէ ծաղրական, անարգական և հայհոյական բառեր։ Յիսուս մինչև երեկոյ աղօթեց տաճարումը և երբ երեկոյացաւ նայեց իւր շուրջը տեսնել կ'գտնուի արդեօք մի այնպիսի անձն, որ իւր և աշակերտներին հիւրընկալէ այգերեկոյեան։ Չ'գտնուելով նոցա մէջ գտնէ մի հիւրասէր անձն, դուրս եկաւ քաղաքից և գնաց Բեթանեայ և այդտեղ գիշերը հանգստացաւ։ Առաւօտանց կրկին վերադարձաւ Երուսաղէմ և տաճարից աքսորեց գնող վաճառողներին։ Մեկ նոյն բանը սրանից երկու տարի առաջ էլ արած էր իւր քարոզութիւնը նոր սկսելու ժամանակ։ Հատավաճառները (զառափներ էին) մանր դրամները փոխում էին ամբողջ դրամի հետ մեծ շահով։ Կանոն կար որ տաճարի համար բուն Հրէից կարած սատակները պէտք գործածուէին, բայց շատերը Հռովմայեցւոց սատակներ ունենալով՝ պէտք էր տաճարը եկած ժամանակ փոխէին։ Տաճարի բակումը ծախում էին նաև ոչխարներ, արջառներ, աղաւնիներ, որով հետև հեռու տեղերից եկողները չէին կարողանում պէտք եղած զոհերը հետները բերել և որովհետև ծախելու ժամանակ խաբեբայութիւններ էին անում, վասնորոյ և տաճարը աւազակների այր անուանեց։ Յիսուս վրէժխնդրութեան հոգով խիստ բարկացած արտաքսեց տաճարից այդ վաճառականներին և ոչ որ չհամարձակուեց նորա դէմ մի բան անդամ ասել։ Մինչև երեկոյ մնաց տաճարումը, յետոյ կրկին անդամ էլի դարձաւ Բեթանեայ։

Այսպէս էլ այժմ մենք եթէ մարմնաւոր շահի համար ծառայենք Աստուծոյ և կատարենք նորա եկեղեցու սրբազան խորհուրդները, եթէ հաւատով և ջերմեռանդութեամբ, պարկեշտութեամբ և սիրով չապաստարենք նորա տան, այլ ծիծաղենք, խօսենք, ինչպէս հասարակ տներումմ, այն ժամանակ Յիսուս մեզ կ'արտաքսէ իւր տաճարից մեծ բարկութեամբ։ Վայ նորա՝ ով որ Աստուծոյ տունը իւր շահի և կամայականութեան է ծառայեցնում և ոչ Յիսուսի նպատակին։ Նը. գ. 13. եւ. ծը. 7. եզ. լգ. 1—10. մատ. իգ. 14. մարկ. ժա. 11. յով. հ. գ. 13—16։

18. Եւ այգուն իրրեւ դարձաւ անդրէն 'ի քաղաքէն գաղեաւ։
19. Եւ տեսեալ թզենի մի 'ի վերայ ճանապարհին՝ եկն 'ի նա, և ոչինչ եդիտ 'ի նմա՝ բայց միայն տերեւս. և ասէ նմա. մի այսուհետեւ 'ի քէն պտուղ եղիցի յաւիտեան. և առ ժամայն չորացաւ թզենին։
20. Իրրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան և ասէին, թէ զի՞նչ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին։
21. Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ նոսա. ամէն ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէպէտ և լերինդ ասիցէք. բարձիր և անկիր 'ի ծով, եղիցի։
22. Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։
23. Եւ իրրեւ եկն 'ի տաճարն, մատեան առ նա մինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն և Ծերք ժողովրդեանն՝ և ասեն. որովք իշխանութեամբ առնես զայդ. և ո՞վ եւ քեզ զիշխանութիւնդ զայդ։
24. Պատասխանի եւ Յիսուս և ասէ նոսա. հարցից և ես զձեզ բան մի. զոր թէ ասիցէք ինձ. և ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։
25. Մկրտութիւնն Յովհաննու ուստի էր, յերկնից թէ 'ի մարդկանէ. և նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին։
26. Եթէ ասեմք յերկնից, ասէ ցմեզ, իսկ ընդէ՞ր ոչ հաւատացիք նմա. և եթէ ասեմք 'ի մարդկանէ, երկնչեմք 'ի ժողովրդենէն. զի ամենեքին զՅովհաննէս իրրեւ զմարգարէ ունէին։
27. Պատասխանի եւտուն Յիսուսի և ասեն. ոչ գիտեմք, ասէ նոսա և նա. և ես ոչ ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս։
28. Բայց զի՞նչդ թուի ձեզ. առն միոջ էին երկու որդիք, և մատուցեալ առ առաջինն ասէ. որդեակ՝ երթ այսօր գործեա յայգւոջ։
29. Նա պատասխանի եւ ասէ. երթամ Տէր, և ոչ չոգաւ։
30 Մատեալ և առ միւսն, նա պատասխանի եւ ասէ. նոյնպէս, նա պատասխանի եւ ասէ. ոչ կամիմ, բայց յետոյ զղջացաւ՝ և չոգաւ յայգին։
31. Որդ՝ ո՞յերկոցունց արար զկամս Հօրն. ասեն յետինն. ասէ նոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից։
32. Զի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան՝ և

ոչ հաւատացիք նմա. և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա, և դուք տեսեք և ոչ ղղջացարուք յետոյ հաւատալ նմա։

18—22. Յիսուս Կիւրակէ երեկոյեան մեծ հանդիսով մուտք մտնելը։ Երկուշաբաթ առաւօտեան, երբ դարձաւ Երուսաղէմ և պիտի արտաքսէր տաճարից վաճառականներին, ճանապարհին պատահեցաւ մի թզենու զարդարուած տերևներով, բայց առանց պտղի։ (Թզենին պտուղը տերևներից առաջ է տալիս) Յիսուս իւր մէջ կամուրջապէս զարթնացրաւ թուղ ուտելու սէրը, որպէս զի չ՝ասելով նորա վերայ սպասելի պտուղը չորացնէ, ինչպէս պիտի չորացնէր Հրէից ազգին, որոնք ասում էին թէ, դեռ մեր բարի պտուղ տալու ժամանակը հասած չէ, այլ միայն բաւականանում էին արտաքին արարողութիւններով, ծէսերով, զնմանութիւններով, լուացմունքով և այլն։ և այլն։ Հնումը մարգարէները Աստուծոյ խօսքը ժողովրդեան լաւ հասկացնելու համար՝ մի որ և իցէ բան պատառոտում և կամ կոտրատում էին, ցոյց տալով որ Աստուած էլ նոցա պէտք է այդպէս ապականէ, եթէ նորա խօսքին չէին հնազանդուիր։ Երեմիան իւր սփածանելին թաղեց Եփրատայ գետերքում, ուր և ապականուեցաւ, ցոյց տալով որ Խարայէլն էլ այդպէս պէտք է ապականուի։ Եր. ժդ. 9։

Երկուշաբաթ առաւօտեան երբ Յիսուս ասաց.— «մի այսուհետև՝ ի քէն պտուղ եղիցի», իսկոյն ցամաքեցաւ թզենին, բայց աշակերտները այդ միջոցում չ՝նկատեցին, միւս առաւօտը որ էր Երեքշաբաթի օրը, անցնելով թզենու մօտով, տեսին չորացած և զարմացան։ Երբև բառը՝ ասում է միւս օրուան համար։ Լեռան, Զիթենեաց սարն է, որ իրանցից մօտ էր։ Այսպէս էլ մեր հաւատը, օրէնքը, արտաքին արարողութիւնները, պահեցողութիւնը, մեզ չէն կարող ազատել պատժից, եթէ չ՝ունենանք բարի գործքերի պտուղները։ Մատ. է. 7—11. ժ. 8. ժէ. 19. մարկ. ժա. 13. 14. զուկ. ժգ. 6—9. յով. Հ. գ. 25. ԺԷ. 2։

23—27. Յիսուս երբ իւր աշակերտաց հետ միասին մտաւ տաճարը և հանդիսապէս, իբրև Մեսիայ, նստեց աթոռի վերայ և սկսեց իշխանաբար ուսուցանել։ Քահանայապետները և ծերերը նասաթի վերաբերուած վնասակար անցեալ երկու տարուայ գործոց

համար, նաև՝ Ոմանցնոց աղաղակելուն, կոյրերի և կաղերի բժշկելուն, վանականներին տանջանքից արտաքսելուն համար, և այլն և այլն, ուստի և Հարցրին նրանից.— «որով իշխանութեամբ առնես զայդ» Ցիսուս կամենալով ցոյց տալ՝ որ ինքն է սպասելի Մեսիան, հարց է առաջարկում՝ ասելով.— «Ցով Հաննու մկրտութիւնը Աստուածանից է թէ մարդկանցից» Ի հարկէ եթէ նոքա ասէին Աստուածանից է՝ պէտք է հաւատային Ցով Հաննու, որ ասում էր.— «Ես է Գառն Աստուծոյ, սա է Մեսիան, իսկ ես նոքա Կարապետ և մարգարէն եմ, վասնորոյ և պէտք է հաւատային իրան, իբրև Մեսիայի, իսկ եթէ ասէին մարդկանցից է՝ պէտք է Ցով Հաննեսին խաբեբայ ոմն ճանաչէին, այս էլ չէին կարող ասել, վասն զի ժողովուրդն Ցով Հաննեսին ճանաչում էր, իբրև ճշմարիտ մարգարէ, ուստի և պատասխանեցին.— «Չգիտեր» Ցիսուս էլ ասաց.— Մրով հիտև զուք չէք կամենում իմ Մեսիայ լինելս ընդունել, վասնորոյ ես էլ ձեզ չեմ ասիլ թէ որ իշխանութիւնով եմ գործում այս բաներս» Մարկ. ժա. 27—33. զուկ. ի. 1—8. յով հ. ա. 15—34. ե. 33։

28-33. Ցի՛ս. մատ. ե. 4. 20. զուկ. 4. 12. 13. է. 29. 30. ժբ. 3-14։

33. Այլ առակ լուարուք. այր մի էր տանուտէր՝ որ տնկեաց այգի և ցանկով պատեաց զնա, և փորեաց 'ի նմա հնձան, և շինեաց աշտարակ. և եհան զնա ցմշակս, և գնաց 'ի տար աշխարհ։

34. Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։

35. Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին՝ զոմն սպանին և զոմն քարկոծեցին։

36. Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։

37. Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր՝ և ասէ. թերևս ամաչեցին յորդւոյ աստի իմմէ։

38. Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միմեանս՝ սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և կալցուք զժառանգութիւն սորա։

39. Եւ առեալ հանին զնա պատաքոյ քան զայգին՝ և սպանին։

40. Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ։

41. Ասեն ցնա. զչարսն չարեաւ կորուսցէ. հա զայգին տացէ

այլոց մշակաց, որք ասացին նմա զպատուոս 'ի ժամու իւրեանց։

42. Ասէ ցնոսա Յիսուս. Չիցէ երբէք ընթերցեալ ձեր 'ի գրոց. զվէմն՝ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեանն, 'ի սեռանէ եղեւ այս, եւ է զարմանալի յաչս մեր։

43. Վասն այսորիկ ասեմ ձեզ. զի բարձցի 'ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ, եւ տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս նորա։

44. Եւ որ անկցի 'ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի հոսեսցէ զնա։

45. Իսրեւ լուան քահանայապետքն եւ դպիրք եւ փարիսեցիք զառակս նորա, գիտացին՝ թէ վասն նոցա ասաց։

46. Եւ խնդրէին զնա ունել, բայց երկեան 'ի ժողովրդոցն. քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա։

33-41. «Ծառուտերը» Աստուածէ, «այգին» հին Իսրայէլի եկեղեցիսէ. «ցանկը» օրէնքները և պատուիրանները էին, «Հնձանը» եկեղեցու սեղանն էր, որտեղ զոհէին մատուցանուած, «աշտարակը» հրեշտակներբի հովանաւորութիւնն էր, որ Աստուած նշանակեց եկեղեցու պաշտպանութեան համար «մշակներ»՝ քահանայք, քահանայապետք, իշխանք, դպիրք և փարիսեցիքն էին, «գնաց իսարաշխարհ», սրանից յետոյ այլ ևս նոցա չերեւացաւ, այլ ուղարկեց մարգարէներ, որ նոքա ժողովրդեան բարի գործոց պտուղները հաւաքելով՝ ընծայեն Աստուծոյ, բայց մշակները սրանցից ոմանց անարգեցին, ոմանց չարչարեցին և շատերին էլ սպանանեցին։ Աստուած իւր անհուն ողորմութեամբ նրանց այս չարութիւնները ներելով՝ հրաւիրեց դէպի ապաշխարութիւն, բայց նոքա առաւել ևս յանդգնած, կարգեցին մինչև անդամայդին իրանց սեփհականացներ, վասնորոյ Աստուած ուղարկեց իւր Միածին որդին, որ գոնէ նրանից ամաչեն, բայց սոքա ժառանգին էլ հանեցին Որուսաղէմից դուրս և սպանեցին։ Այսպէս իրանք իրանց բերանով վճռեցին իրանց կորուստը։ Այդու տիրոջ գալուստը Քրիստոսի յարութիւնն և Հոգւոյն Սրբոյ գալուստներով Հրէաներից առնուեցաւ եկեղեցին և տուաւ առաքելոց և նոցա հետեւողներին, որոնց մեծ մասը հեթանոսք էին։ Բ.մեր. 8.հատ. 9.կէ. 2.3.հր.ժ.7.բ.4.թ.19.յով.ժ.48.զորձ.է.51.ժ.գ.46.ժ.ը.6.ը.28.եբր.ա.1.ժ.28.29։

42-46. Առիւնի քարը Քրիստոսն է, իսկ նորա Հաստատակարե-

ը՝ Քրիստոսի հաւատացեալներնեն։ Հին օրէնքի վարդապետները՝ ասուումն «յիմար շինողք», վասնզի անարգեցին այն քարը, որն իսկապէս եղև գլուխ եկեղեցու։ Այն փրկիչը, որ հաւատացեալների համար պատուական վէմ, անհաւատների համար էլ գայթագղտիական քար, որով պիտի դլորուին և ջնջուին։ Այսպէս էլ շատ անգամ տեսնում ենք, որ հասարակ ժողովուրդը, երբ լսում մի որևիցէ պարզ ճշմարտութիւն, շատ սիրով է ընդունում, իսկ մեծամեծները, քահանաները և իշխանները իրանց օգուտը աչքի առաջ ունենալով, շատ անգամ մաքառումն այդ ճշմարտութիւնների դէմ։ Նա.բ.14.15.իր.16.մատ.ժբ.37.գործ.գ. 11. ա. կոր. ա. 26. 27. հփ. բ. 20-22. ա. պետ. բ. 4—8։

Գլ. ԻԲ.

1. Դարձեալ պատասխանի էառ Յիսուս և ասէ ցնոսա առակօք։
2. Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւրում։
3. Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս. եւ ոչ կամեցան գալ։
4. Դարձեալ առաքեաց այլ ծառայս՝ եւ ասէ. ասացէք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուարակք իմ եւ պարարակք զենեալք են, և ամենայն ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիս։
5. Եւ նոքա յուլացեալ գնացին՝ ոմն յայգարակ իւր եւ ոմն ի վաճառս իւր։
6. Եւ այլք կալան զծառայսն նորա, թշնամանեցին, եւ սպանին։
7. Իսկ թագաւորն իբրեւ լուաւ՝ բարկացաւ, եւ առաքեաց զզօրս իւր եւ սատակեաց զսպանողսն զայնոսիկ, եւ ըզքաղաքն նոցա այրեաց։
8. Յայնժամ ասէ ցծառայս իւր. հարսանիքս պատրաստք են, եւ հրաւիրեալքն չէին արժանի։
9. Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զորս միանգամ գտանիցէք կոչեցէք ի հարսանիսս։
10. Եւ երեալ ծառայքն ի ճանապարհս ժողով եցին զամենեսեան զորս եւ գտին՝ զչարս եւ զբարիս. եւ լցան հարսանիքն, բազմականաւք։
11. Եւ մտեալ թագաւորն հայիլ զբազմականսն, եւ տես անդ զայր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց։

12. Եւ ասէ ցնա. ընկե՛ր զիմարդ մտեր այսր, զի ոչ ունիցիր հանդերձ հարսանեաց, եւ նա պապանձեցաւ։
13. Յայնժամ ասէ թագաւորն. ցսպասաւորսն. կապեցէ՛ք զոտս եւ զձեռս՝ եւ հանէ՛ք զդա՛ ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։
14. Զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք։
15. Յայնժամ գնացեալ Փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս զնդիցեն նմա զբոզպայթ բանիւք։
16. Եւ առաքին առ նա զաշակերտսն իւրեանց Հերոդիանոսաքն հանդերձ եւ ասեն. վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, եւ զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, եւ ոչ է քեզ փոյթ զումեքէ, եւ ոչ հայիս յերեսս մարդոյ։
17. Արդ՝ ասա մեզ, զիմարդ թուի քեզ. պարսէ հարկս տալ կայսերի՝ թէ ոչ։
18. Գիտաց Յիսուս զխորամանկութիւն նոցա, եւ ասէ. զի՞ փորձէք զիս կեղծաւորք։
19. Ցուցէ՛ք ինձ զդրամ հարկին. եւ նոքա մատուցին նմա զդրահեան մի։
20. Եւ ասէ ցնոսա. Յիսուս ոյր է պատկերս այս՝ կամ գիր։
21. Ասեն՝ կայսերս. յայնժամ ասէ ցնոսա. երթայք՝ տուք զկայսերն՝ կայսերս, եւ զԱստուծոյն Աստուծոյ։
22. Երբեւ լուան՝ զարմացան, եւ թողին զնա եւ գնացին։

1-3. Այս առակս ասաց տաճարում։ Սորա նման մի առակ էլ ասած էր մի Փարիսեցու առաջ։ Ղուկ. ժգ. 15. 24. մատ. գ. 2։

Երկնքի թագաւորը հայր Աստուածն է, որ իւր որդու մարդեղութեամբ կամեցաւ հարսանիք առնել իւր Միածնի համար։ Սովորութիւն էր, որ առաջ հրաւիրում էին, իսկ ընթրիքի ժամանակ մէկ էլ նորից կանչում։ Այսպէս էլ Աստուած հրէից նախ Աբրահամու եւ օրինաց ձեռք հրաւիրեց իւր որդու Յիսուսի հարսանիքը, եւ ապա Մովսիսից մինչեւ Յովհաննէս՝ մարգարէների ձեռք կանչեց զոյս այդ մեծ հանդիսաբերայց նոքա Աստուծոյ հրաւիրակներին մերժելով, ապստամբուեցան Նրանից եւ զրկուեցան այդ Աստուածային հարսանեաց ուրախութիւնից։ Յիսուսի հարսանիքը սկսուեցաւ իւր մարդեղութեան օրից եւ պիտի վերջանայ վերջի օրում։ Եւ. 8. գ. 14։

4. Պատրաստեցի աւետարանական վարդապետութեան ճաշը,

պատրաստեցի զուարակը՝ որէ, Միածին Որդին Յիսուսը, պատրաստեցի Հարսանեաց կենդանի հացը եւ զմայլեցուցիչ գինին՝ որէ, Յիսուսի կենարար մարմինը եւ արիւնը, պատրաստեցի պարարակը՝ որէ, Սուրբ Հոգւոյն շնորհաբաշխ պարգեւներբ, որ աւուրմէ հաւատացեալներին եկեղեցւոյ որբացան խորհուրդներուն ձեռօք, պատրաստեցի երգեցողներուն եւ պարեղանացողներուն դասերբ՝ որոնց, հրեշտակաց եւ սերովբէից գնդերբ։ Այսպէս, ասաց Աստուած, ամենայն ինչ պատրաստէ՝ մտէբ Հարսանիքբ։ Ես. բ. 5. բ. 26. լէ. 4. կա. կբ. զբէ. խ. բ. կոր. է. 20. յայտ. իբ. 17։

5-7. Աստուած ամենայն մարդու կանչումէ զէկոյի իւր երկնային փառքբ, բայց նոքա իրանց անհոգութիւնամբ զրկուումն այդ փառքէից։ Անհոգութիւնբ, անտոհմութիւնբ մեծ պատճառէ կորստեան։ Երջանիկ է նա՝ ով որ իւր ամենայն զորձբ սկսումէ խոհեմութեամբ եւ հեռատեսութեամբ։ Աստուած, ինչպէս Հրէից ազգբ ջնջեց զպրութեան զբէից, այնպէս էլ 40 տարուց յետոյ ուղարկեց Տիտոս եւ Վեսպասիանոսբ Հռովմայեցւոց զօրքով, որ Երուսաղէմբ բոլորովին հրով կործանեն եւ իւր որդւոյ սպանողներին միանգամայն սրով ջնջեն։ Մատ. իդ. 34. 35. իդ. 21. 25. դուկ. ժԹ. 4-44. յով հ. է. 40. զորձ. է. 52։

8-10. Հրէաներբ չկամեցան վայելել Յիսուսի Հարսանեաց բարիքբ, վասնորայ եւ Թագաւորբ հրամայեց իւր առաքեալներին առանց կրօնի եւ ազգի խարուԹեան ժողովել լցնել հարսանիքբ այն մարդկներով, որոնք կ'փափաղեն վայելել այդ մեծամեծ հարսանեաց քաղցրութիւնբ։ Առաքեալներբ օրինակելիս երով վառուած կատարեցին այս հրամանբ, մացրին եկեղեցին այն ամենայն ազգերից եւ լեզուներից, որոնք հաւատացրին Յիսուսին եւ մկրտուեցան նորա անունով։ Այսպէս հարսանիքբ լցուեցաւ բարի եւ չար բազմականներով։ Բարի ասուեցան այն ամենայն հաւատացեալներբ, որք Քրիստոս փեսային եւ նորա հարսն եկեղեցուն պատուելու համար զարդարեցին իրանց ամենակերպ առաքինութեան եւ բարի զորձքերի ազնիւ հանդերձներով, իսկ չար ասուեցան նոքա, որոնք որկրամարութեան եւ կամ իրանց մարմնու հաճոյքբ կատարելու նպատակաւ, մոռին Քրիստոսի փարդապետութեան հարսանիքբ, որով եւ անպատուեցին փեսային եւ հարսին։ Մատ. բ. 11. 12. իբ. 19. մար. ժզ. 15 յայտ. ժԹ. 9։

11-14. Հնուամբ սովորութիւնէր, որ թագաւորի առաջեւ ներկայացողը լինի նա ազգատ կամ հարուստ պէտք էր թագաւորից ստանար յարմարաւոր հանդէրձներ, եւ ապա ներկայանար նորա։ Այսպէս էլ արաւ Աստուած՝ հրաւիրուածներին տուաւ մկրտութեան շնորհաց հանդերձը, որ զգեցեալ ներկայանան իւր Աստուածային թագաւորին։ Մեղաւորը պատանձուեցաւ, վասնզի չունէր իւր ազատութեան համար մի որեւիցէ պատճառ, էր կարող ասել.- «ինձ յանկարծ կանչելուց համար չկարացի հանդերձս փոխել, եւ կամ ազգատ եմ եւ յարմարաւոր հանդերձներ չունիմ։» Մեղաւորը լաւ գիտէր՝ որ ինքը իւր ազատ կամքով մերժեց այդ թագաւորական հանդերձը եւ իւր հին, ազգատ եւ չար զգեստների հանդերձով ներկայացաւ թագաւորին։ Եվ որ չէ կամենում այդ թագաւորական հանդերձները հագնել՝ նա չէ կարող Աստուած տեսնել։ Այսպէս էլ ով որ չէ կամենում Քրիստոսի շնորհաց հանդերձներով եւ Սուրբ Հոգուով նորոգուել՝ նա պէտք է մնա պատանձուած եւ նորա համար պատրաստուած արտաքին խաւարը։ Նս. կդ. 6. մատ. է. 13. 14. ը. 12. երբ. ժբ. 14. բ. պետ. ա. 10։

15-17. Հերովդիանոսները Հերովդիսի հետեւողներն էին սոքա ասում էին.- «Որով հետեւ Հերովդէսը չենց Սողով մեղի տաճարի սրահը եւ թագաւորից Հրէաստանի վերայ, ուրեմն սա ինքն է Մեսիայն։ Այս աղանդը տեւեց նաեւ Հերովդէսից յետոյ։ Սոքա Սադուկեցւոց պէս միշտ հակառակէին Փարիսեցւոց, իսկ այժմ միաբանուեցան։ Մատ. ժզ. 1. ժբ. 38, զուկ. իգ. 12։

Փարիսեցիքը լսելով վերոյիշեալ առակը, շատ կատաղեցին, ուստի եւ ժողով քով մնացին.- «Յիսուսին դատաստանի համար մատնել Հռովմայեցւոց կուսակալ Պիղատոսին, որպէս կայսեր ապստամբ ոմն։» Կայսր Հռովմայեցւոց թագաւորների ընդհանուր անունն է։ Հրէաները թէեւ Հռովմայեցւոց հպատակ էին, բայց նոցա չէին կամենում հարկ տալ, վասնզի եւ էին Յիսուսի մեռնելուն համար «գիտեմք ճշմարիտ ես» ասելով՝ առաջարկեցին այս հարկատուութեան հարցը։ Նաբ կատարեալ յոյս ունէին, որ Յիսուս պէտք անպատճառ խօսքով բռնուի, որով հետեւ եթէ ասէր.- «Հռովմայեցւոց չպէտք հարկատալ», խլոյն պէտք մատնէին կուսակալին, իբրեւ խռովարար ոմն, իսկ

եթէ ասէր. «պէտք է տալ», իսկոյն պէտք ժողովրդին դրդէին Յիսուսի դէմ, իբրեւ հեթանոս թագաւորի կողմնակից եւ իրանց թշնամի։ Այս հարկս երկդրամեանն էր, որ Յիսուս ինքն եւս տուաւ ձկան բերանի սատերից։ Մատ. ԺԷ. 23. 24։

18-22. Դահիկանի մի երեսում տպած էր Տիբերիայ կայսեր պատկերը, իսկ միւսումն նորա անունը։ Աստուած պատուիրում է միայն հնազանդ լինել թագաւորներին, կուսակալներին եւ իշխանութիւն ունեցող անձնաւորութեանց, այլ նաեւ Աստուծոյ։ Կան մարդիկ՝ որ իշխանների, մեծամեծների հաճոյանալու համար Աստուծոյ պատուիրանները ոտնակոխ են անում։ Կան եւ այնպիսիները, որոնք իրանք իրանց Աստուածապաշտ, արդար եւ իմաստուն են ձեւացնում շահասիրութեան, մարմնաւոր օգտի եւ կամ Աստուծով որոշուած իշխանութեան չհնազանդուելու համար։ Քրիստոսի մօտ կային այդ երկու տեսակ մարդիկներից էլ։ Հերովդիանոսները ամեն միջոց գործ էին դնում Հերովդիսին հաճոյանալու համար, իսկ Փարիսեցիքը սուտ Աստուածպաշտութիւնով ժողովուրդը մոլորեցնում էին եւ կայսերի դէմ դրդում։ Քրիստոս իւր այս խօսքով երկուսին էլ յանդիմանեց։ Այսպէս փոխանակ Քրիստոսի խօսքով բռնելու, իրանք իրանց լարած որոգայթների մէջ բռնուեցան եւ բոլոր ժողովրդի առաջեւ խայտառակուեցան։ Դեւ. իզ. 27-33. բ. օր. իբ. 62-68. եր. իէ. 4-18. եզ. իբ. 15. 16. Հռ. ԺԱ. 1-8. ա. պետ. բ. 13. 14։

23. Յայնմ աւուր մատեան առ նա Սադուկեցիք, որ ասէին՝ թէ չէ՛ յարութիւն, հարցին զնա։
24. Եւ ասեն. վարդապետ՝ Մովսէս ասաց. եթէ որ մեռցի անորդի՝ արասցէ զկին նորա եղբայր իւր, եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում։
25. Էին առ մեզ եղբարք եօթն. առաջինն արար կին՝ եւ մեռաւ. եւ զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրում։
26. Նոյնպէս եւ երկրորդն, եւ երրորդն, մինչեւ զեօթներորդն։
27. Յետ ամենեցուն մեռաւ եւ կինն։
28. Արդ՝ ի յարութեան՝ այր զեօթանցն եղիցի նա կին. զի ամենեքին կարան զնա կին։
29. Պատասխանի եւ նոցա Յիսուս եւ ասէ. մոլորեալք դուք զիտէք զգիրս եւ ոչ զզօրութիւն Աստուծոյ։

30. Զի 'ի յարութիւն ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին, այլ են իբրեւ զհրեշտակս յերկինս։
31. Բայց վասն յարութեան մեռելոց չէիցէ՞ ընթերցեալ ձեր զասացեալս ձեզ յԱստուծոյ։
32. Ես եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ, եւ չէ Աստուած՝ Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց։
33. Իբրեւ լուան ժողովուրդքն՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա։
34. Իսկ Փարիսեցիքն իբրեւ լուան՝ եթէ պապանձեցոյց զՍադուկեցիսն, ժողով եցան 'ի միասին։
35. Եւ հարց մի ոմն 'ի նոցանէ՝ զնա փորձելով՝ եւ ասէ։
36. Վարդապետ՝ որ պատուիրանն է մեծ յօրէնս։
37. Եւ Յիսուս ասէ զնա. սիրեսցես զտէր Աստուած քոյոմենայն սրտէ քումմէ՝ եւ յամենայն անձնէ քումմէ՝ եւ յամենայն մտաց քոց։
38. Այս է մեծն եւ առաջին պատուիրանն։
39. Եւ երկրորդն նման սմին, սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո։
40. Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան։
41 Եւ 'ի ժողով եալ փարիսեցւոցն՝ հարց զնոսա Յիսուս և ասէ։
42. Զիարդ թուի ձեզ վասն Քրիստոսի, որդի է. ասեն զնա՝ Դաւթի։
43. Ասէ զնոսա Յիսուս. իսկ զիարդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր եւ ասէ։
44. Ասաց Տէր՝ ցՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եսից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։
45. Իսկ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ զիարդ որդի նորա լիցէ։
46. Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, եւ ոչ իշխեր ոք յայսմ օրէ հարցանել զնա եւ ոչինչ։

23-31. Փարիսեցիների հարցմունքից յետոյ մեռելոց հարութեան մասին Սադուկեցիք եւ հարց առաջարկեցին մեռելոց յարութեան համար, կարծելով որ իրանք կարողին անպատասխան թողել Յիսուսին, որք չէին կամենում մեռելների յարութեան հաստատ մարգարէներից գրուած անթիւ վկայութիւնները ուսումնասիրել, վասնզի Յիսուսի կողմից վայրի արժանացան։ Արդարեւ շատ թշուառ եւ խիստ գժբախտ այն ժողովուրդը, որ չէ կամենում Սուրբ Գրքի

քով մնուիր զարգանալ եւ ապրիր Յիսուսի այս խօսքերից երեւում, որ վերջի օրում բոլոր բանական արարածների մարմինները՝ իրանց հոգիների հետ միաւորուելով, թէ ծերեւ թէ մանուկնախածնողաց հասակի համեմատ, պէտք ամբողջապէս յարութիւն առնեն։ Արգարները կ'լինեն պայծառ, փառաւոր, երջանկաբաժ, նուրբ, թեթեւ, անցաւակիր, անմահ եւ անապական՝ այնէ. ազատ ամէն տեսակ մեղքերից։ Մարդիկները կանայք չենառնել եւ չ էլ կանայք մարդիկների կ'գնան, այլ ընկած հրեշտակների տեղը լցնելով, հրեշտակաց պէս կ'փառաբանեն Աստուծոյ, իսկ մեղաւորները կ'տանջուին դժոխքիմէջ։ Հաւանական կարծիք Աստուածաբանից, որ ամենայն չ'մկրտուած նորածիններ նոյնպէս պէտք ներկայանան Քրիստոսի առաջին, բայց դրա ինչպէս չեն կարող ժառանգել արքայութեան փառքը, այնպէս էլ չեն դատապարտուիլ մեղաւորների նման։ Յարութեան օրը, որովհետեւ բոլոր մարդիկ դեռ մեռած չեն լինիր վասնորոյեւ կենդանիներն էլ նորոգուելով՝ պէտք յարութիւն առած մեռեալների հետ ներկայանան Քրիստոսի դատաստանին։ Բայց մինչեւ հասարակաց յարութիւնը իւրաքանչիւր հոգի տեղ ունի կայանի մէջ եւ ամէն մէկին յայտնիւ իւր գործոց հատուցումն, ուստի արդարները պէտք սպասեն բարեաց յուսով, իսկ մեղաւորները զղջան պատժի ակնկալութեամբ։ Այսպէս մարդս ունի երեք տեսակ կեանք։ Ներկայ կամ երկրաւոր կեանքը՝ ասում է. — «առաջին կեանք»։ Մարմինը հոգուց բաժանելուց յետոյ մինչեւ հասարակաց յարութիւնը՝ ասում է.— «միջին կեանք»։ Իսկ յարութիւնից յետոյ յաւիտենական կեանքը՝ ասում է.— «վերջին կեանք»։ Մեռեալների յարութիւնը ուրացողը ուրանում է նաեւ Աստուծոյ ամենակարողութիւնը։ Նա՝ որ կարողանում է մի խօսքով երկինք եւ երկիր գոյացնել, միթէ՞ չէ կարող միւնոյն խօսքով, մեռած մարմինները կենդանացնել «Ոչ ծերն 'ի ծերյառնէ մարմին, եւ ոչ տգան աշխատ նմին, այլ հաւասար երեանամին 'ի չափ յառնեն նախասահմանեալ»։ Շնորհ.յովր. ժթ.25.հես.իդ.13.կդ.14.հզ.կ.1-11.դան.ժբ.2.բ.թագ. ժբ.23.մատ.գ.12.ի.20.ժգ.43.ժգ.27.ին.46. գալ.գ.ի. 34-37. յով.հ.ե. 28.29.առ.գոր.ժ.ի.42.առ.թես.դ.12-17.փիլ.գ.11-22. յայտ.ի.4։

31-33. Յիսուս մեռելոց յարութեան վկայութիւնը հասարա-

տու�մ Մովսիսի գրքերից՝ վասնզի այդ ազանդաւորները ընդունումէին միայն Մովսիսին եւ ո՛չ ուրիշ մարգարէների գրուածները։ «Աստուած կենդանեաց Աստուած է եւ ո՛չ մեռելոց»։ Սուրբ Գրքի այս եւ սրա նման շատ խօսքերից մարդս համոզուում այն եզրակացութեան՝ որ ինքն ունի անմահ հոգի։ Հոգւոյ գոյութեան համար նախ՝ պէտք է հաւատալ Սուրբ Գրքին, որ այս մասին շատ երկար խօսում եւ ապացուցանում։ Երկրորդ՝ մենք տեսնում ենք, որ մարդս զգայացած է մարմնից, բայց մարմինը ինքնըստ ինքեան չէ կարողանում խորհիլ, խօսիլ, մտածիլ, դատել, երգել եւ այլն։ Իհարկէ եթէ մարմինը ունենար այս անհրաժեշտ զօրութիւնները՝ այն ժամանակ հսկայակազմ մարդիկ աւելի հանճարեղ կլինէին քան կարճահասակները եւ թոյլերը, եւ կամ մարմնոյ մի կամ երկու անդամ պակաս եղած ժամանակ պէտք այդ զօրութիւնները եւս պակաս ներգործէին, բայց ընդհակառակը տեսնում ենք դարձեալ միւնոյն դասողութեան եւ զօրութեան մէջ կարճահասակները, թոյլերը աւելի խելք քան հսկայները։ Ուրեմն մարդիս մէջ կայ նաեւ մի անհրաժեշտ եւ անմահ էութիւն, որ կարողանում կատարել այս զօրութիւնները եւ ահա այս անմահ եւ անհրաժեշտ էութիւնը ասում հոգի։ Երրորդ՝ եթէ փիլոսոփներ մի կապիկի ձագ եւ մի անբիծահաս փոքրիկ մանուկ եւ դոցա առանձին-առանձին սենեակի մէջ սնուցանեն մինչեւ երկուսի կատարեալ հասակը, այն ժամանակ պարզ կ՝տեսնենք, որ մանուկը ձգտում դէպի բանական հանճարը եւ գերազանցութեան գաղափարը, իսկ կապիկը դէպի անասնական բնութիւնը։ Բացի սրանից չէ տեսնուած եւ լսուած թէ մի անասուն մարդին կրթելէ եւ իւր կամքին ծառայացրել այլ միշտ ընդհակառակը մարդն է իրան ծառայեցնում ամենասրամտի եւ ամենաուժեղ կենդանիներին, ուրեմն մարդին մէջ կայ մի էութիւն, որ կարողանիներին, ուրեմն մարդին մէջ կայ մի էութիւն, որ կարողանում, գործել այսպիսի հրաշքներ, ահա այս հրաշագործը՝ ասում, հոգի։ Չորրորդ համաձայն խոստովանութիւնը ամենայն ազգերի ամենայն դարերի մէջ ապացուցանում, որ մարդս ունի հոգի։ Եգիպտացիք իրանց ենթադրեալ մարմինները գրեթէ ամենայն ազգերի, յաստիճան որ նոքա երբեմն իրանց հոգիներըստանալով, պէտք կենդանանան եւ նորոգուին հրեշտակների եւ հոգիների։

նների մէջ եղած սարքերութիւնը այսէ՝ նախ, հրեշտակները, որք առաջին ապստամբութիւնից ազատեն մնացած, այլ եւ օրէնկարող ապստամբութիւ եւ չարանալ, ինչպէս դեւերը չեն կարող բարիանալ եւ հնազանդութիւ Աստուծոյ, բայց մարդու հոգին որքան մարմնու մէջէ կարողէ բարիանալ եւ կամ չարանալ, իսկ մարմնից որոշելուց յետոյ զրկուածէ այդ անձնիշխանութիւնից, չէ կարող գործել ոչ բարի եւ ոչ չար, եթէ բարիէ պէտք բարեաց յուսով վարձատրուի, իսկ եթէ չարէ՝ չարեաց յուսով։ Երկրորդ՝ հրեշտակները մի թուով են ստեղծուած, նոքա ոչ աւելանումեն եւ ոչ պակասում, իսկ մարդկանց հոգիքը օրեց օր աւելանումեն, որքան աւելանումէ մարդկանց ծնունդը։ Յով. գ. 11-24. մատ. ժ. 28. ժա. 25. 26. ժբ. 10. բ. կոր. ե. 1-11. եբր. թ. 24. ա. թես. գ. 12—17։

34-40. Այս օրինականը տեսնելով՝ որ Քրիստոս Սադուկեցւոց լաւ պատասխանեց՝ առաջարկեց այս հարցը ոչ թէ փորձելու, այլ սովորելու համար, որովհետեւ հրեից մէջ մեծ հակաճառութիւն կար այդ նիւթի վերայ, ամենք զոհն էին օրէնքների մէջ մեծ համարում, իսկ ամենք պահքը։ Եւ այլն։ Յիսուս էլ նորա խոհեմութիւնը տեսնելով՝ ասաց.- «Չես հեռի յարքայութենէ։» Աստուածսիրութիւնը պէտք լինի բոլոր զօրութիւնով՝ այնէ. մարդը պէտք ինքն իրան բոլորովին յանձնէ Աստուծոյ։ Բոլոր առաքինութեան գլուխը Աստուածպաշտութիւնն է, վասնզի նա՝ ով որ սիրում Աստուծոյ, աշխատում կատարել նաև նորա պատուիրանները։ Յիսուս այս խաքով որոշեց, որ Աստուածսիրութիւնը շատ մեծէ՝ քան զոհը և ողորմութիւնը։ Մատ. ժգ. 21. մարկ. ժբ. 28-34. ա. կոր. ժգ. 13. ա. յովհ. բ. 3—5. բ. յովհ. 6։

Ընկեր բառով պէտք հասկանալ մարդկութիւնը առանց կրօնի և ազգի խորութեան, նա մանաւանդ հաւատոց ընտանիքը, ազգականները, քաղաքացիքը և այլն։ Ուրեմն մենք պէտք սիրենք մարդկութիւնը այնպէս՝ ինչպէս սիրում մեզ։ Այս սէրը պէտք է կատարենք 'ի փառս Աստուծոյ և ոչ 'ի փառս մարդոյ և օգտի։ Եթէ մեր ընկերների հոգևոր երջանկութեան համար մեր անձը զոհենք, մեր նախնեաց նման, մեծ կատարելութիւնէ, իսկ մոլեկան և մեղանչական սէրը՝ ընդդէմ Աստուծոյ եւ խղճի։ Սրինականը Քրիստոսի այս պատասխանի վերայ շատ հաճութիւն տա-

լաւ։ Արանից յետոյ ոչ ոք չՀամարձակուեցաւ փորձելու Համար՝ մի բան Հարցանել, որպէսզի Յիսուսաստուածել չուզի փառաւորուի ժողովրդեան մէջ։ Մատ. ժ. 39. ժթ. 19. մարկ. ժբ. 30.33. Հռ. ժգ. 8-10. ա. սամ. ա. 5. յովհ. բ. 9-11. գ. 10-15. գ. 20—21։

41-46. Յիսուս էլ կամենալով իւր Հարցասէրներին պատասխանել և Սուրբ գրքով Հաստատել որ ինքն է սպասելի Մեսիան, առաջարկում այս Հարցը— «Քրիստոս ո՞ւմ որդի է։» Նոքա միաբան պատասխանեցին թէ.— «Քրիստոս Դաւթի որդին է, որովհետև Աստուած խոստացած է Դաւթին՝ «ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։» Յիսուս շարունակում է.— «Եթէ Մեսիան Դաւթի որդի է, ապա ուրեմն ինչի Համար է, որ Դաւիթը Սուրբ Հոգուց ներշնչուած նորա Տէր է անուանում։» «Եւ եթէ Տէր Հայր Աստուածը (ցՏէր իմ (ցՄեսիան) նիստ ընդ աջմէ իմմէ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։ Նոքա չէին իմանում՝ որ Դաւթի որդի Յիսուսը պէտք չինի որդի մարդոյ և որդի Աստուածոյ, պէտք չինի մարդ և Աստուած, փոխանորդ և Հայր Աստուածը խոստացաւ թագաւորացնել Յիսուսին ազգերի և լեզուների վերայ և յաղթական զօրու թեամբ նորա թշնամիները նորա ոտքի տակը հեռացնելոյ յաւիտեանս յաւիտանից, փոխանորդ ոչ ոք նրանցից չՀամարձակուեցաւ մի բան անդամ Հարցնել։ Սաղ. բ. 9. ի. 3-5. Ա. Դ. 1. Եսայ. 7. ցեսայ. ժ. 24. մատա. ա. 1-25. մարկ. ժբ. 35-37. գուկ. ի. 41-44. յովհ. գ. 25. 26. բ. սամ. գ. 16. ա. կորնթ. ժ. 25. բ. պետ. ա. 21. յայտ. ժ. 14. ժթ. 11—21։

Գլ. ԻԳ.

1. Յայժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովրդսն՝ և ընդ աշակերտսն իւր, և ասէ։
2. Յաթոռն Մովսիսի նստան գրիչք և փարիսեցիք։
3. Զամենայն ինչ զոր ասիցեն ձեզ՝ արարէք և պահեցէք, բայց ըստ գործոցն նոցա մի՝ առնէք, զի ասեն և ոչ առնեն։
4. Կապեն բեռինս Դանուտնս և դժուարակիրս, և դնեն՝ ի վերայ ուսոց մարդկան. և մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնոսա։
5. Եւ զամենայն զգործս իւրեանց առնեն՝ ի ցոյցս մարդկանայնեն զգրաստանակս իւրեանց, եւ երկայնեն զքղանցս Հանդերձից իւրեանց։

6. Սիրեն զյառաջագահս յընթերիս, եւ զնախաթոռս՝ ի ժողովուրդս՝ եւ զողջոյնս 'ի հրապարակս։
7. Եւ կոչել 'ի մարդկանէ Ռաբբի Ռաբբի։
8. Բայց դուք մի՝ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ, եւ ամենեքին դուք եղբայր էք։
9. Եւ հայր մի՝ կոչէք ձեզ յերկրիս, զի ձեր միէ հայր՝ որ երկինքն է։
10. Եւ մի՝ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոսէ։
11. Եւ մեծն 'ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։
12. Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն բարձրասցի։
13. Վա՜յ ձեզ գրագ եւ Փարիսեցւոց կեղծաւորացդ, զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան, դուք ոչ մտանէք, եւ որոց մտանելն՝ չ՚տայք թոյլ մտանելը։
14. Վա՜յ ձեզ գրագ եւ Փարիսեցւոց կեղծաւորաց, զի ուտէք զտունս այրեաց՝ պատճառանօք երկարէք զաղօթս, վասնզի աւելի դատաստան ընդունիցէք։
15. Վա՜յ ձեզ գրագ եւ Փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածէք ընդ ծով եւ ընդ ցամաք առնել եկեալ մի. եւ յորժամ լինիցի, առնէք զնա որդի գեհենին կրկին եւս քան զձեզ։
16. Վա՜յ ձեզ առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ երդնու 'ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ 'ի տաճարինէ՝ արժան է։
17. Մոլոքք եւ կոյրք՝ զի՞նչ մեծէ, ոսկին՝ եթէ տաճարն՝ որ սրբէ զոսկին։
18. Եւ որ երդնու 'ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու 'ի պատարագն որ 'ի վերայ նորա է՝ արժան է։
19. Ցիմարք, կոյրք՝ զի՞նչ մեծէ պատարագն, եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն։
20. Իսկ արդ՝ որ երդուաւ 'ի սեղանն, երդնու 'ի նա՝ եւ յամենայն որ 'ի վերայ նորա է։
21. Եւ որ երդուաւ ի տաճարն, երդնու 'ի նա՝ եւ 'ի բնակիչսն նորա։
22. Եւ որ երդուաւ յերկինս, երդնու յաթոռն Աստուծոյ՝ եւ յայն որ նստին 'ի վերայ նորա։

1-4. Ցիսուս այս քարոզի նման մի ուրիշ քարոզ էլ խօսեց մի մարդու տան, իսկ այս քարոզս խօսեց տաճարի մէջ։ Ղուկ. գ. 42-52.

Արդարև ամէն խոհեմ մարդ պէտք է՝ թէ անձնասրութեանց գործքերը հեռացուցել, այլ նորա մտքի ծնունդը։ Շատ անգամ տեսնում ենք որ մի ամենահասարակ և վատաբարոյ մարդ՝ իւր կատարեալ և խոհեմ դատողութիւնով, վճռում մի ամենադժուար

հարց։ Ուրեմն պէտք է հետեւիլ ո՛չ թէ վատ ընթացքի, այլ խոհեմ դատողութեանց։ Օրէնքները եւ պատուիրանները շատ հեշտին պահեցողութեան համար։ Դպիրները, ժողովրդից տուրքիր հաւաքելու նպատակաւ, աշխատութիւնն նոցա հաճոյանալ եւ իրանց՝ նոցա առաջեւ սուրբ եւ արդար ձեւացնելը, ուստի թիւր մեկնութիւններով ծանրացնում էին օրէնքները եւ իրանք հեռանում կատարելու։ Մատ. ե. 1—20. ժե. 2. Հռ. բ. 21—24։

5. Քրիստոնակ հայերէն թարգմանութիւն «պահպանող գիր»։ Սա մի կտոր մագաղաթէր, որի վերայ գրուած էին օրէնքի խօսքերը եւ կապում ճակատների եւ բազուկների վերայ։ Այս մագաղաթը օրէնքն կարելիէ լայն էին շինում, որպէսզի օրէնքի խօսքերից շատ բաներ պարունակելով նորա մէջ, ցոյց տան մարդկանց՝ որ իրանք այդ բոլորը աչքի առաջ ունենալով, միշտ պահում են, ուստի սուրբ են եւ արդար։ Հրէից մէջ աւանդութիւն կար, թէ նա ով որ իւր վերայ ունենայ այդ գրուածքը՝ փորձութիւններից եւ պատահմունքներից ազատ կմնա, ինչպէս այժմ յիմարների մէջ ընդունուած է հմայիլը (փալիսմանը)։ Այս սովորութիւնը յառաջացաւ օրէնքի մի քանի խօսքերի թիւր մեկնութիւնից։ Այսպէսով միւնոյն նպատակաւ լայնացնում էին իրանց հանդերձի ծայրի վերայ կապուած թելից կարած ծոպերը (աշչախները), որ Մովսէսը սահմանեց Տէրի պատուիրները անխափան յիշելու եւ երկնային նների վերայ միայն մտածելու համար։ Եր. ժդ. 1-16. գա. ժէ. 38-40. բ. օր. ե. 4—9. զ. 8. ժա. 13—21. իր. 12։

6-8. Փարիսեցիքը մարդու մէջ պատիւ որսալու համար գործ էին ածում ամենատեսակ միջոցներ։ Մարդի թարգմանում էին կամ վարդապետ։ Փարիսեցիքը այսպիսաւ կամենում էին ժողովրդին հեղանդեցնել իրանց կամայակայութեան։ Քրիստոս արգելում այս՝ ցոյց տալով, որ հաւատոյ ծայրագոյն ուսուցիչը եւ հիմունքը միակ ինքնէ, վասնզի ինքնէր՝ որ սովորեցրեց երանական ինքնքի ճանապարհը, այդ կեանքի կենցաղավարութիւնը, խոր-հուրդները, գիտութիւնները, եւ այլն։ Իրանից էլ միւնոյնը շարունակեցին իւրաքանչիւրները երբեմն կենդանիներ, երբեմն էլ զրով։ Մատ. դ. 33. իր. 19. 20. մարկ. ժբ. 38. 39. ժզ. 15. ղուկ. փ. 40 յով. ժբ. 13. գոր. ա. 1. ա. թես. բ. 13. բ. թես. բ. 14. գոր. բ. 3. յակ. գ. 1. ա. պետ. եւ 3։

9-12. Հայր աստուծմն մեր ծնողները, թագաւորները, իշխանները, բարեբարները, ուսուցիչները, հեղինակները, քահանաները և այն ամենք՝ որք պարտաւորուածեն ժողովրդեան առաջնորդել դէպի լոյսը եւ արդարութիւնը, դէպի երջանկութիւնը եւ խաղաղութիւնը, բայց շատ անգամ տեսնում ենք՝ որ սոքա իրանց չար և մոլի ընթացքով, ամբարտաւան և թիւր ուղղութեամբ ոչ միայն զրկուումեն այդ վսեմ և համբուրելի կոչումից, այլ նաև լինումեն պատճառ մեծ երկպառակութիւնների, բաժանմունքների և հազար ու մի տեսակ խայտառակութիւնների, վասնորոյ մեր ճշմարիտ և արդար Հայրը՝ միմիայն Աստուած է, որից և բղխումէ մեր հոգու և կեանքի ամենատեսակ երջանկութիւնները։ Որովհետև Քրիստոսի աշակերտները և սովորեցրին քրիստոնէական վարդապետութիւնները, վասնորոյ զոքա և ասուցան Հայր, ուսուցիչ, վարդապետ, քահանայ և այլն։ Այս նոցա, որ իրանց սրբազան կոչումն չարաչար գործադրելով՝ իրանց համար գտատպարտութիւն են պատրաստում։ Առ. Ժ.Ա. 33. մատ. Ե. 3. գ. 9. բ. 26-28. գալ. Ժ.գ. 11. մը. 14. բ. կոր. գ. 5. 6. եփ. գ. 14. յակ. գ. 6. ա. պետ. Ե. 5։

13. Քրիստոս, ինչպէս իւր հետևող հաւատացեալներին երանութեամբ խրախուսեց, այնպէս էլ այժմ իւր հակառակորդներին վայով է դատապարտում։ Փարիսեցիքը ոչ թէ միայն իրանք չէին հաւատում Քրիստոսին, այլ նաև հաւատացեալներին. արգելում և ժողովրդեան միջից հանում էին, իբրև նզովեալ ոմն։ Յովհ. Թ. 34։

14. Փարիսեցիքը միամիտներին օրհալու համար՝ տաճարի մէջ մի երևելի տեղ կանգնում և զանազան կեղծաւոր ձևերով աղօթում էին, որպէսզի հեշտութեամբ կարողանան կողոպտել նոցա ինչերը, ինչպէս միևնոյն նպատակաւ այժմ մեր մէջ անում են միամիտ քահանայից շաւասները անթիւ հոգոցներ, անհամար պահպանիչներ, շարականաց երգեր, ողբերգական տաղեր, զանազան ինքնահիաց աղօթքներ, աւելորդ յիշատակութիւններ կարդալով՝ աշխատում են առաջ տալ հանել տեսնողների քսակից, և Աստուածպաշտութիւնը շինում են միջոց իրանց տգիտութեան Արդարև վայ էնոցա՝ որ գործում են այսպիսի ձևեր։ Մարկ. Ժ. 40. գալ. Կ. 47։

15. Փարիսեցիքը ամենակրպ աշխատում էին գտնել մի անձնի

հեթանոսութիւնից բերել զէպի հրեութիւն, ոչ թէ նոցա հոգւոց փրկութեան համար, այլ որբազանցնելով հաւատացելոց թիւը բազմանալ նաև իրանց տաճարներին և զոհերի նուէրքը։ Նորահաւատներն էլ տեսնելով զոցա զործքերը՝ ոչ թէ հեռանում էին իրանց չարութիւնից, այլ իրանց հին հեթանոսական անզգամութեան վերայ աւելացնում էին նաև Փարիսեցւոց ինքնահաւանութիւնը և կեղծաւորութիւնը, լինելով միանգամայն կրկնապատիկ ժառանգ գեհենի։ Այժմ միևնոյն փարիսեականութիւնը տեսնում ենք բոզբակաների մէջ, որոնք ամենակրպակ աշխատում են, Սուրբ Գիրքը թիւր մեկնելով, միամիտ քրիստոնեաներին մոլորեցնել և իրանց փարախը ձգել, որպէսզի այդպիսիս նշանակած թիւը լրացնելով՝ ստանան սահմանուած փարձատրութիւնը։ Սոքա էլ այս պատճառից զուրկ չեն։ Մատ. ե. 22։

16-19. Արդարև այն զոհը կամ այն ոսկին (տուրքը), որ տալիս էին տաճարին յօգուտ քահանայից, համարում էր սուրբ, որովհետև տաճարը սրբում էր ոսկուն, իսկ սեղանը սրբում էր զոհերին։ Քահանայքը այս խօսքերը թիւր մեկնելով՝ ասում էին, որ զոհով և նուէրքով երդուողը պէտք անպատճառ կատարէ, որ շատ մեծ մեղք է՝ կատարելը, իսկ տաճարը և սեղանը որ իրանց չէր պատկանում և գրանցից իրանց անձնական օգուտ չունէին, ասում էին՝ գրանցով երդուիլը մեծ բան չէ։ Ելք. թ. 37. բ. 29. մատ. ե. 33-37. Ժ. ե. 14։

20-22. Քրիստոսի այսխօսքերից տեսնում ենք, որ սեղան, տաճար անօթ, պատկեր և այն ամենայն բաները, որք յարաբերութիւն ունին Աստուծոյ հետ՝ և ազօթքով և սուրբ իւղով օծուած և սրբուածներն, նրանց տուած պատիւը և յարգութիւնը Աստուծոյ է վերաբերում, վասնզի այդ ամենը՝ ի փառս Աստուծոյ գործադրվում և ոչ՝ ի փառս մարդու։ Եւ որով հետև սրբերը Աստուծոյ կամակատար սպասաւորներ են, և իրանց արիւնը թափեցին Աստուծոյ անուան համար, վասնորոյ և զէպի նոցա եղած պատիւը, համբոյրը, խոնարհութիւնը, ծնրադրութիւնը, ուղղամտութիւնը և այլն, զարձեալ վերաբերում են Աստուծոյ, ինչպէս Քրիստոս ասաց. «պատիւ Ծառային առ տեառն վերաբերիս։ Ուրեմն այս իսկ հիման վերայէ, որ մենք մեր ծնողների և բարերարների պատկերը մեզ մօտ պահելով՝ և նոցա համբուրելով, համբուրում ենք նոցն իսկ

նախատապին, յիշելով նորա երախտիքը, բարերարութիւնները՝ և այս իսկ պատճառաւ սահմանուեցաւ դպրոցներում ուսուցիչներն դանացներու համար, սովորեցնել պատկիներին վերայ՝ կենդանիների, բոյսերի և երկիրների վերաբերեալ զիտութիւնները։ Ասուած ինքնել հրամայելէ այսպիսի ձեռագործ պատկիները՝ ոչ թէ կապաշտութիւն համարելով նզովեալ գործ ճանաչելոյ իբրև Ասուածապաշտութեան ջերմեռանդութիւնը զրդող, պատուի և համակրութեան նիւթ ճանաչելու ստի և եկեղեցիներում սահմանուեցաւ տէրունական և սրբոց պատկիները կախելով՝ ռամիկ ժողովրդեան սովորեցնել նոցա պատմութիւնը, յիշատակութիւնները՝ զարթնացնելով նոցա մէջ Ասուածապաշտութեան սէրը և ազգասիրութեան ոգին։ «Զոր ինչ հայի որ՝ ինոյն փոխի և մոռաց։ Մեկ. նարեկ. երդ. երդոյն։ Որ թշնամանէ զպատկեր կայսերս, զարդար պատիժն կրէ, որպէսզի զկայսերն թշնամանելէր։» Աթանաս Հայրապետի իգործ. գ. եօթնեորդ ժողովոյն։ Մեն. իր. 18-20. թուս. իա. 8-9. եր. իէ. 10-21. ա. թագ. գ. 4-9. և. 3-4. եա. գ. 1-6. դան. է. 9. յովհ. գ. 14. երբ. ժգ. 7. ժա. ամբողջ գր.

23. Վայ ձեզ դպրացեալ Փարիսեցւոց կեղծաւորաց, զի տատանողք, դանանուս և զամիթ, և զչման, և թողիք զծանր ծանր օրինացն՝ զդատաստան և զողորմութիւն և զհաւատս. զայս պարտեալ առնել՝ և զայն չթողուք
24. Առաջնորդք կոյրք, որ զմի զուլկամիք և զուլտս կլանէք։
25. Վայ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժակին և զսկաւառակին, և՝ ի ներքոյ լիեն յափշտակութեամբ և անխտառնութեամբ։
26. Փարիսեցի կոյր՝ սրբեա նախ զներքին բաժակին և զսկաւառակին, զի լինիցի և արտաքին նոցա սուրբ։
27. Վայ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, զի նմանէք գերեզմանաց բաւելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկք՝ և՝ ի ներքոյ լի են ոսկերաց մեռելոց և ամենայն պղծութեամբ։
28. Նոյնպէս և դուք արտաքոյ երևիք մարդկան արդարք, և՝ ի ներքոյ լիք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ։
29. Վայ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց, զի շինէք զշիրիմս մարգարէից՝ և զարդարէք զգերեզմանս արդարոց։
30. Եւ ասէք. եթէ էաք յաւուրս հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն։

31. Ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտորեին զմարգարէսն։
32. Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց։
33. Օձք՝ ծնունդք իժից, զիարդ փախնուցուք ի դատաստանէ գեհենին։
34. Վասն այդորիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և գրիչս և ի նոցանէ սպանանիցէք և ի խաչ հանիցէք, և ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք։
35. Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի, յարենէն Եբէլի արդարոյ մինչև ցարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանիք ընդ մէջ տաճարին և սեղանոյ։
36. Ամէն ասեմ ձեզ, եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ։
37. Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէիր զմարգարէսն և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո՝ զորօրինակ ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ոչ կամեցարուք։
38. Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ։
39. Բայց ասեմ ձեզ՝ թէ ոչ ես տեսանիցէք զիս յայսմհետէ, մինչև ասիցէք. օրհնեալ եկեալ յանուն տեառն։

23-28. Այս համեմատութիւնքն շատ առատ էին և արժան, փարիսեցիներին սրանց տասանորդներին տալով՝ կամենուելին իրանց բարեպաշտ ցոյց տալ բայց օրէնքի պարտաւորական պահանջները թողնուելին անկատար՝ այնէ. «դատաստանը», որ Հարկաւոր էր պաշտպանել ձնշուածների իրաւունքը և արդարութիւնը, «ողորմութիւնը», որ անհրաժեշտ էր ունենալ դէպի ամենայն աղքատներ, որբեր և այրիներ, «հաւատք» որպէսզի երուսենային դէպ ի Մեսիան և նորա քարոզութիւնը։ Դէ. իէ. 30. միք. զ 8. յակ. ա. 27. բ. 17—27։

Մէ՛ժէն մի անվնաս շատ փոքրիկ բան է, որ գինու կամ ջրի մէջ ընկած ժամանակ՝ եթէ խմին օրէնքը կոտրած կ'համարէին։ Սրանով Ցիսուս դարձեալ մեղադրում նոցա, որ Հարկաւորները թողած երկրորդականներն էին պտրտում։ Դրսից բարեպաշտ էք ձեւացնում, իսկ ձեր հոգին լի է ամէն տեսակ ապտղութեամբ, ասաց Ցիսուս։ Սրբ մեր սրտերը ուղղենք Աստուծոյ Ճաշոյանցու համար, մեր դրսի գործերը հեշտութեամբ կ'ուղղուին։ Ես. լգ. 14. յոբ. ը. 13. ժե. 16-34. մատ. դ. 2. բ. կոր. դ. 16։

29-33. Հրեաները սովորութիւն ունէին աստին մի անգամ գնալ գերեզմանների քարերը ուղղել և սպիտակացնել Արդարների և սրբերի գերեզմաններ ուղղելը բարեպաշտական գործ է, եթէ կատարուի՝ փառս Աստուծոյ և ոչ՝ փառս մարդու։ Երբ լռանայ ամբարշտութեան և մեղաց չափը՝ կ՝հասնի պատժի ժամանակը։ Այս կատարուեց Տիտոսի և Վեսպասիանոսի ժամանակ։ Մն. ժ. 10. մատ. գ. 7։

34-36. Յիսուս իւր Աստուածային իշխանութիւնը ցոյց տալու համար՝ ասում.— «Ես կուղարկեմ մարգարէներ, առաքեալներ, քարոզիչներ, որ նրանց ամէն տեսակ չարչարէք,» ինչպէս Ստեփաննոսին քարկոծեցին, Յակոբոսին սպանեցին, փոքր Յակոբը գահավիժեցին, Պողոսին և Բառնաբասին հալածեցին և տանջեցին։ Հրէից մարտիրոսների մէջ առաջինը Աբէլն էր համարւում, իսկ վերջինը Բարաքեայի որդի Զաքարիան, որ ասում էր նաև Ազարիա։ Բ. մն. իդ. 20. 21. Ծն. գ. 10. մատ. թ. 3. իդ. 32. իբ. 7. իդ. 21. գործ. է. 58. ժբ. 23. ժգ. 50. իզ. 10. իբ. 19։

37. Երուսաղէմ ասելով ոչ թէ պէտք է հասկանալ նիւթական շինուածքը, այլ նորա մէջ եղած բնակիչները։ Մագդալարդի օրը Քրիստոս լաց եղաւ Երուսաղէմի վերայ՝ վերջին անգամն ողբալով ասում.— «Քանիցս անգամ Մովսէսի, Դատաւորաց, Սամուէլի, Դաւթի, Սողոմոնի և ուրիշ շատ մարգարէների ձեռաք կամեցայք գրել ցուցած մանկունքդ ժողով էլ իմ թեւի տակ, բայց գուք չ՝կամեցաք գալ, վերջապէս ես ինքս անձամբ անձին եկի ձեր փրկութեան համար, այժմ էլ կամենում եմ ինձ սպանանել, վասնորոյ ձեր չարութեան համապատասխան պատիժ պէտք է տանաք.» Ո՜հ որքան մեծ սէր է և գթութիւն, որ իւր սպանութեան համար պատրաստուած մի ժողովրդի, այսպէս քաղցրութեամբ հրաւիրում գէպ՝ի դարձ և ապաշխարութիւն։ Մատ. իա. 10. զուկ. ժթ. 41-44։

38. Այլ էս առաջուան պէս չէ ասում՝ իմ հօրս տունը, վասն զի Աստուծոյ տան փառքը Յիսուսի ներկայութիւնն էր։ Հրէաները զրկուելով Աստուծոյ ներկայութեան վայելչութիւնից, տաճարը հինգ ամսի և աւերակ մինչև որ Հռովմայեցւոց զօրքը բոլորով են ոչնչացրեց նորա։ Այսպէս էլ իւրաքանչիւր հաւատացեալ տուն և տաճար է Աստուծոյ, եթէ միայն մեղաց ձեռաք չէ զրկւում

Յիսուսի ներկայութեան վայելչութիւնից և չէ թողում տունը մեկալ աւերակ նորա հովանաւորութիւնից։ Անդ։ բ. 9. մաղ. գ. 1. եր. ժբ. 7. բ. կոր. զ. 16։

39. Սրանից յետոյ այլ ևս չխօսեց ժողովրդեան հետ և չպատմեց նոցա իւր Աստուածային ճշմարտութիւնները, այլ միայն հարիւրաւոր գիտելիքները առանձին պատմուածք առաքելոց, իւր յարութիւնից յետոյ էլ առաքելոց միայն երևեցաւ և ոչ ժողովրդին։ Վատաստանի օրը, ասում է Յիսուս, երբ կ'տեսնէք ինձ հայրական փառքով եկած հաւատացեալներին փառաւորելու և ձեզ դատապարտելու համար, այն ժամանակ ինձ Մեսիայ կ'ճանաչէք և կասէք.- «Օրհնեալ եկեալ յանուն Տեառն,» բայց ձեր այսպիսի դաւանութիւնը չէ կարող ձեզ ազատել յաւիտենական տանջանքից։ Իսկ ոմանք ասում են, վերջի ժամանակներից մեզ պէտք է նեռք և նեղման դան և Քրիստոս քարոզեն, այդ ժամանակ Հրէից ազգը կ'հաւատայ Յիսուսին։ Ես լեռ։ այսորիկ դարձցին որդիքն Իսրայելի և խնդրեսցեն զՏէր Աստուածն իւրեանց և զԴաւիթ արքայն իւրեանց (զՄեսիան), և զօրացին ի Տէր և ի բարութիւնս նորա յաւուրս կատարածի։ Ովս. գ. 5. զև. իդ. 27-33. բ. օր. իբ. 58-68. մատ. ժա. 3. հռ. ժա. 26. ա. կոր. ժե. 4-8. բ. կոր. գ. 14-16։

Գլ. ԻԴ.

1. Եւ երեալ այսպէս Յիսուս՝ի տաճարէն գնայր, և մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուածս տաճարին։
2. Եւ նա պատասխանի եւ ասէ ցնոսա. տեսանէք զայդ ամենայն, ամէն ասեմ ձեզ. ոչ մնասցէ այդր քար՝ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի։
3. Եւ մինչդեռ նստէր՝ի լերինն Զիթենեաց, մատեան առ նա աշակերտքն առանձինն և ասեն. ասա մեզ՝ ե՞րբ լինիցի այդ, և կամ զե՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն և վախճանի աշխարհիս։
4. Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնոսա. զգայջ լերուք գուցէ ոք զձեզ խաբիցէ։
5. Զի բազումք գայցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ ես եմ Քրիստոսն. և զբազումս մոլորեցուցանիցեն։
6. Լսելոց էք պատերազմունս՝ և զհամբաւս պատերազմաց.

զգոյշ լերուք՝ մի՛ խռովեսջիք, զի պարտ է լինել այնմ ամենայնի, այլ չեւ է կատարած։

7. Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և եղիցին սովք և սրածութիւնք և սասանութիւնք ի տեղիս տեղիս։

8. Սակայն և այն ամենայն սկիզբն է երկանց։

9. Յայնժամ մատնեսցին զձեզ ի նեղութիւնս և սպանանեսցին զձեզ, և եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ։

10. Եւ յայնժամ գայթագղեսցին բազումք, և զմիմեանս մատնեսցեն՝ և ատեսցեն զմիմեանս։

11. Եւ բազում սուտ մարգարէք յարիցեն, և զբազումս մոլորեցուսցեն։

12. Եւ վասն բազմանալոյ անօրէնութեան, ցամաքեսցի սէր բազմաց։

13. Բայց որ համբերեսցէ խսպառ, նա կեցցէ։

14. Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայութիւն ամենայն հեթանոսաց և ապա եկեսցէ կատարած։

15. Արդ՝ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի տեղւոջն սրբութեան. որ ընթեռնուն ի միտ առցէ։

1. Տաճարի մէջ խօսակցութիւնը վերջացնելից յետոյ գովեց աղքատ որբևայրուն գանձանակ տալուն համար։ Այդ միջոցում Հայոց Աբգար Թագաւորի նամակը՝ Անանէ Սուրհանդակի ձեռաք, Անդրէաս և Փիլիպպոս առաքեալների միջնորդութեամբ. ներկայացրին Յիսուսին։ Յիսուս տաճարից դուրս եկած կամնումէր իւր սովորութեան յարմար դնալ Բեթանեայ Մարիամ և Մարթայի տունը։ Մար. 41-44. զուկ. իա. 1-4. յով հ. ժբ. 20-26։

Տաճարը շինուած էր Մօրիա լերան վերայ, որի մի կողմից բարձր պարիսպ էր շինած և շատ մեծ ու գեղեցիկ քարերով զարդարուած։ Տաճարի շէնքն էլ շատ փառաւոր էր բոլորը ոսկով ծեփած, այնպէս որ տեսնողների աչքերը ծակծկուում էր։ Սողոմոնի շինած տաճարը իւր շինութիւնից 418 տարուց յետոյ՝ այն է 588 տարի Քրիստոսից առաջ, Բաբելացւոց Նաբուկոդոնոսոր թագաւորը կործանեց և նորա տեղը մի ուրիշը շինեց Քրիստոսից 516 տարի առաջ, բայց սա առաջուան պէս փառաւոր և մեծ չէր։

Քրիստոսից 20 տարի առաջ մեծ Հերովդէսը սկսեց նորոգել, այնպէս որ 46 տարուայ միջոցում նորա յաջորդները լրացրին և շատ փառաւոր շինեցին։ Աշակերտները Յիսուսից լսած լինելով՝ որ այդ փառաւոր տաճարը պէտք է աւերակ մնայ, կամեցան Յիսուսի գութը շարժել, որպէս զի խնայելով տաճարի գեղեցկութեան, կործանման վճիռը փոխէ, վասնորոյ և ասացին.— «Տե՛ս որպիսի են քարինքս։» Բ. Մն. գ. 1. դ. Թագ. իբ. 8-9. Եզր. գ. 13—18. մատ. դ. 5. իգ. 38. յով. Հ. բ. 20։

2. 3. Այո՛, թէև այդ տաճարը իւր գեղեցկութեան և ազնուութեան պատճառաւ խնայելի է, բայց ես վճռաբար ասումեմ. ասաց Յիսուս, որ դա բոլորովին պէտք է կործանուի։ Այս խօսքը 40 տարուց յետոյ բառ առ բառ կատարուեցաւ։ Հռովմայեցւոց կայսրը տաճարը այրեց, նորա պատերը և քաղաքի պարիսպները հիմից քանդեց։ Զիթենեաց սարը դէմ ու դէմ էր տաճարին, այնպէս որ Յիսուսի նստած տեղից այդ շինութիւնները շատ լաւ էին երևում։ Հրէաները կարծումէին թէ հրէական իշխանութիւնը պէտք է տևէ մինչև աշխարհիս վերջը, աշակերտներն էլ մի և նոյն կարծիքն ունենալով՝ այնպէս հասկացին թէ Երուսաղէմի կործանումից յետոյ, իսկոյն պէտք է լինի Յիսուսի գալուստը և աշխարհիս վախճանը, վասնորոյ Պետրոսը, Յակոբոսը, Յովհաննէսը և Անդրէասը առանձին մօտացին Յիսուսին և հարցրին.— «Ե՞րբ պէտք է Երուսաղէմը կործանուի, ի՞նչ նշաններով պէտք է իմանամք քո գալուստդ և աշխարհիս վախճանը։» Յիսուս այս երեք հարցմանը խառն և միասին պատասխանեց՝ այն է. առաջ խօսեց Երուսաղէմի և աշխարհիս կործանման նշանների վերայ մինչև 15-դ համարը, այդ տեղից մինչև 29 համարը յատկապէս խօսեց Երուսաղէմի աւերման վերայ, իսկ 29-ից մինչև վերջը խօսեց աշխարհիս վերջին և դատաստանի օրուան վերայ։ Մատ. իգ. 35—38. իդ. 1. 2։

4. 5. Յիսուս զգուշացնումէ հաւատացեալներին չմոլորուիլ ժամանակ որոշող սուտ մարգարէներից, որոնք պէտք է Քրիստոսի գալստից առաջ գան և Քրիստոսի անունով ասեն՝ իրանց թագաւորելու ժամանակը արդէն մօտ է։ Այսպիսեաց չպէտք է հաւատալ։ Այս մարգարէութիւնը բառ առ բառ կատարուեցաւ,

Թեւասար, Եգիպտացին, Սիմոն մոգը մեծ խռովութիւններ յարուցին, մանաւանդ այս վերջինս այն աստիճան ապշացրաւ Հռովմայեցւոց իւր կախարդական արհեստով, մինչև որ Ներա անունով երկու կամուրջների մէջ մի արձան կանգնացրին վրան գրուած «Սիմոնի Աստուծոյ մեծին» Սա մի օր Հռոմուս կախարդական հնարքով թռաւ դէպ 'ի երկինքը, կամենալով ցոյց տալ, որ ինքն ևս Քրիստոսի պէս կարող է համբարձուիլ, բայց Սուրբ Պետրոսի աղօթքով վայր ընկաւ մի քարի վերայ և սատակեցաւ։ Ղուկ. ի. 8. գործ. ե. 36. ի. 38. ը. 9։

6-8- թէ և այս միջոցում աշխարհս խաղաղէր, բայց մի քանի տարուց յետոյ շատ սաստիկ խռովութիւններ եղան։ Հռովմայեցիք, մինչև Երուսաղէմի վերայ յարձակուիլը երեք անգամ սպառնալիքներով զգուշացրին Հրէից։ Այդ ժամանակ 'ի հարկէ շատ մարդիկ խռովեցան։ Հրէաները ապստամբուեցան Հռովմայեցւոց իշխանութիւնից և Հրէաստանի մէջ եղած բոլոր Հռովմայեցւոց կոտորեցին։ Երկակայ ազգերը՝ օրէնն. Սամարացիք, Ասկալոնացիք, Դամասկացիք և այլն, վերացին Հրէից դէմ։ Վեսպասիանոսը իւր որդի Տիտոսի հետ միւս կողմից եկաւ գոցա դէմ։ Հրէից մէջ մեծ խռովութիւն ընկաւ, ոմանք կամենուին Հռովմայեցւոց հնազանդուիլ, իսկ ոմանք ոչ, այս պատճառաւ ամեն օր միմեանց ջարդուին։ Հռովմայեցիք առին քաղաքը, տաճարը կրակ տուին և սարսափելի կերպով ասնջեցին ապստամբներին, պատերազմին հետևեց մեծ սով։ Գրոտեայ կայսեր ժամանակ։ Ղուկասը աւելացնում է նաև.- «Ողբցի սաստնութիւնք ի տեղիս-տեղիս արհաւիրք, և նշանք մեծամեծ յերկնից։ Այս ամենն էլ Երուսաղէմի կործանումից առաջ կատարուեցաւ։ Իսկութեամբ ինչպէս պատմում է Յովսէփոսը։

ա.) Երուսաղէմի վերայ երևեցաւ մի շատ աշխարհս դիտաւոր աստղ սրի նման և մի ամբողջ տարի մնաց։ բ.) Զատիկ օրը երեկոյի մօտ մի կրակի նման լոյս փայլատակուեց տաճարի մէջ և կէս ժամու չափ տևեց։ գ.) Տաճարը բերդերին զոհելու համար մի գուարակ, որ ծնաւ մի ամենահիանալի գառ։ դ.) Արևելեան պղնձեայ դուռը, որ քսան մարդ հազիւ թէ կարողանար բանալ, ինքն իրանից բացուեցաւ զիշերուայ վեց ժամու մէջ։ ե.) Օդի մէջ

երևեցաւ սպառազինուած բանակներ, որոնք յարձակուելին միմեանց վրայ պատերազմով։ զ. Պենդեկոստէի օրը լսուեցաւ տաճարի մէջ հրեշտակաց ձայներ, որոնք ասուելին՝ «գնանք այստեղից գնանք»։ Մի ցեսու անունով գռեհիկ հրէայ եօթն տարի գիշեր ու ցերեկ անդադար հրապարակներին, փողոցների մէջ աղաղակուելիր՝ ասելով՝ «Վայ վայ Երուսաղէմին և ինձ»։ Երբ քաղաքը պաշարուեցաւ զօրքից մի քար ընկաւ Նորա գլխին և սպանեց։

Վերջին ժամանակներում սրանից շատ ահարկու և սոսկալի երևոյթներ և նշաններ պէտք լինին երկնքում և երկրի մէջ, սարսափելի պատերազմներ, սով և արշաւիրք, ժանդի Երուսաղէմի աւերումն վերջի օրին պատկերնէ, ինչպէս վկայեցին Եղեկիայ, Եսայի և Դանիել մարգարէները Դուկ. իա. 11. գործ. ժա. 28։

9-11. Ինչպէս քրիստոնէութեան առաջին տարում հալածեցին առաքելոց և նոցա հետևողներին, այնպէս էլ վերջի ժամանակում պէտք նեռն սպանանէ Մնօք և Եղիային և հաւատացեալներին։ Այս մեծ հալածանաց ժամանակ քրիստոնէից շատերը կ'ուրանան Քրիստոսի և կ'ատեն հաւատացեալներին։ Այս ամենս եղածէ և պէտք շարունակուի մինչև աշխարհիս վերջը։ Գիտելով՝ որ աշակերտները այս սուտ մարգարէներից մեծ փոնդներ պէտք կրեն, կրկնում է 5-դ համարի միտքը, նոցա զգուշացնելու համար։ Մատ. ժ. 16-22. իդ. 5. գործ. է. 58. ժբ. 12. բ. պետ. բ. 1-3.

12. 13. Անօրէնութիւնները զօրանալու ժամանակ հաւատացելոց դէպի Քրիստոս ունեցած սէրը կ'ցամաքի։ Այս խօսքը մենք մեր ժամանակներում անգամ տեսնում ենք կատարուած։ Անօրէնութիւններ եղած տեղը չ'կայ սէր և արդարութիւն։ Նոքա որոնք փոքռութեան ժամանակ սառչումն Քրիստոսի սէրից, նոքա որոնք քրիստոնէութեան ճանապարհի մէջ էին համբերում, պէտք է կորուսուին, բայց նա՝ ով որ մինչև իւր վերայ եկած փորձութիւնները վերջանալը, մինչև 'ի մահ համբերում պիտի ապրի, պիտի փրկուի։ Մատ. ժ. 22 գաղ. գ. 1-4. բ. տիմ. ա. 15. յայտ. բ. 4. գ. 1—3. 15. 16։

14. 15. Այս ամենս կատարուեցաւ և կատարուում։ Պենտեկոստէի օրը զրէթէ ամեն տեսակ ազգեր ժողովածէին Երուսաղէմ, որոնցից 3000 հոգի հաւատացին և գրաւեցան իրանց երկիր-

ները Քրիստոս քարոզեցին Սրանից յետոյ շատ տարի չանցած առաքեալները գանազան երկիրներ պատելով՝ ամեն տեղ Քրիստոս քարոզեցին։ Այսպէս կատարուեցաւ Քրիստոսի խօսքը, որ Երուսաղէմի կործանումից առաջ պէտք լինի ազգերի մէջ ընդհանուր քարոզուի Թիւն, Պօղոսն էլ վկայում Թէ այս եղաւ։ Եւ որով հետև, ինչպէս ասացի, Երուսաղէմի կործանումը պատկերէ աշխարհիս կատարածին, վասնորոյ մինչև աշխարհիս վերջը պէտք նաև երկրագնդի ամեն մասանց մէջ լսուի աւետարանի ձայնը, ինչպէս այժմ լսելի եղած և լինում։ Երբոր Հռովմայեցիք տաճարը աւերեցին, Տիտոսը միևնոյն սուրբ տեղը կուրքիր կանգնեցրաւ, այսպէս կատարուեցաւ ասուածը՝ „պղծութիւն աւերածոյն ի տեղւոջն սրբութեան“։ Դան. Թ. 26. 27. մթ. 11. մատ. գ.1. մար. մարկ. 10.14. գործ. բ. է. 41. հռ. 1. 8. կորնթ. ա. 6. 23։

16. Յայնժամ որ ՝ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ՝ի լերինս։
17. Եւ որ ՝ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ ՝ի տանէ իւրմէ։
18. Եւ որ յանդի իցէ, մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր։
19. Բայց վա՜յ իցէ յղեալս և սնանուցս յաւուրսն յայնոսիկ։
20. Յաղօթս կացէք՝ զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմերանի, և մի՛ ՝ի Շաբաթս։
21. Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև ՝ի սկզբանէ աշխարհաց մինչև ցայժմ, և ոչ այլ լիցի։
22. Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին, բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ։
23. Յայնժամ Թէ ոք ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ անդ, մի՛ հաւատայցէք։
24. Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք և տացեն նշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել՝ Թէ հնար ինչ իցէ և զընտրեալսն։
25. Ահա յառաջագոյն ասացի ձեզ։
26. Եթէ Թէ ասիցեն ձեզ. ահաւասիկ յանապատի է, մի՛ երթայիցէք, և եթէ ահա յշտեմարանս է, մի՛ հաւատայցէք։
27. Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարևելից՝ և երևի մինչև յարևմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։
28. Զի ուր գէշն իցէ, անդր ժողովեսցին արծուիք։
29. Վաղվաղակի յետ նեղութեան աւուրցն այնոցիկ՝ արե-

զակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկնից, եւ զօրութիւնք երկնից շարժեսցին։
30. Եւ ապա երեւեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ փառաւք բազմաւք։
31. Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողովք մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալսն նորա իչորից հողմոց՝ ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա։
32. Ի թզենւոյ անսի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն կակղացին և տերեւն ցցուիցի, զիտէք թէ մերձ է ամառն։
33. Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս.
34. Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղցի։
35. Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ մի՝ անցցեն։

16. Այս տեղից սկսած յատկապէս խօսում Երուսաղէմի աւերման մասին, որպէսզի քրիստոնեայք փախչելով ազատուին, ինչպէս եւ ազատուեցան։ Քրիստոնեաները, լսելով Հռովմայեցւոց գալը առած իրանց կամ ու կարասիքը, փախան Յորդանանու միւս կողմը Փէլլայ ասուած քաղաքը եւ ազատուեցան։ Այդ միջոցում Ներոն կայսրը ուղարկեց Զէսպասիանոս-Վարս մեծ զօրապետը Հրէից վերայ, բայց Հրէայք նորա փախցրին, սրանից վեց ամիս յետոյ եկաւ Վեսպասիանոս զուգորդ եւ երեք տարուայ միջոցում առաւ Գալիլեայի եւ Հրէաստանի բոլոր քաղաքները, բացի Երուսաղէմից, եւ դեռ պատրաստուում էր Երուսաղէմը պաշարելու համար, այդ միջոցում Հռովմից պատգամաբեր եկաւ թէ՝ Ներոնը մեռաւ, զորքը երբ այս լսեց, միաբերան ազաղակեց. «Կեցցէ Կայսրը Վեսպասիանոս»։ Վեսպասիանոսը թողեց զորքը իւր որդու Տիտոսի մօտ ու ինքն գնաց Հռոմը Ներկուստից հաստատուելու Կայսր, Տիտոսն էլ նոյն ամսից յետոյ պաշարեց Երուսաղէմը և չորս ամսուայ միջոցում՝ պատերի օրը, առաւ Երուսաղէմը և այրեց նորա։ Այս հանգամանքներից երևում է՝ որ Հրէայք լաւ միջոցներ ունէին փախչելու, բայց չփախան։

17-19. Այսինքն պէտք է առանց ուշանալու անմիջապէս փախչել և ոչ մի բանի համար չսպասել։ Յիսուս Ծծմայր կանանց համար

արդարև շատ դժուարէ փախչիլը, վասնզի յին իւր ծանրութեան պատճառաւ, իսկ մանկատիրը իւր մանկան համար՝ չէն կարող թողել և փախչիլ։

«Հոգևորապէս» վայ նոցա՝ որք յին են փառասիրութեան, հիշատակութեան և ագահութեան մեղքերով, և համ ծնած դիցուցանումն այդ մոլորութեան զաւակներին, որպէս մանուկներին։ Դոքա շատ դժուարութեամբ կարող են ազատուիլ դիւցազ զորքերի յարձումներից։

20-22. Զմեռը փախչիլը դժուարէ ճանապարհների վատութեան պատճառաւ։ Հրէից մէջ կանոն կար, որ շաբաթ օրը կարողէին միայն եօթն հարիւր քայլ (մէկ մղոնի չափ) ճանապարհ գնալ, և եթէ փախուստը պահանջէ հազար քայլ ճանապարհ, իբրև օրինապահներ, լուէր անկանիլ թշնամեաց ձեռքը, քան կոտրիլ այդ կանոնը։ Բացի այս շաբաթ օրը քաղաքի դռները փակ լինելուն համար՝ չէին կարող փախչիլ։ Սրբոյ Հռովմայեցիք յարձակուեցան Երուսաղէմի վերայ, այդպեղ տօնի պատճառաւ ժողովուած էին 3000000-ի չափ հրէայք, պաշարումն սկսուեց մի քիչ յետոյ, կիրակուրը բոլորովին վերջացաւ, հրէաները հաղարներով սովամահ մեռան, սովը այնպէս սաստկացաւ՝ որ ո՛չ թէ միայն կիրակուրները, այլ եւ կենդանիների չնչալի կիրակուրները իրանք կերան։ Մէկ երեւելի կին՝ իւր տղան եփեց, իւր այս զորձը յայտնուելից առաջ, տղին կէսը կերաւ։ Հռովմայեցիք հրէաներին սոսկալի տանջանքներով չարչարեցին, ժողովրդի արիւնը զոհերի արեան հետ խառնուեցաւ, փողոցներով արեան գետերէն վազում, զրօսանքի համար հազարներով էին խաչում։ Ցովսէփոսը ասում՝ 1000000 քաղաքի մէջ մեռան, 250000 զանազան տեղերում, 98000 գերի տարուեցան։ Այսպէս Աստուծոյ մօտ խելի եղեւ իրանց աղօթքը. «Արիւն դորա՛ իվ երայ մեր եւ՛ իվ երայ որդւոց մերոց»։ Այսպէս Երուսաղէմը դարձաւ եւ պիտի դառնայ կոխան ազգաց, մինչեւ որ հեթանոս հաւատացեալոց թիւը լրանայ, եւ հրէաները դառնան իրանց մոլորութիւնից եւ հաւատան Ցիսուսին։ Նպէրով քաղաքի պարիսպների ամրութեան, երկար տարիների մէջ հաղիւ թէ կարողանային քաղաքը առնել, բայց պաշարումն միայն չորս ամիս տեւեց։ Այսպէս Աստուած ընտրեալների համար կարճացրաւ այդ պատերազմի միջոցը։ Հրէաներից շատերը այս անցքը տեսնելից

յետոյ հաւատացին Քրիստոսի։ Ասուած բարեպաշտների անուան համար շատ անգամ ինչպէս մի ամբողջ ազգի։ Մաժբ.23-33. եսդ.35.կե.8.9.զաքարիայ.2.մատա.13.իդ.25.հռ.ժա.25։

23-25.Որով հետեւ մարգարէից գուշակած ժամանակը լրացած էր, բայց հրէաները Քրիստոսի չէին ընդունած, վասնորոյ ով որ գալիսէր եւ խոստանում նոցա մարմնաւոր փառք եւ հանգստութիւն, իսկոյն ընդունում էին նորա, իբրեւ Մեսիայ։ Այս պատճառաւ այդ միջոցում դուրս եկին, բացի վերոյիշեալ սուտ մեսիաներից նաեւ շատ ուրիշ խարեբաներ, ինչպէս Կորեայ որդին Սիմոնը, որ բնակւում էր անապատում եւ պարծենում էր թէ ինքնէ Իսրայէլի փրկիչը, սորա հետեւեց մեծ բազմութիւն։ Երկրորդը՝ որ ասում էր Սիմոնի որդի Եղիազար, սա նստելով տաճարի այն գաղտնի տեղերում, որ ասում էր շեմարանք, խարում էր հրէաներին ասելով՝ թէ ինքնէ Մեսիայն։ Երբոր սորա հետեւողների թիւը շատ շատացաւ՝ աշխատեց տիրել բոլոր հրէաների վերայ, կային եւ այնպիսիները, որ չէին ընդունում դրան, այս պատճառաւ նրան սադեմացիք մարդ ուղարկեցին անապատը սուտ մեսիայ Սիմոնի մօտ՝ որ գայ եւ փրկէ երանց սուտ մեսիայ Եղիազարից։ Այսպէս այս երկու սուտ մեսիաները իրանց ժողովրդներով կռտորեցին միմեանց, այնպէս որ երկու կողմից ոչ ոք չմնաց կենդանի։ Իսկ երրորդ սուտ մեսիայն ասում էր Յովհաննէս որդի Ղեւեայ։ Այս սուտ մեսիաները երեւացին Երուսաղէմի պաշարումից առաջ։ Այսպէս էլ աշխարհիս վերջանալից առաջ՝ կ'գան շատ սուտ քրիստոսներ, մարգարէներ, քարոզիչներ, որքաւ եւ առանի հակառակ սուտ վարդապետութիւններով կ'մոլորեցնեն շատերին մինչեւ անգամ կախարդական եւ դիւական հնարքներով էլ ցոյց կ'տան շատ նշաններ եւ արուեստներ, սրանց չ'պէտք հաւատալ, ասաց Յիսուս։ Ընտրեալները չեն մոլորուիլ։ Այս մոլորեցուցիչներից մի քանիսը արդէն եկեղ, ինչպէս Արիոսը, Նեստորը, Մակեդոնը, Եւտիքէսը, Լիւտերը եւ այլն։ Մատ.իդ.4.5. յով հ.ժ.29.բ.թես. 9. 10։

26-28. Այս իսկապէս կատարուեց անապատի մէջ ապրողը Կոբիայի որդի Սիմոնն էր, իսկ տաճարի շեմարանների մէջ բնակուողը՝ Սիմոնի որդի Եղիազարն էր։ Նաեւերը այդ տաճարանաց օրերում կ'ցանկան գտնել Յիսուսի մի օրուայ ներկայութեան ար-

ժանանալ, բայց չեն արժանանար Խսկ Քրիստոսի գաղուստը յայտնապէս կ'լինի, նորա չի կարելի պատրել Ծածուկ տեղերում։

28. Որովհետեւ այսուհետեւ սկսելու է խօսել աշխարհի աւերման նշանների վերայ, վասնորոյ, երբեւ եղբայացութիւն Երուսաղէմի աւերմունքի գուշակութեան, ասում է. այս չարութեան պատճառը իրանք հրէաներն են, ի հարկէ որտեղ մեղքն է՝ այնտեղ է և պատիժը։ Հրէից մեղքը ձգեց զէպի իրանց Հռովմայեցւոց պատժող արծիւները իրանց յափշտակելու համար։ Եթէ արդարութիւնը կ'սերէին և արդարութեան ձայնը կ'լսէին չէին պատժուիլը։ Մեղք սերմանողը պատիժ կ'հնձէ։ Յով հ. լթ. 30. եւ. ժ. 5. մատ. իզ. 23. զուկ. ժէ. 22։

29. «Գազվազակի» չէ նշանակում իսկոյն, այլ միջոցի երկայնութիւն, վասնզի հազար տարին Աստուծոյ մօտ, իբրեւ մի օրէ համարվում։ Նոյնի և Երեմեայ մարգարէներն էլ այսպէս գուշակեցին Տիրոսի, Սիդոնի և Բաբիլոնի աւերման մասին։ Նոքա այդ քաղաքների գուշակութիւնից իսկոյն անցնում էին Երուսաղէմի աւերման գուշակութիւնը, այնտեղից էլ աշխարհիս աւերման և վերջի օրուան գուշակութիւնը, վասն զի մէկը միւսի նախատիպն է։ Աշխարհիս կատարածի առաջին նշանը արեգակի և լուսնի խաւարումն է. բայց ոչ այնպէս ինչպէս սովորական կարգաւ միշտ խաւարում են, այլ արտաքոյ կարգի՝ նման Քրիստոսի խաչելութեան օրը եղած խաւարման։ Այդ ժամանակ կ'երեւան երկինքում օդի խառնուրդներից կազմուած ոչ թէ բնական, այլ զանազան պատահական եւ զիսաւոր աստղեր, որք կ'թափուին երկնքից, վասն զի բնական աստղերը շատ եւ շատ մեծ են երկրադնից, կ'լինի ահարկու եւ սաստիկ երկրաշարժմունքներ, սաստիկ փայլատակմունք, այնպէս թէ՝ նորա առաջեւ հուր կերթայ։ Սաղ. ղզ. 3. Զթ. 4. եզ. գ. 5. 6 բ. պետ. գ. 8։

30. 31 Այսպէս տիեզերաց սասանութիւնից յետոյ երկնքի վերայ կ'երեւայ Քրիստոսի խաչը՝ որէ, երկնաւոր թագաւորի դրօշակը։ Ոմանք ասում են թէ՝ այս խաչը կ'ձեւանայ մի շատ հիանալի լուսեղէն երեւոյթից, իսկ միւսները թէ՝ նոյն իսկ խաչափայտը, որի վրայ խաչուեցաւ Քրիստոս, պեսքէ փայլէ երկնքում մեծ լուսով և պայծառութեամբ։ Բացի խաչափայտից

հրեշտակաց միջնորդութեամբ կ՚ներկայանան նաեւ Քրիստոսի չարչարանաց միւս գործիքները՝ այնէ. եղէգնը, սպունգը, սիւնը, գեղարդը, պսակը, բեւեռները, եւայլն։ Այն ազգերը, որք Քրիստոսի չեն հաւատացած եւ նոքա, որք հաւատացած են, բայց զուրկ են բարեգործութիւնից, զոքա տեսնելով իրանց զրկուած Յիսուսի Աստուածայինտեսութիւնից եւ յաւիտենական փառքից, անպատմելի դառնութեամբ կ՚լան եւ կոծքան։ Այս ամենից յետոյ կը տեսնեն Յիսուս Թագաւորը նստած լուսեղէնամպերի վերայ, շրջապատուած հրեշտակաց խմբերով, մեծ փառքով եւ զօրութեամբ։ Ահա գալիսէ, իբրեւ տէր եւ Աստուած դատել կենդանիներին եւ մեռեալներին։ Նոքա մարմնոյ լուսաւոր ճառագայթներից արեգական լոյսը, իբրեւ մի ճրագի նուազ լոյս, կ՚երեւայ։ Երբ հրեշտակապետը կ՚փչէ մեծ փողը՝ նոքա հետ ձայնակից կ՚լինին շատ հրեշտակներ։ «Առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ», եւ այս փողի մէջ լսելի կ՚լինի Յիսուսի ձայնը։ «Արիք մեռեալք»։ Հրեշտակները կ՚հաւաքեն աշխարհիս ամէն կողմերից ընտրեալներին, որպէսզի մեղաւորների վերայ եկած պատժից ազատեն։ Երեմ. 9-18. եզ. ա. 4. դան. է.13. մատթ. 10. եր. 23-33. յով. հ. 28։

32-35 Վերոյ գրուած նշաններից հաւատացեալները պէտք զգաստութեամբ սպասեն Քրիստոսի գալստեան, գիտելով որ նա մոտեցած գրանն է։ Անցցէ բառը այստեղ նշանակում է ոչնչանալ։ Փրանալը Յիսուս այս խօսքով կամենում է ցոյց տալ որ հրէաները ուրիշ ազգերի պէս չեն ոչնչանալ եւ աշխարհից վերանալ այլ դոքա պէտք են իրանց ազգութեան մէջ մինչեւ աշխարհիս վերջը, որպէսզի, եթէ չդառնան դէպի Քրիստոս՝ ենթարկուին վերոյիշեալ զուշակութիւնների սարսափելի նեղութեանց տակ։ Հաստատ հաւատացէք, ասաց Յիսուս, որ երկինքը եւ երկիրը կ՚ոչնչանան եւ կ՚նորոգուին, բայց իմ ասածներիցս մի կէտ անգամ չի ոչնչանալ եւ մեռալ անկատար, այլ բոլորը պէտք իսկութեամբ կատարուի։ Մատ. ե. 18. մարկ. ժգ. 28-31. գուկ. ժա. 32. 33. իս. 29—32. յակ. ե. 9։

36. Բայց վասն աւուրն այնորիկ եւ ժամուն՝ ոչ ոք գիտէ՝ ոչ Հրեշտակք երկնից՝ եւ ոչ Որդի՝ բայց միայն Հայր։

37 Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։

38. Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զՋրհեղեղն, ուտէին եւ ըմպէին՝ կանայս առնէին եւ արանց լինէին մինչեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն։
39. Եւ ոչ գիտացին մինչեւ եկն Ջրհեղեղն եւ երարձ զամենեսին, այնպէս եղիցի եւ գալուստն Որդւոյ մարդոյ։
40. Յայնժամ թէ իցեն երկու յագարակի, մին առցի՝ եւ միւսն թողցի։
41. Եւ եթէ երկու ազայցեն՝ ի մի երկանս, մին առցի՝ եւ միւսն թողցի։
42. Արթուն կացէք՝ զի՞ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ։
43. Զայն գիտասջիք, եթէ գիտէր տանուտէրն՝ յորում պահու գող գայ. հսկէր՝ եւ ոչ տայր սկան հատանել զտան իւրոյ։
44. Վասն այսորիկ եւ դուք եղերուք պատրաստք, զի յորում ժամու ոչ ակն ունիցիք՝ գայ Որդի մարդոյ։
45. Իսկո՞վ իցէ Հաւատարիմ Ծառայ եւ իմաստուն, զոր կացցոյց տէր իւր իվերայ Ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու։
46. Երանի է Ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէրն գտանիցէ արարեալ այնպէս։
47. Ամէն ասեմ ձեզ. զի իվերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա։
48. Ապա թէ ասիցէ Ծառայն չար ի սրտի իւրում, Տէր իմ յամէ գգայ։
49. Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ եւ ըմպիցէ ընդ արբեցողս։
50. Գայցէ տէր Ծառային այնորիկ յաւուր յորում ոչ ակն ունիցի, եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ։
51. Եւ կտրեսցէ զնա ընդ մէջ, եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։

36. Ցիսուս, ինչպէս Աստուած, շատ լաւ գիտէր դատաստանի օրը եւ ժամը, բայց որով հետեւ չէր կամենում յայտնել՝ ասաց. «Ոչ է ձեզ գիտել զժամն եւ ժամանակս, զոր Հայր ետ յիւրում իշխանութեան։» Մարկ. ԺԳ.32-37. Լուկ. ԻԱ.34-36. Գործ.Ա.7։

37-44. Այս խօսքերից երեւում է, որ այդ դառը օրերը անցնելից յետոյ՝ մի առ ժամանակ հանգստութիւն կտրուել, որպէսզի մեղաւորները ապաշխարութիւն եւ ահա այս խաղաղ միջոցում յանկարծ՝ գայ փառաց թագաւորը։ Այսպէս պէտք է ամենայն ժամ պատրաստ մնալ՝ ոչ թէ միայն ընդհանրական դատաստանի համար, այլ

նաեւ այն մասնաւոր դատաստանի, որ պատրաստուածէ իւրաքանչիւր մարդու համար իւր մահուան օրը։ Արթուն եւ պատրաստ անձինքը միայն կ'առնուին եւ դէպի արքայութեան փառքը կ'ամանուին, իսկ մեղաւորները կ'թողուին և կ'ձգուին։ Դատաստանի օրը մեծ տարբերութիւն կայ արդարների եւ մեղաւորների մէջ, յանկարծ պիտի յափշտակուին եւ յաւիտեան միմեանց տեսութիւնից պիտի զրկուին, նորահարսը իւր փեսայից, որդին հօրից, եղբայրը եղբօրից եւայլն։ Ինչպէս մարդին մահը, այնպէս էլ դատաստանի օրը յանկարծ գոգի պէս կ'գայ։ Երանի նորա ով որ արթնութեամբ կ'սպասէ Քրիստոս Թագաւորին։ Ժող. բ. 11. մար. ժ. 35-38. զուկ. ժբ. 39. ժէ. 35. իա. 35. ա. թես. է. 2. բ. պետ. բ. 5. գ. 10. յայտ. գ. 3։

45-51. Եթէ մենք մեր պաշտօնը եւ պարտաւորութիւնները սրբութեամբ կատարենք աշխարհի մէջ երջանիկ կապրենք եւ երկնքումեւ աւելի նշանաւոր եւ մեծ պաշտօնների մէջ կ'նշանակուինք։ Անտարբերութիւնը դէպի մի որուիցէ բարեգործութիւն, անտարբերութիւնը դէպի եկեղեցու պայծառութիւնը, անտարբերութիւնը դէպի ազգային յառաջադիմութիւն, միով բանիւ անտարբերութիւնը նաեւ մեր հոգու եւ մարմնու ներկայ եւ ապագայ երջանկութեանը հասցրածէ մեզ մինչեւ կորստեան դուռը։ Զար ծառայի պէս մենք մեզ դերի ենքտուած շուայլութեան, գեղխութեան եւ արբեցողութեան ախտերին։ Հարկէ, եթէ մենք մեր այսպիսի ընթացքը չփոխենք դէպի աւետարանի փրկարար դաստիարակութիւնը, եթէ աւետարանի վարդապետութիւնը չսնուինք եւ զարգանանք, մեր ներկան եւ ապագան թշուառութիւն է եւ վայ։ Մատ. բ. 12. ժգ. 42. իդ. 37. 40. իե. 30. մարկ. ժգ. 34. զուկ.ժբ.46. ժգ. 28. ժդ. 1-10։

Գլ. ԺԵ.

1. Ցայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց ելին ընդ առաջ փեսային եւ հարսին։
2. Հինգն 'ի նոցանէ յիմարք էին՝ եւ հինգն իմաստունք։
3. Զիմարքն առին զլապտերսն, եւ չէին ընդ իւրեանս զ'բարձին

4. Իսկ իմաստունքն ապին ձեթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։
5. Եւ 'ի յապեր փեսային, Ներհեցին ամենեքեան եւ 'ի քուն մտին։
6. Եւ 'ի մէջ գիշերի եղեւ բարբառ. ահա փեսայ գայ՝ ելա՛ք ընդ առաջ նորա։
7. Յարեաւ յարեան ամենայն կուսանքն՝ եւ կազմեցին զլապտերս իւրեանց։
8. Ասեն յիմարքն ցիմաստունսն, տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։
9. Պատասխանի ետուն իմաստունքն՝ եւ ասեն. գուցէ ո՛չ իցէ մեզ եւ ձեզ բաւական, այլ երթայք 'ի վաճառականս՝ եւ գնեսջիք ձեզ։
10. Երբեւ նորա գնացին գնել՝ եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա 'ի հարսանիսն՝ եւ փակեցաւ դուռն։
11. Յետոյ գան եւ այլ կուսանքն՝ եւ ասեն. Տէ՛ր, Տէ՛ր բա՛ց մեզ։
12. Նա պատասխանի ետ եւ ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։
13. Արթուն կացէք զի ո՛չ գիտէք զօրն եւ զժամն։
14. Որպէս այր մի գնացեալ 'ի տար աշխարհ, կոչեաց զծառայս իւր՝ եւ ետ նոցա զինչս իւր։
15. Ումեմն ետ հինգ քանքար՝ եւ ումեմն երկուս՝ ումեմն մի՝ իւրաքանչիւր ըստ իւրում կարի, եւ գնաց։
16. Զոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն՝ զօրծեաց նոքօք, եւ շահեցաւ այլ եւս հինգ։
17. Նոյնպէս եւ որ զերկուսն, շահեցաւ այլ եւս երկուս։
18. Եւ որ զմին առ գնաց փորեաց զերկիր, եւ թաղոյց զարծաթն տեառն իւրոյ։
19. Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ՝ եւ առնէ հաշիւս 'ի մէջ նոցա։
20. Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ եւս հինգ քանքար՝ եւ ասէ. Տէր՝ հինգ քանքար ետուր ցիս, արդ՝ աւասիկ, հինգ այլ եւս քանքար 'ի վերայ շահեցայ։
21. Ասէ ցնա տէրն իւր. ազնիւ ծառայ՝ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ բազմաց կացուցից՝ զքեզ, մուտայ ուրախութիւն տեառնդոյ։
22. Մատուցեալ եւ որոյ զերկուս քանքարսն տուեալ էր՝ եւ ասէ. տէ՛ր երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուսեանայլ քանքարս զոր 'ի վերայ շահեցայ։
23. Ասէ ցնա տէրն իւր. ազնիւ ծառայ՝ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ 'ի սակաւուդ հաւատարիմ ես, 'ի վերայ

բազմաց կացուցից զքեզ. մուտյուրախութիւնն տեսան քո։
24. Մատուցեալ եւ որոյ զմի քանքարն առեալ էր, եւ ասէ. տէր՝ դիտէիր զի այր մի խիստ ես. հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր։
25. Երկեայ՝ գնացի եւ թագուցի զքանքարն քո յերկրի, արդ՝ ահաւասիկ քոյդ զքեզ։
26. Պատասխանի եւ տէրն եւ ասէ զնա. Ծառայ չար եւ վատ, զիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի։
26. Պարտէր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես տոկոսաւքն պահանջէի զիմն։
28. Արդ՝ առէք՝ ի զմանէ զքանքարդ՝ եւ տուք այնմ, որ ունիցի զտասն քանքարն։
29. Զի ամենայնի որ ունիցի՝ տացի եւ յաւելցի, եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին, բարձցի ի նմանէ։
30. Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։

1. Այս զլուխս անցեալ զլխի շարունակութիւնն է. մինչեւ այն ժամանակը խօսեց։ «Յայնժամ աւուրմէ Քրիստոսի երկրորդ գալստեան համար։ Ցաւս» բառը Սուրբ Գրքումգործէ աւուրմարգմութիւն» բառի տեղ։ Կոյսերը աւուրմէն քրիստոնեաները եւ ոչ թէ անհաւատները։ Հնումը հարսանեաց սովորութիւնը այսպէս էր։ Փեսան մի քանի բարեկամներով կ'գնար հարսի տուն, այդ միջոցում փեսայի տան մի քանի երիտասարդներ և աղջկունք պատրաստ կ'սպասէին փեսայի և հարսի գալստեան։ Հենցոր փեսան հարսն առած կ'ճանապարհորդէր դէպի տուն, խսկոյն գեսպանները առաջ կ'գնային և տանը կ'յայտնէին փեսայի գալուստը։ Պարտաստ երիտասարդները և կուսանքը ուրախ-ուրախ կ'գնային նորա առաջը փառած լապտերներով։ Կոյսերը նորահարսի հետ, իսկ երիտասարդները փեսայի հետ կ'մտնէին հարսանեաց տունը և այդտեղ կ'վայելէին ուրախութիւններ։ Այս օրինակով Քրիստոս ցոյց է տալիս, որ իւր գալստեան ժամանակը, երկնքի արքայութիւնը որէ. քրիստոնէական եկեղեցին, նմանէ այն տան կոյսերին, որք առած իրանց հաւատոյ լապտերները՝ կամենում են Քրիստոս փեսայի հետ՝ վայելել հարսանեաց տան երկնային ուրախութիւնները։ Ղ.Ա. իզ. 26. Թուղ. Ժ. 22. յովհ. գ. 18. բ. կոր. Ժ. 2։

2-7. Ցիմար քրիստոնեաները որոշումն միւսներից նրանով, որ իրանց կեանքի ընթացքում չեն առնում իրանց հոգու ամանների մէջ բարեգործութեան ձէթը, ուստի և չեն կարողանում իրանց հաւատոյ լապտերները վառել Աստուածային սիրոյ լուսով, մնում են խաւարում, զրկուած Քրիստոս փեսայի հարսանեաց ուրախութիւններից։ Կուսանքը երկու անգամ գնացին փեսայի և հարսի առաջը, առաջին անգամ փեսայի տեսութեան չարժանացան, վասնզի նա հարսի տանը ուշացաւ, ուստի վերադարձան և նիրհեցին։ Այս առաջին երեսին նշանակում է հաւատոյ Ցիսուսին բարեգործութեան իւղով վառուած և Աստուածային սիրով լուսաւորուած։ Երրոր փեսան ուշացաւ իւր գալուստը, որպէսզի բոլոր տիեզերքն ապաշխարութիւն՝ մինչև լցնուի ընտրուածների թիւը, այս միջոցում միհարկէ քրիստոնեաներից շատերը մեռան, նիրհեցին։ Երկրորդ անգամը՝ երրոր «ի մէջ գիշերի եղև բարբառ. ահա փեսայն գայ արիք ընդ առաջ նորա», բոլոր կուսանքը վառեցին նորա առաջ, ոմանք վառուած և ոմանք շիջուած լապտերներով։ Ուղիղ այսպէս նաև իւրաքանչիւր քրիստոնէի մահուան գալուստը, զոմանից ոմանք վառուած և լուսաւորուած լապտերներով են ներկայանում նորա, իսկ ոմանք թմրուած անհոգութեան և ունայնասիրութեան զրաղմունքների մէջ, շիջուած և խաւար լապտերներով են ներկայանում Մատթ. 23.24 յով. ժդ. 23 յայտ. 26։

8-10. Այսպէս ցիմար քրիստոնեաները երբ իրանց մահուան անկողնում տեսնում են իրանց լապտերների շիջանելը՝ և խնդրում են սուրբ մարդիկներից բարեգործութեան իւղ նոքա կ'պատասխանեն. «Որով հետև այրիւղը ոչ թէ մեր սեփական արդիւնքով ենք աշխատել, այլ Քրիստոս փեսայի արդիւնքով, վասնզոյ կարող էք դնալ վաճառականների մօտ, որ են Սուրբ Գրքերը և նորա վարդապետները՝ և գնել նրանցից այդ իւղը, որքան ձեր լապտերների համար հարկաւոր է, ապա թէ ոչ մեր իւղը մեզ և ձեզ չէ կարող բաւականացնել։ Այսպէս մինչև որ դոքա իրանց կարճ կեանքի մէջ, կ'աշխատեն բարեգործութեան իւղ պատրաստել, Աստուածային բաները սովորել և կարդալ, այդ միջոցում յանկարծ կ'գայ մահը և իրանք կ'զրկուին Քրիստոս փեսայի հարսանեաց ուրախութիւններից, կ'փակուի դուռը։ Ուղիղ այսպէս կ'լինի նա

և դատաստանի օրը։ Ա. կոր. գ. 5. զու կ. ժ. 25 յայտ. խա. 27. իբ. 15։

11-13. Ամենեքին իրաւունք չունէին խնդրելով ասել.- «Տէր, Տէր, բաց մեզ» վասն զի փոխանակ փեսային պատուելու՝ իրանց անհոգութեամբ խայտառակեցին նորա, վասնորոյ փեսայն կ'պատասխանէ.- «Հեռացէք այստեղից, ես ձեզ ինձ բարեկամներ չեմ ճանաչում։» Այսպէս էլ դատաստանի օրը և կամ մահուան ըսպէ-ում Քրիստոս կ'ասէ շատերին.- «Չեմ ճանաչում ձեզ։» Այս առակս կատարեալ միտքը այս է.- «Արթուն կացէք՝ ինչպէս մահուան, այնպէս էլ դատաստանի համար, զի ոչ գիտէք զօրն և ոչ ժամն։» «Ողորմութիւն է Աստուծոյ զի մարդն ոչ գիտէ զօր մահուան. Թագէ՛ի մէնջ օրն մեր վերջին, զի ամենայն աւուրք մեր զգաստութեամբ պահպանիցեն։» Ոգոստինոս։ Մատ. է. 23. իգ. 24. յով հ. ժ. 14. յայտ. գ. 16. ժ. 15։

14. 15. Քրիստոս այս առակաւ ցոյց է տալիս որ ինքն շուտով պէտք է գնա հեռի աշխարհ՝ այն է. երկինքը, վասնորոյ և յանձնում է մեզ իւր շնորհքը, որ նրանով հաստատանք։ Այս առակս ասաց Երեքշաբաթի օրը, իսկ Ղուկասս ժթ. 12 առակը, որ շատ նման է սորա՝ ասաց Զատկապարգի օրը, այն նպատակաւ որ Հրէաները իրան չէին ընդունում։ Քանքարը ասուում նաև Տաղանդ, իսկ Մնասը քանքարի վեցերորդ մասն է։ Քանքարով իմացուում Աստուծոյ անսահման պարգևները, որոնց մի քանիսն աւելորդ չեմ համարիլ այստեղ յիշել՝ այն է. հաւատ, յոյս, սէր, կուսութիւն, աքանչելագործութիւն, մարգարէութիւն, ուսուցչութիւն, պատմութիւն, նուիրք դատողութիւն, հանձարեղութիւն, առողջութիւն, խոհեմութիւն, գիտութիւն, ճոռոմաբանութիւն, հարստութիւն, իշխանութիւն, նաև ազգատութիւն և խնարչութիւն, և այլն, և այլն։ Աստուած իւր պարգևները տալիս է մարդուն իւր կամաց հաճութեան և ընդունողի կարողութեան յարմար։ Մատ. է. 7-11. ժը. 24. մարկ. ժգ. 34. յով հ. ժ. 5. բ. կոր. գ. 5։

16. 23. Այս երկու տեսակ մարդիկը, շնորհակալութեամբ ընդունելով շնորհաց քանքարները, խնդալն սկսեցին գործադրել՝ ի փառս աստուծոյ՝ յօգուտ այլոց, և ոչ իրանց անձնական օգտի և փառքի համար, վասնորոյ և շուտով կրկնապատկուեցաւ։ Իսկ անգոհ մնացողը՝ բարեկանալով գնաց թագցրեց, և չ'գործադրեց։

Այս էլ մի ծայրութեան և ամբարտաւանութեան նշան է։ Մենք մեր բնական կարողութեամբը չենք կարող մի այնպիսի առաքինութիւն աշխատել, որով կարողանայինք ժառանգել երանական կեանքը, վասն զի մեր ամենամեծ առաքինութիւնը հոգիս թէ կարողանայ նոյն օրէնսն զործած յանցանքը ծածկել, ուրեմն պէտք է անդադար Աստուծոյ ողորմութեան օժանդակութիւնը խնդրել։ Ձ՝պէտք է կարծել թէ երկու քանքար աշխատողը՝ պէտք է պակաս երանութեան արժանանայ, հինգ աշխատողիցս։ Արդարև վերի դասի սրբերը պէտք է առաւել փառք և երանութիւն ժառանգեն նեռքեի դասի սրբերից, բայց և այնպէս չի կարելի ասել թէ վերջիններս պակաս և անկատար փառքով կ՝պակուին առաջիններից, վասն զի նա՝ որ ժառանգում է անհուն էակի տեսութիւնը և սէրը, նա լիապէս և կատարելապէս երանուած է և ոչինչ մի բանի մէջ պակասութիւն չունի։ Գ.47.ա.Թագ.բ.30.գուսկ. ժթ. 17. ա. կոր. թ. 16. ժ. 10. բ. կոր. գ. 1. յայտ. գ. 10։

24-30. «Հնձէս զոր ոչ սերմանեցեր։» Այս առակ էր որ աւուրքը ազահ և յաւիշտակող մարդկանց վերայ։ Ցառան իւր ծայրութիւնը ծածկելու համար, իւր տիրոջը ազահ անուանեց։ Մեզաւորները շատ անգամ աշխատումեն, իրանց մեղքերը ծածկելու համար, Աստուծոյ մեղաւորացնել։ Պէտք է իմանալ, որ առաքինութիւնը երկու է բաժանումն։ Բանական կամ Բարոյական և Շնորհական կամ Գերբնական։ Բանական աւուրմեն այն առաքինութիւնները, որ գործումենք մեր ազատ կամքով և ոչ ակամայ։ Շնորհական աւուրմեն այն առաքինութիւնները, որ գործումենք Քրիստոսի շնորհաց քանքարի ձեռաք, ինչպէս են՝ հաւատալ Երրորդութեան, միշտ մտածել Աստուածայինների վերայ, գործել առաքինութիւններ Աստուած սիրելու համար, և ոչ անձնական օգտի, և այլն, և այլն։ Այսպէս թէև բանական առաքինութիւններով կարող ենք ամեն տեսակ բարեգործութիւնների ձեռնածել, բայց դրա մեղ չեն կարող Աստուծոյ տեսութեան արժանացնել, այլ միայն կարող ենք այդ երանական և ցանկալի տեսութեան արժանանալ Գերբնական շնորհաց ձեռաքը։ Զար ծառաները ոչ բանական քանքարն են գործածում և ոչ Գերբնականը ստանալու համար ապօթում, վանողոյ և իրանք են իրանց դատապարտում

Այսպէս ով որ՝ այդ շնորհաց քանքարները գործ է ածում Աստուծոյ փառքի համար՝ կրկնապատիկ կ'շահուի, իսկ նա որ անտարբերութեամբ է վերաբերում դէպ ի այդ քանքարներըը, գործ չէ դնում գոցա՝ ինչպէս հարկաւորն է, ունեցածից ևս կ'զրկուի Սա. ա. 2. մատ. է. 8. ժ. 30. ժ. 12. բ. կոր. գ. 5. ա. յով հ. 6. 3. յայտ. գ. 11։

31. Եւ յորժամ եկեսցէ Որդի մարդոյ փառաւք իւրովք՝ և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յտեռոտ փառաց իւրոց։
32. Եւ ժողով եսցին առաջի նորա ամենայն ազգք, և մեկնեսցէ զնոսա ՝ի միմեանց, որպէս հովիւ զի մեկնեսցէ զոչիս յայծեաց։
33. Եւ կացուսցէ զոչիսն ընդ աջմէ իւրմէ՝ և զայծիսն ՝ի ձախմէ։
34. Ցայնժամ ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն. եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն ՝ի սկզբանէ աշխարհի։
35. Զի քաղցեայ՝ և եատուք ինձ ուտել. Ծարաւեցի՝ և արբուցէք ինձ. օտար էի և ժողովեցիք զիս։
36. Մերկ՝ և զգեցուցէք զիս, հիւանդ էի՝ և տեսէք զիս. ՝ի բանտի էի՝ և եկէք առ իս։
37. Ցայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն և ասասցեն. Տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ և կերակրեցաք, կամ Ծարաւի՝ և արբուցաք։
38. Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ և ժողովեցաք. կամ մերկ՝ և զգեցուցաք։
39. Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ՝ կամ ի բանտի, և եկաք առ քեզ։
40. Պատասխանի տացէ թագաւորն՝ և ասասցէ նոսա. ամէն ասեմ ձեզ. որով հետև արարէք միումի եղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք։
11. Ցայնժամ ասասցէ և ցայնոսիկ՝ որ ընդ աջիկէն իցեն. երթայք յիրէն անիծեալք ՝ի հուրն յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա։
42. Զի քաղցեայ՝ և ոչ եատուք ինձ ուտել, Ծարաւեցի և ոչ արբուցէք զիս։
43. Օտար էի՝ և ոչ ժողով եցիք զիս, մերկ էի՝ և ոչ զգեցուցէք զիս, հիւանդ էի և ՝ի բանտի՝ և ոչ տեսէք զիս։
44. Ցայնժամ պատասխանի տացեն և նոքա և ասասցեն. Տէր՝ ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ՝ կամ Ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ՝ի բանտի, և ոչ պաշտեցաք զքեզ։

45. Յայնժամ պատասխանի տացէ նոցա՝ և ասասցէ. ամէն ասեմ ձեզ. որով հաւն ոչ արարիք միում՝ ի փոքրկանցս յայսցանէ՝ և ոչ ինձ արարիք։
46. Եւ երթիցեն նոքա ի տանջանսն յաւիտենականս. և արդարքն ի կեանսն յաւիտենականս։

31—33. Քրիստոսի փառաւոր գալստեան օրը երկինքը կ'մնայ թափուր հրեշտակներից և արդար հոգիներից։ Հրեշտակները կ'սպասաւորեն Քրիստոս Թագաւորին, իսկ սրբերը կ'իջանեն մարմինները առնելու և Քրիստոսի առաջև ներկայանալու համար։ Դատաստանը կ'լինի Յովսափաթու ձորումը, որի մերձակայ լեռները ընդարձակ դաշտավայր կ'դառնան այդ մեծ բազմութիւնը տեղաւորելու համար։ Այդ ժամանակ մեղաւորները կ'փախչեն դէպ ի լեռները, ապառաժները, այրերը և կ'ասեն դոցա ընկէք մեզ վերայ և ծածկեցէք մեզ աթոռի վերայ նստածի երեսից և Գառնի բարկութիւնից։ Բայց նոցա այս աղաղակը ոչ մի կերպ չէ կարող օգնել նոցա։ «Ընդ քեզ և զօրք ի երին հոսին մինչ զի թափուր մնայ երկին։» Ենովհաղի։ Ամոս. թ. 23. մատ. իր. 23-31. ի. 21. իդ. 29. 30. ա. թես. գ. 16։

34. Թէպէտ մեռելոց յարութիւնը լինելու է բոլորի մէջ, բայց դատաստանը կ'լինի մի որոշ ժամանակի մէջ։ Այդ միջոցում ամենայն մարդու գործք իսկոյն իւրյիշողութեան մէջ կ'կենդանանայ, այնպէս որ ամենքը բացայայտ կերպիւ կտեսնեն իրանց բարի և չար գործքերը, վանողոց մեղաւորները այլ ևս չեն կարողանայ իրանց արդարացնելու պատճառներ բերել։ Եւ ահա այդ իսկ միջոցում արդարները զգալի ձայնիւ կ'լսեն.— «Եկայք, ով իմ Հօրից օրհնեալներ, ծառայութիւնից դէպ ի ազատութիւն. թշուառութիւնից դէպ ի երջանկութիւն, մահից դէպի կեանք, և ժառանգեցէք այն մեծ հարստութիւնը և փառքը՝ որ Աստուած պատրաստել է ձեզ համար, աշխարհի գոյութիւնից առաջ։» Արդարների և հրեշտակաց այդ բնակութեանդերը՝ ասուածը.— «Հրեղէն երկինք։» Յիսուս այս մեծ ժառանգութիւնը տալիս է արդարներին իւր մեծ ողորմութեամբ և ոչ թէ նրանց առաքինութիւնից պարտաւորուած։ «Զորս Աստուած սիրեաց և նախասահմանեաց յառաջ քան զաշխարհս, յաշխարհէ կոչեաց ի ժամանակի, յաշխարհի մաքրեաց և սրբեաց, իսկ զկնի աշխարհի, փառաւոր-

հաց և հրանեցոյց։ Եւ այսոքիք ամենեքեան ի ձեռն Ցիսուսի Քրիստոսի և ի Քրիստոս Ցիսուս։ Օգոստոս։ Դան.է.10.յով.Հ.ա.1.զ.37.հռ.ը.17.29.ակտրժ.ե.52.եփ.ա.3-13.ր.8.ք.թիսը.12.13.սաղ.տա.2։

35-41. Ողորմածութիւնը այս աստիճան զովուած է։ Արդարները իրանց սրտի խոր խոնարհութիւնը ցոյց տալու համար՝ իրանց արածները ոչինչ են համարում։ Նրանք ասելով՝ մեղաւորները յաւիտեան պէտք է զղջուին Աստուծոյ հրանական տեսութիւնից։ Այս պատիժը Աստուածաբաններից ասված է պատիժ զրկման և վնասու՝ որ է. մահ առաջին։ Իսկ յաւիտենական հուրը, որի մէջ մեղաւորները պիտի յաւիտեան տոչորուին հուրով և մարմնով՝ ասում է. պատիժ զգայութեան՝ որ է. մահ երկրորդ։ Այդ հուրը աւելի այրող և կիզող է քան մերը, դա մոխիր չի դառնալ Աստուած դրա տեղծեց դևերի մեղանչելու սկզբում և դրաւ երկրի մէջ։ Մեղաւորները դևերի հետ այդտեղ պիտի տանջուին։ Սուրբ Գրքերը շատ տեղեր էլ սովորեցնում են՝ որ մեղքը հրոյ և խաւարի նմանութիւն ունի, որ նա մեղաւորի խղճի մտաց այրող և տոչորող է։Սաղ.դ.10.ճդ.10.յով.ե. ա.19.մատ.դ.1.ժ.40-43. ժբ.47.ժբ.5.մաթ.թ.46.47.հռ.ժդ.12.եբր.զ.8.յայտ.ժ.թ.20։

42-46. Ինչպէս աջակողմեանների բարեգործութիւնը իրանց երանացրաւ, այնպէս էլ ձախակողմեանների չարագործութիւնը իրանց դատապարտեց։ Ամբարտաւանները չեն կամենում խոստիկ և իմանալ որ Քրիստոսի աղքատ ծառաներին մերժողը՝ մերժում է իրան Քրիստոսին։ Ցաւիտենական տանջանքն են ըստ սրբոյն Օգոստինոսի։ «Թշուառացելոց մահ է առանց մահու, վախճանն առանց վախճանի, պակասութիւնն թարց պակասութեան, զի մահն միշտ կեցցէ և վախճանն միշտ սկսեսցի, և պակասութիւն պակասիլ ոչ գիտասցէ, մահն չսպանցէ, և ոչ պակասեցուցեալ ի կենաց շէջուսցէ, ցաւն տանջեսցէ, և զերկիւղն ոչ փախուսցէ, բոցն կիզեսցէ, բայց խաւարն ոչ մերժեսցէ, քանզի ի մէջ հրոյն եղիցի մթութիւն, ի մթութեան զարշուրումն և ի կիզմանն ցաւ։ Այսպէս զգայցեն զցաւս ի տանջանսն, և ի յանձկութենէն ցաւոյն զահի հարկանիցեն, և միշտ տեսցեն, և միշտ երկիցեն, զի առանց դադարի հարկանիցեալ կեցցեն և առանց յուսոյ թողութեան և ողորմութեան իցեն՝ որ է. թշուառութիւն ի վերայ թշուառութեան։»

Ցաւիտենական կեանքն են ըստ առաքելոյն։ «Զոր ակն ոչ հատեալ է, եւ ականջն ոչ լուաւ և՝ ի սիրտս մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Մատ.բ.12.ժ.40.ժդ.42.մարկ. ժդ.16. յովհ.գ.36. գործ. թ. 5. ա. կոր. բ. 9. յակ. բ. 13։

Գլ. ԻԶ.

1. Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, ասէ ցաշակերտսն իւր։
2. Դիտէք զի յետ երկուց աւուրց զատիկ լինի, և Որդի մարդոյ մատնի՝ ի խաչ ելանելոյ։
3. Ցայնժամ ժողովեցան քահանայապետքն և դպիրքն և ծերք ժողովրդեանն՝ ի սրահ քահանայապետին՝ որում անուն էր Կայիափայ։
4. Եւ արարին խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցեն զՅիսուս և սպանցեն։
5. Բայց ասէին, թէ մի՝ ի տօնի ասա՝ զի մի՝ խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն։
6. Իբրև եկն Յիսուս ի Բեթանիա ի տուն Սիմոնի բորոտի։
7. Մատեաւ առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, և թափեաց ի գլուխ նորա ի բազմականին։
8. Իբրև տեսին աշակերտքն՝ բարկացան՝ և ասեն. ընդէ՞ր է կորուստ այգ իւղոյդ։
9. Զի մարթէր վաճառել զդա մեծագնի՝ և տալ աղքատաց։
10. Գիտաց Յիսուս՝ և ասէ ցնոսա. զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ մի բարի գործեաց դա յիս։
11. Ցամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։
12. Արկանել զորա զիւղդ ի մարմին իմ, առ ի թաղելոյ զիս նշանակեաց։
13. Բայց ասեմ ձեզ, զի ուր եւ քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ՝ խօսեսցի եւ զոր արար դա ի յիշատակ զորա։
14. Ցայնժամ գնաց մի յերկոտասանից անուանեալն Յուդայ Իսկարիովդացի՝ առ քահանայապետսն եւ ասէ։
15. Զի՞նչ կամիք տալ ինձ, և ես մատնեցից զնա ձեզ, և նոքա կշռեցին նմա երեսուն արծաթի։
16. Եւ յայնմհետէ խնդրէր պարապ՝ զի մատնեսցէ զնա նոցա։
17. Եւ յառաջնումն աւուր բաղարջակերացն մատեան աշա-

կերաքն առ Յիսուս՝ և ասեն. Տէր, մեք կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն։
18. Եւ նա ասէ ցնոսա. երթայք ի քաղաքն առ այս անուն. և ասացէք ցնա. վարդապետ ասէ՝ ժամանակ իմ մերձեալ, առ քեզ առնեմ զզատիկ աշակերտաւքս հանդերձ։
19. Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց նոցա Յիսուս, և պատրաստեցին զզատիկն։
20. Եւ իբրև երեկոյ եղև՝ կայր բազմեալ ընդ երկոտասան աշակերտսն։
21. Եւ մինչդեռ ուտէին նոքա, ասէ. ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնիցէ զիս։
22. Եւ արամեացան յոյժ, և սկսան ասել ցնա իւրաքանչիւր զբ ի նոցանէ՝ միթէ ե՞ս իցեմ Տէր։
23. Նա պատասխանի եհա և ասէ. որ մխեաց ընդիս զձեռն իւր ի սկուտառանին՝ նա մատնիցէ զիս։
24. Որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նորա։ բայց վայ մարդոյն այնմիկ՝ յորմէն որդի մարդոյ մատնեսցի, լաւ է նմա՝ թէ չէր ծնեալ մարդն այն։
25. Պատասխանի եհա Յուդայ՝ որ մատնիչն էր զնա՝ և ասէ. միթէ ե՞ս իցեմ վարդապետ. ասէ ցնա. դու ասացեր։
26. Եւ մինչդեռ ուտէին նոքա՝ առ Յիսուս Հայր՝ օրհնեաց և երեկ, և եհա աշակերտացն՝ և ասէ. առէք կերայք՝ այս է մարմին իմ։

1.2. Վերոյգրուած երկու գրութիւնների խօսակցութիւնը վերջացնելից յետոյ Սրբազարան երեկոյեան ասաց.- «Գիտէք՝ որ Հինգշաբթի երեկոյեան Զատիկ պիտի լինի և այդ օրդ ես խաչ պիտի մատնուիմ։ Օրերը բաժանուումն երեք տեսակ- Օրինական, բնական և սովորական։ Օրինական՝ ասուումն այն օրերը՝ որ սկսուումն երեկոյից և վերջանուումն հետևեալ երեկոյեան։ Բնական՝ որ սկսուումն առաւօտից և վերջանուումն հետևեալ առաւօտեան։ Իսկ սովորական՝ որ սկսուումն գիշերի մէջից և վերջանուումն հետևեալ գիշերի մէջ։ Այսպէս Յիսուս խօսումէ օրինական օրերի վերայ։ Մնդ. ա. 5. մատ. ժբ. 39։

Զատիկը հրէից այն երեկոն ծնունէր, որի մէջ Եգիպտացւոց անդրանիկները մեռան, իսկ իրանք գառնի արիւնով ազատուեցան։ Հրէաները ամեն տարի սորա յիշատակը պահումէին։ Յիսուսմինչև այսպէս մի քանի անգամ խօսած էր իւր մատնութեան վերայ, որքան ժամանակը մօտենումէր այնքան աւելի որոշ կերպով էր

խօսում, այժմ մինչև անգամ մատնութեան օրնէ ցոյց տալիս։ Մր.3-17. Մատ.ժզ. 21.ժէ.21.22. ի. 17-19. Երբ. ժա. 28.

3-5.Հրէից չար ժողովը կայացաւ Կայիափա և Անան քահանայապետների ներկայութեամբ Կայիափայի սրահում Զորեքշաբթի առաւօտեան, որպէսզի գոցա միջոցով հիշողութեամբ կարողանան մի հնարք գտնել Յիսուսին բռնելու և սպանանելու համար։ (Անան Կայիափայն անէրներէր, որ առաջ քահանայապետ էր, իսկ այժմ միայն քահանայապետի անուանէր կրում։) Որով հիւսեալ գտակական ասոնի պատճառաւ ամէն կողմերից շատ ժողովուածներէն հաւաքուած Երուսաղէմ և գրանցից շատերը տեսած էին Քրիստոսի հրաշագործութիւնները և հաւատացած, վասնորոյ անկարելի էր ժողովրդեան մէջ բռնել Յիսուսին, վասն զի մեծ խռովութիւն կ'ծագուէր գոցա մէջ, ուստի միմեանց ասին. «Զատկական ասոնից յետոյ մի առանձին տեղ Յիսուսին բռնել և մատնել հեթանոս իշխանների, որպէս զի նոցա ձեռքը սպանուի։» Այդ միջոցում յանկարծ Յուդան մտաւ նոցա մէջ և ասաց.— «Ինչ կ'ասք ինձ, որ ես Նորա մատնեմ ձեզ ժողովրդից մի առանձին տեղ։» Հենց որ այս լսեցին՝ շատ ուրախացան, կարծելով թէ այսպէս յարմար միջոց ուրիշ ժամանակ չէն կարող գտնել, ուստի և խոստացան տալ Նորա երեսուն արծաթ, որ այժմ 25 ռուբլի 50 կոպէկ է, վասնորոյ և իսկոյն փոխեցին իրանց վճիռը այսպէս.— Մի օր Յուդան յայտնեց մեզ Յիսուսի տեղը՝ առանց յետաձգութեան իսկոյն զինուորներով բռնել Նորա։ Թէպէտ իրանք, սատրիկ ծարաւ լինելով Յիսուսի արեան, չսպասեցին մինչև անգամ ոտնի է կրջանարուն, բայց Աստուածային անօրէնութիւնն էլ այնպէս էր, որ օրինակը ճշմարտութեան վերածուի, ինչպէս իսրայէլացիք զառնի արիւնով ազատուեցան, այնպէս էլ մենք հաւատացեալներս Քրիստոս զառնի արիւնով ազատուինք մեղքից։ Մատ. ը. 4. յով Հ. ժը. 13. ա. կոր. ե. 7. երբ. թ. 14. ժբ. 24. ա. պետ. ա. 2։

6. Մատթէոսը, Յուդայի չարանալու պատճառը ցոյց տալու համար, նախ սկսում պատմել այդ չար խորհրդից չորս օր առաջ՝ այն է.Շաբաթ օրը Յիսուսի Բեթանիա գնալը, Սիմոն բորոտի տան ընթրիք անելը, և ապա Յուդայի քահանայից մօտ գնալը։ Այս Սիմոնը որով հետև բորոտ էր եւ Քրիստոսից բժշկուեցաւ, ուստի եւ բորոտ անուանուեցաւ։ Մատ. ը. 2. իս. 1. յով Հ. ժբ. 1։

7. Այս Մարիամը Ղազարոսի քոյրն էր, որ աւուրեմբ Մագդալենացի, որով հետեւ իւր մեղքի պատճառաւ բնակուումբ Մագդալ գիւղումն։ Սա երկու անգամ օծեց Տէրին իւղով, առաջին անգամ Սիմոն Փարիսեցուն տանը, 'ի նշան իւր մտաստանելոյ զդիմանն, նախ արտասուելով լուացաւ նորա ոտներբ, իւր մազերով սրբեց այդ արտասուելբ, եւ ապա իւղով օծեց ոտներբ. շշի մէջ մնացածն էլ թափեց նորա գլխին։ Իսկ երկրորդ անգամ օծեց Յիսուսին իւղով Բեթանիայում՝ Սիմոն բորոտի տանը, ցոյց տալով իւր եղբօր յարութեան համար կատարեալ սէր եւ շնորհակալութիւն։ Այս անգամ՝ ոչ թէ արտասուելով լուացաւ ոտներբ, այլ միայն իւր մազերով մաքրեց ոտների փոշին, (որով հետեւ Յիսուս հագնում էր սրեբեր նման հագուստ, որի ներքի մասը կոշի էր, իսկ երեսը բաց՝ միայն մի քանի թելերով կապկապած) եւ ապա օծեց նախ ոտներբ՝ եւ մնացած իւղը, որով հետեւ շշի նեղ բերանով կաթկաթելով դժուարութեամբ էր թափուում, չապասելով կոտրեց շշը եւ բոլորը միանգամայն թափեց Յիսուսի գլխին։ Այս ընթերքը հանդիսաւոր խրախճանք էր, որ 'ի պատիւ Յիսուսի՝ շատ մարդիկ էին հրաւիրուած, ինչպէս էր Ղազարոսը, Նորա քոյրը Մարթան՝ որ կերակուր պատրաստելու հոգ մաս, ինքն էր ծառայում։ Իսկ իւղը, որ շինուած էր Նարդոս ծաղկից՝ շատ ծանրագին էր, ինչպէս ասում են 300 դահեկան արժողութիւն ունէր։ Մարկ. ժ. 3-5. զուկ. է. 36-46. յով. հ. ժա. 2. ժբ. 2. 3։

8-12. Ցուդան ուզումբ որ այդ փողը ուռն զանձանակին, որ ինքը գողանայ, վասնզի յայտնապէս արանցաց այս կնոջ գործողութեան վերայ, իսկ միւս աշակերտներից ոմանք լաւ չհասկանալով Ցուդայի չար եւ արծաթասէր միտքը, եւ կարծելով որ Յիսուս, իբրեւ չափազանց ողբասուսէր, ողբասների օգնութիւնը աւելի կ'գերադասէր՝ քան իրան օծանելը, դրա եւս հաւանութիւն տուին Ցուդային։ Առաջ պէտք է այն պարտականութիւնները կատարել, որ ուրիշ ժամանակ չենք կարող։ Ողբասներին ամենայն ժամ կարելի է բարիներ առնել, ասաց Յիսուս։

Մեծամեծների եւ թագաւորների թագումն լինումբ օծանելով։ Այդ կինը, օծելով Յիսուս ողբասթագաւորի մարմինը, ինչպէս մեծ ողորմութիւն արաւ Յիսուսին, այնպէս էլ գուշակեց՝ որ

այդ կերպով պէտք է օծանել եւ խնկել նորա մարմինը նորա մահից յետոյ։ Այժմ այդ կինը ինչ որ կարողացաւ արաւ։ «Դա զոր ունէր արաւ» Այսպէս այդ իւղի թափելով Յիսուսի գլխին՝ ընդունելի եղեւ որպէս մեծ բարեգործութիւն նշանս «Թոյլ տուէք դմա զի յօրն պատանաց իմոց պահեսցէ զայդ։» Մարկ. ժդ. 5-8. յով հ. ժբ. 4—7. ժթ. 38—41։

13.Յիսուս, գով եղով այդ կնոջ մեծ գործը ապացուցանում՝ որ ինչպէս այդ կնոջ բարեգործութեան յիշատակը, այնպէս էլ ամենայն մարգու

15. 16. Ցուդան այդ ասելով՝ ցոյց է տալիս իւր պատրաստակամութիւնը Յիսուսին շատ էժան գնով մատնելու համար։ Ցուդան թէև շատ ագահ էր և կարող էր շատ գրամ պահանջել, մատնաւանդ՝ որ նոքա պատրաստ էին տալ, բայց իւր սատակնախանձից և ատելութիւնից սարսռած, աշխատում էր որքան կարելի է շուտով մատնել. վասնորոյ և 25 ր. 50 կոպ. մեծ ուրախութեամբ ընդունեց։ Այսպէս Ցուդան վերջապէս Տէրին ոչ այնքան նրանով, որ առաքելական կարգից եղև մատնիչ, այլ աւելի նրանով՝ որ շատ էժան գնով վաճառեց, այնպէս որ ամենատարագ ծառային չէ կարելի այդպիսի գնով ծախել, վասնորոյ և սաղմոսերգուն գանգատում՝ ասելով.- «Եկեսցէ մահ ՝ի վերայ նոցա և կենդանեսցին իջցեն ՝ի դժոխս, զի չարութիւն է ՝ի բնակութեան նոցա և ՝ի մէջ նոցա» Սաղ. ժդ. 13. կր. 27։

17. Նիսան (Ապրիլ) ամսի 14-ին Հինգշաբաթի օրուան երեկոյից սկսած մինչև Ուրբաթի երեկոյ տաւում առաջին օրինական օր Պասքի կամ Զատկի, և տաւում հօմին օր մինչև ամսի 21-ը Այդ հօմին օրը՝ պէսքէ բաղարջ հաց ուտէին։ Զատիկը պէսքէր Երուսաղէմի մէջ ուտէին նրանից դուրս չէր կարելի ուտելրքայց Յիսուսին Երուսաղէմի մէջ տուն չունէր, ուրեմն պէսքէր որ իւր բարեկամների մէկի տան ուտեր Աշակերտները գիտենով այս, մինչև որ Բեթանիայումն էին, Հինգշաբաթի առաւօտեան Հարցրին.- «Ո՞ւր կամիս զի պատրաստեսցուք քեզ ուտել զԶատիկն։» Ե՛ր. ժբ. 18—21. մար. իդ. 1. 2։

18. Այս տանուտէրը մի երեկելի մեծատուն էր, ինքն էլ Յիսուսի առանձին աշակերտը։ Ոմանք ասումն թէ՝ այդ տունը Յովհաննուն էր, որ Մարկոս էլ է ասում։ Սա եղև Պօղոսի քարոզութեան ընկեր։ Յիսուս Պետրոսին և Յովհաննէսին ուղարկեց Երուսաղէմ և մի քանի նշանների ձեռքը ցոյց տուաւ այդ մարդի տունը։ Այս տունը ունէր մի շքեղ և զարդարուած վերնատուն։ Երբ հրեշտակը Պետրոսին բանտից ազատեց, սա փախաւ և այս տունը մնաւ։ Առաքեալները այս տան վերնատանն էին, երբոր Յիսուս յարութիւնից յետոյ մնաւ նոցա մօտ փակուած դռներով։ Մի և նոյն վերնատանն էին, երբ Հոգին Սուրբ իջաւ։ Առաքելոց վերայ։ Յետոյ այս տունը շինուեցաւ մեծ և հռչակաւոր եկեղեցի և ասուեցաւ «Սիօն» Մատ.ժդ.12-17. դուկիբ.ե.-14.գործ.ժբ.17։

19.20.Զատկական գառին սեղանը բարձրէին շինում, որպէսզի կարողանային կանգնած ուտէր Քառաւուտերից յետոյ ամենօրեայ սովորութեամբ դնում էին մի ուրիշ ցած սեղան՝ և նստած ուտում էին զանազան կերակուրներ։ Յիսուս այս երկրորդ սեղանը ուտելից յետոյ՝ լուացաւ աշակերտաց ոտները, և ապա նորից նստաց և հաստատեց Հաղորդութեան խորհուրդը։ Սղ.ժբ.11.մարկ. ժդ.17-21. ղուկ. իբ. 14-18. յովհ. ժդ. 1—13։

21-25.Յիսուս ոչ միայն Յուդային չհալածեց այդ ընթրքից, այլ քաղցրութիւնով Նորահետ Զատիկ կերաւ և լուացանողոտները։ Եւ երբ տեսաւ որ Յուդան այսքան մեծ պարգևներից չկարողացաւ շահուել, սկսեց նախազգուշական միջոցներով նորա դէպի դարձ հրաւիրել, ուստի անբացորոշ եղանակաւ ասաց.— Մի ոմն ի ձէնջ մատնելոցէ զիս, վայ մարդոյն այնմիկ որոյ ձեռն Որդի մարդոյ մատնեսցի։» Արդարև Քրիստոս պէտք խաչուէր Աստուծոյ որոշուած խորհրդով և կանխագիտութեամբ, բայց դրանով մատնողը չի ազատուի վանզէնաականութեան արձանախրութեան նպատակաւ զործեց այս չարութիւնը, ուստի և կամաւ դատապարտուեցաւ և կորաւ։ Այսպէս Աստուած շատ անգամ ամբարիշտներին գործիք շինում իւր նախատահմանութիւնը կատարելու համար։Մեսթ.7.գ.20.ելթ.16.եսայ.7.գուկ.իդ.26.գործ.բ.23։

Յիսուս վեց աշակերտի հետ միասին մի սեղանակի (գաւաթի) մէջէր ուտում։ Յիսուսի հետ ուտողները էին Պետրոսը, Յովհաննէսը, Յուդան և այլն, վասնորոյ և գոքա մեացին մեծ տարակուսութեան մէջ թէ արդեօք ով պէտք լինի իրանցից մատնողը, ուստի և սոիպոդական կարգաւ հարցրին Յիսուսից այդ չարագործի անունը։ Յիսուս պատասխանում.— «Որ մեկաց ընդ իս գձեռն իւր ի սկաւառակի։» Պետրոսը, կամենալով բացորոշապէս իմանալ մատնչի անունը, ակնարկեց Յովհաննէսին ծածուկ հարցանել Յիսուսից։ Յիսուս Յովհաննէսին ականջում առանձին ասաց։ «Որում թացից զպատառն և տաց նա։» Եւ առաւ հացի մի պատառ թաց արաւ խաչուի մէջ, որ մեացածէր սկաւառակի տակ և տուաւ Յուդային։ Յուդան տեսնելով այդ առանձին խօսակցութիւնը և այդ ակնարկումը պատառ տալը՝ մտացաւ որ իւր համարէ ասուած, վասնորոյն ասաց.— «Մի թէ ես իցեմ։» Յիսուս պարզ

պատասխանեց։ «Դու ասացիր» Յուդան այս բանիս վերայ շատ կատաղեցաւ, Յիսուս էլ սիրայիր և քաղցր եղանակաւ ասաց. «Զոր ինչ առնիս ըստ արա վաղվաղակի։» Առաքեալները թէև իմացին որ մատնիչը Յուդան է, բայց այս վերջի խօսքը շուտ չ՝կարողացին հասկանալ նոքա կարծեցին թէ, որովհետև հնուէաչ օրը մեծ ծոմ է և Յուդան, իբրև գանձապետ պէտք էր այդ օրուան պատրաստութիւններ տեսնել, Յիսուսպատուիրեաց նոքա գնալ և այդ օրուան հոգսերը քաշէր Սրանից յետոյ Յիսուս խօսեց իւր վերջի առանձնական խրատաբ՝ որի մասին երկար գրուած Յովհաննէսը Մարկ.ժդ.17-22.գլ.կ.բ.21.յով հ.ժդ.ժդ.ժ.ժդ.գլուխ։

26.Սկզանը դեռ չ՝հաւաքուած, Յիսուս առաւ իւր Աստուածային ձեռը մի բաղարջ հաց (օրինակ անսխմիր յղութեան), գոհանալով հօրից, օրհնեց, խաչակնքեց և ասաց. մարմին իմ ասելով՝ տուաւ հացին ընդունակութիւն, ուժգնութիւն լինել իսկապէս մարմին իւր և ապա կտոր-կտոր անելով, իւրաքանչիւր մի աշակերտի տուաւ մի մասը, որով և նոքա եղան ճշմարիտ և խորհրդաւոր անդամ Քրիստոսի։ Առաքեալները ոչ թէ այս բանիս վերայ զարմացան, այլ իսկոյն հաւատացին։ որ այդ հացի տեսակով ուտուելին իսկապէս Քրիստոսի մարմինը, վասնզի գիտէին որ Յիսուս նոխապէս խոստացածէր տալ նոցա ուտել իւր մարմինը և ըմպել իւր արիւնը։ Նոքա գիտէին, որ Յիսուս մի օր և իջէ բանից փոխարինելով պէտքէր տալ նոցա ուտել և ըմպել իւր մարմինը և արիւնը, մանաւանդ որ Յիսուս պայծառացրաւ նոցա միտքը՝ որ կարողանան ճանաչել խորհրդի վսեմ նշանակութիւնը։ Այսպէս էլ պէտքէ անդադար աղօթել Աստուծոյ, որ նա լուսաւորէ մեր միտքը ճանաչել և իմանալ Քրիստոսի մարմնոյ և արեան բարձր նշանակութիւնը։ Քրիստոս իւր ամենակարողութեամբը այս է մարմին իմ՝ խօսքին տուաւ մի այնպիսի ուժգնութիւն, որ քանի անգամ ասեն մի քահանայ՝ ի դիմաց Քրիստոսի հացի վերայ արտասանելու այդ խօսքը՝ իսկոյն փոխարկուի և լինի մարմին Քրիստոսի։ Այսպէս պարզուեցաւ՝ որ ինչպէս այդ խօսքին տուաւ փոխարկելու ուժգնութիւն, այնպէս էլ քահանայից տուաւ պատարագելու իշխանութիւնը՝ առնել հացը իրանց ձեռքը, օրհնել խաչակնքելու սրբել նախ իրանք ուտել և ապա ուրիշներին տալ։ «Զայս

արաՋՀ՝ք առ իմոյ յիշատակիս» Առաքեալներն էլ մի և նոյնը ասած են ուստի և եկեղեցու մէջ սովորութիւն է եղած մի եւ նոյնը շարունակել մինչեւ այսօր։ Յիսուս մեր սէրը դէպ՝ի իրան անշէջանելի պահպանելու համար, պահանջից այս յիշատակը անմոռաց պահպանել։ Ղուկ. իբ. 19. ա. կոր. ժա. 26. յով հ. զ. 55-57.

27. Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ եւ նոցա եւ ասէ. արբէ՛ք ՝ի զմանէ ամենեքին։

28. Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ՝ի վ երայ բազմաց հեղանի ՝ի թողութիւն մեղաց։

29. Բայց ասեմ ձեզ. ոչ եւս արբից յայսմհետէ՝ ՝ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ։

30. Եւ օրհնեցին, եւ ելին ՝ի լեառն Ձիթենեաց։

31. Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքին զուք գայթագղիցց էք յինէն յայսմ գիշերի, զի գրեալ է՝ թէ հարից զհովիւն եւ ցրուեսցին ոչխարքն հօտին։

32. Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջեցից քան զձեզ ՝ի Գալիլեա։

33. Պատասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ ցնա. թէպէտ եւ ամենեքեան գայթագղիսցին ՝ի քէն, սակայն ես ոչ գայթագղիցայց։

34. Ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ՝ զի յայսմ գիշերի մինչեւ հաւու խօսել ՝ի՛ց, երիցս ուրացիս զիս։

35. Ասէ ցնա Պետրոս. թէ եւ մեռանիլ հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ուրացայց, նոյնպէս եւ ամենայն աշակերտքն ասէին։

36. Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ՝ի գիւղ մի՝ որում անուն էր Գեթսեմանի, եւ ասէ ցնոսա. նստարուք այդր, մինչեւ երթայց կացից յաղօթս։

37. Եւ առեալ ընդ իւր զՊետրոս՝ եւ զերկուս որդիսն Զեբեդեայ սկսաւ տրտմիլ եւ հոգալ։

38. Յայնժամ ասէ ցնոսա. տրտում մի՝ հոգի իմ մինչեւ ՝ի մահ, կացէք ասա՝ եւ սկիցէ՛ք ընդիս։

27. 28. Թէ որ ասուեցաւ Հացի համար մի եւ նոյնը պէտքէ հասկանայ նաեւ գինու համար։ միայն այս տարբերութեամբ, որ ինչպէս եկեղեցու հին սովորութիւնը եւ մեր Լուսաւորիչ Հայրը ասում են գինին կարելի է ընդունել ամեն տեսակ գոյներից՝ լինի նա կարմիր, սպիտակ, սեւ եւ այլն, միայն պէտքէ լինի անապակ՝ այն է. առանց ջրի եւ կամ ուրիշ նիւթերի խառնուրդներից։ Հը-

նուամբ ամէն եկեղեցիք մեզ պէս անապակ զինեալ էին կատարում այս խորհուրդը՝ յեւոյ Աղէքսանդր պապը սահմանեց զինու հետ նաեւ ջուր խառնել։ Բայց մենք՝ ի Լուսաւորչէն մինչ՝ ի Սրբոյն Գրիգորէ ուղիղ զայս աւանդութիւն, որպէս ընկալաւ նա՝ ի նախնեաց սրբոց Հայոց՝ որ յառաջ քան զնա Կարգեալ էին ի Քրիստոս որ մատոյց զինեալ խորհրդովք ապատրաստ՝ ի ի երեսուանեն Գրիգոր միայն գրեալ է, զի ան՝ ի ձեռս և ասաց. այս է իմ արիւն, և անուն ջրոյ ոչ բնաւ յիշատակի, որպէս և ասաց իսկ յետ խորհրդոյն կատարման՝ թէ յայսմհետ՝ ոչ ես արբից՝ ի բերոյ որթոյ և որթոն զինի և ոչ ջուր ծառոյ, որպէս և ասէ Յոհան ասկերիան յաւետարանին մեկնութիւնս, իսկ եթէ ման ջրոյն և արեանն որ ել՝ ի կողինն, ասէք արկանել ջուր՝ ի բաժակն, զայս գաղտնի նոյն բնքն Յոհան Ասկերիան՝ ի սոյն բանի աւետարանին մեկնութիւնս՝ որ բան Յոյ Հանեաս, զՍուրբն՝ ի խորհուրդ մկրտութեան, ասէ, և զարիւնն՝ ի սուրբ պատարագին։ Նաև այլ բազումք՝ ի մարգարէսն ասաց եկեղեցւոյ զոյն ասեն և մեք նոցին բանիցն և աւանդութեանցն զոյով՝ հետեւողք, ման այնորիկ ոչ արկանեմք ջուր, այլ անապակ զինեալ զանապականն արեան Քրիստոսի կատարեմք զխորհուրդ։» Ընդ. եր. 63. և 81։

Կիպրիանոս Կարթագինեացւոց եպիսկոպոսը այսպէս է գրում՝ — «Բազարէ Հայոցն և անապակ զինեալ աւանդեցաւ մեզ սուրբ խորհուրդն։» Ի Ճառ.ազգոյն։ Եբ. և.2.եբր.թ.14.առ.կոր.ժ.16.ժա.26։

Եւ ինչպէս Քրիստոսի արիւնը՝ բաժանուելով մարմնից թափուեցաւ իւր տեսակաւ, այնպէս էլ այստեղ նոյն իսկը ցուցանելու համար, ոչ միայն հացը սրբացաւ, որի մէջ կապուած էր և արիւնը, արեան և մարմնոյ հետ հոգին, հոգւոյն և մարմնոյն հետ Աստուածութիւնը, այլ նաև զինին առանձին սրբացաւ եւ փոխեց իւր արիւնն Թէպէտ եւ իւրաքանչիւրի մէջ է բոլոր Քրիստոսը։ Յով. գ. 52-57. մարկ. ժդ. 22. ղուկ. իբ. 19. կոր. ժա. 23։

Նոր ուխտ։ Նրբ մարգկային բնութիւնը ապստամբուեց Աստուածանից, մտածեց գառնալ դէպ՝ ի նա եւ հաշտութիւն խնդրել, բայց ինքն ըստ ինքեան այս չէր կարողանում մանել իրրեւ սեւերես, փանողոյ հարիւրապուեցաւ մի ընծայ պատրաստել եւ մի արժանաւոր հաշտարար միջոցի ձեռքը նուիրել Աստուծոյ

'ի նշան զղջման եւ հաւատարիմ ծառայութեան եւ որով հետեւ մարդը անհուն Աստուծոյ դէմ է մեղանչել եւ անհնազանդ պարտաւորութիւնովն որոյ և պէտք էր անհուն վ ճարում Աստուծոյ, բայց այս նա չէր կարող անել, վասն զի միջնորդը մեղաւոր էր եւ ապստամբ եւ նուիրած զոհին էլ մի թեթեւագին բան, վասնորոյ եւ Աստուած Աբրահամին խոստացաւ տալ մարդկանց ազգին արժանաւոր հաշտարար միջնորդ Յիսուսին, որ եկաւ եւ Աստուծոյ անհուն արժանաւորութեան եւ մեծութեան լիակատար ընծայ հաստատեց իւր արիւնով։ Եւ ինչպէս վերնատանը հացը մարմին եւ գինին արիւն փոխելով ինքն էր մատուցանող միջնորդը, ինքն էր մատուցանելի նիւթը, այսպէս էլ խաչի վերայ ինքն էր որ մատուցանում էր Հօր Աստուծոյ իւր նուէրը՝ եւ ինքն էր մատուցանելի նուէրը։ Ուրեմն՝ Սուրբ Գրքերում նշանակում նաեւ կտակ։ Յիսուս մի օր առաջ բաժակի-տախտակի վ երայ գրեց նոր կտակ, որով երկնային փառքը տուաւ ժառանգութիւն իւր հաւատացեալներին։ Այսպէս հին ուխտով մարդիկ մտնում էին աւետեաց երկիրը, իսկ նորովս յաւիտենական երանութիւնը, վասնորոյ եւ Յիսուս վերացաւ ըստ կարգին Ահարոնի հին քահանայութիւնը եւ հաստատեց նորը ըստ կարգին Մելքիսեդեկի։ Ուստի եւ այս խորհուրդս արժանապէս ընդունելու համար, հարկաւոր է առաջ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ մաքրուիլ ամենայն ծանր եւ մահացու մեղքերից, հրաժարուիլ մարմնական անկարգ ցանկութիւններից, ունենալ եռանդուն փափագ մեր անձնը Աստուծոյ նուիրելու համար եւ ապա հաղորդուիլ նորանից, որով ընդունողը կ'ազատուի մեղքերի պատիժներից, կ'միանայ Քրիստոսի հետ եւ կլինի ժառանգ յաւիտենական փառքի։

Այստեղից երեւում՝ որ Աստուծոյ անհուն գթութիւնը շատ մեծ է դէպ 'ի մարդկութիւնը, վասն զի նա ոչ միայն երեսուն եւ երեք տարի մեծալով աշխարհում, երկանկացաւ մարդկանց իւր ներկայութեամբ, այլ նաեւ չ'հանդուրժեց բաժանուիլ իւր հաւատացեալներից, վասնորոյ եւ սահմանեց հաղորդութեան կենարար խորհուրդը, որպէս զի անբաժան միացած մնա իւր հաւատացեալների հոգու մէջ։ Ուրախ լինեք յորդիս մարդկան։ Առ-

բ.31.ծն.ժ.8.երբ.բ.31.մատթ.18-23.գոլ.կ.բ.29.30.յով.հ.ժ.1. գ. 52. 57. երբ. ե. 6. բ. 8-13. ժ. 1. ա. կոր. ժ. 16-20. ժա. 26.33. գաղ. բ. 20. ա. յով.հ. ա. 7։

29. Յիսուս այս խօսքը ասաց հաղորդութեան սրբազան խորհուրդը սահմանելից առաջ, ինչպէս գրումէ Ղուկաս, իսկ Մատթէոսը բան սովորեցուցեալ Սուրբ Գրոց չէ նայում ժամանակի կարգին։ Նրանից մէջ սովորութիւն էր, որ առաջի սեղանը, որի մէջ ուտուումէին Զատիկան գառը, վերջացնելից յետոյ, տանուտէրը պէտք առնէր մի բաժակ գինի իւր ձեռքը, գոհանալով Աստուածանից, նախ ինքը խմէր եւ ապա բաժանէր ընտանեաց ամէն մի անդամի, որ նոյնպէս ի նշան գոհունակութեան քիչ քիչ խմէն։ Այսպէս էլ արաւ Յիսուս, իբրեւ ընտանեաց գլուխ, Զատիկան գառը, ուտելից յետոյ, գինին տուաւ իւր աշակերտաց եւ ասաց։ «Առէք բաժանեցէք ի ձեզ եւ թէ յայսմհետէ ոչ արբից ի բերոյ որթոյ։ Ուրեմն, ասաց Յիսուս, մեր ուրախութիւնը այսուհետեւ մնաց երկնքի արքայութեան մէջ, որտեղ ուրախութեան նոր սեղան վայելելով, Աստուածային էութեան տեսութեամբ կ'զմայլուինք եւ կ'փափկանանք։ Սաղ. ժզ.15.լե.9.գալ.բ.16-19։

30.Բրնեցին՝ նշանակում էրգեցին։ Ուրիշ թարգմանութեանց մէջ ասւած է.- «Եւ ասացեալ զերգն ելին ի լեռն Զիթենեաց։ Սեղանը հաւաքելից յետոյ, ըստ սովորութեան, երգեցին օրհնութեան սաղմոսներ ԺԷ-ից սկսած մինչեւ ԺԸ։ Այսպէս Քրիստոսից սովորեցինք երգել եկեղեցու մէջ։ Յիսուս բան սովորութեան գնաց աշակերտաց հետ միասին Գեթսեմանի պարտեզը՝ որ գրուում էր Զիթենեաց լերան տակ, աղօթելու համար։ Մատ. բա. 1. յով.հ. ժբ. 1. 2։

31. Դայթագղելոցէք նշանակում մաշուան երկիւղից սարսռուած ինձանից պէտք փախչէք եւ մեզքի մէջ ընկնէք։ Յիսուս այս ասելով, կամեցաւ սովորեցնել նոցա ինքդրել Աստուածանից մանաւանդ օգնութիւն, այսպիսի դիպուածներում մեզ առանց գլխմանն Զ'պէտք ասել «Ոչ որ գրուածէ այն պէտք կատարուի։ Մարգարէների նախագուշակութիւնը չէ կարող խափանել մարդկային անձնիշխանութեանը։ Եթէ առաքեալները աղօթեին՝ չէին դայթագղուիր «Առէն զրազում ուսանիմք, առ՝ ի հանապազ

կարդալ մեզ 'ի յօգնութիւն զԱստուած, զի մինչ ողբան եւ զարգացեալ իցեմք ուսմամբ եւ բազմաք առաքինութեամբք կամ տեսութեամբ հրաշից, ոչ օգնեն մեզ այսոքիկ ամենեքեան 'ի հասանել փառանդին, փան զի անցեալք են այնք, այլ կարօտիմք Աստուածայնոց մանաւորի օգնութեան» Ոսկեբերան։ Մատ. ա. 22-25։

33-35. Մինչեւ փորձութեան բոպէն մարդ իւր տկարութիւնը չէ ճանաչում։ Ցիսուս կամենալով ցոյց տալ Պետրոսին իւր տկարութիւնը եւ այն՝ որ իւր յանդուգն պարծանքը եւ անձնապատանութիւնը, առանց Աստուծոյ օգնութեան, ոչինչ օգուտ չէ կարող բերել, փանորոյ եւ ասաց։ «Եթէ ուրիշները միայն փախչելով կ'մեղանչեն, իսկ դու ոչ միայն փախչելով, այլ նաեւ ուրանալով կրկնապատիկ պիտի մեղանչես» Այսպէս էլ զգուշացրաւ միւս առաքելոց անհոգ չմնալ, որ չ'զայթագղուին։ Մատ. ժդ. 27-31. զուկ. իբ. 31-34. յով հ. ժդ. 36-38։

36. Գեթսեմանին շատ սակաւամարդ եւ մի քանի խրճիթներից բաղկացած մի գիւղ էր շինուած Ձիթենեաց լերան ստորոտում նւ որով հեռաւ այստեղ էին գործածում ձիթապտուղներ քաղելու մամուլները՝ (գործիքները) փանորոյ եւ կոչուեցաւ Գեթսեմանի։ Գեթ նշանակում մամուլ, իսկ Սեմանի-ձէթ՝ այն է. մամուլ ձիթոյ։ Ցիսուս գնաց այս գիւղի ձորում մի պարտիզի մէջ աղօթել՝ նախաձեռոգաց պարտիզի մէջ գործած մեղքերը քաւելու համար։ Մատ. իա. 1—3։

37, 38. Աշակերտների մէջ աւելի զարգացածը եւ կատարեալը էին Պետրոսը, Յակով բոսը եւ Յով հաննէսը, փանորոյ ինչպէս գոցա Թափօրական լերան վերայ ցոյց տուաւ իւր փառքը, այնպէս էլ այժմ պարտիզի մէջ առանձին ցոյց տուաւ իւր տարտնապի դառնակսիճ ցաւը եւ տանջանքը, յորդորելով միշտ աղօթել իւր հետ, չանկանել փորձութեան մէջ։ Իսկ միւս աշակերտներին այդտեղից մի քարընկեց հեռու նստացրաւ եւ ասաց՝ մի եւ նոյնը։ «յաղթեմ կացէք եւ մատանել 'ի փորձութիւն» Մատ. ժդ. 32-34. զուկ. իբ. 41։

Սկսաւ տրտմել՝ նշանակում իւր ազատ տրամեց, ցաւեց այնքան ողբան ինքն կամեցաւ։ Ցիսուս իւր մարդկային անձնիշխան կամքով, իւր երեւակայութեան մէջ տպաւորելով այն ամենայն ցաւերը եւ վշտերը որ պիտի կրէր իւր Հոգու եւ մար-

Ճու մէջ բնական կարգաւ, թոյլ տուաւ, որ իւր զգայութիւնները զարհուրին, տրտմին, ցաւին, եւ այլն։ Այս տրտմութեան ցաւը այնքան սաստիկ էր որ եթէ մի քիչ աւելի շարունակէր կարող էր Նոյա մահացնել։ «Էր՝ի տաղնապի (այն է հոգեվարութեան) հոսէին՝ի նմանէ քրտունք, իբրեւ զկաթսակս արեան ոլոռն ոլոռն հիդեալ յերկիր» Ղուկ. իբ. 44։

Իբրեւ բառը՝ ցոյց է տալիս ոչ թէ նմանութիւն, այլ իսկութիւն։ Ինչպէս իմանալ որ Յիսուսի ցաւի սաստկութիւնից դուրս էին գալիս Նոյա մարմնոյ ծակոտիքներից արիւնախառն քրտինք, որ ոլեան նման թափուում էին երկիր։ Այս դիրքնական չէ, այլ շատ անգամ պատահում է այն անձանց, որոնք ունին ազնիւ եւ նուրբ մարմին։ Տե՛ս կենդանեաց գրքի 19 գլ. Արիստոտելի։ Ցոյ հ. ա. 14։

Այս միջոցում Գաբրիել Հրեշտակապետը մարմնաւոր կերպարանքով երեւեցաւ եւ մարմնաւոր ձայնիւ մի քանի մխիթարական խօսքերով զօրացրաւ Նոյա զգայարանքը՝ ասելով.- «Տէր, քո է զօրութիւն, քանզի դու ընդդէմ մահու եւ դժոխոց զենեալ աղաւեալոց ես զազգս մարդկան» Եւ այլն։ Հրեշտակապետը չէր կարող Քրիստոսի հոգեկան կարողութիւնները զօրացնել՝ ոչ ուժեղացնելով, ոչ լուսաւորելով եւ ոչ ուսուցանելով, եւ այլն, վասն զի նուազը չէ կարող հզօրին զօրացնել։ Այսպէս Քրիստոս ճշմարտապէս եւ բնականաբար տրտմեց, ցաւեց, քաղցեաւ, ծարաւեց, վաստակեց եւ կրեց այն ամենայն կրքերը, որ կրում են մարդիկ՝ միայն այն տարբերութեամբ, որ Քրիստոսինը սկզբնաւորուած էր իւր ազատ կամքից, որ բան Աստուածաբանից ասուում Նախակիրք, իսկ մարդկայինը՝ չէ սպասում մեր կամքի ազատ ընտրութեան, այլ բռնանալով գալիս է մեզ վերայ, թէեւ չենք կամենում։ Յիսուսի կրքերը ներզործեցին միայն Նոյա մարմնոյ սրտի եւ բանական հոգու վերայ, եւ ոչ թէ Աստուածային բնութեան՝ վասն զի Աստուածային բնութեան անհնար է ենթարկուիլ կրքերի եւ չարչարանաց։ Քրիստոսի հոգին իւր Աստուածային էութեան տեսութիւնով՝ի սկզբանէ երանուած եւ փառաւորուած լինելով, որքան սաստիկ տրտմում էր իւր չարչարանքներով, այնքան էլ աւելի զմայլուած ուրախանում էր, այնպէս որ ոչ ծայրագոյն ուրախութիւնն էր տրտմութեան արգելում, եւ ոչ տրտմութիւնը ու-

բախութիւն, վասն զի Քրիստոս, ինչպէս Աստուած, յայնմ ցուցեալ էր իւր բանական հոգու ընդունակութիւնը, որպէս զի կարելի լինի տեղաւորել իւր մէջ, ինչպէս ուրախութիւնը, այնպէս էլ տրտմութիւնը։ Ոգի՝ նշանակումի Քրիստոսի բանական հոգին։ Նաւ անգամ մեր թարգմանութեանց մէջ հոգի բառը գործ է ածված անձն բառի տեղ։ Ղօղեալ յերկիւղ քրտանց հոսման, որոնցմէ կայլակ վիժման, ի զօրանալ հրեշտակ մերձեալ, զօրինական գիւրս լցեաւ։ Զի կատարեալ էառ զբնութիւն, Աստուածն բան զմարդկութիւն, պարտ էր զերկիւղ եւ զտրտմութիւն յիւրումն կրել անօրէնութիւնս։ Նարեկաց։ Սաղ. ժե. 10. կը. 1. մատաա. 25. մար. ժդ. 3. 4. գործ. բ. 2։

39. Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, եկաց յաղօթս՝ եւ ասէ. Հայր իմ եթէ հնարաւոր է՝ անցցէ բաժակս այս յինէն, բայց ոչ որպէս ես կամիմ այլ որպէս դու։

40. Գայ առ աշակերտսն, եւ գտանէ զնոսա ի քուն, եւ ասէ ցՊետրոս. այդպէս ոչ կարացիք մի ժամ արթուն կալ ընդ իս։

41. Արթուն կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի՝ անկանիցիք ի փորձութիւն, հոգին յօժար է՝ բայց մարմինս տկար։

42. Դարձեալ երկրորդ անգամ չորաւ եկաց յաղօթս Յիսուս՝ եւ ասէ՝ Հայր իմ՝ եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակս այսմիկ, ապա թէ ոչ՝ արբից զսա՝ եղիցի կամք քո։

43. Եւ եկեալ միւսանգամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք իւրեանց ծանրացեալք։

44. Եթող զնոսա՝ եւ գնաց, եկաց յաղօթս երրորդ անգամ, և դարձեալ զնոյն բանն ասաց։

45. Յայնժամ գայ առ աշակերտսն՝ եւ ասէ ցնոսա. ննջիցէք այսու հետեւ եւ հանգիրուք. զի ահա հասեալ է ժամ եւ Որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց։

46. Արիք երթիցուք ասա, զի ահաւասիկ եհաս՝ որ մատնելոցն է զնս։

47. Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա Յուդա մի յերկոտասանելոցն եկն, եւ ընդ նմա ամբոխ բազում սրովք եւ բրօք ի քահանայապետացն՝ եւ ի ծերոց ժողովրդեանն։

48. Եւ որ մատնելոցն էր զնս, եւ նոցա նշան՝ եւ ասէ. ընդ որում ես համբուրեցից՝ նոյն է. զնս ունիցիք։

49. Եւ վաղվաղակի մատուցեալ առ Յիսուս՝ ասէ. ողջ լեր մարդապետ, եւ համբուրեաց ընդ նոսա։

50.Եւ Յիսուս ասէ ցնա. ընկեր՝ վասնորոյ եկիրդ, յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի Յիսուս, եւ կալան զնա։
51.Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ էին ընդ Յիսուսի ձգեալ զձեռն եւ եհան զսուրբ իւր՝ եւ եհար զծառայ քահանայապետին, եւ ի բաց եհան զականջն նորա։
52.Յայնժամ ասէ ցնա Յիսուս. դարձո՛ զսուրբ քո ի տեղի իւր, զի ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով անկանիցին։
53.Թէ համարիցիս՝ թէ ոչ կարեմ աղաչել զհայր իմ, եւ հասուցանիցէ ինձ այժմ այսր՝ աւելի քան զերկոտասան զունդս հրեշտակաց.
54.Այլ զիարդ լիցուցուն զգիրքն՝ թէ այսպէս պարտ լինիր։
55.Յայնժամ ասաց Յիսուս ցամբոխսն, իբրեւ ի վերայ աւազակի ելիք սուսերօքն եւ բրօքն ունկիր դիս, Հանապազ առ ձեզ իտաճարին նստէի եւ ուսուցանէի, եւ ոչ կալայք զիս։
56.Այլ այս ամենայն եղեւ՝ զի լցցին գիրքն մարգարէիցն. յայնժամ աշակերտքն ամենեքեան թողին զնա եւ փախեան։
57.Իսկ նոցա կալեալ զՅիսուս ածին առ Կայիափա քահանայապետ՝ ուր գրագիրքն եւ ծերքն ժողովեալ էին։
58.Եւ Պետրոս զկնա նորա երթայր բացագոյն մինչեւ ի խորհրդարանն քահանայապետին. եւ մտեալ ի ներքս նստէր ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն։
59.Իսկ քահանայապետքն եւ ամենայն ատեանն խնդրէին սուտ վկայութիւն զՅիսուսէ, զի սպանցին զնա։
60.Եւ ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց. յետոյ մատուցեալ երկու սուտ վկայք։
61.Ասէին՝ թէ Սա ասէր՝ կարողեմ քակել զտաճարն Աստուծոյ, եւ զերիս աւուրս շինել։

39.Աշակերտներից մի քանի քայլ հեռացաւ առանձին աղօթելու համար, եւ տպա բոլոր մարմնով ընկաւ գետնի վերայ եւ սկսեց մի այնպիսի ձայնիւ աղօթել, որ աշակերտները եւս կարողանան լսել։ Այս արաւ ինչպէս երկնաւոր Հօր պատուելու, այնպէսէլ մեզ օրինակելու համար։ «Բաժակ՝ նշանակուած «վիճակ կամ բաժին.» Այն մահը որ վիճակուածէր Յիսուսին մեր մեղաց համար, ասուումէր «բաժակ։» Սրանով Յիսուս կամենումէ ասել.- «Ով հայր՝ եթէ մարդկանց ազգի փրկութիւնը առանց իմ չարչարանաց հնարէ անցնել՝ թող անցնէ, իսկ եթէ ոչ պատրաստեմ ամենակիրպ չարչարանաց եւ մահուան։ Յիսուս գիտէր որ այդ բաժակի ասացնելը, առանց մարդկանց ազգի փրկութեան յաւիտենից անանցնելը,

կարելի էր վճռուած, ինչպէս Հօր Աստուծոյ կամքից՝ այնպէս էլ իւր, որ մարմնացաւ մեռանելու համար, վասնորոյ և սկսեց թէ-ուութեամբ ազօթելով՝ Հօր Աստուծոյ առաջև ներկայացնել իւր բնական բաղձանքը, որպէս մարդ։ Ուրեմն ոչ թէ կրքերի սաստկութիւնը բռնադատեց Յիսուսին այդ բաժակը անցնելու համար ազօթել, այլ կամեցաւ որ իւր զգայական բաղձանքը, բնութեան կարգաւ այնքան վշտանայ, որ մինչև անգամ խորչելով մնչհաւանից, ցանկանայ նաև այդ բաժակի դառնութեան անցնելուն թէ-ակամապէս և ոչ արձակաբար։ Սրանից երևում, որ Յիսուս ունէր երկու կամք և երկու ներգործութիւնք՝ այն է. Աստուածային և մարդկային, վասն զի երբ կամենում էր Աստուածութեան գործութիւնները ցոյց տալ, Աստուածայիններն էր ներգործում Աստուածաբար, և երբ մարդկութեան խոնարհութիւնն էր կամենում յայտնել, մարդկայիններն էր ներգործում մարդկաբար, այսպէս միշտ մարդկային կամքը հետևումը Աստուածային կամաց։ Մատ. ա. 25. իզ. 41. գուսի. բ. 11. յով հ. բ. 24. 25. գ. 13. զ. 38. բ. 58. ժ. 30-38. ժգ. 28. ա. կոր. բ. 8. տիտ. ա. 3։

40. 41. Դառնալով իւր տեղից եկաւ աշակերտաց մօտ, որպէս զի նոցանից մխիթարուի, և գտաւ նոցա արտմութիւնից խոր քնի մէջ ընկղմուած, ուստի և քաղցր ներբողմամբ՝ ասաց.- «Այդպէս ոչ կարացիք մի ժամ արթուն կալ։» Որով հետև փոքրութիւնը արդէն մօտ էր, վասնորոյ դարձեալ պատուիրում փոքրութիւնից ազատելու համար ազօթել Առաքեալները ապաստանուած իրանց հաստատամտութեան վ երայ, որ 'ի սեր իւրանց վարդապետի պատրաստեն մինչև անգամ մեռանիլ, Յիսուսի այս խօսքերից չեն զգաստանում և խնդրում Աստուածանից մանաւոր օգնութիւն։ Այս իսկ պատճառաւ ասում է.- «Հոգին յօժար է և մարմինն տկար» (Շատ թարգմանութիւնանց մէջ այսպէս է գրուած), այն է.- «Թէև դուք ապաստանուած ձեր հոգու յօժարութեան վ երայ համարում է ձեզ՝ ինձ համար մեռանելու մինչև անգամ պատրաստ, բայց այս էլ պէտք իմանալ, որ առանց Աստուծոյ մանաւոր օգնութեան ձեր հոգու յօժարակամութիւնը ոչինչ օգուտ չի կարող բերել ձեզ, վասն զի դուք կարող չէք մարմնու (որ է զգայութեան) տկարութիւնից դարձեալ, առ-

սերներ տեսնելով՝ իսկոյն վրդովուիր շփոթուիլ և ահից մինչև անգամ ուրացութեան մատնուիր «Իսկ եթէ վերառնենք այսպէս. «Հոգիս յօժարէ և մարմինս տկար։ Պէտք է իմանալ իւր համար ասուած՝ այնէ.- «Թմացէք, որ ես թէև մարդկային բնութեամբ, իմ չարչարանքներով ցաւումեմ, վշտանումեմ տրամադրայց հոգւով ուրախեմ և յօժար կրել այդ ամէն չարչարանքները, փանդի դուք հեսանքը մարդկանց ազգի փրկութիւնեմ և Հօրս կամքը կատարելը։ «Հոգայր զկրիցն տրամաբար երիւքն եղեալ առանձնաբար, փրկել զաշխարհս Հոգիս յօժար, բայց է բնութիւն մարմնոյս տկար, ոչ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն անզօր փանդաւոր, այլ միևնոյն զով միաւոր կրէր զկիրսն կամաւոր։ Եպիսկոպոս։ Մատ. իզ. 37-50. բ. կոր. ժգ. 4։

42-44. Յիսուս երիք անգամ ազօթքով՝ սովորեցնում մեզ անդադար ազօթել՝ Ասուածոյ կամաց յարմար, մինչև ստանալ խնդրելին։ Մատ. իզ. 39-42. մարկ. ժգ. 39-42։

45. Այս վերջի ազօթքից յետոյ հեռացաւ իրանից չարչարանքի երկիւղը և իւր Հոգեկան և մարմնական կարողութիւնները զօրացնելով՝ զուարթ դէմքով, իբրև քաջ դիւնոր, եկաւ աշակերտաց մօտ և քաղցր բարբառով՝ ասաց.- «Այսուհետև ննջեցէք և հանգչեցէք, փասն զի արդէն հասած է ժամը, որի մէջ ես պէտք մատնուիմ։ Արիք գնանք մեր թշնամիների առաջ, որ ահա մօտեցած են։ Աշակերտները կարծեցին թէ՝ Յիսուս գնում նրանց առաջը պատերազմելու համար, Պետրոսը փաղեց պատրաստել իւր սուրը։ Հեղութեան վարդապետը գնալով թշնամիների առաջ, ցոյց տաւաւ, որ ինքն կամաւորապէս է գնում դէպ ի մահ, գնում նոցա առաջ ոչ թէ մարմնաւոր զէնքերով, այլ հեղութեան, չարչարանաց և խաչի զէնքերով։ Այսպէս էլ անմեղները պէտք չ՝ փախչեն դատաստանից և մահից։ Փորձութիւնը հասած ժամանակ պէտք քաջութիւնով նորա դէմ պատերազմել, պէտք Տէրի նման դուրս դալ նորա առաջը մինչև ստանալ յաղթութեան փառք։ Ե. 25. 26։

47-49. Յուդան իմանալիք Յիսուսի տեղը, փանորոյ առած իւր հետ մի զունդ զօրք, քահանայից և փարիսեցւոց սպասաւորները, վառած լապտերներով, ճանճերով եկաւ այդտեղ։ Որպէս

զի սխալմամբ, փոխանակ Յիսուսի, աշակերտներից մէկին չ՚բռնեն, նա վազօրօք նշան էր տուած՝ ասելով.- «Որին ես համբուրեմ՝ նոցա բռնեցէք։» Երբ Յիսուս կամաւ դուրս եկաւ նրանց առաջը, Յուդան, տեսնելով Յիսուսին, վազեց իւր պիղծ բերանով համբուրել՝ նոցա ոչ թէ հեռքը, այլ ամենասուրբ երեսը, ինչպէս սովորութիւն էր, և ստիպեց զգշութեամբ տանել, վախենալով, չլինի թէ Յիսուս տեսնելով այդ ամէնը, փախչէ։ Յիսուս իւր մեծ զգուշութեամբ ոչ թէ իւր դէմքը դարձրաւ Յուդայի համբուրից, այլ մօտեցրաւ նոցա համբուրելու համար։ Այսպէս եթէ քաղցր Յիսուսը մատնութեան նշանով թոյլ է տալիս Յուդային իրան համբուրել՝ ոչ օրէնքաւորելի սիրով և համակրութեամբ կ՚ընդունէ զրաջացած մեղաւորների դէպ՝ ի իրան դարձը, սիրոյ և խաղաղութեան համբոյրները։ Մաթ. ժդ. 44։

30. Յուդային ընկեր ասելով՝ կամենում էր շարժել նոցա, զրաջել և ամաչել իւր չարութիւնից։ Մինչև որ Յուդան կամենում էր կեղծել, որպէս թէ զենուորներին ինքն չէ առաջնորդել, այլ նոցա պատուհմամբ իրան հետևեցին, Յիսուս մեծ քաղցրութեամբ ասաց նոցա.- «Համբուրելով մատնես զորդի մարդոյ։» Այնէ. միթէ մատնութեան չարիքը քեզ բաւական չէր, որ համբուրի սրբութիւնը ևս չարաչար ես գործադրում։ Այս միջոցում Յուդան երեսը դէպ՝ ի զենուորները դարձնելով՝ նշան արաւ շուտով բռնել։ Զենուորները վազելուց սաստիկ շփոթուեցան և որոշակի չէին ճանաչում թէ Յուդան, որին համբուրեց և մինչև դեղերուած որոնում էին, Յիսուս հարցրաւ.- «Զո՞ խնդրէք։» Նոցա պատասխանեցին.- «ԶՅիսուս Նազովրեցին։» Յիսուս ասաց.- «Ես եմ։» Ես եմ բանը՝ երբ լսեցին իրանց սանձողի բերանից, զարհուրած դէպ՝ ի յետ դառնալով՝ իրանց թիկունքի վերայ, այնպէս գետնի վերայ ընկան, որ եթէ Տէրը չ՚կանգնեցնէր, նոցա որպէս կոշտ յաւիտեան պէտք ընկած մնային, այսպէս էլ ընկաւ և Յուդան։ Յիսուս նոցա կանգնացնելից յետոյ, կրկին հարցրաւ.- «Զո՞ խնդրէք։» Նոցա պատասխանեցին.- «ԶՅիսուս Նազովրեցին։» Մինչև որ այս չիմաց զրութեան մէջ կամենում էին, Յիսուսի տեղ, առաքեալներից մէկին բռնել, Յիսուս թոյլ չ՚տուաւ և ասաց.- «Ղսացի ձեզ թէ ես եմ, արդ եթէ զիս խնդրէք՝ թոյլ տուք զոցա երթալ։ Ոչ կորուսից՝ ի նոցանէ և ոչ զոր։» Յով. հ. ժ. 9։

51. Առաքեալները երեկոյից սրտէն իրանց մէջ առանձին խորհած էին այնու հետև իրանց հետ սուսերներ պահեր, որպէս զի մատնութեան ժամանակ կռուով յարձակեն Թշնամեաց, Յիսուսնրբանց այս մասին խրատած էր, որ սուսերնրի մասին հոգացողութիւն չանեն, որ հարիւրօր ժամանակը նոքա ոչինչ բանի կարօտութիւն չեն ունենար, վասն զի ասուէր՝ ինձ համար գրուած է.- «Մեռանիլ և ընդ անօրէնս համարիլ։» Իսկ կարօտութիւնը կ'մնայ միայն նրանց համար, որոնց յոյսը ես չեմ թող այդպիսի իրանց ապագայ հարիւրօրութեան համար վերառնեն քանի, մասնաւոր, և նա որ սուր չունի, թող իւր ձորձերը վաճառէ և իւր համար սուր գնէ։ Այն տանը, որի մէջ ընթրիք արին՝ կային երկու սուր։ Առաքեալները տեսնելով՝ որ Յիսուս չէ հրամայում որի համար հոգալ, երբ տեսին՝ որ այդ տանը սուր կայ, կարծեցին թէ Յիսուս զոյգ տեսնելով, կարելի է հրամայեց սուր վերառնել, վասնորոյ և ասացին.- «Տէր ահաւասիկ են ասա երկու սուրք։» Յիսուս պատասխանեց.- «Բաւականք են։» Այնէ. այսքան խօսքը այս մասին բաւականք են։ Առաքեալները կարծեցին թէ հրամայում վերառներ, վասնորոյ և երբ տանից դուրս եկին, տարին իրանց հետ նաև սուրերը։ Երբ հասան Քրիստոսի բռնելու ժամը, Պետրոսը հրաման խնդրեց Տէրից, ասելով.- «Տէ՛ր հարցուք զնոսա սրով։» Երբ որ տեսաւ վասնզը շատ մեծ է, զեռ պատասխանին չսպասած, կռուեցաւ խփելով սպանել քահանայապետի Մարդոս ծառային, բայց սխալմամբ կտրեց նոքա ականջը։ Որպէսզի միւս առաքեալները ևս չսկսեն նոցա դէմ զորձել, Տէրը ասաց.- «Թոյլ տուք մինչև ցայդ փայր։» Այնէ. այդքանով բաւականացէք և ձեր ձեռքը ձեր թշնամեաց դէմ այլ ևս չբարձրացնէք, և մեռնելով ականջին բժշկեց։ Մատթէոսը պատմութեան կարգը թողնելով՝ նախ բռնելնէ գնում, և ապա Պետրոսի սուր հանելը։ Լուկ. իբ. 1-52։

52-54. Բռնութիւն անողներն ընդհանրապէս բռնութիւնով կմեռանին։ Հրէաները՝ որով կոտորուեցան Տիտոս և Վեսպասիանոսի զօրքերից։ Իսկ նոքա, որոնք իրանց անձնը և իրաւունքը պաշպանելու համար սուր են առնում, են մեզանումն։ Երկրասան գունդը 72000-ի չափ։ Նշանակում կողով եմանթիւ հրեաներով գոցա կոծաներ։ Այստեղից ևս տեսնում ենք Յիսուսի

սիրոյ և խնամարհութեան մեծութիւնը նա ոչ թէ միայն չ'կամեցաւ ազատուիլ իւր թշնամիներից, այլ նաև կամաւ դիմեց դէպ 'ի մահ, որով լիապէս կատարեց Հօրից սահմանածը և մարգարէից գրուածքը Ծն. թ. 6. ես. ծ. և ծգ. գլ. սաղ. խ. գանի. թ. 26. մատ. և. 29. յով. հ. ժբ. 11. յայտ. ժգ. 10։

55. 56. Ամբոխի թիւը հազարից աւելի էր։ Երբ Յիսուսին բռնած շատ պէնդ կապեցին, աշակերտները փախան՝ միայն մնաց Տիրամայրը նորա հետ, սկսած այդ բոպէից մինչև մահուան վ երջի բոպէն։ Այս պատճառաւ խաչելութեան օրը երեքտասան մոմեր են վառում եկեղեցում, որոնցից երկուտասանը հանգցնում են, իսկ մէկը վառած պահում, օրինակ առաքելոց անհաւատարմութեան, իսկ տիրամօր կատարեալ սիրոյ և հաւատարմութեան։ Առաքելոց փախչելը եղև մարդկային տկարութիւնից և ոչ թէ հաւատքի պակասութիւնից։ Նոցա հաւատքը և սէրը դէպ 'ի Քրիստոս չի պակասեցաւ։ Այս խառն և շփոթ միջոցում, երբ ամբոխի ձայները և ազաղակը բարձրացաւ՝ պարտիզպանը, որ մի երիտասարդ էր, ենթադրեց իւր երազի մէջ, վռազեց տեսնել այս ի՞նչ ազաղակ է, սաստիկ վռազելուց չ'հագաւ իւր հանդերձները՝ այլ իւր մերկութիւնը ծածկած կատաւով, հեռուից նոցա։ Ամբոխից ոմանք սուր համարելով Յիսուսի աշակերտներից, ուզեցին բռներ Երիտասարդը թողից կատաւը և մերկ փախաւ նրանցից։ Մարկ. ժգ. 51։

Այսպէս Քրիստոսի բռնելու ժամանակ չորս պանչելիք երևեցաւ։ ա.) Դէպ 'ի յիսուսիտ գառնալով, ընկան գետնի վ երայ։ բ.) Այնքան միջոց մնացին ընկած, մինչև որ Քրիստոս նոցա չ'կանգնեցրաւ։ գ.) Մագքոսի ականջը, իւր ձեռքի շոշափելով, բժշկեց։ դ.) Մագքոսի ականջը կտրելից յետոյ ոչ ոք չ'համարձակուեց Քրիստոսի և առաքելոց դէմ մի բան խօսել և առներ Սաղ. կը. 20. 21. զաք. ժգ. 7. յով. հ. ժբ. 2—12։

57. Յիսուսի բռնելից յետոյ նախ տարին Անանա քահանայապետի մօտ, որ շատ ծերաւ էր Քրիստոսի արեանուստի և այդ դիշերդ չէր քնած, այլ սպասում էր, որ Կայիափայի մօտ տանելից առաջ բերեն նախ իրան մօտ, որպէս զի տեսնէ Յիսուսին կապուած և մարդկերանցից յազթուած, և ապա հասուցանէ Ցուդային

մանուելեան վարձը, երեսուն արծաթը, որով հետև այսպէս էր պայմանագրութիւնը։ Այսպէս Յուդան հաստատ իւր նպատակին և ստացաւ 25 ր. 50 կոպ։ Յով. Հ. մը. 13-25։

58. Այսուհետև տարին Կայիափայի մօտ։ Աւետարանչի ասած «միւս աշակերտը» մի երեւելի անձնէր քահանայապետին ծանօթ և Քրիստոսի ծածուկ աշակերտ։ Ամենք ասում են թէ միւս աշակերտը» Յով. Հանենէսն էր, որ ձիրաց լինելով, շատ անգամ ձուլելով քահանայապետի վերայ, ծանօթէր։ Այդ այս հաւանական չէ, որովհետև երբ Յիսուսին բռնեցին՝ Յով. Հանենէսը իսկոյն փախաւ և գնաց տիրամօր յայտնեց այդ զոյժը։ Այդ այս ծածուկ աշակերտը, երբ ըսեց որ Յիսուսին բռնեցին, գնաց տեսնել կատարածը։ Սա երբ տեսաւ Պետրոսին, որ գնում էր հետևից, մտաւոր և նորա հետ խօսելով, շարունակեց գնալ Յիսուսի հետևից։ Սա անհերիւրելի մաւ և մոցրաւ նաև Պետրոսին, որ սպասաւորների հետ նստած, սպասում էր երջին, իսկ Յով. Հանենէսը մնաց Տիրամօր հետ տանը՝ և աղաւօտեան նորա հետ գնաց դատեր Աստուածային վարդապետին, և բոլոր օրը մինչև խաչելութեան ժամը մնաց Տիրամօր հետ։ Յով. Հ. մը. 15։

59. Պէտք է իմանալ, որ Հրէաները երկու տեսակ ունէին՝ մէկը ընդհանրական, որ սուում էր «Սանհեդրին,» սորա մէջ դատաւորները եօթանասուն Ծերերէին, սորա ինչոր վճռէին Հռովմայեցւոց իշխանները պէտք ընդունէին և հաստատէին։ Միւսը՝ մասնաւոր, որի մէջ դատաւորները միայն մի քանի Ծերերէին, և վճռումէին թեթև գործեր, առանց ներկայացնելու Հռովմայեցւոց իշխանութեան։ Յիսուսին երբ տարին Կայիափայի մօտ, գիշեր էր և չէր կարելի ընդհանրական տեսակ կազմել, վասնորոյ և Կայիափան մասնաւոր տեսնի մէջ՝ սկսեց քննել Յիսուսի գործը։ Քահանայապետը, իմանալով՝ որ իրանց պատրաստած վկաների խօսքերը չեն կարող ունենալ մի զօրաւոր ներգործութիւն, սկսեց ինքը խորամանդութեամբ խօսեցնելով նորա բերանից ընդդէմ Աստուծոյ և օրինաց մի բան որսալ և դատապարտել։ Արդարութեան նահատակ Յիսուսը, իմանալով նորա նենգաւոր միտքը՝ ասաց. «Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի, եսյամենայն ժամս ուսուցի ի ժողովրդեանն, և ի տաճարի անդ, և ի ծածուկ ոչ խօսեցայ։» Յով. մը. 19-22։

Սպասաւորներից մէկը տեսնելով՝ որ Յիսուսի այս պատասխա-

նով, քահանայապետը խայտառակուեցաւ, սասարկ կատաղած մի ապտակ տուաւ Յիսուսին՝ ասելով.— «Այդպէս պատասխանի տաս քահանայապետիդ»։

60.61.Որովհետև Քրիստոսի խօսքերի մէջ չէին կարողանում մի արատ գտնել, և վկաների բազմութիւնն էլ միմեանց հակառակ ստեր խօսելով՝ չէին կարողանում մահուան արժանի յանցանք ապացուցանել, վանդոյց բերին երկու սուտ վկաներ, որք վկայութիւնն թէ Քրիստոս ասել է.— «Կարողեմ քակել զտաճարդ զայդ ձեռագործ և զերիս աւուրս շինել»։ Մարկ. ժդ. 58։

Այս վկայութիւնն էլ սուտէր շատ կերպով.—ա) Յիսուս ասաց.ոչ թէ ես քակեցից, այլ թէ դուք քակեցէք։ բ.) Չէր ասած ձեռագործ տաճարդ, այլ տաճարդ, որ ասուէր իւր մարմնոյ համար, որ չէր ձեռագործ։ գ.) Չէր ասած զերիս աւուրս շինեցից, այլ թէ կանգնեցից՝ այնէ.յարուցից, մի քանի թարգմանութեանց մէջ՝ զարթուցից։ դ.) Հրէից մէջ սովորութիւնէր առակներով խօսել, Յիսուս այս առակաւ ասաց իւր մահուան համար, Նոքա թէև իմանուէին, որ այդ ասածը առակէ, բայց կամենուէին Յիսուսի խօսքը այլայլելով՝ Նորա վերայ մի զբաղատութիւն բարուրել, մանաւանդ որ այդ երկու սուտ վկաների խօսքերը ևս միմեանց չէին յարմար։ Մարկ. ժդ։ 59։

62.Եւ յարուցեալ քահանայապետն ասէ ցնա.չ՝տաս ինչ պատասխանի, զի՞նչ զոքա ամբաստանեն զքէն։

63.Եւ Յիսուս լուռ կայր,պատասխանի ետ քահանայապետն և ասէ ցնա. երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ։

64.Ասէ ցնա Յիսուս.դու ասացիր. բայց ասեմ ձեզ,յայսմհետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն և եկեալ ընդ ամպս երկնից։

65 Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր և ասէ, հայհոյեաց, զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք, ահա՛ արդ լուայք զհայհոյութիւն զորս։

66. Զի՞նչ հաճոյ է ձեզ,Նոքա պատասխանի ետուն և ասեն. մահապարտ է։

67. Յայնժամ թքին ընդ երեսս Նորա, և կափեցին զնա. և ոմանք ապտակեցին, և ասեն։

68. Մարգարէացիր մեզ Քրիստոսդ, ո՞վ է՝ որ եհարն զքեզ։

69. Իսկ Պետրոս նստէր արտաքոյ՝ի դուռն, մատեաւ առն-
նա աղախին մի, և ասէ. և դու ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր։
70. Նա ուրացաւ առաջի ամենեցուն՝ և ասէ. թէ ոչ գիտեմ
զի՞նչ խօսիս։
71. Եւ իբրև ելն նա արտաքս քան զդուռն՝ ետես զնա այլ կին
մի, և ասէ ցայնոսիկ՝ որ անդն կային. և սա ընդ Յիսուսի
Նազովրեցւոյ էր։
72. Եւ դարձեալ ուրացաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն։
73. Եւ յետ սակաւ միոյ մատուցեալ որք կային անդ, ասեն
ցՊետրոս. արդարև և դու՝ի նոցանէ ես, քանզի և խօսք
քո յայտ առնեն զքեզ։
74. Յայնժամ սկսաւ նզովել և երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն.
և իսկոյն հաւ խօսեցաւ։
75. Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի զոր ասաց, թէ մինչ-
չև հաւու խօսեալ իցէ՝ երիցս ուրացիս զիս, և ելեալ
արտաքս՝ ելաց զառնապէս։

62. 63. Տեսնելով որ սուտ վկաները չկարողացան Յիսուսի դա-
տապարտել, հիմայ քահանայապետը ինքն է աշխատում խորա-
մանդութեամբ Յիսուսից մի բան գոգնալով դատապարտել։ Յի-
սուս տեսնելով որ այդ դատաստանի մէջ թագաւորում ոչ թէ
արդարութիւն, այլ ամբաստանութիւն, բռնութիւն և հալաբ ու
մի տեսակ խորամանկութիւններ, լսում։ Գլ. իդ. 16. հս. ձգ. 7.
յով հ. ե. 18. ժթ. 7։

64. Յիսուս, Աստուծոյ անունը լսելով, այլ ևս չէ լռում, այլ պա-
տասխանում.— «Դու ասացեր։» Այնէ թէ.— «ես եմ իսկապէս Մեսիա-
յան։» Յետոյ շարունակում.— «Եթէ ասացից ձեզ սակայն ոչ հաւա-
տայք։ Եւ եթէ հարցից ինչ զձեզ, չ՚ասայք ինչ պատասխանի կամ
արձակիցէք։» Այս էլ պէտք իմանաք, ասում Յիսուս, որ իմ երկ-
րորդ գալստեան ժամանակ կ՚տեսնէք ինձ, ոչ թէ, իբրև դատա-
պարտելի մարդ, կապուած և ձեր առաջև դատաստանի մատնու-
ած, այլ իբրև Աստուած, դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Մաղ.
ՃԹ.1. գանի.է.13. մատ.ի.21. իե.31. մարկ.ժդ.62. գուկ.իբ.67-71։

65. Հրէից շրջերը շապկի նման փոքանկուած էր։ Քահանայա-
պետը շրջերը պատառելով, ցոյց է տալիս, որպէս թէ, Յիսուսի ա-
սածի վերայ սատիկ սոսկում։ Օրէնքում մէջ գրուած է, որ քահա-
նայապետը չ՚պէտք է պատառէ իւր հանդերձները, որով հեռա-

պատառոտելով՝ ոչ թէ պատուում Աստուծոյ, այլ անարգում։ Ղևտ. իա. 10։

«Թորհրդատոր»-Քահանայապետը պատառելով իւր հանդերձները, նշանակում է պատառեց հին օրէնքը և Աշխարհական կարգի քահանայութիւնը։

66. Այսպէս քահանայապետը մանաւոր ժողովքի մէջ փառաց ծերին, իբրև հայհոյիչ, մահապարտ վճռեց, թէև օրէնքը հայհոյիչներին հրամայած էր քարկոծել, բայց նոքա, խաչը վաղօրէք պատրաստած, կամենում էին 'ի նշան մեծ անարգանաց խաչի վերայ բևեռած սպաներ Ղև. իգ. 15. 16։

67. 68. Առենից հանելով, յանձնեցին զգաստարարաց սպասաւորներին, որ առաւօտեան մասնեն ընդհանրական ժողով ին։ Անօրէն քահանայապետը և ծերերը թոյլ տուին սպասաւորներին ամենակերպ անարգ և դառն տանջանքներով չարչարիլ Այդ գիշեր Յիսուս, մի երկայն սիւնի վերայ կապած հինգ ժամից աւելի չարչարուեցաւ, որ աւետարանիչները չեն պատմում։ Չ'բաւականացած այդքան չարչարանքներով՝ աւելացնում են նաև մի ուրիշ տեսակ տանջանք։ Որով հետև Յիսուսի Աստուածեան երեսի հեզ ցաւագնեաց, ողորմելի գծագրութիւնը՝ տեսնողներին շարժում էր դէպ 'ի զութ, դէպ 'ի պատիւանք և սոսկումն, վասնորոյ և շրջելով ծածկեցին նորա երեսը, որպէս զի առանց խղճահարելու և ամօթի կարողանան աւելի սաստիկ տանջել, չարչարել և ծաղրածել։ Այսպէս Յիսուս, մարդկային ամէն տեսակ մեղաց պատիժները իրան վերայ կրեց՝ այնէ. հեշտախուութեան համար՝ դառնակսկիծ տանջանք, փառամոլութեան համար՝ անարգանք, սրկամոլութեան համար՝ քաղց և ծարաւ, և այլն, և այլն, որպէս զի մարդկութիւնը լիապէս արդարացնէ։ Սա. ծ. 6. իբ. 65. երբ. ա. 3. փիլ. գ. 12. 13. ա. յով հ. բ. 6։

69. Գաւթի աւուրքն այն մեծ և ընդարձակ տեղը, որի մէջ էր ծերերի տեսանը։ Սպասաւորները չէին կարող մանել այդ տեղ, այլ միայն կարող էին մնալ դրսի սրահում և գոնեորով նայել ներսը։ Այս աղաղիները մի գունդ գոնապան էր (քահանայապետի տան աղաղին էր։) որ Պետրոսի խօսակցութիւնից հասկացաւ որ նա Քրիստոսի աշակերտներից էր։ Մատթ. 58. յով հ. ժբ. 16. 17։

70-72. Պետրոսին առաջի անգամ ուրացութիւնը պատահեց կէս գիշերից մի քիչ յետոյ, որ էր առաջին հաւախօսը։ Այս ուրացութիւնից Պետրոսը խիստ վրդովուած լինելով՝ սրտիից դուրս եկաւ բակը, այսուհետև նրան տեսաւ մի ուրիշ կին, և ասաց իւր մերձակայներին.— «Սա էլ Յիսուսի հետ էր։» Պետրոսը կամենալով ցոյց տալ նոցա, որ ինքը փախչելու համար չէ դուրս եկել բակը, կրկին անգամ մատնում է նեղսը։ Սորա վերայ հաւաքուեցին Պետրոսի շուրջ քանիսներ դորա մոտ լինելը։ Այս միջոցում, Պետրոսը սաստիկ վախեց, սկսեց և երդմամբ ուրանալ, որ ինքն Քրիստոսի աշակերտ չէ։ Յովհ. գլ. 25։

73-75. Քրիստի մի ժամ յետոյ, երբ սպասաւորների հետ նստած տաքանում էր և Պետրոսը, նայեցին նորա և ասացին.— «Արդարև այս մարդը ևս պէտք է Գալիլիացի լինի, որով հետև խօսակցութիւնն ոճը պարզ ապացուցանում է։» Այս միջոցում Մատթէոսի ազգականներից մէկն ճանաչեց և ասաց.— «Ոչ ես իսկ տեսի գրեթէ՝ թ պարտիզի անդ ընդ նմա։» Պետրոսը տեսաւ՝ որ բանը վատ է. սաստիկ զարհուրելով՝ սկսեց, ինքն իրան նզովել և երդուել, ինչպէս հիմայ զոյնն ածում.— «Թաղը, Աւետարանը իմ առնեն քանդին, իմ դլխոս խոտով կենան՝ եթէ ես այդ բանիդ տեղեակ լինիմ։» Նզովել բառը չպէտքէ վերաբերել Յիսուսին, վասն զի ամենայն նզովք, անէծք, նախատինք և ուրիշ սոյն նման խօսքեր՝ երբ վերաբերուին Քրիստոսին, սրբոց և կամ մի որ և իցէ սրբութեան, կ'սասին հայհոյութիւն, իսկ երբ վերաբերուին հասարակ անձնաւորութեանց, կ'սասին նզովք, կամ անէծք։ Եթէ Պետրոսի նզովքը վերաբերէր Քրիստոսին պէտքէ աւետարանիչներն հայհոյել գրէին և ոչ թէ նզովք։ Այս երրորդ ուրացութեան մէջ հաւը երկրորդ անգամ խօսեց, Պետրոսը յիշելով Տերի գուշակութիւնը՝ սկսեց սաստիկ վերաբերուիր մինչև անգամ լաց հանելից մուսանիլ, քան այլ ևս ապրել։ Յիսուս, տեսնելով Պետրոսի այդ սրտիկոծ դրութիւնը, սենեակի դռնից քաղցր և սիրալիր աչքով նայեց Պետրոսին, որով և լուսաւորեց, լուսապրեց և մխիթարեց նորա, ճանաչելով իւր սիրելութիւնը, չդարմանալ և չշփոթուիր Պետրոսը դուրս եկաւ դուրսը և սկսեց առանց յուսահատութեան դառնապէս լայ և ապաշխարութիւն Սուրբ Կոյսիանոսը՝ որ Պետրոսի ա-

շակերտն էր՝ պատմումէ թէ.- «Պետրոսը իւր ամենայն կենաց մէջ քանիցս լսուէր հաւի ձայնը՝ այնքան ծնկի վերայ չոքած լալիս էր արտասուօքն» Այսպէս մարդիկներից ամենախմաստունը և ամենառաքինին անգամ կարող է փորձութեան մէջ ընկնիլ, եթէ լալով և արտասուօք չինդրէ Աստուածանից մասնաւոր օգնութիւն։ Ղուկ. իբ. 59. յով հ. ժբ. 26։

Ի յաղջկանէ շարժեալ վ ելմի,
Թողոյր երիցս զբաղձալին.
Չի տկար բնութիւնս մարդկային,
Առ Աստուծոյ մի՛ պարծեսցին.
Ընդդիմանալ հնարից չարին
Առանց Նորին հզօր ձեռին։
Ենորհալի։

Գլ. ԻԷ.

1. Իբրեւայդ գնէ խորհուրդ արարին ամենայն քահանայապետքն և ծերք ժողովրդեանն վասն Յիսուսի սպանանել զնա։
2. Կապեցին զնա, և տարին զնացին, և եհատուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորի։
3. Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատնեացն զնա, թէ պարտաւորեցաւ, զղջացաւ՝ և դարձոյց զարծաթին առ քահանայապետսն և ծերս ժողովրդեանն։
4. Եւ ասէ. մեղայ, զի մատնեցի զարիւն արդար, և նոքա ասեն. մեզ չէ փոյթ, դու գիտես։
5. Եւ ընկեց զարծաթին ՝ի տաճարին՝ և գնաց, և չոգաւ խեղդեցաւ։
6. Իսկ քահանայապետքն առեալ զարծաթին՝ ասեն, ոչ է արժան ընդունել զայդ ՝ի կորբանն, քանզի գին արեան են։
7. Խորհուրդ առեալ, գնեցին այնու զագարակն բրտի ՝ի գերեզման օտարացւոյ։
8. Վասն այնորիկ կոչեցաւ ագարակն այն, ագարակ արեան՝ մինչև ցայսօր։
9. Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն ՝ի ձեռն Երեմեայ մարգարէի, և ասին զգինսուն արծաթին զգինս վաճառելոյն, զոր արկին յորդոցն Իսրայէլի։
10. Եւ եհատուն զնա յագարակն բրտի, որպէս հրամայեաց ինձ տէր։

11.Եւ Յիսուս ելեալ առաջի դատաւորին, եհարց զնա դատաւորն և ասէ. դո՞ւ ես Թագաւոր Հրէից. և Յիսուս ասէ. դու ասես։
12. Եւ ի յարտիսանելն նորա ի քահանայապետէին և ի Ծերոց, ոչ ինչ եւ պատասխաներ։
13.Յայնժամ ասէ զնա Պիղատոս. ոչ լսես որչափ զդրա հակառակ քո վկայեն։
14.Եւ ոչ եւ նմա պատասխանի և ոչ բան մի, մինչև զարմանալ դատաւորին յոյժ։
15.Բայց ըստ տօնի սովորէր դատաւորն արձակել ժողովրդեանն կապեալ մի՝ զոր կամէին։
16.Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում անուն էր Յիսու Բարաբբա։
17.Իբրև ժողովեցան, ասէ զնոսա Պիղատոս. զո՞ կամիք յիրկոց ասի՝ զն արձակեցից ձեզ. զՅիսուս Բարաբբա՞, եթէ զՅիսուս անուանեալն զՔրիստոս։
18.Քանզի գիտէր՝ թէ առ նախանձու մատնեցին զնա։
19.Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր՝ և ասէ. Չկայ ինչ քո և արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդիս այսօր յանուրջս վասն նորա։
20.Իսկ քահանայապետքն և Ծերք հաւանեցուցին զժողովուրդսն զի խնդրեսցեն զԲարաբբայն՝ և զՅիսուս կորուսցին։
21.Պատասխանի եւ դատաւորն՝ և ասէ զնոսա. զո՞ կամիք զն արձակեցից ձեզ յերիկուց այսր, և նոքա ասեն՝ զԲարաբբա։
22.Ասէ զնոսա Պիղատոս. իսկ զի՞ արարիցց զՅիսուս զանուանեալն Քրիստոս։
23. Ասեն ամենեքեան՝ խաչեսցի. և նա ասէ. զի՞նչ չար արար և նոքա առաւել ևս աղաղակէին և ասէին, խաչեսցի։
24.Եւ տեսեալ Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել խռովութիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժողովրդեանն՝ և ասէ. քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտասջիք։
25.Պատասխանեն եւ ամենայն ժողովուրդն՝ և ասէ. արիւն զորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց։
26.Յայնժամ արձակեաց նոցա զԲարաբբայն, և զՅիսուս զան հարեալ՝ եւ ի ձեռս՝ զի խաչեսցի։
27.Յայնժամ զինուորք դատաւորին առին զՅիսուս յապարանս. և ժողովեցին ի վերայ նորա զամենայն զգունդն։
28.Մերկացուցին զնա. և արկին զնով աւ քրամիզ կարմիր։
29.Եւ բոլորեալ պակ իփշոց՝ եդին ի գլուխ նորա, և եղէգն յաջոյ ձեռին նորա. ծունր իջեալ առաջի նորա՝ կատա-

կէին և ասէին. ողջ լեր Թագաւոր Հրէից։
30.Եւ թքեալ ինա՛ռնուին զնէզսին և ծեծէին զգլուխն նորա։
31. Եւ յորժամ ՀԱգեցին զնա, մերկացուցին զնմանէ զզգաստիսն և ազուցին նմա զիւր հանդերձն, և տարան զնա ի խաչ հանել։

1.Առաւօտանց շատ շուտ բոլոր եօթանասուն ծերերը հաւաքուեցան քահանայապետի մօտ, բացուեցաւ առեանը, բերին շաբաթաւոր, տանջուած Յիսուսին առեան, կապերը բացին և սկսեցին քննութիւնը։ Քահանայապետը նորից հարց առաջարկեց.— «Դու ես Աստուծոյ որդի Քրիստոսն» Յիսուս միւնոյն պատասխանը տուաւ թէ.- Ես եմ։ Այս խօսքի վերայ Ընդհանուր ժողովը հաստատեց՝ Մանաւանդ ժողովի վճիռը, բայց միայն ծերակրոյն մի քանի անդամք, որք էին Նիկոդիմոսը, Յովսէփ Արիմաթիացին և այլն, ընդդիմացան այս վճռին և Յիսուսին անմեղ ճանաչեցին։ Ղուկ. իբ. 66։

2.Հրէաները չէին կամենում Յիսուսի քարկոծել, որով հետև իրանց հայրերը մարգարէներին սպանեցին քարկոծելով, իսկ որդիքը այդ քարկոծուածներին սրբացրէին, այլ կամենում էին, անարգ մահով, խաչի վերայ սպանել, որպէսզի նորա մահից յետոյ ոչ ոք նորա չսրբացնէ։ Եւ որով հետև իրանք իրաւունք չունէին սրով և խաչով մէկին սպանանել առանց Հռովմայեցւոց կուսակալի հրամանին, ժամանակ Յիսուսին զինուորներով շրջապատած տարին Պիղատոսի մօտ Մատ. ի. 19. յով Հ. ժը. 24։

3.4.Յուդան կարծում էր թէ Յիսուս թոյլ չի տալ որ իրան չաբաչարեն և սպանեն, այլ հրաշքով անցամ՛ կ ազատէ իրան նրանցից, բայց երբ տեսաւ զինուորներից կապուած, սպասաւորներից կրփահարուած, Աստուածային զուխը արեամբ ներկուած, և մինչև անցամ խաչի դատապարտուած, իմացաւ՝ որ Յիսուս չէ կամենում իրան ազատել, ժամանակ սկսեց զղջալ և ասել.- «Մեղայ զի մատնեցի զարիւն արդար։» Թէև Յուդան այս զղջումով դատանեց Քրիստոսի Աստուածութիւնը, բայց այս դատանութիւնը չօգնեց իրան, վասնզի նա փոխանակ իւր ընութեան տկարութիւնը խոստովանելու և դառնալու դէպի Աստուածային անհուն ողորմութիւնը՝ զղջաց միայն սիրուած Յիսուսի դառն դրութիւնից, ուրեմն՝ եթէ Յիսուս դատապարտուած չլինէր, ինքն էլ չէր զղջ-

ջոյ իւր չարութիւններից։ Այսպէս էլ մեր մէջ գտնվում է այնպիսի մարդիկ, որք միայն զղջումն այն ժամանակ, երբ իրանց սերմնած մեղքերից ծնվում մերկերից թշուառութիւն՝ այնինչ, կարելի է ապաշնորհութիւն և կամ ապականութիւն, իսկ հակառակ դիպուածում անզգոյշն և միևնոյն մեղքի մէջ յամառ։ Բ. կոր. է. 10։

5. Զուրգան այդ արծաթը նախ վերադարձաւ քահանայապետից և իշխանաց Պիղատոսի դրանը, երբ չընդունեցին, տարաւ տաճարը և ղցեց քահանայից տաքերի տակ, այն միջոցում՝ երբ դռան դարձիրին տաճարը իրանց կեղծաւոր ազօթքը անելու համար։ Նոքա այդ արծաթը չընդունեցին գարձանակի մէջ, իբրև տաճարի նուէր և սրբարան ցիսուսի դին՝ ասելով.— «դինը արեան են։» Զուրգան տեսաւ, որ դրանով իւր խիղճը չէ հանգստանում, այլ առաւել այրում է տոչորում իրան՝ վճռեց անձնասպանութիւն գործել, ուստի մի ծառից կախուեց ու խեղդուեցաւ, և ջուրը կամ փայտը, որից կախուած էր կտրուեցաւ և ինքն դլխիվայր ընկնելով՝ միջից ճեղքուեցաւ և բոլոր փորոտիքը դուրս թափուեցաւ։ Զար մարդիկը աշխատում են իրանց չարութեան գործիք եղողներին, այսպիսի ոսոգայթի մէջ ձգելով, կործանելը։ Գործ. ա. 18։

7-10. Այսաղարակ իրանց բարբառով ասուեցաւ Ակեղդամայ՝ այնէ. «ազարակ արեան։» Սա գտնվում է Սիոնի հարաւային կողմում, Սուրբ Հեղինէն պարսպաւ շրջապատեց, թողնելով եօթն տեղից բացուածք, որով կարողանան օտարական քրիստոնէից մարմինները այդտեղ մոցնել և թաղել։ Այժմս էլ գերեզմանատունն է։ Ասում են թէ այս հողը միայնպիսի յատկութիւն ունի, որ 24 ժամու մէջ մեռած մարմինը լուծանում է հողն, բաց իսկրներից։ Այս մարգարէութիւնը դուշակեալ ոչ միայն Երեմիայն, այլ նաև Զաքարիան Եր. լբ. 7-15. զաք. ժ. 10—17։

11. Երբ Ցիսուսին տարին Պիղատոսին ապարանքը իրանք չմտին հեթանոս իշխանի տունը, որպէսզի չպղծուին, վասնորդ և Պիղատոսը դուրս եկաւ դուրսը՝ և ասաց.— «Զինչ չարախօսութիւն մատուցանէք զտանէն զայնմանէ։» Այս հարցման վերայ անզգամութեամբ կատաղած պատասխանեցին.— «Մի թէ մեր Ընդհանրական ժողովը անիրաւէ, որ անմեղներին մատնէ.— Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ։» Պիղատոսը այս անզգամ

պատասխանի վերայ բարկացած՝ ասաց.— Դուք պէտք է օրինաւոր կարգաւ զորա յանցանքը ապացուցանէք, ապա թէ ոչ ես ձեր մի չարագործ ասած բառով, չեմ կարող անմեղին մահի դատապարտել, վասնզի՝ - «Դուք ըստ ձերոց օրինացն դատեցէք» Հրէաները պատասխանեցին.- «Մեր ժողովը կայսրից չունի իրաւունք ոչ ոքի խաչով սպանել, այլ միայն ձեզ է տուած այդ իրաւունքը, ով դատաւոր.- «Մեզ ոչ է արժան սպանանել զոք» Քահանաները և իշխանները տեսին, որ Պիղատոսը նրանցից պահանջում օրինաւոր կարգաւ ապացուցանել մեղադրուածի յանցանքը, զրպարտութիւն հնարելով՝ ասացին.- „Դա արդեօք ի տալոյ զՀարկ կայսեր և ասէր զանձնէ՝ եթէ Քրիստոսն իցէ թագաւոր։ «Այս խօսքի վերայ Պիղատոսը մանուում ներքև Յիսուսի մօտ, որով հետև Յիսուս ապարանքումն էր, և Հարցնում՝ առելով.- «Արդեօք Դու Հրէից թագաւորաց զարմիցն ես, և կամ թէ աշխատումես թագաւորեր» Յիսուս պատասխանում՝ թէ.- «Իմ թագաւորութիւն երկնաւորէ, և ամենևին ինաւէ կայսեր թագաւորութեան» «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհի» Այսպէս Պիղատոսը, Յիսուսի մէջ մի պատժի արժանի մեղք չգտնելով՝ ասաց.- «Զգատանեմ ինչ ինաս յառնս յայսմիկ» Ղուկ. իգ. 2. յովհ. ժբ. 28—39։

Արդարև Քրիստոս կատարեց նաև թագաւորի պաշտօն մեզաց թագաւորութիւնը յաղթելով, մահուան բռնութիւնը յուծանելով, մարդկանց ազգին տիրելով, Տէր և Աստուած Ճանաչուեց երկնաւորներից և երկրաւորներից։ Սաղ.բ.8.եւ.թ.5-8.եր.իգ.5. դանդ.44. դաք. թ.9-17. մատ. իբ.18.եփ. ա.20-23. եբրայ.6-18.ա. պետ. բ. 9-11.յայտ. ա. 4-6. և. 9—10։

12.Պիղատոսը Յիսուսին դուրս բերաւ դուրսը, որպէսզի Յիսուսցոյց տալով իւր արդարութիւնը, ունչացնէ ապստամբներին, բայց նա տեսնելով՝ որ նոցա կատաղութիւնը ծայրահեղութեան է հասել, իր ասածները չեն կարող հասկանալուս համարեցաւ։ Այսպէս էլ պէտք է ասենք մենք, երբ մեր խօսակցութիւնը չէ կարող մեզ համար օգտակար պատճառներ բերել, խօսել և գործը աւելել խոհեմութիւն չէ, իսկ անտեղի և աւելորդ լռութիւնը յիմարութիւն է։

13.14.Պիղատոսը տեսնելով Հրէից այլընդ այլոց ամբաստանու-

թիւնը, որին Յիսուս շատ հեշտութեամբ կարողէր հաստատ փաստերով հերքել, այլ նա այդ չարչարանքները ոչինչ համարելով, հեգ, համեստ և զուարթ դէմքով չէ պատասխանում անգամ, վասնորոյ շատ զարմացաւ Դեռ այս շփոթ դրութեան մէջ վարանուած չէր իմանում թէ ինչ անէ, այդ միջոցում յանեց որ Յիսուս Գալիլեայցին, այդ դժուարութիւնից իրան ազատելու և Հերոդէսին կամքը շահելու համար՝ Յիսուսին այդ դրութեան մէջ ուղարկեց Հերոդէսի մօտ դատելու համար, որ թագաւորում էր Գալիլեայում և այդ օրերում եկածէր Երուսաղէմ Հերոդէսը՝ երբ տեսաւ Յիսուսին, շատ ուրախացաւ, որով հետև լսածէր նորա սքանչելագործութեան համբաւը, և կարծեց թէ իւր մօտ ևս սքանչելիքներ առնելով՝ կ՚լցնէ իւր հետաքրքրութիւնը: Յիսուս նորա մօտ ոչ սքանչելիքներ գործեց և ոչ նորա շողոքորթ խօսքերին պատասխանեց: Եաս անգամ մեր մէջ ևս գտնուումն այնպիսիք, որք լսումեն Աստուծոյ խօսքերը ոչ թէ իրանց վարքը ուղղելու համար, այլ իրանց հետաքրքրութիւնը լցուցանելու: Հերոդէս տեսաւ, որ Յիսուս բոլորովին չէ պատասխանում, իւր շողոքորթ բառերը փոխեց արհամարհական և նախատական խօսքերի, և Հրէից հաճոյանալու համար ի նշան ծաղրածութեան զգեց նորա վերայ սպիտակ շորեր, որ տեսնողները, խելագար ճանաչելով՝ ծիծաղեն: Այս դրութեամբ Հերոդէսը փոխադարձաբար վերադարձրաւ Յիսուսին Պիղատոսի մօտ ի նշան պատուի և սիրոյ՝ ասելով.- «Այս մարդը թէպէտ իմ իշխանութեան տակէ, բայց ըմբռնուած լինելով քո իշխանութեան մէջ, զորա դատաստանը քեզ է պէտք» Այսպէս Յիսուս դարձաւ խաղաղութեան միջնորդ Հերոդէսի և Պիղատոսի մէջ, որ մինչև այդ ժամանակ միմեանց թշնամի էին: Պիղատոսը, Յիսուսին տեսնելով այդ ծաղրական վերաբերութի մէջ, կամեցաւ Հրէից կամայականութեան զիջանել՝ և ասաց.- «Թողաւուցէք սորա, զինուորներիձեռք այդ թեվերով իրատել եւ արձակէր» Հրէաները այս պայմանին ևս չհամաձայնուեցան: Ղուկ. իգ. 6—16:

15.16. Հրէաները Եգիպտոսի ազատութեան յիշատակը պահպանելու համար, պասեքական տօնին մէկ պատժապարտ էին ազատում: Բարաբբայն մի յայտնի աւազակ և մարդասպան էր: Մար. ժե. 7. յովհ. ժը. 40:

17.18. Պիղատոսը դիտեր, որ Յիսուսին մատնելն նախանձութիւնից սարսռած, կարծելով թէ ժողովուրդը, որ նրանից կաչիւրէ շատ բարութիւններ, սքանչելիքներ, մէջ կ՚մտնէ և նոցա ազատութեան համար կ՚աշխատէ, դադրած մի քիչ ուշացրեց՝ և ասաց. «Ձեզ կամիք յերկուց ասա՛ի զի արձակեցից։» Ղուկիս. 17-24։ Պիղատոսը գործի դրութիւնը խմնալով՝ պէտքէր Յիսուսին նոցա ձեռքից ազատելը բայց ինքն փառամոլ և վախկոտ մարդ լինելով, չ՚կարողացաւ նոցա դէմ մի բան անելը, ինքն էլ նոյն իսկ այդ Հրէաների ձեռքը Հռովմայեցւոց կայսրի մատնուեցաւ, որ նա իրան պաշտօնից զրկեց և աքսորեց օտարութիւն, այնպէս որ վերջը ինքն իրան սպանեց։

19. Պիղատոսի կինը այդ գիշեր երազի մէջ տեսաւ մէկ մարդի՝ որ նա մեծամեծ պատիժներով սպառնում էր Պիղատոսին, եթէ նա անմեղ Յիսուսին մահապարտ պէս դատապարտէ։ Այս սպառնալիքը մի քանի անգամ կրկնուեցաւ։ Երբ զարթնեցաւ՝ չ՚կարողացաւ պատմել երազը իւր մարդուն, որով հետև այդպէս չէր։ Այդ միջոցում լսեց, որ Յիսուս նազովրեցւոյն բերին տանում և դատում՝ ուզարկեց իւր սպասաւորներից մէկին, ասել Պիղատոսին բազմութեան առաջի՝ թէ.— Ձ՚կայ ինչ-քս և արդարոյն այնոսիկ, բազում անդամ անցք անցին ընդիս այսօր յանուրջս վասն նորա։ Այս երկու Աստուածային կարդադրութեամբ, որպէս զի Յիսուսի անմեղութիւնը ոչ միայն Պիղատոս, այլ նաև նոցա կինը խմնալով, Հրէից առաջի պատմեն և համոզեն զդէպ և փրկուիլ։ Աստուծոյ թէ Պիղատոսի կինը քանի ժամանակից յետոյ հաւատաց Քրիստոսին Միրաուեց և փրկուեց։

20. 21. Սրանից երևում, որ քահանայութիւնը մեծ ազդեցութիւն ունի ժողովրդի Ցերայ։ Եթէ քահանայք աշխատեն կարող են իրանց յանձնուած հօտը զարգացնել բարոյականութեան, լուսաւորութեան և յաջողակութեան մէջ։ Անտարբերութեան մէջ բնած, շահասիրութեամբ կուրացած քահանայք՝ ժողովրդեան դէպի կորուստն են առաջնորդում։ Վայ այն քահանային, որ իւր յանձնուած ժողովրդին ուղղորդում դէպի խաւարը և մեղքը։

22. 23. Պիղատոսը նորից ասաց.— Հրաւ միայն ազատակու մէջ

խաչելոցի, բայց թէ խաչի արժանի ինչ չարագործութիւն ունի, չէք ապացուցանում։ Պիղատոսը թէև չատ աշխատեց Յիսուսին ազատել, բայց իւր անձնասիրութիւնը եւ փառամոլութիւնը նրա մտքերից դրեց։ Դատաւորները պէտք լինին քաջ, անաչառ եւ արդարամէր։ Դուկ. իզ. 22. 23։

24. Պիղատոսը տեսնելով՝ որ խռովութիւնը սաստկանում է, մինչեւ անգամ կարող է հասնել ապստամբութեան, յարմարած մարդկային երկիւղից, ըստ հրեական սովորութեան, լուանում է ձեռքերը եւ ասում՝ «Անպարտ եմ յարենէ արդարոյդ։» Թէև Պիղատոս, ձեռքերը լուանալով, կարծեց թէ Յիսուսի դատապարտելու յանցանքից ազատուեցաւ, բայց Աստուծոյ արդար դատաստանի առաջեւ ինքն ինչ դատապարտուած։ Բ. օր. իա 6։

25. Այս վճիռը կատարուեցաւ շատ աշխատ եւ սարսափելի կերպով։ Քառասուն տարի չանցած իրանց քաղաքը եւ տաճարը կործանուեցաւ, մէկ միլիոնից աւելի հրէայ ջարդուեցան, հազարներով սովից եւ հիւանդութիւնից մեռան, հազարներով խաչուեցան, եւայլն, եւայլն։ Այսպէս մինչեւ այսօր էլ նոյն անէծքի տակ են։ Մատ. իդ. 21. 22։

26. Հոյսերական օրէնքով դան հարիւնները (ձագկերը) պէտք է լինեն վճռաբերով։ Պիղատոսի ձագկեցման վճիռը գանուածէ Հռով մայեցւոց հին վճռաբերի մէջ՝ այսպէս։ «Յիսուս Նազովրեցի, զայր խռովարար եւ մոլախնական օրէնի քամահող, թիեռն քահանայապետաց եւ իշխանաց ազգին իւրոյ ամբաստանեալ մերկացուցէք, կապեցէք եւ ձագկեցէք, երեսն ի գահիճ պատրաստեալ դնագկիչքն։ Այս վճռից յետոյ մերկացուցին անմեղ զառն Յիսուսին, իբրեւ մի անարգ ծառայի, զգաստաբար քարշելով, հանեցին անկար պատուանդանը, որ կոչած լինելով վերքերից, սկսեց յորդառատ արիւն վազել յետոյ անողորմաբար այնպէս պինդ կապեցին մի մարմարենայ սիւնից, որ կապը թագուեցաւ մսի մէջ։ Սրանից յետոյ զինուորները գազան բաժանուած, շրջապատեցին նորա եւ սկսեցին գազան ծեծել, ոմանք անբեկանելի խարազանաւ, ոմանք մտրակաւ, ոմանք զարդ ձագկաւ, եթէ մի դասը նեղանում էր հարկանելուց՝ նորա յաջորդում էր ուրիշը, եւ այնքան ծեծեցին մինչեւ որ նորա կուրծքը, թի-

կուռքը, բազուկները եւ բոլոր մարմինը արիւն դարձաւ, այնպէս որ նոքա վերայ չմնաց մի այնպիսի մաս, որ ազատ լինէր վերքից։ Արդար է որ մարդկային բնութիւնը այդ սարսափելի տանջանքները կրելուց յետոյ՝ չէր կարող ազատ մնալ մահից, բայց Յիսուս Թոյլ չտուաւ իրան՝ ոչ թէ միայն մեռանիլ, այլ նաեւ երկնչիլ, բարկանալ, տրամիլ, ինչպէս պարտիզումը, որպէսզի արժանանալով նաեւ խաչի չարչարանաց՝ առատապէս վճարէ մեղաց պարտքը։ Այս անխիղճ տանջանքներին ներկայ էր ամենօրհնեալ Կոյսը, որ թէեւ աննկարագրելի տանջանքներով ցաւումը եւ խորովումն, բայց հոգւով չէր վրդովւում, այլ յօժար կամքով նուիրում էր Հօր Աստուծոյ, ինչպէս իւր՝ այնպէս էլ իւր Աստուածորդւոյն ցաւը։ Յովր.գր.15.եւ.3.6.գ.5-8.ե.10.մատ.ե.19.թղ.37։

27.29.Այս վճիռս արուեցաւ դրսումն եւ որով հետեւ վճիռը պէտքէր Հաւով մայեցուց զենուորները կատարէին, վանորոյեւ Յիսուսին շրջապատած մի գունդ զենուորներոյ տարին ներսի մեծ գաւիթը՝ որ չարչարէին Զաղկիոյց յետոյ Ծաղրանելու համար նստայրին մի քարեայ աթոռի վերայ եւ հաղցրին կարմիր քղամիդ։ Սրանից յետոյ փշերի դարար ճիւղերը, պսակի պէս հիւսեցին, եւ երկճղի փայտիւ խփելով, կոխեցին գլուխը՝ այնպէս որ փշերի սուր եւ կարծր ծայրերը ծակեցին մորթն ու միսը, որից առատ արիւն էր թափւում եւ ողողում երեսը եւ աչքերը, եւ թագաւորական գաւազարի տեղ, տուին նոքա ձեռքը եղէգն։ Այսպէս թագաւորացնելով զենուորները, սկսեցին կարգալ նոքա առաջեւ ծունր դնել եւ ասել՝ «Ողջ լեր թագաւոր Հրէից։» Արդարեւ նոքա այսպիսեաւ ծաղրէին անում, բայց միեւնոյն ժամանակ գուշակումէին, որ նակ երկնքի եւ երկրի թագաւորը եւ նոքա առաջեւ պէտք ծունր կրկնէին ամենայն սատիճանաւորներ։ Ֆիլ. բ. 8—12։

30.31.Ոմանք իրանց անօրէն բերանով թքանումէին նոքա Աստուածայնի երեսին, ոմանք ապտակումէին ձեռքիցը եղէգը և ծեծում նոքա գլուխը, ոմանք ապտակումէին եւ հայհոյում, բայց նա մեծ համբերութեամբ եւ արիութեամբ պատերազմումէր առաքինութեան թշնամեաց դէմ։ Ֆիլոսոս լաւ գիտէր զենուորների արած այս չարագործութիւնը, գիտէր եւ Յիսուսի անմեղ լռութիւնը,

վասնորոյ դուրս եկաւ դուրսը՝ եւ ասաց. «Ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ, զի դիտասջիք թէ ես Փիլատոսն ի նմա ոչ գտանեմ։» Այսպէսքիցյետոյ հանեց նոցա առաջ Յիսուսն ոտից մինչեւ գլուխը վիրաւորուած, արեամբ ներկուած, փշեայ պսակաւ եւ ծիրանի քղամիդով զարդարուած՝ եւ ասաց. «Ահա այրդ ցձեզ։» Այս ասելով՝ կամեցաւ շարժել հրէաներին բաւականանալ այդքան տանջանքներով եւ արձակել, որովհետեւ նրանում այլեւս մարդու կերպարանք չէր մնացած, նա արդէն հասած էր մահուան դուռը։ Բայց անգութ քահանայապետները եւ ժողովուրդը ազազակեցին. «Ի խաչ հան, ի խաչ հան զդա։» Մեք օրէնս ունիմք եւ ըստ օրինաց մերոց պարտի մեռանիլ զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար։» Պիղատոսը այս լսելով վախեց կարծելով թէ Յիսուս կարելի է Դիւսի եւ ուրիշ աստուածների որդիներից լինի, վասնորոյ եւ առանձնացրաւ պալատի մէջ՝ եւ ասաց. «Ուստեղից դուս։» Այնէ՞ ուստի որդի ես, կամ ուստիից ես առաջացած։ Յիսուս այս յիմար հարցին չպատասխանեց։ Պիղատոսը մնապարծութեամբ ասաց. «Ոչ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ եւ կամ արձակել։» Յիսուս այժմ պատասխանեց՝ ասելով. «Ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ եւ ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ, վասն այնորիկ որ մատնեացն զիս քեզ՝ նմա մեծ մեղքն։» Պիղատոսը կրկին կամեցաւ արձակել Յիսուսն, բայց հրէաները սկսեցին նաեւ ընդդէմ Պիղատոսի յարատեալ՝ ասելով. «Եթէ զդա արձակես չես բարեկամ կայսեր։» Այս խօսքի վերայ Պիղատոսը խիստ վախեցաւ, վասնորոյ եւ յաւ համարեց, հրէից կամաց համաձայնանիրաւ մի՞ թերեւ ստիպեսցին Յիսուսն զուրս բերաւ դուրսը այդ կերպարանքով և ինքն նստեց դատական դահի վերայ։ Հրէաները երբ տեսին Յիսուսն, կրկին աղաղակեցին. «Բարձ իմինք և հան զդա խաչ։» Պիղատոսը պատասխանեց. «Զուցէ սակ ձեր Թագաւոր, Մեսիան, մի՞թէ զուք կամենուք, որ ես ձեր Թագաւորը խաչ հանեմ։» Նոքա բացարձակ ուրանալով իրանց Մեսիային՝ ասացին. «Չիք մեր Թագաւոր բաց ի կայսերէ։» Այս լսելից յետոյ Պիղատոսը հրամայեց ատենադպրին գրել դատապարտութեան մի՞թիրը՝ և գրուեցաւ այսպէս. «Յիսուս Նազովրեցի կործանիչ ազգին, քամահող կայսերին, և սուտ

Մեսիայ, որպէս վկայութեամբ մեծամեծաց ազգին իւրոյ հաստատեաց, տարեայ լիցի առ տեղին հասարակ պատժոց, և հանդերձ այսպնմամբ աղբայականի մեծութեան իմՀ երկուց աւազակաց խաչեսցի։ Ուստի դահիճն պարտաւորեսցէ զնայնս։ Այս վճիռս հանուաձէ Հռովմայեցւոց թագաւորութեան վճիռներին հին մատեանից։ Այս ամենից յետոյ հանեցին Յիսուսից քղամիդը և կրկին հագցրին իւր հանդերձը և տարան որ խաչեն։ Փոգհարները և զինուորները ածուին իրանց փոգերը՝ որ ամենքը իմանան թէ Քրիստոսին տանու

45.Եւ ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցիւն ժամ։
46.Եւ զիւն ժամուն կոչեաց Յիսուս ի ձայնմեծ եւ ասէ. Էլի՝ էլի՝ լամասաբաքթանի. այսինքն է. Աստուածիմ Աստուած իմ ընդէր թողեր զիս։
47.Ոմանք յայնցանէ որ անդր կային, իբեւ լուան՝ ասէին. զնդիա կարգայ զսա։
48.Եւ վազվազակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ՝ առ սպունգ ի քացախով, հարեալ ի եղէգան եւ ըմպել նմա։
49.Եւ միւսքն ասէին. թող տեսցուք եթէ գայ Եղիա փրկել զդա։
50. Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ՝ եւ արձակեաց զհոգին։

32. Խաչափայտը շատ ծանր էր՝ այնպէս որ միայն նորա հաստ բունը ուներ 15 ոտնաչափ երկայնութիւն և խոտորնակը 8 ոտնաչափ, վասնորոյ ուսերի վերայ տանելը անկարելի էր Հրէաները քաղաքի մէջ խաչին վերի ծայրը գրին Յիսուսի ուսերին, որ ինքը քաշելով տանէ իւր խաչը, և երբ քաղաքիցը դուրս եկին, նկատեցին՝ որ Յիսուս շատ նուազուած լինելով, չէր կարողանում տանել, այլ շատ անգամ վայր էր ընկնում, և վերերը պատառոտելով, ճանապարհը արիւնով էրսոռգանում, վախեցինք լինի թէ ճանապարհին մեռանի, և իրանք չ՝կարողանան կենդանի ժամանակը խաչի, վասնորոյ և որոնեցին մէկին՝ որ տանէ այդ խաչը, բայց ոչ ոք չ՝համաձայնուեց տանել մահուան գոծիքը և վատահամբաւ լինելը Այս միջոցում պատահեցին Կիւրենացի Սիմոնին, որ գալիս էր ազարակից՝ Կիւրենէ՝ Ափրիկէի մէջ Լիբէայի մէկ քաղաքն է։ Եգիպտոսի արևմտեան կողմում՝ բնակուում էին շատ Հրէաներ, որք միւս Հրէաների նման միշտ գնում էին Երուսաղէմ։ Սա պանդուխտ և օտարազգի մարդէր, որա բռնադատեցին վերառնել խաչափայտը և տանել մինչև Գողգոթայ։ ԱսՀակ՝ նշանակում՝ բռնանալ Սա թէև գիտէր, որ խաչ բառնալը նախատինք է, բայց տեսնելով Յիսուսի դրութիւնը, շարժուած խղճից կամեցաւ մասամբ իւրք օգնել անմեղ Դատի, վասնորոյ վերառաւ խաչը և գընաց։ Սա հաւատաց Քրիստոսին և Գողգոթայ հետ շրջելով, առաւնաև չարչարանաց խաչը և Քրիստոս քարոզեց։ Սա վախճանուեցաւ Երուսաղէմում իւր ծերութեան մէջ։ Սորա որդիքն են Աղեքսանդրիան և Ռուփան, որք Մարկոս աւետարանչի ժամանակից

էին և իրանք շատ երևելի քարոզիչներ։ Աուփան Խսայանիայի մէկ զաւառի մէջ Եպիսկոպոս դարձաւ, իսկ Ադէքսանդրոսը և իւր միւս եղբայրը դարձան Հռչակաւոր մարտիրոսներ։ Յիսուսի այս դառնագէտ և անսանելի դրութիւնը տեսնելով՝ կանայք սկսեցին այնպէս բարձր ազաղակով ողբալ, որ ձայները խափանուեցին փոդերի ձայներին։ Յիսուս, դառնալով նոցա՝ ասաց։ «Դստերք Երուսաղէմի մի լայք ՝ի վերայ իմ, այլ լացէք ՝ի վերայ անձանց և ՝ի վերայ որդւոց ձերոց։ Եթէ ընդ փայտս դալար զայս առնեն ընդ չորն զինչ լինիցի։» Այնէ. եթէ ես դալար փայտի պէս անմեղս այսքան վշտերով պրու�մեմ, ապա որքան առաւել դու, օվ Երուսաղէմ, որ մեղքերի կրակով չորացել ես և պատրաստուել տանջանաց կրակի մէջ պրուելու։ Ասումն թէ՝ այս լացող կանանց մէջ էր նաև այն տեսատես կինը, որ բժշկուեց Յիսուսից։ Մարկ. 21. զուկ. իդ. 21-32. յովհ. ԺԹ. 17։

33. Գողգոթայ՝ թարգմանուումէ տեղի Կառափոյ։ Գլխի վերի մասը սաւուէ Կառափ կամ Գանգ Սուրբ Հայրերը ասումն թէ՝ Նոյը իւր մօտ ունեցած է Ադամայ ոսկորներից, և երբ իւր որդւոց մէջ բաժանեց՝ Ադամայ Կառափը ընկաւ Սեմայ բաժինը, ուստի էլ տուաւ իւր որդւոց, վերջապէս այնպէս պատահեց, որ այդ Կառափը մեծապատուով թագեցին այդտեղ և անուանեցին Գողգոթայ նաև ժամանակից յետոյ՝ երբ պրաղդիները տիրեցին Երուսաղէմին, տեսին՝ որ այդտեղ այդպիսի տեղն ունի, սկսեցին գլխատաւածների կառափները այդտեղ թագեր Այսպէս այստեղ Համարուեցաւ անարգ տեղ՝ միայն գողերի և աւազակների կառափների վերաբերմամբ և ոչ Ադամայ։ Այսպէս փրկիչը իւր խաչի սեղանը կանգնացրաւ Գողգոթայի վերայ և պատարագուեց մարդկանց ազգի փրկութեան համար։ Ղուկ. իդ. 33. եր. Ժդ. 10-14։

34. Հնումը սովորութիւն էր՝ որ բարեպաշտ կանայք պատրաստուումէին պատժատարտանքերի համար, զմեսով և կամ ՀԵՐՄՆԻՐԹերից կազմած շատ զարդ զինի՝ որ դրանով փոքր ինչ զօրացած, կարողանան աւել խաչի վերայ։ Անօրէնները Յիսուսին տուին լեղւով խառնած քացախ, բայց նա միայն համը առաւ և չ՝խմեց, որպէս զի քաշած չարչարանքները զգալի լինի։ Մատ. կը. 21. մարկ. ժե. 23։

35. 36. Անօրէնները՝ երբ անմեղ Դաւն Յիսուսին տարած եղին խաչափայտի վերայ, ինքն սիրով և յօժարութեամբ արձակեց իւր բազուկները խաչելու համար։ Նոքա առանց ամաչելու և խղճահարութեան բեռեցին նախ նորա ձեռները իւրաքանչիւրի մէջ մի երկաթեայ հաստ բեռեռ խփելով՝ և ապա երկու ոտները միմեանց վերայ դրած, մի հաստ նոյնպէս հաստ բեռեռով պնդացրին, որպէս զի մարմինը կարողանայ առանց վայր ընկնելու հաստատ մնալ խաչի վերայ, և ապա բարձրացրին խաչափայտը և հողի մէջ պնդացրին։ Այսպէս փառաց Թագաւորը փշեայ պսակաւ բեռեռուեցաւ՝ ցուցանելու համար, որ արդարութեան Թագաւորութիւնը հաստատուած է հաւատարմանաց, յարաբերանաց և անձնազոհութեան փշեայ պսակաւ։ Մերկ բեռեռուեցաւ՝ ցուցանելու համար, որ երանելիան փառքը ժառանգելու համար, պէտք է մերկանալ հին մարդը և զգենուլ նորը։ Խաչելից յետոյ ըստ սովորութեան, խաչուած է հանդերձները բաժանեցին չորս զինուորների մէջ։ Վերարկուն, երկայն բաջկոնը, որ «ապայ» էաւուտ, չորս հաւասար կտոր արին, իսկ պատմուճանը, որին Տիրամայրը հիւսել էր իւր ձեռքով՝ բոլորովին առանց կարանի՝ ի վերուստ փորանկեալ ամենեին, և Յիսուս հագնուէր իւր մերկ մարմնոյ վերայ, սորա չ՚կոտրեցին, որպէս զի չ՚քակուի և ընչանայ, այլ ամբողջապէս ի ֆնձակ զգեցին։ Զինուորները պահուէին, որ բարեկամները չ՚գան ի երառնեն և ազատեն։ Սաղ. իբ. 18. եւ. Յգ. 12։

37. 38. Սովորութիւն էր, որ յայտնի յանցաւորների մեղքը մի տախտակի վերայ գրած կպցնուէին խաչի ճակատիդ։ Նոքա փոխանակ գրելու «Սա ասաց Թագաւոր եմ Հրէից» Գրեցին Յուդայեցի, Դաղմատերէն (Լատիներէն) և Եբրայեցերէն, այսպէս.— «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից» Հրէաները թէև այս բանի վերայ կատաղեցին և խնդրեցին Պիղատոսից փոխել այս գրուածքը, բայց նա բարկացած լինելով՝ նրանց չարութեան վերայ, ասաց.— «Զոր ինչ գրեցի գրեցի»։ Այսպէս Պիղատոսը սխալմամբ գրել տուաւ մի յայտնի ճշմարտութիւն՝ այնէ. որ Քրիստոսն է յաւիտենական Թագաւոր իւր եկեղեցու մէջ։ Հրէաները կամենալով Յիսուսին առաւել խայտառակել, իբրև աւազակապետ, երկու աւազակների մէջ խաչեցին, բայց Յիսուս խաչի արքայական

զահի վերայ բազմած, իբրև վերջին դատաստանի՝ աջակողմեանին մեղրաւ կեանքը, իսկ ձախակողմեանին դժոխքը։ Եւ. Յոհ. 12. մաթ. Ժե. 28. յով հ. ԺԹ. 17—25։

39-41. Որով հետև քաղաքից մօտ Ճանապարհի վերայ էին կատարում այս չարագործութիւնները, ժամանորոյ և անցեղորները շատ էին, թաքչ չարչարանքից աւելի ծանր էր ծաղրածութիւնը և հայհոյանքը։ Մարդը կարող է շատ բան առնել, բայց պէտք է առնել այն՝ որ յարմար է ըստ տեղոյն, ըստ ժամանակին, ըստ անձին և ծառայութեան ազնիւ նպատակի։ Մարդս պէտք է լինի համբերող, բայց հարկաւոր է իմանալ ժամանակը, հանգամանքը։ Մարդս պէտք է լինի պատեբաղմոդ, բայց հարկաւոր է իմանալ ժամանակը, հանգամանքը։ Մարդս պէտք է լինի անձնազոհ, բայց հարկաւոր է իմանալ ժամանակը, հանգամանքը և այլն։ Սաղ. իսա. 8. կը. 28. Եւ. ա. 4. մատ. իգ. 61. յով հ. ԺԹ. 20։

42. 43. Այս սուտ էին ասում, որով հետև Նաբա գիտէին՝ որ Ցիսուս շատ հրաշքներ էր գործել, բայց իրանք չէին հաւատացած, ինչպէս էլ չէհաւատացին յարութեան, որ շատ մեծ աբսնելիք էր քան թաքչ իջեալը։ Արդարև Աստուած միշտ փրկում անմեղներին և նրանց օրենց յոյսը իւր վերայ է, բայց այս անում է ոչ որպէս գրաւուած մարդկանց կամքից և արտաւոր, այլ իւր կամաց ազատ ընտրութեան համաձայն, ուստի կամենայ կ՝փրկէ և ուզ չի կամենալ չէ փրկիր, որպէս զի առուել արդիւնաւորութեան։ Աստուծոյ կամքը միշտ բարի է։ Սաղ. իսա. հը. գլ. առ. գ. 12. իսաաա. բ. 16—23. մատ. ժա. 47։

44. Աւետարանչի նպատակը այսէ թէ Ջրխառոս ոչ միայն իշխանութիւնից, քահանայապետներից, այլ նաև աւազակներից կրեց նախատինք և Հայհոյանք, այս իսկ պատճառաւ Մատթէոսը մի աւազակի տեղ դնում է աւազակներ, ինչպէս Դաւիթը դնում է հազարների տեղ յոգնակի - Ցինաւորքն մատուցանեն ինձ քաջալերանք։ Մատուցանողը մէկն էր և ոչ թէ շատ Դաւիթ. իգ. 36. 40։

Երբ աջակողմեան աւազակը թեց ձախակողմեանի այդ հայհոյութիւնը, այլ ևս չկարաց համբերել և ասաց.— «Ձերկնչիս դու յԱստուծոյ, զի՝ ի նմին պատժի կաս։ Եւ մեք յիրաւի զի արժանի, որոց գործեցաքն առնումք զկատուցուն, սա ապիրատ

ինչ ոչ գործեաց։» Այսպէս հրապարակաւ խոստովանելով իւր մեղքի արժանաւոր պատիժը, դաւանեց Յիսուսին տէր կենդանեաց և մեռելոց, և անելիկմիտ յուսով դիմեց նորա ողորմութեան՝ ասելով.— «Յիշեա զիս տէր յորժամ գայցես արքայութեամբ քով։» Յիսուս նորա պատասխանեց.— «Արով հեաւ դու ինդրեցիր ինձանից միայն քեզ յիշել իմ փառաւոր գալստեան ժամանակ, այժմեաս հաստատ ասումեմ որ այսօր երեք ժամից յետոյ՝ ինձ հետ կլինիս յաւիտեանական երանութեան մէջ։» Յաւիտեանական երանութիւնը իւր մեծ փափկութեան համար՝ ասումէ «դրախտ» Այդ օրդ Քրիստոսի հոգին՝ որ անբաժան էր Աստուածութիւնից, գնաց դժոխքը, ուր էին բոլոր մեռեալ մարդոց հոգիքը։ Քրիստոս այդտեղ երեք օր քարոզեց իւր գալուստը, արդար հոգիները իսկոյն հաւատացին, դժոխքը նոցա համար քանդուեցաւ, և նոքա մտին երանութիւնը։ Հաւատացող աւազակի հոգին էլ արժանացաւ երանութեան, վասն զի ուր է Աստուածային էութիւնը՝ այնտեղ է նաև երանութիւնը։ Իսկ անդարձ մեղաւորները յանդիմանուած Յիսուսից մնացին դժոխքի մէջ։ Մատ. է. 25. 26. իր. 23-31։

Ամենք ասումեն, որով հեաւ Քրիստոսի դէմքը դէպ 'ի արևմուտն էր և աւազակը նորա աջակողմում, երբ Յիսուսի մատնիչ ստուերն ընկաւ աւազակի վերայ, իսկոյն բժշկուեց նորա հոգին, ինչպէս Պետրոսի ստուերն բժշկեց հիւանդներին։ Այսպէս այս աւազակը միանգամ տեսնելով Յիսուսին խաչի վերայ ասումէ.— «Հայր թող սոցա,» հաւատաց, նորոգուեցաւ և եղև մարարիոս, առաքեալ և քարոզիչ, իսկ մենք ամենայն ժամ պատարագումենք, հաւատով տեսնում՝ նորա, բայց չենք նորոգուում, վասն զի մեր գործքերը բարի չեն։ «Տեսեր զ'նա և 'ի խաչին ոչ մոռանայ զարհիսան իւրոյ աւազակութեան, զի 'ի ձեռն մեծի և զօրեղի խոստովանութեան հաւատոյն յարփշտակէ և զդրախտն։» Ոսկերերան։ Սաղ. հէ. 11. գոր. է. 15։

Խաչի մօտ էին Տիրամայրը, Կղէոպպիկ ին Մարիամը, Մարիամ Մագդաղենացին և Սուրբ Յով հաննէսը։ Յիսուս տեսնելով իւր մօր դառնակսկիծ վիշտը և զրեթէ մոռանալով իւր անտանելի չարչարանքը՝ սկսեց սիրալիր բանիւ Տիրամօր աւելի պատուելու և մխիթարելու համար՝ ակնարկել դէպի Յով հաննէսը և ասել, ոչ

թէ մայր, այլ «Ելի դու ահա որդիդ քո,» և ապա դառնալով դէպի աշակերտը՝ ասաց.— «Ահա մայր քո։» Սրանից յետոյ Յով հանէսը տարաւ Տիրամօր իւր տունը, և պահեց նորա իւր հոգացողութեան տակ։ Երբ հասաւ վախճանմեայ հատակը մեծ ուրբաթութեամբ պատրաստուելիք դէպի մահ։ Մեռնելուց առաջ կամեցաւ տեսնել առաքեալներին, որոնք ցրուած էին զանազան երկիրներումն Աստուած կարգադրեց այնպէս, որ նորա բոլորը նորա մահուան օրը հաւաքուեցան նորա մօտ, բացի Բարթուղիմէոսից։ Նորա տեսան նորա երանական վախճանը, տեսան՝ թէ ինչպէս երեւեցաւ Քրիստոս Հրեշտակներով շրջապատուած և վերուստ նորա առնամաքուլ հոգին և վերացրաւ երկինքը։ Առաքեալները վառուած լայտերներով և սաղմոսերգութեամբ տարան Աստուածածնայ մարմինը Գեթսեմանիա՝ և այնտեղ մեկ այրի մէջ ամփոփեցին նորա թագման երրորդ օրը Բարթուղիմէոսը եկաւ։ Երբ տեսնէ, և խնդրեց բանալ այրին՝ ուր ամփոփուած էր Աստուածածնայ մարմինը և համբուրել նորա, բայց այստեղ ոչինչ չգտին՝ բաց՝ ի զգեստից։ Աստուած նորա յարութիւն էր տուել մեռեալների միջից։ Այս ոտնս մենք միշտ յիշատակումենք Յգոստոսի 15-ին մեռ հանդիպած Կիւրակէ օրը և այս ոտնախմբութիւնը մեր եկեղեցին կատարումի ինն օր։ Սրանից երևումէ՝ որ Յովսէփ Աստուածաշնչը այդ միջոցում վախճանուած էր և չունէր ուրիշ որդիք, որով հետև կոյս էր, փոխն ի եթէ նա որդիներ ունենար՝ անկարելի էր նոցա թողել իրանց երանական մայրը ուրիշների հոգացողութեան տակ։ Ցիսուս ինքն էլ չէր յանձնել իւր մօրը Յով հաննիսին, որով հետև մեծ ամօթ և նախատինք կ'լինէր՝ այն կարծելու համար, որը ասումեն թէ՝ ծնուած են Յովսէփի ուրիշ կնոջից։ Այսպէս՝ կոյս մայրը կոյս աշակերտին յանձնելով, կամենում կուսածին որդու կարօտը, կոյս որդեգրաւ լրացնել։ Յովհաննիսին որդեդիր նշանակելով իւր Աստուածածնայ՝ ապացուցանում է, որ ամենայն հաւատացեալք որդեդիրներն երանական մօր, փոխարէն և սրանով ամենայն հաւատացեալների հրամայում Տիրամօրը, միշտ իրանց մայր ճանաչելով՝ նորա ծառայել, յարգել և բարեխօսութեան դիմելով, ազատուել աշխարհական մեղքերից և փորձութիւններից և արժանանալ մեծամեծ բարիքներին։ Առ. լա. 10. յով հ. ժթ. 26. 27.

45. Այդ ժամանակ արեգակը ծագելուց մինչև երեք ժամ՝ աւուրմէր. առաւօտ (Այժմեան 9-երրորդ ժամը) Սրանից յետոյ հեռանալ երեք ժամ՝ աւուրմէր երրորդ ժամ (Այժմեան 12-սը) Սրանից յետոյ մինչև երեք ժամը՝ աւուրմէր վեցերորդ ժամ (Այժմեան 3-ը) իսկ մնացեալ երեք ժամը (Այժմեան 6-ը) աւուրմէր իններորդ ժամ, որին հիանալուն գիշերը Քրիստոս կէսօրից մօտ խաչի վերայ բեւեռուեցաւ, կէսօրին՝ այնէ. վեցերորդ ժամի սկզբում, սկսեց բոլոր լուսաւորաց խաւարումն, (արեգական, լուսնի և աստեղաց) և անց երեք ժամ Լուսաւորաց այս խաւարումն բնական չէր, այլ գերբնական էր. վասն զի, ինչպէս բնական դիտութիւնը ասվորեցնում է, արեգական խաւարումն միշտ պէտք է պատահէ Լուսնի ծննդեան ժամանակ, իսկ Լուսնի խաւարումն իւր լրման ժամանակ։ Այս խաւարմունքս պատահեցաւ Լուսնի լրման ժամանակ, վասնզի և Պիոնէսիոս Արիսպագացի ասողբաշխ փիլիսոփայն Եգիպտոսի մէջ զարմանալով՝ ասաց.- Կամ անծանօթն Աստուածն բնութեան չարչարի և կամ շինուածն աշխարհիս քայքայի։ Այսպէս երկինքը և երկիրը սուգ առին, երբ տեսին իրանց Տէրը խաչի վերայ բեւեռուած։ Մատ. ժդ. 25. մարկ. ժե. 25։

46. 47. Յիսուս մեծ ձայնիւ գոչելով՝ ցոյց է տալիս, որ արիութեամբ պատերազմից մեղքերի դէմ և իւր վերջերով մեզ բժշկեց, վասնզի, իբրև անուշահոտ ողջակէզ, նուիրեալ իրան Հօր Աստուծոյ կամքին։ Հեթանոս գրնուորները՝ որք չէին իմանում Եբրայական լեզուն, Յիսուսից լսելով էլի էլի՝ կարծեցին թէ Եղիային օգնութիւն է կոչում, որով հիանալ նոքա Հրէաներից լսածէին, որ Եղիան պէտք է գայ Մեսիային խաչից ազատէ և խաչողներին էլ վրէժխնդիր լինի։ Նս. ծգ. 5. հռ. ը. 35։

48. Յով հանենէսը ասու մէ.- Զիրատաց Յիսուս եթէ ամենայն ինչ կատարեալ է, ասէ Ծարաւի եմ՝ անդ կայր ասման ինչ լի քացախով ընդ լեզուս շուրջ եդեալ զմշտկաւ զոպպի, մատուցին ի բերան նորա։ Եղէգն այսոքով պէտք է հասկանալ երկար կոթեր ունեցող բոյսեր Զոպան՝ ասում նաև ծոթրին, սա մի տեսակ բոյս է, որ ունի երկար կոթեր, մանաւանդ Պաղեստինում բուսածները։ Այս զոպաները միասին կապելով, շինում էին մի փունջ, որ ասում էր

Մշտիկ և զրանով սրսկումէին զոհերի արիւնը և կամ Ջուր։ Ղևտ. ժդ. 6. յով. Հ. ժԹ. 28. 29։

Քրիստոս՝ երբ սասարկ տանջանքից բնականաբար ծարաւեցաւ, կամեցաւ գոնէ փոքր ինչ զովացնել իւր ծարաւը ջրով՝ ասաց.- «Ծարաւի եմ» Նոքա փոխանակ ջրի, ոչ թէ զովացնող գինի տուին, այլ մի սպունգ լցրած լեղախառն քացախով՝ կոխեցին զոպանների շինած փնջի գլուխը, և փնջի մէջ մտցրին մի հատ եղէգն՝ (Ղամիշ) և ապա բարձրացնելով, մօտեցրին Յիսուսի ամենասուրբ բերանին, որպէս զի լեղու դառնութիւնից առաւել ևս չարչարուի, որով և կատարուեցաւ մարգարէից բոլոր գրուածքը։ Մատ. իէ. 34. գուսի. իդ. 36։

49. 50. Այս խօսքը ասացին ծաղրածութեան համար։ Աւանդել՝ նշանակում մի բան տալ ուրիշին պահելու համար, որպէս զի ժամանակին կրկին վերադարձնէ իրան։ Այժմ Յիսուս իւր ազատ իշխանութեամբ բարձր ձայնիւ մահին զոչելով՝ աւանդում իւր Հոգին Հօր Աստուծոյ ձեռքը, որպէս զի մինչև երեք օրը կրկին ստանայ։ Խնարհացնելով գլուխը՝ գրեթէ ասում.- «Ո՛վ Հայր, ահա կատարեցի իմ ամենայն պաշտօնս և այն դեսպանութեան գործը, որ յանձնեցիր ինձ, ուստի տուր հրաման դառնալ դէպի քեզ։» Փրկիչը խաչի վերայ մեռանելով՝ ցոյց է տալիս, որ աշխարհիս մէջ չկայ մի ուրիշ անարգ և նախատական մահ քան խաչը։ Այսպէս՝ անմեղ և անարատ Յիսուսը, երաշխաւոր լինելով մարդկային մեղաւոր բնութեան, նորա դատապարտութեան պատիժը իւր վերայ առաւ, չարչարեցաւ, խաչեցաւ և մեռաւ, որով և մարդկութեան արժանացրաւ ոչ թէ երկրային, այլ երկնային զրախտին։ Ուրեմն Յիսուսի չարչարանքը և մահը ունեցան անհուն արժանաւորութիւն և մեծ նշանակութիւն, քան մարդկային մեղքը։ Յիսուս խաչի վերայ եօթն բան խօսեց։- ա.) Հայր թող սոցա։ բ.) Այսօր ընդիս եցես՝ ի դրախտին։ գ) Կին դու ահա որդի քո։ դ.) Էլիէլի լամա սաբաքթանի։ ե.) Ծարաւի եմ։ զ.) Ամենայն ինչ կատարեալ է։ է.) Հայր՝ ի ձեռն քո աւանդեմ զհոգի իմ։ Դան. թ. 25—27. բ. օր. 23. յով. Հ. ժԹ. 30. գործ. բ. 24։

Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք
Եւ զՍուրբ զարչարանսդ քո մեծացուցանեմք
Եւ զՍուրբ զիսչելութիւնդ քո փառաւորեմք։

Եկայք հաւատացեալք՝ երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ, փասն զի նա եկն՝ ի ձեռն խաչի իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի։ Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ՝ որ խաչեցար փասն մեր ողորմեաց մեզ։ Շարական։

51. Եւ ահա վարագոյր տաճարին ցեղաւ ի ներքուս՝ ի վերուստ մինչև՝ ի վայր, և երկիր շարժեցաւ, և վէմք պատռեցան։
52. Եւ գերեզմանք բացան, և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան։
53. Եւ երեալ՝ ի գերեզմանաց յետ յարութեան նորա, մտին՝ ի քաղաքն Սուրբ և երևեցան բազմաց։
54. Իսկ հարիւրապետն՝ և որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժումն և զերկրաշարժ, երկեան յոյժ և ասեն. Արդարև Աստուծոյ Որդի էր սա։
55. Էին անդ կանայք բազումք, կային՝ ի հեռաստանէ՝ և հայէին, որք եկին զկին Յիսուսի՝ ի Գալիլեէ պաշտել զնա։
56. Յորս էր Մարիամ Մագդալենացի՝ և Մարիամ Յակոբայ՝ և Յովսեայ մայր, և մայր որդւոցն Զեբեդեայ։
57. Եւ իբրև երեկոյ եղև, եկն այր մի մեծատուն յԱրիմաթեայ՝ որում անունն էր Յովսէփ, որ և աշակերտեցաւ իսկ Յիսուսի։
58. Սա մատուցեալ առ Պիղատոս, խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պիղատոս հրամայեաց տալ զմարմինն։
59. Եւ առեալ զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք։
60. Եւ եդ՝ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց՝ ի վէմի. և թաւալեցուցեալ կափարիչ զքանզգերեզմանին վէմ մի մեծ՝ գնաց։
61. Անդ էր Մարիամ Մագդալենացի՝ և միւս Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին։
62. Եւ՝ ի վաղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողով եղան քահանայապետքն և փարիսեցիքն առ Պիղատոս։
63. Եւ ասեն. Տէր յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝ մինչ կենդանին էր, թէ յետ երից աւուրց յառնեմ։
64. Արդ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա, և ասիցեն ժողովրդեանն թէ յարեաւ՝ ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն։
65. Ասէ ցնոսա Պիղատոս, ունիք զզօրականս, երթայք զգուշացարուք որպէս և գիտէք։
66. Եւ նոքա երթեալ զգուշացան զերեզմանին, և կնքեցին զվէմն հանդերձ զզօրականօքն։

51. Վարագոյր պատառուելը նշանակում է հին օրէնքի բոլորովին դադարելը։ Թիւռ սատակի երկրաշարժութիւն եղաւ ընդհանուր երկրագնդի վերայ, այնպէս՝ որ շատ տեղեր քարերը պատառուեցան։ Այսպէս երկինքը և երկիրը, տեսնելով իրանց Արարչի անարգական մահը՝ սարսափեցան և կամեցան վրէժխնդիր լինել սպանողների դէմ։ Մատ. ե. 39։

52. 53. Այս ամենից յետոյ շատ սրբերի գերեզմաններ բացուեցան և մեռցին բացուած մինչև Քրիստոսի յարութիւնն օրը։ Քրիստոսի յարութիւնից յետոյ դարձ ևս յարութիւն առան, մրտին Երուսաղէմ և շատերին երևեցան։ Այս յարութիւն առնող սրբերի մէջ կային ոչ թէ միայն հին, այլ նաև նոր մեռածներ, ինչպէս էր Յով հաննու Հայր Զաքարիան, Սիմէօն Ծերունու որդիքը, որոնց շատ մարդիկ ճանաչեցին։ Սոցա մարմինները դարձեալ մեռան, իսկ հոգիները մեռցին Քրիստոսի հետ։ Ամենք ասում են թէ՝ փառաւորուած մարմնով Քրիստոսի հետ մասնակցութիւնը, ըստ սրբոյն Եփրեմի, Օգոստինոսի և Թոմասի։ Այսպէս Քրիստոսի արդիւնքով միայն՝ կարողենք ապաշխարութեան և բարեգործութեան ձեռքը, մանել յաւիտենականութիւնը և ոչ թէ լոկ մեր բարեգործութեան և ապաշխարութեան ձեռքը։ Մատ. իէ. 44. ա. պետ. գ. 19. ա. կոր. ժե. 20. 44. եբր. ժ. 39. կոլ. ա. 18։

54. Այս հարիւրապետը Ղուսկիանոսնէր, որ հաւատաց Քրիստոսի և Կապադովկիայում արժանացաւ մարտիրոսական պսակին։ Այսպէս էլ հաւատացին հեթանոս զինուորները և շատ հրէաներ, որք տեսնելով այդքանչելիքները՝ բաղխուեցին իրանց կուրծքը և փախչելով հեռանում այդտեղից։ Ղուկ. իդ. 48։

Որով հետև խաչուած անձնը Հրէից մէջ անիծուածէր համարուում և հետևեալ օրը Մեծ Շաբաթն էր, վասնզի դրա վրա գցին մահացնել խաչուածներին՝ խորտակելով նոցա բարձերը, որպէսզի չ՚մնայ հետևեալ օրը, այլ արևգական լուսով կարողանան թաղել նոցա, որ ոչ շաբաթը պղծուի և ոչ նոցա մարմինը ներխուելով, հոտը տարածուի օդի մէջ և երկիրը պղծուի, իբրև անիծուած և զարշ մարմնու հոտ։ Զինուորները Պիղատոսի հրամանաւ խորտակեցին երկու աւազակների բարձերը, բայց Յիսուսինը չ՚խորտակեցին, որով հետև նա արդէն մեռածէր։ Պիղատոսը՝ երբ լսեց նորա մահը, շատ զարմացաւ, որով հետև տեսնելով Յի-

սուսի քաջասրտութիւնը, կարծումէր՝ որ նա աւելի լաւիտի դիմանայ խաչի չարչարանաց՝ քան միւս աւազակները, վասնորոյ հրամայեց Զունկիանոս հարիւրապետին, որ միականի մարդ էր, ստուգել Յիսուսի մահը։ Սա տեղով խոցեց Յիսուսի աջակողմեան կողը, որից իսկոյն բղխուեց արիւն և ջուր, և այնպէս մեծ վէրք բացաւ, որ կարողէր մարդու ձեռք մտնել՝ այդ միջոցում Յիսուսի արեան կաթիլներից մէկն դիպաւ հարիւրապետի կոյս աչքին և իսկոյն բժշկուեցաւ։ Յիսուսի կողից արիւն և ջուր բղխելուն համար՝ բաւական հակաճառութիւններ կան, ոմանք ջուրը ընդունում են իբրև մկրտութեան խորհուրդ, իսկ արիւնը՝ հաղորդութեան, ոմանք արիւնը և ջուրը միասին միայն հաղորդութեան խորհուրդ ընդունելով՝ խառնումն խորհրդի մէջ նաև ջուր։ Սարա համար հակաճառութիւնները բաց թողնելով, պէտք է հասկանալ այսպէս։ Քրիստոսի կողի ջուրը և արիւնը գոյութեամբ սահմանափակուած չեն, որպէսզի՝ ջուրը կարող միայն լուանալ և սրբել, իսկ արբուցանել, յագեցուցանել և լուսաւորել չէ կարող, այսպէս էլ արիւնը՝ որպէս թէ, կարող է միայն արբուցանել, իսկ լուանալ և լուսաւորել չէ կարող։ Ճշմարիտ ասած, Քրիստոսի կողի թէ արիւնը և թէ ջուրը միաբերպ կարողեն արբուցանել, լուանալ և պտղաբերել, վասնորոյ զոցա ոչ թէ միայն պէտք է ընդունել խորհուրդ մկրտութեան և հաղորդութեան, այլ ամբողջ եօթն խորհուրդ եկեղեցու, զան զի՝ ինչպէս Ադամայ կողից կազմակերպուեցաւ կին նայլ մարմնոյ, այնպէս էլ Յիսուսի կողից կազմակերպուեցաւ հարսն Յիսուսի, եկեղեցու մարմնոյ։ Մկրտութեամբն ծնանի, զրօշմիւն զօրանայ, հաղորդութեամբն սնանի, ապաշխարութեամբն առողջանայ, օծմամբն ամրանայ, կարգաւն կառաւարի և պտղաւն աճի։ Զուրն՝ ի լուացումն աւազանին, արիւնն՝ ի յիշատակումն՝ ի բաժակին։ Նեսորէական։ Բ. օր. իս. 23. եղ. խէ. 1. յով. Հ. ժգ. 6. ժԹ. 31. ի. 27։

55. 56. Մարիամ Մագդաղենացին այն կինն էր, որից Յիսուս եօթն դև հանեց։ Մարիամ Աղէօպայն աստուծնամ։ Մարիամ Յակոբայն։ Այսպէս կանայքն էին, որ Յիսուսին ծառայութիւն արին իրանց ստացուածքով։ Կանայքն էին, որ մինչև վերջը խաչի մօտ մնացին։ Կանայքն էին, որ ամենից առաջ Մի շաբաթուան առաւօտուն

գերեզման վաղեցին։ Ուրեմն թող կանայք ուրախանան՝ որ իրանք ունին մի այսպիսի փեսա՝ ընկերութիւն, և իրանց բարի ընթացքով՝ թող հեռանոյ լինին սոցա օրինակին։ Մատ. ա. 16. ժդ. 55. իէ. 44. մարտ. ժ. 47. ժդ. 19. ղուկ. ը. 3. յովհ. ժթ. 25։

57–59. Յովսէփը մի մեծատուն և ազնուազարմ նախարար էր, սա ծնուած էր Արեմաթայ քաղաքում, բայց բնակուումէր Երուսաղէմում, վասն զի Երուսաղէմի իշխանաց թուիցնէրվն ինքն ծառի աշակերտէր Յիսուսի։ Սա տեսնելով, որ Հրէաները կամենում են Յիսուսին աւազակների հետ անարգաբար թաղել, Ուրբաթ երեկոյեան քաջալերուած Տիրամօրից՝ համարձակուեցաւ մօտենալ Պիղատոսին և ասել՝ «Ո՛վ իշխան մեր և դատաւոր, Յիսուս էր այր արդար, սուրբ և անմեղ, ըստ որում նաև դու ոչ գտեր ՝ի նմա զմեղս ինչ։ Եւ իշխանքն մեր պարզապէս վասն նախանձու մատնեցին զնա քեզ և ետուն ՝ի խաչ հանել, ըստ որում նաև դու իսկ ծանեար զնախանձն և զչարութիւն նոցա։ Արդ նաէ միածին մօր իւրոյ, և այժմ կարի ողբայ մայրն և գրեթէ ՝ի մահ մատնի անձն նորա ՝ի սաստկութիւնէ ցաւոյն, եթէ մարմին Միածնին իւրոյ անթաղ մնացեալ, ընկիսցի ընդ երկուց աւազակաց ՝ի տեղիս յայն, ուր ամենայն մարմինք դատապարտելոց անկեալք են անարգաբար։ Ուստի խնդրեմ, զի տայցես ինձ զհրաման, առնուլ զմարմին նորա և ըստ մօրն, թաղել զնա ՝ի յատուկ գերեզմանի։» Այդ միջոցում Ունկիանոսը ցոյց տուաւ իւր բժշկուած աչքը, պատմեց արիւն և ջուր բղխուիլը։ Պիղատոսը լսելով այդ ամենը և տեսնելով բժշկուած աչքը՝ իսկոյն հրամայեց տալ մարմինը Յովսէփին։ Յովսէփը վայր առաւ Սուրբ մարմինը, և Նիկոդիմոսը որ Յովսէփին ընկերակից էր, բերաւ մինչև Հարիւրլեայ հաղուէի հետ խառն զմուռս, որպէս զի Հրէից թաղաւորաց սովորութեամբ, բոլոր մարմինը լեպեպ շրջապատեն դրանով։ Ամբողջ մարմինը լուանալից, ազնիւ կտաւով փաթաթեցին, երիզանդաւ՝ այնէ. կտաւից ձգած կապով կապեցին, և վարշամակը դնելով գլխին, ծածկեցին երեսը։

Հրէաները մի քանի ժամանակից յետոյ բռնեցին սուրբ Յովսէփին, Ղազարոսին, Մարիամին և Մարթային և մի նաւակի մէջ դնելով, գցեցին ծովը, որպէսզի քամիներից ընկղմուին ծովի մէջ, բայց դոքա ազատուեցան հրեշտակաց դեկաւարութեամբ և հա-

ան Մարսելիա Ղազարոսը իւր քոյրերի հետ Ճեաց այդտեղ, իսկ Յովսէփը գնաց Անգղիա և այնտեղ Քրիստոս քարոզեց և մեռաւ։ Սա էր այս կղզուն առաջի քարոզիչը։ Նիկոդիմոսին էլ հանեցին իրանց ժողովրդից և նզով իւր աքսորեցին։ Սորա ծածուկ պաշտպանեց մինչև իւր մահը՝ Հրէից վարդապետ, Պողոսի ուսուցիչ Գամալիէլը իւր ազարակի մէջ, և երբ մեռաւ թաղեց սուրբ Ստեփաննոսի մօտ (Ստեփաննոսին ևս ինքն էր թաղած) ինքն էլ թաղուեցաւ այս երկուսի մօտ։ Սրանց մարմինները գտնուեցան միասին։ Գործ. ե. 34։

Իսկ խաչափայտը աւազակների խաչափայտի հետ միասին՝ անօրէն Հրէաները թաղեցին մի աղբանոցի մէջ, և պատուիրեցին Հրէից ամենայն տեղից բերել և այդտեղ աղբով լցնել։ Երբ քրիստոնէութիւնը տարածուեցաւ և Կոստանդիանոսի մայր Հեղինէն Փրկչի 327 թուին գնաց Երուսաղէմ՝ երկիրպագանել սուրբ տնօրինական տեղերին, շատ աշխատեց գտնել սուրբ խաչը, բայց չ՚գտաւ։ Եւ երբ խիստ նեղեց Հրէից ցոյց տալ խաչի տեղը, նոքա մատնեցին մի Յուդա անունով մարդի պանդոկ՝ որ նա արդարի և մարգարէի որդի է, և դա կարող է իմանալ խաչի տեղը։ Հեղինէն հրամայեց գցել գորա մի հոր և պահել այդտեղ անսուաղ՝ մինչև չը-յայտնէ։ Վեց օր մնալից յետոյ՝ Յուդան խոստացաւ յայտնել խաչափայտի տեղը։ Եւ որով հետև քաղաքի բոլոր աղբերը ածել էին այդտեղ, վասնորոյ և թագուհին հրամայեց շուտով պեղել և ինքն էլ ոսկի և արծաթի ցանեց, որպէս զի ամենայն որ աշխատէ, գտնէ ոսկի և արծաթի դանելու համար, իսոր պեղելով որոնել։ Յուդան էլ ինքն առաւ բրիչը և սկսեց փորել, քանի թիզ դեռ չ՚հասած, յանկարծ բուրեց մի հիանալի անուշահոտութիւն, որով զմայլեցան ամենքը, և բացած գտին երեք խաչափայտ, բայց չ՚կարողացին իմանալ որն է փրկչինը և որը աւազակներինը։ Այդ միջոցում ասնում մէջին թաղել մի երիտասարդ մեռեալ, Յուդան բերել տուաւ մեռեալը ասեան՝ թագուհու առաջև, և ինքն էլ մեծահաւատ՝ բարբառով՝ ասաց.- «Տէր իմ Յիսուս Քրիստոս մարդացեալ բանդ Աստուած ի Սուրբ Կուսէն Մարիամայ, ցոյց արդ զողորմութիւն սրբոյ խաչի քո փրկչական առաջի թագուհոյն և բազմաբեեան ժողովրդեանս։ Եւ բարձրացնելով խաչը՝ դրաւ մեռ-

եալի վերայ, բայց ոչինչ նշան չերևեցաւ, յետոյ առաւ միւս խաչափայտը և դրաւ նոյնպէս մեռելալի վերայ, որանով մեռելալի մի աչքը բացուեցաւ և ապա գարձեալ խրեց, որով գիտացին որ դա աշխարհումեան աւազակի խաչն էր, և երբ երրորդ խաչը դրաւ մեռելալի վերայ՝ իսկոյն կենդանացաւ մեռելալը, որով և իմացին՝ որ դահեկնարար խաչն Յիսուսի, վասնորոյ և ամենքը երկրպագեցին սուրբ խաչին։ Այդ օրդ առաւեցաւ ասն Յիսուսի։ Եւ որով հետև պիղծ Վիկիանոսը Դողդոթայում Քրիստոսի գերեզմանի վերայ կանգնացրած էր Ափրոտիտ կուռքի պատկերը՝ հեղինէ թագուհին հրամայեց կործանել և դրան տեղը շինել փառաւոր եկեղեցի Յարութեան Տիրոջ։ Նաև ուրիշ շատ եկեղեցիք։ Եւ Սեպտեմբերի 13-ին մեծ հանդիսով այդ եկեղեցիքը օծեցին, նաև ահագին կատարելով՝ աղքատներին կերակրելով, իսկ 14-ին Սեպտեմբերի Մակարիոս պատրիարքն մեծ հանդիսով բարձրացրաւ սուրբ խաչը ի տես ժողովրդեան և կանգնեցրաւ Սուրբ Յարութեան Տաճարի մէջ, վասնորոյ և այդ օրդ առաւեցաւ խաչվերացք։ Մակարիոսն էլ թագուհու հրամանաւ Յուդայի եպիսկոպոս Հեռնադրեց և անուանեց Կիւրեղ, որ մոռբիլասացաւ իւր մօր Անենայի հետ ուրացող Յուլիանոսից։ Այսպէս էլ մեր եկեղեցին միշտ ասնուամէ Սեպտեմբերի 13-ին նաև ահագինքը, իսկ 14-ին խաչվերացի ասնը։ Եւ որով հետև երբ պարսից Խոսրով թագաւորը նուաճեց Պրուսալէմն և սուրբ խաչը գերի տարաւ Պարսկաստան 622 թուին, և երբ Հերակլ Կայսրի ժամանակ 629 թուին վերադարձաւ՝ և մեծ հանդիսով Սեպտեմբերի 14-ին զրուեցաւ Նրուսալէմի Տաճարումն, վասնորոյ եկեղեցին առաւել ուրախանալով, նոցա գերութիւնից ազատութեան համար՝ սահմանեց Խաչվերացի և Խաչի ազատութեան ասնը միասին կատարել Սեպտեմբերի 14-ին մոտ եղած Կիւրակէ օրը՝ հանդիսին առաւել նշանակութիւն տալու համար, իսկ Խաչվերացի յիշատակը ևս առանձին հանդիսացնելու համար՝ սահմանեց ասն Հոկտեմբերին։ Խաչվերացի ասնը կատարուումէ մեզ մոտ ութ օր եկեղեցու ասնի հետ միասին։ Տայսմաւուրք։

60. Այս գերեզմանը Յովսէփը ինքն էր շինել տուել իւր համար, իւր պարտիզի մէջ, մի շատ պատուական քարայրից, որի բարձրու-

թիւնը մի մարդի երկայնութիւնից աւելի էր, իսկ փորուածքը, որ շինուած էր հիւսիսային կողմում ունէր եօթն ոտք երկայնութիւն, համեմատաբար նաև լայնութիւն և խորութիւն, զուռն արև ելքիցն էր։ Յիսուս դրուեցաւ այս փառաւոր գերեզմանի մէջ և դուռը ծածկուեցաւ վիմով։ Հեղինէ թագուհին այս գերեզմանի վերայ շինեց մի շատ փառաւոր և պատուական եկեղեցի, որ կայ մինչև այսօր։ Այսպէս Յիսուս, ինչպէս ծնուեցաւ կոյս յարգանդից, այնպէս էլ դրուեցաւ կոյս գերեզմանում։ Նա իւր կենդանութեան մէջ համբերեց ամենակերպ դառնութեան մինչև անգամ նաև մահու, իսկ մահից յետոյ փառաւորուեցաւ, ցուցանելով՝ որ վշտերի և հալածանաց հետևանքը փառք է և երանութիւն։ Եւ. ժա. 10. եփ. բ. 19։

61. Պատանելու ժամանակ հեռաստանից կանայք պարկեշտութեամբ կանգնած նայում էին. Տիրամայրը, Յովհաննու մայր Սալոմէն, միւս Մարիամը՝ որէ. Կղէոպայն, Յովհաննէսը և ուրիշ շատ կանայք։ Պատանելից յետոյ Տիրամայրը, Յովհաննէսը և մի քանի կանայք դարձան տուն, իսկ Մարիամ Մագդաղենացին և Մարիամ Կղէոպայն սպասեցին մինչև դրին Նորա գերեզմանի մէջ։ Ղուկ. ժգ. 55. մատ. իէ. 55։

62-64. Քահանայապետները և փարիսեցիք՝ լսելով Յիսուսի փառաւոր թագումն իրանց իշխանների ձեռաք, շատ սաստիկ կատաղեցան, ուստի Ուրբաթ երեկոյեան անժամանակ գնացին Պիղատոսի մօտ և ասացին.- «Մեր անժամանակ ձեզ մօտ գալը պատճառը այնէ, զի յիշեցաք՝ որ այն մոլորեցուցիչը ասած է.- «Մինչև երեք օրը պիտի յարութիւն առնեմ։ Աշակերտները կ'գողանան, գրանով յետի մոլորութիւնը աւելի չար կ'լինի քան առաջինը, ամենքը կ'հաւատան և Հռովմայեցիք մեզ բոլորովին կ'ծնծղեն, որպէս թէ մենք այդ արդար և սուրբ մարդին, որ յետոյ յարութիւն առաւ, ապօրինաբար սպանեցինք, փանտոյ խնդրում ենք տալ մեզ զինուորներ, որ գրաւանան գերեզմանին։» Յովհ. ժա. 48։

65. 66. Պիղատոսը կարգադրեց գոցա կամաց յարմար Նոքա գնացին Ընդհանրական ժողովի կնքով կնքեցին գերեզմանը, և ամենայն զգուշութեամբ հրամայեցին պահել Նորա։ Ինչպէս ասում են, պահապանները չորս հեթանոս զինուորներ էին և 120 հրեայ։

Նոցա այս բոլոր գործողութեանց մէջ յայտնապէս երևումէ Աստուծոյ նախախնամութիւնը. Զիսուսը Նորա կողը խոցելով՝ ապացուցց որ նա իսկապէս մեռածէ, իսկ այժմ Նորա յարութեան համար, գործադրումն ամենակատարեալ գործութիւններ, որպէս զի ոչ ոք չհամարձակուի ասել թէ.- «Աշակերտները գողացան» Այնպէս Աստուած մարդացաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ, բայց Աստուածութեամբը մնաց՝ անչարչարելի և անմահ։ Մատթէ. 37. ա. կորս. գ. 19

Պարզեւատուն ամենեցուն այսօր՝ խնդրի պարգեւս՝ի Պիղատոսէ և արիւնոյ զոյգս արտաքս գոնոց հաւատի պատրի՝ի Յովսէփայ։

Կենդանատուն ամենեցուն այսօր՝ զնի՝ի նոր գերեզմանի և զանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայից։

Աբարատոց փրկութիւն Քրիստոս, այսօր եդաւ՝ի նորափոր վիմի, զոր օրհնեն զոյգք երկնից, երգով պատշգանի՝ի զինուորաց։

Կենդանին յաւիտենից Քրիստոս, այսօր խնդրի որպէս մեռեալ՝ի Պիղատոսէ, և մերկութեան ծածկոյթն Ադամայ յանձն առնու պատրիլ՝ի Յովսէփայ։

Անմահութեանց տուող Քրիստոս, այսօր՝ի հող մահու խոնարհեցաւ և բնակեալն՝ի լոյս յանմատոյց թաղեցաւ մարմնով՝ի սիրտ երկրի։

Կուսածնն մարմնով Քրիստոս, այսօր զնի՝ի կոյս գերեզմանի և լուծիչն երկանց զժոխոց մատանեաւ կնքի քահանայից։

Արիւնն բնութեամբ Աստուծոյ ամենեցուն, այսօր ննջէ՝ի մէջ մահացելոց, որ պահէն զԻսրայէլ անքուն պահպանի՝ի զինուորացն։

ԳԼ. ԻԸ.

1. Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր Միաշաբաթին, եկն Մարիամ Մագդալենացի, և միւս Մարիամն տեսանել զգերեզմանն։
2. Եւ ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ տեառն իջեալ յերկնից՝ մատուցեալ՝ի բաց թաւալեցոյց զվէմն՝ի դրանց անտի, և նստէր՝ի վերայ Նորա։
3. Եւ էր տեսիլ Նորա իբրև զփայլակն, եւ հանդերձ Նորա սպիտակ իբրեւ զձիւն։
4. Եւ յահէ անտի Նորա խռով եցան պահապանքն, եւ եղին իբրեւ զմեռեալս։

5. Պատասխանի եւ Հրեշտակին՝ եւ ասէ ցկանայսն, մի երկիւղք զուրբ դիտեմ զի զՊիսուս զխաչեալն ենդրէք։

6. Չէ ասա, քանզի չարեաւ, որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին ուր կայր։

1. Բայց երբ կանայքն էին Մարիամ Մագդալենացին, Յակոբայ մայր Մարիամն, Յով հանան աւետարանչի մայրը, Յով հանան, որէ. Հերոդէսի տանտի երեսկացու Քուզայ հարազատակի կիներ, որ հաւատացեալ մեծազգի կիներ եւ միշտ հոգուն մէջ Պիսուսի եւ իւր աշակերտաց ծառայը։ Կային եւ ուրիշ շատ կանայք։ Այս կանայքը Եաբաթի օրը պատուիրանի համաձայն, հանգարդեցին գերեզման գնալու պատրաստութիւններ տեսնելից, իսկ երեկոյեան, երբ վերջացաւ Եաբաթը սկսեցին դրեթէ ամբողջ գիշերը, իւղեր, խնկեր պատրաստելով պարապուելի, որով հետեւ կամենային, կրկին օծանելով, Տէրի մարմինը, Յովսէփից եւ Նիկոդիմոսից ուռուցեալ փառաւորելը։ Մատթ.55-57. մարգ.16 ղուկ.գ.3 յով հ.գ.1։

Կանայքը այս պատրաստութիւնները տեսնելից յետոյ մնացին տարակուսուած եւ չէին իմանում թէ ինչ կերպով պիտի կարողանան օծանել եւ խնկել Տէրի մարմինը՝ որով հետեւ լսած էին, որ Հրէայք պահապաններ են դրել եւ մեծ զգուշութեամբ հսկում են գերեզմանին։ Երեկոյեան գիշերից մի քանի ժամ արդէն անցել էր, Մարիամ Մագդաղենացին, իբրեւ քաջասիրտ կին, առաւ իւր հետը Մարիամ Կղէօպային, եւ մի քանի կանանց՝ կամեցաւ գիշերով առանձին գնալ, եւ ստուգել գերեզմանի զրութիւնը, եւ տեսնել արդեօք կարող է միտքերիցէ հնարիւք օծանել Տէրի մարմինը, թէ ոչ։ Իսկ Տիրամայրը չ՚գնաց գերեզման՝ որով հետեւ նա գիտէր, որ իւր որդին պէտք չարութիւն առնէ եւ ամենից առաջ, իրան երեւելով, իւր վշտացած եւ վիրաւորուած սիրտը մխիթարէ եւ ուրախացնէ։ Բայց հասարակ կարծեաց, երբ կանայքը գնում ճանապարհին, յանկարծ քամու պէս մի սաստիկ հնչմունք եղաւ գերեզմանի վերայ, եւ ահա երկնից իջան հրեշտէն զօրք, եւ մեծ լոյս ճառագայթեց գերեզմանի շուրջը։ Այս իսկ բոպէում, Պիսուս լուսափայլ կերպարանքով կենդանի յարութիւն առաւ գերեզմանից, այնպէս որ չշարժեց նաեւ կոփարիչը, վասն զի փառաւոր մարմիններին՝ չեն կարող ընդդիմահար լինել ուրիշ կարծր մարմինները։ Պահապաններից ոմանք ուշաթափուած ընկան, ոմանք

սկսան փախչել։ Յարութիւնից յետոյ Յիսուս իսկոյն երեւեցաւ իւր մօրը եւ Նորա մխիթարեց եւ սփոփեց, այս աւետարանիչները չեն գրում, որով հետեւ իրը՝ որ ինքն ըստ ինքեան շատ պարզէ, Նորա կարելի է իմացած համարել, բայց եկեղեցու վարդապետները գրում են այս՝ եւ հաստատում, յետոյ երեւեցաւ Մարիամ Մագդաղենացուն, որ օտարաց կարգում առաջինն է համարւում Յիսուս յարութիւնից յետոյ՝ իւր մարմնու մէջ անիծեալ ունեցաւ այն ամեն ամբողջութիւնը, կատարելութիւնը, զարդը, եւ այլն, ինչ որ ունեցած է չարչարանքից առաջ, միայն այն տարբերութեամբ, որ բանական հոգին միաւորելով իւր մարմնու հետ, հոգու փանջենաւոր փառքը թափեց Նորա մէջ, վասնորոյ եւ չարչարելի եւ կրական մարմինը դարձաւ անչարչարելի եւ անկիր։ Այսպէս Յիսուս իւր չարչարանքը սկսեց Հինգշաբաթ երեկոյեան՝ ընթրիքից յետոյ, գիշերուան երրորդ ժամից, երբ մտաւ պարտէզը, եւ շարունակեց մինչեւ հոգու աւանդումն, որէ. 18 ժամ Աւանդամուից յետոյ գնաց գժոխք եւ մնաց այնտեղ $33^1/_2$ ժամ մինչեւ յարութիւնը, իսկ գերեզմանում մնաց մարմինը 30 ժամ, փասն զի երեք ու կէս ժամ տեւեց մինչեւ խաչից վերառնելը, պատանելը և գերեզմանի մէջ դնելը։ Մատ.ժբ.40.ժդ.31.իբ.23.զուկ.ի.36։

2-6. Թէև հրեշտակաց բազմութիւնը գումարուած էր գերեզմանի շուրջը, բայց Նոքա չէին երեւում, միայն Գաբրիէլ հրեշտակապետն երիտասարդ մարդու ահաւոր և զարհուրելի կերպարանքով երեւաց և թաւալեց գերեզմանի վէմը, որ եղև մեծ երկրաշարժութիւն, որով խիստ զարհուրած, ուշաթափ անկան զինուորները, թէև ուշաթափ էին, բայց հասկանում էին այն ամենը՝ ինչ որ պատահում էր պարտիզում, և լսում էին խօսողների ձայները։ Հրեշտակապետն էլ նստեց կոփարիչ վէմի վերայ, որպէս պատհապան Քրիստոսի գերեզմանին, պատանուն և վարշամակին, և որպէս քարոզ Նորա յարութեան։ Կանայքը երբ հասան պարտէզ՝ իրանք իրանց մէջ սկսեցին մտածել թէ արդեօք ով պիտաքէ թաւալել գերեզմանի մեծ քարը, որով հետև իրանք տարբ էին։ Դեռ այս տարակուսութեան մէջ վարանուած, տեսին վէմը թաւալուած և գերեզմանը բաց, ուրախութեամբ մտին ներքև, հրեշտակը առաջ իրան ցոյց չտուաւ, մտերլից յետոյ՝ երեւեցաւ նոցա

շատ գեղեցիկ և պայծառ տեսքով, գերեզմանի դրան աջ կողմում վէմի վերայ նստած։ Կանայքը թէև զարհուրեցան, բայց գինուորները պէս չ՚ահաբեկուեցան, այլ մեծ հիացմամբ զարմացած նայուածքին նորա գեղեցկութեան վերայ։ Այսուհետև եկեղեցին սովորեց Քրիստոսի ոտն օրերը գեղեցիկ զգեստներով զարդարուիլ՝ ի նշան ուրախութեան։ Հրեշտակը տեսնելով կանանց շփոթ դրութիւնը, քաղցր դիմաք խաչի անուամբ պարծենալով՝ ասաց.- «Խաչը՝ որին Հրէայք անարգանաց ենթեցին համարում, այսօր Աստուածորդի Յիսուսը, իւր չարչարանաց և մահու ձեռաքներա հաւատացելոց համար պայծառանաց և երկիրպագութեան նիւթ հռչակեց, և ինքն մեծ փառքով յարութանալ ահա տեսէք գերեզմանը և հաւատացէք։» Կանայքը հրեշտակի խօսքով չ՚բաւականացած մտին այրին որոնել Յիսուսին, և մինչդեռ հիացած էին, տեսին այրատեղ երկու մարդ լուսաւոր շրջակով, որոնցից զարհուրած և պատկառած, իրանց երեսը դէպի երկիր խոնարհեցրին։ Սոքա մի քիչ սաստիւ, բայց և քաղցրութեամբ խօսեցին կանանց հետ, որք չ՚հաւատացին առաջին հրեշտակի խօսքին և ասացին.- «Ո՞նչի համար էք կենդանոյն, որպէս մեռեալ պտրտուում, ի՞նչի չ՚գիշում։ Նորա խօսքերը, որ ասաց ձեզ՝ երբ Գալիլեայում էր, թէ պէտք մինչև երրորդ օրը յարութիւն առնեմ Քրիստոսի յարութիւնը եղեւ իւր ազատ իշխանութեամբը, փառն զի թէեւ իւր Հոգին բաժանուեցաւ մարմնից, բայց Աստուածութեամբը մնաց անբաժան Հոգուցը եւ մարմնուցը։ Այսպէս՝ մարդացած Յիսուսի յարութիւնը ապացուցց, որ մենք եւս մի օր պէտք յարութիւն առնենք։ Մարկ.գ.1-7.դուկ.իգ.1-8.ա.կոր.ժ.ի.13-22.գաղ.գ.14։

7. Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ. եւ ահա յառաջանայ քան զձեզ՝ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։
8. Եւ երեալ վաղվաղակի՝ ի դերեզմանէ անտի ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ընթանային պատմել աշակերտացն։
9. Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս՝ եւ ասէ. ողջէք. եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա՝ եւ երկիրպագին նմա։
10. Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս մի երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն՝ ի Գալիլեա, եւ անդ տեսցեն զիս։

11. Իբրեւ նոքա գնացին, ահա՛ մանուկ 'ի զօրականացն հիւն 'ի քաղաքն՝ եւ պատմեցին քահանայապետիցն զամենայն որ ինչ եղեւն։
12. Եւ նոքա ժողով եալ հանդերձ ծերովքն, խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ տուին զօրականացն։
13. Եւ ասեն. ասասջիք՝ եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք 'ի քուն էաք։
14. Եւ եթէ լուր լեցի այդ առ դատաւորն, մեք համձեսցուք զնա՝ եւ զձեզ անհոգս արասցուք։
15. Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն, եւ ել համբաւս այս 'ի Հրէից մինչեւ ցայսօր։

7. Որով հեան Գալիլեան աշակերտաց Հայրենիքն էին այդտեղ էին հաւատացեալց բազմութիւնը, վանորոյ և Պետրոսի և Յովհաննէսի, որք գերեզմանի ներսում և դրսումն էին, վաղեցրին կանանց պատմել աշակերտաց Յիսուսի յարութիւնը, նամանաւանդ Պետրոսին, որ իւր ուրացութեան համար չ'յուսահատուի, այլ շուտով գնաց Գալիլեա՝ և այնտեղ առաքելոց հետ միասին հրապարակաւ տեսնէ Յիսուսին և մխիթարուի։ Կանայքը այս ամենս լսելով հրեշտակներից՝ շփոթուած դարձան առաքելոց մօտ և երբեմն ասացին. բաձին զտէրն 'ի գերեզմանէ և երբեմն թէ հրեշտակները ասացին.-յարեաւ, վանորոյ և՝ Պետրոսը և Յովհաննէսը տեսնելով նրանց անհիմն և շփոթ խօսակցութիւնները՝ վազեցին գնալ գերեզման և տուգել եղելութիւնը։ Մի ջոցը բաւական երկարելի ը, գիշերը բաւական անցած էր՝ և դէպի լոյսն էր գնում, կանայքը ևս կրկին անգամ զոցա հետ՝ վերադարձան գերեզմանը։ Հաւանական է՝ որ Յիսուս իւր աշակերտաց անհաւատութեան համար՝ մնաց երուսաղէմում, եւ երեւելով նոցա, համոզեց հաւատալ իւր յարութեանն։ գնալ Գալիլեայում ժողովքին ներկայանալ։ Մար. ժզ. 7—14. զուգ. իդ. 11. յով. կ. ի. 2. ա. կոր. ժե. 6։

8-10. Յով հանէսը թողեց Պետրոսին ճանապարհին, եւ ինքն վազելով հասաւ գերեզման, եւ կորանալով նայեց գերեզմանի միջին, այստեղ բացի պաստառակալից եւ կտաւից ուրիշ ոչինչ չ'զտաւ։ Սարսափը տիրեց նորա, նա չ'համարձակուեց մտնել գերեզմանի մէջ։ Այս միջոցում հասաւ նաեւ Պետրոսը, սա մտաւ գերեզմանի մէջ եւ տեսաւ, որ այստեղ է միայն պաստառակալը, իսկ վարշամակը, որ ծածկուած էր խրիստոսի գլուխը, ծալած, դրած է մի կող-

մուտ։ Եվ Հաննէսը ինքն եւս մտաւ գերեզմանի մէջ տեսաւ եւ հաւատաց։ Վերջապէս եւ Եվ Հաննէսը կանանց հետ վերադարձան տուն, բայց Մարիամ Մագդալենացին գերեզմանի դրսում կանգնած լաց էր լինում։ Այդ միջոցում, կռանալով նայեց գերեզմանի մէջ, եւ տեսաւ սպիտակ շորերով երկու հրեշտակներ նստած մէկը գլխի եւ միւսը ոտների կողմում, ուր էր Յիսուսի մարմինը, եւ զոքա մեծ յարգութիւն էին տալիս իւրեանց դեռեւում մէկին։ Զոքա ասացին։- «Ո՛վ կին դու ինչի՞ ես լաց լինում։» Նա պատասխանեց- «Տէրին վերցրին են առել գերեզմանից եւ չեմ իմանում որտե՞ղ են դրել նորա։» Երբոր այս ասաց. դարձաւ յետի կողմը տեսնել՝ ով է արդեօք Նա, որին հրեշտակները այդպիսի յարգութեամբ պատուում են, եւ տեսաւ Յիսուսին այդ տեղ կանգնած, բայց չ՚ճանաչեց։ Յիսուս նորա ասաց. - «Կին դու ինչի՞ ես լաց լինում եւ ո՞ւմն ես պտրտում։ Մարիամը կարծելով թէ պարտիզպանն է, ասաց. - «Տէր, եթէ դու ես վերցրել նորա, ասա, որտեղ ես դրել՝ որ ես վերցնեմ նորա։» Յիսուս պատասխանեց նորա ծանօթ եւ ազգանուն ձայնիւ՝ եւ ասաց- Մարիամ։ Սա, խիստ ճանաչեց եւ մի այնպիսի աստուած սրբոյ ընկաւ նորա ոտները՝ եւ փարելով, համբուրելով ուրախացած ազազակեց- «Վարդապետ» ասելէ կամենում հեռանալ նրանից՝ եւ գազարել համբուրելուց։ Յիսուս պատասխանեց.-Արդ հեռաւ դիր մի քանի օր եւս պիտի մնամ, եւ շատերին երեւելով նրանց որոշ փարգը պիտի լցուցանեմ։ Վասնզոյց վազիր, գնա՝ եւ ասա իմ եղբայրներին, (հաւատացեալներին) որ ես գնում եմ իմ եւ ձեր Հօր մօտ, իմ եւ ձեր Աստուծոյ մօտ։» Այս ասելով՝ ցոյց տալիս, որ իւր Հոգին եւ մարմինը տեղծուած են եւ թէ ինքը բան մարդկայնոյ բնութեան եղբայրն ամենայն հաւատացեալներին։ Մարիամը վազեց Հասաւ աշակերտներին եւ կանանց, որ սպասում էին իրան, եւ պատմեց նոցա տեսութիւնը եւ ամենայն եղելութիւնը։ Նոքա լսելով այս՝ շատ տրամեցին, որ իրանք չ՚արժանացան նորա տեսութեան։ Դեռ այս կարճ միջոցում Տէրը երեւեցաւ նաեւ զոյգ ճանապարհի մէջ եւ ասաց- «ողջէ՛ք» նոքա խիստ ճանաչեցին որ Տէրն է, ընկնելով նորա ոտները երկրպագեցին։ Յիսուս ասաց- «Մի վախենաք, այլ գնացէք իմ եղբայրներիս ասացէ՛ք, որ գնան Գալիլեա, այնտեղ պիտի ինձ տեսնեն»

Խղճարեր կանանց պէս՝ մեր սէրը դէպի Քրիստոս պէտք է լինի ճշմարիտ եւ ամենայն առաքինութիւններով զարդարուած, որպէս անուշանոտ իւղ, պէտք է մարդկային երկիւղը հեռացնել եւ առանց յուսահատութեան անդադար խնդրել Ցիսուսի շնորհքը, որ նա յուսաւորէ մեզ։ Կիսպիսեաւ նա մեզ կ՚ուրախացնէ եւ մեր առաջը զուրս կ՚գայ շնորհքով եւ յաւիտենական խնդութեամբ։ Մատ. իր. 7. զուգ. իդ. 1—13. յովհ. ի. 1—19։

11-13. Երբ կանայքը եւ աշակերտները գնացին, պահապաններից ոմանք հազիւ հազ կարողացին զգաստանալ՝ գնալ գերեզման ասուելոյ Ցիսուսի յարութիւնը եւ վաղել իրաց եղելութիւնը արդարութեամբ պատմել քահանայապետից եւ իշխանաց։ Զարեւ նախանձոտ մարդկանց զորձը միշտ այսպէս, որքան նոցա բարիքներ առնես, որքան ազաչես եւ մինչեւ անդամ նոցա համար հրաշքներ զորձես, նոքա չեն գոռնոյ իրանց չարութիւնից, այլ յամառուած կամակորութեան մէջ ամենանիրպ թշնաութեամբ կ՚ուանձնաբին եւ կ՚կործանուին։ Իրանց այս ասածներն ասութիւնը կարելի, ապացուցանել շատ փաստերով, օրինակ։

ա. Զինուորները որքան որ քնած լինէին վախճան աշակերտները չէին համարձակուել գերեզմանը բանալ եւ մարմինը զոցանեալ բ. Գրէնքը խստութեամբ պատժուում այն պահապաններին, որք յանձնարարութիւնը անզգշութեամբ կատարելով, կ՚ընանային, մանաւանդ անհարիր այդքան մարդկանց բոլորը միասին քներ գ. Քրիստոսի յարութեան լուրը լսած լինելով՝ եւ այդ մասին պահապաններ նշանակուած, անհարիր նոցա՝ որ իրանց հեռաբերութիւնը թոյլ տալ զոցա քներ դ. Եթէ իրանք իրանց ասածներին հաւատային, դէպքերը զինուորներին եւ աշակերտներին բռնելին եւ պատժէին։ Մատ. իէ. 66։

14. 15. Զինուորները Երուսաղեմից արձաթ ստանալից յետոյ, այս սուտ տարածեցին ամբոխի մէջ, իսկ Պիղատոսի երկիւղից ամենայն եղելութիւնը ճշմարտութեամբ պատմեցին Պիղատոսի առաջեւ։ Պիղատոսը շատ նամակներ է գրում Տիբերիոս կայսերվ երայ Ցիսուսի աքանչելիքների եւ զորութիւնների մասին, մի նամակ էլ գրում, այս օրինակաւ։ «Երշանքն Երուից սուելով առաջի իմ հաւանեցուցանէին թէ Ցիսուս Նազովրեցին իցէ ապստամբեցուցիչ ժողովրդեան, եւ ընդդէմ օրինաց նոցա առնող եւ եւ

Հաւատացեալ նոցա թէ այնպէս իցէ զան Հարեալ։ Եւ՝ ի ձեռս նոցա՝ ի խաչ Հանեալ, եւ՝ նոքա խաչեալ զնա սպանին եւ եղաւ՝ ի գերեզմանի։ Եւ յիսէն խնդրեալ զնեալս եղին պահապանս գերեզմանին, բայց մինչ պահէին զնեալս՝ զգերեզմանն, յարեաւ նա՝ ի գերեզմանէն։ Եւ այնքան ածեցեալ բարբարեցաւ չարութիւն Հրէից, մինչ զի եւս ուրիշ օրուհանաց իմոց, եւ ասացին, թէ թագուցէք զայն զոր տեսէք, եւ ասացէք, թէ աշակերտքն նորա եկեալ՝ ի գիշերի զողացան զնա մինչ մեք՝ ի քուն էաք։ Բայց զինուորքն յետ որոյ առին զարծաթն, ոչ լռեցին պատմել մեզ զայն ամենայն որ եղեւ։ Քանզի մ կայեցին մեզ զնմանէ, թէ ճշմարտապէս յարեաւ, զի տեսեալ էին աչօք զհրեշտակն, որ թաւալեցոյց զվէմն, եւ ինքեանք որպէս մեռեալս մնեալ անդ, եւ յետոյ զպատացեալ տեսեալ էին նաեւ զդերեզմանն զայն թափուր՝ ի մարմնոյն։ Եւ զայսքանս փասն այնորիկ զրեցի առ ձեզդ իմ, զի մի՛ զուցէ այլ ոք ասացօղ իցէ քեզ զնմն։ Եւ Համարեսցի Հաւատալի զոր ասասիցեն Հրէից։ Եւ սերիոս։

16. Իսկ մեռաւսն աշակերտքն գնացին ի Գալիլեա՝ ի լեռանն ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։

17. Իբրեւ տեսին զնա երկիրպագին նմա, եւ ոմանք յերկուացան։

18. Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա՝ եւ ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր, եւ ես առաքեմ զձեզ։

19. Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն Հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն՝ Հօր եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն սրբոյ։

20. Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ։ եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ՝ ի կատարած աշխարհի։

16. 17. Աշակերտաներդ ուրեմն օրից աւելի մեռելով Երուսաղէմի մէջ, գնացին Գալիլեայի այն լեռան՝ ուր նշանակել էր Յիսուս։ Մատթէոսը բաւականանալով կանանց երեւմունքով, անցնում Մատթէոսը բաւականանալով կանանց երեւմունքով, որ ամենից հաւատաւոր է եւ հանդիսաւորութիւններդ երեւումն՝ որ ամենից հաւատաւոր է եւ հանդիսաւորութիւն։ Աշակերտաներդ, որք դեռ չէին տեսած, յանկարծ տեսնելով՝ մեծ ուրախութիւնից շփոթուեցան եւ երկմտեցին, իսկ նոքա, որք մի քանի անգամ եւս տեսած էին եւ իրանց փափագը լցրած,

առանց չփոթութեան երկրպագելու։ Դան. է. 14. մատ. ժա. 27. իզ. 32. իր. 7-10. գործ. ժ. 36. փիլ. բ. 8—12։

18-20. Մինչեւ ցայժմ Քրիստոս առաքեալներին պատուիրեց դնալ Հրէաների մէջ քարոզել, այժմ օրով հետեւ Հրէաները մերժուեցան Յիսուսից, վանողոյ եւ հրամայուեմ նաեւ Հեթանոսներին մկրտել եւ ուսուցանել ոչ միայն խօսքով, այլեւեւ գործով։ Որով հետեւ առաքեալները չէին կարող մինչեւ աշխարհիս վերջը տալել, վանողոյ եւ «ես ձեզ հետեմ, որպէս առաքեցաք զիս Հայր եւ ես առաքեմ զձեզ» ասելով՝ ցոյց է տալիս, որ Քրիստոս ոչ միայն իւր առաքեալների հետ է, այլ նաեւ նոցա հաւատարիմ յաջորդներին, որք են վարդապետք եւ քահանայք, որք անձնազոհութեամբ գործումեն նորա այգու մէջ՝ ի պայծառութիւն ազգի եւ՝ ի շինութիւն եկեղեցւոյ։ (Բողոքականներ՝ որով հետեւ չեն ընդունում քահանայութիւնը, վանողոյ եւ «որպէս առաքեաց զիս Հայր եւ ես առաքեմ զձեզ» կոչը՝ հանած են Աւետարանից)։

Այս պատուիրանքից տեսնենք, որ քահանայական իշխանութիւնը ինքը Քրիստոս հաստատեց նախ վերնատան մէջ, Հաղորդութեան խորհուրդը առնելու ժամանակ ասելով.— «Այս արարէք առ իմոյ յիշատակի» եւ ապա այժմ պատուիրելով.— «Մկրտել եւ ուսուցանել»։ Առաքեալներն էլ այս պատուիրանքից տեսած ընտրեցին եւ ձեռնադրում այս երրորդութեան (պաշտօնի հաստատնոցա, որոց Սուրբ Հոգին կոչում՝ ի գործ պաշտամանն, ինչպէս յայտնորեալ մինչեւ այսօր կատարւում ամեն մի ուղղափառ եկեղեցու մէջ։ Ուստի եւ կարդը կամ ձեռնադրութիւնը բաժանուեցաւ եօթն ասպիճանների, որք են.— Դռնապանութիւն, որ կարող է եկեղեցու դուռը բանալ-փակել եւ պաշտպանել։ Դպրութիւն, որ կարող է եկեղեցու մէջ կարդալ տաղմոսներ, մարգարէութիւններ, առաքելական թղթեր եւ Հոգեւոր երգեր։ Գրքմենեցուցչութիւն, որ կարող է գիւաշարներին, բանաստեղծների եւ հիւանդների վերայ Սուրբ Գիրք կարդալ եւ Յիսուսի առաքեալ գիւերին երդմնեցնելով, հարածել։ Ջահրնկալութիւն, որ կարող է սեղան կանգնել եւ Ջահերը ու մոմերը վառել (Մինչեւ այս չորրորդ ասպիճանը կարող է ամուսնանալ)։ Պիտակալ կամ-

զութիւն՝ որ կարող է պատարագիչ քահանային սպասաւորել խորհրդի ժամանակ զ. Սարկաւագութիւն, որ կարողէ եկեղեցու մէջ սուրբ աւետարան կարդալ եւ վերաբերմամբներ է. Քահանայութիւն, որ կարող է քարոզել ուսուցանել, միրաել, զրոշմել, հաղորդել, Քրիստոս պատարագել, կապել, արձակել, զպակել, եւ վերջին թոշակին տալ հիւանդաց եւ այլն. եւ այլն Քահանայական կոչման արժանաւորս համար՝ պէտք ունենալ բաւական զիտութիւն, վարքի եւ բարքի սրբութիւն, հաւատքի կատարելութիւն, եւ լենիլ հարազատ ծնողաց զաւակ, միակին կամ անկին՝ ծգեար, մոլին, անպարիշար, չարագործ, զեռահասը, արատաւորը, անարժան է այնքիրման Քահանայացուն պէտք ընտրելի ժողովրդից եւ ներիրայացուսի Եպիսկոպոսին, որ մանրամասը քննելից եւ արժանաւորութիւնը խնամալից յետոյ, եկեղեցու մէջ, ազօթքով, եւ մեռնիւ խաչաձեւ օծանելով՝ ձեռնադրեւ եւ դրեալ ձեռքը, իբրեւ զդպրի նշան իջման Հոգւոյն Սրբոյ, կ՝ձեռնադրէ նոր քահանայ: Այս խորհրդի մէջ Եպիսկոպոսը միայն սպասաւորել, իսկ կոչողը, հաստատողը, սրբողը, եւ զօրացնողը Աստուած է: Եպիսկոպոսութիւնը եւ Կաթողիկոսութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ պարզ քահանայութիւն, միայն սեփհական պաշտօնով եւ իրաւաբանութեամբ բարձր նրանցից: Եպիսկոպոսը կարող է ձեռնադրել քահանայք եւ նոցա խորհրդակցութեամբ եւ ազատութեամբ հովիւ Քրիստոսի Հօրս: Կաթողիկոսը, իբրեւ Քրիստոսի եկեղեցու բոլոր Հօրին իշխող, կարող է ձեռնադրել Եպիսկոպոս, օրհնել մեռոն, հրեալ Հոգեւորականաց պէտքերը եւ Հովիւ Քրիստոսի Հօրս Վեր. բ.12.թես.18-23. գրած. գ. 5-7.ժ.3-5.ժ. 22. ի. 27.28. ատիմ. 11-16. գ.2-8.ե.22.բ.ատիմ.8 եփես. 11.12. ոնա. ա. 7-9. եբր. ժ. 17. ա. պետ. ա. 5-7. ե. 1: Եւ՝ թորհրդարանութիւն՝ ի կարգս եկեղեցւոյ: Ն. Լամբրոնացի.

Այսպէս, զուարթարի մշակ եւ Քրիստոսի պղտա Հաւատարիմ ծառայ, իմացիր, որ Քրիստոս Խնդրուորը ասաւ քեզ՝ ինչպէս իւր պղտա մշակութեան մեծ եւ սուրբ գործը. այնպէս եւ խոստացաւ վարձատրել քեզ երանական պատգամ եւ այն բարի ժառանգութիւններով. զոր ակն ոչ տեսաւ, ականջն ոչ լուաւ եւ՝ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ: Մեր զրքան մեծ թշուառութիւն է այս Աստուածային անտեսա

խոստմունքը ստանալից յետոյ, զարձեալ Ցեղ անտարբեր, զարձեալ Ցեղ մարդասիրութեան, փառասիրութեան, շահամոլութեան, ինքնահաւանութեան և բազմատեսակ մոլութիւնների մէջ թմրուած, այգին անմշակ, երկիրը խոպանացած, և ինքն թշնամիներից ոտնակոխ և անպատուր։ Եթէ զու, ով Ծոյլ մշակ՝ չզառնաս քո թմրութիւնից, չբանաս քո հոգու աչքերը և չտեսնես քո այգու անխնամ զրութիւնը, եթէ չզառնաս քո ուղղութիւնից և չսկսես անձնազոհութեամբ մշակել այգու թշնամիների դէմ, եթէ չմտիկես նորա խոպանացած երկիրը աւերակաց արօրով, եթէ նորա մէջ բուսած մոլորութիւնների, սուտ վարդապետութեան օրամիջը արմատախիլ առնելով՝ չսերմանես նոցա տեղ զուտ քրիստոնէական վարդապետութեան մաքուր սերմերը, յիշի՛ր, որ քեզ է սպառնում մարգարէի այս սոսկալի խօսքը— «Եթէ զու ոչ խօսիցես զգուշացուցանել զամբարիշտն 'ի ճանապարհէ իւրմէ. ինքն անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի՝ և զարիւնն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից։» Եզ. ԺԳ. 8։

Յիսուս յարութիւնից յետոյ ասան անգամ երևեցաւ աշակերտներին։

ա. Նախ երևեցաւ Մարիամ Մագդաղենացուն միաշաբաթի առաւօտեան։ Մատ. իբ. 9. մարկ. ժզ. 9. յոյժ հ. բ. 11-17։

բ. Երգարեր կանանց ճանապարհի մէջ։ Մատ. իբ. 9։

գ. Պետրոսին առանձին։ Ղուկ. իդ. 34. ա. կոր. ժե. 5։

դ. Երկու աշակերտներին՝ որ գնում էին Էմմաուս։ Մար. ժզ. 12. 13. ղուկ. իդ. 13—32։

ե. Տասն առաքելոց, իբրյարութիւն առած օրուան երեկոյին՝ փակուած դռներով, երբ Թոմասը այդտեղ չէր։ Մարկ. ժզ. 14. ղուկ. իդ. 36-49. յոյժ հ. բ. 19-24. ա. կոր. ժե. 5։

զ. Տասն և մէկ առաքելոց հետևեալ միաշաբաթի երեկոյին, որոց մէջ էր նաև Թոմասը։ Յով հ. բ. 26—29։

է. Տիբերիական Ծովի մօտ, ութն առաքելոց ձուկն որսալու միջոցում Յով հանենէր ասում. այս երրորդ անգամն է, որով հետև ա. բ. գ և դ երևմունքները չէ հաշուում Յով հ. իա. 1—14։

ը. Առաքելոց և հինգ հարիւրից աւելի հաւատացեալների Վա-

ընկեցի մի լերան մի երայ։ Մատ. իբ. 16. 17. ա. կոր. ժե. 6։

Թ. Յակոբայ առաքելոյն։ Ա. կոր. ժե. 7։

Ժ. Երեւեցաւ բոլոր առաքելոց Սրուսաղէմի մէջ և նոցա հետ դնաց Բեթանեայ և այցելութիւն արաւ Ղազարոսին և նոցա քոյրերին՝ ապա բոլորը միասին բարձրացան Ձիթենեաց սարը, որտեղ շատ խրատներ, պատուիրաններ, օրհնութիւններ տալից յետոյ՝ հաստատեց քահանայութեան խորհուրդը և ապա պատուիրեց նոսա, որ սպասեն Սուրբ Հոգւոյ գալստեան, որպէս զի շնորհքով լցուած, կարողանան ընդհանուր աշխարհի մէջ քարոզել։ Այս ամենից յետոյ բարձրացրաւ ձեռքերը, նոցա առաջև, դէպի երկինքը և համբարձաւ դատքով։ Համբարձմանից տասն օր անցած, Պենտէկոստէ Կիւրակէ օրը՝ երբ բոլոր աշակերտները միաբան հաւաքուած էին Սրուսաղէմի Սիոնի մի երնատան մէջ, յանկարծ երկնքից սաստիկ քամու պէս ձայն եկաւ և լցրեց բոլոր տունը։ Այդ միջոցում նոցա մի երայ երևեցան կրակի նման լեզուներ և ամենքը լցուեցան Սուրբ Հոգւով և սկսեցին խօսել զանազան լեզուներով։ Բարեպաշտ Հրէաները, որ Զատիկ պատճառաւ եկած էին Սրուսաղէմ, երբ տեսան այս սքանչելիքը՝ շատ զարմացան, վատնրոյ և այդ օրդ մինչև երեք հազար հոգի հաւատացին և մկրտուեցան։ Սրանից յետոյ էլ Քրիստոս երևեցաւ Պօղոս առաքելոյն։ Ղուկ. իդ. 50. 51. գործ. ա. 3-10. բ. 1-47. Թ. 3-5. իբ. 6-10. ա. կոր. ժե. 7. 8. յայտ. ա. 13։



ՑԱՆԿ

Ա. Գլ.

Գոյութիւն Աստուծոյ (1. 2 եր.) Ազգապատութիւն Յիսուսի (4-8) Մարիամի Ծնունդը, պատուէրն և յոյժ թիւրը (8-10) Քրիստոս, Մեսիայ, Էմմանուէլ, մինչև և անդրանիկ բաների նշանակութիւնը (11-14) Յիսուսի մարգարէութիւնը (14)

Բ.

Յիսուսի Ծնունդը (15) Հովիւների երկրպագութիւնը (16) Հերովդիսի օր լինելը (16) Մոգերի երկրպագութիւնը (17) Ասողի նշանակութիւնը (17) Հերովդիսի ձգտումն (18-20) Քառասնօրեայ գաղտնարանը և Սիմէոն Ծերունի (21) Ահա՛ բառի նշանակութիւնը Սուրբ Գրքում (22) Մանկանց կոտորումն (23) Հերովդիսի ստասկումից յետոյ շփոթութիւնները (23) Յիսուսի 12 տարեկան հասակը (25) Նազարէթի բառի նշանակութիւնը և Նախախնամութիւն Աստուծոյ (26)

Գ.

Յովհաննէսի Ծնունդը և անուանակոչութիւնը (27) Ապաշխարութիւն (28) Սաղուկեցի և փարիսեցի բառերի նշանակութիւնը (31) Յովհաննէսի միրուութիւնը (33-34) Երրորդութիւն (35) Մկրտութիւն (36) Դրոշմ (38) Մկրտութիւնը և Ծնունդը միասին կատարելու նշանակութիւնը (39)

Դ.

Յիսուսի փորձութիւնը (40) Պահեցողութեան նշանակութիւնը (41) Կատառնայուն (47. 48) Տիրելական ծոմ (48) Սիմէոնի և Անդրէասի դարձը (49. 50) Դիկապոլիսի նշանակութիւնը (51)

Ե.

Քրիստոսի քարոզութիւնը լեռան վերայ (52-56) Բնական և դրական օրէնքը (47-59) Բանա կամ կայան (60) Ծնութիւն, սատանութիւն և երդումն (60-63) Համբերութեան նշանակութիւնը (64) Կատարելութիւն Աստուծոյ (65)

Զ.

Ողորմութիւն, ազօթք և պահք (66-72) Հարստութեան նշանակութիւնը (73) Հոգացողութեան նշանակութիւնը (73)

Է.

Դատողութիւն, բամբասանք (75) Ընդհէրը հաճոյական և ձրիական (76. 77) Նեղ և անձուկ ճանապարհը (78. 79) Մարգարէ բառի նշանակութիւնը (79) Հրաշագործութեան նշանակութիւնը (80—82)

Ը.

Բարոսի, Հարիւրապետի Ծառային, Պետրոսի զոքանչի բժշկութիւնը։ (82-87) Դպրի ձգումը։ (87) Թագման նշանակութիւնը։ (88) Յիսուս փոխարկը դարաբեցնումն։ (89-91)

Թ.

Անդամալուծի բժշկութիւնը։ (92) Մեղաց թողութեան նշանակութիւնը։ (93) Մատթէոսի դարձը և իւր տան մէջ խօսակցութիւնը։ (94) Զոհի և ողորմութեան նշանակութիւնը։ (95) Չինուորական և ծաղիկան նկեղեցի։ (97) Յայրոսի աղջկան, տեռատեսի, երկու կոյրերի բժշկութիւնը։ (98) Սրբոց մասունքը։ (99-101) Հրեշտակները և դևերը։ (102) Յիսուսի գանգատը հովիւների թոյլութեան վերայ։ (103—104)

Ժ.

Առաքեալների ընտրութիւնը և նոցա պատուէրը։ (105—108) Հիւանդաց օծումն։ (108-109) Բէկզեբուզ։ (109-115) Քրիստոնեաների պարտքը։ (116—118)

ԺԱ.

Քրիստոսի և մարգարէից մէջ եղած հրաշագործութեան տարբերութիւնը։ (119-120) Յիսուս զոքումն Յով հաննէսին։ (421-122) Տիրոս և Սիդոն։ (124. 125) Հօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյն համագոր իշխանութիւնը։ (125) Յիսու սիրեռան նշանակութիւնը։ (126)

ԺԲ.

Առաջին Նաբաթ, առաջաւորութեան հաց, սրբոյ թիւն սրբոց։ (127. 128) Կիւրակէի նշանակութիւնը։ (129. 130) Համբ և կոյր դիւահարի բժշկութիւնը։ (132) Մատն Աստուծոյ։ (133) Սկզբնական, մահացու և անխոցոլի մեղքերը։ (134-136) Գիշերը և ցերեկը Սուրբ Գրքում։ (137) Յիսուսի խիստ քարոզութեան պատճառաւ դատաստանութիւնը։ (138) Յիսուսի մայր և եղբայրները։ (139)

ԺԳ.

Առակներով խօսակցութիւնը։ (141) Ասուած խստացնումն մարդոց սիրտը։ (142) Սերմանացանի, որոմի, մանանեխի և խմորի առակը։ 143) Արդարների փարձը և մեղաւորների պատիժը։ (144-148) Եկեղեցու ուղղափառութեան յատկութիւնները։ (148-149)

ԺԳ.

Յով հաննէսի մահը և նորա հեռանքը։ (151. 152) Հինգ հացով տասն հազար հոգի կերակրելը։ (153) Յիսուս շրջումն ջրերի վերայ։

բայ. (154) Յիսուսի չորս օժիտները. (156) Յիսուսի հանդերձից բժշկութիւնը. (157)

ԺԵ

Աւանդութիւն. (159) Մեղադրութիւն. (160) Պահեցողութիւն. (161) Քանանացի կնոջ որդու բժշկութիւնը. (164) Յիսուս կերակրում է 8000 մարդի. (165)

ԺԶ

Յիսուս քարոզում է որ Մեսիայն եկած է. (167) Աղանդ. (168) Աստուած Սուրբ Գրքում ինչպէս պէտք է հասկանալ. (169) Եկեղեցու հիմն Քրիստոսն է. (170) Կապկու և արձակկու իշխանութիւնը. (171. 172)

ԺԷ

Յիսուսի պարակերպութիւնը. (173. 174) Լուսնոտի բժշկութիւնը. (176. 177) Երիգրամեան Հարցը. (177)

ԺԸ

Աշակերտների մեծութիւն պտրտելու վէճը. (179) Պահապան հրեշտակները և սրբոց բարեխօսութիւնը. (180-183) Ներողամտութեան նշանակութիւնը. (185)

ԺԹ.

Ամուսնութեան խորհուրդը. (188. 189) Չիք որ բարի բայց մի Աստուած. (191) Հարստութեան նշանակութիւնը. (192. 193)

Ի.

Ազգայութիւն երկնից. (194) Մշակների առակը. (195) Յիսուս գնում է Երուսաղէմ. (196) Զեբեդեայի որդիքը. (197) Ո՞չ է իմ տալ. (198) Բարտիմէոսի բժշկութիւնը. (199)

ԻԱ.

Յիսուս գնում է տաճարը և հարցնում է թագաւորներին. (201-204) Յիսուս չարացնում թզենին. (205) Այգու առակը. (207) Անկիւնի վէմը. (208)

ԻԲ.

Թագաւորի որդու հարսանեաց առակը. (209. 210) Կայսեր հարկ տալը. (211. 212) Մեռելոց յարութիւնը. (213. 214) Հոգու գոյութիւնը. (215. 216) Քրիստոս ցոյց է տալիս որ ինքն է Աստուած։ (217)

ԻԳ.

Հրէից օրինականների, հոգևորականների ընթացքը. (218-220) Տաճարի, սեղանի, պատկերների, անօթների յարգութիւնը և պատիւը. (221. 222) Ժողովրդեան վերջի քարոզը. (224. 225)

ԻԴ.

Տաճարի համար մարգարէութիւնը, վերջի դատաստանը և աշխարհիս վախճանը։ (225-237)

ԻԵ.

Տան կուսանաց և քանքարի առակը. (238-241) Առաքինութեան բաժանմունքը. (242. 243) Յաւիտենական հուրը (245)

ԻԶ.

Յիսուսի մատնութիւնը. (247) Մարիամի օծումն. (249-250) Վերջին ընթրիքը. (251) Այսէ մարմին իմ և արիւն իմ (253 254) Նոր ուխտ. (255) Ադօթքը փոքրութեան և նախասահմանութեան դէմ. (257) Սկսաւ տրտմիլ և հոգալ. (258) Ասասուածաբանների ասած նուխակիրքը. (259) Յուդան մատնումէ Յիսուսին. (263) Յիսուս քահանայապետի առենում. (267) Յիսուս չարչարումէ և Պետրոսից ուրանումն։ (270-272)

ԻԷ.

Յիսուս ընդհանրական առենում. (274) Պիղատոսի և Հերոդիսի քննութիւնը. (275) Դան հարկանելու և խաչելութեան վրձիռները. (279-282) Խաչելութիւնը. (288) Աւազակի հաւատաքը. (287) Յիսուս դժոխքումն։ (287) Ահա մայրդ քո և վերախոսումն Տիրամօր. (288. 289) Ասասուած իմ, Ասասուած իմ ընդէր թողեր զիս. (289) Յիսուսի մահը. 290-292) Կողից ջուր և արիւն բղխելքը. (293) Թաղումն. (294) Խաչափայտի գիւտ և խաչվերացը. (295)

ԻԸ.

Յիսուսի յարութիւնը. (302-305) Քահանայական կարգի հաստատութիւնը. (306-308) Երևմունքը աշակերտաց. (308) Համբարձումն և Հոգւոյն Սրբոյ Գալուստը։ (309)

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՈՒՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՍՏԱՅԻՆ

Երես	տող	Սխալ	Ուղիղ
1	4	զեղբայրս	զեղբարս
4	9	զեղբայրս	զեղբարս
8	8	մինև	մինչև
25	12	Կայսերն	Կայսրն
26	7	թռ	հռ
28	24	Սուրբ	սուրբ
43	32	երկրորդաբան	երկրորդական
84	10	Խպանիցի	Խպանիացի
84	10	ողարկեց	ուղարկեց
148	5	26	22
162	25	չարաշար	չարաչար
202	9	Ցրուսաղէմից	Երուսաղէմից
208	20	'ի Հարսանիոս	'ի Հարսանիսս
209	17	կեղծաւոր	կեղծաւորք
„	20	Եւ ասէ ցնոսա. Ցիսուս	Եւ ասէ ցնոսա Ցիսուս.
210	26	Հաւատացրին	Հաւատացին
230	10	կուրքեր	կուռքեր
241	23	պատմութիւն	սրամտութիւն
270	21	խոշջահարելու	խոշճահարելու
275	12	խիղջը	խիղճը
276	12	Ներքև	Ներսը
277	29	յաղթելով	ձաղկելով
278	28	Ցերայ	վերայ
280	16	Ցաղկելուց	ձաղկելուց
282	4	պարաստեսցէ	պատրաստեսցէ
282	21	ետին	եդին